

ՕՐՈՒԱՆ ՊՕՍԻՐ

ՈՒՍՏԱԳԻՆԱՑՈՒԹԵԱՆ

ԴԱՍԸ

—0—

Մայիս 19-20ի ուխտագնացությունը
գեղի վերտնի պատմական դէպք մըն է
Ֆրանսայի դադուրի տարեգրութեանց
մէջ:

Առաջին անգամն է, որ Ֆրանսեւայ
բարեկամութիւնն ու ռազմա-
բարեկամ վրայ դէնքի եղբայրակցու-
թիւնը այսօր փառահեղ արտայայտու-
թիւն մը կ'ունենար:

Գովելի էր դադարաբար, որուն հեղի-
նախնոր շնորհաւորելի են եւ արժանի
կրթատաղիութեան:

Դիւրին էր երկու հազար Հայեր հա-
մախք վերտնի մէջ Ֆրանսայէն,
Պեթիպիէն եւ Գերմանիայէն: Պատուա-
բար յաջողութիւն էր համահայկական
այս հանդիսութեան համար ապահովել
ներկայութիւնը Ալէն Փոսէրի: Ֆրանսայի
Մերակոյտի նախագահը վերջին տարի -
ներուն ապացոյցը տուաւ Հայերու հան-
դէպ իր տաժար անվերապահ համակրան-
քին: 1970 Նոյեմբեր 7ին ներկայ եղած
էր Սելի դաշնագրի յիսնամեակի հան-
դիսութեան Սելի յարձակակիներու
ազգային թանգարանին մէջ: Մայիս 13ին
ալ նախագահեց Սիփան-Կոմիտաս երգ-
չախումբի յիսնամեակի տօնակատարու-
թեան Օփերա-Բոմբիէի մէջ:

Ֆրանսացի հոգեւորական, դիւրուորա-
կան, պետական, քաղաքապետական
բարձրաստիճան պատասխանատու դէմ -
քերու, երեսփոխաններու եւ կարգ մը
կաթոլիկներու հանդէպ հարգանքներ
ու մասնակցութիւնը հայկական ուխ-
տագնացութեան դէպի հերոսական քա-
ղաքը մեծ խանդավառութիւն ստեղծեց
հայկական չընանակներու մէջ:

Ֆրանսայի համար Պատուոյ դաշտին
վրայ ինկած Հայերու յիշատակին նուիր-
ուած այս համադրային ուխտագնացու-
թիւնը աւելի մեծ արժէք կը ստանար ա-
նոր համար, որ անկիւ կը դուրսդուր
Արարտեան դաշտի 1918ի Մայիսեան
բախտորոշ կռիւներու, Սարգարապատի
յաղթանակէն ճակատամարտի, — հայ -
կական վերտնի — եւ Հայաստանի ան-
կախութեան 55րդ տարեդարձին:

Ֆրանսեւայ անխորտակելի բարեկա-
մութեան, ռազմադաշտերու վրայ դարձ-
նուած սիրտի եղբայրութեան այս ցալ-
տուն ու պերճախօս արտայայտութիւնը
մանաւոր շտապէր ապրանք մըն էր Ան-
գլաբայի վարիչներուն, որոնք Մարտիկոյ
Յուշարձանին առթիւ անգլիական ցուցարա-
րական ու սպանական դիրք էին բռնած
Ֆրանսայի դէմ:

Հայկական վերտնի է Սարգարապա-
տը, ինչպէս կը շնորհի Ֆրանսահայերու
Միութեան ընդհ. քարտուղար Փրոֆ.
Նազար Արփիարեան, Տուօմոնի առջեւ
իր խօսած ճառին մէջ (Յապը, 26 Մա-
յիս): Մայիս 19-20ի ուխտագնացութիւնը
կաթոլիկներու միութիւնները լռելեայն
ուղի էին ոգեկոչել նաեւ յիշատակը
Արարտեանի Պատուոյ դաշտին վրայ
ինկած հայ հերոսներուն:

Հերոսական երկու քաղաքները — ա-
մէն համեմատութիւն պահելով — կը
խորհրդանշեն նոյն դադարաբարեկանը,
մարտը եւ ազգերու ազատութիւնը՝ ընդ-
դէմ յետադիմութեան եւ բռնակալու-
թեան:

ՀՐԱՆՏ-ՄԱՍՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԵՊՔԵՐԸ

ՓՈՄՓԻՏՈՒ - ՆԻՔՍԸՆ

—0—

ԴՐԱԿԱՆ ՈՉ ՄԵԿ ԱՐԴԻՒՆԻՔ

Մ. Նահանգներու եւ Ֆրանսայի նա-
խագահներու խօսակցութիւնները վերջ
կը դնէին Ուրբաթ առաւօտ: Հինգշաբ-
թի օր արդէն երկու նախագահները եր-
կուսկան ժամ տեւող զոյգ խօսակցու-
թիւններ կ'ունենային: Օրակարգի հարցը
լուրջ քննութեան առնուած էր նախապէս
Քիսինկէրի եւ Ֆրանսայի Արտաքին նա-
խարար Ժոպէրի միջեւ: Փարիզի տեսա-
կէտն էր, որ Նիքսըն եւ Փոնիփոտոն նախ
քննութեան առնեն միջազգային դրամա -
կան հարցը, քանի որ Փոնիփոտոն տե-
սակէտով, անգամ մը որ դրամական
մարդին մէջ կայուն վիճակ ստեղծուի,
Արեւմուտքիներու միջեւ տարակարծու-
թիւնները կ'անհետանան: Նիքսըն, ընդ -
հակառակն, կը փափաքէր, որ նախ քա-
ղաքական կապերու մասին խօսուի Մ.
Նահանգներու եւ Եւրոպայի միջեւ եւ
ապա միայն թեքնիք հարցերու շուրջ,
ինչպէս դրամական խնդիրն է: Քիսինկէր
եւ Ժոպէր հետեւեալ եղբայրացութեան
եկած են: Հինգշաբթի առաւօտ ընդհա-
նուր հարցերու շուրջ կը խօսուի, որու
ընթացքին տնտեսական խնդիրն ալ քնն-
նութեան կ'առնուի. նոյն օրը կէսօրէ
ետք տնտեսական եւ դրամական հար-
ցերը աւելի խոր քննութեան կ'ենթար-
կուին:

Նիքսըն — Փոնիփոտոն խօսակցութիւն-
ները, որոնք շատ կարեւոր կը նկատուին
Մ. Նահանգներու եւ Եւրոպայի ապագայ
յարաբերութիւններուն համար, յստակ
լուծումներու չեն յանդած մասնաւորա-
պէս այն խնդիրներուն շուրջ, ուր Ուա-
շինկթըն եւ Փարիզ հակոտնեայ տեսա-
կէտներ կը պաշտպանեն: Այսուհանդերձ,
ասոնց լուծման համար որոշած են եր-
կուսեք, որ Ֆրանսեւամերիկեան խոր-
հրդակցութիւնները շարունակուին յե-
տագային: Առաջին հանդիպումին առ-
թիւ հրապարակուած միացեալ ղեկոյցին
մէջ կը շեշտուէր, թէ նախագահ Փոն-
փոտոն հաստատած է խիստ կարեւորու-
թիւնը ամերիկեան ուժերու ներկայու-
թեան Եւրոպայի մէջ. շեշտած է այն վը-
տանդը, որ կրնայ յառաջ դալ ուժերու
միակողմանի կրճատման պարագային:
Այս ձեւով Փոնիփոտոն Ատլանտեան միու-
թեան մը կարեւորութիւնը շեշտած է,
ինչ որ դէտերու համար զիջում մը կը
նկատուի Փոնիփոտոնի կողմէ: Միեւեոյն
ատեն Փոնիփոտոն այսպէս ընդունած
կ'ըլլայ, որ հարցերը ընդհանուր ձեւով
քննութեան առնուին: Երկրորդ խօսակ-
ցութիւնը արդէն հաստատած է այս իրո-
ղութիւնը, քանի որ դրամական եւ ա-
ռեւորական հարցերը քննութեան առ-
նուած են Ֆրանսայի եւ Մ. Նահանգնե-
րու Եւրոպական նախարարներու կողմէ
դրամական կայուն դրութիւն մը հիմնե-
լու համար:

Նիքսընի եւ Փոնիփոտոնի համար խօ-
սակցութիւնները եղած են «երկար եւ
շինարար»:

Աւելցնենք, որ Ռեքեմպիէի (Իսլանտա-
յի մայրաքաղաքը) Քիսինկէր թանգարա-
յի մէջ է, որ երկու նախագահները խօ-
սակցեցան իրարու հետ:

Ընդհանուր ապաւորութիւնն այն է,
թէ նախագահներու այս հանդիպումը

սպասուած արդիւնքը չէ տուած: Գլխա-
ւոր որոշումը եղած է՝ որոշում չտալ:
Դժուարութիւնը կը ծագէր նաեւ անկէ
որ Փոնիփոտոն չէր ներկայացներ Եւրո-
պայի իր ընկերները, քանի որ ծանօթ է
Ֆրանսայի եւ միւս երկիրներու տարա-
կարծութիւնները հիմնական հարցերու
շուրջ, ուրեմն լիազօրի հանգամանք չու-
նէր եւ այդ խիստ արդեւէր էր որ որոշում-
ներ տրուին:

ՌՈՒՐՔԻԱ

—0—

Օրհան — Քեմալ գրական մրցանակը,
որ հիմնուած է ոգեկոչելու համար վի-
պասանին յիշատակը, 1973ի համար տըր-
ուած է ձախ լրագրող Չեթին Ալթանի,
որ կը յաջորդէ Եաւազ Կունայի, դե-
րասան եւ բեմադիր: Յատկանշական կը
նկատուի որ այս անգամ ալ մրցանակա-
ւորը արգելափակուած մըն է, ինչպէս
անցեալ տարի Կունայը, որ ամբաստան-
ուած էր իրեն դրամի հայթայթիչ ահա-
բեկիչներու: Այս անգամ ալ պարագան
նոյնն է, Ալթան բանտը կը գտնուի մէկ
տարուան համար, տեսակէտի յանցանքի
համար երեք այլ լրագրողներու հետ:
Ալթան 46 տարեկան է եւ հեղինակ բազ-
մաթիւ թատերգութիւններու: Իր առա-
ջին վէպին մէջ, կէս ինքնակենսագրական,
կէս-քաղաքական, կը պատմէ մտաւորա-
կան ըլլալու դժուարութիւնը երեւութա-
պէս միայն ազատ աշխարհի մը մէջ:

Մրցանակը յանձնելու համար, դրա -
կան դատական կազմը պէտք է արտօ -
նութիւն առնէ Չաքմաքճըլարի բանտը
երթալու:

Այս առթիւ Մոնտ կը յիշէ որ ներկա-
յիս 1429 դատ կայ թրքական դատարան-
ներուն առջեւ, բոլորն ալ լրագրական
յանցանքներու համար: Ասկէ զատ ալ
բազմաթիւ դրագէտներ ու թարգմանիչ-
ներ 7էն 30 տարուան բանտարկութեան
դատապարտուած են «համայնավար քա-
րոզչութեան» յանցանքով:

×

Պոլսոյ դիւրուորական մէկ Ատեանը
մահուան դատապարտած է չորս երիտա-
սարդ ահաբեկիչներ: Ասոնցմէ երեքին
մահապատժիւր ցկեանաւ բանտարկութեան
վերածուած է, բայց մէկը 24 տարեկան,
պիտի զննակահարուի: Ամբաստանուած
է երեք հոլտ-ըփի եւ մէկ առեւանգումի
համար: «Թուրք ժողովուրդի ազատա -
գրման բանակ»ի ղեկավարներէն մէկը կը
նկատուի:

Միւս կողմէ, առջի օր ուսանող մը
սպաննուած է Անգարայի համալսարանը
ծայրայեղ-ալ տարբերու կողմէ:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ դոր -
ծադուր իսկական անել կացութիւն մը
ստեղծած է եւ չորս ժամուան խօսակ -
ցութիւնները ոչ մէկ արդիւնք տուած են:
Այս գործադուրին հետեւանքով արդէն
շուրջ մէկ միլիոն թղթածրար կայ որ
կարգի կը սպասէ եւ ամէն օր որ կ'անցնի
աւելի կը ծանրացնէ կացութիւնը:

ՓԱՐԻԶԻ խորհրդային դեսպանատան
դիւրուորական մէկ կցորդը Գնդ. Եւզենի
Միրանիին, Պուրթէի օգնականին ցու -
ցահանդէսին երկու ելեկտրոնիկ գործիք-
ներ գործնալէ ետք «բռնուած է»: Հաւա-
նական է, որ Ֆրանսական կառավարու-
թիւնը «անբաղձալի» նկատէ ուսու լրտե-
սը եւ պահանջէ անոր մեկնումը Ֆրան -

ԵՐԵՒԱՆ <=> ՓԱՐԻԶ ՀԵ ՌԱՏԻՊ

ԵՐԵՒԱՆ (Արմէնփրէս Մայիս 26)

ՕՓԵՐԱՑԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

×

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԺԱՊԱԻՆՆԵՐ

«Երեւան» արուեստանոցի պատրաստած
կարգ մը ժապաւէնները՝ պատկերա -
սփիւռի եւ շարժանկարի համար, քնն -
նութեան առնուած են ժողովի մը մէջ,
որուն մասնակցած են շարժանկարի ար-
ուեստագէտներ, երգահաններ եւ լրա-
գրողներ: Ժողովը տեղի ունեցած է Մա-
յիս 22ին, որու ընթացքին ցուցադրուած
են «Կամերային նուագախումբ», «Պարի
պետական անսամբլ», «Աստուածների
կործանումը» եւ «Համերգային համար-
ներ» ժապաւէնները:

×

ԲԱՆԶԱՐԵՂԵՆԵՐՈՒ ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ
ԲԱՐԵԼԱՌՈՒՄ

Բանջարեղէններու մշակումը եւ ար-
տադրութիւնը բարելաւելու համար աշ -
խատանքներ կը կատարուին 1932էն ի
վեր: Այդ գործին առաջին մասնագէտ -
ներէն է Անահիտ Անանեան, որ վերջին
չորս տարիներուն ղեկավարն է դարձած
«Հայաստանի բանջարտառոտանային ժող-
տուրաների սելեկցիայի եւ սերմնարու -
ծութեան» կայանի: Այս կայանին հիմ -
նական նպատակն է պահածոներու ար-
դիւնաբերութեան իւրաքանչեւ պահանջ-
ները բաւարարել, ինչպէս նաեւ այնպի-
սի բանջարեղէններ մշակել, որ ամբողջ
տարին կարելի ըլլայ հայթայթել ժողո-
վուրդին: Արդէն մշակուած են լոլիկի,
սեխի եւ տաքդեղի նոր տեսակներ:

սայէն: Ինք բացատրած է որ «յիշատակ-
նոր» կը կարծէր առածը: Ամէն պա -
րագայի Թումբն - Սէ. Էս. Էֆ. որու կը
պատկանէր գողցուած կտորը պիտի չը-
ղոքէ քանի ներկայիս առեւտրական յա-
րաբերութիւններ ունի Պորտ. Միութեան
հետ:

ՊՈՆ քաղաքական ապաստան տուաւ
խորհրդային այն օգնականներին, որ դի-
մում կատարած էր, երբ իր օգնականը
ինկած էր Արեւմտեան Գերմանիոյ սահ-
մանին մօտերը:

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ նաւատորմի պետը՝ Ժո-
վակալ Մարկարիթիս հեռացուած է պաշ-
տօնէ: Անոր տեղ նշանակուած է ծովա-
կալ Արաբաքիս:

ԻՐԱՆՏԱՍԻ Հանրապետութեան նա -
խագահ ընտրուած է Չիլտրոս: Այս ըն-
տրութիւնը անակնկալ մը եղած է, որով-
հետեւ Չիլտրոս բողոքական է եւ կը
պատկանի ընդդիմադիր ճակատին: Իր -
լանտայի բնակչութեան մեծամասնու -
թիւնը կաթոլիկ է:

ԹԵՐԹԵԼՈՎ, ՀԱՆՌԻՍՆԵՐԸ

ՆԵՐԳԱՂԹԸ 1920ԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Պատմական գիտություններու տղթթթթթ Գ. Վ. Շառոյեան կարգ մը մանրամասնութիւններ կուտայ 1920ական թուականներու ներգաղթի վերաբերեալ, «Լրագրեր հասարակական գիտութիւններ» փետրուարի թիւին մէջ: Յօդուածին խորագիրն է Հայրենադարձներին հողով ապահովելու խնդիրը 1920ական թուականներին»:

×

Առաջին զանգուածային ներգաղթը տեղի ունեցած է 1921ի վերջերը եւ 1922ի սկիզբները, երբ Միջազգեպէս Հայաստան եկած են 9192 հողագործ դաղթականներ: Չանոնք ընդունելու եւ տեղաւորելու համար մեծ դժուարութիւն ունեցած է Հայաստան, որովհետեւ մէկ կողմէ երկիրը սակաւահող էր եւ, միւս կողմէ, քայքայուած էր անոր անտեսութիւնը: Աւելին՝ 1922ին նորէն սկսած էր սովը:

Բացի արտասահման գտնուող հայ դաղթականներէն, այդ թուականներուն Հայաստան ուղած են դաղթիկ նաեւ Վրաստան եւ Ադրբեջան ապաստանած արեւմտահայ դաղթականներէն շատերը: Իրաց այդ կացութիւնը նկատի առնելով, Հայաստանի կենտրոնները 1922 Դեկտեմբերին որոշում տուած է ներգաղթը միայն արտասահմանի համար թոյլատրել: Հայաստանի կառավարութեան նախաձեռնութեամբ ներգաղթի հարցը լուրջ քննութեան առարկայ դարձած է ԱՍՖՍՀՍի (*) ղեկավար մարմիններուն մէջ: 1924 Մարտ 3ին որոշում տրուած է 10 հազար Հայ ընդունիլ եւ զանոնք Վրաստան ու Հայաստան տեղաւորել: Սա՝ կայն Մարտ 17ին կ'որոշուի զանոնք միայն Հայաստանի մէջ տեղաւորել, պայմանաւ որ Սարգսիսապատի տափաստանը ոռոգելի դարձուի:

Անհրաժեշտ նախապատրաստութիւններէ ետք, 1924ին, Թուրքիայէն եւ Յունաստանէն Հայաստան տեղափոխուած են 2645 դաղթականներ, որոնք հաստատուած են Լենինականի, Էջմիածինի եւ Երեւանի գաւառները: 1925ին դարձեալ Թուրքիայէ, Յունաստանէ եւ Միջագետքէ 4174 Հայեր դաթած են: Այդ խումբին մաս կազմած բանուորներն ու արհեստաւորները բնակութիւն հաստատած են քաղաքներու, իսկ հողագործները ժամանակաւոր կերպով Դաւաթու գիւղը, յետագային Արագածայեանի շրջանը փոխադրուելու համար:

Հայրենադարձներու թիւը, որուն մեծ մասը հողագործ էր, 1924-1925ին հասած է 6800ի: Յաջորդ տարին սահմանափակուած է թիւը, որով Պոլսէն Հայաստան տեղափոխուած են 2275 հողագործ, արհեստաւոր եւ բանուոր: 1927էն 1929 Յու-

ստան-Տաղի հերոսամարտին իր հայրը կորսնցուցած ճաշարանի սպասեակը, կամ 1915ին որբացած Ամերիկահայը ինչպէս կրնան մոռնալ եւ անչէջ հուրի մը չվերածել նահատակներու յիշատակը, կովկասի հարան ու Իրանի հիւսիսը գտնուող Հայաստանը յաճախ ենթարկուած է պատերազմներու եւ տիրապել տուութեանց՝ Քրիստոսէ առաջ Տրդ դարէն սկսեալ: Միտիացիները, Պարսիկները, Յոյները, Հռոմէացիները, Թուրքերը եւ Ռուսները բոլորն ալ յաջորդաբար տիրած են այս լեռնաշխարհին:

Սակայն եղած են նաեւ ժամանակներ, երբ Հայաստան կրցած է բաւական զօրաւոր ըլլալ, եւ ունենալ իր թաղաւորները, ինչպէս, օրինակ, Մեծն Տիգրանը (95-55 Ք. Ա.), որուն կայսրութիւնը կը տարածուէր Կովկասէն մինչեւ ներկայ

նաստանէ, Թուրքիայէ, Ֆրանսայէ եւ Ամերիկայէ 7022 հողի ներգաղթած են:

1928ին 119.000 հեկտար հող ոռոգելի դարձած էր: Այսուհանդերձ, Հայաստանի կառավարութիւնը դեռ ստիպուած էր ներթել ոչ քիչ թիւով այն արեւմտահայ դաղթականներու զիմումները, որոնք ապաստանած էին Շամխոր գաւառի Զարդախու, Զադեր, Դարաբաղի Խանձաճոր գիւղերը եւ Գանձակ:

1920ական թուականներուն աւելի քան 26.000 Հայեր ներգաղթած են Հայաստան:

Յօդուածագիրը ներկայացուցած է նաեւ ներգաղթի վիճակագրական պատկերը՝ 1922էն 1929:

1922ին Հայաստան ներգաղթած են 9192 հողի, բոլորն ալ հողագործ Միջագետքէն:

1923ին՝ 932 հողագործ Վանի շրջանէն: 1924ին՝ 2645 հողագործ Յունաստանէ եւ Պոլսէ:

1925ին՝ 4174 հողագործ, արհեստաւոր ու բանուոր Յունաստանէ, Պոլսէ եւ Միջագետքէ:

1926ին՝ 2275 հողագործ եւ արհեստաւոր Պոլսէ:

1927ին՝ 1280 արհեստաւոր եւ հողադործ Յունաստանէ, Պոլսէ եւ Թուրքիոյ այլ շրջաններէ:

1928ին՝ 4910 հողագործ եւ արհեստաւոր Յունաստանէ ու Պոլսէ:

1929ին՝ 832 աղագործ, հողագործ եւ արհեստաւոր Ֆրանսայէ, Թուրքիայէ, Ամերիկայէ, Յունաստանէ: Ընդհանուր թիւ՝ 26.240:

(*) Անգրկալկասեան Ացիլիստակաւ Ֆեդերատիվ Սովետակաւ Հանրապետութիւն:

Իսրայէլը, Պարսկաստանէն Փոքր Ասիա: Հայաստանի ժողովուրդը հնգերոպական ծագում ունի, իր սեփական մշակոյթով ու լեզուով: Անոր այրուբներ բաւացած է 36 տարեկէ, որոնց գիւտը տեղի ունեցած է Քրիստոսէ ետք 404 թուին: Շուրջ 2,5 միլիոն Հայեր կը բնակին Հայաստանի 11,5 հազար քառ. մղոն տարածութեան վրայ:

Շատ տաք ամառ մըն էր, երբ Երեւան կը գտնուէր:

Յերեկը, ժողովուրդը հեռու կը կենար փողոցներէն, իսկ գիշերը բոլորն ալ դուրս կուգային իրենց բնակարաններէն: Լենին հրապարակը կը խճողուէր անցորդներով, որոնք կը հաւաքուէին շատուանին ու աւազաններուն շուրջ: Քաղքի ժամացոյցին գիշերը աւետող զարկերուն հետ, փողոցը աշխուժութիւն մը կը ստանար:

Շաբաթանին շուրերը կը սկսէին խայտալ, եւ պահուած լոյսերու միջոցաւ՝ կարմիր, կանաչ եւ դեղին դոյներ առնել: Բարձրասիւններու միջոցաւ երաժշտու թիւեր կը ձայնասփռուէին: Համայնավար այս քաղաքին մէջ, կարելի էր լսել «Աւ Մարիա» կամ «Տիլայլա» երգերը:

Քաղքի փողոցներէն, պարզապէս ժողովուրդը դիտելու համար: Երիտասարդ աղջիկները հեզածկուած են, բայց միջին տարիքի կիները՝ դէր: Քանի մը գիշեր՝ բային զրօսավայրեր մեծ շահ կրնային ապահովել Երեւանին: Գիտնականներ կամ սոսկ մէկ հատ մուրացիկս միայն:

Գիշեր մը, Կարապի լիճէն անցնելով դացի օփերայի շէնքը: Սխալ ընտրութիւն մը ըրած էի, որովհետեւ տարուան այս եղանակին օփերայի խումբը իր արձակուրդը կ'առնէ: Գիշերիկ, բայց տաք շէնքէն ներս, Եւկուսակական խումբ մը ներկայացում կուտար երիտասարդութեան համար:

Երեւան պղտիկ քաղաք մըն է, օժտուած բազմաթիւ հանրային պարտէզներով, որոնց նստարաններուն վրայ ծեր մարդիկ ճաշարակ կը խաղան: Հանրակուրքերը կ'անցնին: Պատերը խճողուած են: Խաճախներուն թիւը քիչ է, ոչ լաւ տեսքով: Զրօսաշրջիկները թիրախ կը հանդիսանան նորաձեւութիւնը սիրող օրիորդներու հետաքրքրութեան: Մէկը ուղեց գիտնալ, թէ կրնամ հագուստ ծախել իրեն: Տրամադրելի ոչինչ ունէի:

Ինքնաշարժներու թիւը քիչ էր, արդարացի կերպով, նկատի ունենալով անոնց գինը (Մոսկովի մը 4900 ռուբլի կ'արժէ, Վոլկա մը՝ 9000 ռուբլի, Խորհ. Միութեան մէջ չինուած Ֆիաթ մը՝ 5500 ռուբլի):

Հայերը բարեկամական եւ առատաձեռն

2 Ա Յ Ն Ե Ր Գ Ա Ի Ա Ռ Է Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԱԿԱՏԱՄԱՐՏԻ 55րդ ՏԱՐԵՐԱՐՁԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

ԿԱՐՈ ՍԱՍՈՒՆԻ ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՁ

Ո

ՄԱՐՍԷՅԼ (Յառաջ). — «Անոյ յարով, հին ապրումներով կ'ողջունեմ ձեզ: Անհուն ուրախութիւն է ինծի, որ թերեւս վերջին անգամ ըլլալով աշխարհի այս ճանապարհէն կ'անցնիմ, ողջունելու իմ հին եւ նոր ընկերներս ու բարեկամներս: Ինծի համար այսօր տեսակ մը վերագարձ է անդի աշխարհէն, ուր այնքան ընկերներ դացին, այնքան լաւ մարդիկ դացին...»:

Այս յուզիչ խօսքերով է որ Կարօ Սասունի սկսաւ իր ճառը խոսնեցած բազմութեան մը առջեւ, որ ամենայն ուժադրութեամբ, կատարեալ լարուածութեամբ ունկնդրեց «նահապետ»ին դեռ եռանդուն, խանդավառիչ, լի ապրումով եւ զգացումով խօսքերը, որուն համար հայրենիքը, Հայութիւնը եւ հայ մշակոյթը պաշտամունքի եւ պատարագի խորաններ են:

Ահաւասիկ իր ճառէն քանի մը կէտեր. «Ես այս վայրկեանիս հողով հոս չեմ,

վերաբերում մը ցոյց տուին: Առաջին գիշերը, երբ հիւրանոցի պաշտօնեան կը մերժէր ճամբորդական չէքով ընդունիլ եւ կանխիկ կը պահանջէր վճարումը, կրնայի անօթի մնալ, եթէ զոյգ մը տէր չկանգնէին ինծի» «Անք հիւրը եղիք» ըսելով:

Ուրիշ գիշեր մը, ամբողջովին անձանօթներ հանդիպեցան ինծի ճամբուս ընթացքին: Անոնք ցոյց տուին յուշարձան մը, ուր երկու հսկայական ձեռքեր կ'ողջունէին զիրար: Անոնք յայտնեցին, թէ ասիկա բարեկամութիւնը կը խորհրդանշէր:

Իտալիոյ կողմէ Հայաստանի նուիրուած այս յուշարձանը որոշ չափով տարօրինակ թուեցաւ ինծի: Կարծես թէ հսկայ մը թաղուած էր հողին տակ, եւ կրցած էր ձեռքերը դուրս հանել միայն: Խորհուրդը պարզ էր սակայն եւ հասկնալի: Նոյն այդ անձանօթները դարձեալ հանդիպեցան ինծի, ճաշարան մը տալին, սուրճ մը հրամցոյցին եւ իրենց երկրէն յիշատակ մը տրամադրեցին ինծի:

ՀԵԼԷՆ ՖԻՐԶԷԼ

(«Տիւր Սիւրի Մորիսիկ Հերբլա»)

ԿՏԱԿՆ ԷՐ

ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ

Գրեց՝ ԱՐՇԱԽԻՐ ՇԻՐԱԿԱՆՆ

Ա. ՄԱՍ

ՀԱՄԱՇԵԱՐԹԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Արդէն կը մօտէի, իսկ անոնց տեսքը արիւնս ստեղծուց կարծես: Վտանդը մեծ էր. հապա՞ եթէ ոստիկանները կասկածի վրայ զիս հարցուփորձէին կամ բռնէին: Կամացուկ մը պայուսակը վար դրի անկիւնի կօշկակարին խանութին առջեւ եւ անշարժացած հետեւեցայ անոնց շարժումներուն:

Ներքին դողս ու յուզումս աւելցան, երբ նկատեցի որ մեր տան պատուհաններէն մերիները զիս կը դիտեն: Ով

գիտէ անոնք ալ ինչ դողերու մատնուած էին այդ պահուն: Եթէ զիս բռնէին, բնականաբար անմիջապէս մեր տունը պիտի մտնէին եւ որովհետեւ այդ շրջանին, տակաւին թաքստոց չունէինք, մեր ընկեր գործիչները թակարդի մէջ ինկած պիտի ըլլային:

Բարեխախտաբար ինձմով չհետաքրքրուեցան. տարիքով ու հասակով փոքր էի եւ անոնք, անընդհատ երթեւեկելով եւ առջեւէս անընդհատ անցնելով ու դառնալով հանդերձ, բնաւ ուշադրութիւն չըրին վրաս ու յայտնի էր որ խիստ կարեւոր գործով մը զբաղած էին: Եւ անոնցմէ մէկ մէկ քանին մտան մեր փողոցին միւս անկիւնի տունը. վերջը տեղեկացանք որ այդ տունէն դուրս հանած տարած են հայ փաստաբան մը, հայանուն «Խաֆիէ»ի մը ցուցմունքին վրայ: Այդ վոհմակին մէջն էին յետագայ չարաչուք համբաւի տիրացած հայ «Խաֆիէ»ները, նախկին կաթողիկ կրօնաւոր իսլամացած Հիտա՝ յէթը, Վահէ Նաչիեանը կամ Իհսանը եւ Պէշիքթաշի մուխթար Յարութիւն Մկրտիչեանը. այն ատեն դեռ զանոնք անձամբ չէի ճանչնար, յետագային ստուգեցի, երբ յաճախ մեր տունն ալ խուղարկելու կուգային:

Ոստիկաններուն զբաղած ըլլալէն օգտուելով, պահ մը փորձեցի պայուսակս վերցնել. տակաւին ձեռքերս կը դողալին: Վերջապէս ճիշդ մը ըրի եւ պայու-

սակ այս անգամ թեւիս տակ առնելով եւ ծանրութիւնը յայտնի չընելու համար ջիգերս պրկելով, յաջողեցայ քայլ առնել, քիչ մը եւս առաջացայ ու մտայ թալիմհանէի հրապարակը. գետինը ցեխ էր ու տեղ տեղ ջրակոյտեր կազմուած էին. դժուարութեամբ կտրեցի անցայ եւ վերջապէս հասայ որոշեալ վայրը. այնտեղ հասարակաց երրորդ նստարանին վրայ պիտի սպասէի ընկերը մը, որ պիտի գար, օրուան կարգախօսը պիտի տար, այսինքն ձՕ10Լ բառը, եւ զէնքերը առնելով պիտի տանէր: Նստայ, զէնքերը նստարանին տակ գրի եւ լայն շունչ մը առի: Թէեւ արիւն-քրտինքի մէջ էի եւ մարմինս դեռ կը դողար: Մութը կոխած էր եւ ինչինքս ապահովութեան մէջ զգացի:

Պահ մը վերջ ընկերը եկաւ եւ կարգախօսը տուաւ. զէնքերը յանձնեցի: Եթէ չեմ սխալիր հայ մարդիկ մըն էր(*) : Բայց ընկերը, ըստ հրահանգի, փոխանակ անձամբ զէնքերը առնել տանելու, ծրարով միասին զիս առջեւ ձգեց եւ իրենց տունը տարաւ: Այնտեղ նեղացան իրեն, թէ ինչու զիս հետը բերած էր. թաքստոցին տեղը պէտք չէ գիտնայի. մարդիկը ինքզինքը արգարացնելու վրայ էր, երբ ես առանց բառ մը ըսելու, հեռացայ եւ տուն վերադարձայ:

Տնեցիք անհամբերութեամբ կը սպասէին. զիս տեսնելով չափազանց ուրա-

խացան: Եւ յայտնեցին թէ դոյ ու սարսափով դիտած էին զիս, երբ ոստիկանները անընդհատ երթեւեկելով, մէկ վայրկեանէն միւսը կրնային ուշադրու թիւն դարձնել վրաս ու բռնել: Մանաւա՞նք մեծ վախով լեցուած էին տեսնելով որ ձեռքս ու ոտքս կը դողային պայուսակին ծանրութեան տակ: Անհետանալէս վերջ լայն շունչ առած էին. առաջին եւ վերջին անգամ ըլլալով այս մասին խօսք եղաւ: Մեր գործերը կը կատարուէին ծայրայեղ զաջոնապահութեամբ. ամէն ոք իր պարտականութիւնը կը կատարէր եւ բնաւ խօսք չէր ըլլար, որպէսզի ասէին ինչ մոռցուէր:

Պատերազմին ընտելացած էի զանազան զէնքերու եւ մասնաւորաբար առօրեան զէնքերու հետ. առօրեայ զբաղումս էր զանոնք քակել, մաքրել-խղողել ու պահել: Նշանառութեան մասնաւոր փորձը չէի ըրած. այս պատճառով ալ դաւաճան Վահէ Իհսանը հարուածած ատեն, հարուածիս ճշգրտութեան վստահ չէի եւ քովը դառնալով ստիպուեցայ քանի մը գնդակ եւս պարպել: Իսկ Հայաստան այցելելէս վերջ, փորձի եւ վարժութեան լայն պատեհութիւն ունեցայ. այնպէս որ հարուածներս անվրպելի կը նկատէի այլեւս:

(Շար. - 27)

(*) Ենթակաւ Գր. ձօլօլեանն է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՀՈՉԱԿՄԱՆ ՏԱՐԵԴԱՐՁ ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ ՀԱՅ ԴԱՏԻ ՕՐ

ՎԻԷՆԻ ՄԷՋ

Յունիս 2ին, Շաբաթ իրիկուն ժամը 20.30ին Ամիգալ-Լայիք սինեմային մէջ
Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. Անի կոմիտէի
Մասնակցութեամբ

Հ. Յ. Դ. Նոր Սերունդի, Ֆրանսահայ Կապ. Խոյի եւ տեղւոյս Ազգ. Միութեան
Պատուոյ նախագահութեամբ երեսփոխան - քաղաքապետ ԼՈՒԻ ՄԵՐՄԱՋԻ
Խօսք կ'առնեն

Հնկերվարական կուսակցութեան տեղական ներկայացուցիչները
Կը նախագահէ ընկ. ՎՐԷԺ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

Կը խօսի ընկ. ԿԱՐՕ ՅՈՎՍԷՓԵԱՆ

Գեղարուեստական խնամուած բաժին, պատրաստութեամբ Նոր Սերունդի (Երգ,
խմբերգ, արտասանութիւն): Պար՝ Նոր Սերունդի ԱԼԱԳԵԱՋ խումբին կողմէ
ՄՈՒՏՏԻՔ ԱԶԱՏ Է

Պաշտօնական մասէն ետք ընտանեկան խնջոյք մինչեւ առաւօտեան ժամը մէկ:

ՓՈՒԱՆ ԾԱԿԵՊԱԱԿԻ

Յովսէփ Թաթիկեանի մահուան առթիւ
Տիկին Նշանուհի Աշեան եւ զաւակները
Այնճարի «Յառաջ» վարժարանին կը նուիրեն
40 Փր., եւ 10 Փր. «Յառաջ»ին:
(Ստանալ «Յառաջ»էն):

ՇՆՈՐՀԱՎԱԼԻՔ

Սէն Լուի Ս. Գէորգ եկեղ. Թաղական
Խորհուրդը ստացած է հետեւեալ նուէր -
ները. —

Հոգեհանգիստ Յարութիւն Համբար -
ձումեանի՝ Տիկ. Տ. Համբարձումեան
100 Փր., Տէր եւ Տիկ. Պ. Համբարձումեան
50: Հոգ. Յ. Կաղիկեանի՝ Տիկ. Չ. Կաղիկեան
40: Հոգ. Նազաշեան եւ Յովսէփեան
ընտանիքներու, Տէր եւ Տիկին Մ.
Նազաշեան 30: Հոգ. Պաղրամեան
զերդ., Տիկ. Ար. Նազաշեան 20: Հոգ. Ս.
Մանուկեանի՝ Պր. Պ. Մանուկեան 30:
Հոգ. Խ. Դաթիսեանի՝ Պր. Ն. Մարգարեան
30: Հոգ. Ալ. Գէորգեանի՝ Տիկին Լ.
Գէորգեան 15: Հոգ. Չ. եւ Ն. Գա -
ղաշեանի՝ Վ. Գաղաշեան 10 Փր.:

Ա Զ Դ

Achète monnaies étrangères en bronze
et argent — lot toute quantité. Ecrire au
journal qui transmettra.

ԱՄԱՌԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

ՅՈՒՆԻՍ 9 ԷՆ 23

2580 ՓՐԱՆՔ

Pension complète avec excursions quotidiennes

Բնակութիւն Ա. կարգ — ամբողջական փանսիօն, ամէնօրեայ պտոյտներ

ՅՈՒԼԻՍ 14 ԷՆ 28

ԳԻՆ ՓԱՐԻՋԷՆ ՓԱՐԻՋ

2650 ՓՐԱՆՔ

Ուղղակի քաղաք փարիզ-Երեւան-Փարիզ

ՅՈՒԼԻՍ 21ԷՆ ՕԳՈՍՏՈՍ 4

ՕԳՈՍՏՈՍ 5ԷՆ 17

16ԷՆ 35 տարեկան երիտասարդներու համար յատուկ գին՝
2100 Ֆր.

Դիմել գրասենեակ՝ մանրամասնութեանց եւ պայմաններու համար:

ՓԱՐԻՋԻ ՄԷՋ

SONIA COUNRYANTZ

TRIM VOYAGE
MONDOTOURS

2, Rue de Sèze — PARIS (9e)
Téléphone : 742-57-84 et 073-30-64
de 9 h. 30 à 18 h. — tous les jours

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Լիոնէն մեկնումը օդանւում

VOTRE AGENCE DE VOYAGES ARMENIENNE

agence de voyages SEVAN

50, Cours de la Liberté — LYON — Téléph. : 60-13-66
de 10 h. à 19 h. — tous les jours

ՄԱՐՍԵՅԼԻ ՄԷՋ

JACQUES CHELELEKIAN
VOYAGES WASTEELS

87, La Canebière, Marseille 1er Téléphone : 62-03-44 et 64-09-49
de 15 h. à 19 h. — tous les jours

Հ. Յ. Դ.

ՊԱՆԵԼՕ-ԲԱՇԱՆ. — Հ. Յ. Դ. Արծիւ
ենթակոմիտէի ժողովը այս Զորեքշաբթի,
Յունիս 6, ժամը 20.30ին սովորական հա-
ւաքութիւն: Կարեւոր օրակարգ: Բոլոր
ընկերներու ներկայութիւնը պարտաւորել
է: Կը խօսի ընկ. Կարօ Մեհեան:

Surprise-Party

Կազմակերպուած Հ. Յ. Դ. Նոր
Սերունդի Խաիի խումբին կողմէ, այս
Շաբաթ (Յունիս 2) իրիկուն ժամը
7էն սկսեալ Խաիի Մշակոյթի Տունը,
45, Ռիւ տը լա Տէֆանս:
ՋԵՐՄ ՄԹՆՈԼՈՐՏ
Մուտք անշուք միասին 15 ֆր.

ՆՈՒԵՐՆԵՐ

ՎԵՐՏԷՐՆ - ՏՈՒՍՄՈՐԻ
ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ Ի ՆՊԱՍՏ

Ոմն 500, Դաւթեան եւ Պարոնեան
(Շաւիլ) 50ական, Եսայեան (Վերապլ)
100, ոմն 50, Արամ Տէպեան (Վերապլ)
50, Յակոբ Գառապեան 500, Յարութիւն
Տիարեան 500, Տորք Տէր-Յակոբ -
եան 1000, Տիգրան Վարդանեան (Ժուլի-
ան-Ժօզա) 50, Տիգրան Տէրվիշեան 50,
Ֆրանսուա Մերա (Ֆրանսացի) 100, Առ-
լէն Փափազեան 100:

Պ. Ա. Ներսէսեան 100 (ստանալ «Յա-
ռաջ»էն):

ՅՈՒՇԱՏԱՆՏԱԿՆԵՐՈՒ Ի ՆՊԱՍՏ
Տիկին Մաքրուհի Թահմազեան 2000,
Գր. Արամեան 1000:

ԿԸ ՓՆՏՈՒԻ

Ծնեալ Շապաղեան Սուրբան, աղջիկ -
կուսեան անուն, բնիկ Կէմերիկցի, ա-
մուսնացեալ Մարտիկ: Ամուսնութեան
մականունը անծանօթ ըլլալով, կը խըն-
դուրի Կէմերիկցի հայրենակիցներէն,
գրեւ հետեւեալ հասցէին, յետ տեղեկու-
թեան՝

Kaloustian Gulbenk
14, Rue Maréchal Foch Polygone
26000 Valence

ՀՈԳԵԳԱԼՈՒՍԸ

ՀՈՆՆՈՍԻ ԱՓԻՆ

Վիպական ճամբորդութիւն եւ նաւային
պտոյտ Հոննոսի վրայ:

Մեկնում Շաբաթ Յունիս 9, վերադարձ
Երկուշաբթի Յունիս 11:

Հաւաքուել Շաբաթ առտու ժամը 9ին
Մեթրօ Շաթօ տը Վէնսէն Թերմինիակ
առջեւ եւ 7.30ին Գաֆէ Բիւրվէօր, Կառ
տիւ Նոռ:

Անմիջական մեկնում դէպի Գերմանիա
Մօ, Մոնիէրայ, Շալոն, Սէնթ-Մեհե -
հուլտ (ճաշ) Վերտօն, Մէս — սահմա-
նադրուլ — Սառայրուք, Լուսովիկա -
ֆըն, Մանհայմ, Վիպպառն ճամբով
մինչեւ Ռուսոնայմ: Տեղաւորում պան-
զուկը, ճաշ հաճելի մթնոլորտի մէջ:

Կիրակի փոքրիկ նաւապտոյտ մը Հոն-
նոսի վրայ, ճաշ նաւուն վրայ, ցամա -
քահանում՝ Գոպանց եւ վերադարձ օթո-
քառով պանզուկ: Ծաշ պանզուկը, մեկնում
դէպի Վիպպառն եւ վերադարձ: Երկու-
շաբթի առտու մեկնում դէպի Մէս, ճաշ
կայարանին ճաշարանը եւ ժամանում
Փարիզ — Կառ տիւ Նոռ ժամը 21ի առեմ-
ները:

Մասնակցութիւն 195 ֆրանք

RELATIONS TOURISTIQUES
EDUCATIVES

12 Allée Leonide — Le Perreux
Tél. 324-14-96

Association sans but lucratif, régie par
la loi du 1-7-1901

ԻՏ. ՃԷՋԻՐԵԱՆ
ԸՆԴԻ. Պատուիրակ

ՍԻՓԱՆ - ԿՈՄԻՏԱՍ ԵՐԵՎԱՆԻ



ՍԱՄՈՒԷԼ - ՄՈՒՐԱՏԵԱՆ
ՎԱՐԺԱՐԱՆԸ

26, Ռիւ Թրուայոն, Սեվր

Շաբաթ, Յունիս 2, ժամը 21ին

Ի նպաստ վարժարանին Զորեքշաբթի
օրուան զատնթացքներուն:

Մասնակցութիւն 10 ֆրանք

Կարելի է տեղերը վերապահել հե-
ռաձայնելով ԵԱՆՑ 589-20-48

Կամ վարժարանը 027-18-28

ԿԱՐՄԻՐ ԽԱՋ

ԲԱՅՈՒՄ ԾՈՎԵԶԵՐԵԱՅ ՕԴԱՓՈԽՈՒ -
ԹԵԱՆ ՆՈՐ ԿԱՅԱՆԻՆ

2 Յուլիս

Ա. խումբ՝ 2 Յուլիս - 31 Յուլիս

Բ. խումբ՝ 31 Յուլիս - 29 Օգոստ.

6-14 տարեկան մանուկներու արձանա-
գրութեան համար դիմել Հայ Կարմիր

Խաչի կեդրոնատեղին՝
15, Ռիւ Ժան Կուստ, Փարիզ Տրդ
Երկուշաբթի եւ Ուրբաթ առաւօտները
ժամը 10-12:

ԼԻՈՆԻ ՇՐՋԱՆԻՆ ՀԱՄԱՐ

Հեռաձայնել

Տիկին Տէյրիմէնճեանին 24-65-24

Կամ Տիկին Ֆէլլահեանին 62-83-42

Imprimé sur les Presses
DU JOURNAL « HARATCH »
83, Rue d'Hauteville, Paris (10e)

ՕՐՈՒԱՆ ԿԵՊԵՐԸ
ՔԱՐՈԶՉԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ
— 0 —

Եթէ կ'ուզենք մեր Դատը ճանչնել օտար, միջազգային հասարակութեան, ա՛մէն բանէ առաջ ուժ պէտք է տանք քաղաքական աշխատանքին :

Ներկայ հիւլէական դարուն քարոզչութեան ամէնէն ազդեցիկ միջոցներն են ժայռափորն ու հեռատեսիլը, առանց անտեսելու մամուլը, որ աւելի մնայուն հանգամանք ունի, ինչպէս նաեւ դաստիարակչութիւններն ու հրապարակային հասարակութիւնները :

Մեր բոլոր միութիւններն ալ լաւ կազմակերպուած չեն քարոզչական աշխատանքի համար :

Ունինք բազմաթիւ կազմակերպութիւններ, որոնք իրենց ծրագրին մէջ անխուսափելիորէն արձանագրած են, իբրեւ ղեկավար նպատակ, «ճանչնել հայկական մշակոյթը Թրանսպրիներուն եւ Փրանսական» Հայերուն :

Իբրեւ գաղափար շատ գովելի է անուշտ այս «նպատակ»ը, մանաւանդ որ անկախ հաճելի է հիւրընկալ երկրի պետական վարչներուն, կը դիւրացնէ մեր միութիւններու աշխատանքը եւ կը հարթէ անոնց դժուրութեան առջեւ ցցուելիք հաւանական արգելքները :

Սակայն քանի՞ միութիւն լրիւ կ'իրագործէ ծրագրի այդ ղեկավար մասը :

Մեր գիրն ու զրականութիւնը, պատմութիւնն ու արուեստը, մէկ խօսքով հայկական մշակոյթը, առաւել եւս մեր ազգային — քաղաքական պահանջները Թրանսպրիներն եւ առհասարակ միջազգային հանրային կարծիքին ծանօթացնելու համար շատ քիչ, գրեթէ անշնչան աշխատանք կը տարուի դժբախտաբար :

Մեր մշակութային միութիւնները պէտք է ծրագրուած աշխատանքի լծուին Հայ — լուս քաղաքակրթական արժէքները ծանօթացնելու համար հիւրընկալ երկրի ժողովուրդին :

Հայ Դատի Պաշտպան Յանձնախումբ — իբրեւ շատ աւելի կարեւոր դործ ունին կատարելիք մանաւանդ ներկայիս, երբ միջազգային — ու նաեւ թրքական — մամուլին մէջ կը խօսուի Հայկական Հարցի մասին :

Երկաթը տաք տաք պէտք է ծեծել :

Մեր երիտասարդները առիթ պէտք է ստեղծեն Հայութեան պահանջները պարզելու համար արեւմուտքի քաղաքակիրթ ազգերուն :

Մերի դաշնագրի յիսնամեակին առթիւ Հայ Դատի Յանձնախումբն ու Հ. Յ. Դ. Նոր Սերունդը հրապարակային հասարակութիւնը կազմակերպեցին Փարիզի, Լիոնի եւ Մարսելիոյ մէջ, շարժման մէջ ղեկավար Հայ Բանաստեղծներու կարգին Փրանսացի բարեկամներ :

Նման հաւաքոյթներ պէտք է դառնան լաւատարմի : Մանաւանդ պէտք է ուշադրել ըստ, որ Հայերէ աւելի տեղացիներ ներկայ ըլլան անոնց : Անշուշտ մեր մէջ ալ ունինք տարրեր, որ պէտք ունին ծանօթանալու մեր անցեալ պատմութեան, ներկայ պայմաններուն եւ ապագայ հեռանկարներուն :

Սակայն մեր քարոզչական աշխատանքի բուն նպատակը պէտք է ըլլայ օտարին ճանչնել Հայոց դարձաւոր ու փառաւոր պատմութիւնը, Ոսկեդարէն, Վարդանանքէն մինչեւ Մարդարապատ : Մեր ապրած սրբութեան դարերը օտարի անարգ

ՕՐՈՒԱՆ ԴԵՊԵՐԸ
ՅՈՒՆԱՍՏԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ
ՀՈԶԱԿԵՑ

Փափատոփուլու թաղաւորին ծննդեան տարեդարձին նախօրեակը ընտրած էր Հանրապետութիւն հռչակելու համար Յունաստանի մէջ, ինչ որ նաեւ կը նշանակէ թաղաւորին դահլիճներուն :

Ժ. Փափատոփուլու, որ առժամեայ կերպով կը ստանձնէ Հանրապետութեան նախագահութիւնը, ձայն — հեռատեսիլէն յայտարարեց, թէ Սահմանադրութեան ծրագիր մը պիտի ներկայացուի մէկ ամիսէն յոյն ժողովուրդին, որ, իր կարգին, երկու ամիսէն հանրաքուէով մը պիտի վաւերացնէ զայն : Վերջապէս, խորհրդարանական ընտրութիւններ տեղի պիտի ունենան մինչեւ 1974ի վերջ :

Եօթը վայրկեան տեւող ճառի մը ընթացքին վարչապետը խիստ քննադատեց թաղաւորը, որ 1967էն ի վեր Հոռոմ կը գտնուի : Ըստ Փափատոփուլուի թաղաւորը «անպատասխանատու երախայի մը նման վարուած է, դաւերու մէջ միւրճուելով, ազգային ուժերուն դէմ ելլելով եւ արեւմտախնդիր կուսակցութեան մը առաջնորդի գերին մէջ դնելով ինքզինքը, որպէսզի պետական հարուած մը փորձէ» :

Միւս կողմէ, բանակներու նախարար — րութիւնը հաղորդագրութեամբ ճշդեց, թէ անցեալ շաբթուան դաւին մեղաւորից դարձած է նախկին թաղաւորը եւ Գա — րամանիս, նախկին վարչապետը իբրեւ

լուծին տակ : Մեր ազատագրական շարժումները օսմանեան բռնակալ վարչա — ձեւին դէմ : Թուրքերու ծրագրած ու դործողութեան ցեղասպանութիւնը : Հայու — թեան զարթոնքը եւ անկախութեան տիրանալը դժնդակ պայմաններու տակ, համահայկական ճիգերով, մեր համ — րանքին կէսը կորսնցնելէ վերջ :

Այս ուղղութեամբ գովելի ձեռնարկ մըն էր, որ կատարեց առջի տարի մեր անկեղծ ու հաւատարիմ բարեկամը՝ նախկին նախարար եւ երեսփոխան Էտուար Տերփէօ, Սոյի քաղաքապետարանի սրահին մէջ կազմակերպելով դասախօսու — թիւն մը Հայկական Հարցի մասին : Ներկաները, բացի քանի մը Հայերէ, բոլորն ալ Թրանսպրիներ էին, որոնք եկեր էին լսելու իրենց նախկին քաղաքապետը : Դասախօսը, լրիւ ուսումնասիրած մեր ժամանակակից պատմութիւնը, ամբողջ երկու ժամ մազնիւսացուց ունկնդիրները, պանծացնելով Հայութիւնը եւ չեւտը ղեկավար Հայոց քաղաքական ու հոգային արդար պահանջներուն վրայ :

Անհատական նախաձեռնութեամբ էր կազմակերպուած այդ հաւաքոյթը, բո — լորովին ինքնաբերուի կերպով :

Նման դասախօսութիւններ պէտք է տեղի ունենան Փարիզի գաղաքան թաղե — րուն եւ արուստեաններուն մէջ :

Մեր մշակութային միութիւններուն եւ Հայ Դատի Պաշտպան Յանձնախումբ — րուն առաջնակարգ պարտականութիւնը պէտք է ըլլայ քարոզչական աշխատանք միջազգային հանրային կարծիքին ճանչ — ցնելու համար Հայութիւնը :

ՀԱՐԱՏ—ՍԱՄՈՒԷԼ

ԵՐԵՒԱՆ <=> ՓԱՐԻԶ
Հ Ե Ռ Ա Տ Ի Պ

ԵՐԵՒԱՆ (Արմէնփրէս, Մայիս 28)
ԿՈՅՐԵՐՈՒ ՎԻՃԱԿԸ

Հայաստանի կոյրերը իրենց տրամադրութեան տակ ունին երեք ձեռնարկու — թիւներ, որոնց տարեկան արտադրու — թիւնը կը հասնի տասը միլիոն ոտքի : Այս արտադրութիւնները երկտարական ճիւղի կը պատկանին (լամբ եւայլն), ինչպէս նաեւ կենցաղային առարկաներու : Ասոնց որակը լաւ է :

Կոյրերը աշխատաւարձքէ դատ կեն — սաթոշակ կը ստանան եւ տուք չեն վճարեր. ձրի կ'օգուտին քաղաքի հաղորդակցութեանց միջոցներէն :

Կոյրերու 80 տոկոսը գրեւ-կարգալ գի — տէ, չնորհիւ այն յատուկ դպրոցներուն, ուր անոնք միջնակարգ կը թուիւն կը ստանան : Մասնաւոր հրատարակչական մը հարկւաւոր գիրքեր եւ դասագիրքեր կը հրատարակէ : Կոյրերու համար կը հրատարակուի ամսագիր մը, իսկ Նրե — ւանի մէջ կան երկու մշակութային տու — ներ անոնց համար, ուր տեղի կ'ունենան դրական — երաժշտական երեկոներ, ճա — րակի մրցումներ : Մասնագէտ ղեկա —

միջնորդ ծառայած է նաւատորմի ըմ — րոստ սպաներուն եւ թաղաւորին միջեւ : Յունաստան ասիէ առաջ երկու անգամ Հայաստանութիւնը դարձած է, առաջինը 1827էն 1831, երկրորդը՝ 1924էն 1932 :

Հոռոմի մէջ, Ուրբաթ օր Կոնստանդին թաղաւորը մերժած է պատասխանել լրա — գրողներուն բայց ի վերջոյ ըսած է թէ յայտարարութիւն մը պիտի ընէ : Գալով Գարամանլիսի ըսած է թէ Աթէնքի կա — ռավարութեան կամայական որոշումը իր դադարեանից տարին կը հասցնէ Յունաս — տանի ազգային տագնապը : Գարաման — լիսի համար Փափատոփուլուս այս ձեւով կ'ուզէ վերջնական ընդոյթ տալ ձեռնա — րութեան : Նախկին վարչապետը, բա — ցարձակապէս կը հերքէ թէ մասնակցած ըլլայ դաւին :

× Մակարիոս Արք. յայտարարած է թէ ինք միապետական կը մնայ :

Կը կարծուի թէ Յունաստանի Հանրա — պետութեան ճանաչումը որեւէ դժուար — րութիւն պիտի չստեղծէ : Ամերիկա, Պորտ. Միութիւն եւ Զինատան անմի — ջապէս պիտի ճանչնան նոր վարչակարգը իսկ միւսներն ալ բաւական շահեր ունին որպէսզի տարրեր բան չընեն :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՆԱԽԱԳԱՀ ՓՈՆՓԻՏՈՒԻ Համար «Նիք — սընի հետ հանդիպումը ծննդաբերու — թիւն մը չէր այլ՝ յղութեան պատրաս — տութիւնը ինչ որ աւելի հաճելի է» : Փոն — փիտու չեւտեց թէ համակարծիք տե — սակցաները աւելի շատ են քան տարա — կարծութիւնները :

ԷՏՄՈՒ ՄԻՌ լայն մեծամասնութեամբ ընդհ. քարտուղար վերընտրուեցաւ Սէ. ԷՖ. Տէ. Թէ. ի : Ընտրութեան առաջ Մէն. խումբ կերպով քննադատած էր Համա — յայտարարութեան գերքը որ «խո — չընդոտ մըն է ընկերվարութեան դա — լուստին» :

վարներու ձեռքով ստեղծուած են երգ — չախումբ, նուագախումբ եւ 30 հոգիէ բաղկացած թատերախումբ մը :

×

ՃԻՐԱՍՍՅՈՒ ՍՏՆԱԳԻՏԸ
ԲԻՐԱԿԱՆԻ ՄԷՋ

Մէկուկէս ամսուան համար Բիւրական ժամանած է Փարիզի աստղարագիտու — թեան հաստատութեան տնօրէնը՝ Տոքթ. Ժան-Բլազ Փեկէր, որ իր աշխատանքնե — րուն մասին հետեւեալը յայտարարած է. «Իմ ծրագրներս կապ ունին ծիր-կաթի — նի հոլովոյթի ուսումնասիրութեան հար — ցերու հետ : Այդ ուղղութեամբ պիտի աշխատիմ Բիւրականի մէջ : Անշուշտ շատ օգտակար պիտի ըլլան հայ գիտնական — ներու եւ, մասնաւորապէս, Ակադ. Վ. Համբարձումեանի խորհուրդները» :

«Վերջին եօթը տարիներուն անկայուն աստղերու հետազոտութիւնները յաջո — ղութեամբ կը կատարուին հայ եւ Փրան — սացի աստղագէտներու կողմէ միասնա — բար : Ասոնց ուսումնասիրութեամբ դրա — դած են Բիւրականի փոխ-տնօրէնը Լուս — վիդ Միլլոյեան, Տոքթ. Տանիէլ Շալոնօ եւ այլ մասնագէտներ, որոնք միասին եր — կարատես քննութիւններ կը կատարեն :

«Աշխարհի մէջ կան գիտական կեդրոն — ներ, որոնք իրենց թեքնիք միջոցներովը եւ գիտնականներու մեծ թիւովը զգալի կերպով կը գերազանցեն Բիւրականի աստղագիտարանը : Սակայն, Բիւրական ունի իր իւրաքանչեւ գիծը, որ շատ հա — ճելի է ինծի համար : Հոս հայեացքնե — րու միասնականութիւնը կը տիրէ եւ գիտ — նականները չեն ցրուած տարբեր բնա — դաւաններու մէջ, այլ կեդրոնացած են երկու մեծ հարցերու վրայ՝ կայուն աստ — ղեր եւ ծիր-կաթիներ : Ասիկա պատ — ճառ է եղած, որ Բիւրականցիներու շատ դադափարներ լայն արձագանգ գտնեն հա — մաշխարհային գիտական շրջանակնե — րու մէջ եւ հիմք ծառայեն անոնց աշխա — տանքներուն համար : Ասիկա այնքան սկի — ներեւ է, որ Պորտ. Միութիւն այցելող Փրանսացի գիտնականներուն գոնէ կէսը անպայման կ'ուզէ Հայաստան այցելել» :

×

ՃԻՐԱՍՍՅՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՐԱՆՈՒՄԻ ՄԷՋ
ՊԱՏՈՒՐԱԿԱՆԻՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Թրանսպրի Աշխատանքի Ընդհ. Հա — մադաշնակցութեան պատուիրակութիւնը, ղեկավարութեամբ Ժորժ Սեկիւի, Մայիս 25ին այցելած է Երեւանի գիւնդործու — թեան, խաղողագործութեան եւ պտղա — րուծութեան հիմնարկութիւնը, ինչպէս նաեւ գիտած է Էլմիլաճիւի ճարտարա — պետական յուշարձանները : Պատուիրա — կութիւնը նոյն օրը մեկնած է Վոլգո — գրադ :

×

«ԱՐԱՐԱՏ»Ի ՓԱՅԼՈՒՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

«Արարատ»ը, որ իր նախորդ երկու մրցումներուն մէջ պարտուած էր, որ — պէսզի առաջին դիրքի մէջ մնար, պէտք է անպայման նոր յաղթանակներ ձեռք ձգէր : Ասիկա դժուար իրադրոճելի էր, մանաւանդ որ խումբը այս անգամ պիտի մրցէր Ղազարխանի մայրաքա — դաքի «Կայրաթ» խումբին դէմ, որ շատ լաւ պաշտպանողական խաղ մը կը կի — րարէր : Մնաց որ «Արարատ»ի կազմէն կը բացակայէին Ա. Անդրէասեան եւ Մ. Գիւրգեան : Այնուամենայնիւ «Արարատ» սքանչելի խաղարկութիւն մը ցոյց տա — լով 4-1 կէտով պարտութեան մատնած է «Կայրաթ»ը :

«Արարատ» իր այս յաղթանակով ա — ռաջին դիրքը գրաւեց ընդհանուր դասա — տրումին մէջ :

ՏԵՂԵՐ ՈՒՐ ԵՍ ԵՂԵՐ ԵՍ
ՊԵՇԻԿԹԱՇ

U.

Միայնակությունն չբնականին երկրին մէջ
 եւրոպական տարազը ընդհանրացած էր։
 Մայրաքաղաքին եւ գլխաւոր քաղաքնե-
 րու մէջ միայն կար, ինչ որ ըսել է բը-
 նակությունն հագել մէկ քառորդը։ Մի-
 անք երեք քառորդը, նոյնիսկ աւելին, իր
 ազգային, իր գաւառին տարազովն էր։
 Կը բաւէր պաղարներէն քալել։ Կը բա-
 ւէր քարափներէն, մղկիթներու հրապա-
 րալիներէն անցնիլ։ Կը տեսնէիր թէ որ-
 քան զիչ էին տարատ, բաճկոն հագնող-
 ները։

Տես այդ օրերու Պէշիկիթաշը կը պատմեմ: Շուկան: Մեր փուռը: խմորատան զործատորներ ունէինք: Ասոնք Շապին Գարահիսարցի էին: Դաշտէն: Աշխարովայէն: Ածպղեբրցի էին: Հայ էին: Ալիւրը կը չաղուէին, խմորը կը թրէին, կը կշէին, կը գնդէին: Բասանները կը շարէին, փուռը կ'իթեցնէին, կ'եփէին, տեղեկած կը հանէին հացերը: Աշխարովացիներու հա՝ դուստովն էին. կապոյտ տիմի կտաւէ շալվարով սալթալով: Սալթաններուն առաջըը բաց էին: Շալվարները երկայն կամ կարճ էին: Երկայնները մինչեւ կըրունկները, կարճերը մինչեւ ծունկերը կը հասնէին: Գլուխին Ֆէս էր, զունաւոր եմենիով մը ապարդեշով թոյրտիքը:

Փուռը հաց չէր ծախուեր: Հիմախուան պէս փուռը երթալ հաց առնել զրեթէ՛ չկար: Նպարաւաճառներն ալ հաց չկար: Հացերը թաղերը, արուարձանները յաճախորդներու տունները կը տարուէին: Հիմախուան պէս կանխիկ ալ չէր: Ապառնիկ էր: Հացերը կը զրուէին հացի պըզտիկ տապրակներու մէջ: Կամ փայտէ ձողիկներ կուտայինք, չեթելէ կ'ըսէինք, զե՛րիով կը կիցէինք քանի հաց որ առնէին: Դրամը շարթովուրի երկու շա՛ւրթը, կամ մասու զլուխ կը վճարէին:

Թապալաքեաւներէն էին Հացերը տանող յները: Փուռը արտու ունէր, ձի ունէր: Վեց ձի ունէինք: Փուռինն էին: Հացերը զոյգ կողովներով ձիերուն կը բեռնային: Ձիու մը 200–250 Հաց կը բեռնուէր: Այս դարձը մենք Արմտանցիներս ու Անա – վուտները կ'ընէինք: Սեֆեր աղան, աշկերտ մըն ալ ունէր, երկու ձիով օրական հինգ Հարիւր Հաց կը տանէր: Սեֆեր աղա Շքոտրացի էր: Շքոտրայի իտատին ուսած էր: Սքանչելի զիր մը ունէր: Նախըշի պէս կը Հարէր: Մալիյէի պաշտոնեայ եղած էր: Ձգեր էր, ԹապալաքեաւուԹիւն կ'ընէր: Իր Թաղերը Մազքա ՆշանԹաշի էին: Ուղա Նուպան, ուսղա Վանկերը Գոտովացի էին: Բրխտոնեայ էին, իրարու ազգական էին:

Աստուծոյ մէկ ձիով էին: Ուխտամոր Ենի Մահալլէ էին իրենց յաճախողները: Ուսուցանէին ձի չունէր: Թեկէ Տեւրէնցի էր: Եռոտասնի մը ու որքան կրնաս երեւակայել թապալա մը ունէր: Սակաւ - աւախօ մէր: Կարծես միշտ բանի մը վրայ կ'ընէր:

Օրը երկու անգամ իր յաճախորդնե-
րուն կ'երթար: Ազգայթները, ցերեկնե-
րէ վերջ ալ Նշան Թաշիր զառկւերները:
Ամէն անգամուն 70-75 հաց կը շարէր
թապալային վրայ: Լաթէ հիւսուած բոլոր
թակ մը կը դնէր իր առնալվուտի գդակին
վրայ: Կը վերցնէր թապալան գլուխը, ե-
ռոտանին յենակ ընելով ու ճամբայ կ'եր-
էր: Մենք մեզի կը զարմանայինք իր
գլխուն այդքան հացերուն ծանրութեանը
գիմանալուն: Զորսն ալ իրենց ազգային
ոտարագովն էին: Ասոնցիկն կապոյտ կը-
տաւէ շայն: Թաղիքի պէս հաստ Բումէ-
լիէ չախին բաց կ'առնէր սրճագոյն
սալթ ու ըտթուռ էին: Բոթուռները սը-
րունքները կը սեղմէին, յետոյ կը լայն-
նային աւելի վերը: Սալթաներուն թե-
ւերը կարճ էին, մինչեւ արմուկները:
Թանճը մինթաններ կը հագնէին: Նոյն-
պէս սրճագոյն գդակներ կը զնէին: Սե-
ֆեր աղան եւրոպական հազուստ ունէր,
էջր հագնէր... իր տարագովն էր, ափի
մը չափ ճերմակ գդակը գլուխը:

Մենք կայինք Արմտանցիներս: Պապս լիարպեռ էր: Հայրս Մերոբենց Մարտիրոս պապս, մէկ ալ Մերեբունց Գրիգոր հօրեղբայրս թապալեքեար էին: Երկուքին թաղերը Օրթագլիւղ էին, երրորդին Բեւրա, Ֆէշիւիւի: Տեղեկահաճը կեցողը, տեղեկահատարը Պարսամ աղան էր: Ախորին ձիերուն նայողը Սարգիս ամուսն էր, որ Նշանին հետ օթեկ հացիեր պաղաղը կը տանէին 25-30 փարսա կը ծախէին:

Այս երկուքը Արմտանու Հագուստովն էին, կապոյտ սալթա, կապոյտ շալվարով: Միևնեքս, մենք, տաքատ, բաճ – կոնակ, բաճկոնով էինք: Բայց մեր արմտանցիութիւնը կ'երեւար մեր հագուստներուն տակէն: Առանց օճիքի, Արար – կիբու մանուսայէ, ձեռքի կարով, խոշոր կոճակներով մեր մինթանեքէն, ոտքերնուս հաստ ձեքմակ բուրդէ գուլպաններով, որոնք մեր տաքատներուն վրայէն կը քաշէինք, կարծես Պոլսոյ մէջ չէինք: Թաղերը չէինք երթար, գիւղն էինք, լեռները խոտ քաղելու, դաշտերը արտ հերկելու կամ արտ քաղելու կ'երթայինք: Մամս, մայրս կապոյտ կտասէ նոր–նոր սալթա, շալվար կարեցին ինձի ու Պոլլս զրկեցին: Ամօթ էր Հիներով Պոյիս եր–

Թալը, կարծես չալվարովս, մէջքի կարմիր
գօտիովս, գլխի արախչինովս Հալեպու
դուլթնէ մինթանովս Պուտոյ գպրոցները
սլտի յաճախէի: Դալաթիա տարին զիս,
պատրաստ հագուստներու վաճառատունէ
մէ տարբատ, բաճկոն հագցոցելիս: Բայց
նորեքուս ճերմակ գուլպաներիս, Դուլթի
մինթանս Արմտանի բերածներս էին:

Փոռին հացին տեղկեհա՛ն բարձր էր :
Մինչեւ մեր պորտը կը հասնէր : Տեղկեհա-
հին տակը երկու խանութ կար : Մէկը
աւելադործի էր , միւսը սրճարան էր :
Աւելադործները Մուսթաֆա աղան ու իր
քեռորդին Եւսուֆը ծալապատիկ կը
նստէին ու կ'աշխատէին : Մուսթաֆա ա-
ղան շատ աղէկ մարդ էր , Հայու ալ մօտ
էր : Խարբերոյցի էին :


Երկայնահասակ էր, նուռի գոյն կարմիր երեսներ ունէր: Նարբերդի սալքան ու չալվարը կը հագնէին: Իրը աղայի չալվար էր, կտաւէ չէր, կապոյտ ճուղայէ էր: Եղբրքները, գրպանները հուրմակ սրմա րայթաններով քանուած: Սալթանի նոյնպէս չուկայէ էր: Եուսուֆինը պարզ չուկայէ էր: Երկուքին Ֆէսերը գոյնզգոյն եմենիով ապարուշուած էին: Եուսուֆը գրեթէ ամէն օր աւելները կը կախէր ուսէն ծախելու կ'ելլէր: Մինչեւ Պոստիդի դելզերը կամ Ֆընտըզլատէ, Թօխհանէի թղզերը կ'երթար, ոտքերը նախշուն գուլպաներով, կապոյտ ու ճերմակ գծաւոր մինթանով: Ես Գէորգին հետ իրիկունները Ղալթիթոյ Կեդրոնա – կանի նախակրթարանէն դարձիս մէկ ձեռքս պալուսակս, միւսը սակառս, կը հանդիպէի իրեն, «սիւրբիւրէկէն...» կը պոռար, առանց տեսնելու կը ճանչնայի ձայնէն:

Մըճարանը փայտեբրու մթերանոցին վը-
րայ վանդակի մը պէս կախուած էր։
Նստարաններ կային։ Զիապանները, ան-
պորճները թուղթ կը խաղային։ Յաճա –
խորդներու շատը դուրսը կը նստէին ա-
թոռակներու վրայ։ Մուսա Չավուշը կը
բանայէր։ Իր թէյին, սուրճին ճամբարը
նըւոյզ պացած էր։ Պալատականները իւր-
մելու կուգային։ Տարեց էր։ Պէխերուն
չրթներուն մասը կը կտրէր, ծայրը ձգե-
լով։ Սեփ-սեփ էր քիթը չարունակ էն-
ֆիլէ քաշելուն։ Ան ալ մեր խմորի գոր-
ծաւորներուն գիւղէն Աժպտերէն էր։
Ճերմակ սաւանի կտորով կ'ապարոշէր
ֆէշը։ Ապա կը հաշնէր, չէյններուն,
տերփիշներուն պէս, բայց փշերը կտրած
էր չարժումները չարգիւելու համար։
Իր Աժպտերի նամակները ես կը կարդա-
յի, կը գրէի։ Օրը քանի անգամ կը ստի-
պէր թէյ խմելու։ Տղայ մը ունէր, Հազ-
մէն, իմ երկու տարիքս եւ անպիտանին
մէկն էր։ Հօրը վնաս ունէր, օգուտ չու-
նէր։

Փոփոխ կիցը Ուստա Եղիկին նպա-
րավաճառանոցն էր: Երկու մասով էր,
Առջևի մասը նպարեղչներուն բաժինն
էր: Փեսան Սալան կը կենար: Վարա -
դոյրով մը բաժնած էր ետևի մասը:
Իր աշխատեալու տեղն էր, խոհանոցա-
շարանը բաժն էր: Լեաքը կը տապկէր:

Հարգուհները Թովհանէէն կը բերէին: Պոլսոյ քաղաքապետական սպանդանոցը այն թուականներուն հոն էր: Սեղան մը ունէր, այնքան երկայն էր որ ատաղձա-գործարանները անգամ լցունէին: Ինք չուռած էր իր ձեռքով: Կէսը իր յաճախողները կը ճաշէին: Վրան ի՞նչ ըսես չկար: Այդ կ'ըսես, սոխ կ'ըսես, աղատեղէ կ'ըսես, ալիւր կ'ըսես... Իրարու վրայ դիպուած թիթեղէ պնակները, իր ծխառուիք, ծխափողը: Սեղանին կիցն ալ երկայն ոտքերով կրակարան մը ունէր, մինչեւ չթխուէր կրակով լեցուն: Բայց չկարծէք թէ կրակը իրն էր: Ան ամուլի փարած կուտար: Մեր փուռէն կը բերէր: Մենք փուռին կրակը ի՞նչ պիտի ընէինք, կը թողէինք որ ան տանէր: Սեղանին չոր տախտակներուն վրայ լեարդները կը մանրէր, կ'աղէր, կ'ալիւրոտէր, կը լեցնէր կրակարանին ձէթով լեցուն տապակը: Լեարդները կը ճգային: Ինք ազոտ, ալիւրոտ, արիւնոտ մատներով սոխերը կը կ'եղեւէր, կը մանրէր այն քան արագ որ ես կը դարմանայի: Նորէն տալ ազոտ արիւնոտ թաց ձեռքերով աղատեղները կը մանրէր, ըստկէ չկայ խոտ, չիւղ միտսին կը մանրուէին: Ձեռքերը չէր լուար, կը չորցնէր լաթով մը որով հագար անգամ շորոցուցած էր: Ծիւկարա մը կը փաթթէր, կը վտռէր, մոխիրը կ'իյնար սոխերուն, լեարդներուն վրայ: Թող իյնային: Տապկուածները կը պարպէր, քանիբորոգը կը սկսէր տապկել: Ծանծեղը ըսես կը թառէին իր մատներուն վրայ, դանակին վրայ: Տապկուածներուն, չտապկուածներուն վրայ պոռոնոցին ու թեւերուն վրայ: Կը փակէին, նորէն կուգային: Եւ յաճախորդները իրենց կէս կամ քառորդ հացերովը ներս կը մտնէին, կը նստէին նոյն սեղանին վերի մասին վրայ: Քսան եւ քառասուն փարա էին պնակները. դգալ դգալ կը լեցնէր. մատներովը սոխ, աղատեղ կ'աւելցնէր, կը դնէր յաճախորդին առջեւ: Ուտողը կ'ելլէր, նորէր կուգային: Պնակները չէին լուացուիր: Արդէն ուտողը հացին փափուկովը աշպակ կը սըրբէր որ պնակին մէջը սոխին, ձէթին, աղատեղին հետքը անգամ չէր մնար, նոր կլայցկուած կը կարծէիր: Մինչեւ իրիկուն սոխերուն, լեարդներուն, ձէթերուն մէջ ըլլալով Ուստա Եօրկին սոխ, ձէթ, լեարդ կը հոտէր: Տղու երեւակայութիւնով կը խորհէի թէ ստոր կնիկը ինչպէս ստոր հետ կը պռուկէր: Հարկաւ կռնակ կռնակի չէին պառկեր, փոր փորի, բերան բերնի կուգային: Ձէ՞ր դաներ: Ինք ալ, փեսան ալ Զարամանցի էին: Ինք Բումբելիի հաստ չալախէ տարատ բաճ - կնոյով էր, բայց իւղեբուռ, աղտեբուռ մէջ կարծրացած էին: Փեսան ըսես ճիշդ իր հակառակուն էր: Այնիս կերպասէ էին ա-տոր հաղուստները, միշտ արդուկուած էին, եւ միշտ այ ամիրուած դէմքով էր:

ՅԱԿՈԲ ՄՆՁՈՒՐԻ

$$(\tau_{\text{up}} - 1)$$


U. VUU

ՀԱՄԱՇԽԱՐՑԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

1915 Ապրիլ 24ին, Պոլսահայ ընտրանի մտաւորականներուն եւ յեղափոխական – ներուն ձեռքակալութեան եւ Անատոլիի խորերը քշուելու լուրերը սարսափելի խորհմայ եւ բարոյալքով առաջ բերած էին. նորահաս մտաւորականներ եւ ու – սանոցներ ապաստանարան կը փնտռէին, վախնալով որ կարգը իրենց պիտի գայ : Ապաստան կը փնտռէին զինուորութենէ փախչող երիտասարդներ, լաւձ ըլլալով որ թուրք իշխանութիւնները, զէնքի տակ դաշնուող հայ սպաներն ու զինուորները

զինաթափ ընելով, անյայտ ուղղութեամբ
կը քշէին, իսկ ամրաշէն զինուորներն ալ
խրամներու մէջ կոտորած էին :

Պոլսոյ Հայաշատ բոլոր թաղերուն մէջ, տուններու ձեղնայարկերը, նկուղներն ու նոյնիսկ տախտակըմէրը վերածուած էին ապաստանարանի կամ թաքստոցի, տե – սակ մը ստորերկրեայ աշխարհ, ուր հա – րապարտները կեանքի եւ մահուն ահա – ւոր պայքարը կը մղէին, մինչ թուրք ոս – տիկանութիւնը, հայանուն սեհովի «խա – ֆիլէ»ներու առաջնորդութեամբ, անողոք կերպով կը հետապնդէր ու կը հալածէր այդ ղժբախտները։ Բռնուողները կը չար – չարէին, կը տանջէին, կը բանտարկէին, կամ խուրդով կը քշէին երկրին ներքերը, ուր ստոյգ մահը կը սպասէր իրենց։

Մեր բնակած տունն ալ ապաստարան
դարձած էր. ապահո՞վ էր. ատրկա կա-
խում ունէր մեր հսկողութենէն, արթնա-
մտութենէն եւ փախտաականներուն ալ
ճարպիկութենէն. տասը երիտասարդներ
էին, լոլորն ալ մտաւորական կամ յեղա-
փոխական: Մեր հփրերուն թիւը երբեմն
պակսեցաւ ու երբեմն ալ աւելցաւ. մեր
թաքստոցը բնաւ թափուր չմնաց: Դուրսի
հետ կապը յաջողեցայ միշտ ալ պահել
եւ լուրերը բերել: Իսկ դուռ-դրացի կամ
պոչելու ծանօթ կիներ անխեղճանալի
մտաւորաւթիւններ կը բերէին այսինչին
հետաքննարկութեան, այսինչին ծայրածայր,
անակնկալ խուզարկութեան մը րոնթաք -

երկր մէկտու մը յաջող փախուստի, կամ բռնութեան եւ կամ ուրիշ տուն մը ապաստանելու մասին: Հնարամտութեան եւ ճարպիկութեան հարիւրաւոր զեղեցիկ դրուադներու վէպ մը պիտի ունենայինք, եթէ գրադէտ մը յաջողութիւն այլ հալածա-կաններուն կեանքը ռուսմանկիրիկ եւ ամփոփէր անոնց հանճարեղ «պիւտ»երը: Հայ մտաւորականութեան ձերբակա - լութենէն եւ տարադրութենէն վերջ, Պո-լիս կը հասնէին Արեւմտահայութեան խմբական տարադրութեան եւ կոտորած-ներու զարհուրելի լուրերը, անսահման սուղ ու վիշտով եւ նաեւ կատաղութեամբ լեցնելով մեր, ապրողներու սիրտերը: Ամէն փախստական նուիրական անձ էր, հերոս մըն էր եւ ընդի Պոլսեցի Հայ ազ-գայինը գերազոյն պարտականութիւն կը նկատէր անոնց փրկութիւնը, աչք առնե-լով ամէն տեսակ նեղութիւն, զրկանք ու փտանք:

Փախստական ընկերներու փոխադրու-
թեան եւ տեղաւորման գործով զբաղող
կամաւոր մըն ալ ես էի. տարիքս եւ ման-
րուք կազմս նպաստաւոր էին: Գաղտնի
ոստիկաններն ու լրտեսները պահ մը
սաստկացուցին հետապնդումը մասնա-
ւորաբար Պոլսեանի ամուրի հայ դաւա-
տացիներուն դէմ, առանց խնայելու նոյն-
իսկ զպրոցական պատանիներուն: Որքան
ալ տունէ տուն կամ թաղէ թաղ փոխադ-
րութիւնը դժուար ըլլար, պարտականու-

Թիւինս կը կատարէի ընկերներուս գնա-
հատանքին արժանանալով, ինչ որ ճար-
պիկութիւնս և յաջողութիւնս կ'աւելցնէր :
Այդ պայմաններու տակ օր մը Թարլա -
պաշըի իր Թաքստոցէն Այազ Փաշա Ուն-
ձեան Արարթըմանը փոխադրեցի Կեդրո-
նական վարժարանի տնօրէն, հայաբա-
րանասէր Փրոֆ. Աստուածատուր Խաչա-
տուրեանը : Բանի մը անդամ տեղէ-տեղ
փոխադրած եւն նաեւ Մ'անուկ Ալայանեանը,
Տիրուհի Պողոսեան ու Արմենակ Շալճեան :

Ձաւէն պատրիարքի, Մշոյ Գեղամի, Փրոֆ. Խաչատուրեանի եւ Խոսրով Պապայեանի միջեւ կապը կը պահէի նամակներ տանիլ բերելով: Միաժամանակ ուսեստեղէն կը հայթայթէի Փրոֆ. Խաչատուրեանին եւ ուրիշ փախստականներու: Դժուար գործ էր: Արաքն թերէն մէկեանին հետ, որ պարսկական անցադէր ունենալուն չտոհմէ, գերծ էր զինուորութեան եւ տարագրուելէ, պարտականութիւն ունէինք դտնել բաժնէնչափի թուղթեր — վեսիթա — մեռած անձեր կը կենդանացնէինք ու մասնաւորաբար պարապ անձագիրներ կը լեցնէինք կիններու անուններով իրբեւ ծննդավայր նշանաւ կելով տարագրութեան ենթարկուած գառանները: Իսկ ընկերներու տեղգիրտութեան ապահով միջոցներէն մէկն էր անձնագիրները պզտիկցնել եւ կամ 60էն վեր յոյց տալ տարիքները:

(Тур. - 28

ԳԱՐԱՀԻՍԱՐԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ
ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻԻ

ԶԱՐԿԻՆՔ, ԶԱՐՆՈՒԵՑԱՆՔ

Մեր ազգային դիմադրիչը բնորոշող բնութագրիչ թուականներէն մէկն է Շա-
րաբաճիսարի 1915ի հերոսամարտը։
Հերոսամարտերու տարեգրաբանները խթան
ընէին հանդիսանան նորահաս սերունդի դի-
մադրիչը եւ ազգային նկարագրիչը շա-
րաբաճիսարի։ Տարիներով սրտի անհուն տաղ-
անդամը անդամաւորած ենք մեր ողբեր -
գայի թան տառապալից թուականին, Այ-
րարի նշանին, անոր հասցուցած ա-
նուանը շարիքին։ Դժբախտաբար, նորա-
մարտի մօտ այն տպաւորութիւնը
անսերունդներէն, թէ ինչո՞ւ շարունակեցինք
հաւատարմութիւն մտածելակերպը, անմեղ
մահիւր սեփականացուցած՝ մենք
որ սերունդին փոխանցեցինք շարունակ-
աբար «պատիւներ», ինչ որ հարցական-
անուանեցինք առջեւ դանդաղ։

Մարտի մերկանքները բոլոր սե-
րունդներն ալ ունեցած են, սակայն բո-
լորն ալ փորձած են գտնել լուծումը։ Մեր
հերոսամարտի մեր աշխարհային ծառ -
անուանեցինք ենք մեզ. հարկ է, որ
անդամաւորած ասոր եւ զայն սեփակա-
նութիւնը դարձնենք նորահասներուն, իր-
եւ ներշնչումի աղբիւր։ Ազգային հե-
րոսամարտերու շարքին մէջ Շապին Գա-
րաբաճի հերոսամարտը իր արժանի
աղբիւրը գրաւած է։ Ան մեր ժամանակակից
ազգային պատմութեան փառապանք է։
Մենք մէկն է եւ, հետեւաբար, պարտաւոր
ենք զայն ներկայացնել իրեն հպարտու-
թեան աղբիւր, օտարութեան մէջ ծաղ-
կող, հասակ նետող սերունդին։ Հպար-
տութիւնը գոռոզութիւն է, այլ ինքնա-
նապաւնի մղող ըմբռնում։

Այսօր, Շապին Գարաբաճի հերոսա-
մարտի 58րդ տարեգրաբան է, եւ ի սրտե-
քցալիք, որ մինչեւ օրս լրիւ կերպով
կը կրցած զայն փոխանցել մեր հարա-
գասներուն, դիտութիւն ամբարով մեր
լիցքներուն։ Քաղաքական առողջ ըմ-
բռնում մը կը թելադրէ մեր սերունդին,
որ անդամաւոր արծարծենք հերոսամարտ-
ներու պատմութիւնը, որպէսզի նորերը
գիտնան եւ համոզուին, թէ մենք հլու-
նապանդ, վիզը ծռած, բռնութեան դէմ
համակերպութիւն ցուցադրած ժողովուր-
դի մը մնացորդները չենք եղած, այլ
զարկած ու զարնուած ենք՝ մահը գի-
տակցօրէն դիմաւորելու, մեր նախնիքնե-
րուն ազատաստեղծ կրակով մեր ինքնու-
թիւնը արժեքներու վճարակաւութեամբ։

Շապին Գարաբաճի հերոսամարտը
բաժանուի խոյանք մըն էր, ազգային

արժանաւորութիւնը հաստատող երեւոյթ
մըն էր։ Արդարեւ, 1915 Յունիս 2ին,
երբ առաջին համազարկերուն հետ բողո-
քարկու բողբը հրոյ-ճարակ դարձուցին
տուն-տեղ, ոչ ոք մտածեց իր տան ու
հարապատներուն մասին, բոլորն ալ խենթ
գիտութեամբ մը ասպարէզ նետուե-
ցան՝ հարուածով հարուածին պատաս-
խանելու վճարակաւութեամբ։ Մեծ ու
փոքր եղբայրացած էին՝ վարակիչ առ-
նականութեամբ։

Զարկին եւ զարնուեցան, քաղաք
խնկան առանց արցունքի։ Այսօր «Հերոս
մահացեց» երգին բառերը լողողութիւնս կը
քարկոծեն, երեւակայութեանս սահմանը
կ'ընդլայնեն զիս մանկացնելով։ Ո՞վ չի
զիտեր, թէ շատ քիչ բան գրուած է Շա-
պին Գարաբաճի հերոսամարտի մա-
սին պարզ այն պատճառով, որ վերապ-
րողներս մեր բերդին պէս առնական կեց-
ուածքով, ըմբոստ եւ ընդվզող խառ-
նուածքով խորշած ենք պարծենկոտութե-
նէ. զուտ ու լուսկեաց՝ հայրենասիրու-
թեան կրակը կը հրահրենք հաւատքով
եւ դիտակցութեամբ։ Որովհետեւ, վե-
րապրող Գարաբաճի ցին դիտէ, թէ հե-
րոսները, զոհարեցողները երբեք դուրս
սանք չեն անկկալեր։ Անոնք կռուեցան
վասն հայրենիքի ազատութեան։

Ինչպէս բոլոր հերոսամարտերը, Շա-
պին Գարաբաճի հերոսական խոյանքն
ալ իր խորքով, դիմադրով, ողբով հա-
մազգային իտէպին մարմնացումն է։
Բռնակալ Թրքութիւնը իր Պետութեամբ,
բանակով, փողոցային խուժանով եւ բո-
լոր հնարամբով միջոցներով չարորդեաց
գիւցաղանամարտի դեկլարներուն հա-
ւատքը խախտել։ Ժողովուրդը ամբողջ
28 օր բերդի անառիկ ժայռերու ամբու-
թեան ապաւինած, ծարաւ եւ անօթի,
կուրծք տուաւ թնդանթներու ումբե-
րուն։ Հոս անուններ չենք յիշատակեր
քաջ գիտնալով, որ անվահեր հերոսները
անունի փառք չիւնտեղեցին։ Անոնց փառքը
հայրենիքի սէրն եղաւ։

Այսօր, զարնանային Յունիսի ծաղկա-
բոյր օրով, դափնեպսակ կը բաշխենք ա-
րի հերոսներուն անյայտ գերեզմաննե-
րուն վրայ եւ 58 տարի ետ երթալով կը
յիշենք մեր անթաղ մեռելները, աւերակի
վերածուած կոթողակերտ սրբավայրերը,
մեր քանդուած տունները։

Այլ սակայն այդ անթաղ մահները
կեանք կ'առնեն, անոնց հոգիները կը սա-
ւառնին մեր վրայ։ Մահը դիտակցօրէն
դիմաւորողներուն կտակը ներշնչման աղ-
բիւր դարձած է մեզի։ Նորեր լսեցէ՛ք այդ
ձայնը, ականջալուր եղէ՛ք անոնց պատ-
գամին եւ վառ պահեցէ՛ք հայրենասիրու-
թեան զգացումը ձեր մէջ։

Անոնց պատգամը, այսօր, համահայ-
կական զաղափար դարձած է, զայն պի-
տի փոխանցենք սերունդէ սերունդ, մին-
չեւ որ ամբողջական հայրենիքի կեր-
տումը իրականութիւն դառնայ։

Փա՛ռք հերոսներուն։

ԱՆՇԵՆ ԿԱՐՈՏՈՒՆԻ

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՕՐԸ

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ
ՄԵՋ, ԿԻՐԱԿԻ 27 ՄԱՅԻՍ

— 0 —

«Երանի թէ կարենայինք ամէն Կիրակի
օրերը հայ մշակոյթին նուիրել» ըսաւ
սրամտօրէն օրուան խօսնակը։ Բայց հա-
ւատարապէս որքա՞ն հաճելի է որ մայր
հոգէն այսքան հեռու, հայ վարժարանի
մը սիրուն հանդիսասրահին մէջ, քովէ
քով եկած էին 300ի մօտ հայրենակից -
ներ ապրելու քանի մը ժամեր մեր փառա-
ւոր անցեալին պրպտումներով եւ լսելու
վերածնող ցեղին ձայնը օտարութեան
մէջ հասակ առած պատանիներու բերան-
ներէն։ Երեւոյթը ինքնին յուզիչ էր իր
մէջ եւ արժանի ամէն քաջալերանքի։

Յայտագրին կորիզը կը կազմէր աշա-
կերտներուն քառաձայն երգչախումբը,
կազմուած 75 հոգիներէ, եւ արդիւնք
խմբավար Գեորգ Եսայէկեանի յարատեւ
ջանքերուն, պատանեկան հաճելի ձայնե-
րով կոկիկ երգչախումբ մը որ ներկա -
յացուցած փունջ մը հայկական ժողովը-
րական երգերուն մէջ զիտցաւ առնական-
նութիւն դնել ուր կորով պէտք էր, ա-
նուշտութիւն եւ զգացում՝ ուր քնքուշու-
թիւն էր հարկաւոր։

Ասոր հակառակ աղքատ թուեցաւ Կով-
կաս պարախումբին ներկայութիւնը պա-
րողներուն եւ պարերու թիւով։ Մայրե-
նու տօնին զուգահեռութիւնը պատճառ
եղած էր որ անոնցմէ կարեւոր մաս մը
բացակայէր ըմբռնելի պատճառներով։

Ապա համառօտ կերպով խօսք առաւ
Հ. Յ. Պետրիկեան, գլխաւորապէս շեշտե-
լով թէ հայ մշակոյթը ապակեփեղկին
մէջ ցուցադրուելիք դանձ մը չէ միայն,
այլ ամէն օր ապրելիք իրականութիւն մը
մայր հայրենիքէն մինչեւ հեռուոր
սփիւռքի ափունքները. այդ ինքնաբերա-
մէջնօրեայ պահանջն էր որ Գողթան եր-
գերուն կեանք տուաւ, Ս. Մեսրոպին՝
գլխը, մաղաղաթներուն՝ գոյն եւ Հայաս-
տանի անսպառ քարերէն կանգնեց փառ-
քի եւ հանճարի անսպառ կոթողներ։

Ու վերադառնալով մերօրեայ իրակա-
նութեան, յարգող բանախօսը, բառացիօ-
րէն ըսաւ. «Հայ մշակոյթը կերտել աշա-
օր՝ վերապահուած չէ առանձնաշնորհ -
եանքերու միայն, դեր մը ունինք ամէնքս
ալ անխափ. որպէս մայր՝ դնելով Ա.
Բ. Գ. մանուկներուն շրթներուն վրայ,
որպէս երիտասարդ՝ հետաքրքրուելով
հայ իրականութեամբ եւ տալով մեր բա-
ժինը մեր պատրաստութեան եւ կարողու-
թիւններուն համաձայն. եթէ նիւթական
դիրքի տէր ենք՝ տանք մեր նիւթական
բաժինն ալ ազգօգուտ բոլոր ձեռնարկ-
ներուն. եթէ իմացական եւ գեղարուես-
տական է միայն մեր կարողութիւնը, ի
սպաս դնենք դանդաղ մեր մշակոյթին՝

համամարդկային մէջ միշտ աւելի պայ-
ծառացնելու անոր փայլը»։

Կարծէք այս անդարդարժութիւններէն
ազգուած իրարու ետեւէ բեմ բարձրա -
ցան խումբ մը սիրուն պատանիներ, ո-
րոնց այնքան վայելած էր վարժարանին
համազգեստը, Չաւէն Շէրպէթեան,
Վառաժ Միրանեան, Ժան-Ժազ Թէյեան,
Կարօ Մանուշեան, Մինաս Չոլաքեան,
Արեգ Փօթուքեան, փոխն ի փոխ եւ ան-
սայթաք արտասանելով Չօպանեանի Գե-
ղոմ ի պատիւ հայ լեզուին, Շիրազի Կը-
տակ երկրորդը Հ. Վ. Յովհաննէսեանի
Երեւանից, եւ Արարատից, Վարուժանի
Հասուն արտը եւ Թումանեանի Նախք -
գանքը։

Սիրայօժար իրենց մասնակցութիւնը
բերին նաեւ «Էրեբունի Անսամպլ»ի երեք
անդամներ՝ Ղաչնակահար Կարօ Համալ-
եան, կիթառի վրայ Արթուր Փէշիպան-
եան եւ երիտասարդ երգչուհի Այտա Է-
միլեան որ ապրումով մեկնաբանեց վեց
ժողովրդական երգեր. — Ամպից կորաւ,
Վերադարձիր, Երեւանի սիրուն աղջիկ,
Ծաղիկներ ծաղիկներ, Սիրունիկ ետք ջան
եւ Սեւ սեւ աչքեր։ Այտա Էմիլեան ունի
երգելու շնորհ, ջերմ ձայն եւ երաժշտա-
կան զգայուն ականջ. իրեն կը պակիւն
կարծէք բեմը բռնելու փորձառութիւնը,
չարժումներու տիրապետութիւն. բաներ՝
որ ամէն արուեստագէտէ որոշ ժամանակ
խած են գրեթէ միշտ։

Առաջին դասարանի աշակերտներէն
Փրեմերիք Զամանգեան (Մարտիրոսյան),
սահուն հայերէնով կարգաց իր ուսում-
նասիրութիւնը «Աշուղներու եւ աշուղա -
պետ Սայաթ Նովայի մասին», եւ մտա-
ծել որ Փրեմերիք Ա. Բ. Գ. չէր գիտեր երբ
տարիներ առաջ վարժարանին սեմէն ներս
կը մտնէր։

Հաւ ուսումնասիրութիւններ պատրաս-
տած էին նաեւ Վանիկ Պէրպէրեան «Հայ-
կական մանրանկարչութեան» եւ Սերժ
Տարաքեան «Հայագիտութիւն եւ հայա-
գէտներու» մասին։

Այնուհետեւ ցուցադրուեցան հայկա -
կան գունաւոր Ֆիլմեր «Հայկական ռափ-
ստոսի» եւ «Եօթ երգ Հայաստանի մասին»
ազնուօրէն տրամադրուած խորհ. դես -
պանատան առաջին քարտուղար Պր. Լիւ-
րոյեանի կողմէ։

Երբ ամէն ինչ լրացաւ, ես ալ իմ կար-
գին սրտանց դռնէն խօսնակին նման.
«Երանի՛ թէ կարենայինք ամէն Կիրակին
հայ մշակոյթին նուիրել»։

Յ. Պ.

ԿԱՐԴԱՑԻՔ
ՏԱՐԱԾԵՑԻՔ

ՅԱՌԱՋԸ

«ԵԱՌԱՋ» ԹԵՐԹՕՆԸ

(195)

ՀԱՅԱՊՈՐԾ ԿԻՆԸ

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՍԵՐԻՅԻ ԿԵՐԱՐԱՆԱԳՈՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ձ.

— Մանրապէս վերաւորուած ըլլալու
մէջ, քանի որ շատ ցաւ կը զգամ, ըսաւ
Լուի։
— Այո, դաւա՛ս, ցաւ զգալու էք, պա-
տասխանեց Բոլիւր։ Վէճքը խորունկ է,
այս քան ձեզ վստահեցնեմ որ կեանքերնիւ
լուսնի մէջ չէ, եւ նոյնիսկ շուտով պի-
տի բուժուիք։ Բարեբախտաբար, այս ազ-
գային հետեւած է այն ճամբուն, ուր
արժանաւոր կրած էք մարդասպանին կող-
մէ։ Եթէ այդ կենը չըլլար, դուք պիտի

մեռնէիք ոչ թէ վէրքէն, այլ արեւնահո-
սումէն։

— Բարի մայր Լիզոն, կեանքս քեզի
կը պարտիմ, յարեց Լիւսի, թեւերը եր-
կարելով ժանն Ծորթիէի։

Այս վերջինը Լիւսին սրտին վրայ սեղ-
մեց փղձկումով։

— Որքա՞ն ատենէ ի վեր հոս կը գըտ-
նուիմ, հարցուց մանկամարդ աղիւր։

— Երէկ գիշերուէնէ ի վեր։

— Ձե՛մ կրնար սենեակս դառնալ։

Քոմիսէրը բժիշկին կողմը դարձաւ։
— Կարծեմ որեւէ անպատեհութիւն
չկայ, եթէ լաւ վերակապ մը դնեմ, պա-
տասխանեց Բոլիւրը, բայց այս իրիկուր-
նէ առաջ չըլլար։

— Մայր Լիզոն, քովէս պիտի չըթա-
նուիք, այնպէս չէ՞, հարցուց Լիւսի։

— Ոչ, անուշ... Սակայն կ'ուզեմ
մինչեւ Տօֆին փողոցը երթալ, գործա -
տէրիս իմաց տալ ու հոն անցած դար-
ձածը հասկնալ։ Կարելի եղածին չափ քիչ
պիտի մնամ հոն...։

— Իրաւունք ունիք, մայր Լիզոն, պէտք
է իմաց տալ...։ Գացէ՛ք, բայց չուտով
վերադարձէք։

— Զաւակ, մի վախճա՛ք, ըսաւ քոմի-
սէրը։ Առանձին պիտի չմնաք։ Կինս պի-
տի ընկերանայ ձեզի մինչեւ տիկնին
վերադարձը։

— Ազնիւ էք, պարոն, շնորհակալ եմ։
Ժանն Ծորթիէի նորէն համբուրեց Լիւ-

սին եւ դուրս ելլելով, կայարան վազեց։
Տօֆին փողոցը հասած պահուն բունցն
ցուած մը կրցն։ Սանուկին փեղկերը դոց-
ուած էին ու վրան փակցուած էր թուղթ
մը, սա բովանդակութեամբ։

«Մահուան պատմաւով փախուած»։

Ժանն վշտահար, տուն մտաւ նրբանց-
քէն եւ խնուրին ետեւի մասը հասաւ,
ուր կը գտնուէին Տիկնի Լըպէլ, փեսան
եւ սպասուհին։

— Լմեցաւ, մայր Լիզոն, խեղճ կինս
մեռաւ, ըսաւ Լըպէլ հատկաւ ձայնով
մը...։

Մայր Լիզոն արտասուալից ձայնով մը
մրմնջեց։

— Պարոն Լըպէլ, ներեցէ՛ք որ չկրցի
երէկ գիշեր հոս գալ։

— Չորանչա ըսաւ թէ ստիպուած էիք
հոն մնալ։ Ներումս է, մայր Լիզոն։
Սեղճ կինս հարցուց մեռնելէ առաջ։
Կ'ուզէր ձեզ տեսնել։ Շատ կը սիրէր ձեզ։
Մայր Լիզոն, ինձմէ պիտի չըթա՛նուիք,
հոս պիտի մնաք, ինչպէս կ'նոջս կենդա-
նութեան...։

Ժանն կը հեծկտար։ Քիչ մը հանդար-
տելէ յետոյ թոթովեց։

— Պարոն Լըպէլ, կը խնդրեմ որ այսօր
զիս թոյլատրէ՛ք Պուա Քոլումպ վերա -
դառնալու, հէ՛ք վերաւորիս քով։

— Կրնաք հոն երթալ, մայր Լիզոն։

— Վաղը առտու հոս պիտի ըլլամ ու
դործիս զուլիս պիտի անցնեմ, պատաս-

խանեց Ժանն։ Պէտք է որ ձեզի հետ գըտ-
նուիմ, երբ գերեզմանատուն տանին իմ
սիրելի տիրուհիս որ այնքան բարի էր
ինձի հանդէպ։

Մինչ Պուա Քոլումպ կը հասնէր ժանն,
տիկնի Օկիւսթինի աշխատանքին մէջ
կը զարմանային որ Լիւսի երեւան ելած
չէր, առջի գիշերուան կատարած յանձ-
նումի մասին տեղեկութիւն տալու հա-
մար։ Տիկնի Օկիւսթին գործաւորուհի -
ներէն մէկը Քէ Պուրպոն փողոցը գրկեց։
Գործաւորուհին վերադարձաւ, յայտա -
րարելով թէ Լիւսի առջի իրիկուն Պուա
Քոլումպ դացած ու այլեւս չէր վերադար-
ձած։

Այս բացակայութիւնը այնքան տար-
բնակ թուեցաւ մեծ գերձակուհիին որ
ան մտահոգութեան մատնուած, ծառայ
մը զրկեց Կարէն տը Քոլումպ։ Այդ ծառան
ստուգեց որ գործաւորուհին քաղաք -
պետին տունէն մեկնած էր ժամը տասնը-
մէկուսի ատենները, Փարիզ վերադառ -
նալու համար։

ԿԶԱՎԻԻ ՏԸ ՄՈՆԹԵՓԷՆ

(Շար.)

ՎԱԼԱՆՍԻ ՄԷԶ՝ Ն. Գասպարեանի — ԼԻՈՆ՝ Պալեանի — ՏԷՍԻՆ՝ Կ. Գաբաշեանի
— ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎՈՎ՝ Յ. Պոլաճեանի

ԼՍԻԱԳՈՅՆՍ ՃԱՆՁՑՆԵԼ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ

ՕՐՈՒԱՆ ԴԵՊՔԵՐԸ

ՊՈՒՐԺԵՒ ԱՂԵՏԸ

ՏՈՒՊՈԼՆԻԸ ՃԶՄՈՒԵՑԱԻ ԿՈՒՍԵՆՎԻԼԻ
ՎՐԱՅ — 14 ՄԵՌԵԱՆ, 28 ՎԻՐԱՒՈՐ

Վերադարձնի ուստացնացութիւնը, որ
անհրաժեշտ է չափազանց արագացնելու
պահանջներով Հայութիւնը յայտնաբերեց
անհրաժեշտ է չափազանց արագացնելու
պահանջներով Հայութիւնը յայտնաբերեց
անհրաժեշտ է չափազանց արագացնելու
պահանջներով Հայութիւնը յայտնաբերեց

Ոճիւր — արկածներուն երկար սիւնակ-
ներ, երբեմն էջեր կը յատկացնեն Փրան-
սական թերթերը: Զարմանալի, նոյնիսկ
ցաւալի է նկատել, որ անոնք ո'չ մէկ տող
յատկացնելին Մայիս 19-20ի Հայկական
ուստացնացութեան, որուն իրենց պատ-
ուտը մասնակցութիւն էին բերած Եւ-
րոպայի նախագահը, Պատերազմական
նախարարի ներկայացուցիչը, Վերադարձնի
հոգեւորական ու վարչական պատասխա-
նատու դէմքերը, ինչպէս նաեւ Փրանսա-
յի պաշտօնական ու մտաւորական ծանօթ
անձնակազմները:

Ինչպէս բացատրել Փրանսական մա-
մուլին լուրերը:

Եթէ լրջալին «Պրանս-Քիւլթիւր»ի կա-
նախարարի առաւօտեան կարճ ծանու-
ցումներն ու Մայիս 18ի Հարցադրոյցը,
ինչպէս նաեւ հեռատեսիլի Հայկական
ընթացի վերջաւորութեան դրաւոր երկուող
հարցադրութիւնը, Փրանսայիները ո'չ
մէկ տեղեկութիւն պիտի ունենային ա'յն-
քան մեծ աշխատանքով գլուխ հանուած
ուստացնացութեան մասին:

Կատարուած այս տեղեկատուութիւն —
ներն ալ մեծ բան էջին, մանաւանդ տեղի
ունեցան անյարմար ժամերը, երբ ծայ-
նասիրուող շատ ունկնդիր չունի: —
Կազմակերպիչները մեծ աշխատանք
էին տարած, արժանի չնորհաւորութեան:
Մակայն էջին մտածած քարոզչական բաժ-
նի մասին:

Նման պարագաներու, օրինակ, Հրեա-
ները նախաձեռնել աշխատանք կը տանին:
Լարթման մէջ կը դնեն հեռատեսիլն ու
ձայնասփիւղը, առաւելագոյն քարոզչու-
թիւնն ապահովելով իրենց նոյնիսկ նուազ
կարեւոր ձեռնարկներուն համար:
Յաւակնութիւնը չունինք համեմատու-
թեան դրուելու Հրեաներուն հետ, որոնք
շատ սերտ կապեր հաստատած են Փրան-
սական հեռատեսիլի եւ ձայնասփիւղի
կերպարներուն հետ: Ամէն Կիրակի առա-
ւօտ հեռատեսիլէն կէս ժամ կը խօսին
իրենց հոգեւոր ու մշակութային ար-
ժէքներուն մասին: Զայնասփիւղն ալ
կ'օգտագործեն յաճախ:

Մենք կը գոհանանք աւելի քիչով:
Մակայն անհրաժեշտ է ապահովել այդ
քիչը:

Ներկայիս պատահականութեան է ճշգ-
րած Փրանսական հեռատեսիլի եւ ձայ-
նասփիւղի Հայկական բաժինը:

Եւ սակայն բոլորս ալ կը դիտակցինք,
որ խիտ կենսական է արդիական այդ
աղբիւրի միջոցներով Հայութիւնը ճանչ-
ցնել միջոցաւոր ունկնդիրներու եւ ա-
կանատեսներու:

Տարբեր չեն պակսիր: Բարեբախտա-
բար ունինք Փրանսայի հոգեւորական եւ
աշխարհական բարեկամներ, որոնք ծա-
նօթ են Հայոց կրօնքին, եկեղանական ու

Կիրակի, ժամը 15.28ին, Պուրժէի օդա-
նաւային տօնը յանկարծ կ'ընդհատուէր
եղբրական կերպով: Որհնորդային Տուպ-
լեւ 144 դեր-ձայն օդանաւը կը պայթէր
իր մարդանքներու ընթացքին եւ կը ճզ-
մուէր Կուսէնիլի խումբ մը անակներու
վրայ: Սկիզբի ժամներուն մեռելներու
հաշուեկշիռը շատ աւելի ծանր կը կար-
ծուէր քանի 15 փալիլոն քարուքանդ ե-
ղած էին եւ փրտակներուն տակէն ամէն
ժամ դիակ կը դառնուէր, բայց երկու —
չարթի առտու կը յայտնուէր վերջնական
հաշուեկշիռը: — 14 մեռել, որոնց վեցը
օդանաւին խորհրդային անձնակազմն են
եւ ութ բնակիչ: Նաեւ 28 վիրաւոր, մէկ
մասը՝ ծանր:

Աղէտը ահաւոր է անշուշտ եւ պատ —
ճառները ցարդ անձանթ: Կ'ըսուի նոյն-
իսկ թէ Տուպլեւի օդաչուն գուցէ ուղած
է իր ցուցադրութիւնով զերգանցել
Քոնֆրաք, որ իրմէ առաջ ցուցադրած
էր իր կարելիութիւնները: Ամէն պարա-
զայի մէջ հարուածը ծանր է մանաւանդ
խորհրդային օդուծին համար: Անշուշտ
Մոսկուա վերջինը եղած է ողբերգական
լուրը հաղորդող, քանի որ Թաւ արկածէն
միայն հինգ ժամ ետք կարճ հեռագրով
մը արձագանդ հանդիսացած է: Յիշենք,
որ ինչպէս կը հաղորդէր Երեւանի հե-
ռատիւրը, Մայիս 19ին է. Երեւան վա-
րած էր Տուպլեւը 2160 քիլոմետր ժա-
մական արագութեամբ, 17 հազար մետր
բարձրութեամբ: Ինք է նաեւ, որ պէտք
է վարէր Տուպլեւը, Կիրակի, բայց
զինքը փոխարինած էր Կուլով:

Այս արկածը նաեւ կրկին մէջտեղ կը
հանէ օդանաւային մարդանքներու վը —
տանդը մարդաշատ արուարձաններու

քաղաքական պատմութեան, արուեստին
ու գրականութեան, եւ առհասարակ մը-
շակութային դարաւոր աւանդութեանց
ու արժէքներուն:

Ո'րքան պիտի ուզէինք մեր Փրանսայի
բարեկամներուն, մանաւանդ եկեղեցա —
կաններուն կողքին տեսնել նաեւ հայ
պատրաստուած հոգեւորականներ՝ քաջա-
տեղեակ Փրանսերէնի եւ հմուտ՝ կրօնա-
կան — վարդապետական ներթերու:

Ներկայիս «Օրբ-ստախուրիս եւ Քրիս-
տոնիս» չարքի ձայնասփիւղներէն
ու հեռատեսիլէն աւելի օգտուողներն են
սլաւ եւ օրթոտոքս ազգերը: Հայերու
մասնակցութիւնը հետզհետէ կը պակսի:

Եւ սակայն ունինք պատրաստուած մը-
տաւորականներ, որոնք կրնան պատուա-
ւոր կերպով ներկայացնել Հայկական ար-
ժէքները:

Անհրաժեշտ է լրջօրէն մտածել այս
մասին, ազգովին: Կազմել յանձնախումբ
մը ձեռնհաս անձերէ, որոնք ծրարուած
ձեռով եւ աւելի յաճախակի կարենան օդ-
տագործել քարոզչական արդիական մե-
քենան — ձայնասփիւղն ու հեռատեսիլը
— առանց անտեսելու մամուլը, Հայոս —
թիւնը լրագոյնս ճանչցնելու համար
հիւրընկալ երկրի ժողովուրդին:

ՀՐԱՆՏ-ՄԱՍՈՒԷԼ

մօտ: Կուսէնիլի բնակիչները իրաւացի
կերպով վրդոված են:

Յիշենք որ դիւանագիտական միջադէ-
պէն ետք, որ պատահած էր առջի օր երբ
խորհրդային զինուորական կցորդը լազէր
մը գրպանած էր, Մոսկուա որոշած էր
միայն Տուպլեւը թողուլ իրեն մաս —
նակցութիւն, ջնջելով մնացեալը: Արկա-
ծէն անմիջապէս ետք Պրանսայի նախա —
րարապետը ցաւակցական հեռագիր մը
դրկած էր Կուլովին: Գայով Անտրէ
Թիւրքայի, որ օդաչու է Քոնֆրաքի, փա-
կաք յայտնած էր իրեն օդանաւն օդա-
չու ընկերանալ Տուպլեւի օդաչունին,
բայց ինք. — իշխանութիւնները մերժած
էին, մերժած էին նաեւ Փրանսական հե-
ռատեսիլին ներկայութիւնը: Պրանսական
հեռատեսիլը սակայն մրցանիշ մը կոտ —
րեց այս առթիւ, ժամը 4ին իսկ Ա. կայա-
նէն տարով եղբրական արկածին առաջին
նկարները: Որհն. Միւլթիւնը անմիջա —
պէս ուղած է պատճէն մը ունենալ:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՆԱԽԱԳԱՀ ՓՈՆՓԻՏՈՒԻ առողջական
վիճակը սկսած է լուրջ մտահոգութիւն
պատճառել եւ Երկուշաբթի առտու Օռո-
նէն (Տոմիլիք Փատո) մինչեւ Փրովանսալ
(Կաթոն Տէֆէ) հարցում կուտային
Նախագահին, խնդրելով որ ըսէ ճշմար-
տութիւնը: Ծանօթ է որ անցեալ Կիրակի
Մայիսին տօնին առթիւ Մէմֆիս զինքը
փոխարինեց, նաեւ Պուրժէի ցուցահան —
դէսին: Ընդհանուր կարծիքն այն է թէ
Փոնփիտու իրեն հանրապետութեան Նա-
խագահ կը պատկանի ամբողջ ժողովուր-
դին եւ իր առողջութիւնը անձնական
հարց մը չէ քանի իր ուսերուն վրայ է
ամբողջ երկրին պատասխանատուութիւ-
նը: Զանազան լուրեր չըլած են վերջերս,
երբեմն նոյնիսկ մտահոգիչ: Միւս կողմէ
«Թեկնածուները» կը պատրաստուին, հա-
մոգումը որ 1976ին առաջ նախագահական
ընտրութիւն պիտի ըլլայ:

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ գահընկէց թագաւորը
Հոռմի մէջ յայտարարեց, թէ իր գահըն-
կէցութիւնը «հակօրինական քայլ մըն է՝
կատարուած հակօրինական կառավարու-
թեան մը կողմէ»: Անդրադառնալով հան-
րաքուէի հարցին, Կոնստանդին Նիստել
տուաւ, թէ ինք ուրախութեամբ կ'ըն —
դունի հանրաքուէն, պայմանաւ սակայն,
որ անկա տեղի ունենայ ազատ պայ —
մաններու մէջ եւ իսկապէս արտայայտէ
ժողովուրդին կամքը: Միւս կողմէ, Յու-
նաստանի եկեղեցիներուն մէջ այլեւս
արգիլուեցաւ թագաւորը յիշել պատա —
րագի ընթացքին, Կրօնքի նախարարին
հրահանգով:

ԻՄՐԱՅԷԼԻ եւ Սուրիոյ միջեւ դերինե-
րու փոխանակում տեղի ունեցաւ: Սու-
րիայիք ազատ արձակեցին իսրայելացի
երեք օդանաւորդ, իսկ Իսրայելացիք՝
սուրիացի եւ լիբանանցի 56 զինուորա —
կաններ, որոնցմէ եօթը սպայ են:

ԹԵՀՐԱՆԻ մէջ ամերիկացի սպայ մը,
որ պարսկական բանակի մօտ զինուորա-
կան խորհրդատու էր, սպաննուեցաւ ան-
ձնօթներու կողմէ, որոնք յաջողեցան
փախուստ տալ:

ՓԱՐՅԷԼԻ մեկնեցաւ Գնդ. Եւզենի Մի-
րոնիկին, որ Պուրժէի մէջ երկտորնիկ
երկու գործիքներ գողցած ու բռնուած
էր:

ԺՐՆԵԻԻ մէջ քարիւղ արտադրող եր-
կիրներու եւ քարիւղի ընկերութիւննե —
րու միջեւ համաձայնութիւն գոյացաւ
6,1 տոկոս բարձրացնելու քարիւղի ար-
տադրութեան գինը: Տարեկան գինն ի վեր
11,9 առ հարիւր յաւելում կը կրէ քարիւ-
ղի գինը: Այս վերջին յաւելումը կապ
ունի տարրի 10 տոկոս արժէքըման հետ:

ԵՐԵՒԱՆ ԽՈՒՄԻՏ ՀԵՌԱՏԻՊ

ԵՐԵՒԱՆ (Արմէնփրէս, Մայիս 29)

ՂԱԶԱՆ — ԻՋԵԻԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Շահագործման յանձնուած է Ղազախ-
իջեւան երկաթուղին: Այդ առթիւ բաղ-
մամարդ հաւաքոյթ մը տեղի ունեցած է
բացօթեայ:

ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ ՏՈՐԹՄՈՒՆՏԻ ՄԷՋ

Դաշնակցային Գերմանիոյ Տորթմունտ
քաղաքին մէջ մեծ հետաքրքրութիւն ըս-
տեղծած են հայ ձեռարուեստի գործերը,
որոնք ներկայացուած են ցուցահանդէսի
մը ընթացքին: Ցուցադրութեան դրուած
են 70 գործեր, որոնց շարքին կենցաղա-
յին առարկաներ, զարդեր, մանրանկար-
չական գործեր: Մասնաւորապէս մեծ հե-
տաքրքրութիւն ստեղծած են հայ ժո-
ղովուրդի հնադարեան արուեստի նմոյշ-
ները՝ շուրջ երեք հազար տարի առաջ
ստեղծուած պատկերազարդ գունաւոր
խեցեղէն, ինչպէս նաեւ ԺԸ-ԺԹ. դա —
րերու արձաթէ իրեր:

Ցուցահանդէսին շարժանկարներով ցոյց
տրուած են Սարեանի, Կոնյանի, Բո-
չարի, Բաթրեուկ-Մելիքեանի ստեղծա —
գործութիւնները:

ԽՈՐՀ. ՄԻՈՒԹԵԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄՐՅԱՆԱԿԻ ՀԱՅ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

«Իզվեստիա» հրատարակած է դիտու-
թեան, զրականութեան, արուեստի եւ
ճարտարապետութեան խորհրդային պե-
տական մրցանակներուն ներկայացուած
թեկնածուներու ցուցակը, ուր տեղ գրա-
ւած են նաեւ հայ մասնագէտներ եւ ար-
ուեստագէտներ: Գիտութեան եւ թեքնի-
քինի մարզին մէջ են Ե. Յովհաննիսեան,
Գ. Տէր-Յակոբեան, Ս. Գրիգորեան, Ա.
Ռաֆայէլեան — Աղայեան, Ա. Սարկի-
սով, Է. Աւետիսով, Ա. Վերաբեան, Ս.
Դանիէլեանց, Ա. Յարութիւնով, Ռ. Մե-
լիքեանց եւ Գ. Սոյեանց: Ասոնք կարե-
ւոր գործեր կատարած են հիւլէական
բնագիտութեան, անասնաբուծութեան,
բժշկագիտութեան, ինքնաշխատ սարքեր
ստեղծելու, քարիւղի արդիւնաբերու —
թեան, գունաւոր մետաղադրութեան
բնագաւառներուն մէջ:

Թատերական արուեստի բնագաւառին
մէջ մրցանակի ներկայացուած է բեմա-
դիր Հր. Ղափյանեան, որ 1970-72ին բե-
մադրած է «Եօթը կալարաններ», «Մէք
եւ ծիծաղ» ու «Ռիչըրտ Գ.»-ը:

Գրականութեան, արուեստի եւ ճար —
տարապետութեան տեսութեան ու պատ —
մութեան բնագաւառին մէջ՝ Բ. Յարու-
թիւնեան եւ Բ. Ռեյիզեանց:

ԸՄԲԵՄԱՐՏ

Երեւանցի Վալերի Յարութիւնեան եւ
Կիւնցի Նելսոն Դաւիթեան մաս կը կաղ-
մեն դասական ոճի բարձրարտի խոր —
հրդային կազմին՝ մասնակցելու համար
Եւրոպայի ակադեմիական մրցումներուն
Հելսինքիի մէջ: Առաջինը երկու տարիէ
ի վեր Որհն. Միւլթիւն ակադեմիան է, իսկ
երկրորդը անցեալին նոյնպէս ակադեմիան
եղած է:

ՕՐՈՒԱՆ ԴԵՊԲԵՐԸ

ԵՐԵՒԱՆ ↔ ՓԱՐԻԶ
Հ Ե Ռ Ա Տ Ի Պ

որ ժամանակ առ ժամանակ անսպասելի կերպով անոնց լուսաւորութիւնը կը մեծանայ տասը, նոյնիսկ հարիւր անգամ: Այս հոլովոյթը չափ կարճ կը տեւէ՝ ընդամէնը քանի մը տասնեակ վայրկեան: Հասնելով առաւելագոյն լուսաւորութեան, աստղը կը սկսի խամրիլ, սակայն աւելի դանդաղ ընթացքով, երբեմն կը տեւէ աւելի քան մէկ ժամ: Բռնկումէն յետոյ աստղը իր նախնական վիճակը կը ստանայ:

ՊԱԹԱՆԵԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍ - ՊԱՏՐԻԱՐԿԸ
ՓԱՐԻԶ ԿԸ ԺԱՄԱՆԷ

ԳՈՒՐԺԷԻ
ԱՂԵՏԷՆ ԵՏՔ

ԵՐԵՒԱՆ (Արմէնփրէս, Մայիս 30-31)

ԱԿԱԳ. Է. ՀԱՍՐԱԹԵԱՆ

Ակադ. Էզրաս Հասարթեանի ծննդեան 70 եւ անոր գիտական գործունէութեան 45ամեակին է:

Ակադեմականը ծնած է Արեւմտեան Հայաստան: 1915ին ազատելով թրքական ջարդէն, կ'ապաստանի Արեւելեան Հայաստան: 1922ին աւարտելով միջնակարգ դպրոցը, կը յաճախէ Երեւանի պետական համալսարանի գիւղատնտեսութեան եւ բժշկութեան ճիւղերը: Յետագային իր մասնագիտութիւնը կը կատարելագործէ Լենինգրադի մէջ՝ Իվան Պաւլովի եւ Լեւոն Օրբելիի ղեկավարութեան տակ:

Վերադառնալով Երեւան կը հիմնէ գիտահեղուական բնախօսութեան տարրալուծարանը: 1936ին գիտնականը կը ստանայ կենսաբանական գիտութիւններու տղթէօրի աստիճան, իսկ 1938ին կը դառնայ փրոֆեսօր, իսկ տարի մը ետք կ'ընտրուի Թղթակից — անդամ Խորհ. Միութեան գիտութիւններու ակադեմիայի:

Գիտնականը շուրջ 200 յօդուածներու եւ տասը մենագրութիւններու հեղինակ է, որոնցմէ շատերը թարգմանուած են բազմաթիւ լեզուներու:

Քսանեւհինդ տարիէ ի վեր կը ղեկավարէ Խորհ. Միութեան գիտութիւններու ակադեմիայի ջիղի եւ բնախօսութեան հիմնարկութիւնը:

Օդակայաններու շուրջ բնակողները, որոնք արդէն անտանելի պայմաններու մէջ էին աղմուկի հետեւանքով, այս անգամ աւելի եւս վրդոված են, Կիրակի օրուան արդէտէն ետք: Անգամ մը եւս խնդրոյ առարկայ է ապահովութիւնը եւ հանգիստը բայց Երկուշաբթի օրուան պաշտօնական զանազան յայտարարութիւններէն կը պարզուէր որ նոր միջոցներ ձեռք առնելու հարց չկայ: Խնդրոյ առարկայ է նաեւ Պուրժէի օդանավային փառատունը եւ բնակչութեանց դժգոհութիւնները, անշուշտ կը սաստկանան:

Կայ նաեւ հատուցման հարցը: Ապա — հոլովութեան ընկերութիւնները կ'ուզեն նախ որ ճշդուին պատասխանատուութիւնները: Քննութեան համար կարելորդ է գտնել Տաւադիւնի այն սեւ տուփը, որ ամէն օդանաւի մէջ կայ եւ կ'արձանագրէ թռիչքին մանրամասնութիւնները: Տուփը դնուած է բայց մէջի ֆիլմը բոլորովին փճացած է եւ ոչ մէկ բանի կը ծառայէ: Կասկած չկայ որ արդէտին դռները հատուցում պիտի ստանան բայց երբ եւ որո՞ւ կողմէ, ասիկա յստակ չէ եւ այդ իսկ պատճառով երկար ժամա — նակի կը կարօտի:

Վոսիգին ցաւակցական գիր մը ղըրկած է Ֆրանսայի Նախարարապետին, խնդրելով որ իր ցաւը յայտնէ զոհերու ընտանիքներուն: Միայն Երկուշաբթի իր րիկուն է որ Մոսկուայի ձայնասփիւռը յայտնած է նաեւ թէ զոհեր կան օդակայանին մերձաւոր մէկ թաղամասը: Իսկ խորհրդային երկու թերթեր՝ «Պրաւդա» եւ «Մովիժետսկայա Ռոսիա» լուրը հաղորդեցին Երկուշաբթի օր, իրենց չորրորդ էջին վրայ, հեռագրական լուրի ձեւով: Թերթերը տուած են միայն խորհրդային օդանաւին անձնակազմին մեռ — նայններու թիւը:

ՔԱՆՔ ՄԸ ՏՈՂՈՎ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԱՍՏԱԿԱՍԻՍՐ ՆՈՐ ՀԱՄԱՅՆԱԳՐԵՐ ԽՈՐԱԳՐԵՅԻՆ ԱՆՃԻՐ ՕՐ ՓԱՐԵՂԻ Մէջ: Ժամանակէ մը ի վեր արդէն Մատակարար սկսած էր հեռանալ Ֆրանսական հոգաւորութեանէն եւ օրէ օր աւելի ձեւ առաւ իր ձգտումը: Նոր կարգադրութեամբ Ֆրանսա հետզհետէ պիտի քաշէ իր ուժերը կողմէն եւ այս գործողութիւնը պիտի տեւէ մինչեւ Սեպտեմբեր մէկ: Ֆրանսա առ այժմ կը պահէ իր կարգ մը առաւելութիւնները Տիէկօ — Սուաբիլի նաւահանգիստը, ուր դեռ երկու տարի ծովայիններու մաս մըն ալ կը մնայ: Ծանօթ է որ Մատակարար արդէն հետացած է Ֆրանսի չրջագոտիէն: Ներկայ համաձայնութիւնը միջին ճամբայ մը կը նկատուի տրուած ըլլալով որ նոյն — իսկ խզումի վախ կար:

ՍՈՒՐԻԱ կը սպառնայ Լիբանանի իր օդային սահմանները արգելել Լիբանանէն եկած օդանաւերուն: Դամասկոսի առարկութիւնն այն է թէ դեռ վտանգ չէ որ

ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Բիւրականի հիմնական հետազոտութիւններէն մէկը դեռ կայուն չզարձած երիտասարդ աստղերու ուսումնասիրութիւնն է: Այդ աստղերու թիւին կը պատկանին, օրինակ, փոփոխական լուսաւորութիւն ցոյց տուող Թըրուկ աստղերը, ինչպէս նաեւ բռնկող աստղերը: Հայ աստղագէտներու ուղադրութիւնը կեդրոնացած է մասնաւորապէս վերջիններուն վրայ: Ասոնք հետաքրքրական են անոյժ,

Լիբանանցիներու եւ Պաղեստինցիներու յարաբերութիւնները բնականոն դարձած են:

Ընկերութիւն ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ գործադրուել կը շարունակուի: Արդէն Յրդ շարքին է եւ առայժմ լաւատեսութեան պատճառ չկայ: Բանթոյները կը բողոքեն թէ աշխատավարձի յաւելման համար եւ թէ աշխատանքի պայմաններու: Նախարարապետը չուզեր միջամտել, կարգադրութեան մը հօդք թողնել փո — նիխթովակիի վրայ:

ԻՏԱԼԻՈՑ գրեթէ բոլոր լրագրողները գործադուլի մէջ են: Ասոնք կը բողոքեն Իտալիոյ համախմբման դէմ: Վերջերս թրատարակիչ Ռուսընի գնած է Իլ Միսսանթիոյ եւ Սեֆուօ 19 օրաթերթերու բաժնեթուղթերու կէսը: Ռուսընի ծառայութիւնը կ'ընտրուի համար մինչ նոթ է իր ալ ձգտումին համար մինչ Իլ-Միսսանթիո կեդրոն ձախի թերթին է:

ԶԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ

Լճակներու ձկնարուծութիւնը Հայաստանի ձկան տնտեսութեան երիտասարդ ճիւղերէն է: Ներկայիս արուեստական լճակներու տարածութիւնը կը գրաւէ 700 հեկտար: Նախատեսուած է աշխան բնակչութեան ծախել 9000 թոն լճակի ձուկ:

ԵՐԵՒԱՆ (Արմէնփրէս, Յունիս 1)

ԼԷՈՆԻԴ ԿՈԳՆԻՆՆԻ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍ

Անուանի ջուրհաւաքը նուազահաս — դէս մը տուած է Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճին մէջ: Նուազած է կտորներ Շուպերթէ, Կրիկէ, Պրամսէ եւ ուրիշ երգահաններէ: 1946էն ի վեր ան բաղմաթիւ նուազահանդէսներ տուած է Երեւանի մէջ: Մոսկուայի երաժշտանոցի փրոֆեսօրը բազմաթիւ հայ աշակերտներ ունեցած է, որոնցմէ են Զ. Սահակեան, Հ. Յարութեան, Ի. Թադեւոսեան եւ ուրիշներ:

ԱՄՊԱՄԵՐԶ ՔԱՂԱՔԸ

Սեւանի մօտ վեր խոյանալու վրայ է Հայաստանի նորակերտ եւ նորաձեւ քաղաքներէն մէկը՝ Վարդենիսը: Հոս շինուեցան առաջին փոքր բնակելի տարածութեան շէնքերը, ընդամէնը չորս, որոնք դարձան նոր ոստանին «հիմնաքիւղ» օճախները:

Հին աւանդութիւն է Հայաստանի մէջ, որ երբ նոր քաղաք մը հիմնուի, առաջին առթիւ անոր ծնունդը վկայող յուշաքար մը կը դնուի: Այս աւանդութիւնը կը շարունակուի նաեւ այսօր: Արդարեւ, երբ տարի առաջ Ակադ. Վ. Համբար — ձումեան աստղերու մօտիկ այս վայրին մէջ Վարդենիսի հիմնաքարը դնուեց:

— 0 —

Շարթուրան վերջ փարիզ կը ժամանէ Հայ Կաթողիկէ Կաթողիկոս — Պատրիարք Իգնատիոս — Պետրոս Ժ. Պաթանեան, որ Կիրակի առտու, հայրապետական հանդիսաւոր պատարագ կը մատուցանէ Հայ Կաթողիկէ Մայր եկեղեցւոյ մէջ:

Վարդենիսը հանքագործներու քաղաք է, քանի որ անոր մօտ կը գտնուի Զօդի ոսկեհանքը, որուն արդիւնահանումը 1975ի վերջերը պիտի սկսի: Ազնիւ մետաղը ձեռք ձգելու գործատունը կառուցուելու վրայ է Արարատեան դաշտին մէջ, իսկ հանքաքարին հանոյթը տեղի պիտի ունենայ Զօդի մէջ:

Այժմ արդէն յստակ կ'ուրուագծուի ապագայ քաղաքը: Աւարտած շէնքերէն զատ մինչեւ տարեկանը երեք նոր շէնքեր եւս պիտի շինուին, իւրաքանչիւրը հինգ յարկանի: Շինուելու վրայ են պանդոկը, խանութներ եւ կենցաղային այլ կառոյցներ: Մանկապարտէզը պիտի ունենայ 280 տեղ, իսկ նախալրթարանը՝ 1200 տեղ:

Քաղաքը կ'ունենայ 700 տեղով փակ մարզադաշտ մը, որ աւարտելու ճամբու մէջ է: Շուտով կը սկսի մշակոյթի տան շինութիւնը 400 հոգիի համար: Քաղաքը, որ արդիական սկզբունքներով նախագծուած է, պիտի ունենայ կանաչ տարածութիւններ: Ասոնք քաղաքին 30 տոկոսը պիտի գրաւեն:

Մինչեւ այս տաճարմեակի վերջ Վարդենիս կ'ունենայ 25.000 բնակիչ, իսկ գլխաւոր յատակաքիւղը կը նախատեսէ 50.000 բնակիչ:

ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ ՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐՈՒՆ

«Եւկլիդէսի երկրաչափութիւնը» եւ «Անանիա Շիրակացի» գիտական իրենց աշխատութիւններուն համար տղթէօրներ Գ. Պետրոսեան եւ Ա. Արարատեան արժանացած են պատուոյ վկայականներու: Ասոնք 1973ի վկայականներն են բնագիտութեան ու թեքիք պատմաբաններու խորհրդային ազգային կոմիտէի:

«Եւկլիդէսի երկրաչափութիւնը» գիրքը կը բովանդակէ հելլէն ականաւոր ուսողագէտին երկրաչափութեան նորայայտ հայկ. վերամշակուած ձեռագրին բնագիրը, իսկ «Անանիա Շիրակացի» աշխատութեան մէջ վերլուծումի ենթարկուած են հայ ականաւոր գիտնականին գործերը:

ԳԵՐՄԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ

Երեւանի կաշեղէնի գործատան արտադրած նոր գեղեցիկ կօշիկները, պայտակները եւայլն շուկայ պիտի հանուին Հայաստանի, Խորհ. Ռուսիոյ, Վրաստանի եւ Արբերջանի մէջ: Լաւորակ արտադրութիւնը ապահովելու գործին մէջ զբաղուին Դաշնակցային Գերմանիայէ բերուած մեքենաները, որոնք ոչ միայն կ'ապահովեն բարձրորակ արտադրութիւնը, այլեւ 15 անգամ կ'աւելցնեն արտադրութեան քանակը:

ՏԵՂԵՐ ՈՒՐ ԵՍ ԵՂԵՐ ԵՄ

ՊԵՇԻԿԹԱՇ

Գ.

Նեղ ու երկայն փողով, մեծափոս դեփ դեղին արույրէ կուժ մը ունէին, շողշոլուն դեղին ու երկայն չլթաներով բոլորտիքը, թռչունի կառուցէ ծորակով մը, աչքերդ կը խորտացնէին: Էշը՝ ֆը կը շալկէր, « պուզ... » պոռալով կ'անցնէր շուկայէն, Ուրբաթի սեղաններէն ԵՂԵՐ տըղի հանդիսութիւններէն, դաւաթը տասը փարայի կը ծախէր: Զմեռները «սիւթիւ սալէպ» «մոմոիկ պոզա» կը ծախէին կիւեհիմներով:

Սինան Փաշայի հոյակապ մզկիթը առանց դուռի, քարայրի բերնի պէս մեծ մուտքովը կը տրէր հրապարակին: Առտուն լոյսէն մինչեւ գիշերուն մութը մարդոց միակտուր բազմութիւն մը կ'ըլլայ միշտ առաջը: Ամէնքն ալ ոտքի վրայ, ուս ուսի կը նայէին Պէշիկթաշէն Օրթադիւղ երկարող պողոտային, Հասան Փաշայի մեծ ոստիկանատան շէնքին, երկու կողմի արբերներուն, աջը ծորակով էր, ձախը առանց ծորակի, գիշեր ցերեկ կը վազէր, հանրակառքներուն ուրոնը 10-15 վայրկեանը անգամ մը ձիերէ քաշուելով կ'անցնէին, անդադար փողահարներով որ գծերուն վրայ մարդ չկէ - նար, ճամբայ տալին: Գրեթէ ամէնքն ալ Քուրտ էին, էրզըրումի, Պիթիսի, Վանայ Քուրտներէն: Քրտական խայտաբղէտ դոյներէ շալվարներով, որոնք լայն կ'ըլլային: Նոյնպէս խայտաբղէտ սալթաններով որոնք կարճ կ'ըլլային: Նոր հագուստ մը հագնող գրեթէ չկար: Ամէն գոյնէ կարկտաններով կարկտուած էին շալ - վարները թէ սալթանները: Կը սպասէին որ կանչուէին: Գործ տալին իրենց: Ինչ գործ կ'ուզէր ըլլար:

Մզկիթին պատին անկիւնը ուստա Ռատոն կար: Քարիւղի պարապ սնտուկի մը վրայ կը նստէր: Առնափուտ էր, Առնափուտի գդակով ու տարագով: Գոսովացի էր, ինչպէս մեր թապալքեալները: Խոշոր գլուխ մը ու լայն երես մը ունէր, այնքան լայն որ ես կը դարձանայի երբ նայէի: Այդ լայն երեսին վրայ պիտեբը, բերանը, քիթը դուր երեւակայեցէ: Առջեւը թապալ մը ունէր եռոտանի մը վրայ: Հաց կար, խոշոր թիթեղէ ամսանով տապկուած լեարդ կար, մանրուած սոխ, ազատգեղ կար: Առնափուտի հեշտ վա կար որ Մեմիշ ուստային, Իմամին հեշտայէն չէր, խոշոր պնակի մը մէջ խմորի խոշոր դունդ մըն էր ճակնդեղի կարմիր դոյնով: Յաճախորդները, Քուր-

տները, փայտի մթերանոցներու բանուորներ էին: Կէս կամ քառորդ հաց առնողը հացին մէջի փորը կը բանար, Ուստա Ռատոն որչափ կ'ուզէին, տասը փարայի, քսան փարայի, լեարդ, հէլվա, այնչափ հէլվա կամ լեարդ կը դնէր մէջը, քչիկ մըն ալ սոխ: Մզկիթին մուտքին առջեւ կամ պատերուն տակ կը նստէին ու կ'ուտէին: Շուկային շուները իրենց ձագերովը կուգային բարեւ բռնելու պէս կը կենային, ակնդէտ կը սպասէին որ պատաս մըն ալ իրենց նետէին, իրենք ալ ուտէին:

Ոստիկանատան ետեւի հրապարակը մինչեւ ծովը փայտի բացօթեայ մթերանոցները կային: Զէքին 250, օխան 10-15 զուրուշ էր: Ըստ եղանակներուն: Այլու՝ ճորացի, Աննացի էին բանուորները, մինչեւ ծունկերը կարճ շալվարներով, ծունկերէն վար երկայն գուլպաներով, ոտքերնին տրեխներով: Կը կշռուէր: Բեռնակառք չկար: Զի կար: Փայտերը երկայն էին, ինչպէս որ անտառէն բերուէր էին: Կը բեռնային ձիերու համեմունքուն: Զորս ձի, հինգ ձի, վեց ձի առաջնին: Բանուորներն ալ երկու կողմերէն ճամբայ կ'ելլէին, միասին կացինը ուսը ետը՝ ճիւղով մը, փայտ կտորով մը, որ տանը փողոցը կամ ետեւի պարտէզը փայտերը պիտի կտրէր: «Տեսթուր... վառտա...» կը պոռային անդադար բանուորները ամէնուն, կ'անցնէին մեր շուկայէն, Քէօ-իշիէն, Տատեան Յարութիւն փաշային նեղ փողոցէն, Հայոց եկեղեցիին առաջէն Ենի Մահալլէ կ'ելլէին:

Մայթ չկար, Ժողովուրդը փողոցնէ - րուն մէջտեղէն կը քալէր: «Այ... այ օղուլ, կը պոռար հանրմ մը, մանուկի մը հետ: Հիմա մեզ պիտի կոխկրտէք»: Հանրմը երեսը քօղով, Փէրաճէով էր: Երեստա՞րդ էր, տարե՞ց էր, ուղղա՞ծի՞ր էր, կըսէ՞ր, քալուածքէն պիտի հետեւցուէր: «Հանրմ, տեսթուր, պառտա պոռացինք դուք ալ զգուշութիւն ըրէ՛ք քիչ մը» կ'ըսէին բանուորները: «Մեք ինչո՞ւ զգուշութիւն պիտի ընենք դուք ըրէ՛ք» կը պատասխանէր հանրմը: Բանուորները կը հայհոյէին կնոջը, այն հայհոյութիւններէն որ այրերը կ'ընեն կիներուն, բայց կամաց, ցած ձայնով որ չըլլայ թէ լսէր:

Հրապարակին մէկ անկիւնը, պողոտային մօտ, միշտ հինգ-վեց եւ աւելի ձիեր կային, թամբուած փայլուն ասպանդակ-


ներով, կարմիր փնջազարդ սանձերով: Իւրաքանչիւրին քով ալ ձիապանները կը կենային: Ոտքերնին թուղթի չափ բարակ, առանց կրունկի եէմենիներով: Քիւպարները կը հեծնէին այդ ձիերը իրենց տունները կամ ուր որ ուզէին երթալու: Քիւպարները հարուստներն էին: Հինգ - վեց հարիւր ոսկի ունեցող մը կամ հինգ - վեց ոսկի թռչակ մը առնողը քիւպար մըն էր, հարուստ մըն էր: Մօտ տեղերը հարիւր փարա, հեռուները մինչեւ հինգ զուրուշ էր ձիի մը վարձը: Ասպանդակներէն կը բռնէին, կը նստեցնէին քիւպարը ձիին վրայ, ան կը վազեցնէր ձին, ձիապանն ալ բոլորի ըսուելու չափ թեթեւ ոտքերով կը վազէր ձիին ետեւէն:

Կառքերը քիչ էին: Ժողովուրդը քալելով կ'երթար: Հանրակառք կար: Հունգարական ձիերը, կառանները կը քաշէին, որոնք մեծղի ու երկայն սրունքներով էին: Կառավարին քով փողահար մը կար որ «տա-տա...» փողովը փողահարելով կ'ազդարարէր որ գծէն ելլէին, ճամբայ տալին: Երկու յարկով էին: Վրան մէկ, տակը երկու զուրուշ: Տակը մեկըր էր, վարադոյնով մը բաժնուած, նամահրամ ըլլալով հարեմնէ - րուն համար: Զոյգ ձիերով կառք ալ կար, բայց քիչ էր: Փայթոն ու գուրա: Գուրան քառակուսի սնտուկի մը պէս էր, հարեմնէր կը նստէին: Երկու պատու - հանով էին: Նախարարներուն, մեծա - մեծներուն կառքերը Պէշիկթաշի մեծ պողոտային Երլուղի պալատը կ'երթային: Եւ կամ Օրթադիւղէ Գուրուշէմէի, Առնափուտէօյի, Պալթալիմանի կայսերական փեսաներուն ծովեղերեայ պալատները: Սատրապամին, Զափթիյէ նազը - րիին կառքերուն ձիաւոր զափթիւները կը հետեւէին հրացանները միջոցին ուղղած: Հասան փաշայի ոստիկանատան առջեւէն կ'անցնէին: Երկու զափթիւ միշտ պահակ կը կենային եւ երբ ձիաւոր թիկ - նապա՛ս մը «աւագանին կուգայ» լուրը հաղորդէր իսկոյն տասը կ'ըլլար զափ - թիկներու թիւը որոնք հրացանները բարձրացնելով բարեւի կը կենային Հասան Փաշային գլխաւորութեամբ որ իր սուրը մերկացնելով կ'ողջունէր:

Պարսիկ իշապաններ կային: Ժողովուրդը «Հալօղուլ» «Ալիզուրու» կը կանչէր ասոնց: Հողեղոյն կրաղոյն շապիկներ կը հաղնէին մինչեւ կրունկները, ոտքերնին զլլաներով: Ասոնք 10-15 էշեր ունէին, երկու կողմէ կախ նեղ ու երկայն կողովներով որոնց մէջ աւագ կամ կիր կ'ըլլային: Շինութիւններու նախանիւթերը կը կրէին: Ամէնուն վիզը փոքր դանդակներ կային: Մէկ գծի վրայ, իրարու ետեւէ, երբ անցնէին տասնհինգ էշէ - րուն տասնհինգ զանգակները «ճնկ ճնկ» ձայներով կը ճնկտացնէին շուկաները, թաղերը, իշապաններուն «տէհ... չուշ» աղաղակներուն հետ:

ՅԱԿՈԲ ՄՆՁՈՒՐԻ

(Շար. - 3)



Ա. ՄԱՍ

ՀԱՄԱՇԵԱՐՑԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Արշախիր տապալը յափշտակեց գրե - թէ ու թուա:

Փռապանը իրար անցաւ ու բաներ մը պիտի պոռար, երբ յանկարծ լռեց եւ երկիւղած դիրք մը առաւ:

Մօտիկ մզկիթին մինարէին վրայէն «Ալլահ ու էքպէր, Ալլահ ու էքպէր» աղաղակը լսուեցաւ: Նամազի կանչն էր եւ մոլեռանդ միւսիւլման փռապանը, «Մուհալլէ» ձայնէն կարծես կախարդուած էր: Ես ալ լռեցի, քանի մը վայրկեան եւս

սպասեցի, մէյ մը ընկերոջս ետեւէն նախելով, մէյ մըն ալ աչկերտին դալիք ճամբուն: Եւ հեռուէն ոստիկանին դալը նըշմարելուս պէս, «Օ», շատ ուշ մնացի, շատ ուշ» ըսելով կծիկը դրի:

Ա. Համաշխարհային պատերազմի ահաւոր տարիներուն, Պոլսահայութիւնը արի եւ ասպետական կեցուածք մը ու - նեցաւ իր վտանգուած փախստական արեւնակիցներուն հանդէպ: Պոլսահայը, տարագրութեան եւ բնաջնջումի պատուհասին փրկուած, արհաւիրքի այդ տարիներուն միակ մտասեւեռում ու նպատակ ունեցաւ. — հալածանքէ եւ մահէ փրկել փախստականները, յեղափոխական ըլլալին կամ ոչ, եւ ամուրի դաւառացիներ, որոնք տարագրուելու վճիռէն ենթարկուած էին: Հերոսական ճիգեր ըրաւ իր տունը ասպատանարանի վերածելով եւ բերնին հացը բաժնելով զօրախոնէ - րուն եւ հալածականներուն հետ: Եւ անտարտնջ ինքզինքը ենթարկեց նիւթական փերջանալի տաղանայնորու: Ի պատիւ իրեն, ըսենք թէ թուրք կառավարութեան գործակից հայանուն մատնիչներուն մէջ մէկ հատիկ Պոլսահայ չկար:

Ատեն մը Պոլսոյ հայ, յոյն եւ հրեայ փախստականներուն թիւը կը հասնէր մինչեւ 15 հազարի: Պոլսահայը, առանց զասակարգի եւ դիրքի խտրութեան, նախանսմութիւն մը եղաւ իր արեւնակից

փախստականներուն, որոնք մեծամասնութիւն կը կազմէին: Եւ անոնք նախընտրած էին պաշուիլ քան թէ երթալ ուղի մահակաւ կամ Անատոլու, ուր ստոյգ մահը, կը սպասէր իրենց: Արդարեւ սիկիւրները կը զրկէին Չանազալէի ճակատը. եւ հոն ողջ մնացողները կը փոխադրէին ամրաշէն վաշտերուն մէջ կամ ճամբաներու շինութեան, — ԱՄԵԼԻ ԹԱՊՈՒՐԻ — եւ զանոնք կը ջարդէին խումբ խումբ:

Անատոլուի զանազան շրջանները զըրկուած հայ զինուորներուն բնաջնջման այս գործողութիւնները տեղի ունեցած էին վերին հրամաններով: Այսպէս, միայն Սերաստիոյ կուսակալ Մուսթաֆէ իր շրջանին մէջ կոտորել տուած էր 20 հազար հայ զինուոր:

Յետոյ, հետապնդումներու եւ խուզարկութեան ընթացքին, երբ ոստիկանութիւնը հայանուն «Խաֆիէ»ներուն գործակցութեամբ կը փնտռէր մտաւորականներ ու յեղափոխականներ, բազմաթիւ անտեղեակ եւ անշուք մարդիկ զոհ գացած էին պարզապէս անունի նմանութեան ճանաճառով: Այսպէս, երբ ոստիկանութիւնը կը փնտռէր Շաւարշ կամ Խոսրով յեղափոխականները, պահակախոյններ կամ ոստիկանութեան Կեդրոն կը տանի ու նկուղներ կը նետէ բազմաթիւ հայեր, որոնց միակ յանցանքն էր կրել Շաւարշ ու Խոսրով անունները:

ՀԱՐՏԱՐԱՐՈՒԵՍԻ ԼՐՏԵՍՈՒԹԻՒՆԸ

— 0 —

Ճարտարարուեստի լրտեսութիւնը, որ դարաշրջանի ընթացիկ երեւոյթներէն մէկը դարձած է, կրկին հրապարակ եկաւ, երբ Փարիզի խորհրդային դեսպանատան զինուորական կցորդներէն Եւգենի Մի - րոնիկին, երկտրոնիկ երկու գործիքներ գողցաւ եւ բռնուեցաւ Պուրթէի օդանավային ցուցահանդէսին: Այսօրուան պայքարներն ու բախումները տնտեսական բնոյթ ունին, որովհետեւ յաղողութիւններն ու նուաճումները կ'արձանագործին հետադատութեան կեդրոններու եւ տար - րալուծարաններու եւ ոչ թէ զինարաններու մէջ: Այժմ քիբնոլոմիւն, պատրաստութեան զաղտնիքները գիտէ մը ուսելի կ'արժեն: Արդարեւ, կարենորը այն չէ, թէ «Տուպուլով-144» երկուտրեակ եղ - բայրը ըլլայ «Քոնքորտ»ի, ինչպէս որ հաւանաբար ըլլայ ամերիկեանն ալ, այլ այն թեքնիք միջոցները, պատրաստութեան եղանակները, գործիքները, որոնցմով ձեռնարկութիւն մը քանի մը ամ - սուան յառաջնութեամբ մը կ'ապահովէ իր միջակիցին վրայ: Ժամանակաշրջանի մը մէջ, երբ հետադատութեան ծախքերը շատ-շատ են, երբ շուկայի մը տիրանալը երկրի մը համար հիմնական կարեւորութիւն կը ներկայացնէ, զարմանալի չէ, որ ճարտարարուեստի լրտեսութիւնը մեծ համեմատութիւն ստանայ:

Որոշ զնահատումներով, 40.000 «տեղեկատու»ներ կ'աշխատին Ֆրանսայի մէջ: Ուրեմն, խորհրդային զինուորական կցորդին պարագան փոքր միջադէպ մըն է միայն:

Ճարտարարուեստի լրտեսութեան ամէնէն մեծ դէպքը Ֆրանսայի մէջ «Քոնքորտ»ի հետ կապ ունեցած է: 1965 Նոյեմբերին է, որ երեսն ելաւ Փարիզէն զեկավարուած այն զաղտնի ցանցը, որուն գլուխը կը գտնուէր Սերգէյ Պաւլով, «Ալբերֆլոթ»ի գրասենեակի սնօ - րէնը: «Քոնքորտ» օդանավի բազմաթիւ զաղտնիքներ ձեռք ձգուած էր Թուրուլի մէջ: Պաւլով, որ դիւանապետական անցադիր ունէր, արտաքսուեցաւ երկրէն եւ անոր գործակիցներէն արեւելեան Գերմանացի մը 12 տարուան բանտարկութեան դատապարտուեցաւ:

Երկրորդ դէպքը 1969 Սեպտեմբեր 23ին արձանագրուեցաւ, երբ Զուիցերիոյ մէջ ձերբակալուեցաւ զուիցերացի ճարտարագէտ մը: Մէջտեղ ելաւ, որ 140.000 փաստաթուղթեր յանձնած է Իսրայէլի «Միրաթ» օդանավի վերաբերեալ եւ փոխարէնը ստացած է 860.000 զուիցերա -

Ամէն պոլսահայ տուն, տեղեակ էր թրքական այդ վայրագութիւններուն եւ անմարդկային մեթոտներուն, հետեւա - րար յանձնառու եղած էր ամէն գոհողութեան, փրկելու համար իր արեւնակիցները լուռ եւ սրտառուչ գործակցութեամբ:

Կար նաեւ աղնուական դասը, մեծա - տունը կամ պահպանողականը, որ տարիներով զգուշացած էր մօտենալէ ազգային շարժումներու, եւ կը սարսափէր յեղափոխական բառէն, ապաստան տը - ւած էր փախստականին:

Ընդհանուր ճիգին կը մասնակցէին նոյնիսկ տարիներով հանրային կեանքի հանդէպ անտարբեր մնացած մարդիկ, տեսակ մը Հայ-Լըվանիցներ: Իսկ միւլակերեարը կամ էսնաֆը, որ ազգային կեանքի բոլոր մարդերուն զլխաւոր ջիւղը եղած էր, անսովոր չափերու հասցուցած էր իր գործունէութիւնը: Եւ ամէն տեղ կը գտնէին խոնարհ: Արհաւիրքի այդ օրերուն, առաքինի դարձած էր արհա - մարհուածը, կոռուզանն ու խման տարբը «քիւլհանպէյին», պահակախոյններու սո - վերական յաճախորդը, որ ամէն տեղ կը հասնէր հաց ու պարէն գտնելու ու փոխադրելով կամ տեղափոխութիւններուն օգնելով, միշտ ալ զաղտնապահ ու հա - ւատարիմ:

(Շար. - 30)

ՉԱՅՆԵՐ
ԳՆԻՆՈՒՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԱԿԱՏԱՐԱՌԻԹԻՒՆ
ՍԱՐԳԱՐԱՊԱՏԻ ՅԱՂԹԱՆԱԿԻ
ՈԳԵԿՈՉՈՒՄ

—0—

Լիմն.— «Օրերը կը յաջորդեն իրարու լայն իրարու չեն նմանիր» կ'ըսէ Փրանսական իմաստուն առածը, եւ լաւ է որ այսպէս է, որովհետեւ ասկէ ամիս մը անց, եթէ ցաւի ու արցունքի թուական մը կը լիջատակէինք, այսօր յաղթանակի եւ փառքի տարեդարձ մըն է որ կը տօնակատարենք, Մայիս 26ի Շարաթ իրիւկները, Սիկալի աշ չեղ պրահին մէջ, որ լեցունած է Լիոնէն եւ շրջաններէն եկած հայրենասէր ազգայիններով, յարգանքի եւ մեծարանքի տուրքը տալու Սարգարապատի, Ղարաքիլիսէի եւ Բաշ Աթարանի քաջակորով մարտիկներուն, որոնք նահատակուեցան Հայաստանի անկախութեան համար:

Մեր այս տօնակատարութիւն — հանգիստ, բացառիկ կրնանք նկատել որով — հետեւ մեր մէջ ունինք, որպէս բանաստեղծ հանրածանօթ եւ սիրուած անձնավորութիւններ՝ Կարօ Մեհեան, Կարապետ Փոլատեան եւ Յովիկ Նելիազարեան, որոնք «երբեակ» մը կազմած, անձնակազմը կը չըլին հոս ու հոն, զանազան առիթներով, եւ խանդավառութիւն ու ոգևորութիւն կը ստեղծեն դադութիւն մէջ:

Հանգիստ, ձեռնարկն էր «Հ. Հ. Հիմնադրութեան տօնակատարութեան կազմակերպիչ Յանձնախումբ»ին եւ հովա — նաւորութեամբ «Հայկ. Դատի Կեդր. Յանձնախումբ»ին:

Ժամը 21ին, հանգիստ բացուած յայտարարուեցաւ եւ ահա հնչեց «Յառաջ նահատակ» քայլերգը, եւ բեմ հրաւիրուեցաւ օրուան նախագահը Կ. Մեհեան: «Փորձեցէք բնորոշել Հայութեան ներաշխարհը, համադրոյթ մըն է անյազմացած իտէալներու եւ կարօտներու: Կարօ՝ ապահով հայրենիքի մը, կա — րօ՝ իր ծխախոտի ծուխին ներքեւ անդորր կեանքի մը, կարօ՝ ազատութեան, կա — րօ՝ իր ստեղծագործութիւնները ան —

կան փրանք: Իսրայէլացիք այս ձեռով հինգ տարուան հետազօտութիւններու օգնականաշրջան մը չահած են: Զարտարաբանութիւն լրտեսութեան «ար — քեստ»ին մէջ ձափոնցիք մասնաղէտ դարձած են: Ըստ ոմանց, ձափոնի մէջ լորս հարիւրէ աւելի յատուկ գործակա — րութիւններ կան այս գործին մասնա — րկացած:

Թ. Ա. Թ.

կաշկանդ վայելելու, կարօ՝ յաղթա — նակի, փառքի...:

«Փորձեցէք վերլուծել Հայոց պատ — մութիւնը, համադրոյթ մը հակադրու — թիւններու, իրերայաջորդ ու անողորմ ճնշումներ եւ անոնց դէմ դիմադրական աննկուն կամք: Կործանումներ եւ յափշ — տակութիւններ եւ անոնց դէմ վերաշի — նումի կամակոր ճիւղ: Ենթադրելու յա — րատեւ փորձեր, եւ անոնց դէմ ինքնիշ — խանութեան համար խոյանքներ: Գահը չքացող հարուածներ եւ անոնց դէմ դիմա — րու դիւտ: Կրօնքի փոփոխումով իւ — րացնել, ճիւղ եւ անոր դէմ, ոչ միայն քրիստոնեայ մնալու, այլեւ Հայաստան — եայց Եկեղեցին ազգայնացնելու բացա — ուիկ դործ: 1915ի աղէտին թիւի կէսին կորուստ, եւ անոր հակառակ, յանկարծ եռանդակաւ դուպար, դարաւոր թշնամիին հետ, անկախութեան հռչակում եւ «Մեր հայրենիք...»:

«Մայիս 28»ը մեզի ընծայեց կարենալ յաղթելու համոզումը, մեզ բարձրացուց ազգ կոշուելու արժանի աստիճանին, մեր ժամանակակից պատմութիւնը ստրկու — թեան տարիներու վրայէն, կամրջեց մեր փառքի շրջաններուն եւ յազեցուց սե — փական հայրենիքի դարաւոր կարօտը՝ շնորհիւ այն ողիւն, զոր դարեր առաջ, «վազրածին» որակած էր լատինացի դրողը»:

Բ. Բանաստեղծ էր Կարապետ Փոլատեան.— «Ոչ միայն ճակատագրական ու պատմական, այլեւ հրաշալիք յաղթա — նակ մը եւ փառապանք էլ մըն է, մեր պատմութեան մէջ, Մայիսեան հերոսա — մարտը եւ անով իրականացած Հայաս — տանի անկախութիւնը: Վեց դարերու ստրկութենէ ետք, եւ մեր ամէնէն տկա — րացած շրջանին, ամէնէն ուժեղ հար — ուածը տուինք թշնամիին, որ Արեւմտա — հայութիւնը հաշուեյարդարի ենթարկե — լէ ետք, կը ձգտէր արժատապէս բնա — ջնջել նաեւ Արեւելահայութիւնը: Մայիս 28ի ամբողջական արժէքը, իմաստը կ'ըմ — րունենք, եթէ մտապատկերենք այն ահա — ւոր վիճակը որուն պիտի մատուէինք առանց անոր: Տիրապետեալ, ենթակայ, ճնշուած հայ ժողովուրդը այդ յաղթա — նակին շնորհիւ հիմը դրաւ հայ պետա — կանութեան: Ո՛չ ուղիղ եւ ո՛չ ալ արդար պիտի ըլլար ենթարկուիլ սահմանափակ մտածողութեան մը, այդ փառապանք սիրազորութիւնը անտեսել կամ ար — ժեղրել: Հայու դիտակցութեան եւ ար — ժանաւորութեան չափանիշն է, ճշգրիտ գնահատումը Մայիսեան հերոսամարտին եւ Հայաստանի անկախութեան: Հաւա — տանք եւ վստահութեամբ նայինք մեր ժողովուրդի ապագային, ճիշդ գնահա — տենք անոր արժէքներն ու արժանիքները, ամանք հաւատարմութեամբ մեր ժողովուրդի պատմական երդին եւ Մայիսեան հերո — սամարտի ոգիին, եւ հայ բազուկին շնոր — հիւ կերտուած սեփական հայրենիքի դա — դափարին»:

Երբորդ բանաստեղծ էր, Փրանսերէն, Յովիկ Նելիազարեան.— «Հաւատարմու —

թեան եւ յուսոյ հաւաքոյթ մըն է այս իրիկուն: Ազգային յարութեան յիշատա — կութիւն մը, որու դարերէ ի վեր կը սպաս — ուէր, փառքի եւ յաղթանակի այս օրը, Մայիս 28ը, որ ազատատենէ Հայութեան սրտին մէջ միշտ վառ մնացած է, ստեղ — ծուեցաւ ճակատագրական շրջանի մը, ջարդի ահաւոր օրերէն վերջ: Այսօր հպարտութեամբ կրնանք ըսել որ ազգ մըն ենք իր լաւագոյն տուեալներով եւ դատ մը ունինք ու պահանջատէր, մեր անողորմ թշնամիին»:

«Մենք մեր նախնիքներու խաղաղութեան շնորհիւ, որովհետեւ դիտակից եւ իրաւասարդութիւն մը ունինք, որ պա — հանջատէրն է մեր իրաւունքներուն, որ կը պոռայ «մեր հողերը, մեր հողերը»...: Ու եթէ չենք կրնար հիմա, անմիջական լուծում մը դռնել Հայկական Դատին, դո՛ւն, հայ երիտասարդ, պէտք չէ մոռ — նաս երբեք դոյն, որպէսզի օր մը, ա — ղատօրէն կարենաս գործադրել քու բոլոր լաւագոյն կարողութիւններդ, յաւիտե — նական Հայութեան եւ յաւիտենական Հա — յաստանին»:

Երեք բանախօսներու այս հայրենա — շունչ ծառերը ջանացի ամփոփել, որոնք ունկնդրուեցան լարուած ուշադրու — թեամբ եւ արժանացան բուռն ծափերու:

Գեղարուեստական բաժինը ճոխ էր. Լեւոն Գլըլճեան եւ Պաշիկ Մխիթան ար — տասաններին ապրումով: Երգեց Ալիս Գա — լուստեան եւ իր քնքոյշ ձայնով հմայեց ներկաները: Վահան Պալանտեան, ըն — կերակցութեամբ դաշնակի Տիկ. Տը Կաթ — թրիէի, ի յայտ բերաւ արուեստագէտի իր կարողութիւնը եւ արժանիքը:

Գնահատելի է նոյնպէս «Ալադեալ» պարխաւմը, որ քանի մը անգամ բեմ եկաւ ու պարեց կարգ մը պարեր, նա — դանքով ու խոյանքով ու խանդավառեց ներկաները: Բոլորն ալ արժանացան բու — ռն ծափերու: Օրուան խօսնակն էր Ծա — քէ Պաշտուրեան, որ լաւ կերպով կա — տարեց իր դերը, միշտ շնորհալի եւ ժպտուն:

Հանգիստ վերջացաւ ժամը 11:30ին եւ ժողովուրդը բաժնուեցաւ սրահէն, դօ — րացած ազգային զգացումներով եւ լա — ւագոյն տրամադրութեամբ:

×

Այս առթիւ, Կիրակի առաւօտ պատա — րագի ընթացքին եղաւ մասնաւոր հոգե — հանգիստ Ս. Յակոբ եկեղեցիին մէջ, ի ներկայութեան հաւատացեալ խումն քաղմութեան: Պատարագիչ Հայր Սուրբ Դաւիթ Ծ. վարդապետ ոգեկոչեց յիշա — տակը Սարգարապատի հերոսներուն եւ կարգաց Ամենայն Հայոց Հայրապետի սրբատառ կոնդակը:

Այսպէսով վերջ կը գտնէր Հայաստանի Հանրապետութեան 55րդ տարեդարձի տօնակատարութիւնը, որ, վստահաբար, յիշատակելի թուական մը պիտի ըլլայ Լիոնի Հայութեան համար:

«ՊԱՐՏԻՉԱԿՅԻ»

ՄԱՐԶԱՍԿԱՆ

ՄԱՐԶԱՍԿԱՆ

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ՄԱՐԶԱՍԿԱՆ
ՓԱՅԼՈՒՆ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ
1972-73 ՏԱՐԵՇՐԱՆԻՆ

—0—

Արծաթեայ երեք մետալ

Փարիզի եւ փարիզեան շրջանի կողմ — վագունդի (պապէթ) անցեալ տարուան ախոյեան հայ աշակերտները, այս տարի ախոյեանութեան ներկայացան երեք խումբերով Սէնիոր-ժուները, Գատէ եւ Մինիմ: Առաջին երկուքը կողմագունդ, իսկ երրորդը ոտնագունդի մարզին մէջ: Պայքարը անհաւասար էր սաղմին մէջ իսկ, քանի հայ վարժարանին տղաքը իրենց գոտում պիտի կատարէին 136 ա — շակերտի վրայէն, մինչ ֆրանսական վարժարաններուն մէջ այդ համեմատու — թիւնը նուազագոյն երեք անգամ աւելի էր:

Այսուհանդերձ ներքին ընածին մղում մէ «արպէս ձայ» յարգել տալու ինքզինք — նին, տուաւ տղոց անսպառելի կորով եւ տոկունութիւն եւ տեսնելու էր անոնց պատանեկան ուրախութիւնը երբ ամէն Ձորեքարթի յաղթական կը վերագառ — նային իրենց «մարզական արշաւանք» — ներէն:

Եւ այսպէս սահեցան շարաթները եւ պարտուած խումբերը թօթափելով մի առ մի, երեք դասակարգերու մէջ ալ (Մէնեոր, Գատէ, Մինիմ) մեր տղաքը մնացին ֆինալի: «Քոյէթ Արմենիէն» ա — նունը ամէնուն բերանն էր. ոմանք նոյն — իսկ եկան «լրտեսելու» մեր «գերարդիա — կան եւ փակ մարզադաշտերը» եւ «հրա — շագործ մարզիչները»... եւ որքան մեծ եղաւ զարմանքին երբ գտան պարզ դաշտ մը որ օրինական չափերուն իսկ չի հա — մապատասխաներ եւ «մարզիչ»ի փոխա — րէն տեսան մի քանի մօրուսաւոր վար — դապետներ սեւ ու երկար զգեստներու մէջ...:

Երեք դասակարգի ֆինալները խաղ — ցուեցան երեք տարբեր օրեր. 3 խաղերն ալ եզան շատ հտաքըքրական եւ լար — ուած. և զարմանալիօրէն երեք հանդիս — պումներն ալ կորսնցուցինք մէկ կէտի տարբերութեամբ, թէ և «Գատէ»ներու պա — րագային, ամէնուն կասկածելի թուե — ցաւ հակառակորդ խումբին այդ մէկ կէտի առաւելութիւնը:

Սա ափ մը պատանիներու ֆինալի հաս — նիլը եւ արծաթէ մետալներու արժանա — նալը Փարիզի եւ փարիզեան շրջանի վար — ժարաններուն մէջ, փայլուն յաղթանակ մը չէ՞ միթէ:

«ԵԱՐԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ

(197)

ՀԱՅԱԳՈՐԾ
ԿԻՆԸ

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՕԿԵՏԻ ԿԵՐՊՈՐԱՆԱՓՈՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ձ.

Քոմիտէք, Փարիզէն վերադարձին, անեակ մտաւ: Ան հաւանութիւն յայտ — արեց կնոջ խօսքերուն, ու մեծ բարեացա — րամութեամբ մը տունը տրամադրեց Լիւ — ի: Իրիկուան ժամը իննին, մայր Լիւ — ին պատրաստուեցաւ Պուա Գոլումպ եր — րալու:

— Գործատիրուհիս ալ իմաց տուէք, բաւ Լիւսի:

— Այո, յարեց քոմիտէքը, ու տիկինը

յորդորեցէք որ զազտնի պահէ այն մա — հափորձը որուն առարկայ եղած է օ — րիորդը: Ձենը ուզեր որ դէպքը իմաց — ուի, ձանձուի եւ պատմուի թերթերուն մէջ: Միայն ըսէք թէ օրիորդը արկածի մը զոհ դացած է, բայց ոչ ոճրի մը:

Ժանն խոստացաւ քոմիտէքին հրահանգ — ներուն համեմատ շարժիլ, ձամբայ ելաւ Լիւսին ազատելու մտածումով տողոր — ուած: Ժանն փորթիէ ընաւ չէր խորհած թէ մանկամարդ աղջկան վրայ գործուած ոճիրը իր վկայ զինքը պիտի առաջնոր — դէր արդարութեան ներկայացուցիչնե — րուն եւ ոստիկանութեան առջեւ: Բնա — կունարար, այդ մարդիկը խորունկ սոս — կում մը կը պատճառէին մայր Լիւսին: Փարիզ դարձին, կառախումբին մէջ մի — այն այդ մտածումը ունեցաւ, ու մտալլ խորհողածութիւններ ըրաւ:

Ժանն փորթիէ սկսաւ դողալ սոսկու — մէն, երբ աչքին առջեւ բերաւ այն վտան — դը, որուն դիմադրւած էր, ինչպէս նաեւ այն վտանգը որուն պիտի դիմա — րարէր: Բայց Պուա Գոլումպի քոմիտէքի մտքին մէջ որեւէ կասկած չէր արթն — ցած: Մնաց որ, ինչպէս կարելի էր Ժանն փորթիէն ձանձնալ յանձին Լիւսի փեթէն, որ մայր Լիւսին կը կոչուէր իր — հացադործուհի...: Իր կասկածները փա — րատեցան ու Լիւսին վրայ խորհեցաւ նո — րէն:

Փարիզ հասնելուն պէս, Ժանն յոգնած,

իր բնակարանը դնաց ուղղակի: Դռնա — կեց զայն տեսնելուն պէս:

— Ա՛հ, մայր Լիւսին, թերեւս պիտի կարենաք ինծի լուր մը տալ վարձակա — րուհիին՝ Օր. Լիւսին մասին: Երէկ իրի — կուն, Կարեն տը Գոլումպ դնաց ան, ուր շրջադրեաւ մը պիտի տանէր: Անկէ ի վեր երեւան ելած չէ: Բան մը իմացա՞ք:

— Այո...: Լիւսի հիւանդ է: Վերա — դարձին՝ Պուա Գոլումպի կայարանէն կա — ռախումը նոսրած առնել սխալ քայլ մը առնելով վար ինկած ու կողքն վերաւոր — ուած է:

— Վերաւորուած՝ Ի՞նչ դժբախտու — թիւն: Ծա՞նր է վիճակը:

— Ոչ, բարեբախտաբար: Երկար պի — տի չտեւէ իր ապաքինումը: Քանի մը օ — րէն պիտի վերադառնայ բոլորովին բուժ — ուած:

— Ա՛հ, աւելի լաւ: Կը սրտապնդէք զիս:

— Միայն թէ իր գործատիրուհիին՝ Տիկին Օկիւսթինի իմաց տալու է: Վաղը պիտի երթամ: Աղէկ միտքս ինկաւ, Լիւ — սի ինծի պատուիրեց ձեզ հարցնել թէ նա — մակներ ունի՞ր:

— Այո, մէկ հատ:

— Լաւ, վաղը նամակ կ'առնեմ, անոր յանձնելու համար...:

Յաջորդ առտու, Ժանն ըստ սովորու — թեան բաժնեց հացերը, ու սենեակ դնաց, հազուելու եւ Տիկին Լըպրէի յուզարկա —

(Շար.)

ԿԶԱՎԻԷ ՏԸ ՄՈՆԹԵՓԷՆ

ՕՐՈՒԱՆ ԴԵՊԲԵՐԸ

ՈՍԿԻՆ ՄՐՑԱՆԻՇ

ԿԸ ԿՈՏՐԷ

— 0 —

ԴՐԱՄԱԿԱՆ ՏԱԳԵԱՊԸ ՍՈՒՐ Է

Երեքշաբթի օր «պատմական» օր մը նկատուած էր բոլոր մասնագէտներուն կողմէ, որոնք մտահոգութեամբ ականաւորեցին իրենց անհաշիւ անհաշիւ օրերուն երբ Լոնտոնի մէջ ան կը հասնէր 126 տարի օմսը: Նոյն իրիկունը արդէն, Նախագահ Փոնտիփտու ընդունելով «դրամական միջազգային ժողովի» կոմիտէին կը յայտարարէր: — «Դրամական կացութիւնը շատ մտահոգիչ է: Այս կացութիւնը չի կրնար տեսլել եւ պէտք է որ Միացեալ Նահանգները որոշում տան պաշտպանելու իրենց իսկ դրամը»:

Փարիզի մէջ տարւոր 4,14ի իջած էր երեքշաբթի մինչ Յիւլիէի եւ Ֆրանս — Ֆարթի մէջ ձգտում կար պաշտպանելու անհրաժեշտ դրամանիշը:

Յայտնի չէ թէ ի՞նչ պիտի ընէ Փարիզի խորհրդակցական ժողովը: Այս առթիւ Ֆրանսայի Դրամատան կառավարիչը՝ Օլիվիէ Ուորմուրը թելադրած է մասնագիտներուն զգուշանալ Փարիզէն՝ քաղաք մը ուր վտանգաւոր մտքեր կը տնոցուին եւ եթէ չզգուշանա՞ւ վարա — կիչ են»:

Կառավարիչը կը նախընտրէ հին տե — սակէտները եւ կ'ըսէ: — «Հաւասարակշռութիւնը անհաւասարակշռութենէն լաւ է: Լուծակալութեան անփոփոխ սա — կազմները նախընտրելի են «մագլցող» կոչուած սակագիրներէն: Դրամ մը պէտք է պաշտպանուի: Անհաւասարակշռութիւն մը սրբագրելու համար, պէտք է անոր պատճառներուն վրայ յարձակիլ եւ ոչ՝ պիտանշաններուն»:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՅՈՒՆԱՍՏԱՆԸ
ԵՒ ԹԱԳԱՒՈՐԸ

Դանիկէց Կոնստանդին թաղաւորը կոչ ըրաւ Յունաստանի ժողովուրդին, որ տապալէ վարչաձեւը եւ վերադառնայ աւելի ժողովրդավար կառավարութեան մը: Ինք չի կարծեր որ ծայրայեղ ձախը իշխանութեան գլուխ դալ եթէ գնդա — պետներու վարչակարգը անհետանայ: Թաղաւորը նաեւ իր մտահոգութիւնը յայտնած է ամսականին համար, քանի որ փափառնութիւնը ջնջած է թաղաւորին եկամուտը:

Ապրտագրման Համահայկեան Ծար — ժովին նախագահը Անդրէաս Փափան — տըլու, արտակարգ նիստէ մը ետք, յայ — տարարած է թէ միապետութիւնը մեռած է Յունաստանի մէջ, ոչ թէ գնդապետ — ներու որոշումով, այլ որովհետեւ երբեք չէ յարգած ժողովուրդին կամքը:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՆԱԽԱԳԱՀ ՓՈՆՓԻՏՈՒ Ջնջեց կարգ մը արարողական բնոյթ ունեցող պարտակա — նութիւններ: Ծանօթ է որ Նախագահը տկար է գլխաւորաբար լաւ չէ ապաքին — նած բազմիցս կրկնուած դումէ մը: Նա — խարարաց Խորհուրդի նիստէն ետք, Քա — ժաւ կը մեկնի Հանգստանալու բայց ոչ մէկ ծրագիր չընդունած է իր ժամանակա — ցոյցէն:

ՖՐԱՆՍԱՅԻ տասը հազար բժիշկներ

ԵՐԵՒԱՆ ↔ ՓԱՐԻԶ
Հ Ե Ռ Ա Տ Ի Պ

ԵՐԵՒԱՆ (Արմէնփրէս, Յունիս 1)

ՍՈՄԱԼԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՅՈՒՅԱՀԱՆԴԻՍԸ

«Հայդորգ» ձեռնարկութիւնը իր լա — ւագոյն վեց արտադրութիւնները պիտի ուղարկէ Մոկատիչէ, տեղոյն միջազ — ցային ցուցահանդէսին ներկայացուելու համար: Ասոնք մաքուր բուրգէ ձեռքով հիւսուած գորգեր են:

×

ԳՐԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ
ՆՈՒԻՐՈՒՄՈՒ ՈՒՍԱՐՈՅԵԱՆԻ

Երեւանի հեռատեսիլը գրական հա — ղորդում մը կատարած է Ու. Սարգսեանի գործերուն մասին: Կարգացուած են հատ — ուածներ Սարգսեանի արձակ ստեղծագոր — ծութիւններէն եւ թատերագրութիւննե — րէն:

×

ՀԻՆ ԳԻՒՄՐԻՆ ԵՒ ՆՈՐ ԼԵՆԻՆԱԿԱՆԸ

Հայաստանի քաղաքներէն Լենինականը աչքի կը զարնէ իր իւրայատուկ դիմա — դիմով: Ոչ միայն ժողովուրդը պահպա — նած է իր հին սովորութիւնները, այլեւ քաղաքը իր հին մասով անցեալի պատ — կերը կը պարզէ:

Քաղաքին շինարարութիւնը արագ թա — փով կը ծաւալի: Մէկ տարուան ընթաց — քին կառուցուած են հարիւր հազար քա — ոակուտի մեթր բնակարան, ինչպէս նաեւ մշակութային եւ կենցաղային շէնքեր: Նախկին ամայի տարածութիւններու վը — րայ ստեղծուելու վրայ են բնակելի թա — դամասեր:

Լենինականի գլխաւոր ճարտարապետը՝ Ռ. Եղոյեան կարգ մը տեղեկութիւններ

դէմ արտայայտուեցան վիժումի, որու վերաբերեալ օրինադիւր վերջնական ձեւ կ'առնէր Զորքաշաբթի օր, Նախարարաց Խորհուրդին: Փրոֆ. Լըփօն կը յայտա — րարէ թէ «ինչպէս բժշկութիւնը կը մնայ վերջացող կեանքի մը ծառայութեան, նմանապէս զայն կը պաշտպանէ սկիզ — բէն»: Պարզ է որ այս հարցը դեռ երկար վէճի նիւթ պիտի ըլլայ բայց շատ յոռ — տակ է նաեւ որ օրէնք մը ոչ մէկ ազդե — ցութիւն ունի երբ կին մը զանազան պատ — ճառներով չորդեր զաւակ ունենալ եւ այս կամ այն ձեւով (եթէ հարուստ է արտասահման երթալով, եթէ ոչ ասոր — անոր ձեռքն իյնալով) վիժում պիտի ընէ: Ուրեմն կեղծաւորութիւն չէ պահպանու — մը ժամանակավրէյ օրէնքի մը, որ մի — այն փարիսեցիներու խիղճին հանգիստին կը ծառայէ:

ԺԱՆ ՔԵՅՐՈՒ Կոնքրետ ակադեմիայի անդամ ընտրուեցաւ առջի օր, Ալեքսանդր Առնոլի աթոռին: Նոր ակադեմիական ծը — նած է 1911ին, Պօրտո, բանաստեղծ ու իրարարան հեղինակ է բազմաթիւ հատոր — ներու: Առջի օր, 88 տարեկանին իր մահ — կանացուն կնքեց Մօրիս Տէքուրա, մե — ծաքանակ արտադրող վիպասանը, որու ամէնէն ծանօթ գործն է՝ Լա Մառն տիւ Սիփիկ:

ՕՐՈՒԱՆ ՇԱՐԺՈՒՄԻՆ ՀԵՑ

ԶՈՂԱԶՈՒԿԻ ՀԱՐՑԸ

— 0 —

Զողածուկը (մորիւ) կը սպառնայ օդակ մը քանդել Ատլանտեան Ուխտի պաշտ — պանողական շղթայէն, որ 851 քրիստոսէն երկարութիւն ունի:

Այս տարօրինակ հարցը դէմ առ դէմ հանած է Իսլանտացիներն ու Անգլիացի — ները: Մէկ կողմը կը գտնուին Իսլանտա — ցիք, Եւրոպայի ամէնէն բարձր ապ — բուստի մակարդակը ունեցող ժողովուրդ — ներէն մէկը, որ 210-000 հոգի կը հուշուէ: Միւս կողմը՝ անգլիացի 5200 ձկնորսներ են, որոնք ձողածուկի ձկնորսութեան չը — նորհիւ մեծ շահեր կ'ապահովեն: Ճըշ — դենք, որ Իսլանտացիք իրենց ծովին ձո — դածուկով է, որ կ'ապրին եւ կ'ապահո — վեն իրենց ապրուստի մակարդակը:

Հարցը երկու երկիրներուն միջեւ սահ — մանափակուած պիտի մնար, եթէ երկու երկիրներն ալ մաս կազմած չըլլային Ատլանտեան Ուխտին եւ, մասնաւորա — պէս, գոյութիւն ունեցած չըլլար Քեֆ — լավիքի կայանը, Ամերիկացիներու հըս — կողութեան տակ: Այս կայանէն է, որ Ամերիկացիք կը հսկեն խորհրդային նա — ւերու եւ ընդծովեաներու շարժումներուն Մուրմանսքէն Հիւս. Ատլանտեան:

Զողածուկի «պատերազմը» այս հեռա — ւոր կողմին չուրջ հին պատմութիւն է: ԺԵ. դարուն Անգլիացիները սպաննեցին Իսլանտայի կառավարիչը, որու հետեւ — անընդմիջ 22 տարի պատերազմ մղուեցաւ: Կառավարիչին կինը՝ գլուխն անցած իր

կուտայ քաղաքին ապագայ դիմագիծին մասին:

— Լենինականցիները կ'ըսեն, որ իրենց քաղաքը յաւիտեան պիտի մնայ: Եւ խօս — քը կը վերաբերի քաղաքի ոչ միայն հին մասին, ուր կանգնած են դարերու պատ — մութիւն ունեցող շէնքեր, այլեւ նոր թա — դամասերուն: Առնենք օրինակ անցեալ տարուան նորակառոյց շէնքերէն մէկուն պարագան՝ Տրամպիթ թատրոնի շէնքը: Միայն չեմ ըլլար, եթէ ըսեմ, որ այդ — պիտի գեղեցիկ ժամանակակից շէնք քիչ կարելի է տեսնել նոյնիսկ մեծ քաղաք — ներու մէջ: Հայաստանի կառավարու — թիւնը հաստատած է քաղաքի իշխանու — թիւններուն որոշումը՝ հին Գիւմրին պա — հել անփոփոխ: Այժմ վերաշինուելու վրայ են արժէքաւոր շէնքերն ու փողոցները: Նախատեսուած է գետնափոր գինեւորներ շինել, ինչպէս նաեւ ազգային ճաշերով սրճարան — ճաշարաններ հիմնել:

1930ական թուականներու սկիզբը, երբ քաղաքը ունէր ընդամենը քանի մը տաս — նեակ հազար բնակչութիւն, արդիւնաբե — րական ձեռնարկութիւնները հաստատ — ուած էին ծայրամասերուն: Հիմա այդ ծայրամասերը մաս կը կազմեն քաղաքի կեդրոնին, որով ձեռնարկութիւնները պիտի փոխադրուին քաղաքի սահմանէն դուրս:

×

ՀԱՅ ԸՄԲԻՇՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ

Հելսինկիի մէջ վերջ գտած է դասական ըմբշամարտի Եւրոպայի ախոյեանութեան մրցաշարը: Կիսաթեթեւ ծանրութեան մէջ ոսկէ չըսնչան ապահոված է Նելսոն Դաւիթեան, որ Կիւլեյի է: Երեւանցի մար — ղիկ Վալերի Յարութիւնեան արծաթէ չըսնչան ապահոված է:

Հայրենակիցներուն, ջարդեց կղզիին Անգ — լիացիները:

— Զուկին համար դարերէ ի վեր կը պայքարինք Անգլիացիներուն դէմ, կ'ը — սեն Իսլանտացիք: Եւ հասկնալի է թէ ինչո՞ւ: Արդարեւ, Իսլանտա լուսնածեւ հրաբխային կղզի մըն է, ընդհանրապէս լերկ եւ առանց հանքային հարստու — թեանց: Միայն մէկ տոկոսը իր հողին մշակուած է: Այսուհանդերձ, կղզիին բնակիչներուն ապրուստի մակարդակը Անգլիոյ բնակիչներէն բարձր է, իսկ բնակարանի սեփականութեան, գիրքերու դնման եւ ընթերցման տեսակէտով աչ — խարհի յառաջագոյն դիրքերու վրայ կը գտնուին:

— Ծովը մեր հարստութիւնն է, կ'ըսեն Իսլանտացիք: Երկրին արտածումին չորս հինգերորդը ձուկն է, որու շնորհիւ Իս — լանտա տարադրամ ձեռք կը ձգէ եւ անով կը զնէ ինչ որ իրեն համար անհրաժեշտ է:

Անշուշտ, տաք եւ պաղ ջուրերու հըս — կայ աղբիւրներ կան հոս, որոնք դեռ չեն շահագործուած: Իսլանտացիք կ'ընդու — նին, թէ պէտք է դործատուներ հաստա — տեն եւ շահագործեն բնական այս աղ — բիւրները: Սակայն, կարգ մը տնտեսա — դէտներու համաձայն, ձուկը դեռ յա — ջորդ տասը տարիներուն առնուազն ար — տածումին կէսէն աւելին պիտի կազմէ:

Իսլանտա, որ Դանիոյ գերիշխանու — թեան տակ կը գտնուէր, 1944ին անկա — խութիւն ձեռք ձգեց: Քանի մը տարի ետք ընդլայնեց իր ջուրերու սահմանագիծը՝ իրեն վերապահելով ձկնորսութեան մե — նաշնորհը այդ չընդգրկուած մէջ: 1950ա — կան թուականներուն Իսլանտա որոշեց վերստին ընդլայնել եւ 22 քրլմ. հեռաւոր — թեամբ իրեն վերապահուած չընդգրկւած մը հաստատել: Այդ թուականներուն ալ, ինչպէս այսօր, անգլիական ռազմաւա — ւեր պաշտպանեցին անգլիական ձկնոր — սանաւերը, որոնք կը մերժէին ընդունիլ միակողմանի կարգադրութիւն մը: Պայ — քարը տեսեց երեք տարի: Անգլիա ընդու — նեցաւ Իսլանտայի որոշումը 1961ին:

Տասը տարի ետք Իսլանտա հաղորդեց, թէ 22ին 92 քրլմթիւր կը տանի իր սահ — մանային իրաւունքը կղզիին չուրջը: Անգլիա բողոքեց եւ դիմեց Լա Հէյ մի — ջազգային Ատեանին: Այս վերջինը վըճ — ուեց, որ Անգլիա տարեկան միայն 170-000 թոն ձուկ կրնայ որսալ Իսլանտայի ջու — րերուն մէջ, փոխանակ 200-000 թոնի: Ասիկա ի գորու կը մնար մինչեւ յառա — ջիկայ միջազգային խորհրդաժողովը, ուր պիտի ճշդուէր ծովերու սահմանային դիւրը:

Իսլանտա մերժեց ընդունիլ Լա Հէյ լիճիւրը: Եւ Սեպտեմբերէն ի վեր կը հա — լածէ իր ջուրերուն մէջ գտնուող անգ — լիական ձկնորսանաւերը: Անգլիա, իր կարգին, ռազմաւաւեր ուղարկած է հոն՝ պաշտպանելու համար իր նաւերը:

Իրաց այս կացութեան մէջ Իսլանտա Անգլիոյ դէմ բողոքեց Ատլանտեան Ուխ — տին: Միւս կողմէ, ան զանազան միջոց — ներով կ'անդրադառնայ Ատլանտեան Ուխ — տի Քեֆլավիքի կայանի հարցին զգացնե — լով, թէ կը փափակէ փակել տալ զայն: Արդէն Իսլանտայի համախմբական կա — ռավարութիւնը խոստացած է ժողովուր — դին թոյլ չտալ օտար ուժերու — իմա՝ ամերիկեան 3500 զինուորներուն — երկ — րին մէջ մնալ 1975էն ետք:

Իսլանտացիք կը շեշտեն, թէ ձողա — ձուկի հարցին հետ ոչ մէկ կապ ունի Քեֆլավիքի կայանի խնդիրը: Սակայն դէտերու համար պարզ է, թէ Իսլանտա այս երկու հարցերը միաժամանակ հրա — պարակ դնելով, խորքին մէջ սպառնալիք մըն է որ կը փորձէ ընել, այլ խօսքով՝ կ'ապահովէ գրական որոշում մը Ատլանտ — եան Ուխտի կողմէ:

Թ. Ա. Թ.

ՏԵՂԵՐ ՈՒՐ ԵՍ ԵՂԵՐ ԵՄ ՊԵՇԻԿԹԱՅ

Գ.

Ամէն Ուրբաթ Սուլթանը իր Երլազդի պալատէն իր քառաձի արծաթագոծ կառքովը կ'ելլէր իր արքունիքովը, ոչ շատ հեռու մղկիթը Ուրբաթի իր աղօթքը, ճուճա նամադին ընելու կ'երթար։ Այդ առթիւ համաբաւոր սերմըլդի զօրանցքը կը կատարուէր։ Ձինուորական միութիւնները իրեն զօրանոցներէն ելլելով Ֆընտըլլէն, Գապաթաշէն, Տոքմապահ-ճէշէն դալով Պէշիկթաշէն կ'անցնէին Երլազդ կ'երթային։ Թափօրին առջեւէն կայսերական նուազարխումը, Մուղլիքայէ Հիմալունը իր նուազարանները նուազելով կ'առաջանար։ Անոր ետեւէն հազարապետ մը տօնական ոսկեփայլ համա - զգեստովն ու սուրովը ձիին վրայ, իր ետեւէն երկրորդ նուազարխումը մը իր նուազարանները նուազելով նիզակաւորներու վաշտը կուգար, նիզակներու ան - տառը օդին մէջ փայլատակելով։ Անոր ետեւէն հազարապետ մը ձիին վրայ, տօնական ոսկեփայլ համազգեստովն ու սուրովը, իր ետեւէն երրորդ նուազարանները նուազել - լով, հարկւրապետի մը ընկերակցութեամբ հեծելազօրքի վաշտը կուգար, ձիերը քրտինքներու մէջ։ Անոր ետեւէն հազարապետ մը ձիին վրայ տօնական ոսկեփայլ համազգեստովն ու սուրովը, իր ետեւէն չորրորդ նուազարխումը մը իր նուազարանները նուազելով, հարկւրապետի մը ընկերակցութեամբ թնդանութեամբ վաշտը կուգար։ Անոր ետեւէն հազարապետ մը ձիին վրայ, իր տօնական ոսկեփայլ համազգեստովն ու սուրովը, իր ետեւէն հինգերորդ նուազարխումը մը իր նուազարանները նուազելով, հարկւրապետի մը ընկերակցութեամբ թնդանութեամբ վաշտը կուգար։ Անոր ետեւէն հազարապետ մը ձիին վրայ, իր տօնական ոսկեփայլ համա - զգեստովն ու սուրովը։ Իր ետեւէն վե - ցերորդ նուազարխումը մը իր նուազարաններով հարկւրապետի մը ընկերակցութեամբ ցամաքային հետեակազօրքի վաշտը կուգար։ Անոր ետեւէն ժողով - վորդը պաշտ պողոտք ըստածը, Թուրքը, Հայը, Յոյնը, Հրեան, Առնալուտը, Աւարը, Քուրտը, Չերքէզը, Լազը իրենց ազգային կամ դաստիկ տարազովը կը քայլէին։ Սուլթանը իր քառաձի կառքէն ելլելէ, մղկիթ մտնելը, ելլելը, իր վէ - զիւրներու երկու կարգի վրայ բարեւ բողո - նելը տեսնելու համար։ Կը հասնէինը։ Կանգ կ'առնէինը։ Կ'անշարժաւայինը։ Երբեմն յարմարագոյն տեղ մը գտնելով կը տեսնէինը։ Յաճախ ալ առանց տեսնելու ետ կը դառնայինը։

Հանդիսութիւնները տեսնելու իմ հե - տաքըրըութիւնս անգամ մը ինծի միջա - դէպ մը ստեղծեց։ Ուրբաթի Սելամըլդի մը չէր։ Սուրբէ Էմինի մըն էր։ Սուրբէն Սուլթանը, Բամազաններուն Մէքէթի Մարգարէին սերունդէն եղող Շերիֆնե - ուն ուղտերուն բեռնուած տարեկան ըն - ծաներ զրկուելուն կ'ըսուէր։ Պէշիկթաշի նաւամատոյցէն կ'առաւարձ չողենաւով Սկիւտար կ'անցնէին, ուրկէ ցամաքային ամիրաներ տեսող ճամբորդութիւնով Մէք - քէ կ'երթային։ Կեցանք։ Ուղտերը եկան։ Հինգ հատ էին։ Իւրաքանչիւրը պախուր - դէն բռնած ուղտապանով մը։ Քառա - կուսի փոքր հակեր էին բեռները։ Թան - կազին գորգերով, ճերմակ, կարմիր, ոսկեգոծ ժապաւէններով ծածկուած էին ուղտերը։ Կուսան կ'ըսէին ուղտերուն հա - մար։ Բայց ես արցունք չտեսայ։ Ձէին լար որ արդէն։ Անտարբերութեամբ ու հանգարտ կը քայլէին, կոր ու երկայն պարանոցները ալ ու ձախ դարձնելով։ Փողմ մէկը կար։ 40-50 տարեկան մը։ Բաճկոնակիս դարանը երկարող ժամա - ցոյցին շղթան կտրուած էր։ Կախուեր էր։ Քու ինչո՞ւ պէտք ըսէք։ Բայց ըրի։ «Ֆէշիտի, ըրի, ժամացոյցդ շղթան կտրեր են, ժամացոյցդ գողցեր են»։

Գրպանը փնտռեց։ Գողցեր էին։ Թե - լէս բռնեց։ «Դուն տեսար։ Ո՞վ գողցաւ։ Գողցողը գիտես, պիտի ցուցնես» ըսաւ։ Ես լացի։ «Ես ի՞նչ գիտեմ» ըսի։ «Ոչ, դուն գիտես» պնդեց։ Հաւաքուցան զըլ - խուս։ Ես գողցողին ընկերը եղայ։ Գող եղայ։ Ոստիկան եկաւ։ Իմ աղաչանք - ներս, լացս օգուտ չըրին։ Ձիս ոստիկա - նատուն տարաւ։ Հասան փաշան հոն չէր։ Միրալայ Մէհմէտ պէյն էր։ Սէյ չըջանին Պէշիկթաշի պահականոցը ջոխտ մը գիտուր կար ի պաշտպանու - թիւն Սուլթանին։ Մարդը պատմեց դէպ - քը։ «Դուն ո՞ւր կը նստիս, որո՞ւ տղայ ես» հարցուց Մէհմէտ պէյը, տեսնելով որ կուլամ։ Պատուհանէն փուռը ցուցու - ցի։ «Նա... դէմի փուռին վարպետին տը - զան եմ» ըսի։ «Գողցողը քովդ կը կենար քեզի լուր կուտայ, անոնք մեր դրա - ցիներն են, լաւ մարդիկ են» ըսաւ Մէհ - մէտ պէյը մարդուն ու թեւէս բռնելով զիս փուռը զրկեց։

Ամէն Ուրբաթ Պէշիկթաշի տօնական օրն էր։ Սինան փաշայի մղկիթը, մին - չեւ յարակից բոլոր մասերը մինչեւ բակը տեղ չէր մնար հաւատացեալներով որոնք կ'երկրպագէին։ Պալատ կը կարծէին։

Այդ օրը անապատի կոյր Երկըզը կ'անցնէր պղնձագոյն ու կիսամերկ, եր - կու աչքերը երկու խորչեր, ձախ ափը

բաց, ալը դաւաղանը, ձայնը կը բար - ձրացնէր որքան կրնար, Գուրանէն ա - յէթներ երգելով։ Անցորդները կը կենա - յին։ Կը քարանային։ Մտիկ կ'ընէին։ Ձէի հասկնար։ Երկիւղածօրէն կը մօտե - նային։ Ափը դրամ կը դնէին։

Ձոյք կոյրերը կուգային։ Աչքերը փակ։ Քովը քովի։ Կ'առաջանային չափա - ծոյ քայլերով։ Ձախ ափերը բաց, աչքերը դաւաղանով։

«Պէյ Էֆէնտի եղբայրներ, հանրմ է - ֆէնտի քոյրեր, Աստուած ձեր դաւակնե - րը, ձեր պարագաները ամէն երեւելի, աներեւոյթ փորձանքներէն, արկածնե - րէն, պէշաներէն պահէ, ձեր սատարային կարօտն ենք» կ'աղաղակէր կոյրերէն մէ - կը։ Միւսը որ կը լռէր «Ալլահ...» կը րացազանչէր «Ալլահուէքպէր...»։ Ան - ցորդ ալրերը, դէմքերը քոյրերով հանրմ - ները կը կենային, կը մօտենային իրենց սատարաները կուտային։

Ուլ համըր կը յայտնուէր։ Մղկիթին հրապարակը։ Անուն չունէր։ Նեղ ու երկայն դէմքը ու աչքերը աւելի կապիկի կը նմանէին քան մարդու։ Պեխերը փու - չերու պէս կը ցցուէին։ Երիտասարդ չէր։ Տարեց ալ չէր։ Կարմիր չուխայէ առնալուտի չեփքէն մը, բոթու մը հաղ - ցուցեր էին։ Ո՞վ հաղցուցեր էր։ Ոսիլ չէր զիտեր որ ըսէր։ Կը թափառէր։ Որ կողմ երթալը ինք ալ չէր գիտեր։ Մատ - ները չրթերուն դարներով իբր թէ կը նուազէր Ալաւով կ'ընէր։ Շերիֆթէիին խանութը կ'երթար։ Շիրա մը կուտային կը խմէր։ Հէլմաճիին կ'երթար, չերտ մը հէլմա կուտային կ'ուտէր։ Փուռը կու - դար, հաց կուտային կ'ուտէր Մերթէլ չկար մերժումը մեղք մը գործել էր։ Ուրկէ՞ եկած էր, ոչ ոք գիտէր։ Գիշերները մըղ - կիթը կը պառկէր։

Առնալուտ Հոճա կ'երեւնար։ Սե ճիւղ - պէյով մը, ճերմակ սարկիտով մը։ Մտա - դար մըն էր։ Գետինը տապակը թերթի մը կամ որեւէ թուղթի մը կտոր տես - նէր, կը բարկանար։ Վրան կոխելը մեղք էր։ Կը հաւաքէր, պատի մը ծակ կը թրամէր։ «Անիծուածներ անիծա...» կը պոռար արպաներէն։ Թուրքերէն չէր գի - տեր։

Սեր սեւ ոտից ցլուլիս կաշիէ լաթով Արամ մը, աչքն ձախ, ուսէն անութը կաշիէ տիկով մը, նուիրական ջուրը «ա - պը զէմդէմը» մատուցանողը կը յաջոր - դէր։ Ամէն խանութի առջեւ, ամէն ան - ցորդին կը կենար, այնթ մը դրուած թա - սովը ումպ մը ջուր կուտար. ոչ աւելի։ Դրամ չէր առներ Ոչ ալ կը խօսէր։ Ու կը քայլէր։ Ո՞վ գիտէ որ բարեպաշ - տին սեփապի էր։

«Սեպիլ... սեպիլուլլահ... սեպիլ...» կը պոռային փողոցներուն վերջաւորու - թեանը կեցողները։ Պաղ, ընտիր, անուշ ջուր կը բաշխէին։ Խմողները մեռնող - ներու հողիներուն հողուց մը կ'արտա - սանէին։

«Պետեսսս...» սուլերու պէս կը ձայ - նէին Թունուզցի, ձեղայիրցի Արաբները։ Բթամատի հաստութիւնով չրթուքներ

ՎԱՐԿԱԾ ՄԸ ՀԱՅԵՐԷՆ ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳԻՐ ԳԻՐՔԻ ՄԱՍԻՆ

0

«Գրքերի աշխարհ» ամսաթերթի (Երե - ւան) Մայիսի թիւին մէջ Հենրիկ Բախ - չինեան կարեւոր հարց մը մէջտեղ կը դնէ՝ «Եղե՞լ է արդեօք հայերէն տպա - գրութիւն Յակոբ Մեղապարտից առաջ» խորագրեալ յօդուածով մը։

— Այսօր, մենք չենք կրնար հաստատ պնդել, թէ Յակոբ Մեղապարտէն առաջ եղած է թէ ոչ հայերէն տպագրութիւն, քանի որ առ այժմ մեր ձեռքին տակ չկայ 1512ին առաջ տպագրուած որեւէ հայերէն գիրք։ Մակայն անցեալ դարու վերջերը Հայկ Տէր-Աստուածատրեանց «Բառարան հայ կենսադրութեանց» (1904, Թիֆլիս) գիրքին առաջին պրակին մէջ, խօսելով Արզար Դպիրի մասին, ծանօ - թութեան կարգով շատ ուշագրաւ տեղե - կութիւն մը կուտայ։ «Նս տեսիլ եմ, կը գրէ ան, հանդուցեալ Ստեփանոս Տէր - Ստեփանեանի գրադարանում կայ մի գիրք՝ տպուած չեմ յիշում 1485 թէ 1486 թուերին, որի մէջ Ս. Գրքից հատուած - ներ են տպուած քանի մը լեզուով եւ թիւս այլոց նաեւ հայերէն երկաթաղիւր տղեղ տառերով Սաղմոսից մի հատուած։ Եթէ չեմ սխալուում՝ այդ գիրքը տպուած է Մարտէյլ քաղաքում»։

Եթէ տեղեկութիւնը ճիշդ է, ուրեմն 1485ին կամ 1486ին Մարտէյլի մէջ, Կիւթնեպէրկի տպագրած առաջին գիր - քէն երեսուն տարի ետք հայերէնը ար - դէն դարձած է տպագրութեան լեզու։ Ուշագրաւ է նաեւ այն, որ հայերէն գի - րերու գիւտէն աւելի քան հազարամեակ

ունէին։ Ուշոր դուիններ, լայն երես - ներ։ Գլուխին Աղիդիյէ ֆէսերով, մեր սեւ փեւսկիւղներովը չէ, կապոյտ փեւ - սկիւղներով։ Ուշոր տոպրակներ շալակ - ներէն վար կ'իջեցնէին։ Ֆիս կը ծախէին, տասը դուրուշի։

Հոտեղէն իւղեր ծախողները ամէն ան - ցորդի կը մօտենային։ Դուն մերժէիր ալ անոնք հազուադէպ կը քսէին իրենց ա - նուշահոտութիւնները։ Ծանր էին։ Հոտը չարաթնելով չէր երթար վրայէդ։

Երեւան միասին, երբեմն իւրաւու ե - տեւէ համըր ծախողները, ծխափող ծա - խողները կուգային։ Երկայն մինչեւ 93 հատիկով կարճ տասերեք կամ քսաներեք հատիկով։ Գոյն-գոյն համրիչներ։ Կե - ոստէ, բալէ երկայն ծխափողեր սեւ կամ կարմիր։ Սաթէ դեղին ծխափողեր։ Ետեմինէ ճերմակ ծխափողեր։ Սրճա - րանները կը մտնէին։ Անցորդներու տո - ջեւը կը կենային։

ՅԱԿՈԲ ՄՆՁՈՒՐԻ

(Մնացեալը յաջորդով)

ԿՏԱԿՆ ԷՐ

ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ

Գրեց՝ ԱՐՇԱԽԻՐ ՇԻՐԱԿԵԱՆ

Ա. ՄԱՍ

ՀԱՄԱՇԵԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ու մանաւանդ ի՞նչպէս մոռ - նալ յուզիչ ընթացքը հայ մամիկներուն, երիտասարդ կամ պառաւ օրիորդներուն, Սրբուհի Տուտուներու եւ Մայրիկ Հա - նըմներու, որոնք հիւանալի նուիրումով կը խնամէին փախստականները, անոնց հետ բաժնելով օրական 250 կրամի հա - ցարաթինը եւ անոնց տրամադրելով մա - քոր անկողիններ ու ճերմակեղէններ։ Ոստիկանական ազդարարութիւններն ու սպառնալիքները անգոր էին տկարազներու

այդ փրկարար Կրաւորական Դիմադրու - թիւնը։ Բոլորն ալ կարծես երգում ըրած էին փրկել, որքան հնարաւոր է։

Այսպէս կ'ապրէր ԹԱՎԱՆ ԹԱՊՈՒՐԻՆ։ Պոլսահայութիւնը այս հրաշագործ ո - գին երեւան բերաւ նաեւ Ձինադադարին, երբ անապատներէն Պոլիս խուժող հա - զարաւոր վերապրող աղգակիցներուն եւ որբերուն տէր կանգնեցաւ, անմիջապէս հաստատելով Ազգային Խնամատարութիւ - նը, հիմնելով որբանոցներ ու օժանդակ շարք մը մարմիններ եւ միութիւններ, յանձնառու ըլլալով նիւթական հսկայ զոհողութիւններու եւ տքնութիւններու։

ՀԱՆՐԱԿԱՌՔԻ ՏՈՄՍԱԿԱՎԱՃԱՌ

Պատերազմի առաջին շրջաններուն, շատ նեղութիւններ քաջցինք. ուսեան - տեղէնի եւ հազուադէպի սակաւութիւն կամ չղութիւն։ Կար անշուշտ սեւ սա - կարան մը, որ մեզի նման համեստ ըն - տանիքներուն անմատչելի էր. օրուան հացը բաժնեւափով էր եւ ան ալ առնե - լու համար մեծ դժուարութիւններ կը կրէինք. յաճախ հացը հատած կ'ըլլար մինչեւ որ փուռը հասնէինք կամ հացա - բաշի նոր հաստատուած կեդրոնները։ Անոնք ալ առիթը չարաշար կը շահագոր - ծէին. գաղտնի կը ծախէին սուղ գինե -

րով կամ փռապան ու պաշտօնեայ ա - ռատօրէն կը պարենաւորէին բարեկամ ու աղգականներ։ Ձայն չէինք կրնար հանել. բողոք կամ տրտունջ թշնամութիւն կը հրաւիրէին մեր վրայ. առնուազն «հացը հատած է» կ'ըսէին ու կը ճամբէին մեղ - ժամերով պիտի սպասէինք, որ նոր հաց պատրաստեն։ Շաքարը անհետացած էր եւ րանջարեղէններն ալ տարապաշտն սուղ։

Նուրճեան անուն հեռաւոր աղգական մը մեր կացութիւնը փրկեց։ Յանձնարա - րական նամակով մը զիս զրկեց հանրա - կառքի ընկերութեան տնօրէն Պ. Կրիւն - պերկին, որ զիս իր պաշտպանութեան տակ առաւ եւ տոմսակալամասի պաշ - տօն մը յանձնեց ինծի։ Ամսական մը ա - պահոված էի, բայց առիկա բան մը չէր այն շահուն քով գոր բոլոր տոմսակա - վաճառներուն նման յաճողեցայ չուտով գրպանել։ Այդ շրջանին ընկերութիւնը շատ անկազմակերպ վիճակ մը ունէր, ինչ որ պաշտօնեաներուն հացին առաւ - իւղը դաժմ էր։ Մեծ մասով Հայ էինք, Յոյն եւ մասամբ ալ Թուրք երիտասարդ - ներ, առաւելապէս «Պէյդաւաթ»ներ, ո - րոնք «Կոնակ» ունենալով, տեղաւորուած էին պարզապէս զինուորութենէ փրկուե - լու համար։ Հարցնող - փնտող չկար եւ տոմսակալամասները, զերեք հակա - կշռող աստիճանաւոր պաշտօնեաներու կամ, «քոնթրոլ»ներու հետ համա -

ձայնած, դրամ կը զրկէին, ճամբորդնե - րէն դանձա՞ծ տոմսակի - փոխարժէքը գրպանելով եւ կամ առանց տոմսակ իսկ կտրելու փոխարժէքը իւրացնելով։ Առա - ջին օրերուն դարմացայ եւ անճրկած մը - նացի։ Բայց տեսնելով որ բոլորն ալ ի - րենց հաշույն կ'աշխատէին, չուզեցի բա - ցառութիւն կազմել եւ խոստովանիմ որ երկար առեւ հանրակառքին երեք անիւ - ները իմ հաշույն կը դառնային։ Ձէնք ընկերա Ձենկիլբեցի Արաւիք Փափազ - եանն ալ, չեմ յիշեմ, ինչպէս յաջողած էր նոյնպէս տոմսակալամասու դառնալ եւ ան ալ մեզի հետ մրցումի ելած էր։ Եր - կուքս անբաժան ըլլալով, ուր որ մըտ - նէինք մեծ պատիւներով կ'ընդունուէինք, իբրեւ առատաձեռն ծախող։ «Անաֆօր - ճըլար կելիլոր» բառերով կը գիմաւորէին մեզ։

Ատեն մը ինծի դէմ երեւի այնքան բո - դոքներ եղան հանրակառքի սպասարկու - թեան գրասենեակներէն, որ տնօրէն Կրիւնպերկ իբրեւ թէ ինձմէ ապառնելու եւ բողոքներուն ալ վերջ տալու համար, պաշտօնէս հանեց եւ աւելի բարձր դիմ - քով մը տուաւ ինծի. այսինքն «քոնթրոլ»։

(Շար. - 31)

“ Յ Ա Ռ Ա Ջ ”, Ի
ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ

Ունեւածէն, ընկերներ Պ. Տէր-Մարկոս-
եան եւ Վ. Խաչատուրեան 10ական ֆր.
կը նուիրեն:
Վերջորպանէն՝ Պ. Գասպարեան՝ 20 ֆր.

Հ. Յ. Պ.

ԻՍԻ.— Հ. Յ. Դ. Զաւարեան կոմիտէի
ընկերական ընդհ. ժողովը այս Հինգ —
շաբթի, Յունիս 7, ժամը 20-30ին Իսիի
Մշակոյթի նոր տունը: Կարեւոր օրա —
կարգ:

×

ԱԼՖՈՐՎԻԼ.— Հ. Յ. Դ. «Ս. Մինաս-
եան» ենթակոմիտէն ընդհ. ժողովը կը
հրաւիրէ բոլոր ընկերները այս Ուրբաթ
ժամը 21ին, ծանօթ հաւաքավայրը: Կը
խնդրուի ճշգրտապէս ըլլալ:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՀԱՄԱԽՐԱՐԵՐԴՅԻՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
Մարտէյլի մասնաճիւղի ընդհ. անդամա-
կան ժողովը Շաբթ (9 Յունիս) երեկոյ
ժամը 9ին, սովորական հաւաքատեղին:
Օրակարգ՝ տեղւոյն վրայ:

×

ԿԱՊՈՅՏ ԽԱՅԻ Իսիի մասնաճիւղը ընդ-
հանուր ժողովի կը հրաւիրէ իր բոլոր
անդամուհիները, այս Ուրբաթ, Յու-
նիս 8, ժամը 20-30ին, Իսիի Մշակոյթի
նոր տունը, 45 Ռիւ տը լա Տէֆանս: Կա-
րեւոր օրակարգ:

ԵՆՈՐՆԱԿԱՆ ԻՍ

Կապ. Խաչի Մարտէյլ քաղաքի վարչու-
թիւնը շնորհակալութեամբ ստացած է
Մայր եկեղեցւոյ վարչութեանէն 50 ֆր.
Տէր եւ Տիկ. Թաքթաբեանէն էլիզ Բիւլ —
պատեանի մահուան առթիւ: Սէնթ Մար-
կըթի Թաքթաբեանութեան Բարսեղ Հո-
րոյեանի մահուան աթիւ Արմենակ Մա-
նուկեան, Գեղամ Հորոյեան 50ական ֆր.,
Վարդան Մուրատեան 40, այլ Տիկ. Մա-
նուկեան 20, Հորոյեանի, Տէր եւ Տիկ.
Ալեքեան 50, Հայկանոյ Հարապետեանի
հոգեհանգիստին առթիւ:

×

Պուլվ. Օտտոյի Ս. Յակոբ եկեղեցւոյ
Թաքթաբեանութիւնը շնորհակալութեամբ
ստացած է հետեւեալ նուէրները.—
Կարապետ Խոզրիկեանի հոգեհանգիստին
առթիւ.—

Տէր եւ Տիկ. Սարգիս Խոզրիկեան 100,
Տէր եւ Տիկին Յարութիւն Յարութիւն —
եան 30, Տէր եւ Տիկ. Գրիգոր Գեղորեան
50, Տէր եւ Տիկ. Սուրէն Գարապաճեան
20, Հայկանեան ընտանիք 20, Պր. Պար-
տաքեան Վահան 20 ֆր.:

Յարութիւն Մարութեանի հոգեհանգիս-
տին՝ այլ Տիկ. Ուստանա Մարութեան
100, Պր. Վարուժան Եղոյեանի պատկին
առթիւ Պ. Եսայի Մանուկեան 50, Աննա
Քարանեանի Թաքթաբեան աթիւ Պր. Սարգիս
Խոզրիկեան 10, Աննա Ղազարեան 5, Էօ —
ժէնի Երեմեան 10, Ոսկեան Քարամեանի
Թաքթաբեան աթիւ Տէր եւ Տիկ. Խոզրիկեան
10, Տիկ. Իսկէնտէրեան 10, Պր. Ոսկեան
Ապրոյեան 20, Պր. Թորոսեան 10:

Ճ Ա Շ

Նախաձեռնութեամբ Տարօն — Տուրու-
բերանի Հայր. Միւլթեան, Կիրակի Յու-
նիս 8, ժամը 15ին սկսեալ Փարիզի Հայ
Մշակոյթի Տունը:
Մուտք՝ 20 ֆր.:

Հ. Յ. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

Պատգամաւորական 23րդ ժողովը կը
գումարուի Ալֆորվիլի մէջ
Յունիս 9, 10, 11ին
Salle de la Justice de Paix
Place de la Mairie, 94 Alfortville

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՀՈԶԱԿՄԱՆ ՏԱՐԵԴԱՐԶ
ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՈԴԵԿՈՉՈՒՄ
ՀԱՅ ԴԱՏԻ ՕՐ

ՍԷՆ-ՇԱՄՈՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. Անտոյ-Վարուժան կոմիտէի եւ Նոր Սերունդի
Կիրակի, Յունիս 17, ժամը 16ին 24
Institution St. Marie, Foyer des Jeunes
Route du Coin (après le Stade)

Կը նախագահէ ՍԵՐՈՒՆԻ ՆԱԿԱՆՏԵԱՆ
Կը խօսի ԿԱՐՕ ՅՈՒՍԷՓԵԱՆ
Հայկական մուսափաշտութիւն, գեղարուեստական բաժին — Խնայք
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ Է

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵՔԶԱՐԿՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՏԻ

13, Rue du Perche — Paris (3e)
(Métro St. Sébastien Froissard)
Այս Կիրակի առաւօտ ժամը 11ին, Հայ-
րապետական հանդիսաւոր պատարագ կը
մատուցանէ Հայ Կաթողիկէ Կաթողիկոս-
Պատրիարքը՝

ԻԳՆԱՏԻՈՍ - ՊԵՏՐՈՍ
ԺԶ. ՊԱԹԱՆԵԱՆ

ՈՒԵՏԻ ՕՐ

Քամիամբը Ֆրէզի
Ս Կարապետ եկեղեցւոյ

Ամէն տարի Հոգեպալտեան տօնը ուխ-
տի օրն է եկեղեցւոյ: Աւանդական այս
գեղեցիկ սովորութիւնը որ մեր պապե-
նական երկրէն կուգայ, այս տարի կը
զուգադիպի Ս. եկեղեցւոյ հիմնադրու-
թեան 45րդ տարեդարձին եւ պիտի առ-
նակատարուի մեծ հանդիսաւորութեամբ:
Այս առթիւ հանդիսաւոր պատարագ կը
մատուցուի Կիրակի 10 Յունիս: Կը պա-
տարագէ

ՅԱԿՈԲ ԵՊՍԿ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Սկիզբ ժամերգութեան ժամը 8, պա-
տարագ ժամը 10ին: Պատարագի ընթաց-
քին պիտի կատարուի հիմնարկէք օրհ-
նութիւնը նոր կառուցուելիք զանգակա-
տան:

Յաւաքտ պատարագի կը կատարուի
պաշտօնական հոգեհանգիստ, երջանկա-
յիշատակ ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿ. ՊԱՆԱՔ —
ԵԱՆԻ հոգւոյն է հանգիստ:

Կրօնական հանդիսութիւններէ անմի —
ջապէս վերջ, տեղի պիտի ունենայ ճաշ
եկեղեցւոյ սրահին մէջ, ի պատիւ պա-
տարագիչ եպիսկոպոսին, պաշտօնական
եւ հրաւիրեալ հիւրերու եւ ուխտաւոր
բարեպաշտ ժողովուրդին:

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՑԻՆԵՐՈՒ
ԲԱՅԱՌԻԿ ՀԱՒԱՔՈՑԹ
ՎԻԷՆԻ ՄԷՋ

Մարտէյլի Վասպ. Հայր. Միւլթեան
Կեղը. Վարչութիւնը Տէսին-Վիէնի իր
մասնաճիւղերով կը հրաւիրէ Յրանայի
բոլոր Վասպուրականցիները, անդամ թէ
ոչ, համախմբուի Յունիս 10-11ին Հոգե-
գալուստեան տօնին աթիւ, Վիէնի մէջ,
Հայրենակից Պ. Խաչիկ Տէրտէրեանի գո-
վասուն ծառաստաններո լի ագարակին
մէջ, որ սիրայօժար տրամադրուած է:

Այն հայրենակիցները որ փախաք կը
յայտնեն երկու օր անցընել հայրենակ-
ցական մթնոլորտի մէջ, երիտասարդու-
թեան հետ, պապեանական սովորութիւն-
ներով, կը խնդրուի արձանագրուել Մի-
ութեան անդամներու մօտ կամ ուղղակի
յայտնել Պր. Խաչիկ Տէրտէրեանի, Շըմէն
տը Շիւզէլ, Վիէն:

Ծախքերու համար կարգադրութիւն՝
տեղւոյն վրայ:

Imprimé sur les Presses
DU JOURNAL « HARATCH »
83, Rue d'Hauteville, Paris (10e)

ՇԱԽԻԼԻ Ա. ԳՐ. ԼՈՒՍԱԿՈՐԻՉ
Ե Կ Ե Ղ Ե Յ Ի

Պատարագ այս Կիրակի Հոգեպալտեան
օրը (Յունիս 10): Պատարագէն յետոյ Ս.
Հաղորդութիւն կը տրուի դպրոցի աշա-
կերտներուն:

ԼԻՈՆ Ա. ՅԱԿՈԲ

Եկեղեցւոյ օժման
10րդ տարեդարձին առթիւ
Կիրակի, Յունիս 24,
Լիոնի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, հան-
դիսաւոր պատարագ, զոր կը մատուցանէ
ՍԵՐՈՒՆԻ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
(Հայրապ. Պատուիրակ Երոպայի Հայոց)
Պատարագէն ետք զինեման եկեղեցւոյ
նորոգումը սրահին մէջ, որու մուտքը
ազատ է: Իսկ ժամը 1-30ին, ճաշ Թիլիոյ
ճաշարանին մէջ, 146 Ալլանի Շարլ տը
Կոլ, Թասսէն Տըմի Լիւն: Ժաշագին անձ-
դուի 60 ֆր.:

Արձանագրութեանց համար դիմել ա-
մէնէն ուշ մինչեւ Յունիս 21 Աղբ Տան
դրասենեակը. հեռաձայն 78 — 60-47-18
եւ կամ վարչութեան անդամներուն մօտ:

Սեպտեմբ. Կիրակի մեկին, Սէն Մօրիսի
ծանօթ դաշտին վրայ, դպրոցական դաշ-
տահանդէս առաւօտեան ժամը 10ին մին-
չեւ ուշ երեկոյ:

Գեղարուեստական բաժին վարժարանի
աշակերտութեան կողմէ եւ վիճակահա-
նութիւն: Արեւելեան համալսարան կերա-
կուրներ:

Անճրեւի պարագային խնջոյքի ձեւով
տեղի կ'ունենայ, նոյն օրը, եկեղեցւոյ
նորոգումը սրահին մէջ, կ. յետոյ ժա-
մը 3ին սկսեալ:

ՀՈԳԵԳԱԼՈՒՍԸ
ՀՈՒՆՈՒՄԻ ԱՓԻՆ

Վիպական ճամբորդութիւն եւ նաւային
պտոյտ Հոնոնսի վրայ:

Մեկնում Շաբթ Յունիս 9, վերադարձ
Երկուշաբթի Յունիս 11:

Հաւաքուի Շաբթ առտու ժամը 7ին
Մեթրո Շաթօ տը Վէնէն Թերմինիւսի
առջեւ եւ 7-30ին Քաֆէ Բիւրլէօր, Կառ-
տիւ Նոռ:

Անմիջական մեկնում դէպի Գերմանիա
Մօ, Մոնթիերայ, Շալոն, Սէնթ-Մէն —
հուլտ (ճաշ) Վերտօն, Մէս — սահմա-
նադուր — Սառայուր, Լուսիլիւհա —
Փըն, Մանհայմ, Վիպպատըն ճամբով
մինչեւ Ռուսահայմ: Տեղաւորում պան-
դուր, ճաշ հաճելի մթնոլորտի մէջ:

Կիրակի փոքրիկ նաւապտոյտ մը Հոն-
նոսի վրայ, ճաշ նաւուն վրայ, ցամա —
քահանում՝ Քոպլանց եւ վերադարձ օթո-
քառով պանդուր: Ժաշ պանդուր, մեկնում
դէպի Վիպպատըն եւ վերադարձ: Երկու-
շաբթի առտու մեկնում դէպի Մէս, ճաշ
կայարանին ճաշարանը եւ ժամանում
Փարիզ — Կառ տիւ Նոռ ժամը 21ի առեւ-
ները:

Մասնակցութիւն 195 ֆրանկ

RELATIONS TOURISTIQUES
EDUCATIVES
12 Allée Leonide — Le Perreux
Tél. 324-14-96

Association sans but lucratif, régie par
la loi du 1-7-1901
ԷՏ. ՃԷՋԻՐԵԱՆ
Ընդհ. Պատուիրակ

Պ. Յակոբիկ Սապուհեան, Օր. Օր.
Ժենիա եւ Սեդա Սապուհեան, Պ. Յա-
րութիւն Միւլթեան, Օր. Մարտիկ Մի-
լթեան, Պ. Պ. Գրիգոր Փամպուլեան,
Միւլթեան Օհանէսեան, այլ Տիկին Լի-
լիկ Սապուհեան եւ զաւակները, Տէր եւ
Տիկին Վաղգէն Սապուհեան եւ զաւակ-
ները, Տէր եւ Տիկին Վահրամ Յիւսեան
եւ զաւակները (Երեւան), այլ Տիկին
Շողիկ Պատեան եւ զաւակները (Թեհրան),
այլ Տիկին Վարդեր Սապուհեան եւ
զաւակները, այլ Տիկին Նուարդ Սա-
պուհեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին
Լեւոն Պէրպէրեան, Տէր եւ Տիկին Ար —
ծրունի Ջրաշեան եւ զաւակները, այլ Տիկին
Մարջանուշ Գործունեան եւ զա —
ւակները, Տէր եւ Տիկին Պ. Զարոյեան,
ինչպէս նաեւ Փանոսեան, Համբարձում-
եան, Նաթան եւ Իսքէնտէր ընտանիք —
ները սրտի խոր կսկիծով կը ծանուցանեն
իրենց կնոջ, մօր, քրոջ, ներքը եւ ազ-
գականին՝

ՄԱՐԻ ՍԱՊՈՒՆՔԵԱՆԻ
(ծննդաւ Միւլթեան)

մահը, որ պատահեցաւ Յունիս 5ին, իր
ընակարանը:

Յուզարկաւորութիւնը կը կատարուի
Ուրբաթ, Յունիս 8: Հաւաքուի իր
ընակարանը 23 Ռիւ Փօլ Պէր (Անիէն)
ժամը 10ին, ուրիշ մարմինը կը փոխա-
դրուի Բրեմլէն-Պիւլթի գերեզմանա —
տունը, ամփոփուելու համար իր ընտա-
նեկան դամբարանը: Գերեզմանի ժա —
մադրավայր՝ 11-15ին:

Մահազգ չստացողներէն կը խնդրուի
ներկայ իրեն աղջ. նկատել:

« ՅԱՌԱՋ ».— Մեր ցաւակցութիւնները
Պ. Յակոբ Սապուհեանի եւ ընտանիքին:

ՀՈԳԵՂԱՆԳԻՍԸ

ՄԱՐՍԷԼ.— Այլ Տիկին Սիրվարդ
Պապիկեան (ծննդաւ Պարսամեան) զաւակ-
ներն ու համայն պարագաները կը ծա-
նուցանեն թէ հոգեհանգիստեան պաշտօն
կը կատարուի այս Կիրակի (Յունիս 10)
առաւօտ Փրատոյի Մայր եկեղեցւոյ մէջ
իրենց ամուսնոյն, հօր եւ ազգականին՝
ՎԱՀՐԱՄ ՊԱՊԻԿԵԱՆԻ

մահուան տարեկիցին է յիշատակ:
Ի դիտութիւն ողբացեալին յիշատակը
յարգողներուն:

ՊԱՏԱՐԱԳ — ՀՈԳԵՀԱՆԳԻՍ
ՍԷՆԹ ԷՊԻԷՆԻ ՄԷՋ

Սէնթ Էպիէնի Հայ Աղբ. Միւլթեան եւ
Հ. Յ. Դ. Կապուհեան նախաձեռնու —
թեամբ պատարագ եւ հոգեհանգիստեան
պաշտօն կը կատարուի Երկուշաբթի Յու-
նիս 11, առաւօտեան ժամը 9-30ին Հայկ.
մատրան մէջ է յիշատակ Մարգարապատի
ճակատամարտի եւ զոհուող հերոսներու:
Կը պատարագէ եւ կը քարոզէ

ԴԱԻԻԹ Ծ. ՎՐԴ. ՍԱՀԱԿԵԱՆ

ԿՈՎԱԿՆԱՅՈՒԹԻՒՆ
ԵՒ ՃԱՇ

Հայ Կարմիր Խաչի օգափոխութեան
կայանին մէջ, Կիրակի, 17 Յունիս:

ՄԵԿՆՈՒՄ.—

Ժամը 7ին, Առնուլիլ, Ալլանի Հանրի
Պարպիւս

7-15ին, Քաֆէ Գուրլէօր, Կառ տիւ Նոռ
7-30ին, Հայ Կարմիր Խաչի կեդրոնա-
տեղիէն, 15 Ռիւ Փան Կուժան, Փարիզ 8րդ
7-45ին, Պուա Քոլումպ, Փրատ Պուր —
կինեան:

Կէսօրին շամփուրով խորոված կայանին
ճաշարանին մէջ:

Այցելութիւններ՝ համաշխարհային Բ.
պատերազմի ցամաքահանման տեսարժան
վայրերը:

Մասնակցութիւն 50 ֆր.

Արձանագրութեան համար դիմել.—

ԱՌՆՈՒՎԻԼ.— Տիկ. Տ. Հաթապեան
եւ Պ. Ն. Նիկողոսեան:

ՍԱՐՍԷԼ.— Տիկ. Ս. Թաճեան

ԱԼՖՈՐՎԻԼ.— Տիկ. Ա. Մանուկեան եւ

Տիկ. Կ. Կարապետեան

ՊՈՒՍ ԲՈՒՄՊ.— Տիկ. Մ. Առաքել-

եան եւ Տիկ. Հ. Վեղիբեան

ՓԱՐԻՉ Հեռաձայնիչ

Տիկ. Ալլեքսանեան 720-08-20

Տիկ. Սապալ 924-51-55

Տիկ. Խոսկէսէրեան 924-38-54

Ժամը 15ին վերջ 990-66-28

ՕՐՈՒԱՆ ՊՕՍԻՐԸ

ՎԵՑՈՐԵԱՅԻՆ

ՎԵՑԱՄԵԱԿԸ

ՕՐՈՒԱՆ ԴԵՊՔԵՐԸ

ՓՐԱՆՍԱ ԻՐ ՀՈԳԵՐՈՎ

ԵՐԵՒԱՆ <=> ՓԱՐԻՋ
Հ Ե Ռ Ա Տ Ի Պ

ԵՐԵՒԱՆ (Արմենիա, Յունիս 4)

«ԱՐԱՐԱՏ» ԱՌԱՋԻՆ ԴԻՐՔԻ ՎՐԱՅ

Կառավարող խումբի ղեկավարը լիարժեք լինելու պարտավորված է, քանի որ պարտավորված է իր մրցակիցը 4-0 կհաղթի:

Տասը խաղ է եղել ընդհանուր աղյուսակը հետեւեալ պատկերը կը պարզէ. — առաջին զիւրքի վրայ կը գտնուին 12ական կէտով՝ «Արարատ», «Դինեպր», «ԲԿՍԱ» եւ «Շախտոր»:

×

ՊԵՆԺ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋ

Առաջին անգամ ըլլալով պէնժ 50 դարձրողականներ Հայաստան այցելած են եւ հանդիպումներ ունեցած են իրենց տարեկիցներու հետ: Հիւրերը այցելած են դպրոցներ եւ մանկապարտէզներ:

×

ԳԻՐԳ ՍԱՆԱՀԻՆԻ ՄՍՍԻՆ

Մոսկուայի «Իսկուսատու» (Ար — ուեստ) հրատարակչականը լոյս ընծա — րած է Սանահինի յուշարձաններուն նը — ւերուած գիրքը մը:

Հին է Սանահինի պատմութիւնը: Նիւ — թերը կը վկայեն, թէ դեռ նոր քարի դա — րուն հոն մարդիկ բնակութիւն հաստա — տած են, իսկ բնակատեղի դարձած է նախնադարեան համայնական հասարա — կարգի ընթացքին: Հետաքրքրական փաս — տերէն մէկն ալ այն է, որ Ն. դարուն Միւրոյ Մաշոոյ այդ գիւղին մէջ դար — ցը մը հիմնած է:

Բնակավայրի բուն գաղափարը կապ — ուած է Բագրատունիներու թագաւորու — թեան հետ: Սանահին վանքի անդրանիկ կառոյցը հիմնուած է Ժ. դարու առաջին կէսին: Նոյն դարու վերջերը Աշոտ Գ. Ողորմած թագաւորին կինը՝ Սոսորոյ — նոյժ իր զոհաբերուն նուիրուած եկեղե — ցի մը կառուցանել կուտայ: Այս եկեղե — ցին՝ Ս. Սմեանփրկիչ, Սանահինի եկե — ղեցներուն ամէնէն մեծն է: Շուտով Սանահին կը դառնայ Բագրատունիներու հիմնադրած Տաշիր — Ձորաբեր (Լո — ուի) թագաւորութեան հոգեւոր կեդրոնը: Հոս լայն զարգացում կ'ապրանային գիտութիւնը, դրամատիւրգիան, մանրա — նկարչութիւնը, մանկավարժութիւնը: Կը հիմնուի ճեմարան մը, որ պատմութեան մէջ ծանօթ է Գր. Մագիստրոս ակադե — միա անունով:

Գիրքին մեծ մասը նուիրուած է յու — շարձաններու վերլուծութեան: Ամբողջ համալիրը ստեղծուած է 930-1250ին՝ չի — նարարներու քանի մը սերունդներու կող — մէ: Գիրքին հեղինակը՝ տղթէօր Յով — հաննէս Սալիփաշեան այն երկարացու — թեան եկած է, թէ ամբողջ կառոյցը չի — նարարութեան 13 շրջան ունեցած է: Ա — մէն շրջանին նոր շէնքեր աւելցած են եւ վերափոխումներ կատարուած են: Յու — շարձանին հիմնական խումբը շուրջ երկու հեկտար տարածութիւն կը զբաւէ իր տասը շէնքերով՝ եկեղեցիներ, ճեմարա — նը, դարպասներ՝ իր նախադասով, դա — ւիթները եւայլն, որոնք բոլորն ալ ներ — դաշնակ ամբողջութեամբ մը կը կազմեն: Մասնաւոր հետաքրքրութիւն կը ներկա — րացնէ դարադարանը: Պատերու մէջ փոր — ուած մեծ ու փոքր ծակեր պահարան — ներու դեր կատարած են: Գրատունը ներ — սէն զարդարուած է քանդակներով: Հոն պահուած է վանքին հարստութիւնը՝ ձե — ուղիւրներ եւ այլ թանկարժէք իրեր:

Արաւելիք քաղաքին վերեւ՝ սարա — հարթին վրայ մինչեւ հիմա կանգուն է Սանահինի յուշարձանախումբը: Օտար — ները բաղմիջ քանդած ու աւերած են զանոնք, բայց հայ ժողովուրդը միշտ վե — րաշինած ու նորոգած է:

Վեց տարի անցաւ 1967 Յունիս 5էն ի վեր, երբ իսրայելեան բանակները օդէն ու ցամաքէն արդիական կատարելագործ — եալ զէնքերով — օդանաւ, թնդանօթ եւ հրասայլ — յանկարծակի յարձակեցան միաժամանակ արաբական երեք հարե — ան երկիրներու վրայ — Եգիպտոս, Յոր — դանան եւ Սուրիա, անակնկալի բերելով դառնը:

Ամիսներէ ի վեր ելեկտրականացած էր մթնոլորտը: Երկուստեք սանձարձակ կը սպառնալիստէին: Կամալ Ապտէլ Նասըր իւր կը լեցնէր կրակին վրայ, ռազմա — լունչ ճառեր արտասանելով:

Իսրայէլ լուրջ իրաւունք Եգիպտոսի նախագահին սպառնալիքները եւ մութին մէջ ռազմական ծրագիրներ կ'որոճար:

Կացութիւնը ծանրակշիռ հանգամանք ստացաւ, երբ Նասըր ՄԱԿի ընդհ. քաղ — տուղար Ու Թանէն պահանջեց ետ քաշել «կապոյտ գազակաւոր» կոչուած միջազ — դային զինուորները, որոնք 1956 Հոկ — տեմբերի դժբախտ պատերազմէն ի վեր պահակի դեր կը կատարէին Սուէզի եւ Սինայի ձակաւորն վրայ, արգիլելու հա — մար նոր բախումներ Եգիպտացիներու եւ իսրայելացիներու միջեւ:

Ճառերուն կը յաջորդէր գործը:

Պահակներու արգելքէն ձերբազատ — ուած՝ Եգիպտացիք անմիջապէս կը դրա — ւէին Շարմ-էլ-Շէյխը, Թիրանի նեղու — ցին վրայ, արգիլելու համար Իսրայելա — ցիներու մուտքը Կարմիր ծովէն Աքապայի ծոցը, ուր անոնք ունէին Ում-Ռաշ-Ռաշ փոքրիկ նաւահանգիստը, էլյաթ միւր — տուած:

Հիւսէյն թագաւոր, որուն դէմ տարի — ներով բուռն պայքար կը մղէր Եգիպտոսի նախագահը, Յունիսի սկիզբը Գահիթէ երթալով ողջագուրուեցաւ Նասըրի հետ, Արաբական Դատին գերաւման չորակուե — լու համար վտանգի օրերուն:

Այդ համըրըր շատ սուղի պիտի նստէր Յորդանանի, որ ամէնէն աւելի պիտի սուժէր վեցօրեայ պատերազմէն: Իսրա — յելացիք պիտի դրաւէին Երուսաղէմի ա — լաբական թաղամասերն ու Այսըյորդա — նանի հարուստ ու բարեբեր հողամասերը, մինչեւ Յորդանանի գետի արեւմտեան ա — փերը, հակառակ յորդանանեան բանակի բուռն դիմադրութեան: Եգիպտական բա — նակը անշարժութեան մատնուեցաւ առա — ջին օրէն իսկ, կորսնցնելով իր օդուժը դրեթէ ամբողջութեամբ: Իսրայելեան օ — դանակները Յունիս 5ի առաւօտուն միա — ժամանակ յարձակած էին եգիպտական 17 օդակայաններու վրայ, գետնի վրայ թռչելով բոլոր օդանաւերը:

Իսրայելացիք դիւրին յաջողութիւններ ձեռք բերին նաեւ Սուրիոյ ձակաւորն վը — րայ, դրաւելով Կոլանի բարձունքները եւ Քունէյթթայի չեքէզարնակ շրջանը:

Իսրայէլ վեց տարիէ ի վեր իր դրաւ — ման տակ իր պահէ Եգիպտոսի, Յորդա — նանի եւ Սուրիոյ այն բոլոր հողամաս — սերը, զորս իւրած էր իր հարեւաններէն վեցօրեայ պատերազմի ընթացքին:

Վիճակագրութեան մը համաձայն, Իս — րայէլ սահմաններու հետեւեալ բաժա — նումն ունի արաբական Պետութեանց հետ —

Եգիպտոս՝ 206 քիլոմէթր, Յորդանան՝ 531 քիլոմ., Սուրիա՝ 76 քիլոմ., Լիբանան՝ 79 քիլոմէթր:

Վեց տարուան ընթացքին Արաբները

ՇԱՐՔ ՄԸ ՅԱԻԵԼՈՒՄՆԵՐ

Կառավարութիւնը Ազգ. Ժողովին յանձնեց այլեւս վիժումի օրինադիւր: Ժողէֆ Գոմիթի յայտարարեց այս առ — թիւ թէ փափաքելով հանդերձ որ օրէնքը ժամ առաջ քուէարկուի, չուզէր նաեւ աճապարանքի ենթարկել: Նախագահ Փոնփիտու նաեւ յայտարարած է այս առթիւ. «Հարկ է զանազանել ինչ որ պէտք է ընել օրինաւորին եւ բարոյակա — նին միջեւ: Ինչ որ պատժի ենթակայ չէ պարտադրանքի օրէնք մը չէ, հանդուր — ժողութեան օրէնք մըն է»: Օրինադիւր իր այս առաջին ձեւին մէջ կը նախատեսէ որ կին մը կրնայ իր յղութեան ընդհա — տումը ուղել հետեւեալ պարագաներու մէջ. — Ա. երբ յղութեան շարունակուիլը կը վտանգէ ծանրօրէն իր ֆիզիքական, մտային կամ հոգեկան առողջութիւնը: Բ. երբ մեծ վտանգ կայ թերի ծնունդի: Գ. երբ յղութիւնը հետեւանք է բռնու — թեան կամ ոճրային արարքի մը կամ սե — ռային յարաբերութիւններու որոնք ար — դելք են ամուսնութեան նախատեսուած Օրինադիւրին 161էն 163 թիւ յօդուած — ներով: (Այս կը վերաբերի ազգականա — կան մերձաւոր կապերու):

Վերոյիշեալ պարագաներու տակ նա — խատեսուած ընդհատումը կրնայ կա — տարուիլ միայն բժշկի կողմէ: Վիժումի որոշումը կը պատկանի միայն կնոջ եւ դրաւոր պէտք է դիմէ իր ընտրած բժիշ — կին: Եթէ կին մը ի վիճակի չէ (մտային խանգարում ունի օրինակ) իր օրինաւոր ներկայացուցիչը կ'ընէ դիմումը իսկ ան — չափահասի մը պարագային, ծնողքէն մէ — կը պէտք է համաձայնի բացի այն պա — րագայէն երբ բժիշկը նկատէ որ նման բան մը կը վտանգէ անչափահասը:

Վիժումները կրնան կատարուիլ դի —

ո՛չ մէկ թիւ հող ետ առած են Իսրայէ — լէն: Եգիպտոսի եւ Իսրայէլի միջեւ պարբերական փոքրիկ ընդհարումները շարունակուեցան մինչեւ 1970 Օգոստոս 7, երբ զինադուլ կնքուեցաւ: Այդ թուա — կանէն ի վեր համեմատաբար խաղաղ է կացութիւնը սահմաններուն վրայ:

Պաղեստինի ազատագրական շարժման կազմակերպութիւններն են, որ պարբե — րաբար եղեռնափորձեր կը կատարեն, առանց մեծ արդիւնք ձեռք բերելու: Իս — րայելացիք տասնապատիկով կը պատառ — խանեն Պաղեստինցիներու իրաքան — չիւր ձեռնարկին: Ամէնէն աւելի Լիբա — նանն է, որ թիրախ կը դառնայ Իսրայէլի փոխ-միջոցի յարձակումներուն:

Վերջերս Լիբանանի բանակին եւ Ֆե — տայիններուն միջեւ պատահած ծանրա — կշիռ ընդհարումները քաղաքական տաղ — նապ առաջ բերին՝ խռովայոյց կացու — թիւն մը ստեղծելով Մերձավոր Արեւելքի այդ խաղաղասէր երկրին մէջ:

Համաձայնութիւն կայացած է երկուս — տեք եւ խաղաղութիւնը վերահաստատ — ուած:

Մակայն առկա կը մնայ Պաղեստինի արաբ դադթականներու ցաւոտ հարցը, որ 25 տարեէ ի վեր կը սպասէ իր արդար լուծումին:

ՀՐԱՆՏ-ՍՍՄՈՒԷԼ

մումէն չորս օր ետք, հիւանդանոցներու կամ յատուկ բուժարաններու մէջ: Ծախ — քերը կը հատուցուին Ընկերային Ապա — հովութեան կողմէ, ենթակային անծա — նօթ մնալ բացարձակապէս պէտք է յար — դուի: Այս շրջագիծէն դուրս կատարուած վիժումները խստօրէն կը պատժուին:

×

Կառավարութեան բանքերը յայտարա — րեց թէ Նախագահը լաւ է եւ աւելցուց. «Կը մաղթեմ իմ երկրին որ իր դուռն ու — նենայ միշտ նախագահ մը որ այսքան պայծառատես ըլլայ»:

×

Կը նախատեսուի որ Յուլիսին կամ Օ — գոստոսին յաւելում պիտի կրեն մեթրօ — օթոպլուսի սակերը եւ տեւորելը (10 տոմ — սի) 8էմ պիտի բարձրանայ 10 ֆրանքի: Որսի ազգ. արտօնագիրը 300 ֆր. պիտի արժէ (200ի տեղ) իսկ նահանգայինը 70 ֆր. 60ի տեղ եւ կէս-նահանգայինը 110 ֆր. 90ի տեղ: Հեռախօսի լիարժեքն աւել 120էն կը բարձրանայ 130ի եւ դալ տարի ալ յատուկ գանձում մը պիտի ըլլայ գունաւոր հեռախօսիի համար:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՆԻՔՍՐՆ Սպիտակ Տան թիւ մէկ խոր — հրդատու նշանակեց Մելլին Լէրտ, որ ծանօթ է իբրեւ մաքուր նկարագրի տէր մէկը: Այս նշանակումով Նիքսըն կ'ուղէ ապահովութիւն տալ Պորտլանդին եւ ամերիկացի ժողովուրդին:

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ Եգիպ — տոսի պահանջով վերստին քննութեան կ'առնէ Մերձ. Արեւելքի հարցը: Եգիպ — տոսի Արտաքին նախարարը պահանջեց, որ իսրայելեան ուժերը քաշուին «մին — չեւ այն սահմանագիծը, ուրկէ յարձա — կում կատարած են 1967 Յունիսին»: Մո — համէտ էլ Զայաթ յիշեցուց, թէ Ապա — հովութեան Պորտլանդը 1947 Նոյեմբեր 29ին որոշում տուած էր Պաղեստինը եր — կու Պետութեանց վերածել, մէկը՝ հէթա — կան եւ միւրը արաբական, արդ «բազմա — թիւ Պետութիւններ ձանչցած են հրեայ Պետութիւնը, ակնկալեմք, որ այս Պե — տութիւնները համապատասխան ձեւով ձանչան պաղեստինեան ազգին իրաւուն — քը եւ չընդունին Երուսաղէմի որեւէ մէկ մասին դրաւումը Իսրայէլի կողմէ»: Իս — րայէլի ներկայացուցիչը պատասխանելով ըստ, թէ ՄԱԿը պէտք է քաջալերէ երկու կողմերը, որպէսզի բանակցին:

ՏԵՂԵՐ ՈՒՐ ԵՍ ԵՂԵՐ ԵՄ ՊԵՇԻԿԹԱՅ

(Ե. ԵՂՎԵՐԶ)

Ուրբաթները փութին տակի Մուսա Չափուշին թէյարանին առաջը աթոռանեւրուն վրայ պալատականներուն տեղն էր։ Ազ Աղաները կ'ըսէին անոնց։ Ճերմակ Աղաները։ Մառաշուկէն բարձրացեր աղա եղեր էին։ Ոչ մէկը կարողալ գրել գիտէր։ Մինչեւ վիզերը գոց օձիքով սեւ Սթանպուլիներ կը հագնէին որոնք մինչեւ իրենց ծունկերը կը հասնէին։ Իրենց համազգեստն էր։ Սուտանցի Հաճի Պապային ալ տեղն էր։ Ծեր էր։ Ո՞վ գիտէ։ Բայց ծեր ըլլալով էր։ Մէկ հատ թել չկար ճերմակ, ոչ պիւրեւուն ոչ ալ մազերուն մէջ։ Թէեւ երկուքն ալ բնաւ չէին երկնար։ Ածուխի գոյն սեւ էր, բոցեղէն աչքերով։ Կմախք մը։ Միւս չկար վրան։ Ու երկայն, երկայն։ Մարդ մինակ ըլլար լեղապատառ կ'ըլլար եթէ յանկարծ հանդիպէր իրեն։ Մէկ բառ թուրքերէն չէր գիտեր։ Այլ խօսեր։ Ինչպէս պիտի խօսէինք։ Ճեփ ճերմակ էնթարի մը կը հագնէր։ Յանկերզի մը պէս կը կրկնէր «Անադուլի թայիպ... Բուսիլի Պաթթալ»։ Այսինքն Անատոլիոն՝ Ասիան լաւ էր, Բուսիլին՝ Եւրոպան գիշեր էր, թէեւ ոչ մէկը ոչ միւսը կը ճանչնար։

Բաղմուկները մինչեւ իրիկուն, մինչեւ գիշեր կ'անցնէին։ Կը դառնային, կարծես հանդիսութեան մը կ'երթային։ Շատը պատանիներ էին։ Աշխրթներու դպրոցին դպրոցականները։ Ասոնց զբոսը Գապաթաշ էր, հիմապուսն նաւամատոյցին դիմացը, կանանց ձիթապուսն զի գոյն համազգեստով էին, օձիքը «Աշխրթ Մէքթէպի» բանուած։ Թուխ էին նոյնիսկ շատ թուխ դէմքով։ Արեւելեան նահանգներու Արարիոյ փաշաներուն, ցեղապետներուն, չէյխերուն տղաքն էին, բերեր էին թուրքերէն սորվեցնելու թուրք կրթութիւնը տալու։ Քուրտերէն, արաբերէն կը խօսէին։

Երկրորդ շատը Սուլթանին առնալուստ եւ արապ պահակապետներուն զինուորներն էին։ Առնալուստները պալատին Պէշիկթաշի կողմի, իսկ Արարները Օրթաքի կողմի գորանոցներէն էին։ Ասոնք բանակին կարգապահութեան ենթակայ չէին ու բանակին ինքնապաշտ Չափուշները չէին կրնար ասոնք ի կարգ հրաւիրել։ Կը պարտէին ինչպէս որ կ'ուզէին։ Թէ մէկին եւ թէ միւսին զինուորները թուրքերէն ամենեւին չէին գիտեր։ Առնալուստներուն համազգեստը լազ ոււարթ չուխայէ երկայն Առնալուստի բոթուներ, կարճ սալթաններ, կարմիր խայթաններով երկուստեւ եւ կարմիր գօտիներ էին։ Արարներունը՝ արիւնի գոյն

կարմիր չուխայէ չալվար, կարճ կապոյտ սալթա եւ կարմիր գօտի եւ կանաչ սարլանները գլուխին։

Մարդկային այս հեղեղներուն մէջ որ իրարու դպելով կ'առաջանային, Չերքէզները կը զանազանուէին գլուխին ճերմակ կամ սեւ բարախներով, երկայն պարեգօտներով, մէջքերին դաշտինն ըլլալով, կուրծքերին փամփուշտակալն ըլլալով։ Յետոյ Համիտիյէ ալայներու սպաներ, բարձր գլխաւորներով, վրան կարմիր ու դեղին գոյներով բանուած Օսմանեան փաշլիկուն զինանշաններով։ Յետոյ անապատներու Արարներ, մերկ սրբունքներով, մերկ թեւերով ու վուշի գոյն ցփսիներով։ Եւ քաղքենի Արարները սուրիական երկայն գունապեղ էնթարներով դեղին մորթէ հողաթափերով դեպուկներով։ Եւ Քուրտեր գոյն գոյն ըրտական տարազով։ Սեւ ծովի Լազեր սեղմ չըփախներով ու պաշլուքներով։ Եւ Պէշիկ - թաշլիներ։

Օրթաքի կամ Չընտըզլը իմ ճամբաներուն վրայ իմ ամէնէն շատ տեսածներէն մէկն ալ կերակուր տանիլն էր։ Միշտ կը հանդիպէի ասոնց։ Միօրինակ, մինչեւ ծունկերը երկարող սթամպուլիներով ծառաներ գլուխներուն վրայ թապալաներ կրելով Մէկ մէկ, իրարու ետեւէ պալատներու խոհանոցներէն դուրս կ'ելլէին։ Այս խոհանոցները Տըմապահաճէի պողոտային վրայ գուշահանէ կոչուած խոհանոցն ու Երլազլի, Չըրադանի պալատներուն էին։ Տառ տառնէր ինքն ինքն շարունակ մէկըմէկու ետեւէն ու միօրինակ քայլերով կ'առաջանային, յետոյ կը բաժնուէին իրենց գնալիք ուղղութիւններուն։ Աս ամէն օր պիտի ըլլար, երեք ժամ երուն։ Չընտըզլի ծովեղերէն մինչեւ Գուրուշէմէի ծովեղերը երկարող քիւլմեթրներով երկայնութեան սուլթաններուն, սարալլներուն, նաթիշներուն, ճարիշներուն եւ մապէյինձի պէշերու, էֆէնտիներուն, աղաներուն։ Եղանակին համադրամները կը տանէին գոց կափալիշներով արիւններու մէջ։ Թապալաներ, պիւր, օրման կամ տեղիք քապալիներ, քիւլպաթներ, հանրապետներ, դաւալիշներ, կիւլպիշներ, քիւլպիշով կամ առանց քիւլպիշի բիւլաներ, գերաթ բիւլաներ, հիւսթերա պէշիտիներ, իմամ պաշլուստիներ, դարնեարներ, բաղլավա, սարայ լոքմասի, տիւլէր տուտաղը, էքմէք դաւալիշի, թալուգ կէօկի։ Այնքան առատութեամբ ասոնք կը պատրաստուէին որ երկու խանութ Պէշիկթաշ, խանութ մը Օրթաքի կ'էքմէք դաւալիշի, մասալլէպի, թալուգ կէօկի եւ ծախէին

ժողովուրդին։ Լման էքմէք դաւալիշի մը շաքարով ողողուած, կամ դալըգ թապալի ըտուած երկայն արիւնի թաւուր կէօկի մը երկու գուրուշէր, եղապատահան բրինձով բիրաններ, ինչքան կ'ուզես, մէկ գուրուշէր միայն թէ ճաշարան չէին, կ'առնէիր, կը տանէիր։

Այն թուականներուն ի՞նչ կ'ուզէք, գիւղացի պատանիի աչքերով չէի հաւաներ հայ կիներուն հագուստներուն։ Գեղեցիկ չէի դտներ։ Յոյն, հրեայ, բոլոր ոչ իսլամ կիներունը նմանապէս։ Ծիծաղելի էին իրենց սնդուսէ կամ յարդէ գլխարկները, վրան արուեստական ծաղիկներով կամ ուրթառունկի մը ողկոյցով։ Մազերը ոլորելով գունդ մը ընկը իրենց ծոծրակներուն վրայ։ Քղանցքները մանաւանդ, չըրազեաններուն քղանցքները այնքան երկայն էին որ գետիկները կ'ալլէին, կը ստիպուէին միշտ ալ ձեռքով վեր բռնելով քալել։ Ինչ տեղ չէին։ Ինչը գեղեցիկ էր ասոնց։

Դարձեալ այն թուականները պատմել ու չխօսիլ չունենէի էջ մը պակաս տուած պիտի ըլլայի։ Մայրաքաղաքին թէ եւրոպական թէ ասիական եղբայրները, մինչեւ Գալաթները, ամէն շուկաներուն, ամէն թաղերուն փողոցները լեցուն էին շուկներով, բիւրովներով էին։ Փողոցները լուսնաւոր ասոնց մայիլի էին։ Շատ քիչը մայիլով էին։ Բոլոր փողոցներուն երկայնքը շուկները դաւաճ էին, քով քովի, իրարու քով, ձագերով միասին կամ առանց ձագերու սեփականացուցեր էին իրենց տեղերը։ Շուկաներուն խանութներուն առջեւ կամ թաղերը տուններուն սեմերը բոլորուելով կը պառկէին, աչքերին բաց կամ կէս գոց։ Խառնէր չէր տէին։ Չէին խառնէր։ Ըլլալ որ խանութ մը երթալուց կամ տունը մտնելուց վրայէն անցնէիր, պոչին կամ որեւէ մէկ տեղին կ'ուզէր, ոտքի կ'ելլէին կը վնկային, կը կաղկանձէին, նորէն կը պառկէին։

Սահմաններ ունէին, շուկն մը չէր կըրնար ուրիշ սահմանէն մտնել ու անցնիլ։ Գլուխ Ալի թաղէն շուկն մը եթէ փաշա Մահալլէսին յայտնուէր անծանօթ մըն էր։ Այս վերջինին շուկները ոտքի կ'ելլէին միաձայն կը հաչէին։ Չագերը, պարտիկ քոթոթները անդամ բան մը հասկըցածի պէս իրենց մանրիկ ձայներով կը ձայնակցէին։ Բայց չէին վրան յարձակ։ Անծանօթ շուկն չէր պատասխանէր։ Կը վազէր։ Հասան փաշայի ոտակահանտան հրապարակը դար այն սահմանին ներքէ կը հաչէին։ Քիչօքալի երթար այդ սահմանները կը հաչէին։ Ժողովուրդը կը խլանար այս սահմանէ սահման շան ձայներէն։ «Պէշ սուս...» կը սաստէին, կը պոռային։ Անոնք կը շարունակէին հաչել։ Անծանօթ շուկն կը վազէր Տըմապահաճէն, հոնկէ Գապաթաշ, մինչեւ որ անկիւն մը ճարէր, կ'ուզէր ու տեղացի ըլլար։

Ամառը արեւին, ձմեռը ձիւնին անձրեւին, ցեխերուն մէջ գուրան էին։ Խանութներէն, թաղերը դռներէն հաց, ոսկոր, կերակուրի մնացորդներ կուտային։

ՆԵՐՔԵԼԻ ԶԻ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ

— 0 —

Ամէն առթիւ ու ամէն տեղ կրկնուած բառ մըն է ազգապահպանումը։ Եւ երբ կը խորհինք միջոցներու մասին, մեր մտածումները կ'երթան դէպի եկեղեցիները, դէպի մամուլը եւ դէպի դպրոցները, ամէնօրեայ, գիշերօթիկ ու նաեւ միօրեայ։

Դպրոցատէր Տիկնանց վարժարանը այդ տեսակէտով առաջին տեղերէն մէկը կը դրաւ Ամբողջ արտասահմանի միակ գիշերօթիկ աղջկանց վարժարանն է։

Ոչ ոք իրաւունք ունի անտարբեր վերաբերում ցոյց տալու դէպի այդ հաստատութիւնը։ Նուիրական, բոլոր Հայ յետուն համար։ Ի՞նչպէս չսիրել, ի՞նչ պէս չօժանդակել դպրոցի մը, որ արդէն գրեթէ մէկ դարու հարուստ անցեալ մը ունի, ու ոտքի կը մնայ տակաւին Մինչ քաղաքի հայ վարժարաններ, այնքա՞ն բարգաւաճ իրենց ժամանակին, փակուեցան մշտնջենապէս ու գրեթէ մոռացու թեան դատապարտուեցան։

Դպրոցատէր Տիկնանց վարժարանը կ'ապրի տակաւին, եւ պիտի ապրի, եթէ բոլոր Հայերը ձեռք ձեռքի տան աւելի ընդարձակելու, աւելի ծաղիկուն դարձնելու համար զայն։

Վերջերս Խնամակալութիւնը ջանաց նոր եւ օգտակար ուժեր մտցնել վարժարանէ մէջ, այս կերպով կը յուսայ նոր թուրք տալ դպրոցին։ Բայց ներքի չէ քանի մը նուիրեալներու ուսերուն վրայ թողուլ ամբողջ ծանրութիւնը։ Այլապէս կը յուսահատին անոնք ու կը հեռանան, անպաշտպան թողնելով այն քա՞ն սիրելի ու գեղեցիկ գործ մը որ շատ

Տարեց հանրմներ փուռերէն հինգ տասը հայ կը դնէին, խոշոր շերտերով շուկայի մը, փողոցի մը բոլոր շուկաներ կը բաժնէին։ Սեւապ կը համարէին։ Ժողովուրդը կը դժար ասոնց։ Եթէ շուկն մը հիւանդանոց, արկածահար ըլլար կամ ձկնէր կաթ, կերակուր, մածունի երես սերերը կը բերէին որ ուտէր հիւանդը, արկածահարը կամ մայրն ու ձագերը։ Եթէ մէկը որեւէ պատճառով մը շան մը զարնէր, կարծես գիտէր թէ զինքը պիտի պաշտպանէին, սկսէր հեկեկալ, տեղւոյն ամբողջ ժողովուրդը, անցորդներն ալ միասին լեռու կ'ելլէին, կը յարձակէին մարդուն վրայ, նոյնիսկ կը ծեծէին, եթէ մանաւանդ ոչ իսլամ մը ըլլար մարդը։

1908ի Սահմանադրութիւնը հաւաքեց շուկները, ինսիդ կղզին տարին, հոն մահացուցին։

ՅԱԿՈԲ ՄՆՁՈՒՐԻ

ԿՏԱԿՆ ԷՐ
ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ
Գրեց՝ ԱՐՇԱԿԻՐ ՇԻՐԱԿԵԱՆ

Ա. ՄԱՍ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Աւելի աղէկ ալ առաջուան չափ չէի յոգներ եւ արդէն բաժնեկից էի իմ շըրջանակիս տոմսակալաճառներուն։ Հանգիստ էի եւ գուարճանալու կամ թատրոն երթալու պատեհութիւններն ալ շատ քան։ օփերէթ կը սիրէի եւ յաճախ, Կալաթա Սարայի կողմերը փախուստ կուտայի մտնելու համար Օտէոն թատրոնը, ուր ամէն օր Պենլեան հռչակաւոր Լեպլէպիճի Հօր Հօր Աղան կը խաղար։ Աւելի վերջ զինուորական տարիքս մը

տայ, բայց ոչ ոք մտքէն կրնար անցընել որ այս մանրուք տղան զինուորացու է՝ մնաց որ ճար կար եւ ես տեսի մը պետական պաշտօնեայ էի։

Պ. Կրիւնպերկ ասով ալ չբաւականաւ ցաւ տեսն մը ինծի յանձնեց նաեւ պաշտօնեաներու ուսեստեղծէի եւ հացի բաշխումը։ Պէտք է ըսել որ բաժնեկիցները գոհացուցիչ էին։ Եւ որովհետեւ լիազօր էի, ու շտաբաններու բանալիներն ալ ըսել էին, մեր փախտականներն ու այլ կարօտ ընտանիքներ ուրախութեան մէջ էին։ Չմոռնամ ըսել որ համազգեստ կը հագնէինք. փախտականներու տեղափոխութիւններու ատեն շատ օգտակար եղաւ։ Մանաւանդ որ միշտ մաքուր եւ չիք կը հագուէի, ինչ որ աւելի վարկ կուտար ինծի։

Պէտք կը զգայի փոխադարձել Պ. Կրիւնպերկին բարիքները. բայց ի՞նչ պէս. նուէր չէր ընդունիր։ Գիտէիք։ Այս պատճառով ուրիշ բան մը խորհեցայ, ինչ որ շատ յարգի կ'անցնէր։ Երբեմն առաջնակարգ ձուկեր կը գնէի, թարմ ու համեղ լիւֆէր, կամ լեւրէկ կամ արքայաձուկ — պարպունիան, եւ կը տանէի իրեն, ըսելով թէ հօրեղբայրս ձկնորս է եւ կը խնդրէ որ այս պարիկ նուէրը ընդունիք։ Իսկ ձեքի տակէ դրամական կամ այլ նուէրներ սիրով կ'ընդունէր ինսփէթէթօր Ֆիլիբուշչի եւ պաշտօնեաներու դատերը նայող ձենանի

Պէյ։ Այս վերջինը ամէն անգամ որ դիւ կը տեսնէր կը գոչէր. — «Անաֆորձի, կեկ պազալըմ...»։ Իսկ ես իրեն երթալու բաղմաթիւ առիթներ ունէի. քանի որ ամէն օր տոմսակալաճառ մը կամ երկու — երեք ընկերութեան դատարանը կը յանձնուէին իրեն գեղծարար եւ իմ բարեխօսութեանց շնորհիւ շատեր կ'առաջնէին, գեղծարարները պատժելու պաշտօնը ունեցող ձենանի Պէյին կ'ըսէին չէր ինծի դպիլ։ Պ. Կրիւնպերկի տան ծառայութիւններն ալ կը կատարէի, գրողները կ'ընէի եւ երբեմն կ'ընկերաւ նայի նաեւ Տիկնի Կրիւնպերկին, որ հայ գեղեցիկ կ'իմ մէջն էր։ Յետոյ իմ ազգական Պ. Նուրմեան, ընկերութեան գլուխոր ճարտարագէտ, Պ. Տնօրէնին, «ըլիւպ»ի ընկերին էր. հետեւաբար անխոցելի էի։

Այդ շրջանին շատ մը գուարճալի դէպքերու ակնարկներ կ'ըլլային։ Թուրք տոմսակալաճառները ուղեցոյց եւ շահակից էին Պոլսոյ անուանի քաղաքահայտներուն, որոնք օրն ի բուն կառքէ կառք կ'երթէին, «որս» փնտռելով, եւ աչքունքով կը հասկնային հարուստ կամ պարարտ քաղաք ունեցող ուղեւորները։ Մէկ քանին յանցանքի վրայ բռնուեցան, բայց կրցան խոյս տալ տոմսակալաճառին միջամտութեամբ։ «Օ տըր, օ տէյիլ, եօք, պուտըր... եօք օ տէյիլ...» վիճաբար —

նութիւններու ընթացքին, քաղաքատէր կ'ընկը դրած կ'ըլլար։ «Փոլիս, փոլիս» աղաղակները իրարանցում յառաջ բերելով հանդերձ, մինչեւ որ փոխը հասնէր, ամէն ինչ լրացած կ'ըլլար. գոհը ի դուր ողը ու կոծ կ'արձակէր. մէջտեղը յանցաւոր չկար։

Օր մը Պալադիտի կողմերը կը շրջէի հրապարակին մօտակայքը հանրակառքերը շարան շարան կեցած, երթեկը դժուարացուցած էին։ Ներսէն աղմուկ եւ պոռչուտը։ Ի պաշտօնէ կառքը ցատկեղի ինչ պէսնեմ։ Բարձրաստիճան զինուորական մը տոմսակալաճառին քիւն բերնին ապտակներ կ'ընջեցնէր, կիցեր կուտար և կը հայհոյէր։ Խոհեմաբար դիտողի դիրքը բռնեցի. այդ շրջանին մանաւանդ զինուորականներուն մօտենալ ամէն կտրիճը դարձ չէր. պատճառն ալ չէի գիտեր եւ ճամբորդներն ալ սմբած էին։ Ի՞նչ կար արդեօք։ Ինչպէս Արեւելահայերը կ'ըսեն, բանից դուրս եկաւ որ երկտրական հոսանքը տրուած ըլլալով — ինչ որ յաճախ կը պատահէր — զինուորականը տոմսակալաճառը պատասխանաւորութեամբ էր, հաշիւ կը պահանջէր, առանց ակնաւոր տալու խեղճ տղուն սախիստ բանաւոր արդարացումին

(Շար. - 32)

կարելիութիւններ ունի տակաւին, մեծ — նալու, բարձրանալու:

Գտներ կրնանք առնել Ամերիկահայերէն, որոնք թէեւ ուշ, նոր նոր դպրոցներ կը շինեն ու կը լեցնեն զանոնք աշակերտներով: Ասկէ առաջ արդարացում մը ունէր Ֆրանսահայը. այն էր որ դադրական ժողովուրդ էր ու նիւթական պայմանները չէին ներքեր լայնօրէն օդ — ներու դպրոցին:

Այսօր այդ արդարացումը չունի ան: Հարուստ է Ֆրանսահայը ու ի վիճակի ապրեցնելու դպրոցներ:

Բազմաթիւ դիմումներ կը կատարուին նիւթապէս անձուկ ծնողներէ, Ֆրանսայէն թէ արտասահմանէն: Կը խնդրեն որ իրենց աղջիկները ընդունուին դպրոց, ուսում եւ հայեցի դաստիարակութիւն ստանալու համար, վարժարանը ունի տակաւին տրամադրելի քանի մը տեղեր: Կը պակսին իրեն այն աղջիկ հոգիները, որոնք պիտի ուզեն սանուհի մը պահել: Այդ փոքրիկները յաւատ երախտաւոր — եաները պիտի մնան դէպի իրենց պաշտպանները: Ինչո՞ւ չունենալ սրտի այդ գոհունակութիւնը: Ինչո՞ւ ստիպել դըպրոցը որ աւանդ մերժէ այդ խնդրանքները:

Վարժարանը ամբողջ ազդիւն է, պէտք է բոլորը անխտիր սիրեն ու դուրսդուրան անոր վրայ: Եթէ նոյնիսկ ինչ ինչ պատճառներով դժգոհութիւններ ունեցած են պէտք է մոռնան, պէտք է անձնական նկատումները անդրադարձումներ ունենան դպրոցին վրայ: Այդ է մեծութիւնը: Թանկագին ենցուկ մըն է Կաթող. Պատուիրակ Սերոյի Արք. Մանուկ — եանի հովանաւորութիւնը: Ան շատ մօտէն կը հետաքրքրուի վարժարանին ներքին ու արտաքին կեանքով ու իր լուսադոյնը կ'ընէ օգտակար ըլլալու համար անոր:

Ինչպէս յայտնի է, դպրոցը հաստատուն եկամուտներ չունի. կ'ապրի ազդին լուծանքով, հանդէսներ, նուիրատուութիւններ եւայլն: Մի քանի կազմակերպութիւններ եւ անհատներ, ըսենք ի պատիւ իրենց, որոնք պաշտպանեալներ ունին տարիներէ ի վեր: Եւ սակայն քիչ են անոնք եւ անբաւական դպրոցին բացը զոցելու համար:

Յունիս 24ին տեղի կ'ունենայ վարժարանի մրցանակաբաշխութիւնը եւ դաշտահանդէսը: Ձանքեր կը թափուին հաճելի դարձնելու համար զայն: Կը խընդրուի մեծ թիւով ներկայ ըլլալ այդ օրը: Բարոյական ու նիւթական քաջալերութիւն պիտի ներշնչէ այդ ուշադրութիւնը դէպի ազգային այս սուրբ գործը: Ներքի չէ անտարբերութիւնը:

Ե. Պ.
ՉՀՐԱՏԱՐԱՆԿՈՒԱԾ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ
ՁԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԹԻՐ

ԱՆԳԼԻՍԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՅԱՂԹԱՆԱԿԻ 55ԻԳ ՏԱՐԵՒԱՐՁԸ

Մայիս 27ին Կիրակին՝ Լոնտոնի հայ դպրութիւն անդամներուն համար, յատկանշական օր մը եղաւ: Ամենայն Հայոց Հայրապետի Սեպտեմբեր 2 թուակիր, համար 733 շնորհաբեր կոնդակին համաձայն, ուր կը հրահանգուէր, ամէն տարի Մայիս ամսուան 22—26ի ընթացքին, Հայաստանեայց եկեղեցիներուն մէջ տօնակոթի յիշատակը Սարգարապետի ճակատամարտի նահատակներուն եւ փառաւոր յաղթանակին:

Այս իսկ նպատակաւ, Լոնտոնի հայ դպրութիւն Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ կը մատուցուէր պատարագ՝ Սարգարապետի յիշատակին նուիրուած: Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Ներսէս Ծ. Վրդ. Պոգոսեան կը պատարագէր: «Հայր Մեր»էն առաջ Հայր Սուրբը, բնաբան ունենալով Մովսէս Պրոքոպիի հետեւեալ ոսկեղինիկ խօսքերը. «Սակայն բազում գործք արութեան դտանին դործեալ եւ ի մերում աշխարհիս, եւ արժանի դրոյ յիշատակի...» կը քարոզէր վեր առնելով հայ ժողովուրդի մղած պայքարի իմաստը քեմալական բանակին դէմ 1918 թվականին Մայիս 22—26ի ընթացքին, Արարատեան դաշտին մէջ, կեդրոնացած ըլլալով Սարգարապետի շրջանին մէջ: Իր քարոզին մէջ կը շեշտէր, որ նոր Աւարայր մըն էր այս, զոր հայ ժողովուրդը կը մղէր իր սուրբ հայրենիքի եւ իր կրօնի ազատութեան համար, եւ Սարգարապետով վերջապէս անասան վէժը կը դրուէր մեր վերանորոգ ու ծաղկեալ հայրենիքին:

Պատարագի արարողութեան կը մասնակցէր Ս. Սարգիս եկեղեցւոյ երգչախումբը Ե. Միսիրեանի ղեկավարութեամբ, մինչ սրտառուէ մեղեդիները կը կատարէր Օր. Մարի Պողոպալեան, որ հիւրաբար քանի մը ամսուան համար եկած էր Մայր հայրենիքէն:

Պատարագի արարողութեան աւարտին, հոգեհանգստեան մասնաւոր պաշտօն կատարուեցաւ Սարգարապետի արի արանց նահատակաց յիշատակին նուիրուած:

Սարգարապետի յաղթանակին այս իմաստալից օրը որպէսզի Լոնտոնի հայ դպրութիւն անդամներուն համար ըլլար աւելի ամբողջական եւ տպւորութեամբ լեցուն՝ կազմակերպուած էր Ս. Սարգիս եկեղեցւոյ կողքին հիմնուած Նուարդ Կիւլպէնկեան սրահին մէջ ճաշ — հանդէս մը: Ծուրը երկու հարիւր հրաւիրեալներ կը մասնակցէին յիշատակի այդ սեղանին: Հայր Սուրբը սեղանօրհնէքէն յետոյ, առաջին բաժակը կը բարձրացնէր Սարգարապետի յիշատակին, կ'անդրադառնար Մայր հայրենիքի պայծառակերտ — ման եւ յառաջընթացին, ներկաները յո-

տունկայս կը պարպէին իրենց բաժակները:

Տօնախմբութեան սեղանին շուրջ, ողբերգի եւ սրտաբուլի ճառեր արտասանուեցան: Պ. Պ. Ս. Գապարաճեան, Յ. Փալամուտեան, Ա. Կիւլպէնկեան եւ Կ. Փալապեան, խանդավառեցին միջոցառողք: Բոլոր արտայայտուողներն ալ անդառնալով Սարգարապետի քաջերուն կառարած սիրազորութեան: Անոնցմէ ոմանք շեշտեցին յատկապէս, որ հայ ժողովուրդի զաւակները իրենց բոլոր խաւերով, այսօր դարձեալ ըլլան միասնական, յատկապէս արտասահմանի դժուարին պայմաններուն մէջ:

Տօնախմբութեան ղեկարուեստական բաժին իրենց գնահատելի մասնակցութիւնը բերին, Ս. Սարգիս եկեղեցւոյ երգչախումբը իր ղեկավարով՝ Պ. Միսիրեան, կատարելով՝ «Սարգարապետի քաջեր» եւ «Ներսէս իրերուն» խմբերգները: Զօհրապ Ծամբեան դաշնամուրի վրայ նուագեց՝ Ա. Պալատեանի «Սուրբուրդ»էն հատուած մը: Ա. Կիւլպէնկեան յաջող արտայայտականութեամբ արտասանեց՝ Յովհաննէս Երեմիի «Իմ սուրբ Հայրենիք»ը: Ապա՝ Օր. Մարի Պողոպալեան, դաշնամուրի ընկերակցութեամբ Տիկ. Վ. Կիւլպէնկեան, ղեկեղծութիւնները Կոմիտաս Վարդապետի «Կը — ունիւր»ը, «Քիւլէ քիւլէ»ն եւ Մ. Եկմալեանի «Կիւլիկիւր»ն, ներկաներու խանդավառ ծափերուն եւ գնահատանքին արժանաւորութիւնը:

Յիշատակի հանդիսաւոր օրուան աւարտին, հոգեւոր հովիւ Ներսէս Ծ. Վարդապետ շնորհակալութիւն յայտնեց բոլոր ներկաներուն, յատկապէս անոնց որոնք հիւրաբար եկած էին Լոնտոն, Միացեալ Նահանգներէն եւ Մերձավոր Արեւելքի այլ երկիրներէն եւ մասնակցած այս հանդիսութեանց: Հուսկ ուրեմն՝ «Հոգեւոր»ը եւ խումբով երգուած «Հայր Մեր»ով իր լրումին հասաւ Սարգարապետի յաղթանակի 55րդ տարեդարձի այս յիշատակելի օրը:

ԹՂԹԱԿԻՑ

ՀԱՅԱՍՏԱՆ

ԴԱՍԱԳԻՐՔԵՐՈՒ ՀՐԱՏԱՐԱՆԿՈՒԹԻՒՆԸ

« Հայհարապետի » , այսինքն Հայաստանի հրատարակչական պետական կոմիտէի որոշումով 1973 — 1974 ուսումնական տարուան դասագիրքերը պէտք է լոյս տեսնեն մինչեւ Յուլիսի մէջ: «Լոյս» հրատարակչութեան պատասխանատուին համաձայն, Մայիս 14ին արդէն լոյս տեսած են 80 դասագիրք, իսկ մնացեալ 20ին մէկ մասը տպագրուելու վրայ են եւ նախատեսուած է զանոնք լոյս ընծայել ճշգրտած թուականին:

Գալով զունաստիպ դասագիրքերու տըպագրութեան խնդրին, մինչեւ այս տարի Հայաստանի տպարանները համապա-

ԱՌՆՈ ԲԵՐԱԶԱՆԵԱՆ ՓԵՌԱՏՈՒՆ ՓԱՐԻՑԻ ԿԻՄԷ ՍՐԱՀԻՆ ՄԷՁ

Հ. Բ. Ը. Միութեան Դ. համաշխարհային պատգամաւորական խորհրդակցական ժողովի Փարիզի մէջ գումարման առիթով, պատրաստուած յատուկ ձեռնարկներուն մաս կը կաղմէր մեծ Հայ — մերդ — Փառասոս մը, նուիրուած երաժշտապէս Առնօ Բաբաջանեանի ստեղծադործութիւններուն:

Փառասոսը տեղի ունեցաւ Ուրբաթ, Յունիսի մէկին, երեկոյեան ժամը 9-15ին՝ Կիւլէ սրահին մէջ:

Գեղարուեստական յայտագրի սկիզբը տեղի ունեցաւ լուսարձակում մը, որուն առթիւ խօսեալը, կը ներկայացնէր Հ. Բ. Ը. Մ.ի հիմնադիր Պօղոս Նուպար Փաշայի կեանքն ու գործունէութիւնը: Լուսարձակումը պատրաստուած էր Միութեան Փարիզի Երիտասարդաց Ակումբին կողմէ:


Այնուհետեւ տեղի ունեցաւ յայտագրի զոյգ բաժիններու գործադրութիւնը, որու ընթացքին շնորհալի դաշնակահա — ռուհի Այա Պատմահան նուագեց Սուրբ՝ դաշնակի համար, Ա. Բաբաջանեան եւ ջութակահարուհի Անի Գալաֆեան նուագեցին Սոնատը. Թիքօ՝ Անի Ղապարեանի (դաշնակ), Մաթ Լիթէֆօրի (թաւ — ջութակ) եւ Մանֆրէտ Սթիլի (ջութակ) կատարմամբ: Բոլոր ստեղծագործութիւններն ալ գործ՝ երաժշտապէս Առնօ Բաբաջանեանի:

Երաժշտապէս դաշնակի վրայ նուա — գեց իր հեղինակութիւններէն Վեց քապ — լօները, Մտորումները, եւ տաղանդաւոր դաշնակահար Ռաֆֆի Պետրոսեանի ընկերակցութեամբ, իր Հայկական Ռաֆ — տալին, որ արդարօրէն արժանացաւ բուռն ծափահարութեան:

Մեկնարկութեան մարզին մէջ, մեծապէս գնահատելի էին դրեթէ բոլոր արուեստագէտները, որոնք կրցան անհրեւ յաղորդութեամբ արտայայտել Բաբաջանեանի ստեղծագործութիւններուն մէջ պարփակուող փիլիսոփայութիւնը: Հաճելի եւ շնորհաւորելի երեկոյթ մը:

Հ. Ա.

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՈՆԸ (199)



ԵՐԿՐՈՐԻ ՄԱՍ
ՕՎԻՏԻ ԿԵՐԱՐԱՆԱՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Զ.

Գործարանատիրոջ աղջիկը միեւնոյն վիճակին մէջ կը գտնուէր: Տառապանքներուն մէջ ինքնամոռի, Մէրի կը ջանար իր սրտայոյզ վշտերը ծածկել, տըրտունջէն յայտնէր բնաւ, յանդիմանական խօսք մը չէր ըսեր: Սակայն հայրը կը կարգար աղջկան սրտին մէջ, կը հասկնար բոլոր այն խօսքերը զոր Մէրի չէր ըսեր, ու մտովի կ'ըսէր թէ Լիւսիէն վերադարձը փութացնելու չէ՞ր միթէ: Բայց կասկածները արթնցուցած պիտի չըլլա՞ր արդեօք, եթէ փութացնէր այդ վերադարձը, առանց բանաւոր շարժա-

ռիթ ցոյց տալու: Խոհանութեամբ կը ձգձգէր այդ գործը: Տառ օրեր անցան ապապէս:

Պուս Գոլմուպէն հեռացած ու Բէ Պուրպոն իր բնակարանը վերադարձած էր Լիւսի, ի մեծ ուրախութիւն Ժանն Ֆրիթիի ու Տիկին Օկիւսթինի: Մանկամարդ աղջիկը աշխատանքի սկսած էր իր կոյն, բայց բժիշկը պատուիրած էր որ չորհեցնէ ինքզինքը, որովհետեւ վէրքը կը ցաւէր երեմն, հակառակ ապաքինած ըլլալուն: Սակայն Օր. Հարմանի զգեստները ձեւած էր:

Մէրի, որ Ֆրիդրիպէն հիւանդ էր միշտ, քիչ անգամ դուրս կ'ելլէր բնակարանէն, ու Տիկին Օկիւսթինի յանձնարարած հագուստներով չէր զարդեր բնաւ: Ան տեղեկութիւն չունէր Լիւսիի անցուցած արկածէն, եւ եթէ դիպուա — ծով իսկ իմացած ըլլար, մտքին պիտի չանցնէր թէ միայն ինք էր այդ արկածին անգիտակից պատճառը:

Բէ Պուրպոնի փոքր բնակարանին մէջ հաստատուելէն քանի մը օր յետոյ, ուսուցիչ վերադարձած, Լիւսի մայր Լիւսիի զրկած էր դերձակուհիին, հարցնելու համար թէ զգեստներու փոխը ինչ պիտի ընէր: Տիկին Օկիւսթինի պատասխանը զրկեց որ Լիւսի անձամբ փոխէր եթալու էր Փօլ Հարմանի բնակարանը, եթէ ի վիճակի էր դուրս ելլելու: Ուստի յաջորդ օրը, Լիւսի կ'էօրին ատենները,

Մուրիլլօ փողոցը գնաց Ժանն Ֆրիթիի ընկերակցութեամբ, որ խաւաքարտերը կը կրէր, ու մինչեւ դուռը ընկերացաւ: Լիւսի վեր ելաւ:

Փօլ Հարման եւ իր աղջիկը աւարտած էին իրենց ճաշը: Սենեկապանը ճաշաւորս մտնելով ըսաւ.

— Օրիորդին դերձակուհին եկած է, հագուստներուն փոխը ընելու համար: Մէրիի գոյնը նետեց:

— Լիւսի՛, յարեց ան, վրդոված ձայնով մը:

— Այո, օրիորդ, անունը ատ է:

— Լիւսի՛, դռնը փակ Հարման ոտքի ելլելով, սարսափէն գոչնարար:

Մէրի չըմբռնեց ու չէր կրնար ըմբռնել հօրը դէմքին վրայ առաջ եկած սոսկումի արտայայտութիւնը:

— Հայր, պիտի չընդունիմ զայն: Չեմ ուզեր ընդունիլ զայն, յարեց Մէրի:

Այս խօսքը հանդարտեցուց գործարանատէրին միտը: Ան զգաց թէ քիչ մնացեր էր որ ինքզինքը մասնէր: Լիւսի կ'ենդանէր: Կարելի՞ ըլլար չէր միթէ: Օկիւսթինի անպատկառօրէն ստա՞ծ էր միթէ, յայտարարելով թէ Լիւսիին գործը լմնցուցած էր: Ամէն պարագայի մէջ, մանկա — մարդ աղջկան ինքնութիւնը ստուգելու էր, ու անոր համար ալ պէտք կար երեսը տեսնելու: Ժաք Կարօ աղջկան վրայ ծռեցաւ ու ցած ձայնով մը ըսաւ, որ — պէսպիսի ծառան չլի:

— Չկրցի դայրոյթի առաջին շարժում մը զսպել, ու կը ցաւիմ այդպէս ընելու, որովհետեւ անիրաւ էր այդ դայրոյթը:

— Անիրաւ, կրկնեց Մէրի:

— Անտարակոյս: Այս աղջիկը չի գիտեր թէ ինք է ձեռ տառապանքին պատճառը: Որեքէն բան չէ ըրած ձեզի դէմ... Ինչո՞ւ, ինչ պատրուակով անոր դէմ պիտի գոցեալ քու դուռը: Այսօր, սովորականին պէս ընդունէ զայն, եւ Տիկին Օկիւսթինի խնդրէ որ յառաջիկային ուրիշ գործաւորուհի մը զրկէ քեզի:

— Իրաւունք ունիս, հայր իմ:

Փօլ Հարման սենեկապանին կողմը դարձաւ, որ հոն կեցած էր անշարժ, ու հօր եւ աղջկան միջեւ տեղի ունեցած մեղմածայն բանավէճին արդիւնքին կը սպասէր:

— Ներս մտցուցէ՛ք, ըսաւ գործարանատէրը:

Սենեկապանը հեռացաւ ճաշարահէն, ու քանի մը երկվայրկեանէն վերադարձաւ Լիւսիի հետ: Մանկամարդ աղջիկը մահաւորապէս դաշնակի մը ունէր, ալ — ներքուքին յուզուած, ու հագուստը վրայ կրնար կենալ: Մէրի նմարեց Լիւսիի վրայ առաջ եկած փոփոխութիւնը՝ վերջին տեսակցութեանէն ի վեր, ու այդ փոփոխութեան հաղորուցեալ:

ԿԶԱՎԻԻ ՏԸ ՄՈՒԹԵՓԵՆ
(Շար.)

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Տէր եւ Տիկին Սեդրակ Խաչատուրեան, Տէր եւ Տիկին Գրիգոր Ստեփանեան, Տէր եւ Տիկին Պերճ Յակոբեան, Տէր եւ Տիկին Խորէն Գոռոյեան եւ ընտանեկան բոլոր պարագաները հոգեհանգստեան պաշտօն կատարել կուտան իրենց մօր եւ զրոյ՝

ՆՈՒՐԱՆԻ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ
(ծննդի Գոռոյեան)

մահուան քառասունքին առիթով, այս Կիրակի, Յունիս 10, առաւօտեան ժամը 11ին, Ալֆորվիլի Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցին:

Ի գերեզմանները ողբացեալին յիշատակը յարգողներուն:

ՅԱԿԱՅՈՒԹԻՒՆ

ԿԻՐՆՈՊԼԻ.— Հ. Յ. Գ. Եօթնեղբայրեան եղբայրները ընկերները իրենց ցաւակցութիւնները կը յայտեն իրենց երիտասարդ ընկերոջ Սարգիս Տէր-Յա — բուրձնեանի մահուան տխուր առթիւ, այլի Տիկին Մարիէթ Տէր-Յարութիւն — եանի (ծննդի Յակոբեան) եւ Յակոբեան եւ Բարսեան ընտանիքներուն:

×

Մարտէյլի վառար. Հայրենակցական Միութիւնը իր մասնաճիւղերով՝ Տէսին-Վիէն, խորին ցաւակցութիւններ կը յայտեն Զաքար Զարօնի զաւակներուն եւ ընտանեկան պարագաներուն, անոր կսկծալի մահուան առթիւ:

×

Կապ. Խաչի Կրճնոպլի մասնաճիւղը իր խորին ցաւակցութիւնները կը յայտեն ընկերուհի Մարիէթ Յարութիւնեանի, Տէր եւ Տիկին Լ. Յակոբեանի եւ իր զաւակներուն, Տէր եւ Տիկ. Ա. Յակոբեանի եւ Տէր եւ Տիկին Վ. Բարսեանի՝ իրենց ամուսնոյն, փեսային եւ ընտանիքին՝

Մարգիտ Յարութիւնեանի մահուան տխուր առթիւ:

×

Կապ. Խաչի Կրճնոպլի մասնաճիւղը ցաւակցութիւն կը յայտեն Պ. Տ. Սահակեանի, Տէր եւ Տիկ. Գ. Խաչիկեանի եւ Տէր եւ Տիկ. Ռ. Սահակեանի իրենց կնոջ, մօր եւ զոքանջմօր՝

Տիկին Իզմիրլեան — Սահակեանի կսկծալի մահուան առթիւ:

ՊԱՏԱՐԱԳ — ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՄԷՆԹ ԷՍԻԷՆԻ ՄԷՋ

Մէնթ Էսիէնի Հայ Ազգ. Միութեան եւ Հ. Յ. Դաշնակցութեան նախաձեռնութեամբ պատարագ եւ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի Երկուշաբթի Յունիս 11, առաւօտեան ժամը 9-30ին Հայկ. մատրան մէջ ի յիշատակ Սարգիսարարի ճակատամարտի եւ զոհուող հերոսներուն:

Կը պատարագէ եւ կը քարոզէ
ԴԱԻԹ Ծ. ՎԵՐ. ՍԱՀԱԿԵԱՆ

ՄԱՅԻՍ 28 Ը

Կազմակերպութեամբ Իսի լէ Մուլինոյի «Զաւարեան» կոմիտէի Կիրակի Յունիս 17, ժամը 17ին 22, Իսի Հայ Մշակոյթի Տան մէջ՝ 45, Ռիւ տը Լա Տէֆանս:

Հ. Յ. Գ.

ՓԱՐԻՋ.— Հ. Յ. Գ. Փոթորիկ խումբի ժողովը այս Ուրբաթ (Յունիս 8) ժամը 20-30ին Մշակոյթի Տան մէջ: Կարեւոր օրակարգ:

×

ԱԼՖՈՐՎԻԼ.— Հ. Յ. Գ. «Ս. Մինասեան» եղբայրներին ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս Ուրբաթ ժամը 21ին, ծանօթ հաւաքովայրը: Կը խնդրուի ճշգրտապէս ըլլալ:

ՇՆՈՐՀԱՎԱԼԻՔ

Պուրլ. Օտտոյի Ս. Յակոբ եկեղեցւոյ Թաղականութիւնը շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուէրները.—

Տիկին Թաղուհի Բարունակեանի հոգեհանգիստին՝ Տէր եւ Տիկին Գամպէրեան 20 ֆր., Տէր եւ Տիկին Արմաղանեան 10, Պր. Պօղոս Բարունակեան 50, Տէր եւ Տիկին Փանթէնեան 50:

Զարուհի Գուլումեանի հոգեհանգիստին՝ Պր. Պետրոս Գուլումեան 40:

Արտեմիս Արապեանի հոգեհանգիստին՝ Վէմեան ընտանիք 30, Պր. Ալպէր Յակոբեան 20:

Նազելի Կիրակոսեանի Թաղման առթիւ՝ այլի Տիկին Եղիշիւ Այվազեան 20, Տէր եւ Տիկին Աշոտ Յակոբեան, Պր. Յակոբ Մինասեան 30ական, Զարուհեան ընտանիք, Պր. Երուանդ Տօրումեան, Պր. Արազամ Մէրէմէճեան 20ական, այլի Տիկին Կիրակոսեան, Տէր եւ Տիկին Գուլումեան 10ական, Տէր եւ Տիկին Վարդանեան, Տէր եւ Տիկին Այվազեան 50ական ֆր.:

(Շար.)

ՅՈՒՇԱՏԵՐ

ՀԱՄԱԽԱՐԲԵՐԴՅԻԱԿԱՆ Միութեան Մարտէյլի մասնաճիւղի ընդհ. անդամական ժողովը Շաբաթ (9 Յունիս) երեկոյ ժամը 9ին, սովորական հաւաքատեղին: Օրակարգ՝ տեղւոյն վրայ:

×

ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ Խաչի մասնաճիւղը ընդհանուր ժողովի կը հրաւիրէ իր բոլոր անդամուհիները, այս Ուրբաթ, Յունիս 8, ժամը 20-30ին, Իսի Մշակոյթի նոր տունը, 45 Ռիւ տը Լա Տէֆանս: Կարեւոր օրակարգ:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵՔԶԱՐԳՈՒԹԵԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

13, Rue du Perche — Paris (3e)
(Métro St. Sébastien Froissard)

Այս Կիրակի առաւօտ ժամը 11ին, Հայրապետական հանդիսաւոր պատարագ կը մատուցանէ Հայ Կաթողիկէ Կաթողիկոս-Պատրիարքը՝

ԻԳՆԱՏԻՍ - ՊԵՏՐՈՍ
ԺԶ. ՊԱԹԱՆԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՀՈԶԱԿՄԱՆ ՏԱՐԵԴԱՐՁ ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՈԳԵԿՈԶՈՒՄ ՀԱՅ ԴԱՏԻ ՕՐ

ՄԷՆ-ՇԱՄՈՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ.Յ.Գ. Անտոք-Վարուժան կոմիտէութեան եւ Նոր Սերունդի Կիրակի, Յունիս 17, ժամը 16ին 24
Institution St. Marie, Foyer des Jeunes
Route du Coin (après le Stade)

Կը նախադրէ ՍԵՂԻՍԻ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ
Կը խօսի ԿԱՐՕ ՅՈՎՍԷՓԵԱՆ
Հայկական նուագախումբ, գեղարուեստական բաժին — խնջոյք
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ Է

ՄԱՅԻՍ 28 Ը

ԽՐԱԽՆՆԱԼԻ ԱԼՖՈՐՎԻԼԻ ՄԷՋ

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՓԱՌԱՊԱՆԾ ՀԱՅԱՍՏԱՐԱՐՏԻՆ
ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈԶԱԿՄԱՆ 55ԴԻ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՒ
Նախաձեռնութեամբ Հ. Յ. Գ. «Ս. Մինասեան» եղբայրներին
Մասնակցութեամբ Հ. Յ. Գ. Նոր Սերունդի եւ Ֆր. Կապույտ Խաչի
Շաբաթ, Յունիս 16, ժամը 21ին միջեկույս, Սալ տէ Գէր (Ալֆորվիլ)
22 Ռիւ Վալքոն

Կը խօսի՝ ընդ. ԱՌԼԷՆ ՓԱՓԱՋԵԱՆ
Գեղարուեստական բաժնին կը մասնակցի
Հ. Յ. Գ. Նոր Սերունդի «ՆԱՅԻՐԻ» պարախումբը
ՄԻՆԶԵԻ ԼՈՅՍ ՊԱՐ, ԵՐԳ ԵՒ ԽԱՂԵՐ
LES ARMENIAN'S SUNSHINE
Նուագախումբին առաջնորդութեամբ
ՇԱՄՓՈՒՐՈՎ ԽՈՐՈՎԱԾ ԱՌԱՏ ԿԵՐՈՒՄՈՒՄ

ՇԱԽԻԼԻ Ա. ԳՐ. ԼՈՒՍԱԽՈՐԻԶ

Ե Կ Ե Ղ Ե Ց Ի

Պատարագ այս Կիրակի Հոգեգալստեան օրը (Յունիս 10): Պատարագէն յետոյ Ս. Հաղորդութիւն կը տրուի դպրոցի աշակերտներուն:


Հ. Յ. Գ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԻ

Պատգամաւորական 23րդ ժողովը կը դաւանուի Ալֆորվիլի մէջ
Յունիս 9, 10, 11ին

Salle de la Justice de Paix
Place de la Mairie, 94 Alfortville

Տեսողութեան եւ Հստողութեան Ձեր բոլոր հարցերուն համար Մի՛ Վարանի՛ք ԱՆՏՐԷ ԵՒ ՏԱՆԻԷԼԸ ՀԱՍԲԱՆԵԱՆ

POUR TOUS VOS PROBLEMES DE
VUE ET D'AUDITION



ANDRÉ & DANIELLE HASBANIAN

Opticiens diplômés de Paris
Acousticiens diplômés de la Faculté de
Médecine de Marseille

Vous font part de l'ouverture d'un magasin d'optique et laboratoire de surdité

- Վ Ա Լ Ա Ն Ս - 60, Rue Madier de Montjau
Tél. : 43-56-23 26000 VALENCE

ՇՆՈՐՀԱՎԱԼԻՔ

Փարիզահայ Տիկնանց Միութեան Որբոր Ծննդութեան Մարմինը շնորհակալութեամբ ստացած է Տիկին Ա. Սէմէր-ճեանէ 100 ֆր., ի յիշատակ իր քոյրեւուն՝ Տիկիններ Կամարականի եւ Մկրտիչեանի եւ ըրոջ ամուսնոյն Պ. Սահակեանի մահուան տխուր առթիւ:

Ճ Ա Շ

Նախաձեռնութեամբ Տարօն — Տուրուբեանի Հայր. Միութեան, Կիրակի Յունիս 8, ժամը 15ին սկսեալ Փարիզի Հայ Մշակոյթի Տունը:
Մուտք՝ 20 ֆր.:

Ա Ջ Դ

Achete monnaies ex-coloniales, médailles de toute époque. Ecrire au Journal qui transmettra.

Imprimé sur les Presses
DU JOURNAL « HARATCH »
83, Rue d'Hauteville, Paris (10e)

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՑԻՆԵՐՈՒ ԲԱՅԱՌԻԿ ՀԱԻԱՔՈՅԹ ՎԻԷՆԻ ՄԷՋ

Մարտէյլի Վասպ. Հայր. Միութեան Կեդր. Վարչութիւնը Տէսին-Վիէնի իր մասնաճիւղերով կը հրաւիրէ Ֆրանսայի բոլոր Վասպուրականցիները, անդամ թէ ոչ, համախմբուելի Յունիս 10-11ին Հոգեգալստեան տօնին աթիւ, Վիէնի մէջ, հայրենակից Պ. Խաչիկ Տէրտէրեանի զուսուռ ծառաստաններու լի ազարակին մէջ, որ սիրայօժար տրամադրուած է:

Այն հայրենակիցները որ փախաք կը յայտեն երկու օր անցընել հայրենակցական միջոցաւոր մէջ, երկուստեքութեան հետ, պապենական սովորութիւններով, կը խնդրուի արձանագրուել Միութեան անդամներու մօտ կամ ուղղակի յայտնել Պր. Խաչիկ Տէրտէրեանի, Երմէն տը Երմէն, Վիէն:

Ծախքերու համար կարգադրութիւն տեղւոյն վրայ:

Le Voyage en Grèce

n'hésitez pas, adressez-vous à
Mayda BERBERIAN

6, Rue de l'Echelle, PARIS (1er)
Tél. : 260-30-20 et 260-67-34
de 9 h. à 19 h. tous les jours

Spécialiste de Voyages en Grèce, Orient, Moyen-Orient (Liban, Egypte, etc.)
Les voyages à partir de 395 F.

ՁԵՐ ԺՄՐԲՈՐԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Դիմեցէ՛ք ՄԱՅՏԱ ՊԵՐՊԵՆԵԱՆԻ

LE VOYAGE EN GRECE

Ամէն օր ժամը 9էն 19

Ճամբորդութիւններ դէպի Յունաստան, Արեւելք, Եգիպտոս, Լիբանան
395 ֆր.էն սկսեալ

ՕՐՈՒԱՆ ՊՕՍԻՐԸ

ՀԱՊԱՐԻ ԹՈՒՐԻՔԵՐՈՒ
ՆԵՐԳԱՂԹՎ ՀԱՅԱՍՏԱՆ

Յառաջի Յունիս 2ի թիւով տուինք զըլ-
խաւոր մասերը պատմական գիտութիւն-
ներու գոյտոր Գ. Վ. Շառոյեանի յօդ -
ուածին՝ լոյս տեսած Լրաբեր հասարա-
կական գիտութիւնների ամսագրի Փետր-
ուարի թիւին մէջ, «Հայրենադարձներին
հաղով ապահովելու խնդիրը 1920ական
թուականներին» խորագրով:

Ներգաղթը, նոր բառով «հայրենադար-
ձութիւն»ը, ամէնէն կարեւոր հարցն էր,
որով պէտք է զբաղէին խորհրդային Հա-
յաստանի վարիչները:

Շառոյեան օգտագործելով պետական
«արխիւ»ները, կուտայ կարգ մը տեղե-
կութիւններ, որոնք նորութիւն են մեծ
մասամբ: Ըստ իրեն, խորհրդային կա-
ռավարութիւնը «նկատի ունենալով ար-
տասահմանում գեղեցիկ հայ զաւղթա-
կանութեան բուռն ձգտումը դէպի Հա-
յաստան, եւ հաշուի առնելով այն ժա-
մանակուայ իր հողային ու ֆինանսական
հնարաւորութիւնները», ծրագրեր է ա-
ռաջին հերթին հայրենի երկիր ընդունիլ
այն պանդուխտ հայ աշխատաւորները,
որոնց վիճակը օտարութեան մէջ «առա-
ւել ծանր էր ու տառապալից»:

Կային նաեւ Վրաստան եւ Ազրբեյջան
ապաստանած արեւմտահայ զաւղթական-
ներ, որոնցմէ չատեր կը ձգտէին ներգաղ-
թիլ Հայաստան: Սակայն «ստեղծուած
իրադրութիւնը» 1922 Դեկտեմբերին
պարտադրեց է կառավարութիւնը սահ-
մանափակել հայրենադարձութիւնը, բա-
ւարար հող չունեցալու պատճառով, եւ
միայն արտասահմանէն ընդունիլ հողա-
ւորներ: Իսկ առայժմ չարտոնել խոր-
հրդային եղբայրական Հանրապետու-
թեանց մէջ — Ազրբեյջան եւ Վրաստան —
ապրող արեւմտահայ պանդուխտներու
ներգաղթը:

1921ի վերջերը եւ 1922ի սկիզբները
Միջազգեպէս Խ. Հայաստան ներգաղթած
են «9 հազարից աւելի արեւմտահայ հո-
ղագործ զաւղթականներ», հակառակ երկ-
րի սակաւահողութեան եւ տնտեսական
քայքայուածութեան, մասնաւոր, որ
1922ին դարձեալ գլուխ բարձրացուցեր
էր սովը:

Ուրեմն, ըստ Շառոյեանի տեղեկագրու-
թեան, քաղուած Երեւանի պետական դե-
ւանախորհրդի, Միջազգեպէս կատար-
ուած ներգաղթին վերջ (1921ի վերջերը
եւ 1922ի սկիզբը), մինչեւ 1924 ոչ մէկ
հայ զաւղթական առնուած է խորհ. Հա-
յաստանի սահմաններէն ներս: 1924 Մարտ
17ին Անդրկովկասեան Սոցիալիստական
Ֆեդերատիւ Սովետական Հանրապետու-
թեան ղեկավար մարմինները, նախաձեռ-
նութեամբ Խ. Հայաստանի կառավարու-
թեան, լուրջ ջննդութեան առարկայ դար-
ձուցեր են հայրենադարձութեան հարցը:

1924էն մինչեւ 1929, որոշ ընդհատում-
ներով, ներգաղթ կազմակերպուած է ար-
տասահմանէն դէպի Հայաստան:

Ահա՛ Շառոյեանի գրութեան եզրակա-
ցութիւնը:

«Այսպիսով, 1920ական թուականներին
արտասահմանեան զանազան երկրներում
գեղեցիկ արեւմտահայ զաւղթականներին
Սովետական Հայաստանում վերաբնա-
կութիւն հաստատած աւելի քան 26.000
հայ աշխատաւորներ տեղաւարտուած են
Հանրապետութեան տարբեր շրջաններում
ու քաղաքներում, ապահովուում աշխա-
տանքով ու ստանում ապրուստի անհրա-
ժեշտ միջոցներ»:

Արդ, երբ 1922ին «իր բացասական դերն

ՕՐՈՒԱՆ ԴԵՊԵՐԸ

ԳԻՐՄԱՆԱՅԻ ՄԸ
ԽՍՐԱՅԷԼԻ ՄԷՋ

ՊՐԱՆՏ ԱՅՍ ԱՆԳԱՄ ԾՈՒՆԿԻ ԶԵԿԱԻ

Իսրայէլի մէջ կատարուած հանրային
կարծիքի ճննդութեան մը համաձայն, ժո-
ղովուրդին շուրջ 65 առ հարիւր կողմ-
նակից էր Դաշնակցային Գերմանիոյ Նա-
խարարապետին Իսրայէլ այցելութեան,
բայց հաւանաբար կողմնակից չեղողնե-
րու փոքր տոկոսին կը պատկանէր Պաշտ-
պանութեան նախարար Զօր. Մոնչ Ծալ-
ի:

Իսրայէլ առթիւ դրած ենք, կրկին յիշե-
ցնեք այս դառն ճշմարտութիւնը, քա-
ղաքի մ. Հայաստանեան աղբիւրներէ:
1932ին Երեւանի մէջ լոյս տեսաւ Զա-
ւէն Կորկոտեանի «Խորհրդային Հայաս-
տանի բնակչութիւնը վերջին հարիւրամ-
եակում (1831-1931)» մեծագիւր գիրքը,
հրատարակութիւն Մեքոնեան ֆոնտի:
Վիճակագրական հոյակապ այս աշխա-
տութեան 184րդ էջին մէջ, հեղինակը կը
գրէ բառ առ բառ հետեւեալը —

«Եւրոպիոյ Դաշնակցութեան «մաքո-
ղական» քաղաքականութեան, Հայաս-
տանից 1919 թուին քշուած էին ոչ պակաս
200.000 Թուրքեր, Քրդեր եւ այլն...»

«Բայց 1920 թուին խորհրդային իշխա-
նութիւնը Դաշնակցութիւնից ստացաւ ոչ
աւելի քան 10.000 թուրք բնակչութիւն:
1922 թուին վիճակագրութեամբ ցոյց
տրուած 72.596 թուրք-թաթար բնակչու-
թիւնից մնացորդացը՝ մօտ 60.000ը խոր-
հրդային իշխանութեան օրօք վերադար-
ձան իրենց բնքը մախ քան 1922 թուի
աշնան կատարուած հաշուառումը» (ընդ-
գծումները մեր կողմէ):

Հաշիւը պարզ է: Դաշնակցութեան
«մաքողական», այսինքն Հայաստանը
միաժող դարձնելու քաղաքականութեան
չնորհիւ, 200.000 թուրքեր ու Քիւրտեր
հեռացեր էին մեր հայրենիքէն, ուր մնա-
ցեր էր «ոչ աւելի քան 10.000 թուրք բն-
ակչութիւն» միայն, Դաշնակցութեան
փոխանցուած բոլշեւիկներուն: Արդ,
խորհրդայինացումէն երկու տարի չանցած
10.000ը դարձեր է 72.596, որոնցմէ 60
հազարը «մաքողագործութեան», 2.596ը՝
նորածիններ:

Հայաստանի պատասխանատու վարիչ-
ները, մասնաւորաբար ներգաղթ կազմա-
կերպող յանձնախումբերը երբ կը խօսին
ու կը գրեն խորհրդայինացումէն ետք
կատարուած հայրենադարձութեան մա-
սին, ինչո՞ւ չեն յիշեր, «նախ քան 1922
թուի աշնան կատարուած հաշուառումը»,
խորհրդային իշխանութեան օրօք «իրենց
բնքը» վերադարձած 60.000 թուրք-թա-
թարները:

Երբ պատմութիւն կը գրեն, մարդիկ
պէտք է ըլլան առարկայական: Պէտք չէ
եղծեն, խեղաթիւրեն կամ կրճատեն պատ-
մական անուրանալի դէպքերը, ինչպէս
կ'ընեն պատմական գիտութիւններու գոյ-
տոր Գ. Վ. Շառոյեան եւ Հայաստանի
վարիչները:

ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

եան, որ իր բացակայութեամբ փայլե-
ցաւ, Հինդաբիթի օր, երբ երկրին պաշ-
տօնական անձնաւորութիւնները, գլխաւ-
որութեամբ վարչապետ Տիկին Կոլտա
Մէյրի կ'ընդունէին Վիլի Պրանտը:

Առաջին անգամն է որ Իսրայէլ գեր-
մանացի վարչապետ մը կ'ընդունէր ու
նաեւ եւրոպական երկրի մը վարչապետը:
1898ին սակայն Վիլհելմ Բ. կայսրը Պա-
ղեստին կ'այցելէր եւ Երուսաղէմ ալ
կ'երթար: Այդ առթիւ, հարկ եղած էր
նոր դուռ մը բանալ, Եաֆայի դուռը,
հին քաղաքին մէջ որպէսզի կայսրը կա-
րենայ ձիով մտնել:

Պոնի քաղաքական դիրքը յստակ է եւ
պէտք չէ մոռնալ թէ Պրանտի Իսրայէլ
այցելութեանէն առաջ, Արաւքին նախա-
բարը՝ Եւլ, չընդունոյտ մը կատարած
էր արաբական երկիրներ: Պրանտ ալ
Գահիլէ պիտի այցելէ, հաւատարիմ մնա-
լով քաղաքականութեան մը որ չուզեր
«չեղոր» ըլլալ այլ «ոչ-գիրքաւորուած»:

Տիկին Կոլտա Մէյրի բարի գալուստի
ճառէն առաջ, հրէական բանակի չեփո-
րախումբը կը հնչեցնէր «Տօյլաւտ իւպըր
ալլաւս»ը մինչ Իսրայէլի վարչապետը
կ'ողջունէր մարդը «որ մարդկային եւ
հրէական պատմութեան ամէնէն եղբա-
կան ժամերուն, քաջութիւնն ունեցաւ
պայքարելու նացիականութեան դէմ»:

Պրանտ կը շնորհակալ լինէր ինչ
կեղծիքի որ եղած է եւ ջնջել անցեալի
սխալները բայց՝ «Տիկին, նոր Գերմանիոյ
Նախարարապետը հրաւիրեցիք: Այս ձե-
ւով դէմ առ դէմ դիրք անցաւ եւ ա-
պագայի յոյսերը: Մարդկութիւնը կոր-
սուած կ'ըլլար եթէ վերսկսելու այս քա-
ջութիւնը չըլլար»:

Պրանտ Երուսաղէմ եկած էր թոյնով
եւ անմիջապէս խոնարհած նացիներու
կողմէ բնաջնջուած հրայ համայնքներու
յուշարձանին առջեւ ու Սաղմոս մը ար-
տասանած բայց ծուկի չէր եկած ինչ-
պէս ըրած էր Վարչաւս:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՒՈՎ

«ՄԲԱՅԼԱՊ» ի երկու աստղանաւորդ -
ներ յաջողեցան անոր թեւերէն մին մա-
սամբ բանալ: Այս ձեւով կ'ապահովուի
կարեւոր չափով «Սքայլապ»ի ելեկտր -
ուժը: Արդարեւ «Սքայլապ» երկու թե-
ւուն, որոնք արեւի տաքութիւնը ելեկ -
տրականութեան կը վերածեն: Արժանի
ժամանակ երկու թեւերն ալ չէին բաց -
ուած:

ՅՐԱՆՍԱՅԻ նախկին Նախարարապետը՝
Շապան - Տեւրա Փեքիին մէջ երկու
հանդիպումներ ունեցաւ իր վարչապետին
հետ:

ՄՈՍԿՈՎԱ խնդրեց ձափոնի վարչապե-
տէն, որ յետաձգէ իր այցելութեան թը-
ւականը Մոսկուա: Թանաքա Օդոստոսին
Մոսկուա պիտի այցելէր եւ տեսակցէր
Բրեժնեւի հետ: Դէտերու կարծիքով Մոս-
կուա դժգոհ է, որ ձափոնի կառավարու-
թիւնը կը ձգձգէ տնտեսական համագոր-
ծակցութեան Մոսկուայի առաջարկը:
Դժգոհ է նաեւ, որ Թոքիո հրապարակ կը
ընէ Գուրիլեան կողմից Երեւան հարցը: Սորհ.
Միութիւն 1945ին դրաւ իր գանձը:

ՇՈՒԷՏԻ խորհրդարանը վաւերացուց
սահմանադրական օրէնք մը, որով թա-
ղաւորին իրաւասութիւնները կը ջնջուին:
Նոր օրէնքը, որ ի դօրու պիտի դառնայ
1975 Յունուար մէկէն սկսեալ, կը ձգէ,
թէ Եունայ խորհրդարանական ժողովը
զաւարկական երկիր մըն է, ուր «ամէն
իշխանութիւն ժողովուրդէն կը բխի»:
Թաղաւորը այլեւս պիտի չնախադասէ
Պետական խորհուրդի նիստերուն, բա-
նակներու ընդհ. հրամանատարը պիտի
չնկատուի եւ ոչ ալ նոր վարչապետ մը
պիտի նշանակէ կառավարական տաղ -
նապի մը պարագային: Այսուհանդերձ,

ԵՐԵՒԱՆ <=> ՓԱՐԻՋ
ՀԵՌԱՏԻՊ

ԵՐԵՒԱՆ (Արմէնիպէս, Յունիս 5)

ԵՐԵՒԱՆԻ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐ-

Երեւանի 2750ամեակի տօնակատարութեան
ատեն, Արին-Բերդի բարձունքին վրայ,
տարիներ տեւող պեղումներու շնորհիւ
հողի տակէն գրեթէ ամբողջութեամբ
դուրս հանուեցաւ հինաւուրց ամրոցը:
Միջնաբերդի հոյակերտ շինութիւննե-
րուն՝ պալատին եւ տաճարին մէջ հնա-
գէտները յայտնաբերեցին որմնակար -
ներու մնացորդներ: Ասոնց վերլուծու-
մին նուիրուած է պեղումներու ղեկավար
տնօրէն Կոստանիկին Յովհաննիսեանի
«Երեւանի որմնակարները» գիրքը, որ
վերջիս լոյս տեսաւ Հայաստանի գիտու-
թիւններու ակադեմիայի հրատարակու-
թեան կողմէ: Որմնակարները, որոնց
ընդհանուր մակերեսը կազմած է մօտ
2000 քառակուսի մեթր, զգալի չափով
փոխած են մեր պատկերացումները ու-
րարական կառոյցներու ներքին յարա-
բանքին մասին, ցոյց տալով, որ որմնա-
նկարչութիւնը տեղ դառած է անոնց մէջ,
բաւական բարձր մակարդակով:

Ուրարտացիները իրենց յօրնումներուն
մէջ ձեւերու հարստութիւնն ստեղծած են
բայցերու, կենդանիներու եւ մարդոց,
ինչպէս նաեւ երկրաչափական պատկեր-
ներով: Անոնք նշանադրումները նախ կա-
տարած են քանակով եւ կարկինով, ապա
կարմիր ներկով ուրուագծած են զանոնք
եւ վերջիս ալ զանազան գոյներով ծած-
կած են: Նկարները զօնուած են առանց
կաղապարի գիծերը նորը են, ինչ որ
նկարչներուն վարպետութիւնը կը հաս-
տատէ: Որմնակարները յաջողական
չարքերէ բաղկացած են եւ դասաւորուած
են հորիզոնական շերտով, սակայն նկա-
տելի են հեռապատկերի նախնական պատ-
կերացումները:

Արին-Բերդի որմնակարները պայծառ
գոյներու ներդաշնակութեան կազմած
են: Երանգապակը թէեւ այնքան ալ հա-
րուստ չէ եղած, բայց պայծառ եւ հիւ-
թեղ գոյներու համադրութիւնը հիւսնալի
ապաւորութիւն գործած է: Հիմնական
գոյներն են եղած կարմիրն ու կապույտը,
որոնց դիմացկունութեան շնորհիւ ալ
նկարները ապրած են դարեր: Իրեւ կա-
նոն Ուրարտացիները գոյները իրարու
չեն խառնած, երանգներու տարբերու-
թիւնը ստեղծած են տուեալ գոյնը դօ-
րացնելու ճամբով:

Գործածած են բնական եւ արհեստա-
կան ներկեր: Սպիտակը ստացած են
կիւպէ, սեւը՝ ածուխէ, կարմիրը՝ երկա-
թի ժանգէ, իսկ վառ կարմիրը՝ երկնա-
գոյն քարէ: Ներկեր պատրաստած են
նաեւ պղինձէ, անագէ, կապարէ եւ այլ
նիւթերէ:

Գիրքին մէջ նկարագրուած եւ վերլու-
ծութեան նիւթարկուած են Երեւանի
միջնաբերդին արտաքին սիւնատարահին,
Արդիշտի Ա.ի պալատի փոքր եւ մեծ սը-
րահներուն, տաճարին որմնակարները,
բացատրուած է անոնց կապը հին Արեւել-
քի երկիրներու, մասնաւորապէս Ասորես-
տանի գեղանկարչութեան եւ քանդակա-
գործութեան հետ: Գիրքը որմնակարնե-
րու գունազարդ նկարներ ունի:

խորհրդարանի որոշումով այս օրինագիծը
գործադրութեան պիտի չդրուի ներկայ
թիւանորին օրով: Կիւլթալ 2. 90 տարե-
կան է:

ՀԻՄՆԱՐԿԵՐ

ԻՍԻ ԼԷ ՄՈՒԼԻՆՈՅԻ

ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

— 0 —

Մայիս 31-ը յիշատակելի օր մը եղաւ իսի լէ Մուլինոյի Հայութեան համար: Մշակոյթի Տան բացումէն քանի մը շաբաթ ետք, այս անգամ տեղի ունեցաւ նոր եկեղեցւոյ հիմնարկէքի արարողութիւնը:

Քանի տարիներէ ի վեր անձկազին վիճակ մը կ'ապրէր իսի լէ Մուլինոյի Հայութիւնը, որուն նուիրաբերած լուծում — ներով դոյապած էր չօգտօնելի գումար մը՝ չըմանին մէջ եկեղեցի մը կառուցելու նըպատակին տրամադրելի: Ու քառ'ն տաւրիներու երկայնքին փայփայտած այդ երազը վերջապէս իրականութիւն կը դառնար շնորհիւ այն նուիրեալ անձեւ — բուն, որոնք աւելի քան մէկ տարի է՝ համախմբուած յանձնախումբի մը մէջ, զխառուրթեամբ՝ ժրաջան եւ նուիրեալ հոգեւորական, Նորիսն Վրդ. Զաքար — եանի, ազգօգուտ այս ծրագրի իրագործման համար ոչ մէկ ջանք ու ճիւղ խնայ չեցին, որպէսզի օր առաջ բարձրանար նոր եկեղեցին իսի լէ Մուլինոյի մէջ:

Հակառակ տեղատարափ անձրեւին, հարիւրաւոր Հայեր հաւաքուած էին իսի լէ Մուլինոյի, նորակառուց եկեղեցւոյ վայրը: Յատկանշական էր երիտասարդութեան ներկայութիւնը, որ նոյնիսկ մեծամասնութիւն կը կազմէր:

Կէսօրէ ետք ժամը 4ին կը ժամանէ Հայրապետական Պատուիրակը՝ Սերովբէ Արք. Մանուկեան, ընկերակցութեամբ Գիւտ Ծ. Վրդ. Նազարեանի, Նորիսն Վրդ. Զաքարեանի եւ Մեսրոպ Քհնյ. Ժամկոչեանի: Ներկայ է նաեւ եկեղեցւոյ ճարտարապետը՝ Պ. Ապրիո Սանճեան:

Սկիզբ կ'առնէ հիմնարկէքի արարողութիւնը:

Սերովբէ Արք. ըստ եկեղեցական կարգի, կ'օրհնէ ու կ'օծէ կառուցուելիք եկեղեցւոյ 16 հիմնաքարերը, որոնք կը ներկայացնեն Քրիստոսի 12 առաքեալներն ու 4 սուրբերը: Հիմնաքարերը, ըստ եկեղեցական կարգի, ունէին իրենց կնքահայրերը, յանձնին՝ Պ. Պ. Միսաքեան Կարապետ, Տէր-Թումայեան Յակոբ, Հէքիմեան Աղաւթ, Արարիկեան Զատիկ, Կարապետեան Արամ, Փայտեան Կարօ, Արեւեան-Պօղոսեան, Մայրիմներ Նշան եւ Պարգեւ, Զատիկեան Լեւոն, Մարթայեան Մեսրոպ, Ապուռայեան Գասպար, Արեւստեան Արթուր, Մէմէրճեան Ժան, Վարդուկեան եւ տիկիններ՝ Ղուկասեան Մարինոս եւ Մարիամ:

«Առաքելոյ աղաւնոյ իջանելով մեծաւայն հնչումը ի բարձանց»... Հարակաւնի հնչիւններուն առնթեր Ս. Միւսոն — նով կ'օծուին հիմնաքարերը, որոնց վրայ, մօտ ապագային, պիտի բարձրա —

ՁԱՅՆԵՐ

ԳՆԻՆՈՒԵՆ

ԿՈՉ

Քանի — Քոթ տ'Աղիւրի Տիկնանց Միութիւնը, համեստ միջոցներով եւ փոքրածիւ աշակերտներով, հայերէնի միօրեայ դասընթացներ ստեղծեց 1971ին:

Այժմ անոնց թիւը քառասուցուած է: Դպրոցի բարդաւածման աշխատանքն — բուն առնթներ քանի մը ազգային եւ գեղարուեստական ձեռնարկներ ալ կատարուեցին, որոնք պատկուցան յաջողութեամբ: Ծնողքներ, հայրենակիցներ Քաննէն եւ մօտակայ վայրերէն, իրենց ներկայութեամբ քաջալերեցին մեզ:

Քաջալերուած այդ ջերմ ընդունելու — թեմէն, որոնցից ընդլայնել մեր գործունէութեան դաշտը, հայապահպանման ասպարէզին մէջ:

Միութիւնս կազմեց եւ քաղաքացի — տութեան կողմէ վաւերացնել տուաւ իր կանոնադիրը: Այժմ, որ հաստատ հիմնութիւն վրայ դրած ենք մեր միութիւնը, կ'ուզենք առաւել եւս ճիւղաւորել մեր աշխատանքները:

Համառօտ ներկայացնենք մեր ծրագրերը, վստահ՝ թէ անոնք ձեր սրտին մօտ կ'ըլլան:

Մենք, անշուշտ, առաջին դերքի վրայ ընենք մեր դպրոցը՝ անհատահաս եւ չափահաս աշակերտներով: Մտադիր ենք հաճելի պահեր ստեղծել անոնց համար՝

նայ հայ հաւատքին բերդը՝ եկեղեցին հայկական:

Մագաղաթի վրայ գրուած արձանա — գրութիւն մը կարգացուեցաւ եւ թաղ — ունեցաւ հիմքին մէջ, որուն առաջին շաղկապ թափուեցաւ Սերովբէ Արք.ի ձեռամբ:

Մեր գեղեցիկ շարականներու հնչիւն — ները, անձրեւի մաղումը եւ հոգեպարար տեսարանը որ կը պարզուէր աչքերուն առջեւ, ուրախութեան յուզումներով կ'ողողէին ներկաներուն հոգիները:

Ժողովուրդ մը որ դարեր շարունակ անխորտակ հաւատքով եւ անբախտելի կապերով փարած է իր հաւատքի բերդին՝ հայ եկեղեցիին, այսօր, Փարիզի այս հայաշատ արուարձանին մէջ՝ իր պապերու աւանդին հաւատարիմ կեց — ուածքով, եկած է հիմքը ամրապնդելու նոր եկեղեցիի մը եւ նորոգելու իր ուխտը՝ Թէքէեանի բաւերով:

Եկեղեցին հայկական՝ բարձր բերդն է հաւատքին իմ պապերուս, որ հողէն գայն փա՛ր առ փա՛ր հանցին Ու երկինքէն իջուցին գայն ցօ՛ղ առ ցօ՛ղ, ա՛մպ առ ա՛մպ, Ու քաղուեցան անոք մէջ, հանդարտութեամբ, հեգութեամբ...
Հ. Ա.

երգի, պարի դասերով, ամառնային դաշտահանդէսներով եւ, յետագային, յառաջագնաց աշակերտները Հայաստան դըր — կել իրենց արձակուրդին առթիւ: Ընկե — րական կապեր ստեղծել անոնց եւ հայրենի իրենց տարեկիցներու միջեւ: Այս ճամբով անոնք հնարաւորութիւն կ'ունենան ճանչնալու եւ առաւել եւս սիրելու իրենց հայրենիքն ու լեզուն:

Բարոյական դեմքի վրայ մտածած ենք հաստատել իրերօգնութեան գործը: Հաստատել համազարուցիկ կապեր՝ փո — խադարձ աջակցութեան համար:

Զարկ տալու համար մշակութային կեանքին՝ կ'ուզենք կազմակերպել դասա — խօսութիւններ, դրական ասուլիսներ, զրոյցներ զանազան նիւթերու շուրջ: Ծա — նօթացնել մեր պատմութիւնը, մեր ա — ւանդութիւնները, հայկական երաժշտու — թիւնը եւսայն մեր երիտասարդներուն:

Կը փափաքենք նաեւ յետագային ու — նենալ մեր ակումբը, իր դասարանով, զրադարանով եւ ընթերցարանով: Այս ձեւով այդ ակումբը կը դառնայ հայկա — կան տուն մը մեր դպրութիւն մէջ:

Սիրելի հայրենակիցներ, այս մօտաւոր եւ հեռավոր ծրագրերները իրագործելու համար կոչ կ'ընենք բոլորիդ, որ խրա — խուսէք մեր աշխատանքները՝ բարոյա — պէս եւ նիւթապէս: Անդամագրուեցէ՛ք մեր միութեան, ո՛ւր որ ալ գտնուիք:

Մեր խորհրդանշանն է վարդը բուրբոն — նաւէտ: Միութեանս անդամուհիները նը — ման են Ժրաջան մեղուներու: Եկէ՛ք, մաս — նակցեցէ՛ք փեթակի կազմաւորումին՝ մի — ասնական ոգիով եւ հայրենիքի սիրով:


Քանն-Քոթ տ'Աղիւրի
Տիկնանց Միութեան
ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

Մեր հասցէն. —

Union des Dames Arméniennes
de Cannes-Côte d'Azur
2, Avenue Saint-Nicolas
06400 Cannes

ԽՄԻ. «ՅԱՌԱՋ»Ի. — Ուրախութեամբ հրապարակեցինք վերայիշեալ կոչը եւ աւելի մեծ ուրախութեամբ հրապարակած պիտի ըլլայինք եթէ ան շարադրուած ըլլար դասական ուղագրութեամբ եւ ոչ թէ երեսնեան: «Յառաջ»ի խմբագրութիւնը արդէն օրերը իրիկուն կ'ընէ Հայաստանեան մամուլի քէ հեռատիպ «Քարգ — մանելով» բայց ընդունելի չի կրնար գրուել որ երեսնեան ուղագրութիւնը հող գտնէ Սփիւտփի մէջ ալ: Երբ մոյմիսկ երեսնին մէջ ձգտում կայ վերադառնալու Մեսրոպեան ուղագրութեան, առնուազն վրդպետացիք է որ Սփիւտփի հայ կազմակերպութիւններն ու միութիւնները սկսին դաւանանքի հայերէնին: Հոս խընդրոյ առարկայ չէ անշուշտ վարչութեան փարտաւարութիւնը, որ հաւանաբար արտագաղթած է բայց խնդրոյ առարկայ է Միութիւնը որոն առաջին կոչումը պիտի ըլլայ անաղարտ պահել Մայրենիքը:

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (200)



ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ
ՕՎԻՏԻ ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ձ.

— Ի՞նչ կ'ուզէք ինձմէ, հարցուց Մէրի խրոխտանքով:

Լիւսի տկար ձայնով մը պատասխանեց. — Ձեր հագուստներուն փորձը ընելու եկայ: Գիտեմ թէ շատ ուշ մնացի, բայց յանդանքը իմա չէ: Ոճիւրի մը գոհ գացի, ու այդ պատճառով չկրցի աշխատել օրերով...:

Փօլ Հարման սարսուռաց, այդ խօսքը լսելուն պէս:

— Ոճիւր մը, գոչեց Մէրի, որուն հետաքրքրութիւնը արթնացած էր:

— Սպանութեան փորձ ըրին... ու նոյն —

իսկ կէս մը յաջողեցան...:

— Օրիորդ, վերաւորուեցա՞ք, ըսաւ Փօլ Հարման մեծ պաղարիւնութեամբ:

— Այո, պարոն, վերջաւ ջաւ կը պատ — ճառէ տակաւին: Դանակի առաջին հարուած մը ստացայ, ու երկրորդ հարուած մը գործա պիտի ըմբռնէր, եթէ երբեք չեղոր չկոտրէր սեղմիրանին լանջակալին վրայ...: Այս դիպուածին կը պարտիմ կեանքս:

— Բարեբաւարիկ դիպումը մը, զոր օրհնելու է... Ձեր մարդասպանը ձերբակալուած է հարկաւ:

— Ոչ, պարոն, բայց յուսալի է որ մօտ օրէն ձերբակալուի:

Այս պատասխանը ցուրտ քրտինք մը առաջ բերաւ գործարանատէրին քունքն — բուն վրայ:

— Անշուշտ, ոստիկանութեան յայտ — նեցիք անոր դիմանիշերը, հարցուց Փօլ Հարման:

— Ոչ, պարոն... Հազիւ մարդը նըշ — մարեցի մթութեան մէջ...: Այն թափա — ուղը իրենքին մէկն է, որոնք չարիք կը գործեն փարիզի չըմանները: Ան կը պաշտէր կողոպտելու համար:

— Ձեզ կողոպտեցի՞ն ալ:

— Այո, պարոն, ժամացոյցս ու դրա — մապանակս:

Լիւսիի ներս մտնելն ի վեր, Փօլ Հար — ման յարաճուն հետաքրքրութեամբ մը կը դիտէր մանկամարդ աղջկը: Կը վեր —

- ՀԱՅԱՍՏԱՆ -

ՆՈՐ ԳԻՐՔ

Լոյս է տեսած «Գրական յուշարձան — ներ» մատենաշարին չորրորդ գիրքը՝ Շէյքսպիրի «Քրոնիկներ»ը: Գիրքը հրա — տարակուած է գիտութիւններու աղա — դեմիայի արուեստի հիմնարկութեան չէյքսպիրադիտութեան հայկական կեդ — րոնի կողմէ, որուն տնօրէնն է Փրոֆ. Ռուբէն Զարեան: Հատորի խմբագիրն ալ ան է եւ հետեւեալ տեղեկութիւնները տուած է գիրքին մասին:

— Շէյքսպիր գրած է տասը քրոնիկ: Ասոնք Անգլիոյ պատմութիւնը արտացո — լող անոր գործերն են: Եւ հակառակ ա — նոր, որ մեր ժողովուրդը մեծ սէր ու — նեցած է եւ ունի դեռ անգլիացի մեծ թատերագիրին հանդէպ, մեր թարգմա — նիչները առանձնապէս չեն հետաքրքր — ուած անոր քրոնիկներով: Թերեւս կա — բելի է նոյնը ըսել նաեւ Շէյքսպիրի մա — սին գրող մեր դրադասներուն համար: «Համէթ»ը, «Օթելլո»ն, «Լիր Արքան», «Անթոնիոս եւ Կլէոպատրա» եւ այլ ող — բերուածութիւններ հայերէն թարգմանուած են քանի մը անգամ, սակայն անոր քրո — նիկները անուշադրուած մասնաւորա — ճէն: Բացառութիւն կազմած է Վարդգէս Սուրէնեանց, որ Աղամեանի խնդրանքով թարգմանած է «Ռիչըրտ Գ.»ը: Յետա — դային նոյն գործը թարգմանեցին Վա — հան Թոթովեանց, Գեորգ Դարֆի եւ Խա — չիկ Դաւանց: Հայերէն ամբողջական Շէյքսպիր ունենալու ծրագրին հետա — մուտ մեր կեդրոնը առաջադրեց թարգ — մանել այն գործերը, որոնք մինչեւ հիմա չէին թարգմանուած: Այդ գործը սկսաւ քրոնիկներով:

Հատորին մէջ տեղ գրաւած են ութ քրոնիկներ: Երկու ալ գործեր՝ «Ճոն արքայ» եւ «Հենրի Ը.» տեղ չեն գտած այս հատորին մէջ:

Հայաստան արածելիք շատ աղուոր բա — ներ ունի բայց ոչ երբեք՝ ուղղագրու — քիւնը: Ակնեւեւ է որ վերջին շրջանին Հայաստանէն եկող ուսանող — ուսանողու — հիւներ, որոնք «հայագիտութիւն» (այս ալ բաւական անանցած բան մը դարձած է այլեւս) ուսած են երեսն ման ուսուց — չական պաշտօններու գլուխ կ'անցնին եւ Սփիւտփի տղոց «հայերէն» կը արվեցնեն, մոր շիքսպիրական ստեղծելով պատա — նիկներու մօտ, որոնք արդէն դժուարու — քիւն ունին մայրենի լեզուն սորվելու: Յստակ պէտք է ըլլայ Սփիւտփի դիրքը այս կենսական հարցին նկատմամբ: Նա — հանցական ոգին, դատապարտիլ անձ — նատուութիւնը, եւ տարրական արժանա — տրութեան պակասը սկսած են անք գոր — ծիլ արտասանմանի մէջ: Հարկ է ուշա — դիր ըլլալ եւ ամէն գետնի վրայ տեղի չտալ:

Տասը օրէն այս գեղատեղի կ'առնեմ տի — կին Օկիւսթինէն... անապարելու բան չկայ...:

Այս խօսքը որոշապէս կը նշանակէր թէ Լիւսի այլեւս ոտք կ'ուղարկէր չէր Փօլ Հար — մանի բնակարանը: Լիւսի հասկցաւ այդ բանը: Սիրտը նուազապատշաճ ունած, բարեկեց ու դուրս ելաւ ճաշարանէն, ի դուր ջանալով հասնել թէ ի՞նչ ըրած էր որ իրեն հետ այդքան խիստ ու արհա — մարհոտ կը վարուէր սկզբան հեղահա — բոյր եւ բարեկամ եղող Մէրի:

Փօլ Հարման սկսաւ խօսիլ Մէրիի հետ, երբ առանձին մնացին:

— Այս աղջկը իսկապէս աղուոր չէ՞ս գտնեք:

Մէրի զգաց որ խոշոր արցունքներ կը թրջէին թարթիչները:

— Դու զեղեցի՞կ կը գտնես, մոմ'նեց Մէրի ցաւազին չեղտով մը: Ուրեմն կ'ըմ — բունս որ Լիւսիէն կ'արենայ սիրել այդ աղջկը, այնպէս չէ՞:

— Շատ լաւ կ'ըմբռնեմ որ այդ աղջը — կան նկատմամբ սէր մը ունենայ: Բայց այդ տարփանքները կարճատեւ կ'ըլլան: Յարգի մը կրակին պէս շուտ կը բռնկին ու կը մարին...: Լիւսիէնէն նոր նամակ մը ստացայ:

— Իմ վրաս կը խօսի՞:

ԿԶԱՎԻՏ ՏԸ ՄՈՒԹԵՓԷՆ (Շար.)

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Տէր Է. Տիկին Սեդրակ խաչատուրեան, Տէր Է. Տիկին Գրիգոր Ստեփանեան, Տէր Է. Տիկին Պերճ Յակոբեան, Տէր Է. Տիկին Սիմոն Գրիգորեան Է. ընտանեկան բոլոր պարագաները Հոգեհանգստեան պաշտօն կատարել կուտան իրենց մօր Է. քրոջ՝

ՆՈՒՐԱՆԻ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ
(ծննալ Գոտոյեան)

մահուան քառասունքին առթիւ, այս Կիրակի, Յունիս 10, առաւօտեան ժամը 11ին, Ալֆորվիլի Ս. Պօղոս-Պետրոս Է. կեղեցին:

Ի գիտութիւն ողբացեալին յիշատակը յարգողներուն:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Պուլի. Օտտոյի Ս. Յակոբ եկեղեցւոյ թաղականութիւնը շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուէրները. —

Գասպարեանի թաղման առթիւ՝ Մա — նասէրեան ընտանիք 10, Վարդանեան ընտանիք 10, Պր. Ասատուր Մարոյեան 20, Պ. Պաղտասար Սահակեան 10: Արգու — մանեան ընտանիք նորակաւոյց սրահի ֆոնտին 50:

Ոսկիան Է. Աննա Քարամաններու հոգեհանգիստին՝ Պր. Կարապետ Կարա — պետեան 10:

Փոքրիկն խաժակ Գուլումճեանի մկրտութեան առթիւ երէցիկն Տէտէեան 100: Արալան թոմարուկեանի թաղման առթիւ Մելիքեան ընտանիք 20, Տէր Է. Տիկ. Ա. շոտ Յակոբեան 30, Տէր Է. Տիկ. Յակոբ Յակոբեան 20,

Նազելի Կիրակոսեանի հոգեհանգիստին՝ Վարդան ընտանիք 30, Փօլ Կիրակոսեան 10, Լեւոն Ալվազեան 10:

×

Սէն-Ժերմէնի թաղական խորհուրդը շնորհակալութեամբ ստացած է Տիկին Եւգենիէ Է. հարամճեանի մահուան առթիւ փոխան ծաղիկի. —

Դպրոցին՝ Տէր-Մինասեան 20, Տէր Է. Տիկին Վ. Աւիգեան 10, Տէր Է. Տիկին Կուրտիքեան 10, Տէր Է. Տիկին Ա. Միլէ-մէճեան 10, Տէր Է. Տիկին Սիրունեան Է. զաւակները 20, Պ. Ա. Մանկասարեան 10, Երուանդ Նազարեան 50 (Է. 50 եկեղեցիին), Պառ-Թապա Աքուալիւմ 20:

Եկեղեցիին՝ այրի Տիկին Ե. Կարապետեան Է. զաւակները 20, Տէր Է. Տիկին Ռ. Ասարլըքեան 20:

ՄԱՅԻՍ 28 Ը

Կազմակերպութեամբ Իսի լէ Մուլինոյի «Ջաւարեան» կոմիտէի Կիրակի Յունիս 17, ժամը 17էն 22, Իսիի Հայ Մշակոյթի Տան մէջ՝ 45, Ռիւ տը լա Տէֆանս:

“ Ե Ա Ռ Ա Ջ ” Ի

ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ

Տիկին Մատլէն Փափազեան 50 ֆր. կը նուիրէ:

« Ե Ա Ռ Ա Ջ » ԿԸ ՆՈՒՐԻԷ

Պ. Գր. Աղամեան վեց ամսեայ «Յառաջ» կը նուիրէ Տիկին Թահմազեանի (Փարիզ):

ՓԱՐԻԶԻ

ՀԱՅ ՄՇԱԿՈՑԹԻ ՏԱՆ

Լեւոն Չուքեան 100 ֆր. կը նուիրէ Մովսէս Գուլումճեանի մահուան առթիւ փոխան ծաղիկեպսակի:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵՔԶԱՐԳՈՒԹԵԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

13, Rue du Perche — Paris (3e)
(Métro St. Sébastien Froissard)

Այս Կիրակի առաւօտ ժամը 11ին, Հայ-րապետական Հանդիսաւոր պատարագ կը մատուցանէ Հայ Կաթողիկէ Կաթողիկոս-Պատրիարքը՝

ԻԳՆԱՏԻՈՍ - ՊԵՏՐՈՍ
ԺԶ. ՊԱԹԱՆԵԱՆ

Հ. Յ. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

Պատգամաւորական 23րդ ժողովը կը դումարուի Ալֆորվիլի մէջ
Յունիս 9, 10, 11ին

Salle de la Justice de Paix
Place de la Mairie, 94 Alfortville

ԱՄԱՌԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Pension complète avec excursions quotidiennes

Բնակութիւն Ա. կարգ — ամբողջական փանսիօն, ամէնօրեայ պտոյտներ

ՅՈՒԼԻՍ 14 ԷՆ 28

ԳԻՆ ՓԱՐԻԶԷՆ ՓԱՐԻԶ

2650 ՓՐԱՆՔ

Ուղղակի քնիչք փարիզ-Երեւան-Փարիզ

ՅՈՒԼԻՍ 21ԷՆ ՕԳՈՍՏՈՍ 4

ՕԳՈՍՏՈՍ 5ԷՆ 17

16էն 35 տարեկան երիտասարդներու համար յատուկ գին՝
2100 ֆր.

Դիմել գրասենեակ՝ մանրամասնութեանց Է. պայմաններու համար:

ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

SONIA COUMRYANTZ

TRIM VOYAGE MONDOTOURS

2, Rue de Sèze — PARIS (9e)
Téléphone : 742-57-84 et 073-30-64
de 9 h. 30 à 18 h. — tous les jours

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Լիոնէն մեկնումը օդանաւով

VOTRE AGENCE DE VOYAGES ARMENIENNE

agence de voyages SEVAN

50, Cours de la Liberté — LYON — Téléph. : 60-13-66
de 10 h. à 19 h. — tous les jours

ՄԱՐՍԵՅԼԻ ՄԷՋ

JACQUES CHELELEKIAN
VOYAGES WASTEELS

87, La Canebière, Marseille 1er Téléphone : 62-03-44 et 64-09-49
de 15 h. à 19 h. — tous les jours

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՀՌԶԱԿՄԱՆ ՏԱՐԵԴԱՐՁ

ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ

ՀԱՅ ԴԱՏԻ ՕՐ

ՍԷՆ-ՇԱՄՈՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. Անտոք-Վարուժան կոմիտէութեան Է. Նոր Սերունդի Կիրակի, Յունիս 17, ժամը 16էն 24
Institution St. Marie, Foyer des Jeunes
Route du Coin (après le Stade)

Կը նախադաճէ ՍԵՂՐԱԿ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

Կը խօսի ԿԱՐՕ ՅՈՎԱԷՓԵԱՆ

Հայկական մուգալիտումը, գեղարուեստական բաժին — Խնջոյք
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ Է

×

ՄԱՅԻՍ 28 Ը

ԽՐԱԽՂԱՆՔ ԱԼՖՈՐՎԻԼԻ ՄԷՋ

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՓԱՌԱՊԱՆԾ ԺԱԿԱՏԱՄԱՐՏԻՆ
ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՌԶԱԿՄԱՆ 55ԴԻ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻԻ
Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. «Ս. Միմասեան» Ենթակոմիտէի
Մասնակցութեամբ Հ. Յ. Դ. Նոր Սերունդին Է. Ֆր. Կապույտ Խաչին
Շաբաթ, Յունիս 16, ժամը 21էն մինչեւ յոյս, Սալ տէ Ֆէք (Ալֆորվիլ)
22 Ռիւ Վոլքէռ

Կը խօսի՝ ընկ. ԱՌԼԷՆ ՓԱՓԱՋԵԱՆ

Գեղարուեստական բաժնին կը մասնակցի

Հ. Յ. Դ. Նոր Սերունդի «ՆԱՅԻՐԻ» պարալոմբը

ՄԻՆՉԵԻ ԼՈՅՍ ՊԱՐ, ԵՐԳ ԵՒ ԽԱՂԵՐ

LES ARMENIAN'S SUNSHINE

Նուագախումբին առաջնորդութեամբ

ՇԱՄՓՈՒՐՈՎ ԽՈՐՈՎԱՆԾ

ԱՌԱՏ ԿԵՐՈՒՊՈՒՄ

ՆՈՒԷՐՆԵՐ

ԻՍԻԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՑԹԻ ՏԱՆ
ԲԱՑՄԱՆ ԱՌԹԻԻ

Պ. Պ. Յովհ. Փափազեան 500, Մատո — եան Ժան 500, Տէր Է. Տիկ. Յարութիւն Տէր-Թոմայեան 500, Պ. Հրաչ Հանտալ — եան 500, Տէր Է. Տիկին Երուանդ Մա — նուկեան 1000, Պ. Վասիլ Ներոյեան 250, Տէր Է. Տիկին Տիգրան Փէշկովանեան 200, Պ. Պ. Յովհ. Տէրտէրեան 200, Մովսէս Տէ — միրճեան 200, Ջարեհ Սարգիսեան 200, Հայր Լեւոնեանի երգչախումբ 200, Տէր Է. Տիկին Աւետիս Քիրէմիտեան 200, Պ. Գուրեան 200, Տիկին Հ. Ալեքսանեան 300, Պ. Սուրբեան Աւետիս 100, Թաշճեան ընտանիք 100, Օր. Ասողիկ Առաքելեան 100, Տէր Է. Տիկին Աւետիս Սրապեան 100, Պ. Միհրան Գրտոյեան 100:

ՇԱԻԼԻ Ս. ԳՐ. ԼՈՒՍԱԽՈՐԻՉ

Ե Կ Ե Ղ Ե Ց Ի

Պատարագ այս Կիրակի Հոգեգալստեան օրը (Յունիս 10): Պատարագէն յետոյ Ս. Հաղորդութիւն կը տրուի դպրոցի աշա — կերաներուն:

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՅԻՆԵՐՈՒ

ԲԱՅԱՌԻԿ ՀԱՒԱՔՈՅԹ

ՎԻԷՆԻ ՄԷՋ

Մարտէյի Վասպ. Հայր. Միութեան Կեդր. Վարչութիւնը Տէսին-Վիէնի իր մասնաճիւղերով կը հրաւիրէ Ֆրանսայի բոլոր Վասպուրականցիները, անդամ թէ ոչ, համախմբուել Յունիս 10-11ին Հոգե — գալուստեան տօնին աթիւ, Վիէնի մէջ, հայրենակից Պ. Նաչիկ Տէրտէրեանի զո — վասուն ծառաստաններո լի ազարակին մէջ, որ սիրայօժար տրամադրուած է:

Այն հայրենակիցները որ փափաք կը յայտնեն երկու օր անցընել հայրենակ — ցական միջոցաւ մէջ, երիտասարդու — թեան հետ, պապենական սովորութիւն — ներով, կը խնդրուի արձանագործել Մի — ութեան անդամներու մօտ կամ ուղղակի յայտնել Պր. Նաչիկ Տէրտէրեանի, Շրմէն տը Շիւզլի, Վիէն:

Ծախքերու համար կարգադրութիւն՝ տեղւոյն վրայ:

Ճ Ա Շ

Նախաձեռնութեամբ Տարօն — Տուրու — բերանի Հայր. Միութեան, Կիրակի Յու — լիս 8, ժամը 15էն սկսեալ Փարիզի Հայ Մշակոյթի Տունը:
Մուտք՝ 20 ֆր.:

Imprimé sur les Presses
DU JOURNAL « HARATCH »
83, Rue d'Hauteville, Paris (10e)

LA GENERALE ELECTRIQUE

M. Gérard DERDERIAN

108, Bld. Galliéni
92130 Issy-les-Moulineaux

ALLO : 644-22-92

Ouvert lundi après-midi

●

ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԷԼԵԿՏՐՈ-ՄԵՆԱԺԷ

ԼՈՒՍԱԽՈՐՈՒԹԻՒՆ

ՆՈՒԷՐ

ԿԱՃԻՏ

Ամուսնական Նուէրի

Ցանկ

Նուէր հարսին, ցանկին 5%ի
արժէքով

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԱՂՔԱՏԱԽՆԱՄԻ ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍԸ

ԿԻՐԱԿԻ, ՅՈՒԼԻՍ 1 ԺԱՄԸ 10-22

ՄՈՆՄՈՐԱՆՄԻ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՏԱՆ

ԴԱՐԱՍՏԱՆԻՆ ՄԷՋ, 44-50 Ավրիլ Շառլ տը Կօլ, Մոնմորանսի

ՕՐՈՒԱՆ ՊԵՐՏԻՆ



ՊԱՐԼԱՄԵՆՏԻ
ԳԵՂԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՐԼԱՄԵՆՏԻ
ԳԵՂԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՐԼԱՄԵՆՏԻ

Արարելիստիկական վեճը զրաւեալ հոգեբանական պարագայում չէ միայն: Աւելի կարեւոր է Պաղեստինի արաբ գաղթականներու վերադարձը իրենց հայրենի բոյ — ներք:

Հողային հարցը կը հետաքրքրէ Եգիպտոսը, Յորդանանն ու Սուրիան, որոնց հողերէն որոշ մասեր 1967 Յունիսէն ի վեր գրաւուած կը մնան իսրայելեան բանակներուն կողմէ:

Մինչ հողերու վերադարձման խնդիրը առկա կը մնայ վեց տարիէ ի վեր, գաղթականներու վերադարձի ցաւոտ խնդիրը իր լուծումին կը սպասէ քառորդ դարէ ի վեր:

Պաղեստինի Արաբները գաղթական դարձան առաջին անգամ 1948ին, երբ Մայիս 15ին իսրայէլ անկախութիւն հռչակեց եւ ծայր տուաւ արաբելիստիկական պատերազմը, որ վերջ գտաւ Հրեաներու յաղթանակով:

Հարեւոյ հազարաւոր Արաբներ իրենց կեանքը փրկելու համար հեռացան ռազմադաշտի վերածուած իրենց հայրենիքէն եւ ապաստանեցան հարեւան արաբ եղբայրական երկիրները, — Յորդանան, Եգիպտոս, Լիբանան եւ Սուրիա:

1956 Հոկտեմբերին գաղթականներու երկրորդ ալիք մը հոսեցաւ դէպի այս վերջին երկիրները, ուր 1967ի վեցօրեան կռիւներու հետեւանքով երրորդ եւ աւելի ամեհի ալիք մը շուրջ մէկուկէս միլիոնի պիտի հասնէր իրենց հայրենի բոյներէն հեռացող Արաբներու թիւը:

Հայերս զանգուածօրէն տարագրուեւ — ցանք առաջին անգամ 1915ի Մեծ Եղեռնին, իրեւ հետեւանք ոճրագործ կառավարութեան մը ցեղասպանական դիւա — լին ծրագրին եւ տուինք մէկուկէս միլիոն զոհեր: Մենք պատերազմ չյայտարարեցինք Թուրքիոյ դէմ, որ տմարբօրէն եւ ամէնէն վայրագ միջոցներով կոտորեց անմեղ ու անպաշտպան մարդիկ, առանց տարիքի ու սեռի խտրութեան: Արմատախիլ ըրաւ մեզ մեր հայրենի բոյներէն: Չունէինք եղբայրական հարեւան երկիրներ, որ ապաստան տային մեզի: Մեր գաղթականները Տէր Ջօրի եւ արաբական անապատներու մէջ հարիւր հազարներով մեռան ջարդէ, անօթութենէ եւ հիւանդութենէ: Ո՛չ ոք օգնութեան հասաւ մեզի: Ձինադադարէն վերջ հայրենիք վերադարձողներն ալ քեմալականներու կողմէ երկրորդ անգամ եւ վերջականօրէն արմատախիլ եղան՝ դաշնակից յաղթական Պետութեանց մեղաւորութեամբ: Ու ցրուեցանք աշխարհի չորս հովերուն, իրեւ հայրենազուրկ — հայաթաքառ:

Այլեւս ո՞վ կը խօսի հայ գաղթականներուն իրենց հայրենի բոյները վերադարձին մասին:

Պաղեստինի արաբ գաղթականները ոչ միայն սիրով հիւրընկալուեցան իրենց ցեղակից եղբայրներուն կողմէ, այլեւ ՄԱԿի նպաստամատոյցը — Ունրուա — իր խնամատարութեան տակ առաւ դանդաղ: Բնակարան, ուսուիք եւ հագուստակապուստ ապահովեց անոնց: Դպրոց եւ հիւանդանոց բացաւ գաղթականներու մէջ:

ՄԱԿը 1967 Նոյ. 22ին քուէարկեց թիւ 242 բանաձեւը, որով Իսրայէլ կը հրապարակէր ամբողջովին պարպելու 1967 Յունիսին իր գրաւած արաբական հողերը: Միաժամանակ գաղթականական հար-

ՕՐՈՒԱՆ ԴԵՊԵՐԸ

ՅՐԱՆՔՈ ՎԱՐՁԱՊԵՏ
ՄԸ ՆՇԱՆԱԿԵՑ

ՍԵՐԱՅԱՆ ՄԵՆԱՏԵՐԸ

ԳՈՐԾԱԴԻՐԻՆ ԿԸ ՔԱՇՈՒԻ

Ջօր. Ֆրանքօ, որ 80 տարեկան է եւ 1937էն ի վեր պետական ղեկավարն ըլլալէ զատ է՝ նաեւ վարչապետ այս վերջին պաշտօնը յանձնեց ծովակալ Լուիս Քարրերօ Պլանքոյի, 70 տարեկան: Ծո — վակալը արդէն փոխ-վարչապետի պաշտօնը կը վարէր 1967էն ի վեր:

Դէտերու տեսակէտով կառավարական կազմի կարեւոր փոփոխութիւններ տեղի պիտի ունենան հաւանաբար յառաջիկայ երկու շաբաթներու ընթացքին: Թէեւ պաշտօնական շրջանակները լուռ են այս մասին, սակայն կը կարծուի թէ այժմու նախարարներուն, որոնց թիւը 18 է, երկու երրորդը պիտի փոխուի: Նկատելի կը տրուի թէ ծովակալը պիտի փորձէ վերջ տալ կաթողիկէ հատուածին՝ Օփուա Տէյի անդամներու տիրապետութեան դահլիճին մէջ:

Նոյն աղբիւրներու համաձայն, Արտաքին նախարարի պաշտօնը կրնայ կորսնցնել Լուիզ Պրաւօ, որ դեսպան պիտի նշանակուի Հասարակաց Ծովային մօտ, Պրիւսէլ: Լուիզ Պրաւօյի նկատմամբ դժգոհութիւններ կան յատկապէս աջ — կողմեան չընդունաւ կողմէ: Աստուղ վերջին շաբաթներուն քննադատեցին Արտաքին նախարարը, որ 1970ին ոչ զոհացուցիչ պայմաններով համաձայնագիր կնքած է Ուաշինկթընի հետ՝ Սպանիոյ քննադատողներուն՝ Լուիզ Պրաւօ կա — յաններ հաստատելու արտօնութեան փոխարէն Մ. Նահանգներէն հինգամ դէնքեր եւ տնտեսական քիչ օժանդակութիւն ըստանալու իրաւունքներ ձեռք ձգած է:

Սպանիոյ վարչապետը ամէնէն հաւա-

ցին համար ալ կը նախատեսուէր արդար լուծում մը:

Իսրայէլ վեց տարիէ ի վեր բացարձակապէս կը մերժէ հպատակիլ ՄԱԿի Ապահովութեան Որոհուողի որոշումին: Չուզեր ամբողջովին պարպել գրաւած հոգեբան: Մասնաւորապէս ապահովութեան պատրուակին տակ կ'ուզէ պահել Երուսաղէմը ամբողջութեամբ, Շարմ էլ Ել — լա, Կորանի բարձունքը եւայլն:

Գալով գաղթականներու վերադարձին, Իսրայէլի Պաշտպանութեան նախարար Մոշէ Տայեան Մայիս 25ին Ֆրանսական հեռախօսիին առջեւ, հարցազրոյցի մը ընթացքին յայտարարեց.

«Գաղթական Արաբներուն տունները գոյութիւն չունին այլեւս: Նոյնիսկ իրենց գիւղերուն տեղերը չեն կրնար գտնել: Իրենց երկիրը չկայ այլեւս: Ատրկա Պաղեստինն էր: Այսօր Իսրայէլ է: Անցեալը գոյութիւն չունի այլեւս, բայց Իսրայէլն ուր ապագայ մը պիտի տայ իրենց...»:

Երբ այս մտայնութիւնն է, որ կը տրապետէ Իսրայէլի վարիչներուն մօտ, կարելի չէ նախատեսել թէ ինչ ձեւով պիտի կարգադրուի Պաղեստինի արաբ գաղթականներուն ցաւոտ հարցը:

Պատերազմով թէ խաղաղ միջոցներով:

ՀԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

Գ. Ա. ՏԵՐ-ՎԱՐՁԱՐԵԱՆՑ
ՍՈՒՄԱԿԻ ԴԵՍՊԱՆ ՆՇԱՆԱԿՈՒՄ

— 0 —

Գ. Ա. Տէր-Վարդաբեանց Ոորհ. Միութեան դեսպան նշանակուած է Սոմալիի մէջ:

Գ. Ա. Տէր — Վարդաբեանց Հայաստանի Համայնավար կուսակցութեան Կեդր. Կոմիտէի Մարտ 22ի լիակատար նիստին «պաշտօնաւոր» էր Կեդր. Կոմիտէի երկրորդ քարտուղարի եւ Կեդր. Կոմիտէի Բիւրօյի անդամի «պարտականութիւններէն» անոր տեղը նշանակուած էր Ռուս մը՝ Պ. Անիսիմով:

տարի մէջ եղած Քառասունչորսի եւ ամէնէն հարազատ կերպով կրնայ ներկայացնել անոր տեսակէտները: Մեծ դէմք մը չէ եղած բայց «լուրջ է ինչպէս Անդրիւսի մը» կ'ըսուի իրեն համար: Գալով Ֆրանքոյի, իր ձեռքը կը պահէ տակաւին բանակի ընդհանուր հրամանատարի եւ Ֆալանգի պետի պաշտօնները:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՒՄ

ԻՍԼԱՄՍՈՒՆՈՐՈՐԵՆ ԶԻՄԱՆԱԿԵԼԻ Ատ — լանտեան Ուխտի Պաշտպանութեան նախարարներու Ժողովին, որովհետեւ անդրական ռազմախաւեր կը դառնան իս — լանտայի շուրջերուն մէջ: Իսլամական Ատ — լանտեան Ուխտի դեսպանը շեշտեց սա — կայն, թէ այս որոշումը կը վերաբերի միայն ներկայ Ժողովին եւ չի նշանակեր, թէ Իսլամական որոշած է զմասնակցիլ Ատ — լանտեան Ուխտի բոլոր Ժողովներուն:

ԴԱՇՆԱԿԱՅԱՑԻՆ ԳԵՐՄԱՆԻՆՑ մէջ խորհրդարանական որոշումով բացարձակապէս արտօնուեցաւ պոնտիֆիկատութիւնը եւ անոր հետ կապ ունեցող բոլոր գիւղերու, ֆիւմերու, առաքականութեան եւայլն, եւայլն առուծուելը: 18 տարեկանէն սկսեալ արտօնուած է միասնականութիւնը:

ՅՐԱՆՍԱՅԻ 1973ի «ընդհանուր մըր — ցում»ին արդիւնքը բաւական միջակ է եւ բազմաթիւ ճիւղերու մէջ առաջին մըր — ցանակներ չեն տրուած (Ֆրանսերէն — լանտիւն, կենդանի լեզուներ, եւայլն): Լատիններէն — Ֆրանսերէնի Ա. մրցանակը ստացած է Քլէր Վաթու, զաւակը Քաւ — պայի խմբագրին, որ նաեւ ստացած է ռուսերէնի առաջին աֆսեսիքը: Նոյնքան յաջող է Ֆրանսերէնի, անգլերէնի եւ յունարէնի մէջ:

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ տնօ — ընդնութիւնը առաջարկներ ներկայացուց պաշտօնեաներուն, գլխաւորաբար երկու պարզեւի վճարում բայց բոլոր սենտի — քաները համաձայն չեն: 25 օր է որ կը տեւէ գործադուլը: Արդէն երեք միլիոն թղթածրար կարգի կը սպասեն:

ՏԻԿԻՆ ԿՈՒՍՍԱՄԻՐՈՐ որ երդում ըրած էր երբեք Գերմանիա ոտք չկոխել, ընդունեցաւ Պրանտի հրաւերը եւ Դաշնակցային Հանրապետութիւն պիտի այցելէ: Ի վերջոյ Մոշէ Տայեան ալ գլուխ գլխի տեսակցութիւն մը ունեցաւ Պրանտի հետ: Ըստ լաւատեղեակ աղբիւրներու, Իսրայէլ կողմնակից է որ Պրանտ միջնորդի դեր խաղայ արաբ — իսրայելեան տագնապին մէջ:

ԴԱՄԱՍԿՈՍԻ ձայնասփիւռը հաղորդեց թէ սուրիական կառավարութիւնը «նոր միջոցներ» ձեռք պիտի առնէ Լիբանանի դէմ, որովհետեւ այս վերջինը լաւ վերաբերում ցոյց չի տար Սուրիացիներու եւ պաղեստինցի արձակազէններու հանդէպ Լիբանանի մէջ:

ԵՐԵՒԱՆ <=> ՓԱՐԻՉ
ՀԵՌԱՏԻՊ

ԵՐԵՒԱՆ (Արմէնփրէս, Յունիս 5)

ՅՐԱՆՍԱՅԻ ՀԻՆԼԵՍԳԻՏԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Երեւան այցելած է Ֆրանսայի հիւլէական ուժի նախարարութեան պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ ալդ. նախարարութեան տնօրէն Անտրէ Ժիւրոյի: Պատուիրակութեան այցը տեւած է երկու օր:

Որհ. Միութեան հիւլէական ուժի օգտագործման պետական կոմիտէի նախագահ՝ Անդրանիկ Պետրոսեան, որ պատուիրակութեան անդամներուն հետ Մոսկուայէն Երեւան եկած է, ընդգծած է, որ վերջին տարիներուն հետաքրքրական աշխատանքներ կատարած են հայ բնագէտները: Երեւանի մէջ կը բանի վեց միլիառ երկտրոնվոլթ տարողութեամբ արագացուցիչը:

Երեւանի ֆիզիքի հիմնարկու — թեան մէջ Ֆրանսացի գիտնականները խօսակցութիւններ ունեցած են հայ գիտնականներու հետ: Հիմնարկութեան փոխտնօրէն՝ Փրոֆ. Անդրէյ Ամատունի ներկայացուցած է հիմնարկութեան աշխատանքները:

Այցելուները ծանօթացած են Փրոֆ. Համլէթ Վարդապետեանի, որ Փարիզի մէջ աւարտելէ ետք ճարտարագէտներու բարձրագոյն վարժարանը եւ Սորպոնի համալսարանը, 1958էն ի վեր կ'աշխատի Երեւանի բնագիտութեան հիմնարկու — թեան մէջ: Փրոֆեսօրը վերջերս աւարտած է իր նոր հետազոտութիւնը, որ կարեւոր նշանակութիւն ունի բարձր երկտրոնի մասնիկներու գաղտնիքները ուսումնասիրելու համար:

Անտրէ Ժիւրօ եւ իրեն ընկերակցող Փրանսացի գիտնականները այցելած են էլմիւսին, ուր ընդունուած են Վազգէն Ա. կողմէ:

Մոսկուա մեկնելէ առաջ Ա. Ժիւրօ «Արմէնիկէս» թղթակիցին յայտարարած է, թէ իրենց վրայ մեծ տպաւորութիւն գործած են Հայաստանի մէջ կատարուող գիտական հետազոտութիւնները, մասնաւորապէս անոնցմէ մէկ քանին: «Մենք մտադիր ենք Հայաստան ճամբել բնագէտներու պատուիրակութիւն մը, որ պէտք ծանօթանան այդ հետազոտութիւններուն: Մենք սիրով կը հիւրընկալենք հայ գիտնականներ, որպէսզի անոնք ալ կարենան ուսումնասիրութիւններ կատարել Ֆրանսական արագացուցիչին — բնութեան մէջ... Մենք հիացած ենք հայ Ժողովուրդի արիւթեան եւ աշխատասիրութեան, որոն չնորհիւ ան այսօր վրտաւ կերպով դէպի յառաջդիմութիւն կը քալէ: Մենք մեծ յուզումով այցելեցինք 1915ի Եղեռնի զոհերու յուշարձանը: Արդէն վերջերս նման յուշարձան մը հաստատուեցաւ մեր մօտ, Մարտէյի մէջ»:

ՀՈԳԵԳԱԼՈՒՍԻ տօնին առթիւ, «Յաւառ» վաղը լոյս չի տեսներ (Երեւանի քիւ): Մեր յաջորդ քիւն՝ Չորեքշաբթի Յունիս 13:

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՀԱՆՁՐ՝
ՍՓԻԻՌՔԻ ՄԷՋ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔՈՆԻ ՄՐ ԽՆԴԻՐՆԵՐ

— 0 —
Ա.

Չանագան առիթներով, անցեալի մէջ խօսած ենք Սփիւռքի անկազմակերպ վիճակի մասին։ Ո՛ւր եւ ո՛վ որ կը ցանկայ՝ հրապարակ կ'իջնէ ըստ կամս արտայայտուելու, եւ, ինչ որ աւելի վնասակար է, գործելու համար։

Արտայայտուելու եւ գործելու համար դժբախտաբար զետիւն կը գտնեն, որովհետեւ ինչպէս ըսինք, անկազմակերպ վիճակ կը տիրէ․ եկեղեցական, մշակութային եւ ազգային գետիներու վրայ կը կատարուին զիրար խաչաձեւող, այս կամ այն կերպով նիւթական եւ բարոյական վնաս պատճառող գործեր։

Որքան ալ հրապարակաւ չափ, սահման կարգ ու կանոն ցանկանք պարտադրել, ցոյց տանք անխուսափելի սխալներ եւ մեր միակ ուժը կազմող կուսակցութիւնները ջանան խափանել չարիքը, անկարող կը մնան սակայն յորձանքին դէմ՝ որ իր կամայականութեամբ կը սպառնայ զանոնք խեղդել։

Կան երեսոյթներ, որոնց մէջ դժուար է վնասակարը օգտակարէն եւ կարեւորը անկարեւորէն դատել։ Կան առաջարկներ, որոնք օգտակար կրնան թուիլ, սակայն ոչ ոք նկատի կ'առնէ անոնց համար կատարուելիք տարապայման զոհողութիւնը։

Վերջեւս, ամերիկահայ մամուլի երկու լեզուներով թերթերուն մէջ ալ երեւցաւ շահեկան կերպով պատրաստուող տեղեկատուութիւն մը, որուն մասին ոչ ոք խորհրդածութիւն մը ըրաւ։ Տրուած տեղեկութիւնը բնականաբար հրապուռելէ էր, սակայն...

Նախ շատ համառօտ կերպով ներկա — յայցենք տեղեկատուութիւնը։

Կ'ըսուի թէ Պալթիմորի Ուալդըրգ Արդ Կէլըրին մտադիր է իր հաւաքման 11 հայերէն ձեռագիրները ճոխ հրատարակութեամբ մը ներկայացնել՝ որուն համար հաստատութեան տնօրէնութիւնը 43,298 տոլարի ծախք մը նախատեսեր է։ Այս գումարին կէսը (21,649) տոլար «Նեշընըլ Էնտոլմիմը ֆոր տը Արդս» (Ուաշինկ — թըն) հիմնարկութեան կողմէ տրամա — դրուեր է Ուալդըրգ Արդ Կէլըրին, որուն տնօրէնութիւնը դիմեր է ու կը դիմէ «Հայ Հասարակութեան»՝ մնացեալ 21,649 տոլարը հաւաքելու համար։

Կէլըրին տնօրէնութիւնը կ'աւելցնէ որ արդէն հազար տոլար ստացած է «Նեշընըլ Ասասիէշըն ֆոր Արմիներն Ազատիզ Էնտ Ռիպըրէջ»էն, 3000՝ Գալուստ Կիւլ — պէնկեան Հիմնարկութենէն եւ կ'երեւի 2360 տոլար ալ զանազաններէ։ Կէլըրին

տնօրէնութիւնը նոյն ատեն կը շեշտէ, որ «Հայ Հասարակութենէն» կ'ակնկալէ մնացեալ 15,289 տոլարը, իրենց ձեռնարկը իրագործելու համար։

Հայկական ձեռագրական հարստութիւնը Հայաստանի թէ արտասահմանի մէջ կը հաշուուի առ նուազն 22.000, որոնցմէ հազարը գոնէ՝ արուեստի եւ մանաւանդ հայ արուեստի ամենակարեւոր գործեր են, այնքա՛ն կարեւոր՝ որքան Ուալդըրգ Արդ Կէլըրիի յիշեալ 11 ձեռագիրները։

Արդ, թուարանական պարզ հաշիւ մը պիտի բաւէ, ցոյց տալու համար որ 11 ձեռագրի համար եթէ Հայութիւնը ուղղակի 21.649 տոլար ծախսէ, հազար ձեռագրի համար պէտք է ծախսէ 2.150.000 տոլարի գումար մը։ Նման գումարի մը ծախսուիլը այդ նպատակին համար, մեր իրականութեան մէջ ընական է որ անկարելի է։

«Շուկայի» հաշիւները մէկդի թողունք եւ տեսնենք թէ Ուալդըրգ Կէլըրիի հաւաքման 11 ձեռագիրները ունի՞ն իսկապէս բացառիկ արժէք մը՝ որ պարտադրէ անոնց համար 43,000 տոլարի տպագրական եւ յարակից ծախքեր։

Հաւաքման մաս կազմող «Թարգման — չաց» կոչուած Աւետարանը (որ նախապէս Անտոնեան վանական հաւաքման մաս կը կազմէր եւ որ կը վերագրուի 966 փրկչական թուականին — ինչ որ շատ խնդրական է —) կը կարօտի լուրջ քննութեան, իր մանրանկարներով։ 1262 թուականի Աւետարանն ալ, Թորոս Ռոսլինէ մանրանկարուած, Եգիպտոսի չէ՝ քանի որ նոյն մանրանկարիչն նոյնքան ընտիրներ կը գտնուին Երուսաղէմի մեր վանքի հաւաքման մէջ․ ո՛չ թէ հատ մը՝ այլ 5 հատ։

1455էն Խիզան գրուած Աւետարանը, նոյնպէս Եգիպտոսի չէ․ կարելի է նկատել հաւաքման միւս ձեռագիրներու կարգին։ Խիզան գրուած արուեստի կարեւոր Աւետարաններու խոշոր թիւ մը կայ թէ՛ Երեւանի մատենադարանը եւ թէ՛ այլուր։

Արդ, Սփիւռքի Հայութեան համար ներկայ պայմաններու մէջ, երբ քաղաքական ստիպողական եւ կարեւորագոյն կարիքներ կան, դժուար է ակնկալել 15-20.000 տոլարի խոշոր զոհողութիւն մը ընել հրատարակութեան մը համար, որ ԿԵՆՍԱԿԱՆ կամ ԱՆՀՐԱՊԵՇՏ ոչինչ պիտի աւելցնէ Սփիւռքի Հայութեան մը շահույթի ըրոնման ուղղութեամբ։

Միայն չըմբռնենք։ Մենք չենք ըսեր որ նման հրատարակութիւններու կարիք չկայ։ Մեր առարկութիւնը պարզապէս այն է որ աշխարհի կարեւոր գումարներ հայ հասարակութեան արդարեւ նպատակներու համար նման դրամական միջոցներ տրամադրելը անխոհեմ չտայլութիւն է։ Ուալդըրգ Կէլըրիի ԾԱԽՔՈՎ ԻՍԿ. ան ի վիճակի է ատիկա ընելու, առանց հայ հասարակութեան ազգուն միջոցները մտնելու։

Եթէ կան մեծահարուստ Հայեր, որոնք

ԿԱՐՔԵԴՈՆ

— 0 —

Փիւնիկեցիներու կողմէ հիմնուած գաղթապալար մը, հաւանաբար Ք. Ա. 814ին, այժմու Թունուզի մօտերը։ Աւանդութեան համաձայն Կարքեդոն հիմնուած է Տիւրոսի թագուհի Եղիսայի կողմէ (Վիրգիլիոս զայն կոչեց Դիդէ), երբ ան փախուստ տալով իր եղբոր Պիլմալիոնի հալածանքներէն՝ հաստատուեցաւ հոն։ Փիւնիկեցիք, որ երկրորդ հազարամեա — կի կէսին կը զբաղէին մետաղներու առեւտուրով, 12րդ դարուն իսկ Ք. Ա. յայտնաբերեցին Արեւմուտքի ծովային

կ'ուզեն անխնայ գործածել իրենց հարեւորութիւնը, 40-45.000 տոլար տրամադրելու եւ հրատարակելու համար 11 հայերէն ձեռագիրներ բնական է որ մենք որեւէ իրաւունք չզգանք նոյնիսկ ան — ցողակի առարկութիւն մը ընելու։ Սակայն հայ հասարակութեան նման դու — մարներ ակնկալել՝ մենք խոհեմութիւն չենք սեպեր, երբ մանաւանդ մեր վանական հաստատութիւնները մեծ պարտքերու տակ են իրենց տպարաններուն համար եւ ամէնէն աւելի օգտաշատ հայ կուսակցական օրաթերթեր եւ պարբերականներ «ձեռքէ բերան» կ'ապրին, կարեւոր զոհողութիւններով։


Աւելցնենք որ ցուցամուրութիւնը ապարդիւն քան մը պիտի ըլլայ նման հրատարակութիւններով՝ որովհետեւ խնդրոյ առարկայ ձեռագիրները ներկայացուածին պէս տիրակալ կարիւրութիւն չունին հայ մանրանկարչութեան իսկապէս զարմանալի պիտի ըլլայ, եթէ հայ հասարակութիւնը 15-20.000 տոլար տրամադրէ Ուալդըրգ Կէլըրիի ցուցակին հրատարակութեան համար, երբ անդին Վենետիկի Միսիթարեաններու մանրանկարչական ամէնէն ընտիր, մեծածաւալ հրատարակութիւնը (որուն բաժանորդագրութիւնը 1964ին սկսաւ) ... դեռ այսօր, հրատարակութենէն տասը երկա՛ր տարիներ վերջ, մեծ թիւով անվաճառ կը մնայ վանքի մթերանոցին մէջ, հակառակ իր շատ աժան, բուն արժէքէն շատ պակաս՝ 80 տոլարի գինին։

Այդ հատորին մէջ ոչ թէ կասկածելի թուականով «Թարգմանչաց» Աւետարան մը կամ Ռոսլինէ մանրանկարուած Աւետարան մը ներկայացուած է, այլ ՇԱՏԱՆԱՍԱՐՄՈՐԷՆ, 84 մեծադիր էջերու վրայ, ամենակատարեալ տպագրութեամբ գունազդեղ մանրանկարներ ներկայացուած են 12 վանքապատկան ձեռագիրներու՝ անհամեմատ կերպով աւելի արժէքաւոր, քան որեւէ ձեռագիր, որ Ուալդըրգ Կէլըրիէն կ'ուզուի հրատարակել։

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

(Մնացեալը յաջորդով)

Համարան եւ, յաջորդաբար, հիմնեցին զանազան գաղութներ։ Բոլոր գաղութներէն միայն Կարքեդոնի վիճակուեցաւ ունենալ հրաշալի ճակատագիր մը, ինչ որ որոշ չափով արդիւնք էր իր աշխարհագրական կարեւոր դիրքին։ Քաղաքը հիմնուած էր թերակղզիի մը ծայրին։ Ծովալիճեր չըջանը կ'անջատէին ցամաքամասէն։ Իսկ թերակղզին կը հսկէր ծովային այն երկու ճամբաներուն, որոնք կ'երկարէին Միջերկրականի երկու ուղղութիւններով։ Քաղաքը ունէր երկու նաւահանգիստ՝ մէկը առեւտրական, չորս հեկտար տարածութեամբ, իսկ միւսը գինուորական։ Հին պատմագիրներու հաւատարմութիւնով աւելի քան 200 նաւեր կրնային պատսպարուիլ նաւահանգիստը։ Քաղաքը կը զարգանայ զանազ կերպով։ Մայր երկրին հետ անոր կապը կը խզուի աստիճանաբար, մասնաւորաբար երբ Փիւնիկ դժուարութիւններ կ'ունենայ Ասորեստանի հետ Տրդ դարու կէսերուն, Ք. Ա.։ 7րդ դարէն սկսեալ Կարքեդոն Արեւմուտքի մէջ կը յաջորի իրագործել այն, զոր Տիւրոս չյաջողեցաւ իրականացնել՝ իր գերիշխանութեան տակ առնել փիւնիկեան բոլոր գաղութները։ Անիկա միեւնոյն ժամանակ կը յաջողի նաւաճել ցամաքամասը եւ ընդլայնել փիւնիկեան հողերը Սպանիոյ եւ Միջերկրականի ափերէնէն կղզիներու մէջ։ Յըր եւ 4րդ դարերուն (Ք. Ա.), շնորհիւ իր զօրաւոր նաւատորմին եւ առաւելաբար օտար վարձկաններէ կազմուած բանակին, իսկական կայսրութիւն մը կը հիմնէ։ Կարքեդոն՝ իր ծաւալումի ընթացքին կը բախի Յոյներուն, որոնք 7րդ դարէն սկսեալ հաստատուած էին Միջերկրականի հիւսիսային եւ արեւմտեան ափերը։ Յետագային համաձայնագիր մը կը կնքէ Մարսէլլի հետ՝ ճշդելով Սպանիոյ մէջ երկու երկիրներուն ունեցած գերիշխանութեան սահմանները։ Այսուհանդերձ, Կարքեդոն չի յաջողի նոյնիմաստ համաձայնագիրներ կնքել Սիրակուսա, Թարսոսի եւ Մեծ Յունաստանի կարեւոր քաղաքներու հետ։ Կարքեդոնացիք, որ 6րդ դարու կէսէն ի վեր տէր դարձած էին Քորսիքայի եւ Սարոսենիայի, 480ի առաջինները կը յաջողին ոտք դնել Սիւրիլիս եւ ամբողջ կղզիին արեւմուտքը։ Երկու դարու պատերազմներէ ետք կը թուի թէ ան տարած էր վերջնական յաղթանակը, երբ Հռոմ կը միջամտէ։ Մինչեւ այն առաջին Հռոմ, որ քաղաքական հեռանկարներէ զուրկ զիւրաքաղաք մըն էր, կը շահազդուէր միայն կեդրոնական Իտալիայով։ Սակայն արագ ծաւալում մը մինչեւ Իտալիոյ հարաւը, Յրդ դարու սկիզբները, պատճառ կը դառնայ, որ Մեծ Յունաստան ենթարկուի Հռոմի հոգաւորականութեան։ Այսպէս է, որ այս վերջիններ կը փոխարինէ Յունաստանը՝ Կարքեդոնի դէմ մղուած պայքարին մէջ։ 264ին փիւնիկեան երեք պատերազմներէն առաջինը կը սկսի, որ 120 տարի շարունակ դէմ յանդիման պիտի դնէր տարբեր



ԿՑԱԿՆ ԷՐ

ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ

Գրեց՝ ԱՐՇԱԻՐ ՇԻՐԱԿԵԱՆ

Ա. ՄԱՍ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Բնականաբար բոլորին խօսակցութիւնը կը դառնար պատերազմական դրուագներու շուրջ եւ կը փառաբանէին քաղաքործութիւնները այս կամ այն թուրք գունդին կամ այս ու այն «չափուլ»ին, «Կեաւուր Մոսգովի» բանակներուն դէմ Կովկասի ճակատին վրայ կամ այն միւս «Կեաւուր»ներուն, Անգլիացիներուն, Աւստրալիացիներուն, Ֆրանսացիներուն դէմ, Չանազաւէի մէջ ու հարաւի ճակատին վրայ։

Անատոլոցիներէն ոմանք երբեմն ու

րիշ բաներ կը պատմէին, ինչ որ մեծապէս կը հետաքրքրէր զիս․ ականջ կը կտրէի․ մարդիկը, կը պատմէին դրուագներ Հայերու տարագրութենէն․ թէ ինչպէս, ոստիկաններն ու ժամադրմաներ, զանոնք հաւաքած ու խումբ խումբ քրչած էին դէպի անծանօթ վայրեր, այրերը կիներէն ու երախաներէն զատելով․ եւ թէ ինչպէս իրենք ալ առիթներէն օգտուելով, տիրացած էին այդ Կեաւուրներու տունին տեղին, ինչքերուն եւ հարստութիւնին։ Ասոնք կը պատմէին այնպիսի հաճոյքով եւ այնքան բնական բան մը ըրածի պէս, որ կարծես Իթթիհատի կառավարութիւնը երկրին եւ ազգային մեծապէս օգտակար ձեռնարկ մը գլուխ հանած էր եւ իրենք ալ անկէ օգտուած էին, օրինաւոր, մարդկային եւ արդար աշխատանքի եւ քրտինքի գինով։ Ունկնդիրները ոչ միայն հաճոյքով մտիկ կ'ընէին, այլեւ նախանձելով անոնց երանի կուտային եւ բախտաւոր կը նկատէին։ Ոչ միայն պարծանքով կը պատմէին իրենց ոճրագործութիւնները, այլեւ ունկնդիրներուն կը ցուցնէին կեաւուր Հայերէն յափշտակած ոսկեայ ժամացոյց մը, ոսկեայ շղթաներ, օղբ կամ ապարանջաններ, մանեակներ, կամ նոյն իսկ մետաքսեայ հագուստներ․ մեծ մասը ծախելու բերած էին, անոնց փոխարժէք դրամը մտնելու համար գինեւորներու եւ հանրատուներու մէջ։ «Կեաւուրն մալը հեղալ տըր»

կ'ըսէին միշտ չուրջիները։ Քաղաքայնակ այդ ոստիկաններն ու պաշտօնեաները, որոնք, ամսականէ աւելի, բաւ կ'ապրէին կառավարութեամբ, զեղծարարութեամբ կամ «անաֆօրէն» էին, հազար երանի կուտային այդ անատոլոցիներուն եւ շատ ու շատ կը ցաւէին որ ատանկ առիթներ չեն ունեցած։ Մէկ երկու անգամ Հայերու կոտորածի պատմութիւններ եւս պատմեցին, ամենայն բնականութեամբ, կարծես ոչխար մորթելու պարագայ մը պատմած ըլլային։ Լսողները նոյն հաճոյքը կ'ունենային եւ անոնցմէ մին օր մը սա անմարդկային խօսքը իրաւորէր «Քէօքէրի թիւքէնմէզ քի...» Արմատին չի չորնար որ...

Այս պատմութիւնները, գիշերը տուն հասնելէ վերջ, երբ վտառ ըլլայինք որ խուզարկութիւն մը պիտի չըլլայ, կը պատմէին մեր փախստական ընկերներուն եւ անոնց կարգին՝ առդէին անդիւն լուրեր։ Ամէն անգամ որ թաղստոցէն դուրս գային, կրկին տան ամէն կողմը աչքէ կ'անցնէի, յետոյ քննալու կ'երթայի։

Այդ սրճարաններէն մէկուն մէջն է որ հանդիպեցայ Էշրէֆին հետ․ այն դաղտնի ոստիկանին որ մեր տունը յաճախ խուզարկած էր եւ որ յետագային, Վահէ Իհսանի եւ Սայիտ Հալիմ Փաշայի դէպքերէն վերջ, զիս անձնապէս ճանչցող միակ ոստիկանն էր ու յամառօրէն զիս պիտի հետապնդէր, առանց յաջողու

թեան։ Էշրէֆ մեր տան խուզարկութիւններուն մասնակցած էր, մէկ քանի անգամ զիս հարցուփորձած էր եւ ես իրեն հաւատացուցած էի թէ անմեղ եմ, թէ բնաւ լուր չունիմ բաներէ եւ նոյնիսկ խոստացած էի իրեն լուր տալ, եթէ մեր տունը փախստականները գտնէ։ Հիմա որ պաշտօնեայ էի, տեսակ մը պետական պաշտօնեայ, Էշրէֆ բոլորովին կը հաւատար ըսածներուն։ Մեր գործին կուգար իրեն հետ անուշ երթալ եւ նոյնիսկ կաշառել, ոչ թէ դրամով, ինչ որ կասկածներու պիտի տանէր խորամանկ կամ մանաւանդ նենգամիտ ոստիկանը, այլ «Իքքամ»ով մը։ Գունատ միջնահասակ մէկն էր Էշրէֆ․ Մտադրաղ վիճակ մը ունէր միշտ, անհանգարտ, բայց ոչ դաժան, ինչպէս էին Ալի Րիզան կամ անոր մէկ երկու ընկերները, որոնց անունները չեմ յիշեր հիմա։ Մէկ քանի անգամ սուրճ եւ թէյ հրամացուցի․ ան ալ «նաֆօրճի» կ'ըսէր իմ նենգամիտ մը ալ բաւական համոզելի վերջ գինքը տալի Օտէոն թատրոնը, ուր սակայն հաղիւ կէս ժամ կեցաւ եւ առաւ-քալեց, ըսելով թէ շատ զբաղած է․ յայտնի է որ գիշերներն ալ քուն չուէր Էշրէֆ, փախստականները հետապնդելու հողը կարծես իրեն միայն տըրուած ըլլար, ինչպէս կ'ըսէին սրճարանի իր ընկերները կամ գործակիցները։

(34 — Շար.)

“ Յ Ա Ռ Ա Ջ ”

ԲԱՐԳՍԻԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ

Կապոյտ ինչի Ալֆորվիլի մասնաճիւղը «Յառաջ»-ի նոր տպարանին բարեգարգու-մին համար կը նուիրէ 200 ֆրանք:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Պուլվ. Օտտոյի Ս. Յակոբ եկեղեցւոյ Թաղականութիւնը շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուէրները:—

Դանիէլ Պապիկեանի Թաղման առթիւ՝ Պուլվ. Օտտոյի Կապ. ինչ 10, Տէր եւ Տիկին Հրանդ Պապիկեան 100, Տէր եւ Տիկին Ռուբէն Փիլիկեան 100, Տէր եւ Տիկին Մարսէլ Թէճիրեան 100, Թէճիրեան ընտանիք 50, Պ. Թաղար Արամեան 10, Տէր եւ Տիկին Վարդան Քէօսէեան 50, Տէր եւ Տիկին Ղազարոս Կիւլեան 40, Յարութիւն Գառարեանի հոգեհանգիստին՝ Պ. Վարդգէս Վարդանեան 10, Օր. Անահիտ Արզումանեան 10, Ղազար Արարահամեանի Թաղման առթիւ՝ Պր. Հրանդ Սարաֆեան 20, Պ. Արահամեան 50, Գալուստ եւ Ֆիլոյ Սաղբեանի հոգեհանգիստին՝ Օր. Մարի Սաղբեան 20, Թումանեաններու հոգեհանգիստին՝ Տէր եւ Տիկին Թումանեան 50, Նորտիկեաններու հոգեհանգիստին՝ ալրի Տիկին Նորտիկեան 30, Տէր եւ Տիկին Եղուարդ Տէրտէրեաններու զաւկին ամուսնութեան առթիւ 100, Յարութիւն եւ Մելիք-Դաւիթեաններու մահուան յիշատակին՝ Տիկին Դաւիթեան (ծնեալ Արմաղանեան) 100, եկեղեցւոյ բարեգարգման՝ Ս. Զատիկի առթիւ Օր. Սիրուն Ճէլալեան 100, Պոզոսեաններու հոգեհանգիստին՝ Տումու Պոզոսեան 10, Պոզոսեան ընտանիք 50, Կիրակոսեաններու հոգեհանգիստին՝ ալրի Տիկին Մարգրիտ Կարինեան 20, Դանիէլ Պապիկեանի հոգեհանգիստին՝ Կիւլեան ընտանիք 10 ֆր.:

×

Ալֆորվիլի Հայ Մշակոյթի Տան վարչութիւնը շնորհակալութեամբ ստացած է Տիկին Մարի Պատուականէն 30 ֆր.:

ԾՆՈՒՆԴ

ԿՐԸՆՈՊԼԷՆ՝ Աստղիկ եւ Անահիտ Անտոնեան ուրախութեամբ կը ծանուցանեն իրենց եղբոր՝ ՄԱՆՈՒԿ – ԷՄՄԱՆՈՒԷԼի ծնունդը:

Այս ուրախ առթիւ, իր մեծ-մայրիկը՝ Տիկին Մարվինէ Անտոնեան 100 ֆր. կը նուիրէ «Յառաջ»-ի բարեգարգման:

ՄԱՅԻՍ 28 Ը

Կազմակերպութեամբ Իսի լէ Մուլինոյի «Զաւարեան» կոմիտէի Կիրակի Յունիս 17, ժամը 17էն 22, Իսիի Հայ Մշակոյթի Տան մէջ՝ 45, Ռիւ տը լա Տէֆանս:

Հ. Յ. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ

Պատգամաւորական 23րդ ժողովը կը դամարուի Ալֆորվիլի մէջ Յունիս 9, 10, 11ին

Salle de la Justice de Paix
Place de la Mairie, 94 Alfortville

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԲԱՑՈՒԱԾ ԵՆ

Ծնողներ, որոնք կ'ուզեն իրենց զաւակներուն տարիքին համապատասխանող ֆրանսական դարգացման հետ, տալ նաեւ հայեցի դաստիարակութիւն, կրնան անվարան, զանոնք յանձնել Հայ վարժարանի խնամքներուն:

Դիմել ամէն օր դպրոցի Տեսչուհին Հասցէն — 1, Bld. du Nord — Le Raincy
Tél. : 927-01-72

Հ. Յ. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ԲԱՆԱԿՈՒՄ

ՕԳՈՍՏՈՍ ՄԷԿԵՆ 30

CAMP DU NOR SEROUND, COLONIE SAINT ANDRE, ROUTE DE BESSAN 34 BEZIERS (HERAULT) — Téléphone : 76-01-76

Հ. Յ. Դ. Նոր Սերունդի Կեդրոնական վարչութիւնը իր տարեկան բանակումը կը կազմակերպէ այս տարի Պէզիէ

ՊԱՅՄԱՆՆԵՐ — Մէկ ամիս՝ 600 ֆր., 14 օրէն աւելի, օրական 26 ֆր., 7 օրէն 14 օր՝ 29 ֆր. 7էն պակաս՝ 32 ֆր.

Արձանագրութիւնները՝ Չորեքշաբթի եւ Ուրբաթ իրիկունները ժամը 18էն 20 եւ Շաբաթ օրերը՝ 16էն 20: Ծամբորդութիւնը՝ օթըքառու փարիզէն:

ՀԱՅ ՄՇԱԿՈՑԹԻ ՏՈՒՆ

Փարիզի Հայ Մշակոյթի Տան Յանձնախումբը կը յայտարարէ Փարիզի Հայութեան որ Տան ներքնայարկի Ս. Թէհլիւրեան սրահը, սիրով կը տրամադրուի հարսանիքներու, նշանուէրներու եւ այլ հաւաքոյթներու առթիւ:

Կարելի է անձամբ դիմել կամ հեռախօսել տեղեկանալու համար պայմաններուն:

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

ԿՈՒՋՈՒԻ

Fabricant prêt-à-porter féminin recherche entrepreneurs.

Se présenter ou téléphoner :
Ste JAROPA
25, Rue du Terrage, Paris 10e)
Tél. : 607-70-54

ԱՐՁԱԿՈՒՐԴ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Առաջին ճամբորդութիւն ՅՈՒԼԻՍ 10էն 26, մէկ դիւեր Մոսկուայի մէջ: 26 Յունիսի առաւօտեան մեկնում՝ Երեւանէն, Մոսկուա-Փարիզ, նոյն օրուան ընթացքին Երկու հոգինոց առաջին կարգի սենեակ, լոգարանով, «Արմենիա»-ի կամ «Անի»-ի մէջ, երեք ճաշերով: Բազմաթիւ շրջապատյաներ: Գին՝ 2650 ֆրանք:

Երկրորդ եւ երրորդ ճամբորդութիւններ՝ ՕԳՈՍՏՈՍԻՆ եւ ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ Արձանագրութեանց համար դիմել

TRANSTOURS, 22 rue du 4 Septembre— Paris (2e) — Tél. : 742-77-40
ուր կարելի է անձամբ ներկայանալ Կ. Ունեանի, ամէն Չորեքշաբթի եւ Շաբաթ կէսօրէ ետք ժամը 15էն 18:

MARSEILLE — Z. Aliksonian, 11 Rue du Bassin, St. Julien,
Tél. : 51-74-90 — 66-38-92

ՎԱԼԱՆՍԻ մէջ՝ Ն. Գապարեանի — ԼԻՈՆ՝ Պալեանի — ՏէՍԻՆ՝ Կ. Գաբաշեանի — ԱԼՖՈՐՎԻԼ՝ Յ. Պոյանեանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՀՌԶԱԿՄԱՆ ՏԱՐԵԴԱՐՁ

ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ

ՀԱՅ ԴԱՏԻ ՕՐ

ՍԷՆ - ՇԱՄՈՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. Անտոք-Վարուժան կոմիտէի ղեկավար Կիրակի, Յունիս 17, ժամը 16էն 24
Institution St. Marie, Foyer des Jeunes
Route du Coin (après le Stade)

Կը նախադաշտ ՍԵՐՈՒՆԿ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

Կը խօսի ԿԱՐՕ ՅՈՎՍԷփԵԱՆ

Հայկական մուսախումբ, գեղարուեստական բաժին — խնջոյք ՄՈՒՏԳԸ ԱԶԱՏ Է

×

ՄԱՅԻՍ 28 Ը

ԽՐԱԽՆԱՆԻ ԱԼՖՈՐՎԻԼԻ ՄԷՋ

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՓԱՌԱՊԱՆՇ ՀԱԿԱՏԱՄԱՐՏԻՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՌԶԱԿՄԱՆ 55ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՆ Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. «Ս. Միմասեան» եմքակոմիտէի Մասնակցութեամբ Հ. Յ. Դ. Նոր Սերունդին եւ Ֆր. Կապոյտ ինչին Շաբաթ, Յունիս 16, ժամը 21էն մինչեւ յայտ, Սալ տէ ֆէր (Ալֆորվիլ) 22 Ռիւ վոլթէն

Կը խօսի՝ ընկ. ԱՌԼԷՆ ՓԱՓԱՋԵԱՆ

Գեղարուեստական բաժնին կը մասնակցի

Հ. Յ. Դ. Նոր Սերունդի «ՆԱՅԻՐԻ» պարախումբը

ՄԻՆՁԵՒ ԼՈՅՍ ՊԱՐ, ԵՐԳ ԵՒ ԽԱՂԵՐ

LES ARMENIAN'S SUNSHINE

Նուազարումբին առաջնորդութեամբ

ՇԱՄՓՈՒՐՈՎ ԽՈՐՈՎԱԾ

ԱՌԱՏ ԿԵՐՈՒԹՈՒՄ

Հ. Յ. Դ.

ՇԱԽԻԼ — Հ. Յ. Դ. «Արդուրեան» խումբի ժողովը Շաբաթ (Յունիս 16) երեկոյ ժամը 21ին, սովորական հաւաքատեղին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ

ՅՐԱՆՈԱԿԱՆ ՀՅՈՒՍԵՒԼԷՆ

Կիրակի (Յունիս 17) առաւօտ ժամը 9-30ին հեռախօսի Ս. Կայանէն հայկ. յայտադիր:

Ամենայն Հայոց Կաթողիկոս — Հ. Ռոն-մօ եւ Փրոֆ. Իւթիւճեան:

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

Նախաձեռնութեամբ Կապ. ինչի Սերանի մասնաճիւղին

Կիրակի Յունիս 24, ժամը 11էն սկսեալ

10, Rue Lucien Sportice, SEVRAN

Օթոպիւս 147 Ա. Էլլիւղ տը Փանթէնէն

Կամ Կառախումբ Կառ տիւ Նոռէն, Իջնել Լիլլիւր-Սեւրան

Պիւֆէ — Շամփուրով խորոված — Խալիք — մրցումներ — Անակակալներ

ԿՈՒՋՈՒԻ

Հաստատութիւն մը կը փնտռէ տնային մաքրութեան եւ ծառայութեանց համար ալր կամ կին պաշտօնեաներ: Ներկայանալ «Յառաջ»-ի:

ՃԱՇ

Նախաձեռնութեամբ Տարօն — Տուրու-բերանի Հայր. Միութեան, Կիրակի Յունիս 8, ժամը 15էն սկսեալ Փարիզի Հայ Մշակոյթի Տունը: Մուտք՝ 20 ֆր.:

ԿԸ ՓՆՏՈՒԻ

Տիկին Հայկանոյշ Գայթանճեան (ծնեալ Կէվրէկեան) կը փնտռէ իր մօրեղբոր տղան՝ Բենօն Ինճէեան: Հօրը անունը՝ Սամուէլ Ինճէեան, մօրը՝ Կիւլիւնար, որոնց միակ զաւակն է: Ծնած է Կեսարիոյ շրջանը — Եոզկատ — իրմէ կամ զինքը ճանչցողներէն կը խնդրուի գրել:

Madame Kizilian M.

3, Allée Pontoise

93, Livry-Gargan, France

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԱՂՔԱՏԱԽՆԱՄԻ

ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

ԿԻՐԱԿԻ, ՅՈՒԼԻՍ 1 ԺԱՄԸ 10-22

ՄՈՆՄՈՐԱՆՍԻԻ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՏԱՆ

ԴԱՐԱՍՏԱՆԻՆ ՄԷՋ, 44-50 Ավրիւ Շալո տը Կոլ, Մանմարմանի

ՕՐՈՒԱՆ ԴԵՊԵՐԵ

2ԻՆ ԱՐՏԱՔԻՆ ՆԱԽԱՐԱՐԵ ՓԱՐԻԶԻ ՄԵՋ

— 0 —

Կիրակի գիշեր Լոնտոնի փարիզ կը
ժամանէր Զինաստանի Արտաքին նախարարը՝ Զին ֆենկ-Ֆէյ, ընկերակցութեամբ
իր կնոջ եւ Արտաքին փոխ-նախարար Տի-
կին Ուանկ Հայ-Եունկի:

Զին Արտաքին նախարարը Հոգեզա-
լուտի տոնէն օգտուելով Վերսալ ալ-
յեկեց Երկուշաբթի օր, պարզ դրօսա-
լը լինելի մը նման: Ի դէպ, պալատի սեն-
եակներէն մէկուն մէջ նախարարը ակա-
մայ «բանտարկուեցաւ», երբ սենեակի
բանալին կորսուեցաւ:

Զին ֆենկ-Ֆէյ Երեքշաբթի օր քաղա-
քական խօսակցութիւններ կ'ունենար Նա-
խարարապետին հետ: խօսակցութեանը
ընթացքը նախ եւ առաջ առեւտրական է,
քանի որ ֆենկն եւ Փարիզ կը փափաքին
գարկ տալ իրենց առեւտրական կապին:
Ներկայիս Ֆրանսա հինգերորդ տեղը կը
զբաւէ Զինաստանի ապրանք հայթայթող
երկրներու շարքին: Արդարեւ, իրմէ
առաջ կուգան յաջորդական շարքով ձա-
փոն, Բանաստ, Դաշնակցային Գերմա-
նիա եւ Անգլիա:

Մշակութային կապը հաստատուած է
1972էն ի վեր, երբ Մ. Եունան ֆենկն
այցելեց: Այսպէս՝ ուսանողներու եւ դաս-
տիարակներու փոխանակում, համադր-
ծակցութիւն բժշկական, թեքնիք մար-
զերու մէջ, ինչպէս նաեւ արուեստի:

Քաղաքական գետնի վրայ ֆենկն մօ-
տէն կը շահագործուի Եւրոպայի ապա-
լայով, եւ այս կապակցութեամբ տե-
սակէտներու նմանութիւն կայ ֆենկի
եւ Փարիզի միջեւ: Արդարեւ, ֆենկն կը
ձգտի վերջ տալ գեր-Պետութիւններու
(իսկ՝ Մ. Նահանգներ եւ Պորտ. Միութեան)
գերազանցութեան աշխարհի մէջ:
Յատկապէս մտահոգ է Մոսկուայի նկատ-
մամբ վախճալով, որ Պորտ. Միութեան
Արեւմուտքի մէջ իր գերքը կայուն ձեւով
հաստատուելէ ետք, իր ուժը կը կեդրոնա-
ցնէ Զինաստանի սահմաններուն վրայ:

Զին կառավարութեան փափաքն է, որ
Եւրոպա զօրաւոր ուժ մը կազմէ եւ վրձ-
նական դեր մը ստանձնէ միջազգային
բնիկ վրայ, իբրեւ անկախ հաւաքակա-
նութիւն:

Զու ինչ-ձայ արդէն այս իմաստով ար-
տայայտուած էր Ֆրանսայի նախկին Նա-
խարարապետին 1972ին, երբ այս վերջինը
ֆենկն կը գտնուէր:

Փենկն մէջ չին վարչապետը երկրորդ
անգամ ըլլալով խօսակցութիւններ ունե-
ցաւ Շապան Տեքմասի հետ: Երկրորդ
խօսակցութիւնը տեւեց երեք ժամ: խօ-
սակցութեան նիւթ դարձան Մայրաքաղաք
Արեւելքի հարցը՝ Զինաստանի յարաբե-
րութիւնները Պորտ. Միութեան, ձափոնի
եւ Մ. Նահանգներու հետ, ինչպէս նաեւ
Եւրոպան:

Աւելցնենք, որ Նախագահ Փոնտիտու
ֆենկն պիտի այցելէ երեք ամիսէն:

ՔԱՆԻ ՄԵ ՏՈՂՈՎ

ՊրԱՆՏԻ Իսրայէլ այցելութիւնը ար-
կածով մը վերջ գտաւ, որ կրնար եղե-
րական ըլլալ: Իսրայէլեան թռան մը,
ուր տեղ գտած էր Պրանտ, Մասնատայի
ամբողջ վրայ վայրէջք կատարելէ ետք,
զօրաւոր փոթորիկի մը հետեւանքով իր

հաւասարակշռութիւնը կորսնցուց եւ
Դաշնակցային Գերմանիոյ վարչապետը
գետնին ինկաւ: Թեւ Սպիլի գերման դես-
պանը, որ վարչապետին կ'ընկերանար,
թեթեւ մը վերադարձուցաւ: Պրանտ ամ-
բողջ այցելելէ ետք Պրանտ վերադարձաւ:
Մասնատայի ամբողջ շինուած է Հերով-
դէսի կողմը, Մեռեալ ծովի բարձունքին:
Հրեաները երեք տարի գերմադրած են
հոն հոռմէացի լեգէոններու դէմ:

ՄԱՆԻ 24 ժամուան մրցումը վերջ
գտաւ «Մաթրա» ինքնաշարժի մը յաղ-
թանակով «Ֆերրարի» ի վրայ: «Մաթ-
րա» ի վարորդներն էին Փեքարօլո եւ
Լարրուս, որոնք 4.853,945 քիլոմետր
կտրած են ժամական միջին հաշուով
202,247 քիլոմետր:

ՄԱՆԻՈՑ դահլիճը նոր վարչապետին
նշանակումէն ետք, փոփոխութիւն կրեց:
18 նախարարներէն տասը նոր դէմքեր են:
Արտաքին նախարար նշանակուեցաւ Լո-
փէյ Պրաւոյի տեղ Լորէանս Լոփէյ Ռո-
տո, 52 տարեկան, որ նախապէս Ծրագրի
նախարար էր: Ներքին նախարար նշա-
նակուած է Մատրիտի քաղաքապետը՝
Քարլոս Արիաս Նալարո, 64 տարեկան:
Դէտերու հաստատումով նոր դահլիճէն
դուրս ձգուած են «ճայրայեղ» աղբը,
թէ եւ նոր կազմն եւս դէպի աջ կը հակի:

ՊՈՐՏՐԻՍԵՆ «Լեռնոնով» դրօսա-
նաւը Լեռնոնովէն Նիւ Եորք հասաւ:
Նաւապետն է Արամ Օկանով, 47 տարե-
կան, Թիֆլիս ծնած Հայ մը: Զբօսանաւը
չինուած է Արեւելեան Գերմանիա, չար-
ժինները Լեռնոնովն պատրաստուած են,
իսկ երկտրոնիք սարքերը ամերիկեան են:
Անձնակազմը 324 հոգիէ կը բաղկանայ:

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ գոր-
ծադուր սկզբունքով վերջ կը գտնէր Ե-
րեքշաբթի օր, թէ եւ բոլոր սենտիքները
գոհացում չեն ստացած, բայց թելադրած
են բանթոններուն աշխատանքը վերսկսել
ճայրայեղութեան չեթալով:

ՊԵՐՈՒԹԻ մէջ պաղեստինցի արձա-
կադէն մը սպաննուած է ոստիկանութեան
կողմէ: Լիբանանեան իշխանութիւնները
վերջին շարժանքները ընթացքին ձեռք
անցուցած են ինք փոխադրակառքեր եւ
երեք նաւեր, որոնք Սուրիայէն դադար-
միթեր կը փոխադրէին Պաղեստինցիներ-
ուն Լիբանանի մէջ:

ՀՈԳԵԳԱՆՈՒՍԻ շաբաթավերջի ինք-
նաշարժի արկածները նորէն շատ եղած
են: Երկուշաբթի գիշեր արդէն 102 մեռ-
եալ եւ 1505 վիրաւոր կը հաշուուէր Ֆր-
անսայի ճամբաներուն վրայ: Անցեալ
տարի նոյն օրերուն 178 մեռեալ արձա-
նադրուած էր:

ԹԵՀՐԱՆԻ գինեւորական դատարանը
վեց հոգի մահուան դատապարտեց, իսկ
եօթներորդի մը՝ կին մը, տասը տար-
ուան բանտարկութիւն տուաւ: Դատա-
պարտեալները կը պատկանէին դադարի
կազմակերպութեան մը, որ կը կոչուի
«Պարսկաստանի Ազատագրութեան ձա-
կատ»:

ՆԱԽԱԳԱՍ ՍՍՏԱՍԻ Լիբիա այցելեց շա-
բաթավերջին: «Մշակութի յեղափոխու-
թիւնը», որ ծայր տուած է Լիբիոյ մէջ,
աստիճան մը եւս կը զօտարացնէ երկու
երկրներու «միութեան» հաստատումը:
Գնդ. Պատաֆի ազգայնացուց ամերիկ-
եան «Պրնքըր Հընթ» քարիւղի ընկերու-
թեան քարիւղի հանքերը: Ասիկա «Փո-
խադարձութիւն» մըն է ամերիկեան քա-
ղաքականութեան դէմ, որ Իսրայէլի զօ-
րավիգ կը կանգնի:

ԱՄԵՐԻԿԱՆ «Օքսփորտերը» քարիւղի
ընկերութիւնը տասը միլիոն տոլարի ար-
ժողութեամբ համաձայնագիր մը կնքեց
Պորտ. Միութեան հետ՝ Սիպրիոյ կաղի-
շահագործման շուրջ, 25 տարուան տե-
ւողութեամբ: Կաղի առաքումը Մ. Նա-

ԵՐԵԻԱՆ ↔ ՓԱՐԻԶ ՀԵՌԱՏԻՊ

ԵՐԵԻԱՆ (Արմէնփրէս, Յունիս 6)

«ԱՐԱՐԱՏ» Ի ՅԱՂԹԱՆԱԿԸ
ՊԱՔՈՒԹԻ ՄԵՋ

Յունիս 5ին «Արարատ» Պաքուի մէջ
մրցում մը ունեցած է «Նեֆթչի» խում-
բին հետ: Երկրորդ կիսախաղի երկրորդ
վայրկեանին Երուսաղէ Մարգարով կոլ
մը արձանագրած է, ապահովելով «Արա-
րատ» ի յաղթանակը:

×

ՃԱՏՐԱԿ

Պորտ. Միութեան ճատրակի ախոյե-
նութեան կիսա-եղրափակիչ մրցումնե-
րուն Հայաստանէն չորս հոգի պիտի
մասնակցին՝ Ռաֆայէլ Վահանեան, Կա-
րէն Գրիգորեան, Հայկ Մարկոսեան եւ
Գաղիկ Սարգիսեան: Կիներու բաժնի խա-
ղերուն պիտի մասնակցի Լեռնոնովցի
երիտասարդ ուսուցչուհի Աննա Յակոբ-
եան:

×

ՀՈՔԵՑ

Գրիգոր Մկրտչեան հոգէյի համաժիւ-
թեան կանցակցութեան նախագահու-
թեան անդամ ընտրուած է: Գ. Մկրտչե-
ան ինք անգամ Պորտ. Միութեան ա-
խոյեան դարձած է:

×

ԱՐՓԻ-ՍԵԻԱՆ՝ 40.855 ՄԵԹՐ

Մայիսին Արփի-Սեւան ջրատարի աշ-
խատանքները, բնական զօտարութիւն-
ներու հետեւանքով, քիչ մը դանդաղ ե-
ղած են: Զրատարը Մայիսին երկարած
է 269 մեթր, իսկ կրողիւսապատուած է
235 մեթր: Այս տարուան վերջին հինգ
ամիսներուն ջրատարը երկարած է 1291
մեթր եւ այժմ փոքրուած հատուածը
40.855 մեթր է:

×

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ
ՆՈՒՐՈՒՄԵ ԵՐԵԻՈՑ

Ֆրանսական մշակոյթը մեծ ժողովրդ-
ականութիւն կը վայելէ Հայաստանի
մէջ: Այս մասին խօսուած է Ֆրանսական
երաժշտութեան նուիրուած երեկոյին,
երգահաններու տան մէջ: Փրոֆ. Գ.
Տիգրանով իր զեկուցումին մէջ հանգա-
մանօրէն անդրադարձած է Ի. դարու
Ֆրանսական երաժշտութեան նոր ուղղու-
թիւններուն: Այնուհետեւ արուեստասէր-
ները ունկնդրած են դործեր Ռաֆէլէ,
Բեթովեն, Մոցարտ, Բիւսոն, Բիւսոն, Բիւսոն:

Հանգներ 1980էն ետք կրնայ իրադր-
ծուիլ:

ՀՈՒՆԳԱՐԻՈՑ նախկին վարչապետը՝
Անտրա շեկեւիւս վտարուած է կու-
սակցութեան շարքերէն, իբրեւ մէկը, որ
չեղած է քաղաքական գիծէն: Հեկեւիւս
վարչապետ եղած էր 1956ի հակախոր-
հըրդային ապստամբութենէն առաջ եւ
փախուստ տուած էր Ռուսիա:

Հայկական Ճարտարապետութեան Ցուցահանդէս

ՊԵՐՈՒԹԻ ՄԵՋ

— 0 —

Յունիս 4ին, Պէյրութի Զբօսաշրջիկու-
թեան նախարարութեան ցուցասրահին
մէջ բացուած կատարուած է հայկական
ճարտարապետութեան ցուցահանդէսին՝
հովանաւորութեամբ Պէյրութի Իտալիոյ
դեսպան Չեղարէ Ռեկարի:

Բացման հանդէսին ներկայ դտնուած
են Լիբանանի Հայոց առաջնորդ Տաճատ
Արք. Ուրֆալեան, Լիբանանի Հայ կա-
թողիկէ պատրիարքարանէն՝ Պէյրութեան
Եպս., Ծրագրի նախարար Մէթր Պա-
լիկ Պապիկեան, Եունտի դեսպանը, պե-
տական Հայ նախարարներ, Միթրաբեան
վարչապետներ, պաշտօնական անձնաւո-
րութիւններ, ազգային մարմիններու
ներկայացուցիչներ եւ հայ ու օտար հոծ
հասարակութիւն մը:

Այս ցուցահանդէսին բացման առթիւ
Միլանոյցի Պէյրութ ժամանած են Փրոֆ.
Ատրիանո Նոյվելլո, ճարտարապետ Հե-
ման Վահրամեան եւ Հրանդ Բամպակեան:

Առանձին ցուցատախտակներու վրայ
տեղ գտած են հայկական ճարտարապե-
տութեան կարեւորագոյն կողմերներուն
յատակադիմերը, իսկ անոնց կցուած են
սեւ-ձերմակ եւ գունաւոր լուսանկարներ,
ամբողջական ճաշակ մը փոխանցելով դի-
տողներուն:

Ցուցահանդէսը նախաձեռնուած եւ
կազմակերպուած է Հայ Համալսարանա-
կաններու Միութեան կողմէ:

Հայ ճարտարապետութեան նուիրուած
այս ցուցահանդէսը տեղի ունեցած է ա-
ռաջին անգամ Միլանոյցի եւ ապա Յու-
նաստանի եւ վերջերս ալ Լիզպոնի մէջ,
նախաձեռնութեամբ Իտալիոյ Հայ Մշա-
կութային Միութեան:

Տեղիւնէ, Սէն-Սանտէ, Տարիւս Միլ-
հոյէ, Մեհեանէ: Ասոնց դործերը նուա-
րած են ջուլեակահար ժան Տէր-Մեր-
կէրեան, դաշնակահար Սիւրէյ Բարսեղ-
եան, երգչուհի Եւրա Սիւրէյ Արամեան,
դաշնակահարուհիներ Սիլվանա Դադ-
եան, Նոնա Ոսկանեան եւ ուրիշներ:

×

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄԸ

Երաժշտական արուեստի զարգացումին
մատուցած ակնառու ծառայութիւններ-
ուն համար եւ ծնողեան 70ամեակին
կապակցութեամբ, Պորտ. Միութեան Գե-
րագոյն Պորտուգալի նախագահութիւնը
«Սոցիալիստական Աշխատանքի Հերոս» ի
կոչում շնորհած է Արամ խաչատրեանի:
Այս առթիւ Երեւանի ձայնասփիւղ
կազմակերպած է երաժշտական տանօր-
եակ մը՝ նուիրուած մեծ երգահանին:
Ճաստօրեակին նպատակն է ունկնդիր-
ներուն ծանօթացնել երգահանին բոլոր
նշանակալից ստեղծագործութիւնները:

×

ՆԱՐԱՀԱՆԴԻՍ

Երկուշաբթի, հունգար եւ չեխ պատանի
նկարիչներ 75 ջրաներկ նկարներ ցու-
ցադրած են Յունիս 6ին, Երեւանի ման-
կական պատկերասրահին մէջ:

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՀԱՆՁՐ՝
ՍՓԻՒՌՔԻ ՄԷՋ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՆԻ ՄԸ ԽՆԴԻՐՆԵՐ

— 0 —

(Բ. Եւ վերջին մաս)

ՄԼՔէ թագուհին Աւետարանը, որ հնագոյն հայերէն մանրանկարեալ ձեռագիրն է ներկայիս Եւ Ազրիստուպոլսոյ Աւետարանը, ինքնին պիտի բաւէին որ 80 տուարի գումարը այդ մանրանկարչական մեծարժէք հատորին համար շատ համեմատ գին նկատէինք:

Եթէ կան մեծահարուստ կամ միջաւորեալ Հայեր եւ հայ հասարակութիւն՝ որոնք կ'ուզեն թորոս Ռոսիոյնը հրատարակուած տեսնել, անոնց կը յիշեցնեմ որ Երուսաղէմի մեր վանքին մէջ 4-5 հասկայ անոնցմէ. թող զանոնք հրատարակեն, փոխանակ մուրացածոյ մէկ հատի մը, որ բախտին չարաշուք մէկ դիպուածով հոս, օտար ձեռքերու մէջ ինկեր է: Եթէ կան հեշտութեամբ 10-20.000 տուար յատկացնող Հայեր կամ հայ հասարակութիւն՝ թող Երուսաղէմի մէջ զբոսնող անգղիական հայ մանրանկարչութեան գլուխ գործոց Կարուց Աւետարանը հրատարակեն կամ հայ մանրանկարչութեան գլուխ գործոց Հաղբատի Աւետարանը (Երեւան, Մատենադարան), կամ՝ Նոր Զուգայի վանքին հաւաքման թիւ 36 Իգնատիոս մանրանկարիչի Աւետարանը, Վենետիկի Միթիթարեանց «Վարք Աղեֆ-սանդի»-ն, — դուք ուզեցէ՛ք եւ ես ըսեմ ձեզի:

Ձեմ գիտեր թէ Ե'ր պիտի սորվինք: Գրեթէ քսան տարի առաջ, 375 հազար տուարի անսխալեթաց գումարով Հար — վրտի մէջ «Հայագիտական» (?) ամբիոն հաստատուեցաւ սակայն քսան տարի ետք ալ դոնէ համեմատ հայագէտ մը գուր չեղաւ, — ո՛չ, թէ դրամագլուխը՝ բայց դոնէ հարիւրին մէկ տուրսը արժեցնելու համար:

Այդ գումարը ամբողջութեամբ հայ հասարակութեան ազգուն միջոցներէն հայթայթուեցաւ... երբ հոս թէ այլուր այնքա՞ն ստիպողական կարիքներ ունէր Հայութիւնը: Յանցանքը որքան գործի վրայ եղող անպատասխանատու ինքնա — կոչներուն, նոյնքան եւ Հարվրտի համալսարանի «ամբիոն»ը ստեղծողներուն պէտք է վերագրել, որոնք, առանց հայագէտ ունենալու՝ «Հայագիտական» ամբիոն ստեղծելու եւ 375.000 տուար առ — նելու միջոցը գիտցան: Կ'երեւի թէ «Հայագէտ» գտնելը պահածոյ վարունգ զբոսնելու պէս բան մը կարծեցին, հասնողը կրնար թելը սօթտել եւ տակառին մէջ մխրձելով «Հայագէտ» գուրս հանել...:

Իսկապէս անտանելի է այլեւս: Խեղճին փչողը հայ մշակոյթ, հայագիտութիւն,

նոյնիսկ եկեղեցական բարեկարգութիւն ազգային քաղաքականութիւն կը հուովէ: Ասոնցմէ ո՛չ մէկը ՄԻԱՅՆ ԴՐԱՄՈՎ, ԸԼԼԱՎԻ ԲԱՆ Է, այլ՝ ՀԱՍԿԱՅՈՂՈՒԹԻՒՆ կը պահանջէ՝ գիտութեան եւ կարողութեան հետ: Ձեն ուղեր խորհիլ, որ հայ քաղաքական կուսակցութիւններ կան՝ որոնց կրնան միանալ, իրենց համախոհներն ալ տանելով եւ աշխատելով: Ձեն ուղեր անդրադառնալ որ, ի՛նչ հասարակութիւններ լինելու պատկանէ իրենց, որմէ միայն պէտք է միայն եկեղեցական կարողութիւններ տնօրինուին, որոնց դէմ կարելի է բողոքել եւ ոչ թէ սանձարձակ ընդդիմանալ, ապստամբիլ եւ ինքնա — գլուխ տնօրինութիւններ ընել: Հայ Մշակույթը «առանց չունի գիւղ մը» է՛, որ պէսզի հասնողը «առանց փայտի» պտուտի:

Մէկը կ'ուզէ հակադասել նիւթական միջոցներ վատնել՝ մանրածաղկէնի առ — նելու համար ԲՈՂՈՐ ձեռագիրները, առանց խորհելու որ հազարաւոր Աւետարաններ, Շարահնոցներ, Մաշտոցներ, Սաղմոսներ, Եւայն, ԼՈՒ ԿՐԿՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՆ, եւ անլորդ է գաղտնի ցկայել:

Ուրիշ մը հրատարակչական կը կադ — մէ, նպատակ ունենալով ընել՝ ինչ որ ՈՒՐԻՇ մը նոյն նպատակաւ ԸՐԱՄ Է ԱՐԴԷՆ: Եւ այսպէս քանին՛ը, որոնք, փոխանակ իրենց ուժերը միացնելու եւ միացեալ ուժերով գործելու, ցրուումի եւ մոխրումի առիթ կուտան:

Ոմանք ալ իրենց դրամական կարողութեամբ կարծես իւրացնե՛լ կը ցանկան կարողութիւններ՝ որոնք ԴՐԱՄՈՎ ՁԵՆՔ ԲԵՐՈՒԻՐ:

Դրամով կարելի է հոս ու հոն գտնել լոկ դպրոցական, տիպոգրաֆիկ՝ սակայն բոլորովին անփորձ մարդիկ: Հոս ու հոն կան արդարեւ «ամենազէ՛տ», «ամենա — կարո՛ղ» խմբուկներ, որոնք ճշտօր տիպոգրաֆիկ եւ մեծխօսիկ նպատակներով կը ձգտին... Սփիւռքի Հայութեան ազգային, քաղաքական, եկեղեցական եւ մշակութային ցաւերը մէկ զեղահատով բուժել...:

Ասիկա, անշուշտ, ծիծաղելի ըլլալէ աւելի ողբալի՛ է, մասնաւորաւ ցայտուն այն տգիտութեամբ՝ զոր անոնք ի յայտ կը բերեն այդ հարցերուն դէմ յանդիման:

Անտարակոյս, կը յարգենք խօսելու, արտայայտուելու եւ նոյնիսկ գործելու ազատութիւնը, երբ ասիկա փաստակար չափերու չի հասնիր եւ յօնք շինելու տեղ աչք չի հաներ: Մեր ցանկութիւնն ալ լո՛կ լսուիլ է, քանի որ մեր մտքն երբեք չանցնիր նոյնիսկ զոյգի վերաբով պարտադրել մեր խօսքն ու կարծիքը:

Անտարակոյս, կրնանք սխալիլ. սա — կայն կարելի է նաեւ որ ճիշդ ըլլանք մեր ըսածին մէջ: Պէտք է ՎԱՍԻԼԻ մեր զբամական միջոցները, երբ այնքա՞ն այլադան կարիքներ ունինք, որոնցմէ ոմանք օր աւուր աւելի ստիպողական կը դառնան:

Եթէ սփիւռքի ձայնը ի գորտ է՛ Խորհրդային Հայաստանի մէջ եւ մեզի հա —

ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒՀԻՆ

— 0 —

Ութերորդ դարը դրական քիչ անուններ ունի: Անոնց մէջ առանձին տեղ կը զբաւէ բանաստեղծ եւ երաժիշտ Մահակ — դուխտ, քոյրը անուանի փիլիսոփայ, բանաստեղծ, երաժիշտ Ստեփանոս Սիւ — նեցիկի: «Նք եւ սորա քոյր մի՛ ի մանկութենէ ստացեալ զվարս կուսութեան եւ առանձնացեալ ի ձորակին Գառնույ յայրի միող, եւ անտանելի վարս ճշնութեան կրէր յանձին, որոյ անուն Մահակ — դուխտ»:

Երբ դարու պատմագիր Ստեփանոս Օրբելեանի այս տողերուն յաջորդող տեղեկութիւններէն կ'իմանանք, որ Մահակ — դուխտ քարանձաւի մէջ մինակ ապրելով հանդերձ, երբեք չէ կտրուած աշխարհէ եւ իրական կեանքէ: Քարանձաւի մէջ ան կը զբաղէ երաժշտութեամբ: Եթէ անոր եղբայրը «կը կարգէր եւ կը շարէր» շարականներ, կարգի կը դնէր եւ կը դաստրէր մեր հին դասական երաժշտութեան ձայներն ու եղանակները, կը հարցնուցնէր հայկական հոգեւոր երգն ու երաժշտութիւնը իր «քաղցրահամ կը — ցուրդներով», Մահակ — դուխտն ալ կը զբաղէր բանաստեղծութիւններ եւ երգեր յօրինելով: Եթէ եղբայրը Մաքենայի եւ Սիւնեայ վարդապետարաններու ամպիոններէն Հայոց բանն ու քաղցր եղանակ — ները կը սորվեցնէր, անոր քոյրն ալ կ'ու —

մար նոյնիսկ անկարելի է ձայն ծպտուն հանել թուրքերէ բռնադրուած Հա — յաստանի մէջ, անդին՝ Պարսկաստանի մէջ ունինք կանչուն, կիսականգուն դաստր վանքեր, եկեղեցիներ եւ յուշարձաններ, որոնք անմիջապէս իրենց վրէժն ունին վերաշինութեան եւ վերապաշտարանութեան եւ որոնք, սակայն, աւերումի սպառնալիքին ենթակայ կը մնան, որովհետեւ նոյնիսկ փոքր գումարներ չեն տրամադրուած:

Քանի մը ձեռագիրներ (որոնք ապահով կը պահուին օտար հաստատութեան մը մէջ) չքեղ այլ անիմաստ ապագրու — թեամբ ներկայացնելէ աւելի կենսական է նիւթական միջոցներ տրամադրել Երուսաղէմի, Վենետիկի, Նոր Զուգայի, Վիէնայի, Չամառի, Անթիլիասի վանքերուն մէջ պահուած յաճախ շատ մեծարժէք, հայերէն ձեռագիրներու փրկութեան գործին, զանոնք քաղցրումէ, փտութենէ, կռնոմէ գերծ պահելու, կազմելու, խնամելու եւ վերականգնա — ցնելու համար: Տղայական եւ ցուցամոլի իրարանցում պիտի ըլլայ մեր ըրածը դողցում եւ վերադարձուած ձեռագիրներու մասին, եթէ փոխանակ հազարի գումարներ ծախսելու իրապէս անարժէք եւ ամուլ «Հայագիտական» ամբիոնն —

սուցանէր մեղեդիներ եւ երգեր: Խումբ — խումբ տղաքներ եւ աղջիկներ կուգային Գառնի ձորը՝ Մահակ — դուխտի քով երգ եւ երաժշտութիւն սորվելու: Հեղահամ — բոյր եւ սեւասքեմ կոյսը կը նստէր վարդոյրին ետեւ եւ հոնկէ դաս կուտար:

«Սա յոյժ հմուտ էր երաժշտական արուեստին, որ ի ներքոյ վարագոյրի նըստեալ ուսուցանէր զբաղման», կ'ըսէ Ստ. Օրբելեան: Մահակ — դուխտ մեր առաջին կին երաժիշտն է, երաժշտութեան առաջին կին մանկավարժը: Ան յորինած է հոգեւոր երգեր՝ մեղեդիներ, շարա — կաններ, որոնցմէ մէկը անուանակալ է՝ նուիրուած Աստուածածնին: Այս բանաստեղծութեան տուններու սկզբնատուերը կը կարգեն իր անունը՝ Մահակ — դուխտ: «Եւ արար կցուրդս եւ մեղեդիս քաղցրեղանակս, յորոց մին՝ սրբուհին Մարիամ, որ իւր անուամբն է յօրինեալ», կը պատմէ Օրբելեան:

Ահա մեր առաջին անուանակալ այդ բանաստեղծութեան առաջին տունը.

Սրբուհի Մարիամ սափոր ոսկի եւ տապանակ կտակարանաց. Որ ի վերուստ կեմաց Պարգեւցիքի քաջալ բնութեանս, Առ ճա միշտ բարեխօսես՝ Վասն քաւութեան մեղաց մերոց:

Մեզի հասած ինչ տունէ բաղկացած այս բանաստեղծութենէ կ'երեւի, որ Մահակ — դուխտ լաւ ծանօթ է եղած մեր յարականներուն, մանաւանդ «Մեծացուցէ՛» կոչուած տեսակին: Միաժամանակ այս բանաստեղծութիւնը ցոյց կուտայ, որ

բու համար, չփրկենք ինչ որ մեր պապերէն հասեր է մեզի եւ չաւանդենք զանոնք զալիք սերունդներուն, ինչպէս որ մեր պապերը ըրեր են նախապէս:

Արդեօք գիտէ՞ք թէ ի՛նչ մեծարժէք ձեռագիրներ ունինք, որոնք անխուսա — փելի փճացումի ենթակայ են: Չանոնք վանքի գարակներուն մէջ պահել չի բաւեր... Արդեօք գիտէ՞ք թէ 15.000 տուար ի՛նչ հրաշքներ կրնայ գործել այդ ձեռագիրներէն ոմանց վերջնական փրկութեան համար...:

Այլեւս խօսքը չենք ընել 375.000 տուարին...

Քսաներորդ դարուն մէջ, Սփիւռքի առնուաղն կէս միլիոն գիտակից Հայու — թեամբ, այլեւս անհրաժեշտ է հեղինակութիւն ստեղծել:

Հեղինակութիւնը, անտարակոյս, փառասիրութիւնը եւ անամէջ խօսքով չէ որ ձեռք կը բերուի՝ այլ յամառ, անձնագործ եւ գիտակից աշխատութեան արդիւնքով:

Այսօր, երբ ունինք փաղանգ մը տիպոգրաֆիկ համալսարանականներու եւ բանակ մը ամէն տեսակ հարուստ զբամասներու, մեր ամբիոնները ամէն տեսնէ աւելի այսպանելի է:

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

ԿՏԱԿՆ ԷՐ

ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ

Գրեց՝ ԱՐՇԱԻՐ ՇԻՐԱԿԵԱՆ

Ա. ՄԱՍ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ամէն պարագայի, եթէ ինք ինծի հետ առնուլ լեզու դառնալով կը յուսար ինձմէ դադարեցնել կորուսել, ես, առաջին վայրէկանէն հասկցած էի իր միտքը եւ ըստ այնմ կը շարժէի — նոյն անուշ լեզուով պատասխանելով իրեն եւ կրկին ու կրկին հաւաստելով թէ մեր տան մէջ եթէ փախըստական դայ, ես ձեռքովս իրեն պիտ յանձնէի. — ««Պերիմ օղում Արշա — ար... աֆերիմ...»:

Ինչո՞ւ այդքան յամառութեամբ կը հեռաքրքրուէր մեր տունով. համոզուած էի

որ Վահէ Իհսանի մատը կար, անոր գրգռումովն էր: Դէպքերը ինծի իրաւունքաւոր տային: Վահէն տեւական հսկողութեան տակ առած էր մեր տունը:

ՀԱՅ ՏՈՒՄԱՐԹԻԿԻ ԱՆՎԱՄԱԿՑՈՒԹԻՒՆՍ

1918 ի Զինադադարը նոր դարադուլի մը պէս եկաւ մեզի: Անչափելի էր մեր, Հայ ազգին կորուստը. մէկ միլիոն զոհ. մասնաւորաբար Արեւելեան վեց նահանգներու հայ բնակչութիւնը բնաջն ուած էր թուրք բարբարոս կառավարութեան եւ խուժանին ձեռքով: Իսկ միջին Անատոլիոյ, Կիլիկիոյ եւ Արեւմտեան նահանգներու Հայութիւնը, հարիւրին տաս կամ քսան համեմատութեամբ միայն առգատած էր անսպասելիէն, ան ալ թըշուուտ վիճակի մէջ: Մեր մեծագոյն միւթարուցիներէն մէկն էր Զարգարաթ թուրքերուն գերութիւնը, զոր տեւական կը նկատէինք: Համաձայնական յաղթական բանակները Պոլիս կը գտնուէին եւ Անատոլիոյ զանազան կողմերը ու կը հաւատային որ թուրքերը այլեւս չլիթայի զարնուած պիտի չկարենային փնասակար ու վտանգաւոր դառնալ:

Անդին, Կովկասի մէջ հիմնուած էր Ազատ եւ Անկախ Հայաստանը: Ինչ որ անսահման յոյսերով եւ փայլուն ապագայի հեռապատկերով կը լեցնէր մեր սիրտերը եւ քաջութիւնն ու նոր կորով կու —

տարտառապողներու բազմութեան: Ասգին, հազարաւոր վերապրողներ կը վերադառնային իրենց ծննդավայրերը կամ կը խուժէին Պոլիս, ուր մերիները բարեբախտաբար դերծ մնացած տարագրութենէ, նախախնամութիւն եղան իրենց դժբախտ ազգակիցներուն համար: Տարագրութենէ վերադարձողներուն խառնուած էին թագստոցներէ լոյս աշխարհ կողմերը, գտնելով ազատութեան եւ վերապրելու թանկագին բարիքը:

Ազգային կեանքը արագօրէն վերականգնուեցաւ, անսահման եռանդով ու խանդավառութեամբ, ինչ որ Հայ ժողովուրդին նկարագրին գլխաւոր դիմը եղած է միշտ, ամէն աղէնէ վերջ: Տարագիր Պատրիարքը, Տ. Զաւէն Արքեպ. Տ. Եղիայեան իր աքսորավայր Մուսուլէն կը վերադառնար ու արտակարգ պատիւներով կ'ընդունուէր: Միութիւնները կը վերա — կազմուէին. կը հիմնուէր Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը, բազմաթիւ մասնաճիւղերով թէ Պոլիս եւ թէ շրջակայ գաւառներու մէջ: Կոմիտասի չորս աշակերտները, Բարսեղ Կանաչեան, Վարդան Սարգիսեան, Թումաճեան եւ Սրուանձտեանց կը կազմէին Միացեալ Երգչախումբը, աւելի քան 300 երկամտ անդամներով: Իսկ Զափրաստ, Մկրտիչ Զաննան, Տիգրան Պօղոս, Տրդատ Նշանեան եւ Կապուռ կը հիմնէին Հայ Տաղաւորիկ թատերախումբը, որուն միանալու կու —

գայինդերուսոյց Աշոտ Մատթեանց, տարագրութենէ վերադարձին, Կառավարենց, եւ Հայ Թատրոնի մեծագոյն դէմքերը Վահրամ Փափագեան, Սեւոմեան, Արէշեան, Զարիֆեան, Շահխաթունի, Հրաչեայ Ներսէսեան, Տիկ. Լիլի Գովան Պիննմէճեան եւ ուրիշներ:

Առաջին օրերէն իսկ անդամ էի Տաղաւորիկին, մանր մուշկ դերերով կամ վարչական թեթեւ գործեր կատարելով: Տեսակ մը պատուակալ անդամ, որուն բուն դրագումն էր թագստոցներէն զէնքեր հանել եւ Վերի Մարմինի ցուցմունքներուն համաձայն, յարմար վայրեր փոխադրել ինչպէս նաեւ հետապնդողներ կատարել, մասնաւորաբար Վահէ Իհսանը աչքէ չը հեռացնել ու անոր երթեւեկները ուսումնասիրել: Ասգին անդին տեղաւորուած զէնքերը մասամբ աւերուած կամ ժանդոսած էին — փտածները մէկուի կը նետէինք եւ միւսները կը մաքրէինք ու կը տեղաւորէինք. այս գործին տեսակ մը մասնագէտը դարձած էի: Ինչպէս կը տեղեկանայի մեր շրջանակներէն, Կուսակցութիւնմեծ կարեւորութիւն կուտար զէնքերը հաւաքելու եւ պահելու խնդրին: Թուրքերուն փտահիլ կարելի չէր:

(35 — Երբ...)

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Տիկին Մարգրիտ Ուզունեան կը ծանուցանէ, թէ այս Կիրակի (17 Յունիս), Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ Մայր եկեղեցւոյ մէջ Հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի իր քրոջ՝

ՏԻԿԻՆ ԱՍԹՐԱ ԹՈՐՈՍԵԱՆԻ

Հոգւոյն համար, անոր մահուան քառասունքին առիթով:

×

Մանի Ուլուհոնեանի մահուան քառասունքին հոգեհանգստեան պաշտօն կը մատուցուի 17 Յունիս, Կիրակի, ժամը 10.30ին, Սամուէլ Մուրատեան վարժարանին մատարան մէջ, 26, Ռիւ Թրուայոն:

Յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ ըլլալ:

Ի ՅԻՇԱՏԱԿ

Վախճան Ազատ Պալեան իր նահատակ հօր եւ ողբացեալ մօր յիշատակին 20 ֆր. կը նուիրէ «Յառաջ»ին:

ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐՈՒ

58ԴԻ ՏԱՐԵԴԱՐՁԸ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան Փարիզի եւ շրջանի մարմինը հոգեհանգստեան պաշտօն կատարել կուտայ Կիրակի Յունիս 17, առաւօտ Փարիզի Հայոց Մայր եկեղեցին:

1915 Յունիս 15ին Պոլսոյ Սուլթան Պալատի հրապարակին վրայ կախաղան բարձրացուած քսան հերոսներու հողմներուն համար: Նոյնպէս հայ ազատագրութեան համար Կեսարիոյ կախաղաններուն վրայ եւ Վանի բանտին մէջ նահատակուած հերոսներու յիշատակին:

Հերոսներուն յիշատակը յարգող բոլոր հայրենակիցները կը հրաւիրուին ներկայ գտնուիլ արարողութեան:

ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍ

Կազմակերպուած Վախճանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Հոգաբարձութեան կողմէ ՇԱԹՕ ՄՈՆՏԻԻ չքով անտառին մէջ, Կիրակի Յունիս 17ին:

Երթեկը ապահովուած, Պարսամբանին մօտէն, ժամը 13.30ին, Ռոմանի ճամբուն վրայ «Թիր-օ-Փիտոն»ին դիմացի աջ ճամբան:

ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍ

Կապոյտ Պաշտօնի մասնաճիւղի դպրոցական հանդէսը 24 Յունիս Կիրակի կէսօրէ վերջ ժամը 3ին եկեղեցւոյ կից սրահին մէջ:

Աշակերտներու կողմէ հայերէն արտասանութիւն, երգ, պար, չորջուր, տրամախօսութիւն մը (զաւեշտ) խանութի կից, նաեւ կը ներկայացուի կենդանի պատկեր՝ Հայկական հարսանիքի գեղը կական տարազով:

Ղեկավարութեամբ ուսուցիչ եւ ուսուցչուհի Պր. Արշալուի խորհրդանիշ եւ Տիկին Մանուկ Շամիրեանի:

Սիրով կը հրաւիրուին ծնողքներ, բարեկամներ եւ հայ հասարակութիւնը:

Հ. Յ. Դ.

ՇԱԽԻԼ.— Հ. Յ. Դ. «Արդութեան» խումբի ժողովը Շաբաթ (Յունիս 16) երեկոյ ժամը 21ին, սովորական հաւաքատեղին:

×

ՍԱՐՍԷԼ — ԱՌՆՈՒՎԻԼ.— Հ. Յ. Դ. «Վարդան» ենթակոմիտէի հերթական ժողովը այս Ուրբաթ ժամը 21ին, սովորական հաւաքատեղին:

×

ՎԻԷՆ.— Հ. Յ. Դ. Անի կոմիտէի ընկերական ընդհ. ժողովը տեղի կ'ունենայ Յունիս 16ի Շաբաթ երեկոյ ժամը 8.30ին Գ. Իփէկեան ակումբը: Բոլոր ընկերներու ներկայութիւնը պարտաւորել է: Կը խընդրուի ճշգրտագին ըլլալ:

ԿՈՒՋՈՒԻ

Fabricant prêt-à-porter féminin recherche entrepreneurs.

Se présenter ou téléphoner :

Ste JAROPA

25, Rue du Terrage, Paris 10e)

Tél. : 607-70-54

ԾՈՎԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ

ԵՒ ԶՄԸ

Հայ Կարմիր խաչի օգափոխութեան կայանին մէջ, Կիրակի, 17 Յունիս:

ՄԵԿԵՆՈՒՄ

Ժամը 7ին, Առնուլլի, Ալբրիւ Հանրի Պարպիւս

7.15ին, Գաֆէ Գուրմէօր, Կառ տիւ Նոռ 7.30ին, Հայ Կարմիր խաչի կեդրոնատեղիէն, 15 Ռիւ Ժամ Կուլմոն, Փարիզ 8րդ 7.45ին, Պուա Գոլոմպ, Փլաս Պուր — կիսեան:

Կէսօրին շամփուրով խորոված կայանին ճաշարանին մէջ:

Այցելութիւններ՝ համաշխարհային Բ. պատերազմի ցամաքահանման տեսարժան վայրերը:

Մասնակցութիւն 50 ֆր.

Արձանագրութեան համար դիմել.—

ԱՌՆՈՒՎԻԼ.— Տիկ. Տ. Հաթապեան եւ Պ. Ն. Նիկողոսեան:

ՍԱՐՍԷԼ.— Տիկ. Ս. Թաճեան ԱԼՖՈՐՎԻԼ.— Տիկ. Ա. Մանուկեան եւ Տիկ. Կ. Կարապետեան

ՊՈՒԱ ՔՈՂՈՄՊ.— Տիկ. Մ. Առաքելեան եւ Տիկ. Հ. Վեդիբեան

ՓԱՐԻՋ Հեռաձայնէ՝ Տիկ. Ալիքսանեան 720-08-20

Տիկ. Սապաղ 924-51-55

Տիկ. Պուպէսէրեան 924-38-54

Ժամը 15էն վերջ 990-66-28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՀՈԶԱԿՄԱՆ ՏԱՐԵԴԱՐՁ ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ ՀԱՅ ԴԱՏԻ ՕՐ

ՄԷՆ-ՇԱՄՈՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ.Յ.Դ. Անտոք-Վարուժան կոմիտէութեան և Նոր Սերունդի

Կիրակի, Յունիս 17, ժամը 16էն 24
Institution St. Marie, Foyer des Jeunes
Route du Coin (après le Stade)

Կը նախագահէ ՍԵԴՐԱԿ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

Կը խօսի ԿԱՐՕ ՅՈՎՍԷՓԵԱՆ

Հայկական նուագախումբ, գեղարուեստական բաժին — Խնջոյք ՄՈՒՏԳԸ ԱԶԱՏ Է

×

ԽՐԱԽՆՆԱԿԱՆՔ ԱԼՖՈՐՎԻԼԻ ՄԷՋ

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՓԱՌԱՊԱՆԾ ՀԱԿԱՏԱՄԱՐՏԻՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈԶԱԿՄԱՆ 55ԴԻ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻԻ Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. «Ս. Միքայէլ» եմբակովիտէի Մասնակցութեամբ Հ. Յ. Դ. Նոր Սերունդին եւ Ֆր. Կապոյտ խաչին Շաբաթ, Յունիս 16, ժամը 21էն մինչեւ լոյս, Սալ տէ Ֆէր (Ալֆորվիլ) 22 Ռիւ Վալթէն

Կը խօսի՝ ընկ. ԱՌԼԷՆ ՓԱՓԱՋԵԱՆ

Գեղարուեստական բաժնին կը մասնակցի

Հ. Յ. Դ. Նոր Սերունդի «ՆԱՅԻՐԻ» պարախումբը

ՄԻՆԶԵԻ ԼՈՅՍ ՊԱՐ, ԵՐԳ ԵՒ ԽԱՂԵՐ

LES ARMENIAN'S SUNSHINE

Նուագախումբին առաջնորդութեամբ

ՇԱՄՓՈՒՐՈՎ ԽՈՐՈՎԱՄ

ԱՌԱՏ ԿԵՐՈՒԽՈՒՄ

×

ԻՍԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. «Ջաւաբեան կոմիտէի

եւ մասնակցութեամբ Հ. Յ. Դ. Նոր Սերունդի եւ Կապոյտ խաչի մասնաճիւղին Հովանաւորութեամբ Հայ Դատի Յանձնախումբի

Կիրակի, Յունիս 17 ժամը 17էն մինչեւ 24

Կը նախագահէ՝ ընկ. ՀՐԱՋ ՀԱՆՏԱԼԵԱՆ Կը խօսի՝ ընկ. ՀՐԱՆԴ ԱԿՈՆԱՅԵԱՆ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Ծախփերու մասնակցութիւն 25 ֆրանկ

ՄԱՅԻՍ 28 Ը

Կազմակերպութեամբ Իսի լէ Մուլինոյի «Ջաւաբեան» կոմիտէի Կիրակի Յունիս 17, ժամը 17էն 22, Իսիի Հայ Մշակոյթի Տան մէջ՝ 45, Ռիւ տը Լա Տէֆանս:

Imprimé sur les Presses
DU JOURNAL « HARATCH »
83, Rue d'Hauteville, Paris (10e)

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏՈՒՆ

Փարիզի Հայ Մշակոյթի Տան Յանձնախումբը կը յայտարարէ Փարիզի Հայութեան որ Տան ներքնայարկի Ս. Թէօփրեան սրահը, սիրով կը տրամադրուի հարսանիքներու, նշանադրութեան եւ այլ հաւաքոյթներու առթիւ:

Կարելի է անձամբ դիմել կամ հեռախօսել տեղեկանալու համար պայմաններուն:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍ

Նախաձեռնութեամբ Կապ. Խաչի Սերանի մասնաճիւղին

Կիրակի Յունիս 24, ժամը 11էն սկսեալ

10, Rue Lucien Sportice, SEVRAN

Օթոպիւս 147 Ա Էկլիզ տը Փանթէնէն

Կամ կառախումբ Կառ տիւ Նոռէն, Իջնէ Լիւրի-Սերան

Պիւֆէ — Շամփուրով խորոված — խաղեր — մրցումներ — Անակնկալներ

ՀԱՇ

Նախաձեռնութեամբ Տարօն — Տուրուբերանի Հայր. Միլոթեան, Կիրակի Յունիս 8, ժամը 15էն սկսեալ Փարիզի Հայ Մշակոյթի Տունը:

Մուտք՝ 20 ֆր.:

ՀԱՅԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ

ՅՐԱՆՍԱԿԱՆ ՀԵՌԱՏԵՍԻԼԷՆ

Կիրակի (Յունիս 17) առաւօտ ժամը 9.30ին հեռաւեպի Ս. Կայանէն հայկ. յայտադիր:

Ամենայն Հայոց Կաթողիկոս — Հ. Ռոնմօ եւ Փրոֆ. Իւթիւճեան:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ


ԱՂՔԱՏԱԽՆԱՄԻ ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍԸ

Կիրակի, Յունիս 1 ժամը 10-22


ՄՈՆՄՈՐԱՆՍԻԻ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՏԱՆ

ԴԱՐԱՍՏԱՆԻՆ ՄԷՋ, 44-50 Ալբրիւ Շառլ տը Կոլ, Մոնմորանսի


Passez vos vacances en caravanes pliantes ou rigides



la bohème rigide 310 • 360 • 395 • 425 • 525
Cinq modèles standing. 10 versions. L'équipement de chacun vous étonnera par le nombre des accessoires et les solutions rationnelles que nous avons donné au problème confort. Ce sont vraiment des caravanes pour caravanners difficiles.
LES VACANCES C'EST



la bohème pliante • MAXI • MINI • PRIMA
Trois caravanes pliantes, tractables par les plus "petites cylindres". Leur coque est celle d'une caravane rigide (double paroi avec isolation totale, toit couvrable en polyester). A l'étape, un vaste séjour encadré par deux grandes chambres séparées.



la bohème

UNE MARQUE DE RENOMMÉE EUROPÉENNE

Carrefour de l'Éléphant PALAISEAU T.928.03.88
N.20 Saint-Germain-lès-ARPAJON T.490.17.79

super thomlac THOMASSIAN Frères

NEUF - OCCASION - ACCESSOIRES - POSE D'ATTELAGES

ԴԵՊՓԵՐ ՈՒ ԴԵՄՓԵՐ

ՔՐԻՍԹՈՑԻ ԶԵՐՔԷԶ

Հայ սերունդները, որոնք իրարու յաջորդեցին ռուսէն երկիրներու մէջ՝ հաստատարի մնացին առհասարակ աւանդութիւններուն։ Մաս առին այն աշխատանքներուն մէջ, որոնք երկիրը պիտի օժտէին արուեստի յիշատակարաններով։ Ի դուր չէ որ ռուսէն այն հեղինակները որոնք զբաղեցան այդ յիշատակարաններով, ինչպէս՝ Կէօրկէ Պալլ, Կիքա-Պուտէշ, Կրիկորէ Եոնեսքու, Փեթրէ Գոնսթաթիներու-Եաշ, Ալ. Պուսուլոչեա ևն., Կէօրկէ Քանթարուզիս, Եւային, յաճախ ակնարկեցին անոնց կառուցումներուն մասնակցող Հայ վարպետներուն, ինչպէս եւ խօսեցան Հայ ոճի հետքերուն մասին Ռուսմանիոյ յիշատակարաններուն վրայ։

Հայ ճարտարապետներու թիւը աննշան չեղաւ նոր օրերու մէջ եւս։

Զերքէզները, օրինակ, Ռուսմանիոյ պարզեցին ճարտարապետներու ամբողջ գերդաստան մը, որ մայրաքաղաքն ու գաւառի կարգ մը քաղաքներ պիտի զարգարէր պատկառելի շէնքերով, սատաբերով միեւնոյն ատեն ռուսէն ազգային ճարտարապետութեան մը ստեղծման։ Զարտարապետներու սոյն ընտանիքէն էր Քրիստոֆի Զերքէզ։

Գեղեցիկ է այն հատորը որ Մարիա Քորտոնեանուի խմբագրութեամբ լոյս տեսած 1971ին, ռուսէն եւ օտար ինը ակնաւոր վարպետներու մասին կը խօսէր «Մեծ ճարտարապետներ» խորագրին ներքեւ։ Այդ ինը ճարտարապետներէն եօթը օտարներ էին — Լէոնարտո տա Վինչի, Միքէլ Անճելօ, Անտոնիո Փալատիօ, Վիտթօ-Լը-Տիւր, Լը Քորպիլլիէ, Վալթէր Կրոփուս, Փիէթ Լուիճի Ներվի, Ալվար Սալթօ։ Միւս երկուքն էին Եոն Մինքու ռուսէն վարպետը որ հիմնադիրն էր եղեր ռուսէն ազգային ճարտարապետութեան, եւ Քրիստոֆի Զերքէզ (1872-1955) որ մեծագոյն ռուսիկ — րաներէն պիտի հանդիսանար ինքն ալ ռուսէն ազգային ոճի մը ստեղծման։

Էջերը, որ այդ հատորին մէջ նուիրուած են Քրիստոֆի Զերքէզին, գրի առնուած ճորճեքուի եւ ճարտարապետին աղջկան Քր. Զերքէզ-Քոլպազիի կողմէ, ընդհանուր պատկերը կուտան տասնեակ տարիներու տքնութեան մը։

Այդ էջերէն կ'իմանանք թէ Քրիստոֆի Զերքէզ ծնած էր 1872 Յուլիս 5ին Պրենսա — Հերլթթըրու գիւղը, Պուրէշի մօտիկ։ Հակումը գոր փոքր տարիքէն ան ունեցեր էր դէպի արուեստները՝ զայն մղեր էին նուիրուելու ճարտարապետութեան ու մեկնիլ Միլան, ամբողջ երեք տարի ուսանելու համար հոն, իսկ անկէ դարձին՝ երկար պրպտելու դեռ ինչ որ դարերը ստեղծեր էին այս հողին վրայ իրեւ արուեստի կոթող։ Թափառեր էր քաղաքէ քաղաք եւ գիւղէ գիւղ, ուսումնասիրեր վանքերն ու եկեղեցիները՝

ճանչնալու համար ինչ որ սերունդները իրը ոճ փոխանցեր էին իրարու, ու ներշնչուելու համար անոնցմէ՝ մուտք գործելէ առաջ իր սապարէզին մէջ։

Արդարեւ ռուսէն ճարտարապետութիւնը իրեն եւս բան մը կը պարտի եթէ յաջորդեցաւ ստեղծել իր ուրոյն ոճը եւ ազգային գեմագիծը պարտադրել անոր։

Շէնքերուն մէջ՝ որոնցմով Քրիստոֆի Զերքէզ պնէց Ռուսմանիոյ մայրաքաղաքը՝ աչքառու եղան իր կառուցած զոյգ մը թեւերը Պետական Արխիւներու շէնքին մէջ, Տոքթ. Մինովիչի համալսարանի վերլան Ծօսէ Քիսեւիւի վրայ, քանի մը շէնքեր Մընթուլեասա, Ռեմուս, Փորում — պարու, ՍՓ. Շթեֆան, Մոստոկան, Տոնիչ փողոցներուն վրայ, շինութիւններ, որոնք նմոյշներն եղան ճարտարապետական ազգային ոճի մը եւ պիտի սատարէին զպրոց ստեղծելու շինարարական արուեստին մէջ այս երկրին։

Քրիստոֆի Զերքէզ շինարարութեան ճիւղին մէջ շահածմանափակեց իր մասնագիտութիւնները։ Ան իր պրպտումներուն նիւթ դարձուց մշակոյթի ուրիշ մարդեր ալ։ Զայն շահագրգռող հարցերէն մէկն էր, օրինակ, հոգեկան աշխարհը՝ զոր ունեցեր էին այս հողին նախաբնիկները, մանաւանդ ինչ կը վերաբերէր դիցարանական ըմբռնութիւններուն երեմին Դակիոյ։

Տարիներ վատեց ասարկելու համար իր պրպտումները եւ եզրակացութիւնները երբեք Դակիոյ կեանքին, սովորու — թիւններուն եւ արուեստին մասին, բայց բախար չունեցաւ ապագրուած տեսելու իր ուսումնասիրութիւնը, որ անտիպ կը մնայ իր պարագաներուն մօտ։ Իր աշխատութեան առաջին ըլնիւնները նուիրուած են երկինքին, լուսինին, աստղերուն, արեւուն եւ երկրին կատարած դերին աւանդութեանց ստեղծման մէջ, Դակիոյ նախապատմութեան եւ անոր կապերուն իր շրջանի ժողովուրդներուն հետ, ինչպէս եւ քաղաքակրթութեան որ ստեղծուեցաւ Դակիոյ հողին վրայ։ Քրիստոֆի Զերքէզ իր երկասիրութեան մէջ յաջորդաբար կը ներկայացնէ ժողովուրդի ընդուն եւ անոր մեծ տօները, քրիստոնէութեան մուտքը Դակիոյ մէջ եւ փիլիսոփայութիւնը կրօնի, Դակիոյ հարստութիւնները եւ անոր հոգեկան եւ նիւթական տիրապետութիւնները, Դե — կեպալը եւ Պետութեան կազմակերպու — թիւնը, Տրայանոսի սիւնը եւ պատե — րագմները Դակիոյ եւ Հոմի միջեւ, Դակեան ծագումով հռոմէական կայսրերը, ռուսմանական ճարտարապետութիւնը իր մղտաւ եւ վալահ ոճերով, ազդե — ցութիւնները զորս այդ ճարտարապետութիւնը ստացաւ դուրսէն եւ ձեւափոխութիւնները զորս կրեց Թրանսիլվանիոյ, Պուրովինայի եւ Պեսարապիոյ մէջ։

Քրիստոֆի Զերքէզ հիմնադիրներէն մէկն եղաւ ռուսէն ճարտարապետութեան ազգային ոճին։ Իր հատորը պիտի գայ լոյսին հանել ակունքը ուրիշ կը բխն ան։

Յ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԶԵՌԱՐՈՒԵՍԸ

— 0 —

«Գրական Թերթ»ի Մայիս 25ի քիւիմ մէջ Մանեա Ղազարեան յօդուածով մը կը շնչտէ, թէ պէտք է աւելի հոգատարութիւն ցոյց տալ ժողովրդական ձեռարուեստին հանդէպ։ «Մօտ անցեալին, կը գրէ ան, եւրոպական շուկաներուն մէջ մեծ շահագրգռութիւն կար հայ արհեստաւորներու ստեղծագործութիւններուն նկատմամբ։ Ժի.—ԺԸ. դարերուն լայն ծաւալ ստացած առեւտուրին շնորհիւ, Հայկ. գաղութներու մէջ ստեղծուած գեղարուեստական իրերը կը տարած — ուէին ամէնուր եւ զգալի տեղ կը դրա — լէին տարբեր ժողովուրդներու կենցաղին մէջ։ Ասոր լաւագոյն վիճակութիւններն են Լոնտոնի Վիքթորիա եւ Ալպերտ թան — գարանի հայկական քանի մը գորգերը, վարագոյրները եւ Քէօթահայի խեցե — դործական ամանները, Պերլինի թանգա — րանի՝ ԺԵ. դարու հայկական սքանչելի գորգը, Վարչաւայի ազգային եւ Պոլ — նանի պատմական թանգարաններու կար — պետներն ու ոսկեթել մետաքսայ ըսն — ուածքները, Փարիզի յարգարանի թան — գարանի հայկական բանուածքները, Մոս — կուայի Կրեմլինի Զինապալատի նշանա — ւոր «Ալամանդեայ գահը» եւայլն։

«Գեղարուեստական ուրոյն կապ կայ հայկական ձեռարուեստի բոլոր ճիւղեր — րուն միջեւ։ Աւանդական շարահիւստ — թեամբ յղելու, դասական դարձած գոյնը, գիծը, գարգանախը ժողովրդա — կան արուեստի տարբեր տեսակներու մէջ հանդէս եկած են արտայայտութեան տարբեր հնարամտութիւններով եւ մի — ջոցներով։ Ասոնք հակառակ անոր որ խարսխած են ազգագրական միեւնոյն հի — ման վրայ եւ ստեղծուած են գործնական նպատակներով, բայց կ'արտայայտեն գեղեցիկը երեւան բերելու ժողովուրդին կարողութիւնը։

«Գորգերու, ժանեակներու եւ ասեղ — նագործութեան նրբահիւս նախշերը ոճի ընդհանրութիւն ունին խաչքարերու զար — դաքանդակներուն հետ։ Գարագործ վար — պետներու աշխատանքը շատ յաճախ կը նմանէր փայտի գեղարուեստական փո — րագրութեան։ Բրուտագործական աման — ներու ձեւերը յղկած ու մեղմացուցած են քարէ նոյնատիպ իրերու կոշտութիւ — նը։ Ոսկերչական իրերը իրենց փոքր չա — փերով նոյնիսկ, պահպանած են դրոշ — մուած կտորներու եւ կարպետներու չքե — դութիւնը։


«... Արհեստաւորական մեծ կեդրոն — ներէն էր Վանը։ Տեղւոյն կառուցող վար — պետներու աշխատանքը համեմատուած է Հոռոսի վարպետներու անդրազական աշխատանքին հետ։ Համաշխարհային շուկայի մէջ բարձր գնահատուած է ի —

կոնիայի հայ ոսկերչական աշխատանքը։ Նշանակալից էր մեր ոսկերչներուն դերը Ռեյ Պոսպոլիտէի արուեստի զարգացումին մէջ։ Հայ վարպետները Լիւով ներ — մուծեցին ոսկին դրուագելու մասնագի — տութիւնը։ Վան, Նոր Զուղա յայտնի էին իրենց գորգերով եւ ասեղնագործու — թեամբ։ Դարավերջի մեծ կեդրոններ էին Մատրաս, Նոր Զուղա, Երզնկա։

«... Դարեր շարունակ արհեստները զարգացած են իրարու հետ զուգակցա — բար, իսկ Ժի.—ԺԸ. դարերուն փրօֆ — սիռնէլ նկարիչները նոյնիսկ ձեռարուեստի հմուտ վարպետներ եղած են։ Օրի — նակ՝ Բողդան Սալթանով (Ժի.—ԺԸ. դար — երկրորդ կէսին), որ կը զբաղէր նաեւ ձեռարուեստով, ուսու իրականութեան մէջ ներմուծեց, այսպէս կոչուած, «կեր — պասի նկարչութիւնը» (կառուին վրայ պատկերացուած մարդկային մարմինն բաց մասերը՝ դէմքը, ձեռքերն ու ոտ — քերը կը նկարէին իւզաներկով, իսկ զգեստներուն համար կ'օգտագործուէր ասեղնագործ կերպար)։

«... Հիմա փոխուած են ժամանակ — ները։ Փոխուած է մեր ժողովուրդին քա — դարական, տնտեսական եւ մշակութա — յին կեանքը։ Եթէ անցեալին ժողովրդ — դական վարպետներու ստեղծագործու — թիւնը երանդ ու փայլ կուտար փրօֆ — սիռնէլ արուեստագէտներու մտայղա — ցումներուն (Բ. Սալթանով, Յովնաթան — եաններ, Վ. Սուրէնեանց, Յ. Կոմլեյան եւ ուրիշներ), այժմ Հանրապետութեան գեղարուեստական աշխոյժ կեանքը, ար — դիւնաբերութեան բազմակողմանի զար — դացումը եթէ հիմնովին չեն վերափոխ — ժողովրդական արուեստին հարցերը, յա — մենայն դէպս դոնէ բազմաթիւ ճամբա — ներով կ'ազդեն անոր վրայ։

«... Անշուշտ, ձեռարուեստի ոչ բո — լոր ճիւղերն են, որ կրնան մեր օրերուն նորէն զարգանալ (օրինակ՝ դրոշմուած կտորներու արուեստը), սակայն անհրա — ժեշտ է օգտագործել անցեալի վարպետ — ներու աւանդը։ Հիւստուծեղէնի արդիւ — նաբերութեան, ոսկերչութեան եւ արծա — թագործութեան նոր պահանջները պէտք է զուգորդել անցեալի վարպետներու հմտութեանն ու իրերու ներութեանը։ ... Եւսկայի, Մարտունիի, Ապարանի շրջաններուն, Մեծ Մաղարի մէջ կան վարպետ բրուտագործներ, որոնց աշխա — տանքը լայն հիմքերու վրայ պէտք է դնել։ Ասիկա կը հարստացնէ մեր կենցաղը եւ գեղեցիկ յուշանուէրներու բազմազանու — թիւն կը ստեղծէ։ Թերեւս հիմնովին պէտք է վերանայիլ նաեւ պղինձի դըր — ուագման գոյութիւն ունեցող վիճակին։ Անհրաժեշտ է, ի վերջոյ, լրջօրէն մտա — ծել տարիներ շարունակ արտագրուող նոյնատիպ, շատ յաճախ անճշգիւ եւ անարուեստ յուշանուէրներու մասին։ Ե՛ւ խեցեգործական, ե՛ւ մետաղէ դրուագ — ուած իրերու արտագրութեան համար լայն հնարաւորութիւններ ստեղծուած են մեր Հանրապետութեան մէջ։ Միայն պէտք է շնք թափել ճաշակով, արուես —



Ա. ՄԱՍ

ՀԱՅ ՏՈՒՄԱԹԻԿԻ ԱՆԳԱՄԱԿՑՈՒԹԻՒՆՍ

Թէեւ Պոլսոյ մէջ ընկճուած վիճակ մը ունէին, գլուխներն կրնայ ստորուել նման եւ ենթակայ Համաձայնական գլխուոր եւ սպաներու ամէն տեսակ անարգանքին, սա — կայն 1919ի ամբան արդէն լուր կուգար թէ Անատոլի մէջ սկսած էին գլուխ բարձրացնել։ Միլլի կոչուած շարժումը ծայր տուած էր։ Ապագայի կանխահո — դութեամբ պէտք էր պահեստներ ունենալ. բայց շատ զբոյժ եւ խոհեմ շարժելու էինք, եթէ մեր մօտ ղէնքի պահեստ մը

երեւան հանուէր, թուրք թերթերը պատ — րուակ պիտի դառնէին աղմուկ փրցնելու եւ Հայերը յանցաւոր հանելու։ Փոխադ — րութիւնները տեղի կ'ունենային ընկեր — ներու պաշտպանութեան տակ։

Ահաբեկումներու Պատասխանատու Մարմինը կազմուած էր «Ճակատամարտ»ի շէնքին մէջ։ Իր առաջին յաջողութիւն — ները կ'արձանագրէր արդէն։ Իրարու ե — տեւէ կը պատուհասուէին հայանուն լըր — տես-մասնիչները — Պէշիւթ-Թաշի Մուր — թար Յարութիւն Միլլիթեանը, Ս. Թ. ի ձեռքով։ Այս սեւեռի խաֆէն, Հայ Մտաւորականութեան անուանացան — կը հասցնէր միտքին պատրաստած եւ յանձնած էր տիրահաճակ ԳԼՍՄԸ ՍԻՍ — ՍԻ ի տնօրէն Րէշատ Պէյին, որ հայու մը չափ սահուն հայերէն կը խօսէր, եւ մէկ գիշերուան մէջ, Հայ Մտաւորական — ները բռնել ու գէշ տուած էր Զանգըրը եւ Այաշ։ Կը պատուհասուէր Կէտիք Փա — շայի վարժարանին տնօրէն, Հնչակեան գործիչ եւ գրող Հմ. Արամեանցը, որ բազմաթիւ Հայ ընտանիքներու կորստ — եան պատճառ եղած էր, եւ Շաւարշ Մի — սաքեանը թուրք ոստիկանութեան յանձ — նող պուլկար լրտես Վլադիմիրը։ Ահաբե — կիւնները, Ս. Թ., Եգիտ Արշակ եւ Շ. չէին բռնուած եւ ազատ կը շրջէին։ Խանդա — վառուած էի ընկերներու քաջութեամբն ու յաջողութիւններով եւ երբեմն ալ մըտ — քէս բաներ մը կ'անցնէին։ Բայց պէտք

էր Պատասխանատու Մարմինն վստահու — թիւնը չահլի եւ կամ զանոնք համոզել թէ ես ալ կրնամ վստահաւոր գործի մը մէջ նետուիլ։ Անգամները ընտանեկան բարեկամներ էին, սակայն զիս շատ փոքր ու անփորձ կը դառնէին։ Կը խոր — հիմ որ քանի մը դէպք կարեւոր դեր ու — նեցան, անոնց աչքին վստահելի գործիչ մը դառնալու տեսակէտով։

Այդ թուականին դեռ կը բնակէինք Եյրի փողոց — Թաքսիմ. իր անունին արժանի փողոց մը, ուր տաս մեթրի վը — րայ շինակի քայլ չէի կրնար առնել։ Պատկից չէնքին մէջ, որ ըսի փողոցը կը նայէր, կը բնակէր Վահէ Իսսան, ճիշդ այն տունը ուր ատենօք բնակած էր մեր ընկերներէն Լեւոն Ղարիպեանը, որ պատերազմի ընթացքին բռնուած ու չար — չարանքի ենթարկուած էր։ Անոր բնա — կուսեան շրջանին մեծ քանակութեամբ գէշք տարած եւ տան գետնայարկի փո — սեր բանալով պահած էի։ Երբ այս ուղ — ղութեամբ գործի վերսկսանք, հրահանգ — ներ կը ստանայինք Կ. Կ. ի գործաւար Հրաչ Փափագեանէն եւ Գալուստ Էյնաթ — եանէն։ Որոշուեցաւ ուրեմն Վահէ Իս — սանի տան գէնքերը վերցնել ու ապահով վայր մը փոխադրել։ Դժուար էր։ Վահէն դեռ պաշտօնի վրայ էր եւ կապ հաստա — տած էր նաեւ Միլլի իշխանութիւններուն հետ, ինչպէս կ'ըսէին մեր ընկերները, կասկածամբ իր եւ կրնար մեր գլխուն

ՀՈԳԵՀԱՆԳԻՍԸ

Այրի Տիկին Գ. Յովհաննէսեան, իր զաւակներն ու թոռը հոգեհանգստեան պաշտօն կատարել կուտան իրենց ամուսնոյն, հօր եւ մեծ հօր՝

ԳԱՌՆԻԿ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻ

մահուան երկրորդ տարեդարձին, ինչ — պէս նաեւ իրենց եղբօր եւ մօրեղբօր՝

ԲԱՐԹՈՂ ՄԻՆԱՍԵԱՆԻ

մահուան տարեիցին առթիւ, այս Կիրակի առաւօտ, Յունիս 17, Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին։

Ի գիտութիւն ողբացեալներուն յիշատակը յարգողներուն։

Այս առթիւ անոնց յիշատակին կ'ընեն հետեւեալ նուիրատուութիւնները. — Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցիի, Սամուէլ Մուրատեան վարժարանի, Դպրոցասէրի, Անտիլիի եւ Մանորանի հանգստեան տուններուն, Կարմիր խաչի, Կապոյտ խաչի, Որբայնամի, « Յառաջ »-ի եւ « Աշխարհ »-ի 150ական ֆրանք։ (Ստանալ « Յառաջ »-էն)։

×

Տիկին Մարգրիտ Ուզունեան կը ծանուցանէ, թէ այս Կիրակի (17 Յունիս), Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ Մայր եկեղեցւոյ մէջ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի իր քրոջ՝

ՏԻԿԻՆ ԱՍԹՐԱԹՈՐՈՍԵԱՆԻ

հոգւոյն համար, անոր մահուան քառասունքին առիթով։

×

Մառի Ուլուհոնեանի մահուան քառասունքին հոգեհանգստեան պաշտօն կը մատուցուի 17 Յունիս, Կիրակի, ժամը 10.30ին, Սամուէլ Մուրատեան վարժարանին մատրան մէջ, 26, Ռիւ Թրուայոն։ Յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ ըլլալ։

ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐՈՒ

58ԴԻ ՏԱՐԵԴԱՐՁԸ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍԸ

Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան փառիզի եւ չրջանի մարմինը հոգեհանգստեան պաշտօն կատարել կուտայ Կիրակի Յունիս 17, առաւօտ Փարիզի Հայոց Մայր եկեղեցին։

1915 Յունիս 15ին Պոլսոյ Սուլթան Պայազիտի հրապարակին վրայ կախաղան բարձրացուած քսան հերոսներու հոգիներուն համար։ Նոյնպէս հայ ազատագրութեան համար Կեսարիոյ կախաղաններուն վրայ եւ Վանի բանտին մէջ նահատակուած հերոսներու յիշատակին։

Հերոսներուն յիշատակը յարգող բոլոր հայրենակիցները կը հրաւիրուին ներկայ գտնուիլ արարողութեան։

ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

Կազմակերպուած Վալանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Հոգաբարձութեան կողմէ ՇԱԹՕ ՄՈՆՏԻԻ չքեղ անտառին մէջ, Կիրակի Յունիս 17ին։

Երթեւեկը ապահովուած, Պարսամեանին մօտէն, ժամը 13.30ին, Ռոմանի ճամբուն վրայ «Թիրօ-Փիօն»-ին դիմացի աջ ճամբան։

ՊԱՐԳԵԻԱՐԱՇԽՈՒԹԻՒՆ
ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՁ

Տեղի կ'ունենայ Շաբաթ Յունիս 23ին — Առաւօտեան ժամը 11ին հանդիսաւոր պատարագ վարժարանին Մատրան մէջ, աշակերտներու երգեցողութեամբ։

— Ժամը 13ին ընտանեկան ճաշ։
— Ժամը 15ին հանդէս պարզեաւարչ — խումբին, երգ, արտասանութիւններ, հաշուետուութիւն։

— Ճաշագին 25 ֆրանք
Հեռաձայնել 027-18-28

ՀԵՐՈՍՆԵՐՈՒ ՕՐԸ

ՎԻԷՆԻ ՄԷՁ
Յուլիս 15ին

Հ. Յ. Գ.

ՇԱԽԻԼ. — Հ. Յ. Դ. « Արդութեան » խումբի ժողովը Շաբաթ (Յունիս 16) երեկոյ ժամը 21ին, սովորական հաւաքատեղին։

×

ՍՍՐՍԷԼ — ԱՌՆՈՒՎԻԼ. — Հ. Յ. Դ. «Վարդան» եկեղեցւոյ խումբի հերթական ժողովը Ուրբաթ Յունիս 22 ժամը 21ին, սովորական հաւաքատեղին։

×

ՎԻԷՆ. — Հ. Յ. Դ. Անի կոմիտէի ընկերական ընդհ. ժողովը տեղի կ'ունենայ Յունիս 16ի Շաբաթ երեկոյ ժամը 8.30ին Գ. Իսիէկեան ակումբը։ Բոլոր ընկերներու ներկայութիւնը պարտաւորիչ է։ Կը խընդրուի ճշդապահ ըլլալ։

ԾՈՎԱԳԻՆԱՅՈՒԹԻՒՆ ԵՒ ՃԱՃ

Հայ Կարմիր խաչի օգտփոխութեան կայանին մէջ, Կիրակի, 17 Յունիս։

ՄԵԿՆՈՒՄ. —

Ժամը 7ին, Առնուլի, Ալբեր Լանրի Պարպիւս
7.15ին, Քաֆէ Գուրվէօր, Կառ տիւ Նոռ
7.30ին, Հայ Կարմիր խաչի կեդրոնատեղիէն, 15 Ռիւ Ժամ Կուսն, Փարիզ Տրդ
7.45ին, Պուա Գոլոմպ, Փլաս Պուր — կիներն։
Կէսօրին շամփուրով խորոված կայանին ճաշարանին մէջ։
Այցելութիւններ՝ համաշխարհային Բ. պատերազմի ցամաքահանման տեսարժան վայրերը։
Մասնակցութիւն 50 ֆր.

Արձանագրութեան համար դիմել. —
ԱՌՆՈՒՎԻԼ. — Տիկ. Տ. Հաթապեան եւ Պ. Ն. Նիկողոսեան։
ՍՍՐՍԷԼ. — Տիկ. Ս. Թաճեան
ԱԼՖՈՐՎԻԼ. — Տիկ. Ա. Մանուկեան եւ Տիկ. Կ. Կարապետեան
ՊՈՒԱ ՔՈԼՈՄՊ. — Տիկ. Մ. Առաքելեան եւ Տիկ. Հ. Վէլդերեան
ՓԱՐԻՁ հեռաձայնել՝
Տիկ. Ալբրասեան 720-08-20
Տիկ. Սապաղ 924-51-55
Տիկ. Պուլպէսեան 924-38-54
Ժամը 15էն վերջ 990-66-28

ՃԱՇ

Նախաձեռնութեամբ Տարօն — Տուրուբերանի Հայր. Միութեան, Կիրակի Յունիս 8, ժամը 15էն սկսեալ Փարիզի Հայ Մշակոյթի Տունը։

Մուտք՝ 20 ֆր.։

ԴԱՃՏԱՀԱՆԴԷՍ

ՄԷՆ - ՀԱՄՈՆԻ ՄԷՁ

Հայ Հասարակութիւն Մէն Շամօնի Երիտ. Միութեան երրորդ տարեդարձին առիթով, կազմակերպուած է տարեկան դաշտահանդէս Յունիս 24, Կիրակի առաւօտեան ժամը 11էն մինչեւ ուշ գիշեր Institution Sainte Marie, Parc des Frères Lazaristes, Route du Coin — St. Chamond (après le Stade Pauze).

Երաժշտական բաժնին իր մասնակցութիւնը կը բերէ Լիոնի Սայաթ Նովա երկսեռ նուագախումբը, նորագոյն զուգերգներով եւ հայկական զուարթ երգերով։ Խնամքով նկատի առնուած է նաեւ Միութեան համանուն վարժարանին երկսեռ աշակերտութեան մասնակցութիւնը։

Առատ խմիչք ամէն ճաշակի, հայկա — կան համադամ կերակուրներ եւ համեղ աղանդերներ, մատչելի զինեցով։

Հաճելի անակնկալներ, հարուստ նը — էքներու վիճակահանութիւն, մանկական այլազան զրօսանքներ եւ մանաւանդ փեթանէի (ձեռնագնդակ) մրցաշարք մը, արծաթազօծ բաժակի վրայ։

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԵՈՒԹԵԱՆ ՀՈԶԱԿՄԱՆ ՏԱՐԵԴԱՐՁ
ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՈԳԵԿՈԶՈՒՄ
ՀԱՅ ԴԱՏԻ ՕՐ

ՄԷՆ - ՀԱՄՈՆԻ ՄԷՁ

Նախաձեռնութեամբ Հ.Յ.Դ. Անտոք-Վարուժան կոմիտէութեան և Նոր Սերունդի Կիրակի, Յունիս 17, ժամը 16էն 24

Institution St. Marie, Foyer des Jeunes
Route du Coin (après le Stade)

Կը նախագահէ ՍԵՂՐԱԿ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

Կը խօսի ԿԱՐՕ ՅՈՎՍԷՓԵԱՆ

Հայկական մուագախումբ, գեղարուեստական բաժին — Խնչոյք
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ Է

×

ԽՐԱԽՃԱՆՔ ԱԼՖՈՐՎԻԼԻ ՄԷՁ

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՓԱՌԱՊԱՆԾ ՀԱԿԱՏԱՄԱՐՏԻՆ
ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈԶԱԿՄԱՆ 55ԴԻ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻԻ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. «Ս. Միհասեան» եմքակոմիտէի Մասնակցութեամբ Հ. Յ. Դ. Նոր Սերունդին եւ Ֆր. Կապոյտ խաչին Շաբաթ, Յունիս 16, ժամը 21էն մինչեւ լոյս, Սալ տէ ֆէր (Ալֆորվիլ) 22 Ռիւ Վոլքէն

Կը խօսի՝ ընկ. ԱՌԼԷՆ ՓԱՓԱԶԵԱՆ
Գեղարուեստական բաժնին կը մասնակցի
Հ. Յ. Դ. Նոր Սերունդի «ՆԱՅԻՐԻ» պարախումբը
ՄԻՆԶԵԻ ԼՈՅՍ ՊԱՐ, ԵՐԳ ԵՒ ԽԱՂԵՐ
LES ARMENIAN'S SUNSHINE
Նուագախումբին առաջնորդութեամբ

ՀԱՄՓՈՒՐՈՎ ԽՈՐՈՎԱԾ

ԱՌԱՏ ԿԵՐՈՒՄՈՒՄ

×

ԻՍԻՒ ՄԷՁ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. «Ջաւարեան կոմիտէի եւ մասնակցութեամբ Հ. Յ. Դ. Նոր Սերունդի եւ Կապոյտ խաչի մասնաճիւղին Հովանաւորութեամբ Հայ Դատի Յանձնախումբի

Կիրակի, Յունիս 17 ժամը 17էն մինչեւ 24

Կը նախագահէ՝ ընկ. ՀՐԱԶ ՀԱՆՏԱԼԵԱՆ Կը խօսի՝ ընկ. ՀՐԱՆԴ ԱԿՈՆԱՅԵԱՆ
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Մախֆերու մասնակցութիւն 25 ֆրանք

ՇՆՈՐՀԱՎԱԽՔ

Լիոնի Հայ Առաք. եկեղեցւոյ Ազգ. Միութեան վարչութիւնը շնորհակալու — թեամբ ստացած է հետեւեալ դումար — ները. —

Եկեղեցւոյ. — Պր. Յակոբ Բէլթէքեան, իր կնոջ Ժանէթի մահուան քառասունքի հոգեհանգստեան առթիւ 100 ֆր.։ (Մարսէլէն) Պր. Պապայեան, Կիսան ծաղկե — պսակի՝ Օր. Անժէլ Արէլեանի (Սէն Շամօն) մահուան առթիւ 100։ Պ. Հայկ Արամ Պոյաճեան, իր զաւկին Մարիճայի մկրտութեան առթիւ 150։ Պր. Արտաշ Դանիէլեան ընտանիք, Սարգարապատի հերոսներուն յիշատակի հոգեհանգստեան առթիւ 100։ Պր. Կարօ Ուզունեան, իր հանգուցեալ ծնողաց հոգեհանգստեան առթիւ 50։ Տիկ. Ռոզ Սարգիսեան 50։ Պր. Գալուստ Տօնիկեան 50։ Պր. Հրաչեայ Տէր-Անդրէասեան (Լիոն) իր հօր Երուսաղ Տէր-Անդրէասեանի եւ եղբօր Վահէի գերեզմանատուն այցելութեան առթիւ 30։ Պր. Ա. Մանուկեան Աղքա — տանիմմին 20։ Պր. Վաղարշ Մարգար — եան, Մարկոսեան Շառլի մկրտութեան առթիւ եկեղեցւոյ 2000 ֆր.։

ՄԱՅԻՍ 28 Ը

Կազմակերպութեամբ Իսի լէ Մուլինոյի «Ջաւարեան» կոմիտէի Կիրակի Յունիս 17, ժամը 17էն 22, Իսի Հայ Մշակոյթի Տան մէջ՝ 45, Ռիւ տը լա Տէֆանս։

ՀԱՅԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ

ՅՐԱՆՍԱԿԱՆ ՀԵՌԱՏԵՍԻԼԷՆ

Կիրակի (Յունիս 17) առաւօտ ժամը 9.30ին հեռատեսիլի Ա. կայանէն հայկ. յայտագիր։

Ամենայն Հայոց Կաթողիկոս — Հ. Ռոմ — ո եւ Փրոֆ. Իւթիւճեան։

ՆԿԱՏԻ ՌԻՆԵՆԱԼ

Կապ. խաչի Վիէնի մասնաճիւղին դըպրոցական տարեվերջի հանդէսը 23 Յունիս Շաբաթ երեկոյ, ակումբին մէջ, մանրա — մասնութիւնը տեղւոյն վրայ։

×

ՄԱՐՍԷԼ. — Խանութիւնը արշաւանքի տօնակատարութիւնը Կիրակի Յունիս 29, ամբողջ օրը Վալապրի դաշտը։

Հ. Յ. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ԲԱՆԱԿՈՒՄ

ՕԳՈՍՏՈՍ ՄԷԿԷՆ 30

CAMP DU NOR SEROUND, COLONIE SAINT ANDRE, ROUTE DE BESSAN
34 BEZIERS (HERAULT) — Téléphone : 76-01-76

Հ. Յ. Դ. Նոր Սերունդի Կեդրոնական վարչութիւնը իր տարեկան բանակումը կը կազմակերպէ այս տարի Պէզի

ՊԱՅՄԱՆՆԵՐ. — Մէկ ամիս՝ 600 ֆր., 14 օրէն աւելի, օրական 26 ֆր., 7 օրէն 14 օր՝ 29 ֆր. 7էն պակաս՝ 32 ֆր.

Արձանագրութիւնները՝ Ձորեքշաբթի եւ Ուրբաթ իրիկունները ժամը 18էն 20 եւ Շաբաթ օրերը՝ 16էն 20։ Ժամբորդութիւնը՝ օրըքառով փարիզէն։

ՈՒՐԱԹ
ՅՈՒՆԻՍ
15
VENDREDI
15 JUIN
1973



HARATCH
LE SEUL QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE OCCIDENTALE
Directrice : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE, 75010 PARIS
— Tél. : 770-86-60 — Fondé en 1925
C. C. P. Paris 15069-82 R. C. Seine 57 A 2731

Le NUMÉRO 0,70 F. **ՀԻՄՆԱԴԻՐ ՇԱԽԱՐՇ ՄԻՍԱԿԻԱՆ** **Ֆոնդատուր : SCHAVARCH MISSAKIAN** Գրառեստ Գրառեստի արժեքը Գրառեստի արժեքը Գրառեստի արժեքը Գրառեստի արժեքը

ՕՐՈՒԱՆ ՊԵՐՍՊԵԿԻՎ
ԳԵՐՄԱՆԻԱ
ՊԵՐՍՊԵԿԻՎ
ՀԻՄՆԱԴԻՐ ՇԱԽԱՐՇ
— 0 —

ՕՐՈՒԱՆ ԴԵՊՔԵՐԸ
ՎԻԵՆԱ
ՆՈՐ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ ՄԸ ԿՆԻՈՒՆԵՑԱԻ
— 0 —

ԵՐԵՎԱՆ ↔ ՓԱՐԻՋ
ՀԵՌԱՍԻՆ

Երբ պատերազմը վերջ գտաւ Եւրոպայի մէջ, վերապրող Հրեաները սկսան վերադառնալ իրենց լքած տունները։ Հաշուեկէլով կատարուեցաւ, ճշգրիտ համար նացիներու ցեղասպանութեան զոհ դատւած Հրեաներու թիւը։

Անկարելի էր ճշգրիտ վիճակագրուել թիւն մը կատարել։ Ի վերջոյ հրէական կաթոլիկերպութիւնները համաձայնեցան վեց միլիոնի վրայ։ Ու այս թիւն է, որ կը յեղեղուի ամէնուրեք աւելի քան քառուորդ դարէ ի վեր։ Վիլլի Պրանտի իտալացի այցելութեան առթիւ կարգ մը ազգայնամոլներ զայն դիմաւորեցին ցուցատախտակներով, որոնց մէկ մասին վրայ արձանագրուած էր պարզապէս 6.000.000 թուանշանը։

Որոշմամբ ա՛յնքան մեծ էր Հրեաներու եւ Գերմաններու միջեւ, որ պատերազմէն ետք զոհերը կը մերժէին որեւէ ուղիով յարաբերութիւն ունենալ դահիճներու ժառանգորդներուն հետ։ Սակայն ի վերջոյ պէտք է գտնուէր միջոց մը նիւթական հատուցում ստանալու համար Գերմանիոյ նոր վարիչներէն՝ ի նպաստ նացիներու զոհերուն։

Իսրայէլի նորակազմ Պետութիւնը պարտականութիւն սեպեց զբաղիլ այս կէն՝ սական խնդրով։ Թէլ Ավիվի կառավարութիւնը 1951 Մարտ 12ին առաջին ծառայողութիւնը մը դիմեց յաղթական չորս Պետութեան, վեց միլիար տալար հաշուելով Գերմանիոյ, Աստուրիոյ եւ հիթլերական բանակներու կողմէ գրաւեալ այլ երկիրներու մէջ Հրեաներու կրած նիւթական վնասները։

Ծանուցագիրը կը չեղաէր թէ նացիներու կողմէ Հրեաներու հանդէպ դրոժուած ոճիւր չի կրնար քաւուիլ նիւթական յատկացումներով, սակայն զոհերուն համար կարելի է եւ պէտք է պահանջել հատուցում։

Գաղտնի բանակցութիւններ տեղի ունեցան Իսրայէլացիներուն եւ Գերմաններուն միջեւ ճշգրիտ համար Իսրայէլ ընդունուած գաղթականներու ճշգրիտ թիւը եւ իւրաքանչիւր գաղթականի յատկացումները գումարը։ Երկար սակարկուած թիւներէ ետք 1952 Նոյեմբեր 10ին Լիւքսեմպուրգի մէջ Բոնրատ Ատենաւորքի եւ Իսրայէլի Արտաքին նախարար Մոշէ Ծաւթի միջեւ կնքուեցաւ համաձայնագիր մը, որով Գերմանիոյ Դաշնակցային Հանրապետութիւնը յանձնառու կ'ըլլար տասնեկու տարուան մէջ 3.450 միլիոն մարդ վճարելու Իսրայէլին, որ այս գումարին 450 միլիոնը պիտի տար հրէական կազմակերպութեանց։

Իսկ Արեւելեան Գերմանիոյ Ժողովրդական Հանրապետութեան վարիչները չուզեցին որեւէ յանձնառութիւն ստանձնել, յայտնելով որ հատուցումներու խնդիրը պէտք է կարգադրուի Միացեալ Գերմանիոյ հետ հաշտութեան դաշնագրի կնքուելուն առեւ։

Իսրայէլ արարական երկիրներու թըշնամական դիրքին դիմագրաւելու համար պաշտպաններ կը փնտռէր Եւրոպայի մէջ։ Առաջին առթիւ կ'ուզէր դիւանապետական յարաբերութիւններ հաստատել Դաշնակցային Գերմանիոյ հետ, որ սակայն կը զգուշանար՝ չվճարեցնելու համար Արարները։

1957 Դեկտեմբերին Պաւարիոյ մէջ

Յունուար 27ին Փարիզի մէջ վերջապէս կնքուած էր համաձայնագիր մը, որով վերջ կը դրուէր երկար պատերազմին։ Այսուհանդերձ, բախումները միշտ շարունակուեցան եւ համաձայնագրին բազմաթիւ կէտերը ցայսօր չգործադրուեցան։

Քիւնիկէր եւ Լը Տիւր Թօ, Ուաշինկթոնի եւ Հանոյի գլխաւոր բանալիները, վերջին չորս շաբաթներուն խօսակցութիւններ կ'ունենային Փարիզի մէջ։ Այս խօսակցութիւնները արդիւնք

դադարի տեսակցութիւն մը ունեցան իտալացի եւ Դաշնակցային Գերմանիոյ Պաշտպանութեան նախարարները — Շիմոն Փէրմէս եւ Ֆրանց Եոզէֆ Շթրաուս — եւ ստորագրեցին համաձայնագիր մը, որով Իսրայէլ Գերմանիոյ պիտի հայթայի փոքր գնդացիներ եւ նոսնաձիգներ ու փոխարէն պիտի ստանար հրատարակուած թուականներէ կառքեր։ 1964ին Գերմաններու կողմէ Իսրայէլ յանձնուած զէնքերու գումարը կը հասնէր 80 միլիոն տոլարի։

1960 Մարտ 14ին Նիւ Եորքի Ուաշինկթոն-Աթորիա պանդոկին մէջ առաջին անգամ տեսակցութիւն մը ունեցան Բոնրատ Ատենաւորքի եւ Իսրայէլի վարչապետ Պէն Կուրիոն, որոնք սնդիտանալ ձեւացուցին Փէրմէս-Շթրաուս դադարի համաձայնագիրը։ Պէն Կուրիոն 500 միլիոն տոլարի խոստում մը ստացաւ Ատենաւորքէն։

1965 Օգոստոսին դիւանագիտական յարաբերութիւններ հաստատուեցան Իսրայէլի եւ Դաշնակցային Գերմանիոյ միջեւ։ Օգոստոս 19ին Երուսաղէմ հասաւ դերման առաջին դեսպանը՝ Փաուլս՝ որ թշնամական ցոյցերու առարկայ դարձաւ Հրեաներուն կողմէ։

Միւս կողմէ Արարական Լիկայի անդամ տասը երկիրներ խզեցին իրենց դիւանագիտական յարաբերութիւնները Պոնի կառավարութեան հետ, որուն արաբական մայրաքաղաքներու դեսպանաւորները յարձակումներու ենթարկուեցան։

Գերմանեկալարայեան սիրալիր յարաբերութիւնները սեւ կէտեր արձանագրեցին Հրեաներու դահիճ Ալիմանի 1960 Մայիս 23ին Արժանիքին մէջ առեւանդումը, 1961 Ապրիլին Իսրայէլի մէջ գաղտնիութիւն եւ 1962 Յունիս մէկին կախաղան հանուելուն առթիւ։ Գերմանները կ'ուզէին, որ այլեւս չուզեցին հին յիշատակները։ 1972 Սեպտ. 5ին Միւնիխի Ողբիւրդականի հրէական պատուիրակութեան դէմ կատարուած եղեռնափորձը վերանորոգեց հին վէրքերը։

Վիլլի Պրանտի Իսրայէլ այցելութիւնը, հակառակ հատուկէնտ ցոյցերուն, ամբողջական Դաշնակցային Գերմանիոյ եւ Իսրայէլի բարեկամութիւնը։

Կոլտա Մէյրի Գերմանիա կատարելիք փութայցելութիւնը կոչուած է վերջնապէս քաւելու նացիներու դրոժած ցեղասպանական ոճիւրները։

Գերմանիա հատուց իր պարտքը Հրեաներուն։

տուին, քանի որ առջի օր 14 կէտերէ բաղկացած միացեալ զեկոյց մը ստորագրուեցաւ Մ. Նահանգներու, Հանոյի, Սայկոնի եւ Հարաւ. Վիէթնամի Առժամեայ կառավարութեան ներկայացուցիչներու կողմէ։ Ասիկա, իրականութեան մէջ, «վերահաստատումն» է Փարիզի Յունուար 27ի խաղաղութեան համաձայնագրի հիմնական կէտերուն։ Արդարեւ, անոնց գործադրութեան միջոցները յստակ կը ճշգրտին այս անգամ։

Միացեալ զեկոյցը կը ճշգրտէ, թէ զինագումար «լրիւ» գործադրութեան պէտք է դրուի Ուրբաթ օր, ամբողջ Հար. Վիէթնամի մէջ։ Երկու կողմերն ալ պէտք է ճշգրտեն իրենց հակակռիւն ենթակայ շըրջանները։ Գալով Հար. Վիէթնամի ապագայի հարցին, Ժողովուրդը ինք պիտի ճշգրտէ իր քաղաքական ապագան «ընդհանուր, իսկապէս ազատ եւ ժողովրդավարական ընտրութիւններու ճամբով» միջազգային հսկողութեան տակ։

Ուաշինկթոն յանձն կ'առնէ անմիջապէս դադարեցնել «օդային հետախուզական» գործողութիւնները Հիւս. Վիէթնամի վրայ։ Երեսուն օրուան ընթացքին ալ պէտք է անգործածելի դարձնէ Հիւս. Վիէթնամի նաւահանքիստներուն մէջ զետեղուած ականները։ Եւ, վերջապէս, պիտի վերսկսին տնտեսական ընդթի խօսակցութիւնները Հանոյի եւ Ուաշինկթոնի միջեւ։

Ինչ կը վերաբերի Քամպուժի եւ Լաոսի, միացեալ զեկոյցը կը դադարեցնէ յիշեցնելով, թէ պէտք է «բնականորէն» յարգուին Փարիզի Յունուար 27ի համաձայնագրին կէտերը։ Ասիկա կը նշանակէ Հանոյի ուժերու հեռացումը եւ ամերիկեան օդուժի ուժերու ներկայութիւնը դադարեցնելը։

ՔԱՆԻ ՍԵ ՏՈՂՈՎ

Ձիւ Արտաքին նախարարը Փարիզէն Պարսկաստան մեկնեցաւ եւ հոնկէ պիտի երթայ Փաքիստան։ Ձի Փենկ-Ֆէյ մեկնելէ առաջ տեսակցեցաւ Ֆրանսայի Արտաքին եւ Եւրոպական նախարարներուն հետ եւ այցելեց Էլիզէ։

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ կառավարութիւնը հանրաքուէի թուականը ճշգրտեց։ Յուլիս 29ին յոյն Ժողովուրդը հանրաքուէով պիտի ճշգրտէ իր դիրքը Թադաւորութեան ջնջումին եւ «խորհրդարանական ու հանրապետական նախագահական վարչակարգի» հաստատման համար։ Հոսմի մէջ Յու. նաստանի զահնկէց թադաւոր յայտարարեց Միլանոյի «Էփոքա» շաբաթաթերթին, թէ Ատլանտեան Ուխտը պէտք է քննէ Յունաստանի վիճակը, քանի որ սպաներու ձերբակալութեամբ ան այլեւս ի վիճակի չէ իր դերը ստանձնելու Ուխտին ներս։ Լոնտոն որոշեց ճանչնալ Յունաստանի Հանրապետութիւնը։

ԱՐԵՎԵԼԵԱՆ ԳԵՐՄԱՆԻՈՅ Խորհրդաւորանք միաձայնութեամբ վաւերացուց Դաշնակցային Գերմանիոյ հետ կնքուած համաձայնագիրը, որ ըստ Արեւելեան Գերմանիոյ Արտաքին նախարարին՝ Գերմանիոյ բաժանումը կը հաստատէ ընդմիշտ։

ՊԱՀԱՄԱ, որ 300 տարիէ ի վեր անդլիական տիրապետութեան տակ կը գրտնուէր, Յուլիս 10ին անկախ Պետութիւն կը դառնայ։

ԹԵՀՐԱՆԻ մէջ թմրեցուցիչի երեք մաքսանկնիւն գնդակահարուեցան։ Երկու տարուան մէջ 167 մաքսանկնիւ մահապատիժի ենթարկուած է։

ԻՍՐԱԵԼԻ Պաշտպանութեան նախարարը յայտարարեց, թէ Պէլլուրի գործողութիւններուն, Ապրիլ 10, քանի որ արար սպաննուած է, բոլորն ալ արձակագին։

ԵՐԵՎԱՆ (Արմէնփրէս, Յունիս 8-11)

ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏԱՐԱԿԱՆ ԹԵՐԹ ՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Մոսկուայի համալսարանի «Դրուժբա» թերթը թիւ մը նուիրած է Հայաստանի մասին։ Յօդուածագիրները մասնաւորապէս կը ներկայացնեն հայ երիտասարդական կեանքը Հայաստանի մէջ։

ՄԱՅԱԿՈՎՍԿԻԻ ՀԱՏԸՆՏԻՐԸ ՀԱՅԵՐԷՆ

«Հայաստան» հրատարակչականը լրջաբնուած է Վ. Մալախովսկիի հատընտիր հաւաքածոն, երկու հատորով։ Բանաստեղծին ծննդեան 80ամեակը պիտի յիշատակուի այս ամառ։ Անոր գործերը բազմաթիւ անգամ թարգմանուած են հայերէն։ Թարգմանողներն եղած են անցեալի Չարեց, Գէորգ Արով, Գ. Բորեան, Գ. Էմին, Պ. Միքայէլեան, Ս. Հրաչեան եւ ուրիշներ։

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

Մոսկուայէն Երեւան ժամանած է Մալեգի Սորհրդարանի պատուիրակութիւնը՝ գլխաւորութեամբ Մերակոյտի նախագահին։ Օղակայանին մէջ պատուիրակութեան անդամները դիմաւորուած են Հայաստանի Գերագոյն Խորհուրդի նախագահ Ա. Գապարեանի, Հայաստանի Գերագոյն Խորհուրդի նախագահու թեան քարտուղար Սվետլովայի, Երեւանի Գաղաքային Խորհուրդի գործադիր կոմիտէի նախագահ Գ. Հասարթեանի եւ պաշտօնական ուրիշ անձերու կողմէ։ Պատուիրակութեան անդամները Յու. նիս 10ին այցելած են մայրաքաղաքի տեսարժան վայրերը։

Ձեռք ձգուած տեղեկութիւններու հիման վրայ 96 հոգի ձերբակալուած է Իսրայէլի մէջ։ Ոմանք ազատ արձակուած են։ Պաղեստինցի արձակագին մը առջի օր Իսրայէլացի սպայ մը սպաննած է եւ վիրաւորած երեք զինուոր։ Պաղեստինցին, իր կարգին, սպաննուած է։

ԲՈՓԵՆՀԱՅԻ մէջ բացումը կատարուեցաւ Ատլանտեան Ուխտի նախարարական Խորհուրդի նստաշրջանին։ Ուխտի անդամ 15 երկիրներու Արտաքին նախարարները կը մասնակցին Ժողովին։ Օրակարգի գլխաւոր նիւթն է եւրոպական Պետութիւններու յարաբերութիւնները Մ. Նահանգներու հետ։ Եւրոպայի ամերիկեան ուժերու կրճատման հարցը կարեւոր տեղ կը գրաւէ օրակարգին մէջ։ Արդարեւ, բազմաթիւ երկիրներ զէմ են, որ ամերիկեան ուժեր հետանան Եւրոպայէ։

ՉԻՆԱՍՏԱՆԻ հիւսիսային շրջանները եւրաշտի մը վտանգին առջեւ կը գտնուին։ Անցեալ տարի եւս երաշտ տեղի ունեցած էր։

ՅՐԱՆՍԱՆ զեսպաններ նշանակեց Հանոյի եւ Սայկոնի մօտ։ Սայկոն իր դիւանագիտական յարաբերութիւնները խզած էր Փարիզի հետ 12 տարի առաջ։

ԴԱՇՆԱԿԱՅՍՏԻՆ ԳԵՐՄԱՆԻՈՅ ընդգրկմադրի կուսակցութեան Բրիտանիայ - Դեմոկրատ, նախագահ ընտրուեցաւ Բոհլ։ Նախկինը՝ Պարզէլ հրաժարած էր Մայիս 9ին։

Ն. ԱԴՈՆՑԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ



Արդի գիտությունը կը զարգանայ մեծ թափով, եւ ոեւէ մէկը չի զարմանար, եթէ երէկ իսկ հրատարակուած աշխատութիւնը այսօր հինցած կը թուի ըլլալ: Նիկողայոս Ադոնցի գործերուն հետ, սակայն, ճիշդ հակառակն է, որ կը կատարուի: Ժամանակը աւելի եւ աւելի կը բացայայտէ անոնց արժէքն ու նշանակութիւնը: Եւ տարօրինակ չէ, որ 1965ին անհրաժեշտութիւնը տեսուեցաւ վերհրատարակելու 20-30ական թուա-կաններուն անոր զբաժնէ հայ - բիւզանդական կապերու վերաբերեալ յօդուածները: 1970ին անգլերէն թարգմանութեամբ լոյս տեսաւ Ադոնցի գլուխ գործոցը՝ «Հայաստան Յուստինիանոսի դարաշրջ - ջանին»: Նոյն այդ աշխատութեան ուս-սերէն բնագիրը 1971ին վերհրատարակեց Երեսանի պետական համալսարանի հայա-գիտական կեդրոնը: Անհրաժեշտութիւնը պարզուեցաւ Փրանսերէն թարգմանել եւ վերստին հրատարակել անոր երկրորդ մեծ աշխատութիւնը՝ «Դիոնիսիոս Թրա-կացի եւ հայ մեկնիչները»: Վերջերս լոյս տեսաւ Ադոնցի յետ մահու հրատա-րակուած « Հայաստանի պատմութեան » (Ակունքներ, 10-6րդ դարերուն Ք. Ա.) հայերէն թարգմանութիւնը: Այս փաս-տերը ինքնին ապացոյց են Ադոնցի գոր-ծերու կենսունակութեան: Եւ իրօք, ա-նոր ժառանգութիւնը այն խորիմասերէն է, որոնց վրայ կը հիմնուի արդի հայա-գիտութիւնը:

Ադոնցի կարեւորագոյն աշխատութիւնը իրաւամբ կը համարուի «Հայաստան Յուստինիանոսի դարաշրջանին» ուսում-նասիրութիւնը: Այդ ծաւալուն գիրքին մէջ ան հանգամանօրէն ներկայացուցած է հին Հայաստանի աշխարհագրութիւնը, ցոյց տալով Կեդրոնական Հայաստանի եւ Բիւզանդական կայսրութեան կցուած հայկական շրջաններու զարգացման տար-բերութիւնը: Առաջին անգամ ան է, որ յստակ մէջտեղ զբաժնէ հայկական աւա-տասիրութեան հարցը, ցոյց տալով, որ անիկա միջազգային բնոյթ կրող պատ - մական երեւոյթ է, իսկ Հայաստանի նա-խարարական կառոյցը՝ անոր տեղական տարբերակը: Ադոնց իր աշխատութեան մէջ մանրամասն վերլուծած է նախարա-րական Հայաստանի ընկերային պատ - կերը՝ օգտագործելով ընդհանուր պատ-մութեան տուեալները՝ անով իսկ Հա - յաստանի ընկերային - սոցիալական զար-գացումը կապելով մարդկային հասարա-կութեան ընդհանուր պատմութեան հետ: Պատմագիրին երկրորդ մեծ գործը նը-ւիրուած է յոյն քերականագէտ Դիոնի-

սիոս Թրակացիի եւ անոր քերականու - թեան հայկական մեկնութիւններուն: Ա-դոնց ուսումնասիրած եւ հրատարակած է տասնեակ ձեռագիրներ, ցոյց տալով, թէ ինչ դեր կատարած է Դիոնիսիոս Թրակացիի աշխատութիւնը հայ քերա - կանական միտքին զարգացումին մէջ, թէ ինչպէս մեկնարանելով յունարէն քե-րականական գործը՝ հայ քերականագէտ-ները ինքնուրոյն մօտեցում ունեցած են: Դեկնիչները բառացի թարգմանած են Դիոնիսիոսի գործը՝ մէկ կողմէ ուղղու-թիւն տալով հայերէնի շարահիւսութեան եւ, միւս կողմէ, հարստացնելով լեզուի բառապաշարը, ստեղծելով բազմաթիւ բառեր, որոնց «չինծու» ծագումը այժմ կրնան կուսակէ միայն մասնագէտները (ենթադրութիւն, աուդանութիւն, մա - կանուն եւայլն):

Ադոնցի գիտական ուղին ճշգրտեցաւ ուսանողական տարիներուն, Ակադ. Ն. Մառի ղեկավարութեամբ: Ան ընտրած էր երկու ճիւղ՝ Հայագիտութիւն բառին լայն իմաստով եւ Բիւզանդագիտութիւն: Բիւզանդիոնի դերը հայ միջնադարու կեանքին մէջ մեծ է. մասամբ Բիւզան-դիոնէն է, որ Հայաստան եկած է քրիս-տոնէութիւնը եւ անոր հետ կապուած մշակոյթը. դարեր շարունակ Հա - յաստանի կարեւոր մասը գտնուած է բիւ-զանդական կայսրութեան տիրապետու - թեան տակ: Բիւզանդացի լուսնով, պէտք է հասկնալ տարբեր աղբիւրէ կազմուած հա-ւաքականութիւն մը, ուր հայ տարրը վերին աստիճանի կարեւոր տեղ կը զբա-ւէր: Հայեր կարելի էր տեսնել կայսե - րական դահլի վրայ եւ ապստամբ Պաւ-լիկեաններու շարքերու մէջ, մեծ զօրա-վարներու եւ զիտնականներու, բարձրաս-տիճան պաշտօնեաներու եւ հոգադործ գիւղացիներու մէջ: Քաղաքական, տըն-տեսական յարաբերութիւնները Հայաս - տանի եւ Բիւզանդիոնի միջեւ շատ բարդ էին, մշակութային փոխադարձ ազդե - ցութիւնները՝ բազմակողմանի: Իրբեւ այդ երեւոյթի անմիջական հետեւեմ, հայկական գրաւոր աղբիւրները կարեւոր տեղեկութիւններ կը բովանդակեն Բիւ-զանդիոնի վերաբերեալ, ինչպէս նաեւ բիւզանդականները՝ Հայաստանի եւ Հա - յերու մասին: Պարզ է, որ նմանօրինակ հարցերը կրնայ լուծել այն, որ թէ՛ հա-յագէտ եւ թէ՛ բիւզանդագէտ է:

Ն. Ադոնցի գործերուն ճնշող մեծա-մասնութիւնը, այս ձեւով, հայ - բիւ-զանդական բնոյթ կը կրէ: «Հայաստան Յուստինիանոսի դարաշրջանին» մենա - գրութեան մէջ Ադոնց յաջողած է ի մի

բերել բազմաբնու աղբիւրներու տուեալ-ները եւ ամբողջական պատկերացումը կատարել, թէ ինչպէս քանի մը հարիւր-ամեակ Բիւզանդիոն կը ձգտէր իր կադ-մին մէջ մտցնել Հայաստանը եւ թէ՛ այդ պատճառով բարդ յարաբերութիւններ ստեղծուած են կայսրութեան եւ Հայե-րու միջեւ:

20-30ական թուականներուն Ն. Ադոնց հրատարակեց շարք մը յօդուածներ, ո-րոնցմով լուսարանեց հայ տարրին դերը կայսրութեան մէջ: Արար, այնուհետեւ սեղճուք արշաւանքներու հետեւանքով Հայերու ստուար զանգուածներ հար - կադրաբար լքեցին իրենց հայրենիքը եւ հաստատուեցան Բիւզանդիոն: Ն. Ադոնց յաջողած է լուսարանել այդ ընտանիք-ներուն տոհմաբանութիւնը, ցոյց տա - լով, որ կնիքի վրայ պահպանուած Մա-խիտար անունը հայկական Միխիթարն է, Վրախալիս կամ Վախրաւմա անունին տակ կային Վախրաւմերը, Սախալիտը Սահակն է:

Անշուշտ, բիւզանդացի այս կամ այն գործիչին հայկական ծագումը չի բա - ցատրեր հայ - բիւզանդական յարաբերու-թիւններուն էութիւնը: Բայց երբ մեր առջեւ պատմական դէմքերու շարք մը երեւան կուգայ՝ Ն. Ադոնց կը պարզէ անոնց նախարարական տոհմերը եւ կը յաջողի ճշդել այն դատարները, ուրիշ սերած են անոնք: Մամիկոնեանները, Կամսարականները, Բագրատունիները , Արծրունիները յաջողած են գրաւել կայ-սերական դահլ կամ գոնէ ձգտիլ անոր, սուած են մեծ զօրավարներ, քաղաքական գործիչներ եւ զիտնականներ, կազմած են յատուկ խաւ մը բիւզանդական հասա-րակութեան մէջ: Այս ձեւով ուսումնա-սիրութեան առարկայ կը դառնայ ոչ թէ՛ այս կամ այն ազնուականին ծագումը, այլ պատմական երեւոյթը:

Սխալ պիտի ըլլար, սակայն, են - թաղրել, թէ Բիւզանդիոնի Հայերը կը պատկանէին միայն ազնուականութեան: Կայսրութեան արեւելեան ծայրամասե - րուն մէջ մնացած են հայ գիւղացիներ - թեան հոծ զանգուածներ. Հայերը կը ծա-ռայէին իրբեւ պարզ պիտուր եւ, ինչպէս ըսինք, «Բիւզանդացի» հաւաքական ա-նունը նկատի ունի նաեւ Հայերը:

Ն. Ադոնցի կարգ մը աշխատութիւն - ները նուիրուած են բանասիրական հար-ցերուն: Ան երկար տարիներ զբաղած է միջնադարեան հեղինակներով՝ Մ. խո - բենացի, Սերէոս, Եգնիկ Կողբացի, Փաւ-ստոս Բուզանդ, Կորիւն, Մովսէս Կա - զանկատուացի: Լեզուաբանական փայ - լուն կը թուութեան տէր՝ ան անընդար-ձած է Հայոց լեզուի ուսումնասիրու - թեան՝ գրաբար եւ արդի հայերէն: Ի-րենց նշանակութիւնը չեն կորսնցուցած առասպելաբանութեան նուիրուած անոր գործերը:

Ն. Ադոնց, անշուշտ, Ի. դարու մեծա-դոյն հայագէտներէն է, անոր գիտական ժառանգութիւնը կը շարունակէ պահպա-նել իր արժէքն ու թարմութիւնը: Իր

լաւագոյն աշխատութիւններուն մէջ բա - ցայայտած է օրինաչափութիւններ, ո-րոնք դուրս կուգան տուեալ մասնաւոր հարցին լուծումի սահմաններէն եւ կը ստանան ընդհանուր նշանակութիւն: Ան չէր խուսափեր վարկածներէ, բայց, ա-ռաջարկելով այս կամ այն վարկածը, կը ձգտէր անոր բազմակողմանի հիմնաւոր - րումին:

Ադոնցի վիճակուեցաւ ուղիղ ճամբով մօտենալ իր մասնագիտութեան: Դժուար չէ պատկերացնել, թէ ինչ մեծ տպա -ւորութիւն գործած է Տաթևի վանքը Բռնակոթ վիւղէն դուրս ելած, ծխական դպրոցի աշակերտին վրայ: Վանքը սէր եւ հետաքրքրութիւն արթնցուց անոր մօտ դէպի Հայաստանի անցեալը: Դէռդե-կան ձեմարանէն ստացաւ գրաբարի եւ աշխարհագրարի անհրաժեշտ դիտելիք - ներ, Թիֆլիզի գիմնադիոնին մէջ սորվե-ցաւ ռուսերէն: Պետերբուրգի համալսա-րանի երկու բաժիններն ալ՝ թէ՛ արեւել-եան լեզուներուն, թէ՛ պատմաբանասի-րականը Ադոնցի ուսանողութեան տա - րիներուն շատ բարձր մակարդակի վրայ կը դասուէին, իսկ երիտասարդին վի-ճակուեցաւ մեծ ուսուցիչներ ունենալ: Պետերբուրգի համալսարանէն ետք առեն մը իր ուսումը շարունակեց Եւրոպայի մէջ: Ադոնց ստացաւ փայլուն ուսում թէ՛ իրբեւ պատմաբան, թէ՛ իրբեւ բա - նասէր եւ թէ՛ իրբեւ լեզուաբան:

Սխալ պիտի ըլլար, սակայն, անոր յա-ջողութիւնները բացատրել միայն անձ - նական յատկութիւններով: Նիկողայոս Ադոնց իրբեւ պատմաբան - բանասէր ու լեզուաբան կազմաւորուած է այն տա-րիներուն, երբ անոր ընտրած ճիւղերը՝ կովկասագիտութիւնը եւ Բիւզանդագի - տութիւնը վերելք կ'արձանագրէին: Հա-յոց անցեալը՝ պատմութիւնն ու մշա - կոյթը, կը դառնային բազմակողմանի վերլուծութեան առարկայ: Փաստօրէն այդ շրջանէն է, որ հայ ժողովուրդին պատմութիւնը սկսած է նկատուիլ ընդ - հանուր պատմութեան մէկ երեսը: Մեծ հարցերը մեծ դէմքեր կը պահանջէին, ինչպէս որ եղած են Ն. Մառ, Ն. Ադոնց, յետագային՝ Յ. Օրբելի: Ն. Ադոնց այդ շրջանի ծնունդն է, միաժամանակ ան այն դէմքերէն է, որոնք ապահովեցին այդ ժամանակաշրջանի հայագիտական վերելքը:

Կ. ԵՈՒԶԲԱՇԵԱՆ

ԿՏԱԿՆ ԷՐ

ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ

Գրեց՝ ԱՐՇԱԽԻՐ ՇԻՐԱԿԵԱՆ

Ա. ՄԱՍ

ՀԱՅ ՏՈՒՄԱԹԻԿԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆՍ

— Եղբայր, ասանկ բաներու ինչ պէտք կար... Ինծի ըսէիր, անձամբ կը հանէի եւ ձեզի կը յանձնէի:

Երկրորդ դէպքը, որուն շնորհիւ աւելի վստահութիւն չահեցայ, Բանկաթիի դէպքն էր երբ Չենկիւրցի Արշաւիրին հետ գէնքի փոխադրութեան ընթացքին, ծանր ընդհարում մը ունեցալ թուրք ոս-տիկանութեան հետ: Այս մասին գրած եմ Կրակի Միլիտարիւն գլուխին տակ: Մի-այն ըսեմ թէ ընկերս արտակարգ կերպով անվախ ու յանդուգն էր. պարզ հօգիով

կտրիճ մը, որ կը խնդար աւելորդապաշ-տութիւններու եւ նախապաշարումներու վրայ. գէնքերը շարժած կը յառաջանար այնպիսի պողարիւնով, որ կարծես կողով մը խաղող կը տանէր տուն. մինչ, կը յի-շեմ, դող մը բռնած էր զիս եւ պաղա-րիւսս գտայ այն պահուն, երբ ոստի-կանները կրակ բացին մեր վրայ: Արշա-ւիրը ճինի պէս անյայտացած էր, մինչ ես կռիւը կը շարունակէի:

Երրորդ նկատելի պարագան մեր ըն-տանեկան՝ ընկերական շրջանակին տուած վստահութիւնն էր. մեր տունը այս ան-գամ բաց օձախ մըն էր յեղափոխական-ներու եւ հին փախստականներու. շատե-րուն ծառայած էի եւ բոլորն ալ գիտէին թէ արթուն եմ, ի հարկին խոհեմ, դիւ-րաւ չեմ խաբուիլ եւ վտանգները արհա-մարհել գիտեմ:

Տակաւին կայ թուրք զինուորներէն զէնք գտնելու պարագան, որ օր մը մաս-նաւորաբար շատ հետաքրքրական ձեւ մը առաւ: Չեմ յիշեր ինչպէս եւ որու միջո-ցաւ կամ շնորհիւ, մեր զինահաւաք խում-րը կապ հաստատած էր խաղաղ զբո-նուող Թուրք զինուորներու հետ. անոնք հաւանած էին երբեմն մեզի զէնք ծախել, պէտք է ըսել, շատ աման զինքերով:

Իրե՞նցն էր թէ մթերանոցներէն պող - նալով կը բերէին. մեզ հետաքրքրող պա-րագան աս էր որ բերէին: Գիշեր մը 12 հօգիով ճամբայ ելանք ձախառամարտի

չէնքէն, Գալուստին առաջնորդութեամբ: Թեւին տակ պայուսակ մը, որ թղթա - գրամներով լեցուն էր: Ժամագրավայրը թրքական գերեզմանատունն էր: Երբ հոն հասանք լուսինը լուսաւորած էր ամէն կողմ. մուրքը պիտի նախընտրէինք, բայց ալ չէինք կրնար ետ դառնալ: Գործը վը-տանգաւոր կը դառնէինք, նկատելով որ զինուորները կրնան մեզի խաղի բերել. մեր ընկերներէն երկուքը, ամէնէն պո-ռտախիսանքը, վախով բռնուած, սկսան բաներ մը փոփոխլ ու արտոսալ. քովեր - նին դացի եւ հասկցայ կացութիւնը. Գա-լուստին ըսի, արտօնեց որ վերադառնան: Արդէն մէջերնիս կար չենկիւրցի Արշա-ւիրը, որ վտանգի պահուն կրնար բանակ մը կեցնել: Մէկ քանի պակաս բան մը չէր նշանակեր:

Գերեզմանատունէն քանի մը քայլ առդին տղաքը կանգ առին. յառաջացայ եւ ա-րագ արագ ամէն կողմ սկսայ խուզարկել եւ ապահովուելէ վերջ վերադարձայ ու տղաքը մահիկի ձեւով տեղաւորուեցան գերեզմանաքարերու ետին: Գալուստին հետ յառաջացանք. քիչ վերջ 10-12 զին-ուոր հասան եւ զէնքերը թափեցին մեր առջեւ. նոյն-նոր զէնքեր, տուփերով փամփուշտներ. այդ պահուն մեր տղաքը կրնան զլուխին վեր կը հանէին, հաս-կըցնելու համար որ միշտի չենք ու Թուրքերուն ալ հաւատացուցած էինք թէ յիսուն հօգիով եկած ենք. զրեթէ սա-

կարկուծիւն չկար. կանխաւ համաձայ-նած էինք, բայց երբեմն զինուոր մը ա-ռարկութիւն մը կ'ընէր, աւելի բան մը փրցնելու գիտումով: Դրամը յանձնելու վրայ էինք, երբ անդադարձանք որ քիչ անդին հնդիկ պահակ շոկատ մը կ'անցնի: Գիշերային հակողութիւնը կատարելով: Ամէնքս ալ, Հայերս եւ Թուրք զինուոր - ները անմիջապէս դետին նետուեցանք, գերեզմանաքարերու մէջտեղ. եթէ պա - հակազօրք մեզ տեսնէր, աւելորդ է ը - սել, ահագին խնդիւր պիտի ունենայինք: Վերջապէս դետինը 100-120 հատ մեծ ու փոքր զէնքեր փուռած էին. ու տասնեակ մը քաղաքացի եւ տասնեակ մը զինուոր, ինչ գործ ունէին այդ ամայի վայրը, բնականաբար մեզ ձերբակալելու եւ տա-նելու փորձ պիտի ընէին. պիտի փախ-չէինք թէ զիմադրելով կռիւը աչք պի-տի առնէինք. այս պարագան չէր նախա-տեսուած, սակայն կը յիշեմ որ այդ մի-ջոցին երկար բարակ չէինք մաղեր, հե-տեւաբար լայն շուռ մը առինք, եր շեռ-դիկները առանց մեղ տեսնելու անհետա-ցան: Տնտնալու առենը չէր. Գալուստ փոխարժէքը վճարեց եւ ձեռք ձեռքի տը-ւած, զէնքերը արագօրէն փոխադրեցինք գիւղ, մեր վստահելի ընկերներէն հա - մեստ Հայու մը տունը, ուրիշ ալ ասելի վերջ բաժնեցինք Վերի Մարմինն մատ - նանաւած վայրերը:

(37 - Ետք.)

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Այլրի Տիկին Գ. Յովհաննէսեան, իր զաւակներն ու թոռը հոգեհանգստեան պաշտօն կատարել կուտան իրենց ամուսնոյն, հօր եւ մեծ հօր՝

ԳԱՌՆԻԿ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻ

մահուան երկրորդ տարեգարձին, ինչ - պէս նաեւ իրենց եղբոր եւ մօրեղբոր՝

ԲԱՐԹՈՂ ՄԻՆԱՍԵԱՆԻ

մահուան տարեիցին առթիւ, այս Կիրակի առաւօտ, Յունիս 17, Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին:

Ի դիտութիւն ողբացեալներուն յիշատակը յարգողներուն:

×

Տիկին Մարգրիտ Ուզունեան կը ծանուցանէ, թէ այս Կիրակի (17 Յունիս), Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ Մայր եկեղեցւոյ մէջ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի իր քրոջ՝

ՏԻԿԻՆ ԱՍԹՐԱ ԹՈՐՈՍԵԱՆԻ

հոգւոյն համար, անոր մահուան քառասունքին առիթով:

×

Մառի Ուլուհոնեանի մահուան քառասունքին հոգեհանգստեան պաշտօն կը մատուցուի 17 Յունիս, Կիրակի, ժամը 10-30ին, Սամուէլ Մուրատեան վարժարանին մատարան մէջ, 26, Ռիւ Թրուայոն: Յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ ըլլալ:

ՔՍԱՆ ԿԱՆԱՂԱՆՆԵՐՈՒ

58ԴԻ ՏԱՐԵԴԱՐՁԸ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան փարիզի եւ չրջանի մարմինը հոգեհանգստեան պաշտօն կատարել կուտայ Կիրակի Յունիս 17, առաւօտ Փարիզի Հայոց Մայր եկեղեցին:

1915 Յունիս 15ին Պոլսոյ Սուլթան Պալատի իրաւարարին վրայ կախաղան բարձրացուած քսան հերոսներու հոգիներուն համար: Նոյնպէս Հայ ազատա - գրութեան համար Կեսարիոյ կախաղան - ներուն վրայ եւ Վանի բանտին մէջ նա - հատակուած հերոսներու յիշատակին:

Հերոսներուն յիշատակը յարգող բոլոր հայրենակիցները կը հրաւիրուին ներկայ դառուիլ արարողութեան:

ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԻՍ

Կազմակերպուած Վալանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Հոգաբարձութեան կողմէ ՇԱԹՕ ՄՈՆՏԻԻ շքեղ անտառին մէջ, Կիրակի Յունիս 17ին:

Երթեւեկը ապահովուած, Պարսմեանին մօտէն, ժամը 13-30ին, Ռոմանի ճամբուն վրայ «Թիր-օ-Փիթոն»ին դիմացի ալ ճամբան:

Ա Զ Դ

Achète monnaies étrangères en bronze et argent. Lot toute quantité. Faire offre au journal qui transmettra.

ՀԱՅԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ

ՅԻՐԱՍՏԱԿԱՆ ՀԵՌԱՏԵՍԻԼԷՆ

Կիրակի (Յունիս 17) առաւօտ ժամը 9-30ին հեռատեսիլի Ա. կայանէն հայկ. յայտադիր:

Ամենայն Հայոց Կաթողիկոս - Հ. Ռոմանօ եւ Փրոֆ. Իւթիւճեան:

Հ. Յ. Գ.

ՇԱԽԻԼ. — Հ. Յ. Դ. « Արդութեան » խումբի ժողովը Շարաթ (Յունիս 16) երեկոյ ժամը 21ին, սովորական հաւաքատեղին:

×

ՍԱՐՍԷԼ - ԱՌՆՈՒՎԻԼ. — Հ. Յ. Դ. «Վարդան» ենթակոմիտէի հերթական ժողովը Ուրբաթ Յունիս 22 ժամը 21ին, սովորական հաւաքատեղին:

×

ՎԻԷՆ. — Հ. Յ. Դ. Անի կոմիտէի ընկերական ընդհ. ժողովը տեղի կ'ունենայ Յունիս 16ի Շարաթ երեկոյ ժամը 8-30ին Գ. Իփէկեան ակումբը: Բոլոր ընկերներու ներկայութիւնը պարտաւորիչ է: Կը խընդրուի ճշգրտագին ըլլալ:

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ

ՄՐՑԱՆԱԿԱՐԱՇԵՈՒԹԻՒՆ

ԵՒ ԴԱՇՏԱՀԱՆԴԻՍ

Հովանաւորութեամբ

ՍԵՐՈՎԻԷ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

Տեղի կ'ունենայ 24 Յունիս Կիրակի օր, ժամը 15ին

Հայկական եւ եւրոպական պարեր երգ. Պր. Պետիկեանէ, ընկերակցու - թեամբ իր նուագախումբին

Հաղորդակցութեան միջոցներ. — Էկլիպսը Փանթէնէն առեւ 147 Թիւ օթոպիւսը:

ԾՈՎԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ

ԵՒ ԶԱՇ

Հայ Կարմիր խաչի օղափոխութեան կայանին մէջ, Կիրակի, 17 Յունիս:

ՄԵԿՆՈՒՄ. —

Ժամը 7ին, Առնուիլ, Ալընիւ Հանրի Պարպիւս 7-15ին, Քաֆէ Գուրվէօր, Կառ տիւ Նոռ 7-30ին, Հայ Կարմիր խաչի կեդրոնա - տեղիէն, 15 Ռիւ Ժան Կուժոն, Փարիզ Տրդ 7-45ին, Պուա Բոլոմպ, Փլաս Պուր - կիլեան:

Կէսօրին շամփուրով խորոված կայանին ճաշարանին մէջ:

Այցելութիւններ՝ համալսարհային Բ. պատերազմի ցամաքահանման տեսարժան վայրերը:

Մասնակցութիւն 50 ֆր.

Արձանագրութեան համար դիմել. —

ԱՌՆՈՒՎԻԼ. — Տիկ. Տ. Հաթապեան

եւ Պ. Ն. Նիկողոսեան:

ՍԱՐՍԷԼ. — Տիկ. Ս. Թաճեան

ԱՆՅՈՐՎԻԼ. — Տիկ. Ա. Մանուկեան եւ

Տիկ. Կ. Կարապետեան

ՊՈՒԱ ՔՈՂՈՄՊ. — Տիկ. Մ. Առաքել - եան եւ Տիկ. Հ. Վէլիբեան

ՓԱՐԻԶ Հեռաձայնէլ՝

Տիկ. Ալիքսանեան 720-08-20

Տիկ. Սապաղ 924-51-55

Տիկ. Խոսէպէտեան 924-38-54

Ժամը 15ին վերջ 990-66-28

Imprimé sur les Presses

DU JOURNAL « HARATCH »

83, Rue d'Hauteville, Paris (10e)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՀՌԶԱԿՄԱՆ ՏԱՐԵԴԱՐՁ

ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ

ՀԱՅ ԴԱՏԻ ՕՐ

ՄԷՆ - ՇԱՄՈՆԻ ՄԷՁ

Նախաձեռնութեամբ Հ.Յ.Դ. Անտոք-Վարուժան կոմիտէութեան և Նոր Սերունդի Կիրակի, Յունիս 17, ժամը 16ին 24 Institution St. Marie, Foyer des Jeunes Route du Coin (après le Stade)

Կը նախագահէ ՍԵՐՈՎԷ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

Կը խօսի ԿԱՐՕ ՅՈՎՍԷՓԵԱՆ

Հայկական նուագախումբ, գեղարուեստական բաժին -- Խնդոյֆ ՄՈՒՏԳԸ ԱԶԱՏ Է

×

ԽՐԱԽԱՆԻՔ ԱՆՅՈՐՎԻԼԻ ՄԷՁ

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՓԱՌԱՊԱՆԾ ՀԱԿԱՏԱՄԱՐՏԻՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՌԶԱԿՄԱՆ 55ԴԻ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՒ Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. «Ս. Միմասեան» ենթակոմիտէի Մասնակցութեամբ Հ. Յ. Դ. Նոր Սերունդին եւ Ֆր. Կապոյտ Խաչին Շարաթ, Յունիս 16, ժամը 21ին մինչեւ լոյս, Սալ տէ ֆէր (Ալֆորվիլ) 22 Ռիւ Վոլթէո

Կը խօսի՝ ընկ. ԱՌԼԷՆ ՓԱՓԱԶԵԱՆ Գեղարուեստական բաժնին կը մասնակցի Հ. Յ. Դ. Նոր Սերունդի «ՆԱՅԻՐԻ» պարախումբը ՄԻՆԶԵԻ ԼՈՅՍ ՊԱՐ, ԵՐԳ ԵՒ ԽԱՂԵՐ LES ARMENIAN'S SUNSHINE նուագախումբին առաջնորդութեամբ

ՇԱՄՓՈՒՐՈՎ, ԽՈՐՈՎԱԾ

ԱՌԱՏ ԿԵՐՈՒԹՈՒՄ

×

ԻՍԻՒ ՄԷՁ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. «Զաւարեան կոմիտէի եւ մասնակցութեամբ Հ. Յ. Դ. Նոր Սերունդի եւ Կապոյտ Խաչի մասնաճիւղին Հովանաւորութեամբ Հայ Դատի Յանձնախումբի

Կիրակի, Յունիս 17 ժամը 17ին մինչեւ 24

Իսիւ Հայ Մշակոյթի Տան մէջ, 45 Ռիւ տը լա Տէֆանս

Կը նախագահէ՝ ընկ. ՀՐԱՉ ՀԱՆՏԱԼԵԱՆ Կը խօսի՝ ընկ. ՀՐԱՆԴ ԱԿՈՆԱՅԵԱՆ ԳԵՂԱՐՈՒՆԵՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Օր. Շաքէ Պէնկեան, Տիկին Ժ. Դալլաճեան, Ս. Մուրատեան, Մ. Քրտուեան՝ երգ եւ թառ

Ծախքերու մասնակցութիւն 25 ֆրանկ

Le Voyage en Grèce

n'hésitez pas, adressez-vous à
Mayda BERBERIAN

6, Rue de l'Echelle, PARIS (1er)

Tél. : 260-30-20 et 260-67-34

de 9 h. à 19 h. tous les jours

Spécialiste de Voyages en Grèce, Orient, Moyen-Orient (Liban, Egypte, etc.)
Les voyages à partir de 395 F.

2ԵՐ ԺԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Դիմեցէ՛ք ՄԱՅՏԱ ՊԵՐԲԵՐԻԱՆԻ


LE VOYAGE EN GRECE

Ամէն օր ժամը 9ին 19

Ճամբորդութիւններ դէպի Յունաստան, Ալբանիա, Եգիպտոս, Լիբանան
395 ֆր.էն ՍԿՍԵԼ

Տեսողութեան եւ Լսողութեան Ձեր բոլոր հարցերուն համար Մի՛ Վարանիք ԱՆՏՐԷ ԵՒ ՏԱՆԻԷԼԸ ՀԱՍԲԱՆԻԱՆ

POUR TOUS VOS PROBLEMES DE
VUE ET D'AUDITION



ANDRÉ & DANIELLE HASBANIAN

Opticiens diplômés de Paris
Acousticiens diplômés de la Faculté de
Médecine de Marseille

Vous font part de l'ouverture d'un magasin d'optique et laboratoire de surdité

- Վ Ա Լ Ա Ն Ս - 60, Rue Madier de Montjau
Tél. : 43-56-23 26000 VALENCE

L'ENSEMBLE D'INSTRUMENTS TRADITIONNELS ARMENIENS

SAYAT-NOVA

DE PARIS

à l'Olympia

Le Lundi 18 Juin 1973 à 21 heures 30

à l'occasion d'un Musicorama Hootenanny exceptionnel avec le concours d'Europe No 1, dans un programme de folklore International et de folk song.

Réservations habituelles à l'Olympia

Billets à tarifs réduits chez M. Sourénian 7, rue Rollin, 75005 Paris

Tél. : 325-04-13 et 033-44-62

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ԳԵՐՄԱՆԻԱ
ԵՐԵՎ ԵՒ ԱՅՍՈՐ

— 0 —

Քառասուն տարի անցաւ այն օրէն ի վեր, երբ Աստուծոյ Հիթլեր իշխանութիւնը դրական Գերմանիոյ մէջ, աշխարհակազմը իր հիմնած Ազգային — Ընկերակցական (Նացի) կուսակցութեան:

1933ը վճռական դարձակէտ մը կազմեց Եւրոպայի ժամանակակից պատմութեան մէջ:

Առաջին աշխարհամարտի բացած վերջերս չէին բուժուած դեռ բոլորովին: Հաշտութիւն կնքուած էր յաղթական դաշակիցներու եւ պարտուած կողմերու միջեւ: Սակայն խախտու հիմերու վրայ էր դրուած խաղաղութիւնը:

Կայսրութիւնը փոխարինուած էր հանրապետական վարչաձեւով Գերմանիոյ մէջ: Խախտուած սկզբնական շրջանին հակում կար դէպի ընկերակցութիւն: Վայմարի Սահմանադրութիւնը ժողովրդական սկզբունքները կ'որդեգրէր: Ընկերակցական մը Հանրապետութեան նախագահ կը դառնար:

Սակայն չափ չանցած զօրապաշտ Գերմանիոյ ժառանգորդները դործելու ազատ սպարէզ կը գտնէին: Միւնխի մէջ կը դարբնուէր փոխ-վրէժի ոգիով խանդաւան շարժում մը, որ հետզհետէ պիտի ծաւալէր:

Հանրապետութեան նախագահ կը դառնար առաջին աշխարհամարտի ոգով — կան հանձարներէն մատուցող Հինդէն — Կուրի:

Վերսալի դաշնագիրը կը բռնաբար — ուէր: Դաշնակիցները պայմանաւորեցին առաջ կը պարպէին Հոկտեմբերի դրական հոգաւորութիւնը եւ կը հրաժարէին պատերազմական տուգանքի իրենց պահանջներէն, Մ. Նահանգներու ճնշումով:

Հիթլեր 1936ին կը գրաւէր Ռուրի ճարտարութեամբ հարուստ շրջանը: 1938 Մարտ 11ին կը գրաւէր Աւստրիան եւ կը կազմէր մեծ Գերմանիան, որուն սահմանները աւելի կ'ընդարձակէր՝ իրեն հետեւանք նոյն տարուան Սեպտեմբերին Անգլիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ եւ Գերմանիոյ միջեւ Միւնխի մէջ կնքուած համաձայնագրին: Չեխոսլովակիոյ Զիւ — տէթներու շրջանը կը միացուէր մեծ Գերմանիոյ:

Դաշնակիցները իրեն քաղաքական նախադիր կը գտնէին Չեխոսլովակիան, յուսալով փրկել խաղաղութիւնը եւ յազուրդ տալ Նացի Գերմանիոյ, որ շարունակ «կենսական տարածութիւն» կը պահանջէր:

Միւնխի անձնատուութիւնը ապացոյց մըն էր երէկի յաղթական դաշնակիցներու տկարութեան եւ անվճռականութեան:

Միջդաշնակցային մրցակցութիւնը, մասնաւորաբար Մեծ Բրիտանիոյ նախաձեռնող դերը հանդէպ Ֆրանսայի՝ պատճառ էին դարձած Գերմանիոյ աստիճանական զօրացման եւ սպառազինութեան:

Միւնխի տարի մը չանցած, 1939 Օգոստոս 23ին Հիթլեր եւ Սթալին կը դաշնակցէին: Արեւելքէն թիկունքը ապահովել վերջ, Նացի Գերմանիա Սեպտեմբեր մէկին կը յարձակէր Լեհաստանի վրայ, որ անգամ մը եւս կըրթնուէր իր երկու հզօր հարեւաններուն՝ Գերմանիոյ եւ Ռուսիոյ միջեւ:

Կը պայթէր երկրորդ աշխարհամարտը: Դիւրին յաղթանակներէն չփախած՝ Հիթլեր խզելով Մոսկուայի հետ կնքած

ՕՐՈՒԱՆ ԴԵՊԻՔԵՐԸ

ԼԻԲԱՆԱՆ

— 0 —

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՆՈՐ ՏԱԳԵԱՊ

Լիբանանի վարչապետը՝ Ամին Հաֆէզը, կրկին իր հրաժարականը ներկայացուց նախագահին: Ծանօթ է, որ Պէյրութի խորհրդարանը դործողութիւններէն ետք տեղի ունեցած բուռն բախումներու հետեւանքով՝ Պաղեստինցիներու եւ լիբանանեան բանակի միջեւ, Ամին Հաֆէզը, որ իր դահլիճը կազմած էր Ապրիլ 25ին, իր առաջին հրաժարականը ներկայացուցած էր: Յետոյ կրկին պաշտօնի կոչուած էր:

Ամին Հաֆէզի հրաժարումին պատճառն այն է, որ Սիւննի մահմետական առաջնորդները, ինչպէս Քարամէ եւ Սա-

րաբեկամական դաշնագիրը, 1941 Յունիս 22ին կը յարձակէր խորհրդային Միւր — թեան վրայ:

1941 Դեկտ. 7ին Գերմանիոյ դաշնակից ծափոն յանկարծակի յարձակելով Փրըլ — Հարպլերի վրայ, կը փճացնէր ամերիկեան նաւատորմը:

Պատերազմը իսկապէս կը դառնար համաշխարհային:

Գերմանիա եւ իր դաշնակիցները ի վերջոյ պարտուելով, առանց պայմանի անձնա — տուր կ'ըլլային:

Մինչ Ամերիկացիներն ու Անգլիացիները յաղթանակէն վերջ կը պարպէին Գերմանիոյ դրական հոգաւորութիւնը, Ռուսները տուեալով կ'ըլլային արեւելեան Գերմանիոյ մէջ: Պերլին կը գրաւուէր Ամերիկացիներու, Ֆրանսացիներու, Անգլիացիներու եւ Ռուսներու կողմէ: Այս վերջինները յետագային «ամօթի պատ»ով մը արեւելեան Պերլինը կը դառնէին արեւմտեանէն:

Երկու մասի բաժնուած է Գերմանիա 1949ին ի վեր: Արեւելեանը՝ «Գերմանիոյ Դեմոկրատ Հանրապետութիւն»՝ ունի 108.000 քառ. քիլմ. տարածութիւն եւ 17.960.000 բնակիչ: Մայրաքաղաքն է Արեւելեան Պերլին:

Արեւմտեանը կը կոչուի «Գերմանիոյ Դաշնակցային Հանրապետութիւն»: Տարածութիւնն է 248.000 քառ. քիլմ., բնակչութիւնը՝ շուրջ 60 միլիոն: Մայրաքաղաքն է Պոնն, Հոկտեմբերի վրայ:

1969ին ի վեր Դաշնակցային Գերմանիոյ իշխանութեան գլուխն են անցած Սոցիալ — Դեմոկրատները՝ աշխարհ — թեանքը Ազատական կուսակցութեան:

Նախարարապետն է ընկերակցական Վիլլի Պրանտ, որուն Իսրայէլ այցելու — թիւնը պատմական դէպք մըն է Գերմանիոյ տարեգրութեանց մէջ:

Քառասուն տարի առաջ օրուան գերման իշխանութիւնները իրենց ներքին քաղաքականութեան հիմնական նպատակներէն մէկը կը դարձնէին հալածանքը Հրեաներուն դէմ: Պատերազմի օրերուն վայրագ միջոցներով կը կոտորէին զանոնք, արժանանալով «ցեղասպան» մականորդին:

Այսօր Վիլլի Պրանտ Իսրայէլ կ'երթայ՝ խոնարհելու համար նահատակներու յուշարձանին առջեւ, ինչպէս երէկ ծունկի էր եկած վարչապետի հրեայ զոհերու յիշատակին առջեւ:

Ո՛ր էք թուրք դահիճներ:

ՀՐԱՆՏ — ՍԱՄՈՒԷԼ

լամ «տկար անձ» մը կը նկատեն հրաժարել վարչապետը: Արդարեւ, Սիւննի համայնքի պետերը կը գտնեն, որ Պաղեստինցիներու եւ լիբանանեան բանակի բախումներու ժամանակ նախագահը, որ Մարունի քրիստոնեայ է, մինակը կառավարած է: Ֆետայիներու վրայ կրակելու հրամանը տուած է առանց կարծիքն առնելու Ամին Հաֆէզի, որ այդ օրերուն հրաժարած էր: Ճշդեմք, որ Հաֆէզ Սիւննի է: Արդէն վարչապետի պաշտօնը Սիւննի մահմետականներու վիճակուած է:

Այս պատճառով է, որ Երեւանի օրուան խորհրդարանական նիստին, ուր վստահութեան քուէ պէտք է տրուէր Ամին Հաֆէզի նոր դահլիճին, չեն մասնակցած Սիւննի երեսփոխանները, որով մեծամասնութիւն չէր դոյացած:

Դէտերը կը նկատեն, որ հարցը միջհամայնական տաղանայի բնոյթ ստացած չէ, որովհետեւ թէ քրիստոնեայ եւ թէ մահմետական համայնքներու առաջնորդները կը խուսափին հարցը այդ գետնի վրայ դնելէ: Այսպէս, խորհրդարանի նիստին բացակայած են նոյնպէս քրիստոնեայ համայնքի երեսփոխաններ, ինչպէս նախկին նախագահ Շամուն: Շիւր մահմետականներն ալ դիւր չեն ճշդեր ի նպատակ Սիւննի մահմետականներուն:

Դէտերը կարծիքով հաւանական է, որ վարչապետի պաշտօնին կոչուի Ապտալ — լահ Եաֆի, նախկին վարչապետ, քանի որ կը վայելէ համակրութիւնը Սիւննի առաջնորդներու, ինչպէս նաեւ Տիւրքիներուն:

Միւս կողմէ Պէյրութ կը վախճայ իսրայելեան նոր հակադարձութենէ մը: Արդարեւ, ինչպէս հազորդած էինք, առջի օր պաղեստինցի արձակազէններու եւ իսրայելեան զինուորներու միջեւ լա — խում տեղի ունեցած էր, որու ընթացքին իսրայելացի սպայ մը սպանուած էր եւ երեք զինուոր ալ վիրաւորուած էր: Իսրայելացիք կը պնդեն, թէ բախումը տեղի ունեցած է Իսրայէլի սահմանէն ներս: Պաղեստինցիները եկած են Լիբանանէն: Պէյրութ կը պնդէ, թէ բախումը տեղի ունեցած է Լիբանանի սահմանագլուխին, երբ իսրայելացի զինուորներ անցած են սահմանը:

Յամնայի դէպս լիբանանեան բանակը աշխուրջ եւ պատրաստ գտնուելու հրաման ստացած է: Ծովափն ու սահմանային գոտիները խիստ հակողութեան տակ առնուած են:

ԲԱՆԻ ՍԵ ՏՈՂՈՎ

ՅՐԱՆՏՍԱՆ Ազգ. Ժողովը վաւերացուց ազգային ծառայութեան օրինադիրը, որով երիտասարդները այսուհետեւ կրնան ընտրել ազգային ծառայուն — թեան իրենց ժամանակաշրջանը՝ 18էն 22 տարեկան եւ տասը ամիս: Բոլոր առնք, որ աւելի երկար ուսման կը հետեւին, յատուկ յանձնարարութիւն կողմէ կրնան տարելով մը եւս յետաձգել իրենց զինուորագրութեան թուականը:

ՓԱՐԻՋԻ Թաղապետական խորհուրդի նախագահ ընտրուեցաւ Ժաք Տոմինաթի, անկախ — հանրապետական, որ կը փոխարինէ Տիկին Տը Հօթելը:

ԲՐԵՃԵՆԻՆ Ուաշինկթըն այցելութեան առթիւ Ու. Ռոնթրոյ յայտարարեց Թասի թղթակցիւն, թէ Նիքսոն — Բրեժնեւ խոսակցութիւններու գլխաւոր հարցը պիտի ըլլայ ընդհանուր եւ միայն համաձայնութիւն մը դոյացնել «հիւլէս — կան յարձակողական գէնքերու» շուրջ:

ԱՆԳԼԻՈՅ Եւ Իսլանտայի Արտաքին նախարարները Քոփենհագին մէջ չկրցան համաձայնութեան եղբ մը գտնել ձողաձուկի հարցին շուրջ: Իսլանտա նախապայման կը դնէ անգլիական ռազմականութեւ հետ

ԵՐԵՎԱՆ <=> ՓԱՐԻՋ
Հ Ե Ռ Ա Տ Ի Պ

ԵՐԵՎԱՆ (Արմէնփրէս, Յունիս 8-11)

ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ՆՈՒՐՈՒՄՈՒՄ ԳԻՐՔԵՐ

Հայ արուեստի պատմութեան նուիր — ուած ցուցահանդէսին բացումը կատարուած է Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիային մէջ: Ցուցադրուած են ճարտարապետութեան, ձեռարուեստի, երաժշտութեան, թատրոնի եւ շարժանկարի տարրեր հարցերուն նուիրուած աւելի քան 200 մենագրութիւններ, ուսումնասիրութիւններ եւ անուանի արուեստագէտներու լուսանկարներ:

×

ՄԵՏԱՔՍ ԿԵՐՊԱՍԵՂԷՆ

Երեւանի մետաքսի ձեռնարկութիւնը կերպարի վեց նոր տեսակներ սկսած է արտադրել այս տարի: Այս ձեռնարկութիւնը խորհ. Միութեան ամէնէն մեծերէն է: Այս կտորները, որոնք կը հիւսուին արուեստական, բնական մետաքսի եւ բամպակի նուրբ թելերով, արդիւնք են ձեռնարկութեան նկարիչներուն եւ ճարտարագէտներուն համատեղ աշխատանքին: Անոնք այցելելով տասնեակ ուրիշ գործատուներ՝ ուսումնասիրած են ժամանակակից եւ անցեալի պատկերա — զարդաները, որոնց մէջ կարելի է դնուել ծիածանի բոլոր գոյները:

Գործատան արտադրած շրջազգեստներն ու այլ հիւսուածքները լայն սպառում գտած են ոչ միայն Հայաստանի, այլեւ Ուկրաինայ, Կեդրոնական Ասիայ եւ խորհրդային Միութեան այլ վայրերու մէջ:

×

ԵՐԵՎԱՆ (Արմէնփրէս, Յունիս 12)

ՆՈՐ ԶՐԱՏԱՐ

Շահագործման յանձնուած է Որոտան գետի ջրատարին երկրորդ հատուածը, որու շնորհիւ ջուր կը ստանան աւելի քան հարիւր հեկտար հողեր Խնձորեակ, Տեղ, Կոնիճոր, Քարաչէն. գիւղերու մօտ: Ասիակ հնարաւորութիւն կուտայ զաւրի կերպով ընդլայնել այդ շրջաններու գետնախնձորի, եղիպատարների, ծխախոտի, բանջարեղէնի ցանքերը եւ հաստատել պտղատու նոր տարածու — թիւններ:

Ռազմաւոր իր ջուրերէն: Անգլիա նման քայլ մը առնելէ առաջ կ'ուզէ պահպանութիւն ստանալ, թէ անգլիական ձկնորսանաւ — ւերը պիտի չհալածուին Իսլանտացիներու կողմէ:

ՊՈՒՐՄԱՅԻ ըմբոստներ կը սպառնան սպաննել իրենց առեւանգած երկու խորհրդային քաղաքացիները, եթէ Պուր — մայի կառավարութիւնը ազատ չարձակէ իրենց առաջնորդը, որ ձերբակալուած է:

«ՏՈՒ—144» օդանաւի արկածին պատճառները քննարկուած 20.000 Փրանքի վարձատրութիւն կը խոստանայ ռեժիմէն, որ կը յաջողի գտնել օդանաւին «սեւ սնտուկը» եւ այլ կարեւոր սարքեր:

ՔԱՄՊՈՑԻ Նախագահին եղբայրը յայտարարեց, թէ Մ. Նահանգները խոստում ստացած են Հանոյէ, թէ «փութով» պիտի քաշէ իր ուժերը Քամպուճէ:

1915Ը ՊՈԼՍՈՅ ՄԷՋ

ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

(Անտիպ) (*)

—

ԳԱՏԸԳԻՒՂ

Ա.

Յունիս:

Ան իրկունը գրեթէ չենք քնացած: Արտաշէսը, Յարութիւնեանը, ինծի է ու մենք կ'ունենանք անոր հետ ժամեր տեւող խօսակցութիւնը որուն առաջին փորձերը ըրած ենք, ատենին, Մալկարայի անոնց այգիին: Գրականութիւն, հարկաւ ամէնէն աւելի: Բայց ժամանակները ուրիշ են հիմա:

Տարագրուած մտաւորականներուն, Պոլլիս պահուրտածներուն, օր մը առաջ — ուսան կախուածներուն (*), մեր սեփական ապահովութեան, ցեղին սպառնացող վըտանգին ու պատերազմին վրայ կը խօսինք, դէմ դէմի, քիչ մը խառն ու անկապակից:

Ազդեցութեան տակն ենք Տիկին Եսայեանի պատմածներուն որ կը փնտռուի ու Սիկուարէն Բերա անցնելու համար փոխած է ճամբան, Գատը-գիւղը ընտրելով: Մեր դէմը, պատշգամի մը դուռը գըլընուան լուծեան մէջ կը բացուի, պըղտիկ ճիւղով մը ու չենք կրնար մեր գլուխները խեղճ պահել: Թրքուհի մը, որուն կենցաղը ծանօթ է թաղին, դրան ձեռքին կը սպասէ անշուշտ: Գեղեցիկ է անիկա ու մենք կը խորհինք մարդուն որ սպասուածը պիտի պսակէ:

Փողոցը լուռ է ու պահակներուն հաստ ոտքերը յստակ յստակ կը կոխեն: Սոսկումի քաղաք: Ուր վտանգը կը պաշարէ քեզ երբ ամէնէն քիչ կը սպասէիր:

Արտաշէսը դեռ կը պահէ հանդարտ ու փիլիսոփայ այն յուզումը որ անոր հոգեկան մենութեան լաւագոյն ապացոյցը կրնայ նկատուիլ: Անիկա պատմած առտենը անդիտակցարար կը բարձրանայ ընդհանրացումներու: Երկու օր առաջ ընդունած է ոստիկանական այցելու — թիւն, տուած է հասցէն ու զարմա — ցած որ ազատ են ձգած զինքը: Բայց հասարակ պաշտօնեային վրայ անիկա կարգացած է ամբողջ գրութիւն մը, որ թուրքերուն մասնադիտութիւնն է: Անիկա կը պատմէ այն վայրագ հեշտութեան մասին որ ահարեկումէն կ'առաջանայ:

— Հէ, աղայ: Ըլլալիքը կ'ըլլայ:

Լոյս: Կ'երթանք դպրոց:

Հայկ Պօստարեանը, սեւ ուրտէնկով վարժարանի մէկ անկիւնը խօսքի է ոստիկանի մը հետ: Արտաշէսը կը մտնէ դուռէն: Ես բնագրական յուզումով մը կը դառնամ ետ, վարժարանի պարիսպի չըջանք կ'ընեմ ու ետեւի դուռէն կը հասնիմ դպրոց:

Ոստիկանը չկայ: Պօստարեանին արտայայտութիւնը բաւական է որ հասկընամ ամէն բան:

— Գիտեմ: Հասցէս առին, չէ՞:

— Ուրիշ՞ գիտես:

Չեմ խօսիր: Դուրեան Սրբազան քննութեամբ է գրադած: Կը մտնեմ մանկապարտէզի շէնքը: Տղաք չուարած: Արտաշէսը կոտորած՝

— Ինչպէս կը գիտնաս դուն:

Գիշերը, խօսքի ընթացքին, ես դուշակած եմ այսօրուան դէպքը:

— Ելիր տուն գնա:

— Որպէսզի ճանչնան:

Կը լռէ:

Չեմ կրնար նստիլ: Անհանգիստ ըլլալէ տարբեր բան մը կայ վրաս: Վտանգին հոտը, քան իրական վտանգը:

Դուրս կ'ըլլեմ: Կ'ընտրեմ այն փողոցները ուրիշ սովորութիւն չունին ոստիկանները երթեւեկ ընելու:

Ո՛ւր կ'երթամ: Ես ալ չեմ գիտեր: Բայց կը թափառիմ: Կը վախնամ Մօսաթէն ուր առատ է մանաւանդ զապոնի ոստիկանութիւնը: Կը վախնամ նաւամա — տոյցէն ուր ոստիկանները անդիտակից սարսափ մը կը պտըտցնեն:

Իրիկուն կ'ընեմ, չեմ գիտեր ինչպէս: Մուտքը ինկած է ու տուն կը չտկիմ:

Ոչինչ: Մէկը չէ քացած: Կը զարմանամ ու կը վախնամ: Ինչո՞ւ այս զուլընութիւնը: Ինչո՞ւ չեն եկած ու չեն ճըղղած դպրոցէն առնուած տեղեկութիւնը:

Դուռը կը դարձուի, կամաց ու սըլսմուած:

Կը նետուիմ վար, ետեւի դուռին: Տանտիրուհին կը խօսի կամաց, յետոյ ներս գալով՝

— Գօլաճին է, քեզ կ'ուղէ:

— Կը ճանչնա՞ս:

— Հա: Լաւ մարդ է: Շապկիներդ կ'ընէ նէ, ան է:

Մարդուկը կը դուրայ: Կցկտուր բառերով կը հասկցնէ ոստիկանին ու թաղին պահապանին դիմումը: Անոնք կ'ուզեն տեսնել իմ բնակած տունս:

— Ձիտեմ մը կոխեցի, աւա, ես ալ վախցայ:

Ելան դացին:

Ու պատուական երիտասարդը խանութը երեսին վրայ ձգած, վազած է մեզի: Կ'աճապարէ:

Երբ դուռը կը դոցեմ վրան, ձեռքերս տկար կը զգամ: Դեռ առջի վախերն են ու սիրտը անվարժ ըլլալուն շուտ կը տաքնապի:

Կը տանին ինծի ներս:

Տանտէրը, Վանեցի մը, բացած է բերանը ու կ'ըսէ, կ'ըսէ իր լեզուովը ինչ որ անշուր կատարութիւն մը պիտի ըսէր երբ ձողի ինքն իրեն: Երկու աղայ, պազած կը նային ինծի: Տանտիրուհին կ'աշխատի մարդուն ձայնը վար առնել:

— Քա սուս: Գոնէ կամաց ըսէ:

Բայց անիկա ծուռ ակնարկով մը կ'ընէ չափելէն ետքը կը սուզուի, ու կը մոռնայ Պոլիսը, պատերազմը, լրտեսները, մանաւանդ զիմացի Թրքուհին:

Ի՞ՆՉ Է ԵՐԳԻԾԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

—

(Բ. Եւ վերջին մաս)

Բնագրատուքիւնը կ'ընայ երգիծական սեռէն ներս այն պարագային, երբ քըննադատուած գործը եւ անձը կը վայելէ կեղծ միջոցներով ապահովուած համբաւ: Հոս կրնանք յիշել Պուարթի, Վոլթէրը եւ Յակոբ Օշականը:

Ընթերցողը պիտի ըսէ, թէ վերը յիշուած տիպարները եւ թերութիւնները նիւթը կազմած են կարգ մը գործերու, որոնք ողբերգական ընոյթ ունին: Կեղ — ծաւորներ, ժլատներ, անպիտաններ, չղոզորթներ փոխանակ խնդուք առաջա — ցնելու, զոռանք եւ ատելութիւն արթնցուցած են կարգ մը վէպերու եւ ողբերգութիւններու դիմաց, ինչպէս Եակօ մը, Թենարտիէ մը, Կրանտէ մը, Ռակոն մը:

Ասիկա կը նշանակէ, որ կարեւորը տիպարը կամ նիւթը չէ, այլ այն մօտե — ցումը, որ հեղինակը ունի անոնց հան —

Ես կը կասկածիմ: Կրնան այս գիշեր գտնել իմ տունս: Պէտք է փախիլ:

Ու երեք տուն վեր դուռը կը զարնեմ: Հոն կը տեղաւորեն վերնայարկին մէջ, տանիքին տակը: Օրերգներն են, երկու, քառասուննոց ու յիսուննոց: Օննիկ աղա մըն ալ ունին որ ժամէ ժամ կը սպասէ Անդրիացիին:

— Տեսնեն պիտի սա շունքը: Տեսնեն պիտի:

Սիրտ չունիմ պատասխան տալու Օն — նիկ աղային որ իրկուն ու ցորեկ գիշերանոցը չի ձգեր, տկար ըլլալուն:

Փերուզ հանրմբ բարի բայց քաջարի աղջիկ մըն է: Կաղ ոտքին վրայ հակած դուրս կ'ըլլէ առանց մեզի բան մը ըսելու:

Օրերգը էլիզը ժամանակէն շատ կանուխ ծերացած աղջիկ մըն է: Անիկա իր եղբորը, Օննիկ աղային հետ կ'անցնի թուղթին գլուխը: Անդրիացին դայ չգայ, անոնք պէտք է այդ աղտոտ թուղթերով քանի մը ձեռք բան խաղան:

Անոնք կը սիրեն զիս, վասնզի իրենց առջի վարձուորն եմ: Պատերազմի յայտարարութեան ոստիկանական փնտրու — տուք մը հանած է զիս հոնկէ: Վերի յարկը Դուրթուշի ընտանիք մը վար — ձախալ են:

Անոնք:

ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ

(*) «ՅԱՌԱՋ».— Այս գրութիւնը, որ դժբախտաբար շարունակութիւն չունի, կ'արտասպնեմ Պէյրութի «Նիտասարդ Հայ» պարբերականէն (Մայիս 1973):

(*) Պօստը « Քսան կախաղան »նիւրու մասին է (1915, Յունիս 15):

դէպ: Արուեստագէտը կը վայելէ ո՛չ միայն ընտրութեան, այլեւ մշակումի ազատութիւն: Հին ժամանակներուն, յուսանական թատրոնի նոյն դերակատարը կրնար խաղալ ողբերգական կամ կատակերգական դերեր, կը բաւէր, որ ան իր երեսը անցնէր տխուր կամ զուարթ դիմակ մը: Այդ դիմակին ընտրութիւնը կ'ընէ հեղինակը, երբ կը մտադրէ տիպար մը կամ կացութիւն մը ստեղծել:

Կատակերգակ մը կամ երգիծարան մը ինչ միջոցներու կը դիմէ հասնելու համար իր նպատակին, այսինքն՝ խնդուք ստեղծելու համար իր հանդիսատեսին — լուսն կամ ընթերցողներուն մէջ:

Նախ ի՞նչ է խնդուքը:

Բնագրանցական տեսակէտէն, անիկա միաններու եւ ջիւղերու պրիում մըն է: Հոգեբանական տեսակէտէն՝ ներքին հոգեվիճակի մը արտայայտութիւնը, զոր կը կոչենք զուարթութիւն:

խնդուքի առարկան ընդհանրապէս ծիծաղելի եւ թերի անձ մըն է կամ անբնական կացութիւն մը, ընդհանրապէս հասարակութիւն մը՝ իրականութեան եւ տեղի ունեցող արարքին միջեւ:

Այս ընդհանուր միջոցաւորն մարմին եւ գոյն տալու համար, հեղինակները իրենց տրամադրութեան տակ ունին կարգ մը միջոցներ, որոնք ի գործ դրուած են դարձել ի վեր:

Երգիծանքը կ'արտայայտուի երեք ուղղութեամբ:

Նախ՝ կայ կացութիւններու երգիծանքը, որ ինչպէս ըսինք, կը շեշտէ հակասութիւնը իրականութեան եւ երեւոյթ — ներու միջեւ: Օրինակի համար, մէկը ինքզինք լաւ բանաստեղծ մը կը կարծէ եւ ներկայութիւնն առջեւ կը կարգայ ծիծաղելի ոտանաւորներ: Ծերունի Հարփակոն հաւատք ընծայելով միջոցաւոր — հիի մը խօսքերուն, ինքզինքը յարմար կը տեսնէ իբր ամուսին քսան տարեկան օրիորդի մը: Արիստոլ մը աղա ինքզինք կը կարծէ ազգային դէմք մը, տարուելով սովալլուկ խմրադիրներու շողմանքէն, մինչ խորքին մէջ անձանթ ու միամիտ գիւղացի մըն է:

Կայ խօսքերու երգիծանքը, ինչպէս աղաւաղուած օտար լեզու կամ օտար լեզուով գրութեան սխալ թարգմանութիւնը, կամ անձի մը չյարմարող ոճ մը, անհեթեթ մէջլբերումներ, եւայլն:

Կայ երկախօսութեան երգիծանքը, կրկնութիւններ, դիմացիներ խօսքը անդադար ընդմիջել, կամ իրարու հետ կապ չունեցող նախադասութիւններ, ինչպէս, օրինակ, երբ մեր նոյն Արիստոլ մը աղան եւ Մանուկ աղան երկար խօսակցութեան կը բռնուին, մէկը կը պատմէ անձանթ մարդոց պատահած անկարեւոր դէպքեր, իսկ երկրորդը իր անթութեանէն տար — ուած՝ կը խօսի լուրիկ մասին, բրինձի մասին, եւայլն:

Վերջապէս կայ չարժուածներու երգիծանքը. ծեծ, հայհոյանք, դիմութիւն, ծպտում, չափազանցութիւն, եւայլն:

Այս բոլորը հարկաւ գործածելի հում

ԿՏԱԿՆ ԷՐ

ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ

Գրեց՝ ԱՐՇԱԻՐ ՇԻՐԱԿԵԱՆ

Ա. ՄԱՍ

Կ Ի Ա Կ Ի Մ Կ Ի Տ Ո Ի Թ Ի Ի Ն

ԴԱԻԱՃԱՆ ՎԱՃԷ ԻՉՄԱՆԻ ԱՃԱԲԵԿՈՒՄԸ

Այսքան տարի վերջ, քանի յիշեմ, կարծես թարմ թարմ կ'ապրեմ այն սարսափը որ տպանիչ հիւանդութեան մը պէս ծաւալած էր Պոլսոյ մէջ, պատերազմի առաջին երկու տարիներուն մասնաւորաբար: Հազարաւոր Հայեր բանտերը նետուած էին, պարզ կասկածի վրայ եւ կամ մատնիչներու ցուցմունքով. եւ հոն կը մնային ամիսներով եւ ոմանք նոյնիսկ տարիներով, առանց որ թրքական դա —

տարան մը զանոնք հրաւիրէ դատի, անմեղները արձակէր կամ պատժէր յանցաւորները, եթէ կային: Բոլորն ալ խեղճ զոհեր մոլեռանդ եւ ցեղասպան թուրք իշխանութիւններուն եւ ժողովուրդին կամ անձնական հաշիւներ ունեցող հայանուն լրտես մատնիչներուն:

Հետապնդում օր ու գիշեր, աքսոր կամ տարագրութիւն: Առած տարած էին մեր սիրելի ուսուցիչները եւ Բարձրագոյն Ուսման հետեւող դաւաճացի սքանչելի երիտասարդները, որոնց մեծագոյն ու միակ մեղքն էր դաւաճացի ըլլալը: Պատահած էր, աւելի կանուխ, պոլսահայութիւնը խորապէս ցնցող դէպքը: Պայազիտի հրապարակին վրայ կախաղան կը հանուէին Հնչակեան քսան յեղափոխական եւ մտաւորական լաւագոյն գործիչներ: Ամէն տուն կուլար ու կ'ողբար. եւ վրէժը կը փոթորկէր մեր պատանիի հոգիները: Այս ահարկու, ծանր ու անչնչելի միջոցաւոր — տին մէջ ապրեցաւ պոլսահայութիւնը: Մտաւորական եւ յեղափոխական ընտրանիին դիմադրութիւն վերջապանդէն հաղիւ ազատած էին քանի մը դէմքեր, որոնք հիւսնալի քաջութեամբ, իրենց թաքստոցներէն իսկ կը դեկլարաբէին մեկնողներուն գործը կամ փախուստներ կը կազմակերպէին:

Այս պարագան անձանթ չէր թուրք ոստիկանութեան, որ աշարջութեամբ կը հետեւէր Հայերու ամէն մէկ քայլափո —

խին, իրեն օժանդակ ունենալով հայանուն գործակիցներու բանակ մը, Սուլթան Համիդի օրերէն մնացած ստոր մատնիչներ, նորեկու դաւաճաններ, աւելի քան երեք հարիւր, որոնք իբրեւ վատահեղի գործակալ, եւ ուրիշներու մահուամբ իրենց կեանքը միայն փրկելու վրայ խորհող զարչելի արարածներ, օր ցերեկով եւ բացէ ի բաց, կը կատարէին ամօթալի եւ յաւէտ անիծեալ պաշտօն մը:

Պոլսահայութիւնը ազատած էր տարագրութենէն, սակայն ոչ ոք վստահ էր թէ յաջողօրէն պիտի ապրէ: Արդէն երբեմն երբեմն մեր ալ տարագրութեան լուրերը չըջան կ'ընէին եւ ոմանք նոյնիսկ պատրաստութիւններ կը տեսնէին, ահ ու սարսափի մէջ: Կարգը մեզի՞ր ալ պիտի դար. ալքքան բարբարոսութիւններէ վերջ Իթիհատի դազան ղեկավարները, Թալասթը, էնվէրը պիտի խնայէին Պոլսահայութեան: Անատոլիէն եկած փախուստականներ, արձակուրդով հասնող բժիշկ — սպաներ, չարաշուք եւ սարսափելի լուրեր եւ տեղեկութիւններ կը բերէին:— Այսինչ դաւաճի Հայութիւնը այսինչ ամսուն քշած են դէպի Արաբիոյ անապատները. չարաթ մը վերջ, դրացի դաւաճին Հայութիւնը քշած են, այդ մարդիկը համախումբ ջարդած են, նոյնիսկ չխնայելով ծերունիներուն եւ մա — նուկներուն եւ կիներու կարաւանները: Ժանտարմաներու սուրիններուն տակ, ա —

նօթի ծարաւ ու թշուառ մեծ մասով կը մահանան ու ողջ մնացողները կը քաշկոտուին դէպի հարաւի նահանգները:

Պոլսոյ կարգ մը թաղեր, յուսահատութենէ մղուած որոշած էին սուղ ծախել իրենց կեանքը եւ դադանապէս դէնք կը հայթայթէին, ղեկավարութեամբ պահուրտած յեղափոխականներու: Տեւական փոխադրութիւն մը տունէ տուն, որ աւելի վտանգաւոր կը դառնար ամէն կողմ վխտացող հայանուն լրտեսներուն պատճառով:

Ձէնքերու փոխադրութեան այդ գործին մէջ է որ առաջին անգամ ստրվեցայ դիմադրաւել վտանգը եւ ապրիլ հալա — ծական ու վրէժխնդիր հայ պատանիի տաղանայները: Հինէն ի վեր մեր տունը հոգակուած ըլլալով որպէս յեղափոխականներու հաւաքավայր, այդ չըջանի կ'ենթարկուէր յաճախակի խուզարկու — թեանց, գրեթէ միշտ ուղեցմունքովը սեւ — սեւի Հայու մը, որ նորանոր վատու — թիւններով պիտի մեծցնէր իր տխուր համբաւը: Ճակատագիրը այնպէս ուղեց որ պատանի տարիքէս սկսեալ դէմ դիմաց գտնուեմ այդ հայանուն հրէշին, որ կը կոչուէր Վահէ Իհսան, հայկական մականունով Եսայեան:

(38 — Ծար.)

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Հ. Յ. Դ. Տէսինի կոմիտէն իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ ընկեր Վարուժան Գրիգորեանի, իր եղբայրներուն, քրոջ ու ընտանիքին բոլոր անդամներուն, իրենց հօր ու ազգականին՝ Մանուկ Գրիգորեանի մահուան առթիւ:

×

Ալֆորվիլի Կապ. խաչի վարչութեան ընկերութիւնները ցաւակցութիւն կը յայտնեն Տէր եւ Տիկին Օննիկ եւ Սոնա Ազաշեանի, իրենց հօր եւ աներհօր Մկրտիչ Ազաշեանի մահուան առթիւ, եւ փոխան ծաղկեպսակի 100 Քր. կը նուիրեն Ալֆորվիլի Կապ. խաչի մասնաճիւղին:

×

Տիկին Արաքսի Սիմոնեան — Ալթունեան, ուխտի մը կատարման առթիւ 30 Քր. կը նուիրէ Ալֆորվիլի Կապոյտ խաչին:

Հ. Յ. Գ.

ՇԱԽԻԼ. — Հ. Յ. Դ. « Արղութեան » խումբի ժողովը Շաքաթ (Յունիս 16) երեկոյ ժամը 21ին, սովորական հաւաքատեղին:

×

Վիէն. — Հ. Յ. Դ. Անի կոմիտէի ընկերական ընդհ. ժողովը տեղի կ'ունենայ Յունիս 16ի Շաքաթ երեկոյ ժամը 8-30ին Գ. Իփէկեան ակումբը: Բոլոր ընկերներու ներկայութիւնը պարտաւորիչ է: Կը խնդրուի ճշգրտապէս ըլլալ:

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ

ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

ԵՒ ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍ

Հովանաւորութեամբ

ՍԵՐՈՎԷԻ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

Տեղի կ'ունենայ 24 Յունիս կիրակի օր, ժամը 15ին

Հայկական եւ եւրոպական պարեր երգ. Պր. Պետիկեանի, ընկերակցութեամբ իր նուագախումբին

Հաղորդակցութեամբ միջոցներ. — Էկլիզ տը Փանթնէն առնել 147 թիւ օթոպիւսը:

ԿԱՐՄԻՐ ԽԱԶ

ՕԴԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԿԱՅԱՆ

Արձանագրութիւնները կը շարունակուին Օգոստոս ամսուան համար:

Ա. խումբի մանուկներու բժշկական քննութիւնները տեղի պիտի ունենան 29 Յունիս, ժամը 10-13, Հայ Կարմիր խաչի դարմանատան մէջ, 15 Ռիւ Ժան Կուստի, Փարիզ (Տրդ):

Ա. խումբը կը մեկնի Երկուշաբթի 2 Յունիս, ժամը 14ին, Հայ Կարմիր խաչի կեդրոնատեղիէն, 15 Ռիւ Ժան Կուստի:

ՀԵՐՈՍՆԵՐՈՒ ՕՐԸ

Վիէնի Մէջ

Յունիս 15ին

Imprimé sur les Presses
DU JOURNAL « HARATCH »
83, Rue d'Hauteville, Paris (10e)

Տէր եւ Տիկին Սահակ խաչատուրեան, Տէր եւ Տիկին Արիս Չիլինկիրեան, Տէր եւ Տիկին Ժորժ Շվարց, ալրի Տիկին Գոհարիկ Էտիրնէլեան, Տէր եւ Տիկին Արամ խաչատուրեան եւ զաւակները, Օր. Լիտիա Չիլինկիրեան, Պ. Փիէր Շվարց, Տէր եւ Տիկին Յակոբ խաչատուրեան, Տէր եւ Տիկին Փօլ Ուրի, Օր. Լուիզ Գալպեան, Տէր եւ Տիկին Գալպեան (Պուլկարիա), Պուլէն՝ ալրի Տիկին Արշալոյս Թէմինեան, ալրի Տիկ. Սիրվարդ Թէմինեան, Տէր եւ Տիկին Պերճ Թէմինեան, Տէր եւ Տիկին Պերճ Թէմինեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Արամ Ասատուրեան եւ զաւակը, Տէր եւ Տիկին Գապար Թէմինեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Վարուժան Թէմինեան եւ զաւակը, Տէր եւ Տիկին Տիգրան Թէմինեան, ինչպէս նաեւ Մեսրոպեան, Պզտիկեան, Թէրթէմիզեան, Մելիքեան, Թահմիզեան (Պուլկարիա) ընտանիքները սրտի խոր ցաւով կը ծանուցանեն իրենց մօր, քրոջ, մեծ մօր եւ ազգականին:

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ԵՒՍ ԹԷՄԻՆԵԱՆԻ (ծննալ Մեսրոպեան, 85 տարեկան)

մահը որ պատահեցաւ Յունիս 12ին Անտիլի Հանգստեան տան մէջ:

Յուզարկաւորութիւնը կը կատարուի Երկուշաբթի Յունիս 18, կ. վերջ ժամը 16ին, Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին, ուրիշ մարմինը կը փոխադրուի Պանէֆօ — Փարիզիէնի գերեզմանատունը ժամը 17-15ին:

Մահադղ չստացողներէն կը խնդրուի ներկայ իբր այդ նկատել:

ՔՍԱՆ ԿԱՅԱՎԱՆՆԵՐՈՒ

58ԴԻ ՏԱՐԵԴԱՐՁԸ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան Փարիզի եւ շրջանի մարմինը հոգեհանգրստեան պաշտօն կատարել կուտայ Կերակի Յունիս 17, առաւօտ Փարիզի Հայոց Մայր եկեղեցին:

1915 Յունիս 15ին Պոլսոյ Սուլթան Պալատի հրապարակին վրայ կախաղան բարձրացուած քան հերոսներու հոգիներուն համար: Նոյնպէս հայ ազատազրութեան համար Կեսարիոյ կախաղան — ներուն վրայ եւ Վանի բանտին մէջ նահատակուած հերոսներու յիշատակին:

Հերոսներուն յիշատակը յարգող բոլոր հայրենակիցները կը հրաւիրուին ներկայ գտնուիլ արարողութեան:

ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍ

Կազմակերպուած Վալանսի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Հոգաբարձութեան կողմէ ՇԱԹՕ ՄՈՆՏԻԻ չքեղ անտառին մէջ, Կիրակի Յունիս 17ին:

Երթեկը ապահովուած, Պարսամեանին մօտէն, ժամը 13-30ին, Ռոմանի ճամբուն վրայ «Թիրօ-Փիսոն»ին դիմացի ալ ճամբան:

ՀԱՅԿԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՀԵՌԱՏԵՍԻԼԷՆ

Կիրակի (Յունիս 17) առաւօտ ժամը 9-30ին հեռատեսիլի Ա. կայանէն հայկ. յայտադիր:

Ամենայն Հայոց Կաթողիկոս — Հ. Ռոմանօ եւ Փրոֆ. Իւթիւճեան:

L'ENSEMBLE D'INSTRUMENTS TRADITIONNELS ARMENIENS

SAYAT-NOVA

DE PARIS

à l'Olympia

Le Lundi 18 Juin 1973 à 21 heures 30

à l'occasion d'un Musicorama Hootenanny exceptionnel avec le concours d'Europe No 1, dans un programme de folklore International et de folk song.

Réservations habituelles à l'Olympia

Billets à tarifs réduits chez M. Sourénian 7, rue Rollin, 75005 Paris
Tél. : 325-04-13 et 033-44-62

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՀՌԶԱԿՄԱՆ ՏԱՐԵԴԱՐՁ

ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ

ՀԱՅ ԴԱՏԻ ՕՐ

ՍԷՆ - ՇԱՄՈՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ.Յ.Դ. Անտոք-Վարուժան կոմիտէի Նոր Սերունդի

Կիրակի, Յունիս 17, ժամը 16էն 24

Institution St. Marie, Foyer des Jeunes

Route du Coin (après le Stade)

Կը նախադաճէ ՍԵՐԱԿ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

Կը խօսի ԿԱՐՕ ՅՈՎՍԷՓԵԱՆ

Հայկական նուագախումբ, գեղարուեստական բաժին — Խնդրոյք ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ Է

×

ԽՐԱԽՃԱՆՔ ԱԼՖՈՐՎԻԼԻ ՄԷՋ

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՓԱՌԱՊԱՆԾ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻՆ

ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՌԶԱԿՄԱՆ 55ԴԻ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՒ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. «Ս. Միմասեան» եմբակումիտի

Մասնակցութեամբ Հ. Յ. Դ. Նոր Սերունդին եւ Ֆր. Կապոյտ խաչին

Շաքաթ, Յունիս 16, ժամը 21էն մինչեւ յայտ, Սալ տէ Գէթ (Ալֆորվիլ) 22 Ռիւ Վալթէն

Կը խօսի՝ ընկ. ԱՌԼԷՆ ՓԱՓԱՋԵԱՆ

Գեղարուեստական բաժնին կը մասնակցի

Հ. Յ. Դ. Նոր Սերունդի «ՆԱՅԻՐԻ» պարախումբը

ՄԻՆՁԵՒԻ ԼՈՅՍ ՊԱՐ, ԵՐԳ ԵՒ ԽԱՂԵՐ

LES ARMENIAN'S SUNSHINE

Նուագախումբին առաջնորդութեամբ

ՇԱՄՓՈՒՐՈՎ ԽՈՐՈՎԱԾ

ԱՌԱՏ ԿԵՐՈՒԽՈՒՄ

×

ԻՍԻՒ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. «Ջաւարեան կոմիտէի

եւ մասնակցութեամբ Հ. Յ. Դ. Նոր Սերունդի եւ Կապոյտ խաչի մասնաճիւղին

Հովանաւորութեամբ Հայ Դատի Յանձնախումբի

Կիրակի, Յունիս 17 ժամը 17էն մինչեւ 24

Իսիի Հայ Մշակոյթի Տան մէջ, 45 Ռիւ տը Լա Տէֆանս

Կը նախագահէ՝ ընկ. ՀՐԱԶ ՀԱՆՏԱԼԵԱՆ Կը խօսի՝ ընկ. ՀՐԱՆԴ ԱԿՈՆԱՅԵԱՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Օր. Շաքէ Պէնկեան, Տիկին Ժ. Գալայճեան, Ս. Մուրատեան, Մ. Բրտուեան՝

երգ եւ թառ

Ծախֆերու մասնակցութիւն 25 ֆրանկ

ԱՄԱՌԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Pension complète avec excursions quotidiennes

Բնակութիւն Ա. կարգ — ամբողջական փանսիօն, ամէնօրեայ պտոյտներ

ՅՈՒԼԻՍ 14 ԷՆ 28

ԳԻՆ ՓԱՐԻՋԷՆ ՓԱՐԻՋ

2650 ՔՐԱՆՔ

Ուղղակի քաղաք Փարիզ-Երեւան-Փարիզ

ՅՈՒԼԻՍ 21ԷՆ ՕԳՈՍՏՈՍ 4

ՕԳՈՍՏՈՍ 5ԷՆ 22

16էն 35 տարեկան երիտասարդներու համար յատուկ գին՝ 2100 ֆր.

Դիմել գրասենեակ՝ մանրամասնութեանց եւ պայմաններու համար:

ՓԱՐԻՋԻ ՄԷՋ

SONIA COUNRYANTZ

TRIM VOYAGE

MONDOTOURS

2, Rue de Sèze — PARIS (9e)

Téléphone : 742-57-84 et 073-30-64

de 9 h. 30 à 18 h. — tous les jours

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Լիոնէն մեկնումը օդանավով

VOTRE AGENCE DE VOYAGES ARMENIENNE

agence de voyages SEVAN

50, Cours de la Liberté — LYON — Téléph. : 60-13-66

de 10 h. à 19 h. — tous les jours

ՄԱՐՍԷՅԻ ՄԷՋ

JACQUES CHELELEKIAN

VOYAGES WASTEELS

87, La Canebière, Marseille 1er Téléphone : 62-03-44 et 64-09-49

de 15 h. à 19 h. — tous les jours

ՕՐՈՒՄԱՆ ՖՈՍՏԻԸ

ՀՐԵԱՆՆԵՐՆ ՈՒ ՀԱՅՅԵՐԸ

— 0 —

Գերմանիոյ ցեղասպան վարիչները կրե-
ցին իրենց արժանի պատիժը: Յաղթական
դաշնակիցներու պատերազմական ատ —
կանը 1945-1946-ին Նացիներու միջնաբերդ
Նիւրնպերկի մէջ Հանդիսաւոր կերպով
դատեց ու դատապարտեց զանոնք: Գըլ-
խաւորները մահուամբ պատժուեցան:
Խորոյական դոհացում ստացան ի սփիւռս
աշխարհի ցրուած Հրեաները:

Նոյն յաղթական դաշնակիցները 1915
Մայիս 11-24-ին Մեծ Եղեռնի սկզբնա —
ւորութեան չարաշուք թուականէն ճիշդ
մէկ ամիս վերջ, ազգաբարձրութիւն մըն
էին ուղղած ի թիթիհատի ոճրագործ կա-
ռավարութեան, սպառնալով անոր բոլոր
անդամները անձնապէս պատասխանա —
տուութեան ենթարկել հայկական ջար —
դերուն համար:

Յաղթանակէն վերջ, երբ 1918 Նոյեմ-
բերէն մինչեւ 1923 Յունուար ամէն հնա-
րաւորութիւն ունէին լայն չափերու վրայ
գործադրելու իրենց սպառնալիքը, նոյն
այդ դաշնակիցները ո՛չ միայն չպատժե-
ցին թուրք ջարդարարները, այլ եւ ամէն
պատիւ ընծայեցին անոնց: Անգլիացիները
1920 Մարտ 16-ին անոնց գլխաւորները,
մեծ մասամբ երեսփոխաններ, ձեռնադրե-
ցին ձերբակալելով Պոլսէն մասնաւոր
շտապարարութեան «Օղափոխութեան» ղեկ-
նախարար Մալմա, ուր անոնք ձեռնարկեցին
մէկ կարգի հողաձուլութեան առարկայ դար-
ձան: Ի վերջոյ փոխանակուեցան քանի
մը անգլիացի զօրքներու հետ: Սկզբնա-
կան շրջանին Պոլսոյ մէջ քանի մը երկ-
րորդական ջարդարարներու դատաւա-
րութիւնը կոչուած էր փոշի փշելու Հա-
յոց աչքերուն:

Երկու չափ, երկու կշիռ:
Այս ալ ուրիշ փաստ մը, որ չարա —
գուշակ աստղի տակ ծնած է հայ բազ-
մաշարժար ազգը:

Նիւրնպերկէն վերջ Գերմանիոյ նոր
վարիչները պարկեշտութիւնն ունեցան
խոստովանելու Նացի կառավարութեան
ցեղասպան քաղաքականութիւնը Հրեա —
ներուն հանդէպ եւ անկեղծօրէն զղջում
յայտնեցին, պատրաստակամ՝ բարոյա —
կան ու նիւթական հատուցում տալու:

Այսօր, Մեծ Եղեռնէն 58 տարի վերջ,
ո՛չ միայն Հոփսանք պարկեշտ թուրք մը,
որ զղջում յայտնէր մէկուէկ միլիոն
Հայերու ջարդուելուն համար, այլ եւ նոյն
կանգնող արձանագրեցին, որ երէկ Հան-
րապետութեան նախագահ Իսմէթ Ինէօ-
նիւի օրով՝ իբրեւ «ազգային նահատակ»,
Պերլինէն Պոլսի փոխադրեցին ցեղասպան
հէշտօնի թաղամայր զիտի, ուխտատե-
ղի դարձած յուշարձան մը կանգնելով ա-
նոր դամբարանին վրայ:

Իսկ ներկայիս ամբողջ թուրք ազգը,
Անգլաբայի պատասխանատու վարիչնե-
րէն սկսեալ հանրային կարծիքի թարգ-
ման թերթերը միահամուռ տէր ու պաշտ-
պան կը կանգնին 1915-1922-ի ցեղասպան-
ներուն, հաստատելով, որ իրենք իրա-
կան ու վաւերական ժառանգորդներն են
արիւնքաւոր Ապտիւլ Համիտի եւ չարա-
ղատ ձագերը՝ ջարդարար, թուրանական,
ոճրագործ իթթիհատի:

Հայաստանի Հանրապետութեան կա —
ռավարութիւնը իր երեսուն ամսուան
կարճատեւ կեանքի ընթացքին տէր ու
պաշտպան կանգնեցաւ Հայկական Դա-
տին: Ու յաղթեցաւ Մեծի դաշնադրով
դոհացում ստանալ Հայութեան հողային
ու ազգային պահանջներուն:

Սեւրի դաշնագրի չվաւերացուելու

ՕՐՈՒՄԱՆ ԴԵՊԵՐԸ

ՅՐԱՆՍԱ ԻՐ ՀՈԳԵՐՈՎ

— 0 —

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՐՔՈՒՄՆԵՐՈՒ
ԱՄԵՆ ՈՒ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ
ԿԸ ՄՏԱՆԵՆ

— 0 —

Մինչ Եւրոպական նախարարը Ժիւժար
տիւթէն բոլորովին անտեղի եւ վնասա-
կար կը նկատէ խօսիլ կանխահա —
նա խաղաղական ընտրութեանց մասին, Նա-
խարարապետը՝ Փիէր Մէմէն կը ճշդէ —
«Հարցում եղաւ Մեծամասնութեան պե-
տին որ կրնայ ըլլալ Նախարարապետը
թէ չի՞ կրնար արգելք հանդիսանալ կը-
ռուներու մեծամասնութեան ներս, ըն-
տրական մարզի մէջ: Լուրջ պայմաննե-
րու մէջ և ընտրութիւնները ե՛ն, դժուա-
րութիւնները որ կրնային երեւան ելած
ըլլալ մեղմացան մինչեւ անհետացում:
Յետին միտք մը կը տեսնեմ այդ հար-
ցումին մէջ բայց եթէ ան կը վերաբերի
նախագահական ընտրութեանց, կանխա-
հա — կը նկատեմ»:

Որքան որ նման յայտարարութիւններ
ըլլան, պարզ է որ շատերու աչքը ինչդէ-
է: Ժիւժար տիւթէն, որ ինքզինքը նոր
Փուէնքարէ մը կը նկատէ, դիտէ նաեւ
որ ամէնէն շատ ինք է որ համակրանք կը
վայելէ ժողովուրդին մօտ եթէ ոչ իր

ԱՅՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Այսօր իր նախագահը Մարտիտ Ե-
կա Փերոնը տեսնելու եւ հետը Պուէնոս-
Այրէս տանելու համար: Փերոնի ա-
ռողջական վիճակը շատ լաւ չէ սակայն:

ՎիէթՆամի երկրորդ ղեկավարը, որ
Ուրբաթ օր պէտք էր «ըլլա» գործադրու-
թեան դրուել, վերադառնալ չարադրուեցաւ:
Արդարեւ, Հարաւ. Վիէթնամի օդուժը
ամբողջութեամբ Բամպոնի սահմանադրուելի
վայրեր, իսկ միւս կողմէ, ըստ Սայկոնի,
զինագուլի 21 խախտումներ կատարուե-
ցան Վիէթնամի կողմէ: Այսուհանդերձ,
ասոնք փոքր միջադէպեր կը նկատուին
եւ շատեր յոյս ունին, որ բախումները
տեղի չեն ունենար այլեւս:

ԵԳԻՊՏՈՍԻ նախագահը՝ Սաուաթ Դա —
մասկուսի մէջ հանդիպում մը ունեցած է
Սուրիոյ նախագահին հետ: Դամասկոս
եւ Գահիթէ կը չեղտեն, թէ երկու նա-
խագահները առաւելաբար խօսած են
Սուրիա — Լիբանան եւ Լիբանան — պա-
ղեստինեան յարաբերութիւններու շուրջ:
Պէյրութ միշտ կը վախճայ իսրայելեան
նոր հակադարձութեան մը:

ՓԱՐԻԶ Ժամանեց խորհրդային նոր
դեսպանը՝ Ս. Չերվոնենկօ:

ԻՆՏՈՆԵԶԻՈՅ Արտաքին նախարարը
յայտարարեց, թէ Չինաստանի հետ յա-
րաբերութիւններու վերահաստատումը
այլեւս ժամանակի խնդիր է միայն:

Ինտոնեզիոյ եւ Չինաստանի միջեւ դի-
ւանագիտական յարաբերութիւնները խզ-
ուած էին 1967-ին:

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ վարչապետը՝ Տիկին Ին-
տիրա Կանտի Պելկրատ Ժամանեց, երեք
օրուան պաշտօնական այցելութեան հա-
մար:

ԻՍԼԱՄԱՊՈՍԻ դիւանագիտական աղ —
բիւրներու համաձայն Փաքիստանի նա-
խագահը Ազգային Ժողովին արտօնու-
թիւն պիտի ուղէ Պանկլա Տէշը ճանչնա-
լու համար:

ԱՊՈԼՈՆԻԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ օրո-
ւեց, որ Կիպրոսի ՄԱԿի ուժերը վեց ա-
միս եւս մնան, այսինքն մինչեւ Դեկտեմ-
բեր 15: 14 երկիրներ այս որոշումին ի
նպաստ քուէարկեցին, Չինաստան ձեռն-
պահ մնաց: Կիպրոսի յոյն եւ թուրք հա-

պաշտօնով, զոնէ իր անձով: Տնտեսագէտ
եւ եւրոպացի լրագրողներու առջեւ խօ-
սելով, նախարարը յայտնեց թէ եղան
միտի վրայ եղած թէվիւն, որ ջնջուած
էր, պիտի չվերահաստատուի Յուլիս
մէկին: Առաջիկայ պիտի չբարձրանան նաեւ
մեթրօ-օթոպլուսի սակերը, բայց որոշ
բան մը չըսուի որ այդ մասին:

Ի մօտոյ հրապարակ պիտի ելլէ 20
Ջրանքնոց արծաթ դրամ մը որ 41 միլի-
մեթր տրամադրած պիտի ունենայ եւ 30
կրամ կշռէ:

Մէմէն, իր կարգին, խօսելով նախա-
րարական մամուլի միութեան առջեւ,
ճշդեց թէ Յուլիս մէկին ամիսը (ամսան
միջակայական նուազագոյն աշխատա-
վարձը) պիտի բարձրանայ, ինչպէս նաեւ
տարեցնելու թուիւնը: Նախարարապետը
ըսաւ նաեւ թէ տէր կը մնայ Փուլէնի
իր խոստումներուն (ընտրութիւններէն
առաջ, Մէմէն Փուլէնի մէջ ընկերային
փայլուն ծրագիր մը ներկայացուցած էր)
եւ թէ տուած խոստումները, բոլորն ալ
պիտի իրականանան մինչեւ այս օրէնդա-
դրութեան վերջ:

ԱՅՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱՐԺԱՆԹԻՆԻ նախագահը Մարտիտ Ե-
կա Փերոնը տեսնելու եւ հետը Պուէնոս-
Այրէս տանելու համար: Փերոնի ա-
ռողջական վիճակը շատ լաւ չէ սակայն:

ՎիէթՆամի երկրորդ ղեկավարը, որ
Ուրբաթ օր պէտք էր «ըլլա» գործադրու-
թեան դրուել, վերադառնալ չարադրուեցաւ:
Արդարեւ, Հարաւ. Վիէթնամի օդուժը
ամբողջութեամբ Բամպոնի սահմանադրուելի
վայրեր, իսկ միւս կողմէ, ըստ Սայկոնի,
զինագուլի 21 խախտումներ կատարուե-
ցան Վիէթնամի կողմէ: Այսուհանդերձ,
ասոնք փոքր միջադէպեր կը նկատուին
եւ շատեր յոյս ունին, որ բախումները
տեղի չեն ունենար այլեւս:

ԵԳԻՊՏՈՍԻ նախագահը՝ Սաուաթ Դա —
մասկուսի մէջ հանդիպում մը ունեցած է
Սուրիոյ նախագահին հետ: Դամասկոս
եւ Գահիթէ կը չեղտեն, թէ երկու նա-
խագահները առաւելաբար խօսած են
Սուրիա — Լիբանան եւ Լիբանան — պա-
ղեստինեան յարաբերութիւններու շուրջ:
Պէյրութ միշտ կը վախճայ իսրայելեան
նոր հակադարձութեան մը:

ՓԱՐԻԶ Ժամանեց խորհրդային նոր
դեսպանը՝ Ս. Չերվոնենկօ:

ԻՆՏՈՆԵԶԻՈՅ Արտաքին նախարարը
յայտարարեց, թէ Չինաստանի հետ յա-
րաբերութիւններու վերահաստատումը
այլեւս ժամանակի խնդիր է միայն:

Ինտոնեզիոյ եւ Չինաստանի միջեւ դի-
ւանագիտական յարաբերութիւնները խզ-
ուած էին 1967-ին:

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ վարչապետը՝ Տիկին Ին-
տիրա Կանտի Պելկրատ Ժամանեց, երեք
օրուան պաշտօնական այցելութեան հա-
մար:

ԻՍԼԱՄԱՊՈՍԻ դիւանագիտական աղ —
բիւրներու համաձայն Փաքիստանի նա-
խագահը Ազգային Ժողովին արտօնու-
թիւն պիտի ուղէ Պանկլա Տէշը ճանչնա-
լու համար:

ԱՊՈԼՈՆԻԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ օրո-
ւեց, որ Կիպրոսի ՄԱԿի ուժերը վեց ա-
միս եւս մնան, այսինքն մինչեւ Դեկտեմ-
բեր 15: 14 երկիրներ այս որոշումին ի
նպաստ քուէարկեցին, Չինաստան ձեռն-
պահ մնաց: Կիպրոսի յոյն եւ թուրք հա-

ԱՌՆՁՈՒԹԻՒՆ

Այսօր կաթվադր երազէ մը արթնցայ,
գիրկս անսահման գրգռմանքով է

այսօր, Հոգի՛ս, պիտի բերեմ քեզ ընծայ՝
նոր տարփանքիս քիթեմիկին հիւր քեկեր:

Այսօր իդոլ իմ հոգիս է կաթոցներ.
ու վարդի պէս կը բացուի սիրտս իբր
ընծայ
այն լուսոտոգ պատարագին սրբաւոր.
գոր ծափեցին իմ երազները ծնողայ:

Երէկ գիշեր իմ հոգիս էր ինկած, ա՛,
քաղիքի մէջ կախօրթանին ոսկեղնայ՝
գոր փոքրիկ միմէն առտու, միմէն Յո՛յս,
ըզմանոյններն իմ Տեղեւորսն անխնայ:

Այսօր լոյսի ծովի մը մէջ արթնցայ,
գիրկս անհամար գգուամբներով է

այսօր, Հոգի՛ս, պիտի բերեմ քեզ ընծայ՝
մանուկ բոյրեր եւ աղբիւրն պէս հովեր:

Մանուկ բոյրեր, և աղբիւրն պէս հովեր՝
որոնց շուրթերն էի փնտրել ընդերկար,
ու գրկամբին խանդաղատ գիրկս էր

երանութիւն, լոյս բոլորին մէջ երկա՛ր:

Եկո՛ւր, անցնիմք ծառաստանէն այս
Լոյսին,
ու բացաւքին Գոյնին, Ձեւին ու Բոյրին.
Եկո՛ւր, Հոգի՛ս, Եկո՛ւր երբեք միայն,
միմէն եղեմն աստուածաճայն, միմէն
Կի՛ն...

ՄԻՍԱԲ ՄԵՆՍՈՐԵՆՑ

ՄԻՍԱԲ ՄԵՆՍՈՐԵՆՑ

մայիսներու բախումներու հետեւանքով
1964 Մարտին ի վեր ՄԱԿի ուժեր հաս-
տատուած են Կիպրոս:

ԱՆԳԼԻԱ իր օրոշեց արաբներէն դրուած
անցագրեր չյանձնել իր դիւանագէտներ —
րուն: Լիբիա կը մերժէ թոյլ տալ որեւէ
օտար քաղաքացիի Լիբիա մտնել, եթէ
արաբներէն չարադրուած անցագիր չու-
նենայ: Անգլիոյ առարկութիւնն այն է,
որ Լիբիացիներ Անգլիա կը մտնեն, թէեւ
իրենց անցագիրը անգլիներէն մանրամասն —
նութիւններ չեն բովանդակեր:

ՉԵԽՈՍԼՈՎԱԿԻԱ վաւերացուց Դաշ —
նակցային Գերմանիոյ հետ հաստատուած
համաձայնագիրը, որով բնականոն կը
դառնան յարաբերութիւնները երկու եր-
կիրներու միջեւ:

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ մէջ ի մօտոյ գրաքննու-
թիւնը պիտի վերնայ:

ԱՐԵՎԵԼԵԱՆ Գերմանիայէն Էտը, Ա-
րեւմտեան Գերմանիան ալ իր թեկնածու-
թիւնը դրաւ ՄԱԿի անդամակցելու հա-
մար:

ՄԵԹՐՈՅԻ Թիւ 7 գիծը (Վիէթ-Մեռի
տիւրի) խանդարուած էր Շարաթ օր,
կարգ մը պաշտօնեաներու գործադուլին
հետեւանքով: Կը բողբեն աշխատանքի
պայմաններու դէմ:

ԱԿՆԱՐԿՆԵՐ

ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶԵԱՆ

(1888–1968)

Հինգ տարի առաջ, 1968 Յունս 4ին, վաթսուն տարիներու բեմական փայլուն գործունէութենէ մը ետք, Երեւանի մէջ իր աչքերը կը փակէր բազմավաստակ դերասան, Շէշքափիրեան տիպարներու (յատկապէս Օթեկոյի) իր խաղարկու – թեամբ «Ադամեան Երկրորդ» յորջորջու– մին արժանացած «Տրաչք–արուեստագէ – տը»՝ Վահրամ Փափազեան, որուն մա– սին Նշան Պէշիկթաշեան կը վկայէ իր « Թատերական Դէմքեր » անուն գործին մէջ։

— «Երկու հոգի միայն ունեցած ենք իբրեւ շէշքափիրեան շքեղ արուեստագէտ։ Մեր բնմին վրայ երկու երեւոյթներ ե– րած են անոնք. Պետրոս Ադամեան եւ Վաերամ Փափազեան»։

Նոյն վկայութիւնը կ'ընէ Գարեգին Խաժակ։

— «Այնքա՛ն դերասաններ եմ տեսել․ քայց նրանցից ո՛չ ոք ինձ յիշեցրեց Ա– դամեանին։ Առաջին անգամ էր որ տես– նուի էի Փափազեանին (Ա․ Աշխարհա – մարտէն առաջ, Սամաթիոյ մէջ, Պոլիս) եւ ինձ այնպէս թուաց որ Ադամեանը գերեզմանից դուրս էր եկել ու խաղում էր»․․․

Թէոդէիկի «Ամէնուն Տարեցոյց»ի 1923ի հատորին մէջ կ'երեւին Վահրամ Փա – փազեանի ինքնակենսագրական կարգ մը տողերը, որոնցմէ ի յայտ կուգայ թէ ծնած է 1888ի Ծննդեան գիշերը։ Մա– նուկ տարիքէն իսկ «անառակ», դերա– սանական կանխաճառ ընդունակութիւն – ներով օժտուած։

Կը յաճախէ ծննդավայրի (Պոլիս) Մխի– թարեանց վարժարանը (Սաղըզ Աղաճ, Բերա), ապա Եսայեան (1903) եւ Մո – տայի Մխիթարեանց կրթարանը (1905), վայելելով միշտ Մխիթարեան հայրերու և յատկապէս Հայր Յովհաննէս Թորոսեանի գուրգուրանքը։ — «Իմ դաստիարակներս եղան, կ'ըսէ ինքնակենսագրականին մէջ, Մխիթարեան հայրերը, ի մասնաւորի Հ․ Յովհ․ Թորոսեան»։

Բեմական իր գործունէութեան սկզբնա– տրութիւնը կը զուգագրկուի 1908 թուա – կանի օտմանեան սահմանադրութեան օ– բերուն, երբ 1880էն ի վեր տիրող ճնշիչ մթնոլորտը, դրաքննութիւնն ու մշակու– թային ամէն շարժում անդամալուծող սեղմումները վերջ գտած էին արդէն եւ Հայ Բեմը եւս կ'ողկուորուէր վերստին։ Վեներտիկէն նոր վերադարձած, իր շուրջ կը հաւաքէ արուեստի սիրահար անկորձ պատանիներ եւ կը յաճողի հետզհետէ խորացնել ու տարածել շարժումը Պոլսոյ բոլոր շրջաններուն մէջ։ Ապա՝ Իզմիր (1909), Եգիպտոս, Թիֆլիս (1913), Վե–

ՀԱՅԱՍՏԱՆ

ԲՆՈՒԹԵԱՆ ԱՆԱՂԱՐՏ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Օ

« Հայկական ՍՍՀ ութերորդ գումար– ման Գերագոյն Սովետի հինգերորդ սե– սիա »ի բացումը կատարուած է Մայիս 24ին, գլխաւոր օրակարգ ունենալով «Բնութեան պահպանութեան յետադայ բարելաւումն ու բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման միջոցառում – ները»։

Ձեկուցումը, որուն գլխաւոր գիծերը կը ներկայացնէնք, կատարած է Գ․ Ար– դումանեան, Հայաստանի Նախարարնէ – ռու Խորհուրդի նախագահը։

— Պէտք է գիտել տալ, թէ մեր օրե– րուն բնութեան պահպանութեան եւ բնա– կան աղբիւրներու բանական օգտագործ – ման հարցերու լուծումը մեծ կարեւո – րութեամբ կը չեշտուի աշխարհի բոլոր Պետութիւններուն մէջ։ Այսպէս, կարեւ– ւորագոյն հարցերէն մէկն է օդի մաք– րութեան պահպանումը։ Միւս նոյնքան կարեւոր հարցն է ջուրի աղբիւրներու

նետիկ (1914), Պաքու եւ Շուշի (1915)։ 1915ին կամաւոր կ'արձանագրուի․ ու թէեւ Անդրանիկ կը մերժէ ընդունիլ զինք, Դրօ կ'ընդառաջէ սակայն իր փափաքին ու կ'արձանագրէ դայն չորրորդ գունդին։ (Ի դէպ, այդ օրերու իր կեանքէն զուար– ճալի դէպքեր կան Պէշիկթաշեանի գոր– ծին մէջ, (էջ 1039–1040)։

1916ին Մոսկուա է, ապա Թիֆլիս։ 1920ին վերստին Պոլիս, Հայ Տրամաթիքի հետ։ Այդ տարուան ընթացքին յաջոր – դարար կ'այցելէ Հոռոմ, Փարիզ, Լոնտոն։ Նորէ՛ն Պոլիս, Իզմիր ու․․․ յանկարծ Խրիմ։ 1922ին Երեւան է՝ Ջանանի, Չափ– րաստի, Հրաչեայ Ներսիսեանի եւ ու– լիշներու հետ։ 1923ին եւ 1924ին՝ Պաքու, Խարքով, Ռուսով, եւ այնուհետեւ գրե– թէ Ռուսաստանի բոլոր շրջանները։ Բա– ցառիկ յաջողութիւն կը գտնէ Մոսկուայի մէջ (1928)։

1931–1932ին Փարիզ է, 1933–1934ին Թեհրան․․

— «Անվերջ քափառումներէ ետք, ոչ մէկ լուր՝ մաճաւնդ Բ․ Աշխրիամարտի ընթացքին», կը գրէ Ն․ Պէշիկթաշեան։ Ծատ ուշ միայն կը պարզուի, որ Փա– փազեան դերուսոյց նշանակուած է Լե– նինականի թատրոնին։

Կեանքի իր վերջին քսանըհինգամեակը անցընելէ ետք հայրենիքի մէջ, ուր եւս յաղթանակէ յաղթանակ ու նուաճումէ նուաճում քալած էր, Փափազեան փա– կեց իր աչքերը 1968ին՝ օտար թէ համա– հայկական շրջանակներու մէջ տիրական համբաւի մը հասնելէ ետք։

Մ․ Թ․

բանական օգտագործումը եւ անոնց պահ– պանումը։ Ներկայիս արդէն շատ եր– կիրներու մէջ խմելու ջուրի պակաս կը զգացուի։ Միւս կողմէ, հողի պաշարնե– րու ճիշդ օգտագործումը այժմ ամբողջ աշխարհի համար լուրջ հարցեր կը ստեղծէ։

Հողերու կրծումին դէմ գիտականօրէն հիմնաւորուած պայքար մղելու նպա – տակով յատուկ ծրագիր մը մշակուած է՝ իրագործելի մինչեւ 2000 թուականը։

Հողի կրծումին դէմ պայքարելու եւ կրծումի ենթարկուած գիւղատնտեսական հողերու բերքատուութիւնը վերահաս – տատելու նպատակով աշխատանքներ կը կատարուին։ Այսպէս կրծումի ենթար – կուած մօտ 315․000 հեկտար տարածու – թեան վրայ հակակրծումի միջոցներու գիմուած է։ Որոշ աշխատանք է կա – տարուած արօտավայրերու բարելաւման ուղղութեամբ։ Զրիարիւրացուած է մօտ 300․000 հեկտար արօտավայր եւայն։

Սակայն, հակառակ կատարուած դրա– կան աշխատանքին, Հանրապետութեան հողային հարստութեան պահպանութեան եւ անոր ճիշդ օգտագործումի ասպա – րէզին մէջ կը շարունակեն տեղ գտնել լուրջ թերութիւններ եւ բացեր։ Այս – պէս, Հրազդանի շրջնային Խորհուրդի գործադիր կոմիտէն 1971ին որոշում տը– ւաւ ինքնաշարժի պահեստամասերու գոր– ծարանը մեծցնելու համար օգտագործել Արափարս սովխոզին պատկանող 17 հեկտար մշակելի հող։ Մինչդեռ ուսում – նասիրութիւնը ցոյց տուաւ, որ գործա – տունին անհրաժեշտ է միայն 8,5 հեկ – տար հող։ Վարդենեաի շրջնային Խոր – հուրդի գործադիր կոմիտէն նոյնպէս 1972ին որոշում տուաւ կովանոցներու կառուցման համար օգտագործել 15 հեկ – տար մշակելի հող, մինչդեռ ուսումնա – սիրութիւնը ցոյց տուաւ, որ անոնց հա – մար անհրաժեշտ է ընդամէնը 7 հեկտար, այն ալ անմշակելի հող։

Աշտարակի, Կիրովականի, Դիլիջանի, Գուգարքի, Ստեփանաւանի, Արովեանի, Եղեգնաձորի եւ շարք մը այլ քաղաքնե – րու եւ շրջաններու մէջ օրէնքի կոպիտ խախտումներ կ'արձանագրուին։ Ասոնք ընդհանրապէս կապ ունին անհատական բնակարանային շինարարութեան, ամա – րանոց ծառայելու կոչուած առանձնա – տուներու, հիմնարկ – ձեռնարկութիւն – ներու պանդոկներու եւ զանգուածային բնոյթ ստացած այլ ապօրինի կառուցում – ներու գործին հետ։

Հողերու կրծումը կը շարունակէ մնալ Հանրապետութեան գիւղատնտեսութեան գլխաւոր չարիքը։ Արովեանի, Աղիզբե – կովի, Եղեգնաձորի, Գորիսի եւ այլ շըը– ջաններու շարք մը կըլտնտեսութիւննե – րու եւ սովխոզներու մշակելի հողերու կէսէն աւելին կրծումի ենթարկուած է։ Եթէ նկատի առնենք, որ կրծումի են – թարկուած տարածութիւններու բերքը 40–80 տոկոս կը նուազի, պարզ կը դառ – նայ վնասը։

Հողերու կրծումի եւ հողերու գէջ օդ–


տագործումի հետեւանքով Հանրապե – տութեան շարք մը անտեսութիւններու մէջ զգալի տարածութիւններ դուրս մնա – ցած են գիւղատնտեսութեան ոլորտէն։ Այդ հողերու, ինչպէս նաեւ միւս չօդ– տագործուող տարածութիւններու բար – ձրորակ հաշուարկումի խնդիրը առայժմ չէ լուծուած։ Աշխատանքներու ներկայ վիճակը չապահովեր հողերը կրծումէ պաշտպանելու եւ անոր բերրիութիւնը բարձրացնելու գործը։ Ի գործ դրուած միջոցները անհրաժեշտ արդիւնքը չեն տար։

Անհանդուրժելի է հակակրծումի չի– նարարութեան ձգձգումը եւ երբեմն ալ անոնց վիժեցումը։ Այսպէս, «Հայդեւ – տեխնիկա»ն Գիւղատնտեսութեան նա – խարարութեան պատուէրով 1968–1972ին պէտք է 5200 հեկտար տարածութեամբ դարաւանդներ կառուցանէր, մինչդեռ այդ ծրագիրը իրագործեց 1682 հեկտարի վրայ միայն։

Անտառապատումը յատկապէս մեծ թափ ստացած է վերջին երկու հնգամ – եակներու ընթացքին, երբ անտառներու տարածութիւնները աւելցան 30․000 հեկ – տար եւ հասան 345․000 հեկտարի։ Հան – րապետութեան մէջ արդիւլուած են հա – մատարած անտառահատումները եւ սահ – մանուած են անտառահատումներու ա – ողջնապահական դրութիւններ։ Հաս – տատուած են պաշտպանուած անտառնե – ր (Դիլիջանի եւ Խոսրովի անտառները), ինչպէս նաեւ յատուկ պաշտպանութեան տակ դրուած են արժէքաւոր բնափայտի տեսակներ։ Ասոնց ընդհանուր տարա – ծութիւնը 160․000 հեկտար է։ Յաջողու – թեամբ կը կատարուին քաղաքներու եւ աւաններու շուրջը կանաչ դօտիներ ստեղ – ծելու աշխատանքները։ Երեւանի խիստ ցամաքային կլիման մեղմացնելու նպա – տակով քաղաքին շուրջը ստեղծուած է անտառ – պուրակներու կանաչ օդակ։ Նման աշխատանք կատարուած է նաեւ Լենինականի, Կիրովականի եւ այլ քա – ղաքներու մէջ։

Յատուկ ուշադրութիւն դարձուած է կենդանական աշխարհի պահպանութեան եւ հարստացումին։ Կառավարութեան ո – րոշումով որսորդութեան ղեկավարումը յանձնուած է անտառային տնտեսութեան պետական կոմիտէին, հաստատուած են վայրի կենդանիներու եւ ձկան որսի կա – նոններ։ Ամէն տարի այլ Հանրապետու – թիւններէ տիսակաւոր եղջերուներ, վա – րաղներ, նապաստանիներ եւ ուրիշ կեն – դանիներ կը բերուին։ Ապարանի, Մի – սիանի եւ այլ նորաստեղծ ջրամբարնե – րու մէջ ձկնարուծական աշխատանքներ կ'իրադործուին, կ'աճեցուին վնասակար ջրխուռներով կերակրուող ձուկեր։

Սակայն դեռ կան չլուծուած շատ հար – ցեր։ Անտառները եւ արուեստական ջը – րամբարները դեռ չեն դարձած աշխատա – ւորներու հանգստեան դօտիններ, տեղի կ'ունենան որսի զոդութեան անհանդու – ժելի երեւոյթներ։ Գիւղատնտեսութեան նախարարութիւնը եւ անտառային



Ա․ ՄԱՍ

Կ Բ Ա Կ Ի Մ Կ Բ Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԴԱԻԱՃԱՆ ՎԱՀԷ ԻՀՍԱՆԻ ԱՀԱԲԵԿՈՒՄԸ

Բարձրահասակ, քիչ մը փորեղ, թե – թեւ կարմիր աչտերով, սեւ ուրրուն պե – խերով մարդ մըն էր, սեւ ազուոր աչքե – րով, որոնք սակայն թուրք գաղտնի կամ պաշտօնական ոստիկանի նենգ ու կաս – կածոտ նայուածքով կը յառէին ըեզի։ Պատերազմի ամբողջ տեւողութեան դա – դարչունեցաւ, փողոցները շրջելէն եւ տունէր խուզարկելէն, յաճախ խումբ մը ոստիկաններու ընկերակցութեամբ կամ

րու, Գթութեան Գոյրերու եւ միսինար – ներու կողմէ, ակնանտեսի վկայութ – եամբ։

Արդ, ոստիկանները քանիցս խուզար – կած էին այդ տունը Վահէի ցուցմունքին վրայ, բայց բան մը չէին գտած։ Այդ օրն ալ պաշարեցին տունը․ դարձեալ բան մը չգտան․ խորամանկ Վահէն յանկարծ ոստիկաններուն հարցուց․— Տանիքը նա – յեցա՞ք․․․ չուտ տանիքը ելէք, փախըս – տականը հոն պիտի ըլլայ։ Իրաւ ալ ոս – տիկանները տանիքը ելան եւ հոն դտան խեղճ բժիշկը ու վար բերին։ Վահէն գոհ մնալով հանդերձ, բարկացաւ ու ապտակ մը իջեցուց ոստիկանի երեսին ու պո – ոաց․— Ամէն տեղ ձեզի հե՞տ պիտի ըը – լանք։

Երբ այդ խուզարկութիւնները կը վեր – յիշեմ, մտքիս առջեւ իր ամբողջ յստա – կութեամբ կը գծուի պատկերը սարսափի գիշերուան մը։ Մեր տան մէջ սպաստան գտած յեղափոխականներ հաւաքոյթ ու – նէին․ խորհրդակցութիւններ օրուան կա – ցութեան եւ վաղուան ընկելքներու մա – սին։ Այդ օրը անոնց եկած միացած էր նաեւ իտալական բանակի սպայ մը, որ գաղտնօրէն յաջողած էր Պոլիս մտնել, անթեկ հեռագրով գիւրպացնելու համար իտալական եւ անղլիական ընդդովեանե – րուն պարենաւորումը։ Անունը Լինար – տօ էր։

Կէս գիշեր էր․ ամբողջ թաղամասը խոր

քունի մէջ․ բոլոր լոյսերը մարած էին, ի բաց առեալ փողոցի պլպլացող լապ – տերները։ Կաթուրիկ դպրոցին ժամացոյ – ցը կէս գիշեր հնչեցուցած էր․ անկող – նիս մէջ կէս քուն, կէս արթուն, կը հե – տեւէի տան շշուկներուն։ Պարզօրէն կը յիշեմ ամէն բան, նոյնիսկ ձայնը դրացի Մարիամ տոռուաւին թոռան, որ կապոյտ հագէ կը առուապէր եւ մերթ ընդ մերթ կուլար կամ կը հաղար։

Մեր տան դուռը բախեցին նախ թե – թեւօրէն։ Յատկեցի անկողնէս եւ պա – տուհան վազեցի, տեսնելու համար թէ ո՛վ է։ Կեանքիս առաջին մեծ սարսափը ունեցայ, տեսնելով ոստիկաններու ամ – բողջ խումբ մը, կիսամութին մէջ, մեր դրան առջեւ։

Շուարժումի կարճ պահէ մը վերջ ուշքի եկայ եւ կարծակի արագութեամբ վազե – ցի վեր, երրորդ յարկը, փախտաական – ներու սենեակը ու իրողութիւնը երկու բառով պարզեցի։

Սարսափելի օր մը ապրած էինք ար – դէն, լարուած պրկուած ու ջղայնոտ․ ոստիկանները գունդերով պարբերական մեծ խուզարկութիւններէն մէկն ալ կա – տարած էին, մինչեւ Բանկալթի մաղե – լով տուները․ անապահով նկատուած վայրերէն շատեր խոյս տուած էին եւ ոմանք բռնուած էին։

(38 – Դար․)

ՄԱՐՍԷՅԼ

ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍ 30, ՄԱՍՆԱՒՈՐ ՀՈԳԵ-
ՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՈՆ ԵՒ ԾԱՂԿԵՊԱԱԿԻ
ԶԵՏԵՂՈՒՄ 1915Ի
ԵՂԵՆԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻՆ

Մարտէյի Պոլսահայերու Մշակութա-
յին Միութիւնը՝ Յունիս 30ի Շաբաթ ե-
րեկոյ ժամը 18ին կազմակերպած է յար-
գանքի բացառիկ տուրք մը. փրատոյի
Ս. Թարգմանչաց եկեղեցւոյ մէջ իր բո-
լոր անդարձ մեկնող տարաբախտ Պոլսե-
ցիներու հոգւոյ ի յիշատակ, որոնք իրենց
ազգային անսակարկ նուիրումով արժա-
նի նկատուած են Աստուածառաք օրհնու-
թեան, Միութեանս պատուոյ նախագահ
եւ Թարգմանչաց մայր եկեղեցւոյ հիմ-
նադիր բարերար ՎԱՀԱՆ ԽՕՐԱՍԱՆ -
ձԵԱՆ, եկեղեցւոյ ճարտարապետ ԱՐԱՄ
ԹԱՀԹԱՃԵԱՆ, ազգային գործիչ դրագէտ
ուսուցիչ ՄԻՆԱՍ ԶԵՐԱԶ եւ ՄԿՐՏԻԶ
ՓՈՐՈՐԹԻԳԱՆԵԱՆ:

Մասնաւոր արարողութիւն կիրակնա -
մուտքի, ձեռամբ ՅԱՎՈՐ ԵԱՍ. ՎԱՐ -
ԴԱՆԵԱՆԻ, որ պիտի խօսի հին եւ նորոգ
ննջեցեալներու ազգային օգտաշատ գոր-
ծունէութեան մասին:

Արարողութենէն ետք՝ ճաշ ժրմէքիւնի
գեղատեսիլ պարտէզին մէջ Թառա-Լիւփ:

Կը հրաւիրուին հանգուցելոց ազգա -
կանները, բարեկամները, բարեպաշտ ազ-
գայիներ, քոյր միութիւններ:

ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊԱԱԿԻ

Այրի Տիկին Աւճեան եւ Օր. Հայկա-
նոյ Աւճեան (Վարան) կը նուիրեն 150
Փր. ի նպաստ Հայ Կարմիր խաչի օգ-
փոխութեան կայանին, որուն 100 Փրանքը
իրենց ողբ. ամուսնոյն եւ հօր մահուան
տխուր առիթով, փոխան ծաղկեպսակի,
50 Փրանքն ալ անոր մահուան քառասուն-
քի հոգեհանգստեան առիթով:

×

Այրի Տիկին Մ. Ուզունեան կը նուիրէ
50 Փր. ի նպաստ Հայ Կարմիր խաչի օ-
գփոխութեան կայանին, իր ողբ. քրոջ
Ասթրա Թորոսեանի մահուան քառասուն-
քին առթիւ:

×

Տէր եւ Տիկ. Կարպիս Զրբաշեան կը
նուիրեն 100 Փր., Հայ Կարմիր խաչի օ-
գփոխութեան կայանը կեդր. Զեռու -
ցումով օժտելու նպատակին: Նոյն նպա-
տակին համար Պ. Արամ Յակոբեան (Պան-
եհօ) կը նուիրէ 20 Փր.:

×

Հրաշեան եղբայրներ 100 Փր. կը նուի-
րեն Կապոյտ խաչի (ստանալ «Յառաջ») եւ
50 Փր. «Յառաջ»ի Տիկին Մառի Սա-
պուհեանի կսկծալի մահուան առթիւ:

ՆՈՒԵՐ

«Վիթրոլ»էն Տիկին Գոհար Ղազարեան
իր թոռնիկներու մկրտութեան առիթով
կը նուիրէ 30 Փր. Փարիզի Մշակոյթի
Տան Սոցմոն Թէհլրեան սրահին (ստա-
նալ «Յառաջ») եւ 20 Փր. «Յառաջ»ի:

ԿԱՐՄԻՐ ԽԱԶ

ՕԴԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԿԱՅԱՆ

Արձանագրութիւնները կը շարունակ -
ուին Օգոստոս ամսուան համար:

Ա. խումբի մանուկներու բժշկական
քննութիւնները տեղի պիտի ունենան 29
Յունիս, ժամը 10-13, Հայ Կարմիր խաչի
դարմանատան մէջ, 15 Ռիւ Ժան Կուստն,
Փարիզ (Տրդ:

Ա. խումբը կը մեկնի Երկուշաբթի 2
Յունիս, ժամը 14ին, Հայ Կարմիր խաչի
կեդրոնատեղիէն, 15 Ռիւ Ժան Կուստն:

ԱՐՁԱԿՈՒՐԴ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Առաջին ճամբորդութիւն ՅՈՒԼԻՍ 10էն 26, մէկ գիշեր Մոսկուայի մէջ: 26 Յու-
լիսի առաւօտեան մեկնում՝ Երեւանէն, Մոսկուա-Փարիզ, նոյն օրուան ընթացքին
Երկու հոգինոց առաջին կարգի սենեակ, լողարանով, «Արմենիա»ի կամ «Անի»ի
մէջ, երեք ճաշերով: Բազմաթիւ չրջապտոյտներ: Գին՝ 2650 Փրանք:
Երկրորդ եւ երրորդ ճամբորդութիւններ՝ ՕԳՈՍՏՈՍԻՆ եւ ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ

Արձանագրութեանց համար դիմել

TRANSTOURS, 22 rue du 4 Septembre— Paris (2e) — Tél.: 742-77-40
ուր կարելի է անձամբ ներկայանալ Կ. Ունեմանի, ամէն Զորեքշաբթի եւ Շա-
բաթ կէսօրէ ետք ժամը 15էն 18:

MARSEILLE — Z. Aliksanian, 11 Rue du Bassin, St. Julien,
Tél.: 51-74-90 — 66-38-92
ՎԱԼԱՆՍԻ մէջ՝ Ն. Գապարեանի — ԼիՈՆ՝ Պալեանի — ՏէՍԻՆ՝ Կ.Գաբաբեանի
— ԱԼՖՈՐՎԻՆ՝ Յ. Պոյաբեանի

« ԅԱՌԱՋ » ԿԸ ՆՈՒԻՐԷ

Պ. Լեւոն Տէր-Սարգիսեան Վալանսէն,
մէկ տարեկան «Յառաջ» կը նուիրէ Պր.
Գարտուկեանի (Պուր-լէ-Վալանս):

ՏԷՍԻՆԻ ԱՊՐԻԼԵԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆ

64րդ ցանկ

Ազգասէր Հայուհի մը (Կրքնուպը), Տի-
կին Արեւեան, Տիկ. Մամուրեան, Տիկ.
Կէնճեան, Տիկ. Մանուկեան, Տիկ. Տիւյ-
մէճեան, Տիկ. Յովհաննէսեան, Տիկին
Գայթանճեան, Տիկին Թոմասեան, Տիկին
Ս. Տիւյմէճեան, Տիկին Փողհարեան
(Լիոն), Պր. Յակոբ Մէֆէրեան, Պ. Կա-
րապետ Նշանեան, Պ. Կարապետ Զատիկ-
եան, Պ. Յակոբ Նիկողոսեան, Պ. Լեւոն
Շահապետեան, Պ. Անդրանիկ Տէրադ-
եան, Պ. Գարեգին Կիւլէսէրեան, Պ. Աւե-
տիս Թուրքեան, Պ. Մինաս Թորոսեան,
Պ. Առաքելեան, Պ. Ժան Ղազարոսեան,
Պ. Կիւլպէնի Գալուսեան, Պ. Մ. Թ. -
փալեան, Պ. Դանիէլ Ճիգմէճեան, Պ.
Հրանդ Թաշեան, Պ. Գալուստ Թիւթիւն-
ճեան, Պ. Լուիֆիկ Զրաքեան, Պ. Յա-
րութիւն Օհանեան, Պ. Գալաճեան 10ա-
կան Փր.: (Անիէ-Պուա Բոլոմպ):

Նախկին դումար 155-719,38

64րդ ցանկի դումար 300

Ընդհ. դումար 156-019,38

Հ. Յ. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ԲԱՆԱԿՈՒՄ

ՕԳՈՍՏՈՍ ՄԷԿԵՆ 30

CAMP DU NOR SEROUND, COLONIE SAINT ANDRE, ROUTE DE BESSAN
34 BEZIERS (HERAULT) — Téléphone: 76-01-76

Հ. Յ. Դ. Նոր Սերունդի Կեդրոնական Վարչութիւնը իր տարեկան
բանակումը կը կազմակերպէ այս տարի Պէզիէ

ՊԱՅՄԱՆՆԵՐ. — Մէկ ամիս՝ 600 Փր., 14 օրէն աւելի, օրական 26 Փր., 7 օրէն
14 օր՝ 29 Փր. 7էն պակաս՝ 32 Փր.

Արձանագրութիւնները՝ Զորեքշաբթի եւ Ուրբաթ իրիկունները ժամը 18էն 20 եւ
Շաբաթ օրերը՝ 16էն 20: Ծամբորդութիւնը՝ օթոքառով Փարիզէն:

ՊԱՐԳԵՒԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ
ՄԷՋ

Տեղի կ'ունենայ Շաբաթ Յունիս 23ին

— Առաւօտեան ժամը 11ին հանդիսա-
ւոր պատարագ վարժարանին Մատրան
մէջ, աշակերտներու երգեցողութեամբ:

— Ժամը 13ին ընտանեկան ճաշ:

— Ժամը 15ին հանդէս պարզեւարաշ -
խութիւն, երգ, արտասանութիւններ,
հաշուաւորութիւն:

— Ծաշաղին 25 Փրանք

Հեռաձայնել 027-18-28

ԿԱՊՈՅՏ ԽԱԶ

ՕԴԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԿԱՅԱՆ

ՓԱՐԻԶ

Փոքրիկներու Յուլիսի խումբը կը մեկ-
նի Յուլիս 2ին, Սքուար Մոնթրոնէն,
ժամը 7-30ին: Ծնողքներէն կը խնդրուի
առաջնորդել իրենց զաւակները, որոշեալ
ժամուն:

Imprimé sur les Presses
DU JOURNAL « HARATCH »
83, Rue d'Hauteville, Paris (10e)

ԴՊՐՈՑԱՄԵՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ

ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ ԵՒ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

Հովանաւորութեամբ

ՍԵՐՈՎԲԷ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

24 Յունիս Կիրակի օր, ժամը 15ին

Հայկական եւ եւրոպական պարեր

Երգ՝ Պր. ՊԵՏԻԿԵԱՆԷ, ընկերակցութեամբ իր նուագախումբին

Հաղորդակցութեան միջոցներ. — Էլիւզ տը Փանթէնէն առնել 147 թիւ օթոպիւսը:

ՆՈՒԵՐՆԵՐ

ԻՍԻԻ ՄՇԱԿՈՅԹԻ ՏԱՆ ԲԱՑՄԱՆ ԱՌԹԻԻ

Այրի Տիկին Բըլքեան Ներսէս 3000,
Տէր եւ Տիկին Գարայեան Արիս 500, Յով-
սէփեան ընտանիք 500, Կապ. խաչի Իսի
մասնաճիւղ 2000, Տէր եւ Տիկ. Գոճապը-
յըքեան Յովհ. 1000, Տէր եւ Տիկ. Գա-
պար Մանասեան 250, Տէր եւ Տիկ. Կա-
րապետ Թովալեան 200, այրի Տիկ. Ըն-
պատեան Սոֆիկ 200, այրի Տիկ. Յարու-
թիւն Օղինեան 200, Տիկին Վարուժան
Եսայեան 200, Տիկին Շիրվանեան Մի -
րիճան 200, Տիկին Թուրեան Պարոյր 200,
Տիկին Բէֆէլեան Հայկազ 200, Տիկին
Միլիթարեան Տիգրան 100, Տիկին Զատր-
ճեան Յարութիւն 100, Տիկին Միքայէլ-
եան Արմենակ 100, Տիկին Պալեան Գրի-
գոր 100, Տիկին Անկիցեան Գէորգ 100,
Տիկին Մելիքեան Սուրէն 100:

ՇՆՈՐՀԱՎԱԼԻԲ

Սէն Լուի Ս. Գէորգ եկեղեցւոյ Թաղա-
կան խորհուրդը ստացած է հետեւեալ
նուիրատուութիւնները. —

Վարդանոյշ Արթուրեանի թաղման առ-
թիւ՝ Սէն Լուի Հայոց Աւետ. եկեղեցւոյ
հոգեւոր քրդեր 50, Գրիգոր Գալուստ -
եան 50, Ռեփեքա Սեմէրճեան, Բարսեղ
Մարտիրոսեան, Աւագ Զաւկճեան, Անտրէ
Գորգոյեան 10ական:

Փոքրիկին Ղազարեանի (Վիթրոլ) մկըր-
տութեան առիթով՝ Տէր եւ Տիկին Մ.
Ղազարեան 250, Տիկ. Գոհար Ղազար -
եան 50:

Տիկ. Թէրզեան իր զաւակին ամուսնու-
թեան առթիւ 50:

Փոքրիկին Աշխահեանի մկրտութեան ա-
ռիթով՝ Տէր եւ Տիկին Աշխահեան 100,
Պր. Յ. Թիւրքեան 70:

Փոքրիկին Ս. Քեհէեանի մկրտութեան
առթիւ Պր. Քեհէեան 30:

Հոգեհանգիստ Տիկին Արթիւսեանի՝ Պր.
Արթիւսեան 100:

Հոգեհանգիստ Շամշոյեան գերդաստա-
նի՝ Տիկին Լուսին Շամշոյեան 50:

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

ՍԷՆ - ՀԱՄՈՆԻ ՄԷՋ

Հայ Հասարակութիւն Սէն Շամոնի Երիտ-
Միութեան երրորդ տարեդարձին ա -
ռիթով, կազմակերպուած է տարեկան
դաշտահանդէս Յունիս 24, Կիրակի առա-
ւօտեան ժամը 11էն մինչեւ ուշ գիշեր
Institution Sainte Marie, Parc des Frères
Lazaristes, Route du Coin — St. Chamond
(après le Stade Pauze).

Երաժշտական բաժնին իր մասնակցու-
թիւնը կը բերէ Լիոնի Սայաթ Նովա երկ-
սեռ նուագախումբը, նորագոյն զուգերգ-
ներով եւ հայկական զուարթ երգերով:
Խնամքով նկատի առնուած է նաեւ Միու-
թեան համանուն վարժարանին երկսեռ
աշակերտութեան մասնակցութիւնը:

Առատ խմիչք ամէն ճաշակի, հայկա -
կան համադամ կերակուրներ եւ համեղ
աղանդերներ, մատչելի գիններով:

Հաճելի անակնկալներ, հարուստ նը -
ւէրներու վիճակահանութիւն, մանկական
այլազան դրօսանքներ եւ մանաւանդ
Փեթալի (ձեռնադնդակ) մրցաշարք մը,
արծաթազօծ բաժակի վրայ:

ՄՈՒՏՔԸ ԱԶՍԵ Է

ՀԱՃԵԼԻ ԶԲՕՍԱՊՏՈՅՏ ՄԸ

ԹՈՒՔԷԻ ԾՈՎԱՓԸ

Կազմակերպուած Փարիզի Էսսեան Սա-
նուց Միութեան կողմէ, Յուլիս 14, Շա-
բաթ առաւօտեան ժամը 7ին, հաւաքուիլ
Կառ տիւ Նոռ, Քաֆէ Քիւլլիէօրի առջեւ:

Վերադարձ ժամը 23ի առնները:
Էսսեանական հաճելի մթնոլորտ: Իր
մասնակցութիւնը կը բերէ Օր. Անահիտ
Սվաճեան ձեռնադաշնակի ընկերակցու -
թեամբ: Պոստ օթոքառով ծովեղերեայ
չրջանները:

Ծախքերու մասնակցութիւն 30 Փր.
օթոքառով, առանց ճաշի:

Կը խնդրուի կարելի եղածին չափ շուտ
արաձնագրուիլ:

Հեռ. 842-08-57, Պր. Ասլանեանի

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

Նախաձեռնութեամբ Կապ. Խաչի Սեւրանի մասնակցութեամբ

Կիրակի Յունիս 24, ժամը 11էն սկսեալ

10, Rue Lucien Sportice, SEVRAN

(Parc des Sœurs, face à la Gare de Sevrans)

Օթոպիւս 147 Ա. Էլիւզ տը Փանթէնէն

Կամ կառախումբ Կառ տիւ Նոռէն, իջնել Լիւլլի-Սեւրան

Պիւֆէ — Շամիւրով խորոված — Խաղեր — մրցումներ — Անակնկալներ

ՕՐՈՒԱՆ ՊՕՍԿԸ

ՕՐՆԵՆՆԵՐ

ԴՊՐՈՑԱՆԵՐԻՆ

— 0 —

Դպրոցական տարեշրջանը կը մօտենայ իր վախճանին։ Թերեւս կանուխ է տալու ինչ որ լինելու է չորս տարու ընթացքում։ Պէտք է սպասել տարեկան զանգեաներուն եւ պաշտօնական տեղեկագրերներուն, ըստ արժանւոյն կարենալ գնահատելու համար տարուած աշխատանքներն ու ձեռք բերուած արդիւնքները մեր դպրութիւն մէջ։

Դատելով վերջին տարիներու հաշուեկշիռներէն, այն տպաւորութիւնն ունինք, որ բացի Սեւու Սամուէլ Մուրատեան վարժարանէն, որ բացառիկ յաջողութիւններ կ'արձանագրէ աշակերտներու թիւին տարուէ տարի յաւելումով եւ նոր չնքներու կառուցումով, մեր միւս ամէնօրեայ վարժարանն ու հայերէնի շարժական դասընթացները — յարգելով բացառութիւնները — տեղաբայ կ'ընեն, չընելու համար, որ ղէպի ետ կ'երթան։

Այսօր կ'ուզենք մեր դպրութիւն մասնաւոր ուշադրութիւնը հրաւիրել Ռէնսի Դպրոցատէր Տիկնանց վարժարանին վրայ, որ մեր աղջիկներու հայերէն կրթութեան նուիրուած գիշերօթիկ կրթական միակ հիմնարկութիւնն է Եւրոպայի մէջ։ Այդ իսկ պատճառով անկախ մեր բոլորի անվերապահ ու բարեացակամ գործընկերներին առարկայ պէտք է դառնայ։

Քանի մը տարիէն հարեւրամեակն է Դպրոցատէրացին, որ 1879ին, Հայութեան զարթոնքի ոգեւորիչ օրերուն, հայրենաբաղձ ու կրթատէր հոյլ մը Հայոհայններու նախաձեռնութեամբ կեանքի էր կոչուած՝ դաւադիր մեր ուսումնական սերունդին կրթական մշակներ հասցնելու հայրենասիրական դրօշին նպատակով։

Աւելի քան քառասուն տարի կանգուն պատնէշի վրայ՝ Դպրոցատէրացի անհուն զոհողութիւններով ծառայեց Երկրի հայկական դպրոցներուն՝ անձուէր ուսուցչութիւններ հայթայթելով անոնց։

Ամենի փոթորիկէն վերջ ինք ալ դադարեցան հայ ժողովուրդին պէս՝ Դպրոցատէրացի կուրծք տուաւ բոլոր դժուարութեան։ Տէր ու պաշտպան հանդիսացաւ իր խնամքին յանձնուած հարեւրաւոր որդիներուն, զորս պատասխանեց իր հոգածու ձեռքերով։ Ու հանգրուանէ հանգրուան — Սեւանիկէն ու Մարտիրոսէն — անցնելով, եկաւ հաստատուեցաւ փարիզեան արուարձան մը, — Ռէնսի, որ աւելի քան չորս տասնեակ տարիներէ ի վեր կը շարունակէ իր սրբազան առաքելութիւնը։

Ռէնսի աղջկանց վարժարանը անկախ մըն է, ուր կը պատրաստուին մեր ապագայ մայրերը, հայաշունչ մթնոլորտի մէջ։ Այնտեղ մեր աղջիկները կը սորվին մեր մայրենի մեծաբանչը, Հայ դպրաւոր ու փառաւոր պատմութիւնը, կը թրծուին հայկականութեամբ, որպէսզի ջահը փոխանցեն գալիք սերունդներուն։

Դպրոցատէր Տիկնանց Խնամակալու թիւնը ո՛չ մէկ ջանք կը խնայէ վարժարանը հասցնելու համար իր անունին ու առաքելութեան արժանի բարձր մակարդակի։

Յաջողած է իր աշակերտուհիները պատրաստել համաձայն Ֆրանսական կրթական ծրագրին, ոչ ուն վրայ աւելցուցած է հայկական բաժինը։ Անցեալ տարի արժեքի քննութեանց ներկայացած եօթը աշակերտուհիներէն վեցը յաջողած

ՕՐՈՒԱՆ ԴԵՊԵՐԸ

ԲՐԵԺՆԵՒ ՓԱՐԻՋ ԱԼ

ՊԻՏԻ ԳԱՅ

— 0 —

ՆԻՔԱՐԸՆԻ ՀԵՏ
ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԿՍԱՆ

— 0 —

Կիրակի օր, կրկնակ դեկոյցով մը, որ միաժամանակ կը հաղորդուէր Փարիզ եւ Մոսկուա, կը յայտնուէր թէ Ուս — չինկիթընէն Մոսկուա վերադարձին իր ճամբուն վրայ, Լէոնիդ Բրեժնեւ Փարիզ պիտի հանդիպէր, ու խօսակցութիւններ ունենար Նախագահ Փոնտիտուի հետ։ Այս լուրէն կը պարզուի նաեւ թէ ինչո՞ւ Խորհրդային Միութեան թիւ մէկը 48 ժամով կանխած էր Միացեալ Նահանգներ կատարելիք իր ճամբորդութիւնը։

Բրեժնեւ տեղատարափ անձրեւով մը հասած է Ուսչինկիթըն, ինչպէս տեղա — տարափ անձրեւով մը Մոսկուա ժամանած էր նախագահ Նիքսըն, 1972 Մայիս 22ին։ Արտաքին նախարար Ռոնքըս կ'ընդունէր համայնապար պարագլուխը ու զինքը կ'առաջնորդէր Քէմփ Տէյլլիտ, ուր հանդատանալէ ետք, Բրեժնեւ, Երկու — շաբթի օր կ'երթար Ուսչինկիթըն սկսելու համար իր խօսակցութիւնները Նիքսընի հետ։ Նախորդ իրիկունը սակայն, ընդունած էր Քիսինկերը եւ անոր հետ պատրաստած խօսակցութեանց օրակարգը։ Փոքր ցոյցեր տեղի կ'ունենային Հըր —

էին, ինչ որ շնորհաւորելի արդիւնք մըն է։ Վարժարանը այս արդիւնքը կը պարտի որակեալ ուսուցչիչներու ուշադիր աշխատանքին։

Վարժարանը հաստատուն եկամուտներ չունի։ Կրթաթոշակները չեն բաւեր հաւասարակշիռելու ելեւմուտքը։ Շատ աշակերտուհիներ ի վիճակի չեն կրթաթոշակ վճարելու։ Անոնց համար բարեբարներ պէտք են։ Ո՞վ պիտի չուզէր որդեգրել աշակերտուհի մը, որ կոչուած է դառնալու ազգապահպանման ազդակ մը, Հայութիւնը յաւերժացնելու կոչուած մայր մը։

Բախտաւոր է Ֆրանսահայ դպրութիւնը, որ օժտուած է մանչերու եւ աղջիկներու յատուկ գիշերօթիկ երկու վարժարաններով, շնորհիւ Վենետիկի Միթիարեան միաբանութեան եւ Պոլսոյ Դպրոցատէր Տիկնանց Միութեան։

Մեր հայրենակիցներուն վրայ կը ծանրանայ բարոյական պարտականութիւն մը ամէն կերպ աջակցելու անոնց պահպանման ու բարգաւաճման։ Գաղթական չեն այլեւս մեր հայրենակիցները այս երկրին մէջ։ Բոլորն ալ որոշ չափով բարեկեցիկ են եւ ապահոված՝ իրենց անտեսական անկախութիւնը։

Խնամակալ Տիկնանցը կողքին կազմուած յանձնախումբը յաջողեցաւ տարի մը առաջ հանդիսարան մը կառուցանել դպրոցի բակին մէջ, շնորհիւ հանգանակուած լուծմաներուն։

Խնամակալութեան եւ Յանձնախումբին պէտք է օգնեն մեր հայրենակիցները իրենց լուծմաներով, աշակերտուհիներ որդեգրելով եւ ամէն կերպ աջակցելով, որպէսզի անչէլ մնայ հայ մշակոյթի ճրագը։

Օգնենք Դպրոցատէրին։

ՀՐԱՆՏ—ՍԱՄՈՒԷԼ

Եաներու կողմէ, որոնք «նէվըր Էլէյն» (այլեւս երբեք) նշանաբանով, կը բողոքէին այն հայաժանրներուն դէմ, որոնց ենթակայ են իրենց ցեղակիցները Խորհ. Միութեան մէջ։

Բրեժնեւ Փարիզ պիտի գայ Յունիս 25ին եւ մնայ մինչեւ Յունիս 27։ Նախապէս Նախագահ Փոմպիտու Պոնի մէջ իր հերթական հանդիպումը պիտի ունենայ Նախարարապետ Վիլի Պրանտի հետ։

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՅՐԱՆԱՍՏԻ Ֆուլթոնի բաժակին տի — բացաւ Լիոն 1ի դէմ 2 կէտով պարտու — թեան մասնելով Նանթի խումբը։ Մարգարէները եւ մասնագէտները յուսա — խաբ են սակայն խաղէն, ուր նոյնիսկ անկանոնութիւններ տեղի ունեցած են։ Լիոնցիք իրենց երկրորդ կէտը նշանա — կած են ձեռքով երբ իրաւարարը կոնակ դարձուցած էր ու չէր տեսած։ Հանրապետութեան Նախագահը կը փոխարինէր Նախարարապետ Փիէր Մէսմէն։

Ի՞նչ Տէ. Խո. Ի. Ընդհ. քարտուղարը՝ Ալէն Փէյրֆիլթ մասնաճիւղերու քարտուղարներուն առջեւ խօսեցաւ Կիրակի օր եւ ճշգեց թէ եթէ Փոնտիտու կրկին ներկայանայ (1976ին) նախագահական ընտրութեանց զօրավիգ կը կենան անոր, այլապէս իրենք կ'ունենան իրենց թեկ — նածուն։ Այս յայտարարութիւնը կը նըշանակէ թէ Իւ. Տէ. Խո. քարտուղար պիտի չկենայ ժխտար տիւսթէնի եւ պիտի ունենայ իր մարդը։ Փէյրֆիլթ ծագկեց նաեւ համայնապարները որոնք ազատու — թեան համար ցոյց մը կ'արժակերպած են Զորքարթի օր, Փարիզի մէջ։ Երկու — շաբթի օր, սակայն, «Իմանիթէ»ի մէջ, Ռենէ Անտրիէօ կը պատասխանէր Մեծա — մասնութեան կուսակցութեան քարտուղարին. «Փէյրֆիլթ Յրանքօն կը նախընտրէ» խորագրով։ Խմբագիրը չեւտը կը դնէ նաեւ Յրանքայի սերտ յարաբերու — թեանց վրայ Սպանիոյ եւ Յունաստանի հետ, բայց կ'անտեսէ անշուշտ թէ Խորհ. Միութիւնն ալ նման յարաբերութիւններ ունի, նաեւ ու մասնաւոր թուրքիոյ հետ, որու վարչակարգը բաւական հե — ոտ է ժողովրդավար սկզբունքներէ։

ԱՄՆԻԹՈՒԹԻ ՖԱՆԹԱՆԻ Իտալիոյ Քրիստոնեայ — Դեմոկրատ կուսակցութեան ընդհ. քարտուղար ընտրուեցաւ միա — ձայնութեամբ, կուսակցութեան համա — դումարին վերջաւորութեան։

ՄԱՐԴԻ Նահանգին մէջ, Թուրքիոյ հա — բար, 36 հոգի մեռած է ծաղիկէ։ Բժիշկ — ներ եւ դեղեր զրկուած են, որովհետեւ ամբողջ չընանք ծաղիկի համաճարակէ վարակուած է։

ՊԵՐՏՈՒԹԻ մարզադաշտին մօտերը Լի — բանանցի մը սպաննուած է չորս պա — ղետիկի արձակագէտներու կողմէ։ Ար — ձակագէտներու ղեկավարները չորս պա — տասխանատուներէն երկուքը յանձնած են լիբանանեան իշխանութիւններուն։ Լիբանանի նոր դահլիճը դեռ չէ կազ — մուած։

ՍԱՆԹԱԿՈՒՄԻ մէջ արիւնալի բախում — ներ տեղի ունեցան Էլ Թենիէնթէ պղն — ձահանդի բանթոյներուն եւ ձախ տար — բերու միջեւ։ Մէկ հոգի մեռաւ եւ 76 հոգի վիրաւորուեցաւ։ Աշխարհի ամէնէն մեծ պղնձահանքին հանքադրոճները 41 առ հարիւր յաւելում կը պահանջեն ի — րենց աշխատավարձերն վրայ։ Իշխանու — թիւնները կարգ մը առաջարկներ ներ — կայացուցած են։ Գործադուր երկու ա — միս առաջ սկսաւ։

ՀՈՍՄԻ կեդրոնին մէջ երկու Սուրիա — ցիներ ծանրօրէն վիրաւորուեցան, երբ իրենց ինքնաշարժը, որ ուղեւորով լեց — ուած էր, պայթեցաւ։

ԻՍՐԱԵԼԻ վարչապետը թեկնածու է

ԵՐԵՒԱՆ «» ՓԱՐԻՋ
Հ Ե Ռ Ա Տ Ի Պ

ԵՐԵՒԱՆ (Արմէնփրէս, Յունիս 12)

ԵՐԵՒԱՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

«Խորհ. Միութեան զարգարանները» գիրքին մէջ, որ վերջերս լոյս տեսած է անգլերէն եւ ֆրանսերէն, դուրս մը յատկացուած է Երեւանի Մատենադարանին։ Պատկերացուած է Մատենադարանին հա — բրատութիւնը։

×

ԵՐԿՐԱՅԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Երեւանի մէջ բացումը կատարուած է Անդրկովկասի երկրաբանական ժողովին։ Օրակարգի հարցն է ուսումնասիրել Երկ — րադուկի երկրաբանական պատմու — թեան վերջին ժամանակաշրջանը։

×

ԵՐԿՐԱՅԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Երեւանի մէջ բացումը կատարուած է Անդրկովկասի երկրաբանական ժողովին։ Օրակարգի հարցն է ուսումնասիրել Երկ — րադուկի երկրաբանական պատմու — թեան վերջին ժամանակաշրջանը։

Ընկ. Կարո Սաաւմի, որ Մարտիկէն ետք, Փարիզի ճամբով վերադարձաւ Պէյրութ։

Ընկ. Բարգէն Սաաւմի, Լոս Անճելէսէն։

×

Պ. Վախրամ Մալեան, զբաղէս եւ վա — րիչ Գալուստ Կիւպէնկեան Հիմնարկու — թեան Հայկական Բաժնի, որ վերջերս Պոլիս եւ Պէյրութ այցելած էր։

×

Պ. Անդրանիկ Մառուկեան, խմբագրա — պետ Պէյրութի «Նայիրի» շաբաթաթեր — թի։

Խորհրդարանական յառաջիկայ ընտրու — թիւներուն, որոնք տեղի պիտի ունենան Նոյեմբերին։ Տիկնանց Մէյր նամակով մը նկատել կուտայ, թէ կը փափաքէր քաշ — ուիլ հանրային կեանքէն, սակայն չէ յաջողած համոզել իր բարեկամները, ո — րով որոշած է ներկայանալ եւ ի հարկին կրկին ստանձնել վարչապետի պաշտօնը։

ՊԵՐՏՈՒՄԻ թաղաւորն ու թաղուհին վեցօրեայ պաշտօնական այցելութեամբ Պեղրատ ժամանեցին։ Արքայական ամո — լին կ'ընկերանայ Արտաքին նախարարը։ Տիկնանց Կանտի, որ Պեղրատ կը գտնուի, երկրորդ տեսակցութիւն մը ունեցաւ Թի — թոյի հետ։

Վիէթնամի մէջ, հակառակ երկրորդ զինուորին, բախումները առաջուան նը — ման կը շարունակուին։ Քննիչ յանձնա — խումբի անդամներ փոխադրող երկու թոռաներ թեթեւ զէնքերու զննակներ ստացան, երբ թոնքը կը կատարէին Վի — էթնոնիկ հակախօսի տակ գտնուող շըր — ջաններու վրայ։

ՓԵՐՏՈՒ 18 տարի Արժանիքն ղուրս մնալէ ետք, կը պատրաստուի վերադառ — նալ եւ հաստատուի իր երկիրը։ Ար — ժանիքին նորընտիր նախագահին Մատ — լիտ այցելութեան ժամանակ Փերոն հա — կըցուցած է այս վերջնոյն, թէ միակ առաջնորդը ինք կը մնայ փերոնական շարժումին։ Դէտեղը այս եզրանական թեան եկած են, որովհետեւ Փերոն օդա — կայան չէ գացած զիմաւորելու Քամիո — րան եւ ոչ ալ անոր ի պատիւ տրուած ճաշին ներկայ գտնուած է։ Աւելին՝ Քամ — փորա ինք է որ Փերոնի ոտքը դացած է։ Արժանիքին նախկին նախագահը «ան — հանգստութիւն» չէ ունեցած, ինչպէս հաղորդուեցաւ։

ԴԷՄՔԵՐ ԵՒ ԴԷՊՔԵՐ

Տ. ՔԱՆԹԵՄԻՐ

— 0 —

Դէմքերէն մէկը, զոր մտաւորական բովանդակ աշխարհը պիտի ոգեկոչէ այս տարի, Տիմիթրիէ Քանթեմիրն է, դէմք, որ ոչ իսկ տարի մը գրաւեց իշխանական աթոռը, բայց որ հանդիսացաւ ուսմէն ժողովուրդի անկորնչելի փառքերէն մին՝ համաշխարհային մշակոյթին բերած իր թանկագին նպաստին համար։ Եւ արդար էր հետեւաբար, որ Ինէսպօն զայն եւս ներմուծէր շարքին մէջ այն անուանի դէմքերուն, զորս աշխարհի մտաւորաւ — կանոնները պիտի յիշատակէ այս տարի, անոր ծննդեան 300ամեակին ու մահուան 250ամեակին առթիւ, որոնք երկուքն ալ կը զուգադիպին սոյն տարուան։

Ծնած է 1673ին, Տիմիթրիէ գաւակն էր Քանթանթին Քանթեմիր իշխանին, որուն մահէն յետոյ 1693ին թէեւ կոչուած էր յաջորդել անոր Մոլոտովայի աթոռին վրայ, բայց Թուրքերը արգելք եղան աւտոր, եւ ստիպեցին զայն որ նոյն այդ տարին երթայ բնակիլ սուլթաններու մայրաքաղաքը, գրեթէ զոյգ մը տասնամեակ, նախ իրբեւ պատանդ, յետոյ իրբեւ քափուքահա, ներկայացուցիչը իր եղբոր, Անդիոհի որ յաջորդէր էր հօրը Եաշի աթոռին վրայ։ Իր երկար բնակութիւնը Թուրքիոյ մէջ՝ հնարաւորութիւն տուաւ Տիմիթրիէի մօտէն ճանչնալու Թուրքը ինչպէս իր պատմութեան եւ իր բարքերուն, նոյնպէս այն անփառունակ կացութեան մէջ, ուր կ'երթար դահա — վիժիլ տակաւ Օսմանի հիմնած երբեմնի ասելի կայսրութիւնը։ Թուրքերը՝ իրենց կարգին արքանեակ մը չահած ըլլալ կը կարծէին յանձին Տիմիթրիէի, եւ երբ Նիքոլա Մամլոքորտաթի միամեայ (1709—1710) իշխանութենէն յետոյ կրկին թափուր կը մնար Մոլոտովայի աթոռը՝ Բարձրագոյն Դուռը հնարաւոր ըրաւ որ երթայ անոր վրայ բազմի Տիմիթրիէ յուսալով զայն իրենց կողքին ունենալ Ռուսերու հետ նոր բարդութեան մը պարագային։

Ան հաջիւ եօթը ամիս պիտի մնար սակայն իր աթոռին վրայ։ Բայց այդ կարճ շրջանը բաւական եղաւ, որ նոր շունչ մը գայ երկրին մէջ, թեթեւան կարգ մը հարկեր նոյնիսկ ի վնաս իշխանական զանձին, եւ Թուրք լուծէն ազատագրուելու տենող դարձեալ վարակէ երկիրը, ի հեճուկս Թուրքիոյ սպառնական կեցողութեան եւ Պոլսի քաղաքի յարուստի։ Քանթեմիր անհրաժեշտ դաս կ'ընէր զօրաւոր յենարանի մը։ Այդ յենարանը Ռուսերը միայն կրնային

ըլլալ, ու Քանթեմիր ունեցաւ Մեծն Պետրոսի մօտենալու յանդիմութիւնը, եւ նոյնիսկ դաշինք կնքեց անոր հետ Լուրի մէջ 1711 Ապրիլ 3—13ին եւ ջերմ ընդունելութիւն մը կազմակերպեց երբ ուսա գորքերը Մայիս 30ին մտան Եաշ, ուր Յունիս 24ին պիտի հասնէր ինքը ցարն ալ։ Պատերազմը չժպտեցաւ սակայն Ռուսերուն։ Հաշտութիւնը Յունիս 22ին կընքուեցաւ Փրուֆի վրայ յաղթական ճանչնալով Թուրքը։ Վճռուած էր այս կերպով Քանթեմիրի ճակատագիրը եւս։ Ան ըստիպուեցաւ ցարին հետ մէկտեղ անցնիլ Ռուսիա, ուր պիտի ապրէր 12 տարի, ուսւ ժողովուրդի պատմութեան մէջ հանդիսանալով կարկառուն դէմք մը, իր մատուցած ծառայութիւններով քաղաքական եւ մշակութային մարդի վրայ հաւասարապէս։

×

Քանթեմիր հանդիսացաւ դարուն կարկառուն մտաւորականներէն մին՝ պատիւ բերելով ժողովուրդին ալ որուն ծոցէն յայտնուած էր։ Ան իր մտահոգութեան առարկայ ըրաւ նախ կեանքն ու անցեալը այդ ժողովուրդին՝ անոր մասին ձգելով երկեր, որոնք չահեկանութենէ գուրկ չեն մինչեւ այսօր եւ զորս գրի առաւ թէ՛ իր հայրենիքէն դատուելէ առաջ եւ թէ՛ հոնկէ անդարձ բաժնուելէ յետոյ, իր նոր հայրենիքին, Ռուսիոյ մէջ։

Այդ երկերէն առաջինը որ Աշխարհի տիվանը կամ իմաստունին խօսւնդութեան աշխարհի հետ խորագիրը կը կրէր, տպուած էր 1698ին։ Անոր հետեւեր էին փիլիսոփայական երկու փոքր աշխատանքներ, եւ անոնցմէ յետոյ Մեհեմա — գրական պատմութիւնը, որ կերպով մը ուսմանական առաջին վէպն էր, ուր այլաբանական ձեւով կը ներկայացնէր քաղաքական պայքարները ուսմէն իշխող դասին մէջ։

Ռուսիա հաստատուելէ ետքն է որ Պերլինի ակադեմիայի խորհուրդով, որուն անդամ ընտրուած էր 1714ին, հեղինա — կեց իր հռչակաւոր երկերէն մին, Նկարագրութիւն Մոլոտովայի, ինչպէս եւ Ռուման — մոլոտովո — վալախ քրոնիկոնը, Քանթաֆուգիոններու եւ Պրոքսիմիւններու շրջանի դէպքերը, երկեր, որոնք կը ձգտէին քաղաքակիրթ աշխարհին ծանօթացնել երբեմնի իր հայրենիքը իր իսկական կերպարանքին եւ իր ցաւերուն մէջ։ Տարիները զորս Քանթեմիր ան — ցուցած էր Պոլսոյ մէջ՝ հնարաւորութիւն տուեր էին անոր որպէսզի ոչ միայն Թուրքն ու իր պատմութիւնը ան ճանչնայ լրիւ, այլեւ գործունէութիւն եւս ունենայ Թուրք մտաւորական կեանքին մէջ։ Թուրք բանասիրութիւնը զայն կը ճանչնայ արգարեւ եւ կը յիշատակէ «Քանթեմիր Օղլու» անունով։

Յ. Ժ. ՍԻՐՈՒՆԻ

(Մնացեալը յաջորդով)

ՀԱՅԱՍՏԱՆ

ԲՆՈՒԹԵԱՆ ԱՆԱՂԱՐՏ

ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

(Բ. եւ վերջին մաս)


Կարեւոր նշանակութիւն ունի քաղաքներու, աւաններու, գիւղերու, ինչպէս նաեւ սնունդի եւ մեղէնի, կաթնեղէնի արդիւնաբերական ձեռնարկութիւններու ազդեցութեամբ, որպէսզի ջրամբարները չաղտոտին։ Բնակավայրերու աճին ու բարեկարգումին եւ արդիւնաբերութեան վերոյիշեալ ճիւղերու ձեռնարկութիւն — ներուն դարգացումին հետ կ'աւելնայ նաեւ աղտոտ ջուրերու քանակը։ Ամէն տարի այդ նպատակին համար կարեւոր յատկացումներ կը կատարուին, սակայն ատոնք միշտ չէ, որ լրիւ կ'օգտագործուին։ Այսպէս, արդիւնաբերական ջր — նարարութեան նախարարութիւնը եւ գիւղական շինարարութեան նախարարութիւնը տարուէ տարի չեն կատարեր կոյուղիներու եւ մաքրութիւնը ապահովող կառուցուածքներու շինարարութեան ծրարագրները, գործերը յաճախ այնքան կը ձգձգուին, որ նախագիծերը կը հինան, կամ ընակավայրի աղտոտ ջուրերու քանակը այնքան կ'աւելնայ, որ կառուցուող կայանը այլեւս ի վիճակի չըլլար զանոնք մաքրելու (Կիրովական, Էջմիածին եւ այլ քաղաքներ)։ Կը պատահին նաեւ, որ այնքան դէժ շինուած կ'ըլլան այդ կայանները, որ գործածութեան համար պիտանի չեն ըլլար (Լենինական, Կամօ)։

Մեր Հանրապետութեան մէջ որոշ աշխատանք կը կատարուի օդի ապականութեան դէմ պայքարելու համար։ Քիմիական արդիւնաբերութեան եւ գունաւոր մետաղագործութեան մեծ ձեռնարկութիւններու մէջ փոշին հաւաքող կայան — ներ կառուցուած են։

Ինչպէս յայտնի է, Հայաստան հարուստ է բուսիչ հանքային աղբիւրներով, բայց ասիկա երբեք չի նշանակեր, թէ մենք կրնանք հաշտուիլ անոնց ոչ բանաւոր օգտագործման փաստերուն հետ։ Մինչդեռ հանքաբուրքերու վարչութիւնը եւ սնունդի արդիւնաբերութեան նախարարութիւնը շատ աղբիւրներ անփոյթ կերպով կը շահագործեն, որով կը կորսուին մեծ քանակութեամբ բուսիչ ջուրեր։

ԶՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ԶԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ԶԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ



Ա. ՄԱՍ

Կ Ի Ս Կ Ի Մ Կ Ի Տ Ո Ի Թ Ի Ի Ն

ԴԱԻԱՃԱՆ ՎԱՀԷ ԻՀՍԱՆԻ ԱՀԱՐԵԿՈՒՄԸ

Երկու ընկեր կրկին մեր տունը սպաստանած էին, խոճապը աւելցնելով, ատ չբաւէր կարծես, մուտք կոխելուն հետ, գիշերապահներու հետ թմբկահարներ փողոցէ փողոց շրջելով ոչ միայն զօրակոչի հրաւէր կ'ուղղէին, այլ բարձրա — ձայն կը սպառնային փախտականներուն եւ զանոնք պատսպարողներուն — սպառնալիքը որոշ էր. փախտականները եթէ անձնատուր չըլլային, մահուամբ պիտի

պատժուէին։ Մահուամբ պիտի պատ — ժուէին նաեւ անոնց ապաստան տուող — ները։

Կարելի է երեւակայիլ հայ ընտանիքներու անձկութիւնը, տագնապներն ու վախ ու դողը։ Ժամը տասնին ատենները մեծ հրդեհ մըն ալ ծագած էր մօտակայ թաղամասը եւ գիշերապահներուն խպտոտ աղաղակները անգամ մը եւս սիրտերը թունդ կը հանէին. «Եան — կըն վար, եանկըն վար»։ անոնց կը խոսնէին թափառական շուներու հաջոցն ու կարկանձը, եւ փողոցներէն դէպի հըրդեհի վայրը վազվզող մարդոց ժխորն ու վայնասունը։ Այդ բոլորը տարած էինք քաղութեամբ ու համակերպութեամբ եւ հաղիւ հանդարտած էինք քիչ մը ու անս մեր տան դուռը կը դարնուէր...

Մեր փախտականները խոճապի մատնուեցան։ խոճապի ժողովութիւնը ծայր տուաւ եւ աղմուկը մեծցաւ սենեակին մէջ։ Մէկը իրարանցումի մէջ սեղանի մը զարնուեցաւ, առարկները վար թափելով։ Ուրիշ մը անդուռութեամբ թեւիս դպաւ ու ձեռքիս լամբը վար ձգեց։ Տիւրող մթութիւնը սակայն, տարօրինակ երեւոյթ, փոխանակ խոռակութիւնը աւելցնելու կարծես զգաստութեան աղաբարութիւն մը եղաւ եւ իւրաքանչիւրին յիշեցուց իր ընկերը. բացարձակ լուս — թիւն տիրեց։

Դուրսէն կը շարունակէին ծեծել դուռը.

այս անգամ արաղարապ եւ ուժգին հարուածներով։ Կը սպառնային կոտորել դուռը եթէ չբանայինք անմիջապէս։ Սպասեցի որ տղաքը թաղստոյը մտնեն. բոլորովին սպահով ըլլալէ վերջ որ ամէնքն ալ իրենց տեղերը գրաւած են, վար իջայ դուռը բանալու, երբ սանդուխին վրայ, վարը յանկարծ դէմս ելաւ Լինարտոն։ Իտալացին զարմացած կը հարցնէր թէ տղաքը ո՞ւր անհետացած են եւ պաղատագին կը խնդրէր յայտնել անոնց տեղը։ Լինարտոն միայն երկու օրուան համար հիւր եկած էր մեզի եւ այդ պատճառով ալ թաղստոյը գոյութիւնը իրմէ զաղտնի պահած էինք, խուսափելու համար աւելորդ անգաղտնապահութենէ մը։ Սակայն այդ անակնկալին առջեւ, չէինք կրնար զինք լքել։

Իտալացին հեւասպառ խօսքերէն յայտնի եղաւ որ փախուստ տալու փորձ մը ըրած էր, բայց չէր յաջողած։ Փորձած էր տան ետեւի պատահանէն անցնիլ Պօղոս Աղայեցի պարտէզը, սակայն լրտես վահէին ատրճանակի սպառնալիքին տակ ստիպուած էր ներս մտնել։

— Տղաքը ո՞ւր են, տղաքը ո՞ւր են, կը կրկնէր յուսահատօրէն։

Մայրս դրան կը մօտենար բանալու համար։ Պոռացի որ չբանայ ու սպասէ։ Դուրսը ոստիկաններուն աղմուկը ժխոր դարձած էր եւ հայհոյանքներ կը տեղային մեր վրայ։ Իտալացին ըսի որ հե —

Հ. Յարութիւն Պզտիկեանի (*)

ՆԿԱՐԶԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆՂԵՄԻՆ ԱՌԹԻՒ

Արուեստի մայրաքաղաքին մէջ տրուած Պզտիկեանի այս առաջին ցուցահանդէսով, յայտնութիւնը ունեցանք ինքնա — տիպ տաղանդի մը։ Քիչ անգամ պատահած է որ նկարիչի մը առաջին ցուցահանդէսը արժանանայ արուեստասէրներու միահամուռ գնահատանքին։

Հաճելի անակնկալը որ նկարիչը դրած է այս գործերուն մէջ, ապացոյցը անոր որոնող խառնուածքին, հաղիւ նշմարելի չեղում մըն է դէպի ձեւակերպը, որ զինք կը պահէ կերպաւոր եւ վերացական նըկարչութեան սահմանազուլիւն վրայ։

Հ. Պզտիկեան շուտով զրացած է թէ աչքը կառչել կ'ուզէ ձեւակերպի մը, որպէսզի անոր վրայ իր զգայնութիւնը խօսի։ Ձեւակերպը աչքին սնունդն է, անոր ներշնչման աղբ։ Երկինքին սեւեռած աչքը կը յողնի երբ չի դառնար կապոյտ անապատին վրայ ձեւակերպի հետաքրքրութիւններ։

Մեր աչքը, դաստիարակուած տեսողական մշակոյթի ժառանգութեան մէջ, շատ անգամ կը տեսնէ ուրիշ մը աչքով։ Ստացական սովորութիւն մը որուն դէմ կը պայքարի ժամանակը, որպէսզի նկարը, ինչ ուղղութեան ալ պատկանի, ըրլայ տեսողութեան մը անհատական թարգմանութիւնը, աչքով չօչափելի, նման Պզտիկեանի նկարներուն գեղեցկութեան։

Հ. Յարութիւն Վրդ. օժտուած է քիչերուն շնորհուած երեւակայութեամբ։ Կը տեսնէ պատկեր մը ոգիին մէջ. կը դըրսեւորէ զայն դիմերու եւ գոյներու թըրթիւրով ու կը հասնի ԻՐ գեղեցիկին։ Կրնայ ըլլալ որ թերութիւններ տեսնեն ոմանք անոր մէջ։ Թերութիւններ կան որ մաս կը կազմեն առաքնութեան, նման կարգ մը թոյներու, որ մաս կը կազմեն գեղերու։

Արուեստագէտներ, նաեւ գրագէտներ, երախայութենէն եկող յիշատակներ ունին, երազներու եւ տպաւորութիւններու մնացորդներ, որ կը գործեն բնադրական մղումով, հասնելու համար հէքեաթային հրապոյրներու նոր ու անտիպ համոզումին։ Անոնց հրապոյրը Պզտիկեանի նկարներուն մէջն է. հետեւանք՝ ենթադրական կարծիքներու հործունէութեան մը, որ իր նկարներուն կուտայ գերիբական բուրում։ Աւելի դիւրին է զայն գգալ քան բացատրել։ Երբ նկարի արտայայտական ուժը հաղորդական է, աւելորդ կը դառնայ միջնորդութիւնը խօսքին. «Նկարը լուս հիացում կը պատճառէ» խօսքը Վասիլի, կարծէք ըսուած ըլլաւ Հ. Պզտիկեանի նկարներուն առջեւ։ Անոնք քնարականութիւն են իր սրտի գեղումին. ինքնեկ են նման աղօթքին։ Իր հեղկային գոյներու հմայքով կը կառուցանեն ըդգայնութիւնը պատասխին վրայ, ինչ —

տեւի ինծի ու զինքը տարի եւ թագստոյը մտցուցի։ Ճիշդ այդ պահուն երբ տակաւին չէի յաջողած ամբողջովին զոյգել թագստոյը, փողոցին դուռը սարսափելի դղրդիւնով մը խորտակուեցաւ եւ համազգեստաւոր ու գաղտնի ոստիկաններ ներս խուժեցին։ Անոնց մէջ խոնջայ Ալի Րիզան եւ Էջըէֆը եւ Հիւսայէթ անուն լրտես մը, որ նախկին հայ կաթողիկէ կրօնաւոր մըն էր, կրօնափոխ դարձած։

Ժպիտով գիմաւորեցի Էջըէֆը, որուն երեսէն ժահր կը վազէր։ Ոխտ հրամաններ կուտար ոստիկաններուն, տունը տակն ու վրայ ընելու համար։ Ալի Րիզան եւ Էջըէֆը քանի մը անգամ մեր տունը խուզարկելու եկած էին եւ նոյնիսկ անգամ մը ոստիկանատուն հրաւիրելով հաց տուած էին ինծի, այն յոյսով որ իրենց մարդը պիտի դառնամ եւ մեր տունը եւ կող պաշտօնի մասին իրենց լուր պիտի տամ։

Ոստիկանները ալ ձախ նետուելով եւ սանդուխներէն վեր խուժելով, խուզարկութեան սկսած էին, երբ միտք մը յժգացայ ու սկսայ պոռալ։

— Կամաց, կամաց, զգոյշ, սանդուխները խախուտ են (էյրէթի տըր)։

(39 — Երբ.)

2 Ա Յ Ն Ե Ր Գ Ա Ի Ա Ռ Է Ն

ՄԱՅԻՍ 28Ը ՎԻԵՆՆԻ ՄԻՋ

— 0 —

Վիենն (Յառաջ)։— Այս տարի եւս մեծ ոգեւորութեամբ եւ հոծ բազմութեամբ յիշատակուեցաւ Հայաստանի անկախութեան հռչակման տարեդարձը՝ կազմա-կերպութեամբ Հ. Յ. Դ. «Անի» կոմիտէի եւ մասնակցութեամբ Նոր Սերունդի ու կապոյտ թափախ մասնաճիւղերուն։ Հանդէսը տեղի ունեցաւ Շաբաթ երեկոյ, Յու-

պէս գրելը որ իր գծիկներու խմբաւոր-բովումով, կը կառուցանէ մտածումը թուղ-թին վրայ։

Մաղթանքներ չեմ ըներ. մաղթել կը նշանակէ տարակուսել։ Հաւատք ունիմ Պատկեանի պերճագեղ տաղանդին վրայ։ Կը սպասեմ համբաւին որ պիտի չուշա-նայ, եթէ իր նուիրական ամէնօրեայ առաքելութիւնը, որպէս դաստիարակ եւ ուսումնապետ Միխայիլեան վարժարան-նին մէջ, թոյլ տայ իրեն որ զուգահեռ մշակէ նաեւ իր բնատուր տաղանդը՝ նկարչութիւնը։

ԶԱՐԵՆՆ ՄՈՒԹԱՅԵԱՆ

×

ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐ

Ֆրանսական մամուլի գեղարուեստա-կան բաժիններու մէջ անարձագանք չմնաց Հ. Յ. Պատկեանի ցուցահանդէսը։

«Ֆրիկոս», «Օռոս», «Բոմպա» որա-կեցին զայն «ձեւակերպ եւ վերացական, իրականին երկարած դուռ»։

«Լ'Ամաթէօր տ'Առ»-ի մէջ արուեստի քննադատ Հանրի Հէյոս կը գրէ։— «Պըզ-տիկեան մութ խորքի վրայ կարմիրի գեղեցիկ նրբերանգներ դործածելով, ցոյց կուտայ խորհրդաւոր եւ միաթիւ գլխա-նութիւն մը. շատ յաճող են մանաւանդ իր վերացական ձգտում ունեցող նկար-ները»։

Ռուսեր Վերնա «Լէ Նուվել Լիթէրէր»-ի վերջին թիւին մէջ (Յունիս 17) հետեւ-եալը կը գրէ։— «Պատկեան երիտասարդ նկարիչ մը, որուն գործերը շատ հետա-քրքրական եւ անձնական, կարմիրի եւ կապոյտի սքանչելի թրթռացումներով, ձեւակերպչին վերացականի անցնող, կու-տան հանդարտութիւն եւ վեհութեան զգացում»։

(*) Կալըրի տը Սեւոր, Փարիզ 6րդ։

«ԵԱՌԱՋ»-Ի ԹԵՐԹՕՆԸ

(207)

ՀԱՅԱԳՈՐԾ ԿԻՆԸ

ՆՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՕՎԻՏԻ ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ջ.

— Ներեցէք, պարոն, ըսաւ Օվիտ յան-կարծ, խեղճ երիտասարդին մօտենալով։ Ներեցէք որ դժնդակ բանավէճի մը առ-կանջալուր եղայ սկսածայ։

Պաշտօնեան գլուխը վեր առաւ ու լա-լաւին պատասխանեց։

— Պարոն, արդար պատիժ մըն է։ Այո, յանցանք մը գործեցի... Յանցանքէ առ-ւելի բան մը... Ոճիւր մը... Քիչ մը առաջ ձեր տեսած մարդը ժուանելի մէջ մեծ առեւտրական մըն է, որ գինիի առ-ուետուրով յարաբերութիւն ունի հօրեղ-

նիս 2, «Ամիքալ Լայիք» ընդարձակ սրահին մէջ։

Բացումը կատարուեցաւ Նոր Սերունդի ընկերներու խմբովին երգած «Մարտէ-յեզ»ով եւ «Մեր հայրենիք»ով։

Ընկ. Վրէժ Գալուստեան, նախագահը, անդրադառնալով տօնին իմաստին ըսաւ. «Եթէ Ապրիլ ամիսը սուգի եւ տխրու-թեան ամիս եղած է, Մայիսն ալ ուրա-խութեան, հպարտութեան եւ դիւցազ-նութեան ամիս դարձած է, որովհետեւ եթէ չունենայինք Սարգսապատներու արիւնալի հերոսամարտները այսօրուան փոքր տարածութեամբ Հայաստանն ալ դոյրութիւն չէր ունենար. Մայիսեան կը-ռիւններով հիմը դրուեցաւ Հայաստանի անկախ Պետութեան»։

Առաջին բանախօսը՝ Կեդր. Ֆրանսայի Հայ Դատի Յանձնախումբի անդամ, Կրե-նոպլի համալսարանի դասախօս՝ Մօրիս Տոլմաճեան Ֆրանսերէն ձառով մը, չեչ-տեց թէ լաւ ըմբռնելու համար Մայիս 28ը, հարկ է դալն զնել իր պատմական շրջագիծին մէջ։ Անկախութիւնը եղբա-կացութիւնն է պատմական դէպքերու շարքի մը, եւ կարելի չէ հասկնալ զայն եթէ չանդարդառնանք այդ դէպքերուն։ Բանախօսը, ապա, երկարօրէն ծանրա-ցաւ իրերայաջորդ այդ դէպքերուն վրայ, որոնք յանգեցան Սարգսապատի, որ մեր Վերտէօնն է։ Իր եղբակացութեան մէջ, Փրոֆ. Տոլմաճեան ըսաւ. — «Ամէն ժողովուրդ իր գարունն ունի, 1918ի գա-րունը մեր գարունն է, Երեւանի գա-րունն է, հայ քաղաքական գարունն է»։

Երկրորդ բանախօսը՝ ընկ. Կարօ Յով-սէփեան Մայիսեան յաղթանակը հրա-չակերտ անկիւնադարձ մը նկատեց մեր ժամանակակից պատմութեան մէջ, քանի որ անով դարերու անստոյգ կացութենէ մը ետք հիմը դրուեցաւ հայ պետակա-նութեան։ Օրուան վարիչները հայկական դիմագիծ տուին այդ Պետութեան՝ խոր-հրդարանին վրայ ծածանցեցնելով ազգա-լին դրօշը, հիմնելով առաջին հայ հա-մալսարանը, պետական լեզուն դարձնե-լով հայերէնը, կրթական, մշակութա-լին, կառավարական եւ զինուորական ամբողջ կազմն ու կառույցը հայացնելով, Հայութիւնը դարձնելով բնակչութեան ճնշիչ մեծամասնութիւնը, եւայլն։

Գեղարուեստական բաժնին մասնակ-ցեցան արտասանութիւններով Տիկին Արաքսի Աւագեան եւ Օր. Էլիզ Բէլէշեան, մեներգներով Տիկին Ալիս Գալուստեան, իսկ ուղերձ մը արտասանեց Օր. Ասողիկ Սանճեան։

Հ. Յ. Դ. Նոր Սերունդի Կեդր. Ֆրան-սայի «Արագեազ» պարախումբը հայկա-կան պարեր ներկայացուց (Կատակ-պար, Սասունի, Կարնոյ պարեր, եւայլն)։

Հանդէսին յաջորդեց խնջոյքը՝ խան-դալաւ եւ ջերմ։

ԹՂԹԱԿԻՑ

ՄԵՆ ԼՈՒԻ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՕԺԱՆԴԱԿ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆԸ

— 0 —

ՄԱՐՍԷՅԻ (Յառաջ)։— Մէն Լու, Մար-սէյլի այն հայաշատ արուարձաններէն է, ուր տարագիր Հայութիւնը յիսուն տարի առաջ կայան դրած, հաստատուած, բազ-մապատկուած է ու չէնցուցած։ Առանց պատմականը ընելու, ըսենք որ Մէն Լուն ալ չնորհիւ իր ժրպէն եւ նուիրեալ առաջնորդ Գրիգորիս Եպս. Պալաքեանի ջանքին եւ իր ազգայիններու բազուկնե-րուն՝ կառուցած է իր եկեղեցին, գաղ-թականութեան առաջին օրերուն։

Այս շրջանը երկար տարիներ ապրեցաւ ազգային խոր գիտակցութեամբ եւ ար-ժանաւորութեամբ, սակայն այս վերջին տասնամեակին զգալիօրէն կորսնցուց իր ազգային խանդը, թափը եւ ուժգնու-թիւնը։ Այսօր ազգային կեանքը, օճախը բոլորուած է յատկապէս իր եկեղեցւոյ շուրջ, եւ հետեւաբար, հրամայական կոչ է ամուր պահել ու զարգացնել զայն։

Այս առողջ միտումով է, որ երիտա-սարգ հոգեւոր հովիւ՝ Շահան Քահնյ. Տէ-տէյեանի նախաձեռնութեամբ եւ ջանքե-րով 1972ին հիմնուեցաւ Մէն Լուի Ս. Գէորգ եկեղեցւոյ Օժանդակ Տիկնանց Միութիւնը։

Միութիւնը կը հաշուէ այսօր աւելի քան 60 անդամուհիներ, որոնք ամէն տարի կ'ընտրեն իրենց վարիչ մարմինը, որուն ներկայ տարեշրջանի կազմը կը բաղկա-նայ հետեւեալներէ. — Տիկնանք 2. Թի-րէքեան՝ ատենապետուհի, Երէյկին Ե. Տէտէյեան՝ ատենադպիր, Մ. Եղնոյեան՝ դանձապահուհի, Ե. Միսսեան, 2. Պո-լուքեան եւ Հ. Թիւրէքեան՝ խորհրդա-կաններ։

Հասոյթները կը հայթայթուին անդա-մալմարներէ, ձեռնարկներէ, տաղաւար օրերուն մասնաւոր բանկալի պնակէ, նուիրատուութիւններէ։ Իբր ձեռնարկ, ամէն տարի կը կազմակերպէ Զատիկուան օրերուն հակաթախաղի հաւաքոյթ եւ մա-նաւանդ Համարձման օրը տեղի կ'ունե-նայ, եկեղեցւոյ բակը, վիճակի աւան — դական խաղը։

Զմոռնանք աւելցնել որ Մէն Լուի Ս. Գէորգ եկեղեցւոյ Օժանդակ Տիկնանց Մի-ութիւնը ամէն տարի հրապարակ կը հա-նէ օրացոյցներ, սպառելով 250 օրինակ-ներ։ Այս հետեւողական եւ կամաւոր աշ-խատանքին շնորհիւ է, որ Տիկնանց Մի-ութիւնը նիւթապէս զգալի նպաստ բերած է եկեղեցւոյ՝ հոգալով շարաթօրեայ զպրոցին նիւթական ծախքերը, ձեռնար-կելով եկեղեցւոյ կից սրահին սարքա-ւորումին եւ քանի մը տարի առաջ եկե-ղեցւոյ ամբողջ մաքրութիւնը, ներկով եւ արդի առաստաղի մը դեռնեղումով։

Հաւատարիկ արդիւնաբեր եւ ազդեցուտ աշխատանք, որ կը տարուի լուսկեաց, առանց փողի, համեստօրէն բայց ամենայն հաւատարմութեամբ, գիտակցութեամբ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԴՊՐՈՑԱՄԵՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ

Վերջերս Մարսէյլէն, վարժարանի նախկին աշակերտուհիներէն մի քանի տիկիներ, նախալով մը պատրաստակա-մութիւն յայտնած էին օգտակար ըլլալու դպրոցին։

Հաճոյքով ընդառաջ դացինք իրենց այդ բարի զգացումներուն։ Յետոյ այս սիւ-նակներուն մէջ կարդացինք, որ հանդէս մը սարքած են նոյն նպատակաւ, ու մեծ յաջողութիւն ունեցած։

Ջերմօրէն կը զնահատենք այս աշխա-տանքը, ու կը մաղթենք որ նոյն հա-ւատքով ու նոյն եռանդով շարունակեն իրենց այդ ազնիւ գործը։

Սրտադին կը մաղթենք իրարակիւ ըլլայ այն ամէն տեղերու համար, ուր կան նախ-կին աշակերտուհիներ։

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

վճռականութեամբ։ Տիկիներու նուիրու-մը արժանի է զնահատական խօսքերու եւ մանաւանդ արժանի բոլոր ծուխի անվե-րապահ քաջաբանքներուն եւ աշակցու-թեան, որովհետեւ իր գործունէութիւնը նուիրական է ազգապահպանման ճամբուն վրայ։ Փափաքելի պիտի ըլլար, որ շըր-ջանի բոլոր ազգայինները ալ աւելի մօ-տէն հետեւէին անոր քայլերուն, աշխա-տանքներուն եւ իրագործումներուն։

Այսօր, Մէն Լուի Ս. Գէորգ եկեղեց-ւոյ Օժանդակ Տիկնանց Միութիւնը գե-ղեցիկ զապափարը յղացած է եկեղեցւոյ բակը օգտագործելով, նոր, մեծ եւ գե-ղեցիկ սրահ մը կանգնեցնել։ Հսկայ ծրա-դիր մը, որ վաղը կրնայ դառնալ չօշա-փելի իրականութիւն եթէ բոլոր հայրե-նակիցները գիտակցին անոր կարեւորու-թեան եւ անհրաժեշտութեան։

Հարկ է այլեւս երկար տարիներու թըմ-րութենէն եւ ջունէն արթննալ, զգաստ ըլլալ, թօթափել անտարբերութեամբ ժանդոտած հոգիները, դուրս ելլել ա-պարդին եւ ժխտական քննադատութիւն-ներէ, տեսակէտները բացատրել եւ ար-դարացնել նախ աշխատանքով ու երթալ դէպի կենսականը, հրամայականը, որով-հետեւ ժամանակը թանկ է եւ անվերա-դարձ։

Տիկնանց Միութեան ներկայութիւնը եւ գործունէութիւնը դրական երեւոյթ մըն է, իր յամառ եւ լուռ աշխատանքը պէտք է ներշնչէ բոլորը եւ դառնայ մղիչ ուժ դէպի ազգային գիտակցութիւն։

ԿԱՐՕ ՅՈՎԱՏՓԵԱՆ

— Պատրաստ եմ ձեզի ծառայելու, պարոն, պատասխանեց պաշտօնեան։

— Ձեր պահանջատէրին անունը ի՞նչ է։

— Փըթիժան։

— Գլխարկինդ առէք ու անոր քով առաջնորդեցէք զիս։

— Անո՞ր քով, կրկնեց պաշտօնեան դողահար։ Բայց յանդիմանալներով ու նախատիքներով պիտի ընկճէ զիս...։

— Առանց վախճալու, միասին եկէք։

Տիւրմէն մեքենաբար հնազանդեցաւ։ Հինգ վայրկեան յետոյ, երկուքը հասան գինիի վաճառականին գործատեղին։ Վայրագ պահանջատէրը ոտքի ելաւ, տեսնելով որ պարտականը ներս կը մըտ-նէր, ու զայրոյթէն այլայլած դէմքով մը եւ խիստ ձայնով մը ըսաւ.

— Ինչո՞ւ հոս եկաք։

Օվիտ պատասխանեց.

— Բանի մը համար, որուն դուք ալ հաւատարմութիւն պիտի յայտնէք։ Պարոն Տիւրմէն կուգայ իր յանցանքը դարձա-նելու եւ պարտքը վճարելու։

— Պարտքը վճարելո՞ւ, դուք պաշա-ռականը բացայայտ թերահաւատութեամբ մը։

ԿԶԱՎԻՏ ՏԸ ՄՈՒԹԵՓԷՆ

(Շար.)

— Պարոն Տիւրմէն ապշութեամբ նայե-ցաւ իր խօսակցին։ Ինչո՞ւ բարեացակա-մութիւն ցոյց կուտար իր յանցանքին ի-րազեկ դարձած օտարական մը։

« ՅԱՌԱՋ » ԿԸ ՆՈՒՒՐԵՆ

Հայրերու տօնին առթիւ, Վարուժան Գրիբեան (Վարանսէն) մէկ տարեկան «Յառաջ» կը նուիրէ իր հօր՝ Մարտիրոս Գրիբեանի:

ՄԱՐՍԷՅԼ

ՇԱՐԱԹ ՅՈՒՆԻՍ 30, ՄԱՍՆԱՒՈՐ ՀՈԳԵ-
ՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆ ԵՒ ԾԱՂԿԵՊԱԱԿԻ
ԶԵՏԵՂՈՒՄ 1915Ի
ԵՂԵՌՆԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻՆ

Մարտէյլի Պոլսահայրերու Մշակութա-
յին Միութիւնը՝ Յունիս 30ի Շարաթ Ե-
րեկոյ ժամը 18ին կազմակերպած է յար-
գանքի բացառիկ տուրք մը, Փրատոյի
Ս. Թարգմանչաց եկեղեցւոյ մէջ իր բո-
լոր անդարձ մեկնող տարաբախտ Պոլսե-
ցիներու հոգւոյ ի յիշատակ, որոնք իրենց
ազգային անսակարգ նուիրումով արժա-
նի նկատուած են Աստուածաբան օրհնու-
թեան, Միութեանս պատուոյ նախագահ
եւ Թարգմանչաց մայր եկեղեցւոյ հիմ-
նադիր բարերար ՎԱՀԱՆ ԽՕՐԱՍԱՆ -
ձԵԱՆ, եկեղեցւոյ ճարտարապետ ԱՐԱՄ
ԹԱՀԹԱՃԵԱՆ, ազգային գործիչ զբաղէտ
ուսուցիչ ՄԻՆԱՍ ԶԵՐԱԶ եւ ՄԿՐՏԻԶ
ՓՈՐԹՈՒԳԱՆԵԱՆ:

Մասնաւոր արարողութիւն կիրակնա -
մուտքի, ձեռամբ ՅԱԿՈԲ ԵԱՍ. ՎԱՐ -
ԴԱՆԵԱՆԻ, որ պիտի խօսի հին եւ նորոգ
նշնչեցեայներու ազգային օգտաշատ գոր-
ծունէութեան մասին:

Արարողութենէն ետք՝ ճաշ ժամէրիւնի
գեղատեսիլ պարտէզին մէջ Թառաւ-Լիւֆ:
Կը հրաւիրուին հանգուցելոց ազգա -
կանները, բարեկամները, բարեպաշտ ազ-
գայիները, քոյր միութիւնները:

ՅԱԽԱԿՑՈՒԹԻՒՆ

Տէսինի Մշակոյթի Տան յանձնախումբը
չնորհակալութեամբ ստացած է Տէսինի
Վասպուրականի Հայր. Միութեանէն 200
Փր. Մայիս 28ի առթիւ, ի նպաստ Մշա-
կոյթի Տան:

×

Կապ. Խաչի Կրքնալի մասնաճիւղը չը-
նորհակալութեամբ ստացած է Տէր եւ
Տիկին Խ. Անտոնեանէ, իրենց մանչ զաւ-
կին ծնունդին ուրախ առիթով, 200 Փր.
ի նպաստ իր զպրօցին:

×

Նոյնպէս չնորհակալութեամբ ստացած
է Տէր եւ Տիկին Վ. Բարախեանէ 100 Փր.
եւ Սասունեան ընտանիքէն 50 Փր. փո-
խան ծաղկեպսակի Սարգիս Տէր-Յարութիւնեանի
մահուան առթիւ, ի նպաստ իր
զպրօցին:

ԿԱՐՄԻՐ ԽԱԶ

ՕԴԱՓՈՒՆՈՒԹԵԱՆ ԿԱՅԱՆ

Արձանագրութիւնները կը շարունակ -
ուին Օգոստոս ամսուան համար:

Ա. խումբի մանուկներու բժշկական
քննութիւնները տեղի պիտի ունենան 29
Յունիս, ժամը 10-13, Հայ Կարմիր Խաչի
զարմանատան մէջ, 15 Ռիւ Ժան Կուստն,
Փարիզ (8րդ):

Ա. խումբը կը մեկնի Երկուշաբթի 2
Յունիս, ժամը 14ին, Հայ Կարմիր Խաչի
եկեղրնատեղիէն, 15 Ռիւ Ժան Կուստն:

Passez vos vacances

en caravanes pliantes ou rigides




la bohème rigide 310 • 380 • 395 • 425 • 525
Cinq modèles standing. 10 versions. L'équipement de chacun
vous étonnera par le nombre des accessoires et les solutions
rationnelles que nous avons donné au problème confort. Ce
sont vraiment des caravanes pour caravanners difficiles.
LES VACANCES C'EST

la bohème

UNE MARQUE DE
RENOMMEE EUROPEENNE

super thomlac
THOMASSIAN Frères



la bohème pliante • MAXI • MINI • PRIMA
Trois caravanes pliantes, tractables par les plus "petites
cylindres". Leur coque est celle d'une caravane rigide
(double paroi avec isolation totale, toit couvrable en polyester).
A l'étape, un vaste séjour encadré par deux grandes chambres
séparées.

Carrefour de l'Éléphant PALAISEAU
T.928.03.88
N.20 Saint-Germain-lès-ARPAJON
T.490.17.79

NEUF-OCCASION-ACCESSOIRES-POSE D'ATTELAGES

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Պ. Յակոբ Սասունցեան, Օր. Օր. Ժե-
նիա եւ Սեդա Սասունցեան, Պ. Յարութիւն
Միւնեան, Օր. Սաթեհիկ Միւնեմ-
եան եւ բոլոր պարագաները շնորհակա -
լութիւն կը յայտեն ըտլոր անոնց որոնք
ծաղկեպսակով, փոխան ծաղկեպսակի
նուէրներով, հեռագրով, անձամբ, հե -
ռաձայնով թէ զբաւոր վշտակից եղան
իրենց կնոջ, մօր, քրոջ եւ ազգականին՝

ՄԱՐԻ ՍԱՊՈՒՆԶԵԱՆԻ

(ծննալ Միւնեմեան)

Կսկծալի կորուստին առթիւ:

ՊԱՐԳԵՒԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ
ՄԷԶ

Տեղի կ'ունենայ Շաբաթ Յունիս 23ին
— Առաւօտեան ժամը 11ին հանդիսա-
ւոր պատարագ վարժարանին Մատրան
մէջ, աշակերտներու երգեցողութեամբ:

— Ժամը 13ին ընտանեկան ճաշ:
— Ժամը 15ին հանդէս պարգեւարաշ -
խութիւն, երգ, արտասանութիւններ,
հաշուետուութիւն:

— Ճաշագին 25 Փրանք
Հեռաձայնել 027-18-28

ՀԱՃԵԼԻ ԶԲՕՍԱՊՏՈՅՏ ՄԸ
ԹՈՒՔԷԻ ԾՈՎԱՓԸ

Կազմակերպուած Փարիզի Էստեան Սա-
նուց Միութեան կողմէ, Յունիս 14, Շա-
բաթ առաւօտեան ժամը 7ին, հաւաքուիլ
Կառ տիւ Նոռ, Գաֆէ Գիւրդիէօրի առջեւ:

Վերադարձ ժամը 23ի առեւնները:
Էստեանական հաճելի մթնոլորտ: Իր
մասնակցութիւնը կը բերէ Օր. Անահիտ
Սվաճեան ձեռնադաշնակի ընկերակցու -
թեամբ: Պոտյո օթոքառով ծովեղերեայ
չրջանները:

Ծախքերու մասնակցութիւն 30 Փր.
օթոքառով, առանց ճաշի:

Կը խնդրուի կարելի եղածին չափ շուտ
արաձնագրուիլ:
Հեռ. 842-08-57, Պր. Ասլանեանի

ԱՂՔԱՏԱԽՆԱՄԻ
ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

ԿԻՐԱԿԻ, ՅՈՒԼԻՍ 1 ԺԱՄԸ 10-22

ՄՈՒՄՈՐԱՆՍԻԻ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՏԱՆ

ԴԱՐԱՍՏԱՆԻՆ ՄԷԶ, 44-50 Ալքմիւ Շառլ տը Կօլ, Մանմորանի

Դուռները կը բացուին ժամը 10ին եւ կը տնէ մինչեւ ժամը 22

Կէսօրին կարելի է ճաշել ճաշացուցակին համաձայն: Կարելի է նախօրօք սեղան-
ները ապահովել հեռաձայնելով՝ Մանմորանի 964-20-67 եւ կամ Ալքատախամի
կեդրոնը 878-02-99

Աւանդական շամփուրով խորոված, թէ՛ կէսօրին եւ թէ՛ իրիկունը: Անջատ առատ
ամէն տեսակ ուտեստեղէն եւ ըմպելիներ Բացառիկ ժամանցի օր մը, նուագ, երգ
եւ անկնկալներ: — Գեղարուեստականքաժինի իրենց մասնակցութիւնը կը բերեն
ՆԱՅԻՐԻ եւ ՄԻՆԻ-ՍՕՍԻ պարախումբերը, Տիկին ԱԼԹՈՒՆԵԱՆ իր երգերով
Օր. Անահիտ Սվաճեան ձեռնադաշնակով

ԹՈՄՊՈՂԱ, արժէքաւոր առարկաներով

Մուտք 5 Փր., ուսանողներու եւ երախաներու 2 Փր.

Անճրեւի պարագային, ապահովութիւններ ձեռք առնուած են:

ԾԱՆՕԹ. — Մանմորանի երթալու համար չողեկառք առնել Կառ տիւ Նոռէն
եւ իջնել Անկէն (Իւրաքանչիւր քառորդ ժամուն, անցնիլ կամբակը եւ թիւ 6
օթոպիւսով իջնել Կրոլէի կանը (առէ):

ԿԱՐԵԻՐ. — Փափաքելի է որ ամէն ոք տեղւոյն վրայ ծախսէ, կը յանձնա-
բարուի ուտելիք չըբերել:

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

ՌՈՄԱՆԻ ՄԷԶ

Կազմակերպուած Ռոմանի Հայերու
Բարեկամական Միութեան կողմէ, Կիրա-
կի Յունիս 24 ամբողջ օրը՝ ՄՕՓԱ:

Imprimé sur les Presses

DU JOURNAL « HARATCH »

83, Rue d'Hauteville, Paris (10e)

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

Նախաձեռնութեամբ Կապ. Խաչի Սեւրանի մասնաճիւղին

Կիրակի Յունիս 24, ժամը 11ին սկսեալ

10, Rue Lucien Sportice, SEVRAN

(Parc des Sœurs, face à la Gare de Sevrans)

Օթոպիւս 147 Ա. Էլլիզ տը Փանթէնէն

Կամ կառախումբ Կառ տիւ Նոռէն, իջնել Լիւրի-Սեւրան
Պիւֆէ — Շամփուրով խորոված — Խաղեր — մրցումներ — Անկնկալներ

ՕՐՈՒԱՆ ՊՕՍԿԸ

ՍՓԻԻՌՔ ԵՒ
ՀԱՅԵՐԱՀՊԱՆՈՒՄ

—0—

Այնչաճատելի է սփիւռքի նպատար հայ մշակոյթի, լեզուի, գրականութեան, արուեստի, մէկ խօսքով ազգային դիմա — դիմի պահպանման մարզին մէջ, հին, հին դարերէ ի վեր:

Զրկուած անկախ հայրենիքէ, ցիրուցան ի սփիւռս աշխարհի, տարագիր Հայու — թիւը տէր ու պաշտպան է կանգնած իր հայրենու մտաւորական ու քաղաքակրթական արժէքներուն, ազգային սրբութեանց ու նուիրական անաղուծեանց եւ անաղարտ է պահած մեր ինքնուրոյն դէմքը, կուրծք տալով ամենի փոթորիկներու:

Արտասահմանի Հայութիւնը լոյսի վառարաններ է հաստատած օտար հօրի — դոններու տակ, Եւրոպայէն մինչեւ Հնդկաստան: Հայկական մշակոյթի բարդաւած կեդրոններ է հիմնած Վենետիկ, Վիեննա, Պոլիս, Իզմիր, Երուսաղէմ, Թիֆլիս եւ այլուր: Վարժարաններ բացած, եկեղեցիներ է կառուցած ամէն տեղի:

Ու երբ ստեղծուեցաւ Հայաստանի Հանրապետութիւնը մեր պատմական հողերու մէկ մասին վրայ, Հայութիւնը կը ներկայանար իրրեւ ժառանգորդը իր հայրենու մտաւորական հարստութեան՝ ամէն տեղի:

Հայրենիք եւ սփիւռք լծուեցան չեւարար աշխատանքի, Մեծ Եղեռնի եւ առոր յաջորդող դոյամարտի դժնդակ օրերուն մեր մտաւորականութեան թողած անհուն լացը դոցելու գովելի նախան — ձախնդրութեամբ: Յանուն ինքնապաշտպանութեան:

Ի պատիւ կատարուած եւ քանիցս արտադրոյթի ենթարկուած Հայութեան պէտք է խոստովանիլ, որ 1920էն վերջ արտասահմանի օտար աստղերուն տակ մեր տարագիր եղբայրները մէկ կողմէ նոր բոյն շինելու, նոր տնտեսութիւն ապահովելու կենսական աշխատանքներուն լծուելով մէկտեղ առաջնակարգ կարեւորութիւն ընծայեցին ազգապահպանման անհրաժեշտ ազդակներուն:

Մերձաւոր Արեւելքի, Պալէստինայի, Եւրոպայի եւ հեռաւոր արեւմուտքի դառնալի երկիրներուն մէջ ստեղծեցին մշակոյթի նոր վառարաններ, դիմակալելով ամէն կարգի դժուարութեանց:

Փակուած էին հայրենիքի դուռները: Արտադրողը՝ դարձած ֆիզիքական փերկութեան եւ տնտեսական դոյութեան գերագոյն միջոց՝ դժբախտաբար կը շարունակուի աւելի քան կէս դարէ ի վեր: Ժամանակաւոր կարծուած հանգըր ուսնները դարձան մնայուն: Հայաստան կը մնայ հեռաւոր երազ տարագիր բազմութեանց համար: Հայրենադարձութեան տարեկան չնչին բաժնեւէտի դարման չէ մեզ տանջող ցաւին:

Քանի կ'երկարին տարագրութեան տարիները այնքան կը դժուարանան ազգապահպանման ձեռնարկները, որոնք կոչուած են Հայ պահելու մեր նոր ու նորագոյն սերունդները:

1920էն ի վեր առնուազն երկու սերունդ փոխուած է: Օտար հողի վրայ ծնած մեր զաւակներն ու թոռները դարձած են լրիւ իրաւունքներով քաղաքացիներ իրենց ապրած երկիրներուն: Կենքի բնական բերումով, խառն ամուսնութեանց հետեւ

ՍՐՈՒԱՆ ԴԵՊԲԵՐԸ

“ԱՇԽԱՐՀ ՄԵԶԻ ԿԸ ՆԱՅԻ”

Կ'ԸՆԴ ՆԻՔՍԸՆ ԲԵՐԺՆԵՒԻ

—0—

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԵՐ

Նիքսըն եւ Բրեժնեւ իրենց հանդիպումին առաջին օրն իսկ նախատեսուածէն շատ աւելի երկար խօսակցութիւն ունեցան, ընդամենը չորս ժամ: Երկու գերպետութիւններու առաջնորդներն ալ կ'ուզեն ցոյց տալ, թէ այս հանդիպումը բացառիկ նշանակութիւն ունի աշխարհի խաղաղութեան համար: Արդարեւ, Նիքսըն յայտարարեց, թէ ռովանդակ աշխարհ իրենց կը նայի, որովհետեւ բոլոր ժողովուրդները գիտեն, թէ եթէ աշխարհի ամէնէն հզօր երկու երկիրներու առաջնորդները յաջողին գործակցել զգալապէս կ'աւելնայ խաղաղութեան հասնականութիւնը:

Բրեժնեւ, իր կարգին, նոյն կարծիքն ունի, քանի որ իր յայտարարութեան մէջ նկատել տուաւ, թէ «միասնաբար պիտի աշխատինք այնպէս, որ այս խօսակցութիւնները արդարացին մեր եւ աշխարհի ժողովուրդներու յոյսերը»:

Յարգ կ'ըսուէր, թէ Նիքսըն — Բրեժնեւ խօսակցութիւններու արդիւնքը պիտի ըլլայ հինգ-վեց համաձայնագիրներուն կընթումը՝ ովկիանոսագիտութեան, փոխադրութեան, երկրագործութեան եւ դիւտա — կան հետազոտութիւններու մարդերուն մէջ: Արդէն այս հարցերուն շուրջ երկու երկիրներու մասնագէտներ ժամանակէ մը ի վեր կը բանակցին, որպէսզի համագործակցութիւն մը հաստատուի երկուստեք:

Այժմ քայլ մը առաջ կ'երթան: Համաձայն չըլլան ընող զրոյցներու, Մ Նահանգներու եւ Խորհ. Միութեան միջեւ համաձայնութիւն մը պիտի կնքուի հիւլէական ուժի խաղաղ օգտագործման ուղղութեամբ: Երկու երկիրները պիտի գործակցին այս մարզին մէջ:

Մինչ այդ, Խորհչեւէն 14 տարի ետք, կարմիր դրօշը կրկին կը ծածանի Սպիտակ Տան վրայ եւ Բրեժնեւ իր նախորդին կարծիքը չունի եւ չի խորհրդ, ինչպէս Խորհչեւ թէ «գերամատրութեան կաղ ձիուն» օրերը հաշուուած են:

ԵՐԲ ԹՈՒՐԻԸ ԹՈՒՐԻ
ԿԸ ՀԱԼԱԾԷ ...

—0—

Զարչարաններու հարցը կրկին օրու — կարգի վրայ է Թուրքիոյ մէջ: «Ռում — բերու» դատավարութեան 57 ամբաստան

ւանքով եւ միջավայրի պարտադրանքով անոնց մէկ մասը դատապարտուած է կորսուելու:

Մեր բոլորին վրայ նախնական պարտականութիւն կը ծանրանայ փրկելու մնացեալները:

Համբանքի փրկութիւն: Այս պէտք է ըլլայ օրակարգի հրատապ հարցը հայրենասէր բոլոր Հայերուն համար, ինչ դաւանանքի ալ որ պատկանին:

Սփիւռքը պէտք է մնայ իր անցեալ համբաւի բարձրութեան վրայ՝ անաղարտ պահելով Հայութեան դիմագիծը հայրենիքէն հեռու, օտար հօրիգոններու տակ:

ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒՅԼ

եաներէն մէկը՝ Նուման էշին, յայտնած է Պոլսոյ զինուորական Ատեանի դատաւորներուն, որ չարչարուած է սատիկանութեան կողմէ զաղտնի խցիկի մը մէջ: Երկու նախկին սպաներ, որոնք նաեւ ամբաստանութեան տակ են, նոյնը ըսած են, պնդելով թէ չարչարանքներու ենթարկուած են հարցաքննութեանց առէն:

Դատարանին դիմումին վրայ, պաշարման վիճակի իշխանութիւնները երկու ամբաստանեալները (Թուրհան եւ Եալ — ճինքայա) Հայտարարալայի զինուորական հիւանդանոցը զրկած են, ուր բժիշկները չարչարանքի հետք չեն գտած, ինչ որ պատճառ եղած է որ Նուման էշին մերժէ այդ բժիշկներուն ձեռնհասութիւնը, դանոնք նկատելով մարդիկ որոնք «յանձնառու են իրենց զինուորական պարտաւորութեանց»: Ուրիշ ամբաստանեալ մը Աթամէտ Էրոլ դատաւորներուն ներկայացուցած է իր մէկ կտորած ակոսն: Նկատի առնելով հանգերձ ըսուածները, զինուորական դատաւորները իրենց համոզումը յայտնած են որ չարչարանքներու պատմութիւնը պաշտպանութեան մեթոտ մըն է, որ կը ձգտի ազդեցութիւն գործել Հանրային կարծիքին վրայ: Ասոր հակառակ 1960 Մայիսի զինուորական պետական հարուածի երկու նախկին սպաներ՝ Քարալիւիւղլու եւ Քարաման շատ բուռն հակազդեցութիւն ունեցած են: Պոլսոյ զինուորական հրամանատարին ուղղուած հեռագրով իրենց վրդո — վումը յայտնած են չարչարանքներու գործելակերպին գէմ, որ կը ձգտի «կեղծ յանցանքներ» գտնել, մինչ բուն պատասխանատուները, որոնք 1971 Մարտին, երկիրը ազէտի կ'առաջնորդէին, միշտ ազատ են:

Կարգ մը լուրերու համաձայն, բազմաթիւ երիտասարդ համալսարանականներ, որոնք ծանօթ են իրենց յառաջդիմական դադափարներուն համար, ձեռք բաղաւած են Անգարա եւ այդպէս ալ կը պահուին:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՇՈՐԺ ՊՈՆԷ, նախկին նախարար եւ ղեկավար, մեռած է առջի օր, 84 տարեկանին: 18 անգամ նախարար եղած է 1924էն 1940 եւ Արտաքին նախարար էր Միւնիխի առէն:

ՇԱՊԱՆ — ՏԷԼՄԱՍ վերադարձաւ Զիւնաստանէն եւ Երկուշաբթի իրիկուն հարցումներու պատասխանեց հեռատեսիլի Բ. կայանէն: Խուսափեցաւ արտայայտուել նախադահական իր թեկնածութեան մասին, «անտեղի» գտնելով նման հարց մը երբ Հանրապետութեան Նախագահ մը կայ, որ իր պաշտօնին գլուխն է: Պարզ է որ սակայն Շապան ապագայի յոյսեր ունի եւ միտք չունի գոհանալու իր անցեալով:

ՅՈՒՆԻՍ 18ի տարեդարձը անգամ մը եւս յիշատակուեցաւ թէ՛ Փարիզ եւ թէ՛ մանաւանդ Մոն Վալէրիէն, ուր արարողութեան ներկայ եղաւ Հանրապետութեան Նախագահը:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ եօթը դիտնականներ, որոնք ծագումով Հրեայ են, երկրորդ շաբաթն ըլլալով կամաւոր ծոմ կը պահեն: Կը պահանջեն, որ իշխանութիւնները արտօնեն Իսրայէլ դադթել:

ԳԱՀԻՐԷԷՆ կը հաղորդեն, թէ 52 ուսանողներ պիտի դատուին պետական ապահովութեան դատարանին կողմէ: Ասոնք ձերբակալուած էին Յունուարին, երբ համալսարանական խռովութիւններ ծայր տուին Գահիրէի մէջ: Խռովութիւնները հակապաշտպարական բնոյթ ունէին:

ՇՈՒԷՏԻ արեւմտեան ծովափի ձկնորսներու դաշնակցութիւնը զօրավիգ կը կենայ անգլիացի ձկնորսներուն՝ ձողա —

ԺԱՆ ՊԱԼԱՐԻ ՄԱՀԸ

Մարտիսի մէջ 80 տարեկանին, իր մահկանացուն կնքած է Քահիլէ տիւ Սիւտի հիմնադիրը՝ Ժան Պալար:

Անուն մը, որ ծանօթ է ոչ միայն Փլանսական գրական շրջանակներուն այլեւ Հայութեան: Արդարեւ, Ժան Պալար, առիթն ունեցած էր գնահատելու հայ բանաստեղծութիւնը, շնորհիւ Լիւք-Անտրէ Մարտիլի եւ Կարապետ Փօլատեանի, որոնց հետ նաեւ եւ զխաւորութեամբ Ծ. Նարդունիի, շրջապոյտ մը կատարած էր Մերձաւոր Արեւելքի հայկ. դպրութիւնը (1954):

Ժան Պալար լայն բացած էր իր էջերը հայ գրականութեան եւ բանաստեղծութեան առջեւ, եւ ամէն առթիւ կը հրատարակէր թարգմանութիւններ, նոյնիսկ Քահիլէ տիւ Սիւտի ամբողջ թիւ մը նուիրած էր հայ դպրութեանց:

Ժան Պալար 1913ին հիմնած էր Քահիլէ տիւ Սիւտը, որ կոչուած էր քառուղին ըլլալու գանազան գրականութեանց, զըլխաւորաբար միջերկրականեան զարգացման տէր գրիչներու: Հոն սկսած են գրել անուններ որ համբաւ պիտի չահէին յետագային ինչպէս՝ Մարտիլ Փանեոլ, Մարտիլ Պրիւս, Քարլօ Ռիմ եւայլն: Արհեստով իրաւագիտական ասպրնէզին կը պատկանէր բայց ամբողջ ժամանակը կը տրամադրէր իր պարբերականին, զոր կը ստիպուէր դադրեցնել նիւթական պատճառներով: Վերջին թիւին (1966) նախարանը գրած էր Սէն-ձոն Փէրս:

ձուլի պատերազմ»ին մէջ, Անգլիոյ եւ Իսլանտայի միջեւ:

ՍՊԱՆԻԱ «անյարմար» նկատեց Իսրայէլի ծայրահիւսիսի սէնֆոնիք նուազա — խումբին մասնակցութիւնը Սանթամէրի երաժշտութեան փառատօնին: Կ'ենթադրուի, թէ արար գեապանները ճնշում բանեցուցած են Մարտիլի վրայ, նկատելով որ Իսրայէլեան մասնակցութիւնը փառատօնին Սպանիոյ եւ Իսրայէլի մերձեցման նախանշան կրնայ նկատուիլ: Սպանիա երբեք չէ ճանչցած Իսրայէլը:

ՄԷՍՄԷՆԻ յայտարարեց Ռըվիւ տէ տէ Մոնտի ճաշին ընթացքին թէ յետ այսօրիկ «արդարութիւնը աւելի մօտիկ եւ աւելի արագ պիտի ըլլայ»: Նախարարապետը 9 միջոցներ թուեց, որոնք ի գործ պիտի դրուին հետզհետէ: Ասոնց կարգին պիտի հաստատուին, օրինակ, իրաւարար — դատարաններ, որպէսզի կարգ մը հարցեր լուծուին առանց երկարապատում դատաւարութիւններու: Աւելի ձեռն կ'ըլլայ առ — ժամայ ազատութեան հարցը: Ամբողջ — ջովին պիտի վերաքննուի Պատժական օրէնագիրքը: Աւելի պարզ պիտի դառնայ նաեւ լեզուն, տրուած ըլլալով որ կարգ մը դարձուածքներ բոլորովին ժամանակավրէյ, անհասկնալի են:

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ Արտաքին նախարարին կարծիքով դեռ մէկ-երկու տարի պէտք է, մինչեւ որ կարելի ըլլայ հա — մաձայնութեան եղբ մը գտնել Արեւելք — Արեւմուտքի միջեւ: զինուորական ուժերու գեղջին համար կեղբ. Եւրոպայի մէջ: Նման համաձայնագրի մը կնքումէն ետք է միայն, որ կարելի պիտի դառնայ Մ. Նահանգներ փոխադրել Եւրոպա գտնուող 300-000 ամերիկացի զինուորներուն մէկ մասը:

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ նաւատորմիզը փոքր կայան մը հաստատած է Տիւնկո — Կարսի կղզիին վրայ, Հնդկական ովկիանոս: Կղզին Անգլիոյ իշխանութեան ներքեւ կը գտնուի:

ԿԻԼԻԿԻՈՅ ԱՅԱՍ ՆՈՒԱՀԱՆԳԻՍԸ

— 0 —

(Յապառումներով)

Ա.

Միջերականի հիւսիս — արեւելեան ծայրամասին, Ալեքսանտրէթ ծոցի ափին, այժմ կայ փոքր եւ անշուք գիւղ մը, որ ունի մօտ 600 բնակիչ եւ կը կոչուի Այաս: ԺԳ.—ԺԴ. դարերուն Այաս Կիլիկիոյ հայկական Պետութեան այն նշանաւոր նաւահանգիստն էր, որ միջազգային առեւտուրի մէջ լուրջ մրցակից դարձած է Եգիպտոսի Ալեքսանդրիա նաւահանգիս — տին հետ: Այս պատճառով ալ մեմլուկ սուլթաններու բանակները բազմաթիւ յարձակումներ կատարած են Այասի վրայ: Թէեւ Հայերը ունէին ուրիշ նաւահանգիստներ ալ, ինչպէս Կոռիկոս, Լա — մաս, Սելեւկիա եւ ուրիշներ, սակայն ասոնք չունէին Այասի բոլոր յարմարութիւններն ու առաւելութիւնները: Կիլիկիոյ հայ արքունիքի ամէնէն ամրացուած ծովեզերեայ քաղաքներէն Կոռիկոսը նոյն — իսկ, միջազգային առեւտուրի տեսակ — կէտէն, երկրորդ տեղը կը զբաղէր:

Այս հիմնուած է Ք. Ա. 8-6րդ դարերուն, յոյն զաղթականներու կողմէ, իբրեւ առեւտրական դաղութ եւ դայն անուանած են Եգէ, որ կը նշանակէ ալիք: Անիկա կոչուած է նաեւ Եգէաս, Լատինները քաղաքը անուանած են Եգէա, Իտալացիները՝ Լայպզո, Այազո, Այաճի, Լայաս: Քաղաքը Բ. դարու սկիզբները, Հռոմի Ադրիանոս կայսրին անունով կոչուած է Ադրիանա, ժամանակ մըն ալ անուանուած է Ալեքսանդրապոլիս, Մակ — րինտապոլիս:

Առաջին անգամ Ռուբինեան պարոն Լեւոն Ա.ի (1123—1137) իշխանութեան ժամանակ էր, որ Հայերը տէր դարձան Այասի: Քաղաքը այդ ատեն գրեթէ լքեալ եւ աւերակ պատկեր մը կը պարզէր: Ապա կարճ ժամանակաշրջանով անոր տէր դարձաւ Անտիոքի իշխանութիւնը, որմէ ետք՝ Բիւզանդիոն (1137—1145):

Պարոն Թորոս Բ. (1145—1169) Բիւզանդիոնէն վերադրաւեց Ռուբինեան իշխան — նութեան կորանցուցած Կիլիկիան: Այդ թուականէն սկսեալ երկու դար Այաս մընայ Հայերու ձեռքը:

Հին նաւահանգիստը մեծ կարեւորութիւն ստացաւ Լեւոն Գ.ի ժամանակ: Ան եւ անոր յաջորդները, գնահատելով միջազգային առեւտուրին ընձեռած տնտեսական եւ քաղաքական օգուտները, Այասի նաւահանգիստը օժտեցին զանազան շէնքերով: Կառուցուեցան մաքսատուն, նաւամատոյց, փարոս, մթերանոցներ, պետական պաշտօնեաներու ապարանքներ, իսկ ծովափին եւ նաւահանգիստի կղզեակին վրայ՝ ամրոցներ, վաճառա —

նոցներ, պանդոկներ եւ այլ շէնքեր: Առեւտուրին աւելի զարկ տալու համար հայ թագաւորները յատուկ արտօնագիրներ կուտային Միջերկրականի լատին երկիրներու, յատկապէս իտալացի եւ Փրանսացի վաճառականներուն: Այդ երկիրներու համայնքները առանձին թա — դամաւերու մէջ շինած էին եկեղեցիներ, մթերանոցներ, իջեւաններ, հաստատած էին դատարաններ, խանութներ, կապե — լաներ, եւայլն: Ասոնց մասին լայն տեղեկութիւններ կան Վենետիկի, Վատի — կանի, Ճենովայի, Թորինոյի, Մալթայի, Նափոլիի, Փրովանսի, Մոնփելիէի, Մատրիտի, Պարչելոնայի եւ Եւրոպայի այլ վայրերու զբանաստուներու մէջ, ուր մինչեւ այսօր մնացած են Կիլիկիոյ հայ թագաւորներու տուած արտօնագիրները, պարզեազդիւնները եւ նման ուրիշ փաստաթուղթեր: Այսպիսի մաքսատան մեծ չափերու հասնող հասոյթը կը պատկանէր Միսի արքունի գանձատունին: Այսպիսի նաւահանգիստը Կիլիկիոյ հայկական Պետութեան պիւտճէին մեծագոյն մասը կ'ապահովէր:

Քաղաքի բարգաւաճումին զուգընթաց հաստատուած էին նաեւ արհեստանոցներ, դրասենեակներ, օտար լեզուներ ուսուցանելու յատուկ դպրոցներ եւ այլ հաստատութիւններ: Եւրոպայի դիւաններու մէջ Հ. Ղ. Ալիշանի դատած փաստաթուղթերէն կը պարզուի, որ պաշտօնական քարտուղարներէ եւ թարգմաններէ գատ, Այասի մէջ կային ուրիշ լեզուներու (Փրանսերէն, արաբերէն, եւն.) թարգմաններ:

Այսպիսի լատիներէն սորվեցնող դպրոցը կը կոչուէր «Վարժարան լատին լեզուի»: Թուենը քանի մը օտար լեզուաբաններ, որոնք դասաւանդած են Այասի մէջ: Այսպէս, օրինակ, 1274ին հոն աշխատած է քերականագէտ Փիլիպպոս Սողանուս: Պապը 1318ին լատիներէնի ուսուցիչներ ուղարկած է զլիսաւորութեամբ Տոմինիկեան Ռայմունդ Ստեփանէի:

Այս հաստատուած են օտար երկիրներու առեւտրականներու ներկայացուցիչներ, Վենետիկի «պալէսո»ներ, հիւպատոսներ, նոտարներ, դրամափոխներ, վաշխառուներ, նաւահանգիստներու յատուկ «մարդագաւ» կիներ եւ ամէն դասակարգի մարդիկ: Նաւահանգիստին մէջ առեւտրական մենաշնորհ ունեցած են 24 ազգերու եւ Պետութիւններու համայնքներ եւ ներկայացուցիչներ:

Հին դարերուն Այաս բերդաքաղաքը ունեցած է երկու շարք պարիսպ եւ դրաւած է այժմու գիւղին հին եւ նորաշէն թաղամասերը, սահման ունենալով արեւելքէն՝ նաւահանգիստին ծովափը, արեւմուտքէն՝ առուակը, հարաւէն՝ ծովը, իսկ հիւսիսէն՝ գիւղին ծայրամասը: Բերդաքաղաքէն դուրս եղած են բնակավայրեր: Յամաքի եւ ծովամէջլի բերդերու մասին ժամանակագրական տեղեկութիւններ կան Սամուէլ Անեցիի եւ Ներսէս Պալիեցիի մօտ:

Ներսէս Պալիեցիի ժամանակագրութե —

ԴԵՄՔԵՐ ԵՒ ԴԵՊՔԵՐ

Տ. ՔԱՆԹԵՄԻՐ

— 0 —

(Բ. եւ վերջին մաս)

Արդարեւ Քանթեմիր Պոլսոյ իր տարիներուն էր որ մասնադիտացաւ արեւելեան երաժշտութեան մէջ: Օժտուած երաժշտական հակումներով, արուեստին մէջ պիտի խորանար շնորհիւ մանուանդ իր շփումներուն տերվիշներուն հետ՝ որոնց վանքերը երաժշտական արուեստի ճշմարիտ օճախներ էին: Անոնցմէ էր որ

նէն կ'երեւայ, որ Եգիպտոսի մեմլուքներու 4000 ձիաւորներէ եւ անթիւ հետեակներէ բաղկացած զօրքը, ցամաքէն յարձակելով, նախ զրաւած է Այաս քաղաքը, ծովեզերեայ Մինա բերդը եւ ապա կղզեակի ամրոցը:

Հայկական տիրապետութեան ժամանակ Այաս ունեցած է յիշարժան կառույցներ: Բացի Մինա կոչուած նաւահանգիստէն, ձգոր եւ Մինա բերդերէն եւ Եալոն քարափէն, քաղաքին մէջ գոյու — թիւն ունէին հայկական եպիսկոպոսարան եւ յունական մետրոպոլիտին կեդրոնատեղին: Քաղաքին թաղամասերէն մէկը կոչուած է Արամանաց գուռ: Օտարներն ալ ունէին մեծ շէնքեր, որոնցմէ յիշատակելի էին ճենովացիներու Ս. Լաւրենտիոս եւ Վենետիկցիներու Ս. Մարկոս եկեղեցիները: Այսպիսի նշանաւոր Ս. Ղազար տաճարը հաւանաբար կը պատկանէր Յոյներուն:

Այսպիսի արքունի ապարանքը, որ հայկական թագաւորութեան պետական մարմիններու կեդրոնատեղին էր, կը գտնուէր «հանդէպ դրան բերդի ցամաքին», այսինքն հոն ուր այժմ համաձուն գիւղին փոքր շուկան կը գտնուի: Հոն էր նաեւ քաղաքին հրապարակը: Քաղաքին մէջ կային նաեւ Դարպաս Արքունի եւ Դըսա — կան Դարպաս պետական բարձրագոյն պաշտօնատուներու շէնքերը:

Հայերու եւ խաչակիր ասպետներու նաւերը արտօնուած էին ուղղակի Միհաս բերդին առջեւ խարսխելու եւ ապրանք բեռնաթափելու կամ բեռնելու: Վէճե — րու առաջն առնելու համար քաղաքին եւ նաւահանգիստին որոշ մասերը յատկացուած էին տարբեր ազգերու համայնքներուն: Հայերու գինակից Տաճարական ասպետներու նաւերուն համար յատուկ տեղ մը յատկացուած էր նաւահանգիստին մէջ, որ կը կոչուէր «Բեռնաթափք Տաճարականաց Մինայի Այասոյ»: Այսպիսի նաւահանգիստի ծովը այժմ ունի 3—6 մետր խորութիւն, որ անբաւարար է արդի բեռնատար կամ մարդատար նաւերու համար:

Մ. ձեՎԱՀԻՐՁԵԱՆ

ուսու քամպուր եւ մայ, եւ պահ մը դարձաւ մայրաքաղաքին ամէնէն փոքր — տուած երաժշտներէն մին, ուշադրաւ հանդիսանալով միւլենոյն ատեն իր սեփական ստեղծագործութիւններով ալ, ինչպէս եւ ուսուցանելու իր ձեռքով: Այնպէս որ լայն տարածում գտան իր յօրինած երգերը, եւ իր աշակերտներէն շատերը կարկառուն երաժիշտներ դար — ձան: Քանթեմիր աւելին ըրաւ. նոթա — գրութեան նոր մեթոտ մը ստեղծեց, որ կոչուեցաւ իր իսկ անունով, եւ յօրինեց թուրք լեզուով երաժշտական ձեռնարկ մը (Էտալարը մուսիֆի) երաժշտութեան եւ նոթագրութեան ուսուցման համար, եւ երգերու մասը Թուրքիոյ պատմութիւնը սուրբեան ալքեմիական սիստեմով (Քիթապը մուսիֆի էպնետ):

Բայց ինչ որ Քանթեմիրի անունը կը նուիրադրոճէ իրրեւ արեւելագէտ՝ իր հեղինակութիւններն են Օսմանեան կայսրութեան պատմութեան մասին, երկեր, որոնք կը շարունակեն թանկագին աղբիւրներ մնալ Թուրքիոյ պատմութիւնը հետազոտողներուն համար:

Գրուած է եղեր որ Օսմանեան կայսրութեան պատմութիւնը, իր թուրք պըր — պոտղները ունենալէ առաջ համադրական իր կերպարանքին մէջ, օտարներու կողմէ գրի առնուի: Չորս պիտի ըլլային անոնցմէ ամէնէն հեղինակաւորները, առեւելքի ըլլալով ինքը Քանթեմիր: Իրեն պիտի հետեւէին Մուրաճա ա'Օհան, Շուէտի Պոլսոյ դեսպանը՝ որ Հայ էր ծագումով եւ որուն Ընդիւմուր պատկեր Օսմանեան կայսրութեան մենագրութեան շարքը լոյս պիտի տեսնէր 1788—1824 եթթը հատորներով, Համմեր Աւաբիլացին, հեղինակը Պատմութիւն Օսմանեան կայսրութեան բազմահատոր երկասիրութեան, հրատարակուած 1824—1828: Վերջապէս չորրորդը, Նիքոլաէ Եփրան, որ Օսմանեան կայսրութեան պատմութեան պիտի նուերէր, գերմաներէն լեզուով, ընդարձակ մենագրութիւն մը բաղկացած հինգ հատորներէ, որոնք լոյս տեսան Պերլին 1908 եւ 1913 տարիներու միջեւ:

Իր ամէնէն կարեւոր աշխատութիւնը Թուրքիոյ մասին՝ լատիներէն խմբագրած էր ան 1714—1716 տարիներուն. Իսքաթտ Ինֆրիմաքարում աւիֆուէ տէֆրեմէնթեքում աւիլէ օթմանիֆէ տիտղոսով, թէեւ ճանչցուած առաւելագէտ Պատմութիւն Օսմանեան կայսրութեան անունին ներքեւ, ու կը յաջորդէր աւելի փոքր երկի մը որ Մուհաքարում Ֆիզիֆա էֆսամաքիօ խորագինն ունէր: Քանթեմիրի զլուխ գործոցը իր պատմական արժէքը կը պահէ մինչեւ այսօր ալ արեւելագիտութեան համար՝ ըլլայ իր պարունակած հարուստ տեղեկութիւններով, ըլլայ իր խորհրդածութիւններով եւ դատաստաններով որոնք կը հիմնուէին իր սեփական գննութիւններուն վրայ թուրք մայրաքաղաքին մէջ ապրած իր երկար տարիներու ընթացքին:

Քանթեմիրի արեւելագիտական աշխատանքներուն մաս կը կազմեն նաեւ աշ —

— Մի մտնէք, մերկ եմ:

Եւ որպէսզի հաւատան իր խօսքին, դրան բացուածքէն յայտնի կ'ընէր դիշերազդեանով ըլլալը: Իսկ ես կը ջանայի մասնաւոր դերը մը բռնել, խոստովանողի երեւոյթ առնել: Երկու ձեռքերս իրար բերած, զոյգ ցուցամատով դէպի վեր շարժումներ կ'ընէի, ըսել ուղեւոր թէ փնտրուածները վերն են:

Ոստիկաններուն ամբողջ վոհմակը առիթէն օգտուելով վեր նետուեցաւ: Առաջ ժամանակ կորոնցնելու նետուեցայ թաքստոցին սենեակը եւ կիսաբաց մնացած դռնակը դոցեցի: Տղաքը լացաւահատական ձիգեր թափած էին, բայց չէին յաջողած, որովհետեւ միայն դուրսէն կը գոցուէր: Շարժական դուռ մըն էր, տախտակամածին վրայ, որ մասնաւոր սիւթեմով կը զետեղէի եւ միշտ ալ մոխիր կը ցանէի վրան, հաղիւ նմարելի ձեղքերը անհետացնելու համար: Քոյրս քանի մը անգամ փորձած էր ու չէր յաջողած: Դռնակը դոցած միջոցին, ներսէն «օֆ, օֆ», երկար բացադանչութիւններ լսեցի. տղաքը լայն չունչ կ'առնէին:

Դուրս ելայ եւ պաղարիւն դիմաւորեցի յուսախար ոստիկանները: Էլքէֆ, ապարդիւն խուսարկուածիւնէն զժգոհ, տանիքը ելած կը սպասէր վահէի ցուցմունքներուն: Քիչ անդին, Ալի Բիզան մտմուռքի մէջ ինկած էր:

— Ուրան Արշակ, դոչեց վերջապէս Ալի

Բիզան կեղծ փաղաքական շեշտով մը, ճիշդն ըսէ, ուրկէ՞ փախան:

Այդ միջոցին Պօղոս Աղայի պարտէզին վրայ նայող պատուհանին առջեւն էինք. առանց Ալի Բիզանի պատասխանելու դարձայ էլքէֆին ու ըսի.

— Էլքէֆ էֆէնտի, հաւատա որ մինչեւ քիչ առաջ կը քնանայի... դուն գիտես որ ձեզի խոստացած էի յայտնել, եթէ այդ քամիթէճիները հոս հաւաք — ուին...

— Սուտ կը խօսի, դոչեց պարտէզէն վահէն, էլքէֆ, սուտ կը խօսի, քիչ առաջ տեսայ անոնցմէ մէկուն պատուհանէն կախուելը, կը փորձէր փախչիլ. ատրճանակով ներս քշեցի. ո՞ւր է այդ մէկը...

— Ոչ էլքէֆ, ընդմիջեցի, կը սխալի, պատուհանէն կախուողը ես էի: Եւ անմիջապէս դարձայ վահէին ու նոյն իմ մաստով բացատրութիւններ տուի իրեն:

Բայց հայանուն խաֆիէն թերահաւատ էր եւ թիւն տակէն կը մրմուր կարծես ըսելով. — «Ես ձեզի ցոյց կուտամ»... Ուղեւոր դադեցնել Ալի Բիզան եւս, որ ինծի հարցումներ կ'ընէր մեր տան հաւանական թաքստոցներու մասին, խոր — հրդուրդ շեշտով մը ըսի.

— Պէյ էֆէնտի, լաւ չըլլա՞ր որ աչք մըն ալ նետէք վարի հորին մէջ:

Ոստիկանապետը, որուն ուղեղին մէջ հաւանաբար տեղ գրաւած էր արդէն իմ

յայտնած միտքս, զլուխը շարժեց եւ խումբը առաջնորդեց գետնաշարկը, ուր կը գտնուէր մեր խոհանոցն ու հորը:

— Արշակ, այս հորին մէջ մարդ կըլ — նա՞յ ի՞նչնէ:

— Ինչ կ'ընէք, Բիզա պէյ, անգամ մը քեռայրիս դրամապանակը հոն ինկաւ, եղբայրս Զարեհը իջաւ հանց:


Այդպէս բան մը պատահած էր իրապէս, բայց գիտէի թէ ինչ դժուար ու տաժանելի բան էր այդ հորը ի՞նչնը, մանաւանդ գիշեր ատեն: Կարելի էր գործողութիւնը վտանգաւոր ցոյց տալ. բայց իմ նպատակս էր դիւրին ցոյց տալ եւ հորին մէջ իջեցնել մասնաւորաբար այն ոստիկանը, որ դուռը խորտակելէ վերջ ներս խուժած միջոցին մայրս ապուսկած էր. եւ խօսքս ուղղելով Ալի Բիզային, եւ ոստիկանը մատնանշելով ըսի.

— Պէյ էֆէնտի, այս ոստիկանը ձեռք մէջնէն ամէնէն թեթեւն ու աշխոյժը կ'ըրեւայ. շատ դիւրին կ'ընայ ի՞նչնը:

Ոստիկանը, որ Մեհմէտ կը կոչուէր, զսպուած կատաղութեամբ կը նայէր ինծի, բայց չհամարձակեցաւ որեւէ առարկութիւն ընել իր մեծաւորին:

— Հայտէ օղլում Մեհմէտ, քեզ տեսնեմ, հրամայեց ոստիկանապետը:

(40 — Շար.)



Ա. ՄԱՍ

Կ Ր Ա Կ Ի Մ Կ Ր Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԴԱԻԱՃԱՆ ՎԱՀԷ ԻՀՍԱՆԻ ԱՀԱՐԵԿՈՒՄԸ

Պոռչտուքս եւ մտահոգ կերպարանքս պահ մը զսպեցին անոնց եռանդը. աւելի կամայ եւ խոհեմութեամբ շարժեցան:

Քանի մը ոստիկան կը փորձէին մտնել թաքստոցը տանող սենեակը, բայց քոյրս էլիզը ամբողջ ուժով ներսէն կը հրէր դուռը պոռալով.

- ՀԱՅԱՍՏԱՆ -

ՌԻՐԱՐՏՈՒԻ ՍՐԱՀԸ

ԵՐԵՒԱՆ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Ակադ. Բ. Պիոտրովսկի Երեւան քա -
ղաքի պատմութեան թանգարանին յանձ-
նած էր այն արժէքաւոր իրերը, որոնք
յայտնաբերուած էին իր արշաւախում -
բին կողմէ Կարմիր Բլուրի մէջ: Ասոնք
այսօր կը գտնուին թանգարանին ու-
րարական սրահը՝ արժանանալով բազ-
մաթիւ այցելուներու ուշադրութեան:
Այդ նիւթերը նոր լոյս կը սփռեն Ուրար-
ուի տնտեսական կեանքին, մասնաւորա-
պէս երկրագործութեան եւ անասազու-
թեան վրայ:

Ք. Ա. Յրդ հազարամեակին վերաբերող
նիւթերը հետաքրքրական մանրամաս -
նութիւններ կը հաղորդեն կաթնամշակու-
թեան մասին: Արդէն այդ ժամանակ օդ-
տադործուած են կարագ հարելու տար-
բեր ձեւի խնոցներ:

Պանիրի պատրաստութեան վերաբեր -
եալ առաջին տուեալները ձեռք ձգուած
են Կարմիր Բլուրի առաջին տարիներու
պեղումներէն: Հոս՝ հնադարեան պա -
հետախնոցներու մէջ, գտնուած են իւ-
րատիւ սարքաւորումներ: Հետաքրքրու-
թիւն կը ներկայացնեն տուֆէ պատ -
նապատուած մօտ մէկ մեթր տրամագիծով
բաւարները, որոնք զետեղուած էին փայ-
տէ յենակներու վրայ: անոնց տակ գե-
տեղուած էին քարէ մեծ տաշտեր, որոնք
միացած էին քարակերտ խողովակներու:
Ասոնց միջոցով անօդատարութեան հեղուկ
նիւթերը թափած են իրարու (Հրադ-
գան) գետը:

Կարմիր Բլուրի մէջ բացուած թիւ 51
սենեակին փոքրիկ անօթը կազմուած է
իրարու միացած երկու փոքր սափորներէ:
Անօթներէն մէկուն մէջ գտնուածը, ըստ
Ակադ. Գուլբանեանի, բաղկացած է
վարսակի հատիկներու, չամիչի կորիզ-
ներու ալյուրած մնացորդներէ: Ասիկա պա-
նիրի մակարդի բաղադրութիւնն է, որ
մինչեւ այսօր ալ կը պատրաստուի Հա-
յաստանի եւ Անդրկովկասի մէջ: Զոյգ
անօթները գործածուած են մակարդ մա-
քուր պահելու համար: Մէկուն մէջ ան
պահուած է չոր, երկրորդին մէջ՝ հե-
ղուկ վիճակով: Կը լեցնէին կաթին մէջ՝
պանիր պատրաստելու համար:

1970-71ի պեղումներու ընթացքին բաց-
ուեցաւ պանիրի ուրիշ արհեստանոց մը,
բաղկացած 30 մեթր երկարութեամբ ե-
րեք սենեակներէ: Կեղերները բուն ար-
հեստանոցն է, իսկ միւս երկուքը՝ ամ-
բարներ: Արհեստանոցի կեղերները բոլոր -
րաձեւ քարէ տաշտակ մը կար, որմէ
դէպի գետը կ'իջնէր քարէ խողովակնե-
րու շարքը: Տաշտին քով գտնուեցաւ կո-
տրուած քարէ ձագարը, որ նման է նա-
խորդներուն: Նոյն սենեակներուն մէջ

Հ. Բ. Ը. Մ. Ի

ՁՈՒԻՑԵՐԱԿԱՆ ԻՐԱԽԱՎԻԶԱԿՈՎ ԸՆԿԵ-
ՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ՝ ԼՈՁԱՆ

ԵՐՈՒԱՆԻ ՀԻՒՍԻՍԵԱՆ

Պատուոյ Նախագահ

ՄՈՒՇԵՂ ՃԻԵՐՃԵԱՆ փոխ-նախագահ

Ե. ՀԻՒՍԻՍԵԱՆԻ ՄԵԿ ՆՈՐ ՆՈՒԻՐԱ-
ՏՈՒՈՒԹԻՒՆԸ՝ 125.000 ՏՈՒԱՐ

Հ. Բ. Ը. Միութեան Զուիցերական Ի-
րաւաւիճակով Ընկերակցութիւնը իր տա-
րեկան ժողովները ունեցաւ Միութեան
Լօզանի գրասենեակին մէջ, 1973 Մայիս
26ին, Վարիչ Մարմնոյ լիակատար նիստ
եւ Ընդհ. Անդամական Ժողով՝ նախա -
գահութեամբ Միութեան նախագահ Այեք
Մանուկեանի, ատենադպրութեամբ Փա -
րիգէն Ռոմէ Կարպիս Զրաշեանի, եւ
մասնակցութեամբ Ամերիկայէն եւ Եւրո-
պայէն ժողովականներու, Միութեան
ընդհ. տնօրէնի եւ Եւրոպայի իրաւական
խորհրդականին:

Տարեկան բարոյական եւ նիւթական
համարատուութեանց առթիւ ժողովները
դոհունակութեամբ արձանագրեցին, որ
Միութեան Զուիցերական իրաւաւիճակը
տակաւ ծառայելու վրայ է իր կոչումին,
լաւագոյն հեռանկարներով:

Մասնաւորաբար յիշատակելի է Միու-
թեան ի նպաստ նոր կտակներու եւ նուիր-
ատութեանց շարժումը Եւրոպայի
մէջ, Զուիցերական իրաւաւիճակով Ընկե-
րակցութեան միջոցաւ, կարելի մանրա -

յայտնաբերուեցան մեծ թիւով տարբեր
մեծութեամբ կաւէ ամաններ, որոնց ընդ-
հանուր տարողութիւնը կը հասնի մօտ
1000 լիթրի: Այս ամաններուն մէջ է, որ
կաթը լեցուցած են (ասիկա ցոյց կու-
տայ, որ Թէյշեբայինի մէջ մեծ թիւով
կաթնառու անասուններ պահուած են),
ապա ձագարին միջով դանք քամած են ու
լեցուցած տաշտակին անօթները, տաք-
ցուցած եւ մակարդ պատրաստած են:

Հարկ է գիտել տալ, որ այս հազուա-
դիւստ արհեստանոցը իր կառուցուածքով
Հայաստանի գիւղատնտեսութեան պատ-
մութեան համար արժէքաւոր յայտնա -
գործութիւն է:

Սրահին մէջ աչքի կը զարնեն այլ նիւ-
թեր ալ: Ասոնցմէ են 60-80 սանթիմեթր
բարձրութեամբ կարասները: Այս կարաս-
ներուն մէջ, ըստ երեւոյթին, պահուած
է ալիւր: Ասիկա աւելի հաւանական կը
թուի, եթէ նկատենք, որ նոյն սենե-
ակին մէջ գտնուած են հաց թխելու քա-
նի մը տասնեակ կաւէ սաճեր՝ 25-30 սան-
թիմեթր տրամագիծով: Ըստ պեղումնե-
րու տուեալներուն, Կարմիր Բլուրի շտե-
մարաններուն մէջ ամբարուած էին մօտ
1500 թոն հացահատիկ: Չայն ձեռք ձգե-
լու համար մշակած են 2000-3000 հեկտար
հող:

Ն. ԲԱՐԱՅԵԱՆ

մասնութիւններ արդէն իսկ տրուած ըլ-
լալով վերջերս լոյս տեսած Միութեան
Եւրոպայի օրկան «Նոր Շինարար»ի պատ-
կերագրող երկրորդ բացառիկին մէջ՝
միացեալ թիւերու:

Արդիւնաւոր խորհրդակցութիւններ տե-
ղի ունեցան զանազան հիմնական հար -
ցերու եւ ապագայ գործունէութեան,
ի մասնաւորի կարուածական խնդիրնե -
րու, դրամադրութի, Երկարատեւ Միութե -
անի սեփականութիւնը եղող հողերու
հատուցման, Կանոնադրի բարեփոխումի,
Փրանսայի, Իտալիոյ, Պելժիոյ եւ Զուի-
ցերիոյ չրջանակներու վերաբերեալ հար-
ցերու շուրջ:

×

Միութեան երկարամեայ եւ բազմե -
րախտ փոխ-նախագահ Պ. Երուանդ Հիւ-
սիսեան՝ առողջական պատճառներու բեր-
մամբ հրաժարած ըլլալով ժողովներու
գործօն մասնակցութեան եւ հանդիսացած
Պատուակալ Անդամ Կեղերական Վար -
չութեան, Հոշակուեցաւ Պատուոյ Նա -
խագահ Միութեան Զուիցերական Իրա -
ւաւիճակով Ընկերակցութեան:

Պ. Երուանդ Հիւսիսեան՝ անդամ մը
եւս տալով պերճախօս մէկ փաստը Միու-
թեան հանդէպ իր հաստատարի փարու-
մին, Զուիցերական իրաւաւիճակով Ըն-
կերակցութեան միջոցաւ 125.000 տոլարի
նոր նուիրատուութեամբ մը՝ ճշդիւ 375
հազար զուիցերական Ֆրանք, անձեռն -
մխելի Հիմնադրամ մը հաստատեց, ու-
րուն եկամուտները պիտի ծառայեն Պէյ-
րութի «Երուանդ Հիւսիսեան Հիշատակ -
տական Հիմնարկ»ի ծախքներուն մաս -
նակցութեան, կամ համանման նպատակ-
ներու՝ եթէ պատահի որ այդ Հիմնարկը
օր մը գործելու անկարելիութեան մատ-
նուի:

Պ. Մուշեղ Ճիւրճեան՝ Մոնաքոյէն՝
հանրածանօթ աղբանուէր անձնաւորու -
թիւնը որ արդէն իսկ զանձապետն է
Միութեան Զուիցերականին եւ Բարբար
Անդամ, եւ մաս կը կազմէ Կեղք. Վարչ.
Ժողովին, կոչուեցաւ նաեւ փոխ-նախա -
գահութեան, համայն Միութեան եւս:

Յառաջիկայ տարուան համար Զուի -
ցերական Ընկերակցութեան Վարիչ Մար -
մինը կազմուեցաւ հետեւեալ կերպով. -

Պ. Պ. ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ, Տիթրոյ -
թէն՝ նախագահ

ՄՈՒՇԵՂ ՃԻԵՐՃԵԱՆ, Մոնաքոյէն,
փոխ նախագահ եւ գանձապետ

ՌՈՒԹԻ ԿԱՐՊԻՍ ԶՐԱՍԵԱՆ, Փարիզէն՝
ատենադպր

ԱՐԱ ՉԱՄԷԼԻԹԵՆ, Նէօշաթիէն՝ պատ-
ուակալ վարիչ-պատուիրակ

ԱՐԹԻՆ ԱՍԼԱՆԵԱՆ, Նիւ Եորքէն, խոր-
հրդական, ԵՐՈՒԱՆԻ ՏԵՄԻՐՃԵԱՆ, Պէյ-
րութէն՝ խորհրդական, ԷՕԹԻՆ ԲԱՐԱՉ-
ԵԱՆ, Ժընեւէն՝ խորհրդական:

Ժողովները վերջ գտան վստահալից ու-
ղեւոր միջոցաւ:

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Լօզան, 14 Յունիս 1973

×

Քանթեմիր չանտեսեց նաեւ հայ տար-
բեր պատմական իր նոթերու ընթացքին:
Մոլոտովայի նկարագրութեան մէջ, օրի -
նակ, խօսելով երկրին բնակչութեան մա-
սին, կ'անարկէ նաեւ Հայերուն, ըսելով
որ «անոնք իրենք զիրենք հպատակ կը
համարին Մոլոտովայի միւս քաղաքներուն
խանութպաններուն եւ առեւտրականնե -
րուն պէս եւ իշխանին կը վճարեն միեւ -
նոյն հարկը: Պապականներուն նման ի-
րենք եւս ունին իրենց եկեղեցիները, ու-
րոնք այնքան մեծ են եւ գարգարուած՝
որքան ուղղափառներու տաճարները, եւ
ազատօրէն կը պաշտեն իրենց դուս -
նանք»:

Քանթեմիր իր անունը այլապէս ալ
պիտի կապէր Հայուն: Իրմէ դար մը յե-
տոյ սուլթաններու նոյն այդ մայրաքա-
ղաքին մէջ պիտի յայտնուէր ուրիշ մեծ
երաժիշտ մը, այս անգամ արդէն հայ,
Լեւոնճեան Պապա Համբարձումը, որ
նոյնպէս պիտի յօրինէր երաժշտական նոր
սիւսեմ մը, ոչ միայն գարադուլու մը
բանալով հայ եկեղեցական երաժշտու -
թեան պատմութեան մէջ, այլ նաեւ թան-
կալին նպաստ մը բերելով թուրք երա-
ժշտութեան: Արդարեւ Տերմիշները որոնց
վանքերը մէկ մէկ երաժշտական ուսում-
նարաններ էին արեւելեան երաժշտու -
թեան համար եւ իրենց ծոցին մէջ կ'ամ-
բարէին այդ երաժշտութեան բովանդակ
զանքը, Պապա Համբարձումի նոթանե -
րուն կարիք ունեցան իրենց հաւաքած եր-
գերը ազատելու համար կորուստէ: Արդ,
իրենց դրի առած երաժշտական այդ կը-
տորներուն մէջ Քանթեմիրի յօրինած-
ներն ալ կային, որոնցմէ շատերը եւս
Պապա Համբարձումի չնորհիւ պիտի
փրկուէին այսպէս կորուստէ եւ պիտի
հասնէին մինչեւ մեր օրերուն:

Յ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ԿԱՐԴԱՑԻՔ
ՏԱՐԱԾԵՑԻՔ
ՅԱՌԱՋԸ

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՈՆԸ (208)

ՀԱՅԱԳՈՐԾ
ԿԻՆԸ

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՕՎԻՏԻ ԿԵՐԱՐԱՆԱՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ձ.

— Այո, պարոն, երկրասարդական յի-
մարութիւն մը գործած է պարոն Տիւ -
լիմէն: Խնայելով անոր, ու լաւ գործ մը
ըրած էք: Ասոր համար չնորհակալու -
թիւն կը յայտնէ ձեզի:
— Այո... այո... թոթովեց Տիւլիմէն,
արտասուալին:

— Ան կը զղջայ ու կը խոստանայ չլեր-
սկալի ալլելա: Իր ընտանիքին մէկ բա-
րեկամն եմ, ու ինքզինքը բարեբախտ կը
համարի, որ իր քով գտնուեցայ, երբ
դուք եկաք դրամ պահանջելու: Թող ա-
մէն ինչ վերջ գտնէ: Պարոն, երկու պար-
տաւորհակներուն փոխարէն ձեզի պիտի

տամ հազար Փրանք, ինչպէս նաեւ վեց
ամսուան տոկոսը:

Օվիտ գրպանէն հանեց պանքոմսերով
լեցուն թղթապանակ մը ու վճարեց Տիւ -
լիմէնի պարտքը:

Վաճառականը բացաւ իր դրամաւրկը,
եւ դրամաթուղթ փակցուած երկու
թուղթ հանելով անոր մէջէն, ըսաւ.

— Ահա պարտաւորհակները:

Սուրիօ առաւ զանոնք, երկուսարդին
ցոյց տուաւ ու յարեց.

— Ասո՞նք են:

Տիւլիմէն յուզումէն եւ ուրախութենէն
հեղձամղձուկ, զլիտով հաստատական նը-
շան մը ըրաւ ու ձեռքը երկարեց դէպի
պարտաւորհակները. բայց փոխանակ
Տիւլիմէնի տալու, խնամով ծալեց ու
թղթապանակին մէջ սահեցուց, յետոյ
գրպանը գրաւ:

— Պարոն, ամէն ինչ լաւ վերջաւորու-
թիւն գտաւ, այնպէս չէ՞, յարեց Օվիտ:

— Այո, պատասխանեց վաճառականը
բիրտ չեշտով մը: Ձեր յարգելի պաշտ-
պանեալը թող ուրիշ տեղ գտնէ իր փոր-
ձանքը:

— Պարոն, անպատկառ ըլլալու իրա-
ւունք չունիք այլեւս, ըսաւ Տիւլիմէն:

— Դրամնիդ առիք, յարեց Օվիտ: Լե-
զունիդ չափաւորեցէք: Տիւլիմէն ընտա-
նիքին հետ գործ պիտի ունենաք, եթէ
երբեք ձանձնէք յանցանք մը, որուն փա-
տը այլեւս չունիք ձեր քով:

— Կը բաւէ, պարոն: Վարուելու եղա-
նակը գիտնալու տարիքին մէջ կը գտն-
ուեիմ, ու ձեր խորհուրդներուն պէտք
չունիմ բնաւ: Երթաք բարով:

Ու Փլեթիման զրասենեակին դուռը
բարկութեամբ դոցեց հեռացող երկու
մարդոց ետին:

— Պարոն, դուք իմ ազատարար էք,
ըսաւ Տիւլիմէն երախտալիտական փղծ-
կումով: Ի՞նչպէս պիտի կրնամ փոխա -
րինել ինծի մատուցած մեծ ծառայու -
թիւննիդ:

-- Քիչ յետոյ ձեզի պիտի ըսեմ: Ծա-
շկու երթանք, ու այլեւս մի խորհիւր ձեր
ունեցած վրդովումին վրայ, որպէսզի
սխալմանիդ չփախչի:

Օվիտ եւ Տիւլիմէն մօտեցան Օթէլ տը
Սիկոններ, ու սալոնի մը մէջ իրարու
զիմաց, սեղանի մը առջեւ նստան: Օվիտ
հրամայեց որ սպառ զնեն: Երկուսարդ
պաշտօնեան ամէն ինչ վարդապոյն կը
տեսնէր, ու իր ստակալի պահանջատէրէն
ազատած ըլլալուն համար բարեբախտ
կը զգար ինքզինքը:

— Եթէ չեմ սխալիր, դուք պղտիկ
պարտքեր ալ ունիք Ժուստինի մէջ, ըսաւ
Օվիտ հանդարտօրէն: Ո՞րքան է պարտ-
քերնիդ:

— Գրեթէ երկու հազար Փրանք:

— Կրո՞ղ, աղէկ պարտք ըրեր էք:

— Պարոն, այդ թշուառական կինը
պատճառ եղաւ որ այդ պարտքը ընեմ...

— Բնականաբար: Ի՞նչպէս պիտի վը-
ճարէք:

— Պահանջատէրերս ինծի խոստացան
սպասել:

— Անմտութիւն չուղեր: Դուք ալ ինծի
պէս գիտէք թէ այդ մարդիկը մօտ ատե
նէն պիտի պոռան կանչեն: Այդ մարդոց
ձեռքէն ալ պիտի ազատեմ ձեզ, ի փո-
խարէն ձեզմէ սպասած մէկ ծառայու -
թեանս:

— Պարոն, յոյս դրէք իմ վրաս: Ամե-
նաջերմ փափաքս է իմ երախտագիտու -
թիւնս ապացուցանել: Ի՞նչ ընելու է:

— Պիտի ըսեմ: Գասնեղիւ տարի ա-
ռաջ, սիրահարած էի ամուսնացած կը-
նոջ մը, որ կը սիրէր զիս: Ամուսնին բա-
ցակալութեանը, որ մէկ տարի տեւեց,
զաւակ մը աշխարհ եկաւ: Վերադարձին՝
խարուած ամուսինը բանէ մը չկասկա -
ծեցաւ, ու ապօրինի զաւակը Ժուստինի
մէջ ստնտուի մը յանձնուեցաւ: Ես ստիպ-
ուեցայ երկար ատեն բացակայել Փրան -
սայէն: Վերադարձիս՝ նախկին սիրուհիս
անհետացած էր: Եթէ հաւատք ընծայեմ
իւր ստոյգ ինծի հազարդուած տեղեկու-
թեան, Փրէմի անուն կնոջ յանձնուած
տղան Ընկեցիկ Մանուկներու ապաստա -
րանը զբոսած է այդ կնոջ կողմէ: Արդ,
կ'ուզեմ այդ աղջիկս, ու պէտք է որ ինծի
օգնէք...:

ԿԶԱՎԻԷ ՏԸ ՄՈՆԹԷՓԷՆ

(Շար.)

“ Ե Ա Ռ Ա Զ ”, Ի

ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ

Քոլումպէն, Տիկին Ալեքսանեան 50 Փր. կը նուիրէ:

×

Մարտէյլէն Զաւէն Աչըզեան 100 Փր. կը նուիրէ «Յառաջ»ի բարգաւաճման ֆոն — տին Ստեփան Սրապեանի մահուան տարելիցին առթիւ:

×

Տէր եւ Տիկին Հայկ Աղապէհեան 100 Փր. կը նուիրեն:

ՊԱՐԳԵՒԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Տեղի կ'ունենայ Ծառք Յունիս 23ին — Առաւօտեան ժամը 11ին հանդիսաւոր պատարագ վարժարանին Մատրան մէջ, աշակերտներու երգեցողութեամբ:

— Ժամը 13ին ընտանեկան ճաշ:

— Ժամը 15ին հանդէս պարզեւարաշ — խութիւն, երգ, արտասանութիւններ, հաշուետուութիւն:

— Ճաշագին 25 Փրանք

Հեռաձայնել 027-18-28

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

ԿՐԸՆՈՊԼԻ ՄԷՋ

Կաղմակերպուած Կապ. Խաչի մասնա — ճիւղին կողմէ՝ Սէսինէի ճամբուն վրայ, Շաթօ տը Պօռլկառի գեղատեսիլ պուրա — կին՝ պաղ ջուրին մօտ:

Գեղարուեստական խնամուած բաժին դպրոցի աշակերտութեան եւ կարող ու — ժերու կողմէ: Բարձրախօս եւ հաճելի անակնկալներ:

Ճոխ պիւֆէ, պատրաստուած իրաչու — հիներու կողմէ:

Յունիս 24 Կիրակի ամբողջ օրը:

Անճրեւի պարագային կը յետաձուրի Յուլիս մէկը Կիրակին:

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

ՌՈՄԱՆԻ ՄԷՋ

Կաղմակերպուած Ռոմանի Հայերու Բարեկամական Միութեան կողմէ, Կիրա — կի Յունիս 24 ամբողջ օրը՝ ՄՕՓԱ:

Imprimé sur les Presses

DU JOURNAL « HARATCH »

83, Rue d'Hauteville, Paris (10e)

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ

ՄՐՅԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ ԵՒ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

Հովանաւորութեամբ

ՍԵՐՈՎԻՔ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

24 Յունիս Կիրակի օր, ժամը 15ին

Հայկական եւ եւրոպական պարեր

Երգ՝ Պր. ՊԵՏԻԿԵԱՆԷ, ընկերակցութեամբ իր նուագախումբին

Հաղորդակցութեան միջոցներ. — Էկլիպսը Փանթէնէն առնել 147 Թիւ օթոպիւսը:

Ի ՅԻՇԱՏԱԿ

ՄԱՐՍԷԼԻ

Յրանսական դիմադրութեան ծաղումով հայ նախկին կամաւոր ռազմիկներու Բա — րեկամական Միութիւնը հոգեհանգստեան պաշտօն կատարել կուտայ այս Կիրակի առաւօտ Սէն Ժերոմի եկեղեցւոյ մէջ, ժամը 11ին, ի յիշատակ Յրանսական դի — մադրութեան մարմիրոսներու, մեռած Յրանսայի համար:

Ժամը 12ին ընդունելութիւն մը պիտի յաջորդէ արարողութեան Միութեան փոխ-նախագահ Ս. Ճերաճեանի արժան — եաց Ազգ. շքանշան ստանալուն առթիւ:

GROSSISTE LYON

Clientèle importante emplacement de premier ordre dans le « Sentier » Lyonnais cherche fabricants de robes et jupes pour collection.

HIVER 73-74

H. DER-HAGOPIAN

4, Route de Vienne

69007 Lyon

ՓԱՐԻԶԻ

ՀԱՅ ՄՇԱԿՈՑԹԻ ՏԱՆ

Պատուոյ անդամակցութեան համար Տիկ. Տիրուհի Սէրէնկիւլեան 100 Փր. Պր. Վաղգէն Սէրէնկիւլեան 100 Փր. Պր. Գրիգոր Փափաղեան 100 Փր. Պր. Կարպիս Յակոբեան 100 Փր.

Հ. Յ. Գ.

ԼիՈՆ. — Հ. Յ. Գ. Վարանդեան կոմի — տէն ընկերական ընդհ. Ժողովի կը հրա — շիրէ ԼիՈՆի եւ Ս. Մօրիսի իր ընկերները, այս Հինդշաբթի, 21 Յունիս ժամը 21ին, սովորական հաւաքատեղին: Ընկերներու ներկայութիւնը պարտաւորիչ է:

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

ՊՈԼԷՆԻ ՄԷՋ

Ի նպաստ Պոլէնի հայկ. դպրոցին Կաղմակերպուած Պոլէնի Յրանքեւ — հայկական Մշակութային Միութեան կող — մէ, այս Կիրակի, Յունիս 24, ժամը 10էն մինչեւ իրիկուն

Centre Aéré de St. Ferréol

Route de Saint-Restitut — BOLLENE

Կը մասնակցի եւ մթնոլորտը կ'ոգեւորէ Վարանսի Կառնի նուագախումբը:

Ճոխ պիւֆէ — չամփուրով խորոված են.

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

Նախաձեռնութեամբ Կապ. Խաչի Սեւրանի մասնաճիւղին

Կիրակի Յունիս 24, ժամը 11էն սկսեալ

10, Rue Lucien Sportice, SEVRAN

(Parc des Sœurs, face à la Gare de Sevrans)

Օթոպիւս 147 Ա. Էկլիպ տը Փանթէնէն

Կամ կառախումբ Կառ տիւ Նոռէն, իջնել Լիվրի-Սեւրան

Պիւֆէ — Շամփուրով խորոված — Խաղեր — մրցումներ — Անակնկալներ

ԿԱՐՄԻՐ ԽԱՋ

ՕԴԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԿԱՅԱՆ

Արձանագրութիւնները կը շարունակ — ուին Օգոստոս ամսուան համար:

Ա. խումբի մանուկներու բժշկական քննութիւնները տեղի պիտի ունենան 29 Յունիս, ժամը 10-13, Հայ Կարմիր Խաչի դարմանատան մէջ, 15 Ռիւ Ժան Կուստին, Փարիզ (Տրդ:

Ա. խումբը կը մեկնի Երկուշաբթի 2 Յուլիս, ժամը 14ին, Հայ Կարմիր Խաչի կեդրոնատեղիէն, 15 Ռիւ Ժան Կուստին:

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

ՄԷՆ - ՀԱՄՈՆԻ ՄԷՋ

Հայ Հասարակութիւն Սէն Շամոնի Երիտ. Միութեան երրորդ տարեդարձին ա — ութիւթով, կաղմակերպուած է տարեկան դաշտահանդէս Յունիս 24, Կիրակի առա — ւօտեան ժամը 11էն մինչեւ ուշ գիշեր Institution Sainte Marie, Parc des Frères Lazaristes, Route du Coin — St. Chamond (après le Stade Pauze).

Երաժշտական բաժնին իր մասնակցու — թիւնը կը բերէ ԼիՈՆի Սայաթ Նովա երկ — սեռ նուագախումբը, նորադոյն զուգերգ — ներով եւ հայկական զուարթ երգերով: Խնամքով նկատի առնուած է նաեւ Միու — թեան համանուն վարժարանին երկսեռ աշակերտութեան մասնակցութիւնը:

Առատ խմիչք ամէն ճաշակի, հայկա — կան համադամ կերակուրներ եւ համեղ աղանդերներ, մատչելի գիններով:

Հաճելի անակնկալներ, հարուստ նը — էքներու վիճակահանութիւն, մանկական այլազան զրօսանքներ եւ մանաւանդ Փեքանֆի (ձեռնադնդակ) մրցաշարք մը, արծաթազօծ բաժակի վրայ:

ՄՈՒՏԳԸ ԱԶԱՏ Է

ԱՐՁԱԿՈՒՐԴ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՐՈՐԴՈՒԹԻՒՆ

ՕԳՈՍՏՈՍ 2 - 13

ԳիՆ 2650 Ֆրանկ

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՐՈՐԴՈՒԹԻՒՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 3 - 18

ԳիՆ 2600 Ֆրանկ

Երթի ընթացքին մէկ գիշեր՝ Մոսկուա, վերադարձ նոյն օրը՝ Երեւան — Մոսկուա — Փարիզ

Երկու հոգինոց առաջին կարգի սենեակ, լողարանով, «Արմենիա»ի կամ «Անի»ի մէջ, երեք ճաշերով: Բաղմաթիւ շրջապտոյտներ:

Արձանագրութեանց համար դիմել

TRANSTOURS, 22 rue du 4 Septembre — Paris (2e) — Tél. : 742-77-40

ուր կարելի է անձամբ ներկայանալ Կ. Ունեմանի, ամէն Երկուշաբթի, Զո — րեքշաբթի եւ Շաբաթ կէսօրէ ետք ժամը 15էն 18:

MARSEILLE — Z. Alikanian, 11 Rue du Bassin, St. Julien,

Tél. : 51-74-90 — 66-38-92

ՎԱՍԻԱՆՍԻ մէջ՝ Ն. Գասպարեանի — ԼիՈՆ՝ Պալեանի — ՏէՍԻՆ՝ Կ.Գարեանի

— ԱԼՅՈՐՎԻՆ՝ Յ. Պոյաճեանի

ՕՐՈՒԱՆ ՊՕՍԻՐԸ

ՍԵՐՄՆԱՅԱՆ ԱՆՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Մինչ տարադիր Հայութիւնը հայրենիքէն հեռու, ցրուեցան աշխարհի չորս հոգիներուն, անկարելի ճիգեր կը փորձէ ազդապահպանման համար, Հայաստանը նկատելով իրբեւ վերջնական հանգրուան, երեւանի վարիչները ո՛չ մէկ լուրջ քայլ կ'առնեն Հայութեան երկու հատուածներու միջեւ սերտ կապեր հաստատելու ուղղութեամբ:

Ընդհակառակն Սփիւռքահայութեան հետ Մշակույթի Կապի Կոմիտէն աւելի շատ քաղաքականութեամբ կը զբաղի քան թէ մշակույթով: Հայաստանի Կոմկուսի կեդր. Կոմիտէի առաջին քարտուղար Անտոն Քոչինեան, այսինքն հայրենիքի կառավարութեան ամբողջ ղեկը իր ձեռքին մէջ կեդրոնացնող անձը, փոխանակ սէր-միութեան քարոզելու, որոմ կը սերմանէ սփիւռքի Հայութեան մէջ, իրարու հակամարտ եւ Հայաստանի բարեկամ ու թշնամի (?) երկու տարբեր հոսանքներու վերածելով դաշն:

Այս ուղղութեամբ յատկանշական էր իր Զեկուցումը՝ ներկայացուած «Հանրապետական կուսակցական «ակտիւ»ի Ապրիլ 4ի ժողովին, տպուած Ս. Հայաստան օրաթերթի Ապրիլ 6ի թիւին մէջ (Յուլայ, 11 եւ 13 Մայիս 1973):

Հայաստանի վարիչներուն պարտակա-նութիւնն է օժանդակել արտասահմանի հայ զաղութներու ազդապահպանման ճիգերուն, առանց վերապահութեան եւ առանց խտրի դնելու Հրէի եւ հեթանոսի միջեւ:

Որոհարկանացումէն 53 տարի ետք ժամանակ է, որ անոնք այլեւս վերջ դնեն Դաշնակցութեան մէջ «Հայաստանի թըշնամի» տեսնելու հիւսնդազին մտայնութեան, որ մղձաւանջի հանդուսն կը հալածէ զիրենք անդադար:

Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կուսակցական ու կազմակերպական ամբողջ մեքենան ի սպաս դրած է տարադիր բազմութեանց հայապահպանման նուիրական դործին: Հայրենիքէն պարբերաբար հայ զաղութները այցելող կռուները, — պետական պատասխանատու վարիչ, մըտաւորական, արուեստագէտ, Մշակու-թային Կապի Կոմիտէի անդամ, եւայլն — աչօք բացօք կը տեսնեն Դաշնակցութեան բեղնավոր աշխատանքները ամէն մարզի մէջ, — մամուլ, դպրոց, երիտասարդա-կան, մարզական, բարեսիրական, մշա-կութային եւ այլ կազմակերպութիւններ:

Այս բոլորը տեսնելով ու գիտնալով հանդերձ, երեւանի համայնավար վա-րիչներն ու Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէի պաշտո-նաթերթ Ս. Հայաստան ամսագիրը կը շարունակեն բոլորովին սուտ ու զրո-պարտի տեղեկութիւններով Դաշնակ-ցութեան եւ անոր մամուլին վերադրել հայրենիքին հանդէպ այնպիսի «թշնա-մական» գաղափարներ, որոնք իրենց ե-րեւակայութեան մէջ միայն դուրսիւն ունին:

Շատ յեղեղուած ժողովրդական ասաց-ուածք մըն է, որ անցեալ դարերու ըն-թացքին հայ ազգի կրած դժբախտու-թեանց գլխաւոր պատճառներէն մէկն ալ իր անմիաբանութիւնն է:

Ճիշդ է, որ Հայոց պատմութեան բախ-տորոշ շրջաններուն անմիաբանութիւնը

ԽՈՐՈՒԱՆ ԴԵՊԲԵՐԸ

ԲՐԵՃՆԵՒ-ՆԻՔՍԸՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՐԵՆԻՔԻ

ԱՐԴԵՆ ԶՈՐՍ ՀԱՄԱՅՆԱԳԻՐ

Մ. Նահանգներն ու խորհ. Միութիւ-նը, Բրեժնեւ — Նիքսըն հանդիպումին երկրորդ օրն իսկ, չորս համաձայնա-գիրներ ստորագրեցին: Առաջինը՝ ովկիա-նոսագիտութեան շուրջ համատեղ դոր-ժակցութիւն մը կը նախատեսէ: Երկրոր-դը կը վերաբերի փոխադրութեան: Մ. Նահանգները կ'ուզեն դիտնալ, թէ ծայր աստիճան ցուրտ կլիմայի պայմաններու մէջ խորհրդային ճարտարագէտները փո-խադրական ինչ հարցեր ունին եւ ինչ-պէս կը կազմակերպեն այս գործը (կա-մուրջ, փապուղի եւայլն): Խորհ. Միութիւն առաւելաբար շահագրգռուած է ա-մերիկեան թեքնոլոգիայով, որ շատ առաջ դացած է փոխադրական մարզին մէջ եւս: Կարեւոր կը նկատուի մասնաւորապէս երկրագործութեան շուրջ կնքուած հա-մաձայնագիրը: Երկուստեք տեղեկու-թիւններ պիտի փոխանցեն զիշխանութե-անական բերքին եւ սպառումին մասին, որպէսզի Մ. Նահանգները ըստ այնմ ծը-րարեն իրենց երկրագործական արտադ-րութիւնը եւ նկատի ունենան խորհրդա-յին բնակչութեան հացահատիկի պահանջ-ները եւ հարկադրուին մէկ անդամէն դանդուածային առաքումներ կատարելու, ինչպէս պատահեցաւ անցեալ տարի, երբ խորհ. Միութիւն մէկ անդամէն 18 մի-լիոն թոն հացահատիկ դնեց Մ. Նահանգ-ներէն: Ասիկա պատճառ դարձաւ, որ հացահատիկի դերը բարձրանալ ամերիկե-ան ներքին շուկային մէջ:

× Նիքսըն երբ Մոսկուա այցելեց ան-ցեալ տարի Բրեժնեւի յանձնեց իրբեւ նուէր «Քատիլա» մը: Այս անգամ ալ անոր կը նուիրէ «Լինքոլն Քընթրիմանթը» մը, որ ամերիկեան կառքերուն ամէնէն լիւսն է: Կը նուիրէ նաեւ «Փիթերսըն» որսորդական հրացան մը:

բացատրական դեր կատարած է: Իրբեւ փաստ կարելի է յիշել Վարդան Մամի-կոնեանի եւ Վասակ Սիւնիի կողմնակից-ներու հակառակութիւնը, Կիլիկիոյ հայ-կական թաղաւորութեան օրերուն Հա-յաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ պաշտպաններուն եւ լատինամիտներու հակամարտութիւնը, եւայլն:

Մեր նորադոյն պատմութեան մէջ յայտնի է «խաւարեաններու եւ լուսա-ւորեաններու» պայքարը անցեալ դարու քառասունական թուականներուն: Վեր-ջին հարիւր տարուան ընթացքին յեղա-փոխականներու եւ յետադիմականներու, բացի ու գոցի, կուսակցական, քաղաքա-կան ու գաղափարական անհամաձայնու-թիւններու առթիւ ազգին մէջ սերման-ուած ատելութեան որոմները քանդեցին ու կը շարունակեն քանդել մեր տունը:

Օսմանեան Սահմանադրութեան յաջոր-դող օրերուն՝ նման սին պայքարներով կը զբաղէր ազգը Պոլսոյ մէջ, ջրատելով մեր ուժերը, մինչ դարաւոր թշնամին մուծին մէջ դաւեր կը սարքէր, դիւային ծրարելներ կ'որոճար՝ բնաջնջելու հա-մար Հայութիւնը:

Ազգային միասնութեան ուժերը ջրա-տող այդ պայքարները դատ չեղան մեզի: Զինադադարէն վերջ կրկին դուրս ցցեցին

ՅՈՒՆԻՍ 18-Ի ՈՂԵԿՈՇՈՒՄԸ ՓԱՐԻՋԻ ՄԵՋ

Այս տարի Յունիս 18ի ողեկոշումը, նուիրուած Զօր. Տը Կօլի պատմական կո-չին 33րդ տարեդարձին, տեղի ունեցաւ սովորականէն աւելի մեծ շուքով Փա-րիզի մէջ:

Նախ, երկուշաբթի օր, 9րդ թաղամա-սի քաղաքապետարանի բակին մէջ, յու-շարձանին առջեւ կատարուեցաւ հանդի-սութիւն մը ժամը 12-30ին, հրաւրեալ-ներու բազմութեան մը ներկայութեան:

Քաղաքապետ Ժերմիլ Ռէշալ եւ նախկին նախարար Քասիէրէթ, խօսք առնելով պանծացուցին Տը Կօլի յիշատակը, յայտ-նելով որ առանց անոր հսկայ ճիգերուն, եւ Յունիս 18ի կոչին, Ֆրանսան այսօր իր անկախ վիճակը պիտի չուներ: Ա-պա ծաղկեպաղներ դրին զինուորի ար-ձանին առջեւ:

Երեկոյեան ժամը 17ին, զանազան ազ-

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱՆԻՍՏՐԱՅԻ պաշարման վիճակի առա-ջին դատարանը վեց տարի եւ չորս ամիս բանտարկութեան դատապարտած է Փրո-ֆեսէօր Իւկիւր Ալաճաքաթեանը, նախ — կին տեսուչ Անդարայի Իրաւագիտական Լսարանին եւ հանրաժանօթ ոճրագէտ, այն ամբաստանութեամբ թէ ցոյցի մը մասնակցած է պաշարման վիճակի հըռ-չակումէն չորս ամիս առաջ: Փրոֆ. Ա-լաճաքաթեան անցեալ Դեկտեմբերին ար-դէն նոյն դատապարտութիւնը կրած էր, բայց զինուորական Բեկանիչ Ատեանը ջնջած էր վճիռը:

ՆԱԽԱԳԱՀ ՓՈՆՓԻՏՈՒ յայտնած է առ-ջի օր, անձնական խօսակցութիւններու ընթացքին թէ Կիլիկի թեկնածու կ'ըլլայ 1976ին եթէ մինչ այդ նախագահական ժամանակաշրջանը 5 տարուան իջնէ: Այս ձեւով Փոնփիտու կը ճշդէ թէ աւելորդ է ոչ միայն կանխահաւ ընտրութիւններու մասին մտածել այլեւ՝ ապագայ: Բոլոր անոնք որ քանի մը շարաթ է հարս եղած էին արդէն երբ փեսայ չկար հրապարակը կրնան ուրեմն քիչ մըն ալ համբերել...:

նոյն անհասկացողութիւնները, նոյն հա-կառուութիւնները օրուան քաղաքական ու ազգային հարցերու մասին, նոյն ան-միաբանութիւնը Հայութեան զննազան հոսանքներուն միջեւ, երբ անդին հայ ազգի ձակառաղիւր տնօրինող յաղթա-կան մեծ Պետութիւնները մոռնալով ի-րենց խոստումները՝ կ'ուրանային մեր թափած հեղեղանման արիւնը, մեր բախ-տին — աւելի ճիշդ դժբախտութեան — կը լքէին մեզ:

Անմիաբանութեան նոր տեսարաններ պիտի պարզուէին Մերձաւոր Արեւելքի մէջ 1956ին եւ յաջորդող տարիներուն՝ կաթողիկոսական ընտրութեան առթիւ: Մինչ հաշտութիւն գոյացած է աշխար — հակառակներու միջեւ, խաղաղութիւնը չէ հաստատուած երկու Աթոռներու միջեւ:

Հայրենիքի վարիչները պէտք է դի-տակցին իրենց ուսերուն վրայ դրուած պատասխանատուութեան ծանրութեան եւ փոխանակ որոմ ցանկու, համբաշ-խութիւն քարոզեն սփիւռքի Հայութեան բոլոր հոսանքներուն միջեւ, որպէսզի պատմութիւնը իրենց անունին չփակցնէ «անմիաբանութեան սերմնացան» մակ — դիւրը:

ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

Պ. ԶՊՈՒՔՃԵԱՆ

դերու 160 զինուորական դրօշներ հա-մախմբուած էին Շան զէլիզէի պողոտա-յին վրայ, ի մէջ այլոց Հայ Նախկին Ռազմիկներու երկու դրօշները, հայկա-կան Եռագոյնը եւ Փրանսահայ կամաւոր-ներու եւ զիմադրականներու դրօշը: Նը-կատելի էին բազմաթիւ դաղթաւայրե-րու սեւամորթ դրօշակիրներ, ինչպէս նաեւ անգլիական, ամերիկեան, յունա-կան դրօշներ, չքանչաններով զարդա-րուն դրօշակիրներով:

Ժամը 18ին, թափօրը ճամբայ ելաւ դէպի Յաղթական Կամար, զինուորական նուագախումբի առաջնորդութեամբ՝ բազմաթիւ հրաւրեալներ կը հետեւէին թափօրին:

Ներկայ էին տասնեակ մը զօրավարներ եւ ծովային ու ցամաքային բարձրաստի-ճան սպաներ: Մայթերը լեցուած էին հոծ բազմութեամբ:

Բոցի արծարծումը կատարեց Պատե-րազմական նախարար Անտէ Պօռ եւ նուագախումբի մահերգին ընկերակցու-թեամբ մէկ վայրկեան լուսութիւնը պահ-ուեցաւ: Նախարարը ապա առանձին ա-ռանձին չնորհաւորեց բոլոր դրօշակիր-ները:

Պաշտօնական արարողութիւնը լրանալէ յետոյ, դրօշակիրներ եւ մասնաւոր հրա-ւիրատուս ունեցողներ բարձրացան փո-խադրակառքերու մէջ եւ ճամբայ ելան դէպի Մոն Վալէռիէն:

Հոն արդէն ծովածաւալ երկեսո բազ-մութիւն մը խոնուած էր մինչեւ շրջա-կայ բլրակներուն վրայ:

Դրօշները կարգի շարուեցան մահար — ձանի ամբողջ երկայնքին, եւ կարգով սկսան հասնիլ պաշտօնական անձնաւո-րութիւնները՝ ծափահարութեանց տակ:

Շապան Տէլմաս, նախարարապետ Մէս-մէն, բանակի ընդհ հրամանատար զօ-րավարը, Մօրիս Շուսան, Տիկին Փոն — փիտու, Տիկին Լըբլէս եւ բազմաթիւ ու-րիշներ, երեսփոխաններ, եւայլն:

Մոն Վալէրիէին արարողութիւնը կազ-մակերպուած էր Ազատագրման կարգի մեծ-գլխաւոր տնօրինողի կողմէ, որու նախա-դահն է Տը Պուալանպէն: Այս կազմա-կերպութիւնը կը բաղկանայ 32 պատե-րազմիկներէ:

Հրացանի բռնուած նահատակներու ստորերկրեայ դամբարանի մուտքը վե-րապահուած էր նախապէս միմիայն Զօր. Տը Կօլին եւ անոր մահէն յետոյ, վերո-յիշեալ Տը Պուալանպէնի եւ որ իրաւունք ունէր, բայց այս տարի առաջին անգամ ըլլալով 32ներու հաւանութեամբ Նա-խագահ Փոմփիտուն ալ արժանացաւ այդ պատիւին:

Ճիշդ ժամուն կը հասնէր Հանրապե-տութեան Նախագահը ծափերու մէջ:

Տը Պուալանպէն նախ կատարեց բոցի արծարծումը նուագախումբի մահերգով եւ մէկ վայրկեան լուսութեամբ յետոյ Նա-խագահին ընկերակցութեամբ զննա ստոր-երկրեայ դամբարանը խոնարհելու նա-հատակներու շրմներուն առջեւ: Նա-խագահ Փոմփիտու դուրս ելլելէ յետոյ տողանցեց դրօշակիրներուն առջեւ եւ բարեկէ բոլոր ներկայ ժողովուրդը: Նա-խագահը, հակառակ զանազան զրոյցնե-րու, շատ առողջ ու կայտառ էր:

Աւելորդ է ըսել որ արարողութեան ներկայ էին հետեւակ եւ ծովային զին-ուորներու խմբակներ: Ներկայ էր նաեւ հեռատեսիլը:

Ամբողջ արարողութեան ընթացքին նուագախումբը կը նուագէր զիմադրա-կաններու Փառերգը:

Արարողութիւնը լրանալէ յետոյ նոյն փոխադրակառքերով դրօշակիրներն ու հրաւիրեալները փոխադրուեցան Փարիզ:

ԿԻԼԻԿԻՈՅ ԱՅԱՍ ՆԱԽԱՀԱՆԳԻՍՏԸ

— 0 —

(Յապառումներով)

(Բ. Է. Վերջին մաս)

Այսօրի նաւահանգիստը ուրոյն տեղ դրաւած է միջազգային առեւտուրի պատմութեան մէջ: Միջերկրականի նաւահանգիստներէն, Ասորիքէն եւ Միջագետքէն դէպի կեդրոն. Ասիա, Չինաստան, Հնդկաստան եւ Ռուսաստան տանող կարաւաններու ճամբաները փոխուեցան, երբ մէկ կողմէ Մոնկոլները 1258ին կործանեցին Պաղատար, որ Մերձ. Արեւելքի մեծագոյն մայրաքաղաքն ու խալիֆա — յուլթեան աթոռանիստ վայրն էր եւ, միւս կողմէ, երբ Եգիպտացիք 1268ին Անտիոքը եւ 1291ին Աքրան դրաւեցին: Ժ. Գ. դարու երկրորդ կէսին, Մերձաւոր Արեւելքի երկիրներու սահմանային մեծ փոփոխութիւններուն հետեւանքով, Եւ — րոպայիներու եւ Մոնկոլներու համար ձեռնառու միակ քրիստոնեայ երկրի առեւտրական նաւահանգիստը Այասը մնացած էր: Միջազգային քաղաքական այս նոր կացութիւնը նպաստաւոր էր Հայերու համար: Եգիպտոսի թշնամի Մոնկոլներն ու Լատինները իրարու հետ կը յարաբերէին Այասէ անցնող կարաւանային ճամբաներով: Մոնկոլներու տիրապետութեան ենթակայ ասիական երկիրներու եւ Եւրոպայի առեւտրականութեան համար Այաս այն միակ վայրն էր, ուր անոնք կրնային առանց փոխադրուիլ գործառնութիւններ կատարել:

Այաս տարանցիկ ճամբաներու ցանցով մը կապուած էր Տրապիզոնի, Ռուսիոյ, Կովկասի, Թաւրիզի, Ասորիքի, Միջագետքի, Եգիպտոսի, Փոքր Ասիոյ եւ Բիւզանդիոնի բազմաթիւ քաղաքներու հետ:

Վենետիկցի ուղեգիր Մարքո Փոլո չարք մը տեղեկութիւններ տուած է Կիլիկիոյ հայկական թագաւորութեան եւ Այասի մասին «Անոնք (Հայերը) ունին քաղաք մը ծովու վրայ, որ կը կոչուի Լայաս, ուր անոնք մեծ առեւտուր կը կատարեն: Որովհետեւ դուք պէտք է գիտնաք, թէ բոլոր համեմները եւ մետաքսէ կերպասները, արծաթը եւ ուրիշ արժէքաւոր առօթները, որոնք ներքին դաւառներէ կը բերուին, հոս կը ծախուին: Եւ Վենետիկի, ձեռնովայի եւ ուրիշ երկիրներու վաճառականները հոս կուզան՝ վաճառելու իրենց ապրանքները եւ կամ գնելու՝ ինչ որ պէտք ունին: Եւ ռեւէ անձ, վաճառական կամ ուրիշ մէկը, որ պիտի ճամբորդէ ներսերը, իր ճամբորդութիւնը կը սկսի այս Լայաս քաղաքէն»:

Այաս, միեւնոյն ատեն, Կիլիկիոյ հայկական Պետութեան գլխաւոր ռազմածովային նաւահանգիստներէն մէկն էր: Հոն կը խարսխէր Միջերկրական ծովի հայ

կական նաւատորմը: Մեր պատմագիրը — ներք քիչ տեղեկութիւններ հաղորդած են հայկական ռազմանաւերու մասին: Մի — այն քանի մը անշան փաստեր լոյս կը սփռեն այս հարցին վրայ: Արար գրող Իպն Էլ-Վարդի տուած տեղեկութիւնն — րուն համաձայն, 1323ին, երբ Եգիպտացիք յարձակած են Այասի վրայ, նաւահանգիստին մէջ կը գտնուէին «Աթլաս», «Այաս» եւ «Շամա» անուններով ռազմանաւեր: Դեռ պարոն Թորոս Բ. ի օրով Հայերը ունեցած են նաւատորմ, որու շնորհիւ Անտիոքի իշխանութեան հետ զինակցելով, դրաւած են Կիպրոսը, որ Բիւզանդացիներու տիրապետութեան տակ կը գտնուէր: Լեւոն Գ. Կիպրոս այցելելէ ետք երբ կը վերադառնար, թըշնամիներ իր ճամբան կտրած են եւ ծովամարտ մը տեղի ունեցած է, որու մասնակցած են Կիլիկիոյ հայկական եւ Կիպրոսի Լուսինեան թագաւորութեան զինակցի ռազմանաւեր: Թշնամի ծովակալին ռազմանաւը խորտակուելէ ետք, անոր ընկերացող նաւերը դիմած են փախուստի:

Այդ դարերուն հայ նաւապետներու մեծ հմտութեամբ ղեկավարած առեւտրական նաւերուն կարելի էր հանդիպիլ նոյնիսկ հեռաւոր ծովերու վրայ (Հնդկական ովկիանոս): Ժ. Գ. — Ժ. Գ. դարերուն անհրաժեշտ դարձաւ հարստացնել հայերէնի ծովային եւ նաւադնացութեան բառապաշարը: Ծովահայներու վախճն վաճառականները երբեմն արժէքաւոր ապրանքները բերանաւերով կը փոխադրէին: Հայերը գտնուէր կ'անուանէին դալէ:

Ինչպէս ըսուեցաւ, Այաս բազմիցս առեւտուած է Եգիպտոսի սուլթաններու կողմէ: Այասի վրայ կատարուած յարձակումներուն նպատակն էր քանդել հայ — կական Պետութեան տնտեսութիւնը եւ Աղբաքանդիւրիոյ նաւահանգիստին եկամուտները վերահաստատել: 1268ին Պայպարս սուլթանին ընդդէմ յարձակեցան եւ աւարի տարով քանդեցին քաղաքը: 1274ին նոյն սուլթանը ցամաքէն եւ ծովէն միաժամանակ կրկին յարձակեցաւ եւ ամբողջովին կործանեց քաղաքը: 1284 — 1285ին Պայպարս սուլթանը Այասի վրայ ճնշում ընդնեցնելով նաւահանգիստի եւ կամուտէն շահաբաժին պահանջեց: Այասի մէջ առեւտուրը այնքան շահաւէտ էր, որ 1294ին ձեռնովայիներն ու Վենետիկ — ցիները արհեստի կռիւներ մղեցին, որպէսզի զիրար վտարեն քաղաքէն: Նոյն թուականին երկու կողմի ռազմանաւերը նաւահանգիստին առջեւ պատերազմեցան իրարու դէմ: Վենետիկի նաւատորմը պարտուեցաւ, Վենետիկցիներուն նաւերը ձեռնովայիներու ձեռքը անցան, իսկ Վենետիկցիներն ալ ցամաքին վրայ աւերեցին ձեռնովայիներու ունեցածները: 1305ին Հայերը ջարդեցին քաղաքը սապատակելու նպատակով եկած Հալէպի ամիրայի զորքերուն մեծ մասը: 1320ին Եգիպտոսի Ան-Նասըր Մուհամմէտ սուլթանին ընդդէմ յարձակեցան Այասի վրայ եւ մեծ կորուստներ կրելով ետ

քաշուեցան: 1321ին թաթար Դիմուրտաչ զօրավարը 30.000 հեծեալով եւ քաղաք — թիւ հետեւակներով Կիլիկիա մտաւ եւ անպատակելով հասաւ Այաս: 1322ին Եգիպտոսի Ան-Նասըր Մուհամմէտ սուլթանը 1320ի պարտութեան վրէժը լուծելու համար մեծ բանակով Այասի վրայ գնաց: Մէկ կողմէ Դիմուրտաչի թաթարներու եւ, միւս կողմէ, Եգիպտացիներու յարձակումներու ճնշումին տակ քաղաքը հիմնադատակ կործանեցաւ: 1323ին Հայերու եւ Մեմլուկներու միջեւ կնքուած համաձայնութեամբ մը որոշուեցաւ վերադառնալ քաղաքը եւ միայն ցամաքի բերքը (Ան-Նասըր սուլթանի եւ Պապի նիւթական օժանդակութեամբ) եւ 15 տար — ուան խաղաղութեան դաշինք կնքուեցաւ: 1347ին Կիլիկիոյ Հայոց Կոստանդին թագաւորը, Հոգոփոս ապագետներուն օգնութեամբ, վերադարձեց քաղաքը, բայց նոյն տարին Եգիպտոսի նաւատորմը կըրկին վերադարձեց զայն: 1365ին Հայերու պաշտպան Կիպրոսի Պետրոս Ա. Լուսինեան թագաւորը նաւատորմով Այաս եկաւ եւ Հայերու օգնութեամբ հրկիզեց քաղաքը: 1368ին նոյն թագաւորը տասը ամիս տիրեց քաղաքին վրայ:

Այաս չարունակական հարուածներու տակ օր աւուր անշուք դարձաւ: Կիլիկիոյ հայկական Պետութեան վերջնական անկումը (1375) ետք ալ քաղաքը հանդիստ չմնաց: Ամայացած նաւահանգիստը Ժ. Գ. — Ժ. Գ. դարերուն ինկաւ Մեմլուկներու, Դուլկատիւր Օղլուի բռնապետներու, Վենետիկի Հանրապետութեան եւ Օսմանեան կայսրութեան տիրապետութեան տակ: Մեմլուկները Այասը կործանելով, հասան իրենց նպատակին: Նախագահ Աղբաքանդիւրիոյ փառքը վերահաստատուեցաւ:

Մեմլուկները հայկական Պետութեան վերացման եւս նպաստեցին: Կիլիկիոյ հայկական Պետութեան քանդումէն տասնութ տարի անց, Վենետիկցի առեւտրականները, շահագրիտական մղումով եւ պապական նախատեսելով, Հայերու թըշնամի Մեմլուկներու հետ բարեկամանալով, առեւտրական դաշնագիրներ կընքեցին:

Հայկական Պետութեան անկումէն ետք Այաս այլեւս չկրցաւ իր հին փայլուն դիրքին վերադառնալ եւ մատուցաւ մոռացութեան:

Ի. դարու առաջին քառորդին Այասի եւ չընկալ գիւղերու մէջ մնացած էին բազմաթիւ հայ ընտանիքներ, որոնք կը զբաղէին գիւղատնտեսութեամբ: Անոնց մէկ մասը հայալինջ կոտորածներու ժամանակ սպաննուեցաւ, մէկ մասն ալ Սուրիոյ անապատները աքսորուեցաւ: Վերջնական ընդլնումէ կերպով մը ճողոպրած բուռ մը Կիլիկիոյ Հայեր, երբ իրենց աւերակ դարձած բնակավայրերը կը վերադառնային, Այասի մօտակայ Տեմիր — թաչ գիւղին մէջ անխնայ ջարդուեցան:

Այժմ Այասի մէջ Հայեր չկան: Այասի չընկալ բամպակի եւ ցորենի արգասաբեր ընդարձակ այն դաշտերը, որոնք կո-

ԱՀԱԲԵԿԵԼՈՒ ՍԱԴԱՅԵԼԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

— 0 —

Ստալինեան արեւմտի հալածանքները դատապարտելէ ետք խորհրդային ղեկավարութիւնը շուտով մշակեց երկրին այլ լախոնները ահաբեկելու նոր եղանակներ: Ընկճելու համար որեւէ ընդդիմադիր ձայն այժմ լախոնէն կ'օգտագործուին բարոյապէս վարկաբեկելու եւ հոգեբու — ժարաններու մէջ արգելափակելու դիւալին միջոցները: Տեղական բոլոր թերթերը վերջերս հաղորդեցին, թէ «խորհրդային յատուկ դատարանի որոշումով Զօր. Գրիգորենկօ «ցլեան» արգելա — փակուած պիտի մնայ հոգեբուժարանի մէջ»: Զօրավարը արգելափակուած է «Իրեւ յիմար» 1969էն ի վեր, երբ բողոքեց Ձեռնադրութեան դրաւման դէմ... Գրիգորենկօյի, ինչպէս նաեւ անոր կնոջ եւ բարեկամներու բազմաթիւ բողոքները նման արտասովոր պատժական միջոցառումներու դէմ մնացած են անհետեւանք: Վերջերս խորհրդային երեք հոգեբոյժներ, ի բացակայութիւն ենթակային, փորձադիտական քննութիւն են կատարած Գրիգորենկօյի հարցին մասին եւ արդիւնքը ուղարկած են Մարդկային Իրաւացի խորհրդային կոմիտէի նախագահ Ա. Սախարովի: Այդ փաստաթուղթը անցած է Արեւմուտք՝ խորհրդային «Սամիկոյատ» ընդլատակեայ թերթին միջոցով եւ արդէն լոյս տեսած է Փարիզի «Ռուսկայա Մըսլ» չաբթաթերթին մէջ: Ստորեւ թարգմանաբար կը ներկայացնենք փաստաթուղթի ներածականն ու եզրափակիչ մասը՝ որոշ կրճատումներով: Ներածականն. — «Սամիկոյատ» տարածած փաստաթուղթերէն տեղեկացանք, որ յաճախողէպ դարձած են բժշկական բնոյթ կրող պարտադիր միջոցներու կիրարկումի դէպքերը անոնց նկատմամբ, որոնք այսպէս թէ այնպէս կապուած են մեր երկրի ժողովրդավարական շարժումին հետ: Փաստաթուղթերը աւելի մանրամասն ուսումնասիրելէ, ինչպէս

տորածներէն առաջ կը պատկանէին Հայերուն, այժմ անցած են թուրք հողա — տէրերու ձեռքը:

Ժ. Գ. դարուն կէս կանգուն միջակի մէջ կը գտնուէին Այասի միջնադարեան չորս եկեղեցիները ու քաղաքը չընկալաւոր պարսպներէն քանի մը կիսափուլ պատեր ու աշտարակներ: Բայց էր նաեւ Այաս գիւղի հայկական եկեղեցին: Մէկ դարու ընթացքին ասոնք եւս հողին հաւասար դարձան եւ անհետ կորսուեցան:

Մ. ձեւվԱՀիրձԵԱՆ

ԿՏԱԿՆ ԷՐ

ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ

Գրեց՝ ԱՐՇԱԽԻՐ ՇԻՐԱԿԵԱՆ

Ա. ՄԱՍ

Կ Ր Ա Կ Ի Մ Կ Ր Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԳԱԻԱՃԱՆ ՎԱՀԷ ԻՀՍԱՆԻ ԱՀԱԲԵԿՈՒՐԸ

Ոստիկանը մէջքին չուան մը կապեց, ընկերները բռնեցին չուանը եւ ինք սահեցաւ հորէն ներս: Բոլորն ալ ուրիշ ձեւով կը նայէին ինծի. արդէն զիս իրենց «մարդը» կը նկատէին. չէ՞ որ բազմաթիւ անգամներ էշքէֆին հաւաստած էի թէ իրենց լուր պիտի տամ, եթէ քոմի — թէճի մը տեսնեմ...

— Մարդ չկայ... մարդ չկայ... լըսուեցաւ Մեհմէտին ձայնը վարէն:

— Ոչ էֆէնտի, միջամտեցի, ձայնիս տալով ամենալուրջ թոն մը, հորը շատ խորունկ է, ասանկ երկու չուան հազիւ կրնան Մեհմէտը յատակը հասցնել:

Ոստիկանապետները կը մոմտային, մինչ Մեհմէտին ձայնը աւելի բարձր կուգար եւ աւելի աղաչական...

— Մարդ չկայ... Վալլահի չկայ... ալ չունչ չեմ կրնար առնել... մոմն ալ մարեցաւ:

Կանչերը այնքան սրտաճմլիկ դարձան, որ ի վերջոյ Ալի Րիզան հրամայեց չուանը քաշել: Մեհմէտ, հազիւ ոտքը հորի եղբրին դրած, առեկալաւ աչքերով զիս կը փնտռէր և անորոշ հայհոյանքներ կը մըթմըթար քթին տակէն: Իսկ ես կը դիտէի մասնաւորաբար Ալի Րիզային եւ էշքէֆին դէմքերը, որոնք այդ միջոցին խոր մտածումներու մէջ թաղուած կ'երեւային:

Նախազգացում մը ինծի կ'ըսէր թէ անոնց լուրքեան տակ խորհրդաւոր բան մը կը պատրաստուի: Բաներ մը կը փրփրասային իրարու եւ ոստիկաններուն հրամայեցին որ մեկնին: Հարկ եղածէն աւելի փութկոտութեամբ հրամանը կատարուեցաւ: Անոնց հետեւէն դուռը կըպէլէ վերջ վեր բարձրացած էի, երբ վարէն լըսեցի մօրս ու քրոջս ճիշերն ու պողտու — քը: Վար խոյացայ: Յայտնի եղաւ որ մարդիկ մեկնելէ առաջ դադարեցին երկու ոստիկան պահած են մեր ամխանո-

ցին մէջ, որպէսզի մեր քնանալէն վերջ գործի անցնին: Մայրիկս, կասկածելով խուզարկած էր տան բոլոր մասերը ու երեսն հանած էր ոստիկանները:

Որքան ալ բերտ ու անպատկառ ըլլային, չէին կրնար ծածկել յանցանքի վրայ եւ դողի պէս բռնուած ըլլալու իրողութիւնը: Երեւոյթները փրկելու համար ոստիկաններէն մին պրտաց ինծի. —

— Ո՞վ էր վերջէն իջնողը:

— Ձեռնա՞ր, ես էի, պատասխանեցի նոյնքան խելոս:

Բիշ մը եւս կեցան, տնտնացին եւ անհասկնալի բաներ մը մըմուրով գացին:

Այդ գիշեր այլեւս չխանդարուեցանք: Բայց քանի մը օր ետք, 1916ի Կադանդի գիշերը, երբ մեր փախուսականները բոլորուած էին ընտանեկան սեղանին շուրջ, մեր դուռը մեղմօրէն բախեցին: Անմիջապէս ելայ վերնայարկը եւ պատուհանէն վար նայեցայ: Ֆէսաւոր մարդ մը, անուրիս տակ խոշոր տետրակներով: Կասկածելի բան մը չուէր, սակայն վարժուած էինք զգոյշ ըլլալ: Դուռը բանալէ առաջ տղոց պատուիրեցի թաքստոցը մտնել: Այս անգամ գործողութիւնը կատարուեցաւ առանց իրարանցումի: Եւ մինչ մայրիկս սեղանը կարգի կը դնէր, աւելորդ պնակներն ու գաւաթները վերցնելով, իջայ եւ դուռը բացի:

Ֆէսաւոր մարդը դեռ ներս չմտած, մուծին մէջէն յանկարծ ուրիշ մը մէջ-

տեղ ելաւ, ապա ուրիշ մը եւ վերջապէս էշքէֆ իր խումբով, ոստիկաններով:

Լսին թէ վերջնական խուզարկութիւն մը պիտի կատարեն, որմէ վերջ թուղթ մը պիտի ստորագրենք թէ մեր տունը փախուսական չկայ եւայն, եւայն...

Արտակարգ գործունէութեան մէջ էր էշքէֆ այդ օրը: Բայց ոստիկաններէն, հետք բերած էր նաեւ որմնագիր մը, որ քննէր մեր տան պատերը, մուրճի հարուածներով եւ ականջ տալով եւ ականջ փակեցնելով պատերուն եւ տախտակա — մածին: Ոստիկանները մէկ կողմէն, որմնագիրը միւս կողմէն տակնուվրայ ըրին մեր տունը, բայց տունը ընդարձակ ըլլալով, չէին կրնար հարկ եղած բժախնդրութեամբ առաջ տանիլ գործը: Իսկ ես, շարունակ շատախօսելով կը ջանայի զբաղեցնել որմնագիրը, թէեւ ուշադրութիւն կեդրոնացուցած կ'ըլլայի էշքէֆին վրայ:

(41 — Շար.)

ԿԱՐՂԱՑԷՔ
ՏԱՐԱԾԵՑԷՔ

ՅԱՌԱՋԸ

- ՀԱՅԱՍՏԱՆ -

ԶԵՂՇԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ

Ժուռնալ տիւ Տիւման, Յունիս 17ի իր թիւով հետեւեալ լուրը կուտար «Հոս, կատակ չի վերցնէր» խորագրին տակ.— «Հայաստանի տնային սարքերու խանութի մը տնօրէնը մահուան դատապարտուեցաւ եւ զնդակահարուեցաւ Պետութեան ի վնաս ծանր զեղծումներու համար»:

Այս մասին Սովետական Հայաստան Յունիս 13ի իր թիւով կուտայ հետեւեալ մանրամասնութիւնները.—

— Երկար ժամանակ Ախուրեան չըմանի Սպառնապ Միութեան (սպառնապական պարանքներու քոսիերաթիւ միութիւն) մէջ յանցաւորներու խումբ մը կը դործէր: Զանազան մեքենայութիւններու, կեղծ փաստաթուղթերու ճամբով անոնք կանոնաւոր կերպով կը յափշտակէին ժողովուրդին բարիքը:

Եւ ահա յափշտակիչները նստած են մեղադրեալի աթոռին վրայ: Անոնց հոս հասցուցած է հարստանալու տենչը, չհամարուածները, զբաղմունքները, զբաղմունքները անգոյս ձգտումը: Անոնց մէջ են յանցագործու թեան կազմակերպիչ՝ Ախուրեանի չըման նախնի սպառնապմիութեան տնտեսական պարանքներու խանութի վարիչ Ա. Միլերտչեան, խանութի աշխատողներ Ռ. Մահերեան, չըմանային սպառնապմիութեան նախնի նախադահ Վ. Գեորգեան, զխուսուր հաշուապահ Լ. Վարդանեան, «Հայկոպչի» ձեռնարկութեան Երեւանի շինվարչութեան պետ Հ. Սաւաթեան եւ ուրիշներ:

Յափշտակողներու այդ խումբը յարարութիւն հաստատելով տնտեսական եւ շինարարական շարք մը կազմակերպութիւններու աշխատողներու հետ, տարիներ շարունակ զբաղած էր ժողովրդական բարիքի՝ առանձնապէս մեծ չափերու հասնող յափշտակութիւններով:

Հանրապետութեան Գերագոյն Դատարանի ջրէական դործերու դատարանը կէտ առ կէտ ուսումնասիրեց յանցանքին պարագաները: Յափշտակութեան մեծապէս կը նպաստեն պատշաճ վերահսկողութեան բացակայութիւնը, պարանքներու նիւթական հաշիւներուն խառնաշփոթ վիճակը, նիւթական պատասխանատուութեան ընտրութեան սկզբունքի կոչում խախտումները:

Վիաններու ցուցմունքներով, փաստաթուղթերու ստուգումով մեղադրեալները — բոլոր յանցանքը լիովին փաստուեցաւ:

Յանցաւորները արժանի պատիժ ստացան: Դատարանը Հ. Սաւաթեանին դատապարտեց 13 տարուան բանտարկութեան՝ զոյրէ գրաւումով: Ռ. Մահերեան դատապարտուեցաւ 11, Մ. Միլերտչեան եւ Լ. Վարդանեան 10ական, Վ. Գեորգեան՝

ԴԱՂՈՒԹԻ

ԴԱՂՈՒԹԻ

Աթէնքի Սոփիա Յակոբեան «Հայ Տուն»ի սրահին մէջ, Յունիս 10ին, դուռնաւորած է Հայ Կապոյտ Սահի Յունաստանի չըմանի 45րդ պատգամաւորական ժողովը: Շըմանային եւ մասնաճիւղերու հինգ վարչութեան տեղեկագիրները ցոյց տուած են, թէ Կապոյտ Սահը իր աւելի քան 555 անգամ — անգամուհիններով արդիւնաշատ գործ կատարած է խնամատարական, կրթական եւ ազգային գետնի վրայ: Կրթական գետնի վրայ ջերմ հոգածութեան առարկայ դարձուցած է ազգային վարժարանները եւ, միեւնոյն առտեւ, անխորակաւ ոգիով օգնած է չըմանուր եւ հիւանդ ազգակիցներուն: Մայր Սոփիա Յակոբեանի նուիրատուութեան շնորհիւ Աթէնքի կեդրոնին մէջ գնած է «Հայ Տուն»ի գեղեցիկ յարկաբաժինը, օժտուած սրահով եւ բոլոր յարմարութիւններով: Սրահը ներկայիս Աթէնքի դպրութիւն հաւաքավայրը դարձած է: Ընտրուած է նոր չըմանային վարչութիւն:

ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ մէջ Յունիս 1-2ին դուռնաւորած է Մեծի Տանն Կիլիկիոյ Քալիֆորնիոյ Թեմի ազգային երեսփոխանական ժողովը, մասնակցութեամբ 39 երեսփոխաններու: Թեմի առաջնորդ ընտրուած է Սմբատ Ծ. Վրդ. Լափաճեան: ԱՆՔՐՍԱՆԻՐԻՈՅ եւ Հելիոպոլիսի մէջ Յունիս 2 եւ 3ին տօնակատարուած է Հայաստանի անկախ Հանրապետութեան հռչակման 55րդ տարեդարձը: Զոյգ հանդիսութիւններուն բանախօսած է ընկեր Յակոբ Իսկէնտէրեան, Պէյրութէն:

ՓԻԼԻՊՊԵԱՆ Հանրապետութեան Գեղարուեստի եւ Մշակոյթի Յանձնաժողովը «Արժանեաց Վկայագիր»ով մը վարձատրած է պուրսակայ լաւաստեղծ Զահարաւ, անոր ծննդեան 49րդ տարեդարձին առթիւ, առ ի գնահատութիւն բանաստեղծութեան մարդին մէջ անոր տարած աշխատանքներուն:

ԶԵՂՈՒՄ

Յունիս 15ի Էսթեան Սանուց Միութեան արտասանական մրցումի թղթակցութեան մէջ, «յիշատակութեան արժանի»ներու կարգին թիւրիմացութեամբ չէ յիշուած՝

վեց տարուան բանտարկութեան՝ դարձեալ դոյրի բռնադրաւումով: Պումբին միւս անգամները դատապարտուեցան բանտարկութեան՝ տարբեր ժամկէտով: Պումբի կազմակերպիչ Ա. Միլերտչեան դատապարտուեցաւ պատիժի առաւելաւոր չափին՝ զնդակահարութեան: Դատաւճիւրը գործադրուեցաւ:

նաեւ անոնց իսկապէս վաւերական ըլլաւ մանրակրկիտ ստուգելէ ետք, մենք, մեր երկրի բժշկական տարբեր հիմնարկութիւններու մէջ աշխատող երեք բժիշկ-հոգեբոյժներս, այն եղբայրացութեան եկանք, որ պարտադիր բժշկութիւնը կ'օգտագործուի մեկուսացնելու համար հոգեպէս առողջ մարդիկ, որոնք բացէ իրաց կ'արտայայտեն իրենց տարակարծութիւնը կառավարութեան հետ:

Զուենալով ամբողջական տեղեկութիւններ պարտադիր բժշկութեան եւ թարկուող քաղաքական բողոքարկուններու մեծամասնութեան մասին, մենք կարողացանք բազմակողմանի կերպով ուսումնասիրել միայն մէկ փաստ՝ նախկին ղեկավար Պետոյր Գրիգորեանի պարտադիր բժշկութիւնը, որ արգելափակուած է Զերենախոյկա քաղաքի հոգեբուական հիւանդանոցը:

Մեր ձեռքին տակ ունենալով բաւական նիւթեր, Գրիգորեանի յօդուածները, անոր մեկնաբանութիւնները՝ իրեն դէմ կերպարկուած դատարանա — հոգեբանական փորձագիտական քննութիւնները, անոր համալրողներուն, բարեկամներուն պատուր եւ բանաւոր տեղեկատուութիւնները, բժշկական փաստաթուղթեր եւ այլ նիւթեր, մենք անհրաժեշտ եւ հնարաւոր նկատեցինք կատարել դատարանա — հոգեբանական լուրջ փորձագիտական քնն — նութիւն Գրիգորեանի հարցին մասին՝ խորհրդային օրէնսդրութեան, քրէական իրաւունքի, ինչպէս նաեւ դատարանա — հոգեբանական փորձագիտական քննութիւններ կատարելու 1970 Հոկտեմբեր 20ի օրէնքի սահմաններուն մէջ...

Ուղարկելով մեր փորձագիտական քնն — նութիւնը ոչ միայն Պորհ. Միութեան Նախարարներու խորհուրդի Անվտանգութեան կոմիտէին, Գերագոյն Դատարանին, Ներքին Նախարարութեան, դատա — խաղութեան, Արդարադատութեան նախարարութեան, Առողջապահութեան նախարարութեան, այլեւ եւ ամբողջ հասարակութեան, մենք ստիպուած խուսափած ենք դուռնաւորութեան բանաձեւումներէ, որոնք հասկընալի են միայն մասնագէտներուն...

Տուեալ աշխատութիւնը մենք կը նկատենք ոչ միայն Գրիգորեանի խնդրին ճշմարտութիւնը վերահաստատելու փորձ մը, այլեւ մասնագիտական բողոք մը նման արարքներու դրութեան դէմ ընդհանրապէս:

Քաղաքացիի եւ մասնագէտի արժանատութեան դիտակցութիւնը եւ ոչ թէ համակրանքը ենթակային պաշտօններուն եւ գործունէութեան հանդէպ, պարտաւորութիւն տուած մեզի կատարել տուեալ հոգեբանական քննութիւնը:

Եզրափակիչ մաս — Պէտք Գրիգորեանի հոգեկան հիւանդութեամբ չի տառապիր, իսկ անոր առողջական վիճակը՝ անոր վերադարձած գործունէութեան ժա

մանակաշրջանին կարելի չէ նկատել յանցանքը բացասող հոգեվիճակ: Վերլուծումներու ժամանակ պարզուեցաւ, որ անոր առած քայլերը դիտակցօրէն եղած էին: Գրիգորեանի դիտակցարար հետապնդած է նպատակ մը, հետեւաբար, ենթակայ չէ օրէնսդրութեան 11րդ յօդուածին, որ կը նախատեսէ նախդուշական յատուկ միջոցներ ձեռք առնել առողջապահական մարմիններու կողմէ եւ զինքը չըմանաւորներու համար իր ներկայութիւնը վտանգաւոր նկատելով՝ արգելափակում պարտադրել բուժարանի մը մէջ:

Զանդապառնալով Գրիգորեանի դատական հետապնդումներու օրինաւորութեան հարցին, որ դուրս է մեր մասնագիտական իրաւագութեանէն, մենք անհրաժեշտ կը համարենք պահանջել Զերենախոյկա քաղաքի հոգեբուական յատուկ հիւանդանոցի գեկավարութեանէն՝ Գրիգորեանի հարցը ներկայացնել դատարանին, որպէսզի ջնջուի պարտադիր բժշկութեան դատաւճիւրը, համաձայն քրէական օրէնսդրութիւն 60րդ յօդուածին:

Զմբունքով, թէ ինչպէս մասնագէտներ, նաեւ՝ բժշկական գիտութիւններու ակադեմիայի թղթակից — անգամ Մորդով եւ Փրոֆ. Լուսի 1969 Նոյեմբեր 19ին Գրիգորեանի փորձագիտական քննութիւնը կատարելով կեդրոնական դատահետազոտական հիմնարկութեան մէջ, չեն կրցած ճիշդ հասկնալ եւ դատել այնքան պարզ եւ հասարակ հոգեբաններուն համար իսկ այնքան ըմբռնելի վիճակ մը, մենք կը պահանջենք մանրադիւն քննութեան ենթարկել այդ հոգեբաններուն մասնագիտական կարողութիւնը եւ անոնց անձեռնմխ ըլլալը պարզելու պարագային դատական պատասխանատուութեան ենթարկել զանոնք՝ համաձայն քրէական օրէնսդրութիւն 181րդ յօդուածին, քանի որ գիտակցարար կեղծ եղբայրութիւններու յանդած են: Քրէական պատիժի ենթարկել նաեւ այն անձերը, որոնք պարտադրած կամ կաշառած են փորձագէտները:

Մենք կը պահանջենք հաստատել հանրային հսկողութիւն երկրին բոլոր հոգեբուական հիմնարկութիւններուն, յատկապէս Ներքին Նախարարութեան հսկողութեան տակ գտնուող հոգեբուականներու վրայ...

Հոգեբուութիւնը բժշկական եւ ոչ թէ պատժական քննադատին կը պատկանի: Պէտք է վերջ տալ այլախոհները այս պէս անձայն ասպարէզէն հեռացնելու համար հոգեբուականներուն մէջ արդելալ — փակելու միջոցառումին, իսկ այն բժիշկները, որոնք դիտակցարար ձեռնաժողով են եղած անմարդկային արարքներու, պէտք է դատի ենթարկուին՝ համաձայն միջնորդային եւ մեր երկրի օրէնքներուն:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՅՈՒՄԻ քաղկացած Երեմ հոգեբոյժներէ (անուն եւ վայրը չեն նշանակուած)

«ԵԱՌԱՋ»ի ԹԵՐԹՈՂԸ (209)



ԵՐԿՐՈՐԻ ՄԱՍ
ՕՎԻՏԻ ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Ձ.

— Սրտանց, պարոն, գոչեց Տիւրքմէն: Բայց ի՞նչ պէտք է ընել:
— Կ'երեւայ որ անվճար մնացած ստընտու մը երբ չի գիտեր թէ ինչ եղած են իրեն յանձնուած դիւցիւրին ծնողը, իրաւունք ունի ապաւստան զրկելու տղան, համայնքին քաղաքապետին գրաւոր եւ մանրամասն յայտարարութիւն մը ընելէ յետոյ...:
— Այո, պատասխանեց երիտասարդը: Քաղաքապետին կողմէ վաւերացուելէ յետոյ ստանուին ստորագրութիւնը, առ — մարի մը մէջ կ'արձանագրուի այդ ստորագրութիւնը ու արշիւը կը պահուի:

— Բացի անուններէ եւ թուականներէ, այդ տեղեկագիրը չի՞ բովանդակեր նաեւ տղուն հազուադէպին ցանկն ու նկարագրութիւնը:

— Այո, պարոն, ինչպէս նաեւ ձեռմակեղծներուն տառանիշերը եւ մասնաւոր նշանները, եթէ կան:

— Ի փոխարէն ձեզի մատուցած եւ մատուցանելիք ծառայութիւններու, պէտք է որ ինձի յանձնէք խնդրոյ առարկայ յայտարարութեան կամ տեղեկագրին պատճէնը:

— Պարոն, շատ անկանոն բան մըն է ձեռն ուղածը, բայց մէկ վայրկեան իսկ պիտի չվարանիմ, ձեզի երախտապարտ ըլլալու համար: Զեր ուղածը պիտի ընեն... Պէտք ունի կարգ մը ցուցմունքներու, որպէսզի առաջնորդուիմ իմ հետազոտութիւններու մէջ...:

— Կրցածիս չափ պիտի հայթայթեմ:

Տիւրքմէն յուշատետր մը ու մատիտ մը հանեց զբայնէն եւ սկսաւ գրելու պատրաստուիլ:

— Նախ յանձնումի թուականը, յարեց Տիւրքմէն:

— 1861էն 1862:

— Մօրը անո՞ւնը:

— Ժանն Գորթիէ:

Տիւրքմէն այնքան բուռն սարսուռ մը զգաց որ մատիտը ձեռքէն սահեցաւ ու սեղանին վրայ ինկաւ:

— Ի՞նչ ունիք, հարցուց Սուրիօ:

— Ժանն Գորթիէ՛, կրկնեց երիտա — սարդը: Բայց այդ կինը ցկեանս բանտարկութեան դատապարտուած է զոյրութեան, հրդեհի, սպանութեան համար... Քլեմմոնի բանտին փախած է, ու անոր դիմանիշերը հաղորդուած են դատարանին ու քաղաքապետարանին:

— Անիւարօրէն դատապարտուած անմեղ կին մըն է ան, պատասխանեց Օվիտ համոզկեր շեշտով մը: Այդ կինը կը սիրէի... անիկա մայր մըն է որ քսան տարիէի վեր Ստոււմէ կը խնդրէ իր դատարանը համարուելու շնորհ, մեռնելէ առաջ: Զեղի համար կարեւորութիւն չունի՞ միթէ այդ տարաբախտ կնոջ դատապարտութիւնը եւ բանտին փախուստը: Եթէ երբեք փախած չըլլար ան, ես ի՞նչ գործ ունէի ժուանի մէջ: Պիտի կրնայի՞ ձեռն պատիւը պահպանել, թիարանէն ազատել ձեզ, ձեռն ծեղ կեանքի վերջին օրերու հանդարտութիւնը ապահովել: Հետեւաբար իր աղջկը գտնելու եւ համարուելու եղանակութիւնը պարզեւնեցէ մօր մը:

— Պիտի ընեմ այդ բանը, պարոն: Նորէն կ'ըսեմ թէ պիտի չվարանիմ: Ե՞րբ պէտք ունիք տեղեկագրին:

— Կարելի եղածին չափ շուտ: — Վաղը պիտի տամ: Ո՞ր ժամուն կըրնամ ձեզի յանձնել այն փաստաթուղթը որուն պէտք ունիք:

— Հոս պիտի սպասեմ ձեզի, ժամը

տանըմէկին տոնները, ճաշելու համար ու խնդրոյ առարկայ փաստաթուղթին ի փոխարէն՝ հարկ եղած դուռնաւոր պիտի տամ, ձեր պարտքերը վճարելու համար: Կը խորհիմ որ յառաջիկային՝ այլեւս պիտի չտարբերեք իօջ տարիանքներէ...: Զեր սիրուհին գեղեցիկ էր գոնէ:

— Շատ գեղեցիկ էր չարաճճին: Թխա — գեղ ու շատ սեւաչուի, փոքր նշան մը այտին վրայ, ու անման հասակ մը: Ամանտա փարիզուհի մըն էր, հոս նորա — ձեռութեան վաճառատան մը մէջ պաշտօնեայ...

— Ամանտա՞, կրկնեց Սուրիօ, որուն մտքին մէջ յիշատակներ արթնցուց այդ անունը:

— Այո, պարոն, Ամանտա Ռէկամի...: Կարգը Օվիտի եկաւ, ընդոստ շար — ժում մը ընելու:

— Ա՛հ, ի՞նչ կ'ըսէք, ահա բան մը որ հետաքրքրական է, գոչեց Օվիտ:

— Ամանտան կը ճանչնա՞ր, հարցուց Տիւրքմէն:

— Այո, երիտասարդ բարեկամս, ու հիմա կը հասկնամ որ շատ հեռունները մղած է ձեզ: Ժուանի չի՞ գտնուիլ հիմա:

ԿԶԱՎԻԷ ՏԸ ՄՈՆԹԻՓԷՆ
(Շար.)

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Այլրի Տիկին Նշան Դարբինեան, զա — ւակներն ու թոռները կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի այս Կիրակի (Յունիս 24) առաւօտ, Փա—րիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին իրենց ամուսնոյն, հօր եւ մեծ—հօր՝

ՆՇԱՆ ԴԱՐԲԻՆԵԱՆԻ

մահուան երկրորդ տարելիցին առթիւ։

Ի գիտութիւն ողբացեալին յիշատակը յարգողներուն։

×

Այս առթիւ, Տիկին Դարբինեան կը նուիրէ 100 Փր. Իսիի Մշակոյթի Տան եւ 100 Փր. «Յառաջ»ի։

×

Կարպիս եւ Գրիգոր Սարաֆեան կը ծա—նուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի իրենց հօր՝

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍՍՐԱՖԵԱՆԻ

մահուան քառասունքին եւ մօր՝

ԵՂԻՍԱՖԵԹ ՍՍՐԱՖԵԱՆԻ

մահուան 10րդ տարելիցին ի յիշատակ։

Այս Կիրակի (Յունիս 24) առաւօտ Փա—րիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ մէջ։

Ի գիտութիւն ողբացեալներուն յիշա — տակը յարգողներուն։

×

Այս տխուր առթիւ, Տիկին Արսէնուհի Մկրտիչեան իր եղբոր՝ Յովհաննէս Սա—րաֆեանի յիշատակին 100 Փր. կը նուիրէ Շաւիլի եկեղեցւոյ, 50 Փր. Կապ. Սաշի Շաւիլի մասնաճիւղին եւ 50 Փր. «Յա—ռաջ»ի։

×

Այս Կիրակի 24 Յունիսին Լիոնի Ս. Յա—կոր եկեղեցւոյ մէջ, յաւարտ պատարա—գի, Ն. Ուզունեան ընտանիքը, Պր. Ժ. Աղբեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Արթիւր Օհաննէսեան եւ զաւակները, ձնկտրեան եւ Քէլէկեան ընտանիքները հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն

ՇԱՔԻ ԱԳՂԼԵԱՆԻ

(ծնեալ Ուզունեան)

յիշատակին։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Մարտէյի Մայր եկեղեցւոյ Կրօն. Ընկ. վարչութիւնը շնորհակալութեամբ ստա — ցած է եկեղեցւոյ պայծառութեան հա — մար հետեւեալ նուէրները.—

Տէր եւ Տիկին Խ. Շահում, Տէր եւ Տիկին Կարապետեան իրենց զաւակներու ամուսնութեան առիթով 100ական։ Տէր եւ Տիկին Ե. Ահարոնեան, Տէր եւ Տիկին Գ. Ահարոնեան իրենց զաւակին եւ թոռան Անահիտի մկրտութեան ուրախ առիթով 150։ Տէր եւ Տիկին Տէր—Գէորգեան իրենց թոռան Իգալէլի մկրտութեան առթիւ 100, Տիկիններ Շ. Արապաճեան եւ Վ. Գրիգորեան սրահի շինութեան ֆոնտին 500ական Փր.։

Իւղազինի.— Տէր եւ Տիկին Ա. Զըր—բաշեան 200, Օրիորդներ Ճէլալեան եւ Ի. Պօղոսեան եւ Պր. Յ. Յակոբեան 100—ական։ Տիկիններ Ա. Էօքսիւզեան, Մ. Էօքսիւզեան, Ա. Ալեանաքեան, Գ. Թո—րոսեան, Վ. Նորհատեան, Տէր եւ Տիկին Գալփաքճեան, Տէր եւ Տիկին Ա. Հօլօ — փիկեան, Տէր եւ Տիկին Ղ. Ազնաւորեան, Տէր եւ Տիկին Ա. Պապայեան, Պ. Պ. Շ. Տէօքմէճեան եւ Թովմասեան 50ական։ Տիկին Ճնտիկեան Ռափայէլեան, Պ. Ա. Տէր—Պորէնեան 30ական։ Պ. Պ. Ա. Ա—րտութեան, Մ. Շփոտեան, Գ. Համբար — ձումեան, Կորտանեան, Տիկիններ Ա. Գայաքճեան, Ա. Նիքոթեան, Ա. Շա — հում, Ս. Զօպոյեան, Է. Միխսեան, Մա—նուկեան եւ Օր. Մ. Եազըճեան 20ական։

×

Վալանսի Հայ Առաք. Ս. Գրիգոր Լու—սաւորիչ եկեղեցւոյ Կրօնական Ընկերակ—ցութիւնը շնորհակալութեամբ ստացած է 100 Փր. Պ. Յովիկ Եղիազարեանէ եկե — ղեցւոյ պայծառութեան եւ Վալանսի Դա—ւիթեան ղպրոցին համար։

ՓԱՐԻԶԻ

ՀԱՅ ՄՇԱԿՈՑԹԻ ՏԱՆ

Օժանդակ անդամակցութեան հաւար Պր. Տիգրան Պալեան 10 Փր. Տիկ. Կիւլէնիա Զպուքճեան 10 Փր. Տիկ. Մատլէն Պարոնեան 10 Փր. Տիկ. Աննիկ Պաղբճեան 10 Փր.

ՓՈԽԱՆ ԾԱՆԿԵՊԱԱԿԻ

Տիկին Եւա Թէմինեանի մահուան առ—թիւ, Տէր եւ Տիկին Պարսամ Թէրգեան կը նուիրեն Աղբատարնամին 50 Փր., 50 Կապոյտ խաչի օգտօրոյթեան կայանին, 50 Կարմիր Սաշի օգտօրոյթեան կա—յանին (ստանալ «Յառաջ»էն) եւ 50 Փր. «Յառաջ»ի։

ՊԱՐԳԵԻԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Տեղի կ'ունենայ Շաբաթ Յունիս 23ին

— Առաւօտեան ժամը 11ին հանդիսա—ւոր պատարագ վարժարանին Մատրան մէջ, աշակերտներու երգեցողութեամբ։

— Ժամը 13ին ընտանեկան ճաշ։

— Ժամը 15ին հանդէս պարգեւարաչ — խութիւն, երգ, արտասանութիւններ, հաշուետուութիւն։

— Ճաշարին 25 Փրանք

Հեռաձայնել 027-18-28

ԼԻՈՆ Ա. ՅԱԿՈԲ

Եկեղեցւոյ օծման

10րդ տարեդարձին առթիւ

Կիրակի, Յունիս 24,

Լիոնի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, հան—դիսաւոր պատարագ, զոր կը մատուցանէ ՍԵՐՈՎԷԻ ԱՐԲ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

(Հայրապ. Պատուիրակ Եւրոպայի Հայոց)

Պատարագէն հոգ գինեձօն եկեղեցւոյս նորոգութեամբ սրահին մէջ, որու մուտքը ազատ է։ Իսկ ժամը 1.30ին, ճաշ Թիլիօլ ճաշարանին մէջ, 146 Ալբիւ Դալ տը Կոլ, Թասսէն Տըմի Լիւն։ Ճաշագին անձ—գումը 60 Փր.։

Արձանագրութեանց համար դիմել ա—մէնէն ուշ մինչեւ Յունիս 21 Ազգ Տան գրասենեակը. հեռաձայն 78 — 60-47-18 եւ կամ վարչութեան անդամներուն մօտ։

×

Կիրակի Յունիս մէկին, Սէն Մօրիսի ծանօթ դաշտին վրայ, ղպրոցական դաշ—տահանդէս առաւօտեան ժամը 10էն մին—չեւ ուշ երեկոյ։

Գեղարուեստական բաժին վարժարանի աշակերտութեան կողմէ եւ վիճակահա — նութիւն։ Արեւելեան համադամ կերա — կուրներ։

Անձրեւի պարագային խնջոյքի ձեւով տեղի կ'ունենայ, նոյն օրը, եկեղեցւոյս նորոգութեամբ սրահին մէջ, Կ. յետոյ ժա—մը 3էն սկսեալ։

ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍ

ԿՐԸՆՈՊԼԻ ՄԷՋ

Կազմակերպուած Կապ. Սաշի մասնա — ճիւղին կողմէ՝ Սէսինէի ճամբուն վրայ, Շաթօ տը Պօռլեառի գեղատեսիլ պուրա—կին՝ պաղ ջուրին մօտ։

Գեղարուեստական խնամուած բաժին ղպրոցի աշակերտութեան եւ կարող ու—ժերու կողմէ։ Բարձրախօս եւ հաճելի անակնկալներ։

Ճոխ պիւֆէ, պատրաստուած խաչու — հիւներու կողմէ։

Յունիս 24 Կիրակի ամբողջ օրը։

Անձրեւի պարագային կը յետաձգուի Յունիս մէկի Կիրակին։

ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍ

Նախաձեռնութեամբ Կապ. Սաշի Սեւրանի մասնաճիւղին

Կիրակի Յունիս 24, ժամը 11էն սկսեալ

10, Rue Lucien Sportice, SEVRAN
(Parc des Sœurs, face à la Gare de Sevrans)

Օթոպիւս 147 Ա Էլլիզ տը Փանթէնէն

Կամ Կառախումբ Կառ տիւ Նոռէն, Իջնել Լիվրի—Սեւրան

Պիւֆէ — Շամփուրով խորոված — Խաղեր — մրցումներ — Անակնկալներ

Հ. Յ. Գ.

Լիոն.— Հ. Յ. Գ. Վարանդեան կոմի—տէն ընկերական ընդհ. Ժողովի կը հրա—ւիրէ Լիոնի եւ Ս. Մօրիսի իր ընկերները, այս Հինդշարթի, 21 Յունիս ժամը 21ին, սովորական հաւաքատեղին։ Ընկերներու ներկայութիւնը պարտաւորէ է։

ՓԱՐԻԶԻ Ա. ՅՈՎՀ. ՄԱՐՏԻՉ

Այս Կիրակի, Յունիս 24, տօն է Կա—թուղիկէ Ս. Էլմիածնի։

Ժամը 10ին Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ Մայր եկեղեցւոյ մէջ կը մատուցուի բաղ—մաձայն պատարագ եւ կը տրուի աւուր պատշաճի քարոզ։ Պատարագի ընթաց — քին կը կատարուի մասնաւոր մաղթանք Ս. Էլմիածնի։

Կը հրաւիրուի Ժողովուրդը մասնակ — ցելու պատարագին եւ աղօթելու Հա — յատանեայց Առաք. եկեղեցւոյ անսա — սանութեան համար։

ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍ

ՌՈՄԱՆԻ ՄԷՋ

Կազմակերպուած Ռոմանի Հայերու Բարեկամական Միութեան կողմէ, Կիրա—կի Յունիս 24 ամբողջ օրը՝ ՄՕՓԱ։

ԿԸ ՓՆՏՈՒԻ

Վարդուշ Սրապիոնի Ամբլանեան (Գրի—գորեան) որ Երեւան կը բնակի, կը փնտռէ իր եղբայրը Գրիգոր Սրապիոնի Գրիգորեան, ծնած 1913ին Հայաստան, Էլմիածնի Աղջաղալ գիւղը։ Մինչեւ 1937 ուսուցիչ եղած է եւ կորսուած է Սոչիէն 1937ին։

Իրմէ լուր ունեցողներէն կը խնդրուի գրել՝

MOURADIAN

3, Rue Jules Guesde

92240 MALAKOFF — FRANCE

ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍ

ՊՈԼԵՆԻ ՄԷՋ

Ի նպաստ Պոլէնի հայկ. դպրոցին Կազմակերպուած Պոլէնի Ֆրանքե — հայկական Մշակութային Միութեան կող—մէ, այս Կիրակի, Յունիս 24, ժամը 10էն մինչեւ իրիկուն

Centre Aéré de St. Ferréol

Route de Saint-Restitut — BOLLENE

Կը մասնակցի եւ մթնոլորտը կ'ոգեւորէ Վալանսի Կոմիկ նուագախումբը։

Ճոխ պիւֆէ — չամփուրով խորոված եւն.

ԱՂՔԱՏԱԽՆԱՄԻ
ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍԸ

ԿԻՐԱԿԻ, ՅՈՒԼԻՍ 1 ԺԱՄԸ 10-22

ՄՈՆՄՈՐԱՆՍԻԻ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՏԱՆ

ԴԱՐԱՍՏԱՆԻՆ ՄԷՋ, 44-50 Ալբիւ Դալ տը Կոլ, Մոմետրանսի

Դուռները կը բացուին ժամը 10ին եւ կը տեւէ մինչեւ ժամը 22

Կէսօրին կարելի է ճաշել ճաշացուցակին համաձայն։ Կարելի է նախօրօք սեղան—ները ապահովել հեռաձայնելով՝ Մոմետրանսի 964-20-67 եւ կամ Ալբատարնամի կեդրոնը 878-02-99

Աւանդակաւ շամփուրով խորոված, թէ՛ կէսօրին եւ թէ՛ իրիկունը։ Անջատ առատ ամէն տեսակ ուտեստեղէն եւ ըմպելիներ Բացառիկ ժամանցի օր մը, նուագ, երգ եւ անակնկալներ։ — Գեղարուեստականբաժնին իրենց մասնակցութիւնը կը բերեն ՆԱՅԻՐԻ եւ ՄԻՆԻ—ՍՕՍԻ պարախումբերը, Տիկին ԱԼԹՈՒՆԵԱՆ իր երգերով Օր. Անահիտ ՍՎԱՃՅԱՆ ձեռնադաշնակով

ԹՈՄՊՈԼԱ, արժէքաւոր առարկաներով

Մուտք 5 Փր., ուսանողներու եւ Խրախանքու 2 Փր.

Անձրեւի պարագային, ապահովութիւններ ձեռք առնուած են։

ԾԱՆՕԹ.— Մոմետրանսի երթալու համար շողեկառք առնել Կառ տիւ Նոռէն եւ Իջնել Անկէն (Իւրաքանչիւր քառօր ժամուն, անցնել կամըջակը եւ թիւ 6 օթոպիւսով Իջնել Կրոյէի կանգը (առէ)։

ԿԱՐԵԻՐ.— Փափաքելի է որ ամէն ոք տեղւոյն վրայ ծախսէ, կը յանձնա—րարուի ուտելիք չբերել։

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ

ՄՐՅԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ ԵՒ ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍ

Հովանաւորութեամբ

ՍԵՐՈՎԷԻ ԱՐԲ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

24 Յունիս Կիրակի օր, ժամը 15ին

Հայկական եւ եւրոպական պարեր

Երգ՝ Պր. ՊԵՏԻԿԵԱՆԷ, ընկերակցութեամբ իր նուագախումբին

Հաղորդակցութեան միջոցներ.— Էլլիզտը Փանթէնէն առնել 147 թիւ օթոպիւսը։

ՕՐՈՒՆ ԽՈՍՐԸ
ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԸ
ՍՓԻՒՌԻ ՄԷՉ

Հայրենիք եւ սփիւռք իրարմէ անկախ չունենալու են հայ մշակույթը տարածելու անհրաժեշտութեան, իւրաքանչիւրը իր հասկացողութեամբ:

Երբ Հայաստանի Հանրապետութիւնը չունէինք, Արեւմտահայերէն մշակույթի վառարանն էր Պոլիս, Արեւելահայերէնը՝ Թիֆլիս:

Երեւան փոխարինեց Թիֆլիսը: Պոլիս Զինադադարի շրջանին պահ մը վերաբարձրեց աշխարհամարտին շիջած ջահը: Յետոյ տեղը տուաւ Փարիզին:

1922ի նոր փոթորիկը Լոյս-Քաղաքն էր նետած Հայաստանէն — Պարսկաստանի մարզով — Պոլսէն ու Կիլիկիայէն փախըտական մտաւորականներն ու հանրային գործիչները:

Երկու աշխարհամարտերու միջանկեւտարին երկուսն փայլուն շրջան մը բուրբեց Փարիզ, ուր երիտասարդ նոր տաղանդներ ծիր արձակեցին ու զարգացման, մասամբ դարձանելով Մեծ Եղեռնի բացած ահաւոր վէրքերը: Վերապրող երէցներն ալ իրենց յուշերով կորուստէ փրկեցին մեր մօտիկ անցեալի պատմական դրուագները, որոնք մեծ մասամբ լոյս տեսան Պոսթըմի Հայրենիք ամսագրին մէջ:

Երկրորդ աշխարհամարտը մահացու հարուած տուաւ հայկական Փարիզին, որ շեղեցաւ հետզհետէ: Նոյն բախտը վիճակեցաւ Պոսթըմի: Լոյսը Արեւմուտքէն փոխադրուեցաւ Արեւելք: Պէյրութ — կարճ շրջան մը նաեւ Գահիրէ — հրահրեցին առկայծ կրակը, Թոյլ չտալով որ անկախ մարի:

Իրանանի մայրաքաղաքը տարիներէ ի վեր փոխարինած է — համեմատու — թիւները պահելով — Պոլիսը, Թիֆլիսը, Փարիզն ու Պոսթըմը:

Վերջին տարիներուն Թեհրանն ալ դուրսէն փորձեր կը կատարէ, ջահը անմար պահելու առնչութեամբ:

Պոլիս իր կարգին կը ջանայ բոլորովին մոռնել չտալ իր փառաւոր անցեալը: Սակայն տարիներն ու տեղական պայ — մանները իրենց ջլատիչ գրոշմը կը դնեն փորձուած ճիգերուն վրայ:

Տպագրական մեքենան չէ դադարած բանէլէ արտասահմանի հայկական դա — ղուլթներու դիւանոր քաղաքներուն մէջ, ուր լոյս կը տեսնեն օրաթերթերն ու պարբերականները: Կը տպուին նաեւ գրքեր, մասամբ մեկենասներու նիւթական աջակցութեամբ:

Պատնէշի վրայ են միշտ վեհեմտիկ ու վիշնաւ, — մասամբ նաեւ Երուսաղէմ ու Անթիքիաս, ուր լոյս կ'ընծայուին գրքեր ու պարբերաթերթեր:

Սակայն տխուր է կացութիւնը դրքի հրատարակելի վրայ:

Տպագրած գրքերը, նոյնիսկ անոնք որ կը հրատարակուին Մերձաւոր Արեւելքի մէջ, կը մնան անվաճառ:

Հալաւակ այն փաստին որ մանկա — պարտեղէն սկսեալ մինչեւ երկրորդական վարժարաններն ու ճեմարանները բազմա — մասին ազգային դպրոցներ կան Լիբանանի, Սուրիոյ ու Թուրքիոյ մէջ, շատ քիչ ընթերցող ունին հայերէն գրքերը:

Տարիներ առաջ Պէյրութի հայ գրա — վաճառները կը գանգատէին գործերու

ՕՐՈՒՆ ԴԵՊԲԵՐԸ
ԾԱՆՐ ՄԻՋԱԴԵՊԵՐ
ՓԵՐՈՆԻ ՎԵՐԱԴԱՌՁԻՆ
ԱՌԹԻԻ

ՄԵՌԵԱՆՆԵՐ ԵՒ ՎԻՐԱՌՈՐՆԵՐ

Շուրջ երկու միլիոն կը նկատուի այն բազմութիւնը, որ խոնարհ էր Պուէնտո — Ալքէսի էջեզա օգակայանը եւ չուրջը դե — մաւորելու համար Փերոնը, որ 18 տարուան աքսորէ մը ետք կը վերադառնար իր հայրենիքը: Զինքը փոխադրող օղա — նաւը ստիպուեցաւ սակայն փոխել իր ճամբան եւ իջնել Մորոնի զինուորական օգակայանը: Այս «չեզուր» կատարուե — ցաւ տրուած ըլլալով որ ծանր բախում — ներ ծայր տուած էին էջեզայի օգակա — յանին չուրջ եւ հրացանաձգութիւն մը տեղի ունեցած էր նոյնիսկ հոն ուրկէ Փերոն պիտի խօսէր իր ժողովուրդին: Կ'ըսուի թէ բազմութիւն մեծաւոր կան եւ չուրջ 150 վիրաւոր: Մայրաքաղաքին հիւանդանոցները բերնէ բերան լեցուած են: Բախումները իրարու դէմ հանած էին Զօր. Փերոնի կողմնակիցները եւ մարք — սիստ երիտասարդները: Փերոնական ի — դական ճիւղի պատասխանատու մը ի դուր փորձած է հանդարտեցնել ցուցա — բարները բարձրախօսերէն պոռալով՝ «Բոլորը Արժանութիւններ են: Մեր թըշ — նամիները մենաշնորհները եւ աշխարհա — կալութիւնն են»:

Այս բախումները պատճառ եղած են նաեւ որ նախագահ Քամիւրա, օգնաւէն իջած ատեն (Կ'ընկերանար Փերոնի, զոր դացած էր առնելու Մարտիոն) ջնջէ պաշտօնական արարողութիւնը որ նա — խտնուած էր ի պատիւ Փերոնի:

Այս մթնոլորտը ցոյց կուտայ ծերունի Փերոնի (78 տարեկան է) որ չատ բան չէ լուծուած եւ ղեկաւորութիւնները մեծ են:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԳԵՐՄԱՆԻՈՅ եւ Զելսո — սլովաքիոյ Արտաքին նախարարները Պոնի մէջ վերջնապէս վաւերացուցին երկու երկիրներու միջեւ կնքուած համաձայ — նագիրը: Պրանտ Փրակա պիտի երթայ հաւանաբար Սեպտեմբերին: Համաձայ — նագիրը, հինգ գլուխներէ բաղկացած, կը շնորհէ մանաւանդ որ երկու երկիրները կ'ուզեն վերջ դնել զօրախտ անցեալի մը: ՔէՄՓ ՏէՅՎԻՏԻ մէջ Բրեժնեւ եւ Նիք — սըն երկար խօսակցութիւններ կ'ունենան:

Կացութեան: Ներկայիս տաքնապը աւելի ծանրացած պէտք է ըլլայ:

Պոլսոյ վերջին գրաւաճառը մեծաւ քանի մը ամիս առաջ: Գործը չարունա — կող չկայ:

Գրասէր ժողովուրդի համբաւ ունինք: Սակայն հայերէն գիրքը ողբալի վիճակ կը ներկայացնէ այսօր: Հեղինակները յուսահատ — չեն համարձակիր տպելու իրենց ստեղծագործութիւնները:

Բոլորովին տարբեր է կացութիւնը հայ — րենիքի մէջ, ուր հրատարակուած գիր — քերը քանի մը շարքից կը սպառին, ինչպէս կը հաւատեն իրազեկները:

Ուրախալի երեւոյթ:

ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

ԵՐԵՒԱՆ <=> ՓԱՐԻԶ
Հ Ե Ռ Ա Տ Ի Պ

ԵՐԵՒԱՆ (Արմէնիքէս, Յունիս 18-19)

ՆՈՐ ՄՇԱԿԵԼԻ ՀՈՂԵՐ

Գորիսի շրջանի մէջ տարածուած հա — ցարաւոր հեկտար հողերը մօտ ապագա — յին պիտի դառնան հացահատիկի բերքա — ռատ դաշտեր, խաղողի եւ պտուղներու աշխարհ: Հողը նոր կեանք պիտի ստա — նայ Որոտանի ոռոգման ցանցին հաս — տաման շնորհիւ: Երբ ամբողջ ցանցը հաստատուի, 6400 հեկտար հող ոռոգելի պիտի դառնայ: Ասիկա խթան պիտի հան — դիսանայ Զանգեզուրի երկրագործու — թեան զարգացումին:

Այժմ աշխատանք կը կատարուի ոռոգ —

նորոգողային եւ ամբերիկեան բանքերները մամուլի ասուլիսի մը ընթացքին նկա — տել տուին, թէ կը յուսան ի վիճակի ըլ — լալ հաղորդելու հիւլէական համաձայ — նագիրներու կնքումի լուրը: Լաւատեղ — եակ շրջանակներու տեսակէտով երկուս — տեք պիտի համաձայնին զարկ տալու հիւլէական զէնքերու սահմանափակումի բանակցութիւններուն, ինչպէս նաեւ հա — մագործակցութիւն հաստատելու հիւլէա — կան ուժի խաղաղ օգտագործման համար: Քիսինկէր տեսակցեցաւ Ուաշինկթընի չին պատերազմութեան պետին հետ: Հաւանական է, որ Քիսինկէր տեղեկու — թիւններ տուած ըլլայ Բրեժնեւ — Նիքսըն բանակցութիւններու մասին:

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ անկախ Վրասիի թեր — թին տնօրէնը արտօնութիւն չունի երկ — րէն հեռանալու: Անասթասիատէս սերտ կապեր ունի Կոնստանդին թագաւորին հետ ու նաեւ նախկին վարչապետ՝ Քա — րամանիսի:

ՆԱՍՏԱՆԻ ՊՈՒՐԿԻՊԱ ժընեւի մէջ անդադաւանալով Մերձ. Արեւելքի հար — ցին յայտարարեց, թէ «արդար եւ մնա — յուն խաղաղութեան մը հաստատման հա — մար պէտք է նկատի առնուի արաբ ժողո — վուրդին իրաւունքը՝ գրաւման տակ չապ — րելու եւ չնուաստանալու, պաղեստինցի ժողովուրդին իրաւունքը՝ չկորսնցնելու իր հայրենիքը, ինչպէս նաեւ Իսրայէլա — ցիներունը՝ չընաշնջուելու եւ ծովը թափուելու»:

Մ. ՆԱՆՏԱՆԻՆԵՐՈՒ Արտ. փոխ — նախա — բարը՝ Զ. Պոլ ամբերիկեան Գոնկէսին մէջ յայտարարեց, թէ Մոսկուա միշտ կը ձգտի քաղաքական տիրապետութիւն հաստատել Արեւմտ. Եւրոպայի վրայ եւ, հետեւաբար, Մ. Նահանգները պէտք է հեռացնեն, նոյնիսկ մասամբ, իրենց ուժերը Եւրոպայէն:

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԴԻՔԻ քննութիւն մը՝ կատարուած Իֆալի կողմէ, ցոյց կու — տայ, թէ Յունիս 29էն Յունիս մէկի միջեւ 200-000 կառքեր ճամբայ պիտի ելլեն Փարիզէն: Ասոնց վրայ պէտք է աւելցնել տասնեակ հազարաւոր կառքերը, որոնք չարաթափելու են կը մեկնին Փարիզէն:

ՊՐԱՅԻԼԻ այժմու նախագահը՝ Մետի — չի, որ Մահմանադրութեան օրէնքով ի — բաւուած չունի երկրորդ անգամ իր թեկ — նածութիւնը դնելու, Զօր. էրնէսթօ Կէյ — դէլը նշանակեց իրենց յաջորդ: Նոր ըն — տրութիւնները տեղի կ'ունենան Յունուար 15ին: Պրազիլ զինուորական իշխանու — թեան ներքեւ կը գտնուի:

ՔԱՆԱՍՏԱՆԻ եւ Հնդկաստանի վար — չապետները՝ Թրուտո եւ Տիկին Կանտի, Օթաուայի մէջ երկու ժամուան տեսակ — ցութիւն մը ունեցան:

ման ներքին ցանցերը շինելու եւ հողը քարերէ մաքրելու ուղղութեամբ: Տարա — ծութեան մեծ մասը պիտի յատկացուի հացահատիկի, բանջարեղէնի, իսկ 2200 հեկտար ալ պիտի յատկացուի այգիներու մշակումին:

Գիւղատնտեսութեան նախարարութեան ծրագրով հողերու մշակումի աշխատան — քը պիտի սկսի յառաջիկայ տարի եւ դոր — ծը պիտի աւարտի 1978ին:

«ԱՐԱՐԱՍ» ՊԱՐՏՈՒԱՅ

Երեք յաջորդական յաղթանակներ ար — ձանագրելէ ետք, «Արարատ» Յունիս 17ին պարտութեան դառնութիւնը ճշակած է Թիֆլիսի մէջ, տեղւոյն «Դինամօ»ին հետ իր կատարած մրցումին ընթացքին:

Պաղի առաջին իսկ վարկեանէն դաշ — տի տէրը դարձած են Թիֆլիսցիները, ո — րոնք բուռն յարձակումներ դործած են: «Արարատ»ի բերդապահը քառորդ ժամ — ուան մէջ չորս անգամ դնակը յաջողած է բռնել: Բերդապահն էր Ալեքսան Ար — րահանեան:

Ամբողջ իսաղի ընթացքին կողմերէն ոչ մէկը յաջողած է կոլ նշանակել: Որով կիրարկութեան դրուած է 11 մեթրէն հարուածելու օրէնքը: Թիֆլիսցիները այս ձեւով չորս, իսկ Երեւանցիները երեք կոլ արձանագրած են:

Հալաւակ իր կրած պարտութեան, «Ա — րարատ» կը շարունակէ առաջին դերքի վրայ մնալ:

«Արարատ» Յունիս 24ին պիտի մրցի Դոնի Ռոստովի բանակի խումբին հետ: Մրցումը տեղի պիտի ունենայ Դոնի Ռոս — տովի մէջ:

«ԵՐԳՈՒՄ Է ԾԱՌԱՆ ԱԶՆԱՌՈՒՐԸ»

Երեւանի պատկերասփիւռի արուեստ — տանոցը Շառլ Աղնաւուրդի կեանքը պատ — կերացնող ժապաւէն մը պատրաստած է, բաղկացած երեք մասէ: Ժապաւէնին խո — րագիրն է՝ «Երգում է Շառլ Աղնաւուրդը»: Բեմադիրն է Ա. Գասպարեան: Պոստակն է Ս. Արարահանեան:

ՇԷՅՔՍՓԻՐԻ ՆՈՒՒՐՈՒՄԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Արուեստագէտներու Տան մէջ, Երեւան, դուստրուած է Հայաստանի Գիտութիւն — ներու Ակադեմիայի արուեստի հիմնար — կութեան Շէյքսպիրեան իրաւական հայկա — կան կեդրոնի հիմնադրող ժողովը, որուն նպատակն է եղած շէյքսպիրադիտու — թեան ընդհանուր հարցերէն զատ անդրա — դառնալ նաեւ «Շէյքսպիրեան աւանդոյթ — ները հայ իրականութեան մէջ» հարցին տարբեր երեսներուն:

Իր բացման խօսքին մէջ, հիմնարկու — թեան տնօրէնը՝ Փրոֆ. Ռուբին Զարեան յատկապէս խօսած է այն կապերուն մա — սին, որոնք հաստատուած են արտասահ — մանի շէյքսպիրեան կեդրոններու եւ ի — րենց հիմնարկութեան միջեւ:

Առաջին զեկուցարարը խօսած է Շէյ — քսպիրի գործերու առաջին հատորին հը — րատարակութեան մասին: Մեծ թաւտե — րագիրին առաջին հաւաքածոն լոյս տե — սած է 1623ին, անոր մահէն եօթը տարի ետք:

Ռուզան Մարգունի անդրադարձած է «Անտոնիոս եւ Կլոպատար» թատեր — դուրեան այն թարգմանութիւններուն, զորս կատարած են Յովհաննէս Մանս — եան, Վահան Թոթովեցի, Պաշիկ Դաշ — տեցի եւ Գաւնիկ Ֆնտեկեան (Անգլիա):

Անկախ Գրիգորեանի զեկուցումը բո — վանդակած է հատուած մը Վ. Փափաղ — եանի գրական եւ բեմական Համլէթին նուիրուած ընդարձակ աշխատութեան: Հոն կը բնութագրուի դերասանին մեկ — նաբանութիւնը Համլէթի տիպարին:

ԱԿՆԱՐԿՆԵՐ

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

(1899-1938) (*)

— 0 —

Եթե անասունը չորս տարի առաջ, 1899 Յունիս 13ին Ջանգեղուրի մէջ (Գորիս) ծնաւ Ակսել Բակունց, խորհրդային կարգերու տակ հայ գրողի իր խառնուածքին, արուեստագէտ արձակագրի տաղանդին, հայրենապաշտ մարդու ապրումներուն եւ դադափարական համոզումներուն անհա՝ հանջ սպասարկու գրագէտը, որ հազիւ 39 տարու, դարձաւ առաջին գոհերէն մէկը 1936-1937 տարիներու բուլեւիկ - եան սարսափներուն, երբ Սթալինեան - Բերիական հալածանքներուն հետեան - քով չքայաւ յեղակարծօրէն, Թոթովենցի ու Չարենցի նման տիրական զէմքերու հետ, իրեւ «ազգայնական - սրոցկիստ - դաշնակցական»...

Նախաիրութիւնը ստացած էր ծնընդավայրի վարժարանին ապա Էջմիածնայ Գէորգեան ձեմարանին մէջ, որուն ընթացքը աւարտած է 1917ին:

Գրական նախաիրոճերը տեղ գտած են «Մարտիկոյ» ի մէջ, 1924էն սկսեալ, երբ համայնավար յեղափոխութիւնը լեւնինեան իր չըջանը բոլորած էր արդէն ու Հայաստանի մէջ գրականութիւնը կոչուած էր դառնալու «ժամանակին շուն - չը», — արտայայտութիւնը շինարարական եւ կառուցողական այն հեքին՝ որուն լծուած էր խորհրդային իշխանութիւնը, բայց մանաւանդ գովերգութիւնն ու փառաբանանքը օրուան կարգերուն՝ որոնց կ'ենթարկուէր հայ մտաւորակա - նութիւնը, իր կամքէն անկախ:

1932-1936 քառամեակի խորհրդահայ տարեգրութեանց ծանօթ ոեւէ մարդու համար դժուար չէ տեսնել ստեղծագործական աշխատանքի մարդկերուն մէջ ի գօրու իմացական բռնացումի այն փաստը, որ ի գործ կը դրուէր համայնավար ղեկավարութեան կողմէ, սանձելու համար անհատական ապրումներու ամէն ազատութիւն եւ ազգային ու հայրենասիրական ամէն տրամադրութեան մէջ տեսնելու ժխտումը խորհրդային իրականութեան, բուլեւիկեան բարքերու եւ «խտերնացիոնալիստական» ձգտում - ներու:

Արդարեւ, յաջորդական այդ չորս տարիներուն, Մահարիի, Թոթովենցի եւ Չարենցի հետ՝ Ակսել Բակունց եւս թիրախ դարձած է միշտ Հայաստանի եւ Համամիութենական համայնավար դեմակարողութիւններու տեսական հարածանքին, ամբաստանութեանց, հրապարակային մեղադրանքներուն ու դադրելի վերադրումներուն՝ իրեւ «նացիոնալիստական տեմդեմցի արտայայտող» գրա - գէտի, «հայկական նացիոնալիզմի դիրք

եքին կառչող» արձակագրի, եւ ի՛ վերջոյ «հակայեղափոխական - դաւաճանական բանդայի գործակից տրոցկիստ-դաշնակցական»ի...:

Երեւանի «Գրական Թերթ»ի 1937 Ապրիլ 23ի եւ «խորհրդային Հայաստան» օրաթերթի 1937 Յունիս 9ի թիւերուն մէջ, ուր տեղ գտած են Հայաստանի Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչ Ա. Ամատունիի պատմական ամբաստանագիրները «հակայեղափոխական, տրոցկիստ - դաշնակցական, նացիոնալիստական եւ սպեցիֆիկեան տարբերի մասին», Ակսել Բակունց կը խարանուի իրեւ «վնասարար», «հակախորհրդային շուլիմիստա - կան տարբերի մաս կազմող ինտելի - գենդ», «երկերեսանիմերի այն խմբից, որոնք վայելում էին խանգեանի պաշտպանութիւնը, պահանջում էին որպէսզի կիմն ցուցադրի դաշնակ աւանտիւրիստների յարձակումն Ոսումեան Բանկի վրայ, առաջարկում էին կիմնակար պատրաստի հակայեղափոխական դաշնակ խմբապետ Անդրանիկի մասին»:

Գլխաւոր բոլոր գործերուն մէջ (վի - պակ, պատմութեաճ, արձակ էջեր) Բա - կունց կը ձգտի Հայուն ոգեպաշտութիւնը արտայայտել իր պատկերացումներուն, խօսակցութեանց եւ տիպարներուն ճամբով: Հոգին սէրը, հայրենասիրութիւնը, անանդութեանց հանդէպ մեր ժողովուրդին երկիւղած յարգանքը հիմնական տարբերն են իր ստեղծագործութեանց: Խառնուածքով բանաստեղծ, խորապէս ծանօթ՝ հայ գեղջուկի կեանքին, պատմելու արտակարգ չնորհով եւ ծաւալումի ընդունակ, խորհրդահայ սերունդի ամէնէն տիրական զէմքերէն մէկը եղաւ:


Իր վաստակին մաս կը կազմեն «Յնվ - նաքան Մարչ» երգիծալէպը, «Կարմրա - քար» վէպը (անաւարտ), «Մքնաճար», «Սպիտակ ձիւն» եւ «Սեւ ցելեքի սերմնացանք» անուն պատմութեանց հատո - բիկները՝ որոնցմէ վերջինը, իր գլուխ գործոցը, պատճառ դարձաւ հաւատա - քննական ծանր հալածանքներու եւ իր - բեւ «դաշնակցական»ի ամբաստանու - թեանց:

Մ. Թ.

(*) Մահուան քուակամը ստոյգ չէ: Ձերբակալութիւնը 1937ի վերջերուն գու - գաղիպած պէտք է ըլլայ: Չարենցի, Թո - քովենցի, Մահարիի եւ ուրիշներու հետ բանտարկուելէ ետք՝ շշուկ չլսուեցաւ իր ֆակտագրի մասին: Եւ ուշ միայն պարզուեցաւ որ իր ազատութեան հետ նաեւ կեանքը գտն է տուած Բերիական գաղանութեանց:

ԶՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԾ ԶԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ԶԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ



Ա. ՄԱՍ

Կ Ի Ր Ա Կ Ի Մ Կ Ի Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԴԱՒԱՃԱՆ ՎԱՀԷ ԻՀՍԱՆԻ ԱՀԱՐԵԿՈՒՄԸ

Յանկարծ նկատեցի որ էջրէֆ կը մտնէ թաքստոցին սենեակը: Հետեւեցայ իրեն: Սենեակին մէջտեղը կեցած, աչքերը պատերուն, կը մտմտար եւ կը նայէր ճիւղ այն պատին, որու ետեւն էր տղոց թաքստոցը: Սիրտս արագօրէն կը տրոփէր: Լաւ որ էջրէֆ այդ պահուն ինծի չէր նայեր. որքան ալ պաղարին ըլլայի, այդ միջոցին այլալիւծ էի եւ կրնար կասկածիլ: Որսին հոտը առած բարակի պէս,

բնազդաբար կը զգար թէ այդ սենեակին մէջ բան մը կար:

Իր ուղարկութիւնը ցրուելու համար ուրիշ հնարք չգտայ, եթէ ոչ վերցնել սենեակին մէկ անկիւնը մնացող խոշոր սնտուկը եւ գետին ձգել: Յաղոցեայ նըպատակին մէջ: Կէս մը սարսափած պայթիւնի նմանող աղմուկէն, էջրէֆ դարձաւ ինծի եւ բացատրութիւն պահանջեց:

— Ախ, սա անպիտան սնտուկը. հազար անգամ ըսեք եմ որ վերցնեն այստեղէն, որու կ'ընես... Երկրորդ անգամն է սա... քիչ մնաց ոտքը կոտրէր...:

Կաղալու պէս ըրի եւ ատելութեամբ սնտուկին կը նայէի: Չեմ գիտեր էջրէֆ ինչ չափով կը հետաքրքրուէր ոտքիս ցաւով, հետացաւ պատէն, եկաւ քովս, սնտուկին նայեցաւ եւ սենեակէն դուրս եկաւ: Կազն ի կազ հետեւեցայ իրեն, ցաւի արտայայտութիւններով:

Ճիւղ այդ պահուն, վարը մայրիկս կը ստորապրէր Ալի Բիգային պատրաստած թուղթը, որով կ'ընդունէինք թէ մեր տան մէջ փախստական չկայ, բայց ըլլալու պարագային պարտաւոր ենք ան - միջնապէս իմացնել ոստիկանութեան: Հա - կառակ պարագային, եթէ որեւէ փախըստական բռնուէր մեր տանը մէջ, ամբողջ ընտանիքով պիտի աքսորուէինք Չանկը - բի: Այսպէս վերջացաւ մեր տան խու - զարկութիւններուն շարքը:

Այդ օր, վահէ իհասնը մէջտեղ չկար:

ՀՆԱԳՈՅՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԱՆՈՆՑ ՊԱՏՄԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Ա.

ԽՄԲ. — «Պատմա-քաղաքական Հանդէս»ի այս տարուան Ա. քիւիմ մէջ վերադրեալ խորագրով երկար գրութիւն մը ունի փիլիսոփայական գիտութիւններու տոքթօր Ս. Արեւշատեան: Կը ներկայացնենք արեւմտահայերէն, յապաւում - ներով:

Հայ գիւրերու գիւտին յաջորդած դըպրութեան զարթոնքը մեր հոգեւոր մշա - կոյթի պատմութեան մէջ բազմախոր - հուրդ եւ անխախտ յերեւոյթ էր: Սո - վորակ, ընդհանուր պատկերացումնե - րով կարելի չէ բացատրել թարգմանա - կան եւ ինքնուրոյն հայ գրականութեան բարձրարուեստ եւ բազմաբովանդակ գործերու առատութիւնը Եւ - Ջ. դարե - րուն: Այդ գրականութեան բուն աճը եւ հարստութիւնը բացատրելու համար ունենալ նոյնիսկ անհրաժեշտ կը նկատեն հրապարակ դնել միշտաշարունակ հայ գրականութեան հարցը: Սակայն պատմական պայմաններու համակողմանի ուսումնա - սիրութիւնը, Ե. դարու Հայաստանի հո - գեւոր մթնոլորտին քննութիւնը կը հեր - քէ այդ ենթադրութիւնը եւ ցոյց կուտայ Մաշտոցի եւ անոր գիտակիցներուն օր - րանքին դրդապատճառները, էութիւնը եւ պատմամշակութային արժէքը:

Արդարեւ, չափազանց ինքնաշարունակ մշակութային յեղաշրջումի մը համայն - նապատներն է, որ կ'ուրուագծուի մեր առջեւ, յեղաշրջում մը, որ վերանորո - գեց ժողովուրդին հոգեկան ամբողջ աշ - խարհը: Եւ ասիկա տեղի ունեցաւ ան - բարենպաստ քաղաքական պայմաններու մէջ: Այդ օրերուն հզօր գէնք մը դարձաւ սեփական լեզուն, մշակոյթը, հոգեւոր ինքնուրոյնութիւնը պահելու պարտադ - րութիւնը:

Գիրերու գիւտէն ետք քանի մը տաս - նամեակներու ընթացքին հայ հեղինակ - ներու ստեղծած ինքնուրոյն եւ թարգ - մանական գործերը գէնք դարձան դա - մափարկանքներու եւ մտաւորականներու ձեռքին՝ պայքարելու արտաքին եւ ներ - քին թշնամիներու դէմ: Այդ երկերը եւ թարգմանութիւնները հայ հին դպրու - թեան ոսկէ ֆոնտը կը կազմեն: Սակայն անոնց մշակութային արժէքը չի սահ - մանափակուիր դուռ հայկական շրջա - նակներով, անոնք պատուոյ տեղ կը դրա - ւեն միջազգային գրականութեան եւ գի - տութեան պատմութեան մէջ:

Մենքու Մաշտոց, Սահակ Պարթեւ եւ հայ դպրութեան հիմքերուն վրայ կեցած անոնց աշակերտներն ու գործակիցները խորապէս գիտակցած են այլ ժողովուրդ - ներու գրականութեան եւ գիտութեան եր -

կերու նշանակութեան նորածին հայ գրականութեան կազմաւորումին եւ դար - գացումին համար: Այդ կը վկայէ Մե - րոպ Մաշտոցի, Սահակ Պարթեւի եւ ա - նոնց շուրջ համախմբուած մտաւորա - կաններու թարգմանական լայն գործու - նէութիւնը: Անոնք լաւ կ'ըմբռնէին, որ թարգմանութիւններու միջոցով կը - նան բաւարարել հայ հասարակութեան հոգեւոր պահանջները, մինչեւ որ հայ միտքը, թարգմանական գրականութեան ստիւգով, ի վիճակի ըլլայ ինքնուրոյն գործ ստեղծելու: Յունարէն եւ ասորե - րէն լաւ ստիւգներու նպատակով անոնք աշակերտներ կ'ուղարկէին Միջագետք, Բիւզանդիոն եւ Աղեքսանդրիա: Նոյն ա - տեն Սահակն ու Մենքուը առանց յապա - գելու կը կազմակերպէին թարգմանական աշխատանքները Հայաստանի մէջ:

Ինչպէս յայտնի է, ամբողջ գրական եւ գաղափարական բնագաւառը այդ ժա - մանակ կը գտնուէր հոգեւորականութեան ձեռքը եւ եկեղեցիի հակոգութեան տակ: Եւ, բնականաբար, թարգմանութիւնն - րու ընտրութիւնը եւ այդ աշխատանքին առաջադրութիւնները պէտք է արտա - յայտէին եկեղեցիին եւ կրօնքին պահանջ - ներն ու շահերը: Այդ իսկ պատճառով հասկնալի է, որ Մաշտոցի եւ Սահակ Պարթեւի հիմնադրած թարգմանական դպրոցին ծրագիրը կազմուած էր իրենց ժամանակակից քրիստոնէական աշխարհի մէջ արդէն ընդունուած եւ տարածուած դատմ կրօնական գրականութեան եւ կրթութեան ծրագիրով: Ասիկա կ'ընդ - գրկէր ութ հիմնական բաժիններ - Ա) Աստուածաշնչական, Ս. Գիրքը ճանչ - նալ, Բ) Մեկնարանութիւն, Ս. Գիրքի նուիրումը մեկնարանութիւն, բացառ - րութիւն, Գ) Ջատագովութիւն, Դ) Պաշ - տամունքի, Ե) Ժեսական գրականութիւն, Ե) Հայրաբանութիւն, Զ) Վկայաբանու - թիւն, սրբախօսութիւն, վարքագրութիւն, Է) Կանոնաբանութիւն, Ը) Պատմական գրականութիւն, եկեղեցական պատմա - գրութիւն:

Այս հիմունքով առաջին առթիւ պէտք է թարգմանուէր Աստուածաշունչը, որ պաշտօնապէս ընդունուած կրօնքին հիմք էր եւ անոր գլխաւոր գործը սկսաւ ի - րականացուիլ գիրերու գիւտէն անմիջա - պէս ետք: Դեռ 405ին, երբ Սամսատ կը գտնուէր, Մաշտոց կը սկսի թարգմանել «Սողոմոնի առակները»: Աստուածաշուն - չի թարգմանութեան հիմնական պարտա - ւորութիւնը, սակայն, կը ստանձնէ Սա - հակ Պարթեւ, որ 405-408ին կը թարգ - մանէ զայն ասորերէն Փեշիտտա կոչուած

ինչպէս Մաքրիկել հելլէն գիւտերական իշխանութեան հակոգութեան յանձնուած էր:

Անատոլուի քեմալական շարժումը օրէ օր կը մեծնար, Պոլսոյ ստրուկ թուրքերը զաղտնօրէն կ'օժանդակէին անոր, գէնք, պարէն եւ դրամ հասցնելով: Օրուան Սուլթանին կառավարութիւնը, անուա - նական էր գերթէ, բայց ճիւղ կը թափէր խեղդելու համար Մուսթաֆա Բեմալի շարժումը, անոր դէմ զրկելով զինուոր - ներ՝ Անգաւոր Փաշայի եւ Չերքէզ Էտ - հեմի հրամանատարութեամբ, որոնք պահ - մը թեթեւ յաջողութիւններ ունեակէ վերջ, սկսած էին նահանջել: Անգաւոր փաշան սպաննուեցաւ իր զինուորներուն կողմէ, իսկ բանակին մէջ մասը դասա - լիք եղաւ, միւսն ալ միացաւ Մուսթաֆա Բեմալի ուժերուն:

Այս յաջողութիւնները հետզհետէ քա - ջութիւն տուին Պոլսոյ թուրքերուն, ո - րոնք հակառակ միջազգային բանակներու կրօնիկ տակ ըլլալուն, կամաց կամաց գլուխ բարձրացուցին եւ հին ոխով ու ատելութեամբ կը նայէին մեզի, ոչ - թուրք տարբին:

(42 - Շար.)

L'Épopée populaire
Arménienne
DAVID de SASSOUN

Այս քննական ուսումնասիրությունը՝ նուիրում «Մասունցի Դաւիթ» հայկա-կան ժողովրդական դիւցազնավէպին, բաղկացած է ներածականէ եւ չորս ծա-լալուն գլուխներէ:

Ներածականին մէջ հեղինակը Շաքէ Տէր-Մեղքունեան - Մինասեան, մանրա-մասն կը քննէ ժողովրդական դիւցազներ-գութեան ակունքները, անոր դիւցազն-հերոսներու առանձնայատուկ նկարա-դրները, բարիքի եւ չարիքի, լոյսի եւ խա-ւարի հակադրութիւնը, բարիքի ներկայա-ցուցիչներու յաղթանակը:

Գիրքին առաջին գլուխին մէջ՝ «Հայ ժողովրդական դիւցազնավէպին յայտ -

նագիրէն, ձեռքի տակ չունենալով եր-րայեքէնը կամ յունարէնը: Այդ թարգ-մանութեամբ կը գոհանան չորս քառորդ դար, մինչեւ 432-433, երբ Նզնիկ Կող-րացի, Կորիւն, Յովսէփ Պաղնացի, Դե-տնդ, որոնք Կ. Պոլսէն վերադարձած էին, բաղմաթիւ դիրքերու կարգին իրենց հետ կը բերեն ընտիր օրինակ մը Եօթա-նասնից թարգմանութեան: Սահակ Պար-թեւ եւ Մեսրոպ Մաշտոց, Նզնիկ Կող-րացի եւ Յովսէփ Պաղնացիի հետ, կը սկսին համեմատել ատրերէնէ կատար-ուած թարգմանութիւնը յունարէն բնա-գիրին հետ եւ փաստօրէն Աստուածա-յունչի երկրորդ թարգմանութիւնը կը կատարեն: Եւ այդ երկրորդ, օրուան ամենահմուտ եւ նորագոյն հայ դրա-դէսներու կողմէ կատարուած վերջնական թարգմանութիւնը կը դառնայ դասական հայերէնի մաքրութեան չափանիշը: Աստ-ուածայունչի հայերէն թարգմանութիւնը կը համարուի «Թադուհի թարգմանչաց»:

Աստուածաշունչին, անոր Հին ու Նոր կտակարաններու թարգմանութիւնը, բա-ցի եկեղեցիին համար ունեցած կարեւոր նշանակութեան, մեծ դեր խաղաց հայ գրականութեան զարգացումին մէջ եւ լայն ազդեցութիւն ունեցաւ հին Հայաս-տանի, իսկ այնուհետեւ՝ ամբողջ հայ միջնադարու մտաւոր կեանքին բոլոր բը-նագոյններուն վրայ: Անշուշտ, ան իր խոր կնիքը դրաւ ժամանակաշրջանի բո-լոր գրողներու մտայնութեան վրայ: Աստուածաբանութեան իր նշանակաւոր ուղիով, լայն այս պարագային կարեւորն այն է, որ Ս. Գիրքի թարգմանութիւնը զարկ տուաւ գրական լեզուին, գրականութեան եւ տեսական միտքին զարգացումին եւ, քանդելով սեղմ պաշտամունքի շրջանակը, հանդիսացաւ օրինակելի գրական յուշար-ձան մը:

Ս. Ա.

նութեան պատմութիւնը» վերնագրին տակ, հեղինակը կը խօսի հայ ժողովուր-դի պատմութեան, Գարեգին Սրբանձըտ-եանցի գտած դիւցազնեցութեան առա-ջին տարբերակին եւ Մանուկ Աբեղեանի գտած երկրորդ տարբերակին մասին:

Երկրորդ գլուխով ընթերցողներուն ներկայացուած է դիւցազնեցութեան բո-վանդակութիւնը չորս երգերով՝ Սանա - սար եւ Բաղդասար, Մեծ Մհեր, Սասուն-ցի Դաւիթ եւ Փոքր Մհեր:

«Հայ ժողովրդական դիւցազնեցութե - թեան աղբիւրները» խորագրերը կը կրէ երրորդ գլուխը, ուր հեղինակը քննու - թեան հարց կը դարձնէ հետեւեալ խըն - դիրները՝ չորս երգերու ծագումին աղ-բիւրները, հերոսներու վարքին, դիցա - բանական եւ պատմական ակունքները, Դաւիթի մանկութիւնը, Է.-Ժ. դարերու պատմական անձնաւորութիւնները դիւ - ցազնեցութեան մէջ, Դաւիթ անձին պատմական աղբիւրներու համադրութիւ - նը, Դաւիթի մահը, Սասունը՝ իրրեւ ժո-ղովրդական դիւցազնեցութեան օրրան, Սասունցիներու կենցաղի ընկերային - տնտեսական երեսները, ԺԲ.-ԺԳ. դարե -րու ազդեցութիւնը դիւցազնեցութեան վրայ:

Չորրորդ գլուխը վերլուծական ուսում-նասիրութիւն մըն է, ուր հանդամանօրէն քննութեան առնուած են դիւցազնեցութե - թեան ներքին կառուցուածքը, թեքնիքն ու ոճը, հերոսներուն նկարագիրները: Միեւնոյն ատեն այդ հերոսները համե - մատութեան դրուած են դիւցազնեցութե - կան այլ հերոսներու հետ, անոնց կիներ -րուն, մայրերուն, թշնամիներուն հետ: Քննուած են դիւցազնեցութեան նիւ - թերը (պատմութիւն, պատերազմ, խա - դաղութիւն, բարոյական մեծութիւն, ժո-ղովրդավարութիւն, նախանձ եւ վրիժա - ութիւն, լատիւնայն աշխարհի մը հեռա - նկար), քննուած է դիւցազնեցութեան արուեստը եւայն:

Եզրակացութեան մէջ հեղինակը դիտել կուտայ, թէ 1939էն սկսեալ, այսինքն Սասունցի Դաւիթի հաղարամեակի ոտ - նակատարութեանէն ետք, օտար լեզուե -րով բաղմաթիւ թարգմանութիւններու շնորհիւ միջազգային շրջանակները ծա - նօթացած են դիւցազնեցութեան գրականութե - թեան այս հրաշալիքին: Հակառակ հայերէն եւ ռուսերէն բաղմաթիւ ուսում-նասիրութիւններու գոյութեան, արեւ - մբոտան երկիրներու լեզուներով ուսում-նասիրութիւնները համեմատաբար աւելի հաղաւթեալ են, քանի որ անոր Փրանսե -րէն եւ անգլերէն (այն ալ ո՛չ բոլոր պա - տմաններուն) թարգմանութիւնները լոյս կը սփռն տեսնել 1964էն ստղին: Հեղի -նակը բարձր կը գնահատէ Պ. Ֆէյտիի Փրանսերէն թարգմանութիւնը, որ իր կարծիքով աւելի հարազատ կը վերաբ -րուի մեր դիւցազնեցութեան ընդհա -նուր մթնոլորտն ու ոճը:

Հեղինակը այսպէս կ'եզրափակէ իր ուսումնասիրութիւնը. «Սասունցի Դա -ւիթը համաշխարհային խորհրդանշան մըն

Գ. ԵԱՆԸԴԵԱՆԻ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

0

Բաղմաթիւ յետաձգումներէ ետք Մա-յիս 29ին, Սանթա-Պարպարայի դատա-րանին մէջ սկսած է Գուրգէն Շանդեանի դատավարութիւնը: Ինչպէս հաղորդած էինք ատենին, Գուրգէն Շանդեան, 78 տարեկան, Յունուար 27ին սպաննած էր երկու թուրք դիւանազէտներ:

Շանդեանի դատավարութեան կա - պակցութեամբ Լոս Անձէլէսի մէջ կազ -մուած էր «Հայ Նահապետներու Ամերի-կացի Բարեկամներ» միութիւնը, որուն նպատակն էր ապահովել դատավարու - թեան ծախքերը եւ, մասնաւորաբար, քա-րոջական աշխատանք տանել դատախա-ղին եւ երդուեալներուն, ինչպէս նաեւ մամուլին մօտ ծանօթացներու համար անոնց՝ 1915 ցեղասպանութիւնը: Միու-թիւնը իր աշխատանքներուն համար 60 հազար առար նախատեսած էր եւ ժողո-վուրդին ուղղուած կոչով մը ցարդ ա -պահոված էր 10-000 տոլար:

Մամուլին ուղղուած տեղեկագրու - թեամբ մը՝ Յունիս 6 թուակիր, Միու - թիւնը կը տեղեկացնէ, թէ փաստաբան Փերսի Ֆորմէն, Ամերիկայի անուանի փաստաբաններէն, ընդունելէ ետք Եա -նդեանի պաշտպանութեան դարձը, յետ թղթածրարի ընտելեան, առողջական պատճառներով հրաժարած է իր պաշ -տօնէն: Ֆորմէն վերադարձուցած է իր ստացած սակը:

Միութիւնը, այս անգամ, իրրեւ պաշտ-պան փաստաբան ապահոված է Չարլզ Կէրրի, ծնունդով Հայ, որ կը նկատուի Բայրիֆօրնիոյ աշքոռու փաստաբաններէն մէկը: Գ. Շանդեան չէ ընդունած այս նշանակումը: Հետեւաբար, Միութիւնը ցաւով կը հաղորդէ, թէ իրաց այս կա -ցութեան մէջ այլեւս ի վիճակի չէ չա -րունակելու իր գործը:

Հանդանակուած դումարը լրիւ հաշ -ուետութեամբ մը պիտի հրապարակէ ի մօտը: Նուրառութեան ալ ետ պիտի ստանան իրենց նուիրած գումարները:

է: Մենք չենք դիտեր ուրիշ դիւցազներ-գութիւն մը, որ ի վիճակի ըլլայ պատ-կերացնելու՝ այսքան տարածուն եւ այս-քան տեսական կերպով, ամբողջ ազգի մը բախտն ու ճակատագիրը, իր պատմու - թեան աւանդական սկիզբներէն մինչեւ ժամանակակից էջերը»:

Գիրքը ունի մատենադիտական ցան -կեր: Նկարազարդուած եւ պատշաճ ձե -ւորուած է:

Հ. ՄԵՔԵՐԵԱՆ

«Պատմա-քառասիրական հանդէս»

տարանին մերձակայ տան մը ձեղնա -յարկը հասած պահուն: Պարտք, տաղ -տուկ, կեցողութիւնները վերջ գտած էին այլեւս: Մէկ բան թիայն տարօրինակ ու քիչ մը վրդովիչ կը թուէր անոր: Ինչո՞ւ այլ օտարականը, որուն անունն իսկ չէր դիտեր, իրեն չէր յանձնած երկու պար-տամուրհակները: Աստիք նախկին քա -ղաքապետ Տիւրքմէնի կեղծ ստորագրու-թիւնը կը կրէին:

Յաջորդ առտու կանուխ, Տիւրքմէն ար-չիւներու գրասենեակը մտաւ ու 1861 տարուան տոմարը ձեռք առաւ: Բայց չկրցաւ բան մը գտնել: Յաջորդ տար-ուանը վերցուց:

— Եթէ չեմ սխալիր, փնտռածս առ է, յարեց, աչքերը պտտեցնելով տոմարին մէջ փակցուած թուցիկ թուղթի մը վրայ:

Այդ թուղթը աչքէ անցուցած պահուն Տիւրքմէն կ'ըսէր մեղմաձայն.

— Ձերմի... Ժանն Ֆորթիէ... Լիւսի: Այո, փնտռածս է, հետազոտութիւնները երկար պիտի չտեսնէ: Ի՞նչ պէտք կայ ընդօրինակելու: Բնագիրը կը յանձնեմ:

Թուցիկ թուղթը հանելով՝ գրպանին մէջ սահեցուց, առանց կարդալու ամ-բողջովին: Յետոյ տոմարը դրաւ իր տե-ղը: Արշիւներու գրասենեակին բանալին դռնապարանին յանձնելէ յետոյ՝ իր սեն-եակը գնաց:

(Շար.) ԿԶԱՎԻԷ ՏԸ ՄՈՆԹԻՓԷՆ

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

Լուրջ Դժուարութիւններ

ԿԸ ՍՊԱՌՆԱՆ ՄԱՐԻԿՈՒԹԵԱՆ
ԱՊԱԳԱՅԻՆ

0

Ապագայի մասին շատ քիչ բան գիտենք, սակայն մէկ բան որոշ է թէ երեսուն տա-րի ետք, մարդոց թիւը 3,6 միլիարդ պի-տի հասնի այս մոլորակին վրայ, ուր ապրելու համար մարդիկ բազմաթիւ լուրջ դժուարութեանց պիտի բախին, եթէ այժմէն միջոցներ ձեռք չառնուին այդ մասին:

Այսպէս կ'արտայայտուի իտալացի մասնագէտ մը՝ Տոքթ. Օրելիօ Փեչէի, որ լրջօրէն հետաքրքրուած է աշխարհի բնակչութեան վերաբերեալ հարցերով:

Արդարեւ, վերջին տարիներուն դիտ -նականները մտահոգիչ հարց մը դրած են հրապարակ — ապագայ մարդկութեան ապրելու հնարաւորութիւնները, նոյնիսկ եթէ զսպուի բնակչութեան աճման թափը:

Երեսուն տարի ետք, աշխարհի գրեթէ կրկնապատկուելիք բնակչութեան համար, կը զրեն դիտնականները, անհրաժեշտ պիտի ըլլայ շինութիւնը ամբողջ քաղաք-ներու, զարդանալով, եկեղեցիներով, հի-ւանդանոցներով եւայլն, ու մասնաւորա-բար պէտք պիտի ըլլայ եռապատկել կամ քառապատկել՝ այսօրուան անդեղէնի ար-տադրութիւնը:

Արդարեւ, ապագայի այս դժուարու -թիւնները այնքան մեծ են որ, մարդկա-յին կարողութեան վեր ըլլալ կը թուի ա-նոնց լուծումը:

Առաջին առթիւ, անհրաժեշտ կը նկատ-ուի մեծ ուղադրութիւնով եւ խնայողու-թեամբ օգտագործել բնութեան հարստու-թիւնները, եթէ մարդը կ'ուզէ ապագա-յին ապրելու հնարաւորութիւն ունենալ երկրապունդին վրայ:

Երկրորդը՝ անպայման բնակչութեան աճի սահմանափակումն է: Գիտնական -ները դիտել կուտան թէ մարդիկ այլեւս իրաւունք չունին անանձ կերպով քաղ -մապատկուելու եւ աւելցնելու իրեն թի-ւը: Մարդը պատասխանատուութիւն ու-նի պահելու հաւասարակշռութիւն մը, իր ապրուստի պահանջներուն եւ բնու -թեան աղբիւրներուն միջեւ:

Այս նպատակով՝ Հոռոմի մէջ հաստատ-ուած է մասնաւոր ակումբ մը, որուն անդամները դիտականօրէն կը քննեն ամ-բողջ հարցը, հասնելու համար օգտակար եզրակացութեանց: Այս հարցին հետ նը-կատի առնուած է նաեւ ընկերային ար-դարութեան, խաղաղութեան հարցը, կենսական կարեւորութեամբ:

Անհրաժեշտ նկատուած է կազմել հե-ռահաս կարեւորութեամբ եւ ուժական բովանդակութեամբ ծրագիր մը: Պէտք է ծրագրել գործակցութիւնը զանազան նա-հանգներու, երկիրներու, տնտեսական լաւագոյն արդիւնք ձեռք բերելու համար:

Կարելի է փաստօրէն յայտարարել թէ մարդկային ճակատագիրը այնքան ընդ-հանրական է, որ մէկ զանգուածը չի կրնար խուսափել մնացորդի բախտէն: Ապագայ դժբախտութիւնները, մէկ խօս-քով, եթէ պիտի գան, անոնք պիտի հար-ուածեն մարդկութեան բոլոր զանգուած-ները:

Այժմէն պատրաստուելիք ծրագիրները միայն պիտի կրնան ապահովել՝ ապագա-յին ծնելիք բազմութեան համար ապ -րելու բաւարար պայմաններ:


Մարդկութեան բոլոր ուժերը, ճար -տարարութեան, երկրագործութիւն, եւն., պէտք է զօրաշարժի ենթարկուին այն-պէս, որ կարենան դոհացում տալ ա -պագայ պահանջներու, կենսական խըն -դիրներու լուծմամբ:

Այս միջոցին, ապագային վերաբերող այդ ծրագիրները խիստ մեծ են դժուար կը թուին, սակայն հարկ է նկատու ունե-նալ, որ պահանջներն ալ խիստ են ու մեծ, այնպէս որ անհրաժեշտ է անպայ-ման այժմէն նկատի ունենալ զանոնք, առանց թոյլ տալու որ մեծնան այնքան, որ գրեթէ անկարելի դարձնեն իրենց լուծումը ապագային:

ԿԱՐՂԱՅԻՔ
ՏԱՐԱԾՆՅԻՔ
ՅԱՌԱՋԸ

«ՅԱՌԱՋ Ի ԹԵՐԹՕՆԸ

(210)



ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ
ՕՎԻՅԻ ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Զ.

— Բանի մը ամիս առաջ մեկնեցաւ, փարիզ դառնալու համար, առ ու ան խա-րելէն յետոյ: Իր աշխատած վաճառա -տունէն դողցած էր երկու կտոր ժանեակ-ներ, որոնց իւրաքանչիւրը հինգ հարիւր Քրանը կ'արժէ...:

— Ձերբախլակ չտուի՞ն:

— Ոչ, պարոն: Աղաչանքներու եւ պա-ղատանքներու շնորհիւ, գործատիրու -հին գուրդ չարժած է: Միայն թէ ան պահանջած է որ գրութեամբ մը խոստո-վանի իր գողութիւնը եւ յանձն առնէ մէկ տարեկէն վճարել ժանեակներուն փոխար-ժէքը: Գործատիրուհին որոշած էր ոս-

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Տիկին Անժէլ Թաթիկեան եւ ընտանեկան պարագաները կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի այս Կիրակի առաւօտ (Յունիս 24) Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին իրեց ամուսնոյն եւ ազգականին՝

ՅՈՎՍԷՓ ԹԱԹԻԿԵԱՆԻ մահուան քառասունօրին առթիւ։ Ի գիտութիւն ողբացեալին յիշատակը յարգողներուն։

×

Այլի Տիկին Նշան Դարբինեան, զաւակներն ու թոռները կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի այս Կիրակի (Յունիս 24) առաւօտ, Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին իրեց ամուսնոյն, հօր եւ մեծ-հօր՝ ՆՇԱՆ ԴԱՐԲԻՆԵԱՆԻ մահուան երկրորդ տարեիցին առթիւ։ Ի գիտութիւն ողբացեալին յիշատակը յարգողներուն։

×

Այս Կիրակի 24 Յունիսին Լիոնի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, յաւարտ պատարագի, Ն. Ուզունեան ընտանիքը, Պր. Ժ. Ազըլեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Արթիւր Օհաննէսեան եւ զաւակները, ձնկտրեան եւ Քէլէկեան ընտանիքները հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն ՇԱՔԻ ԱԳՂԼԵԱՆԻ (ծնեալ Ուզունեան) յիշատակին։

ԼԻՈՆ Ա. ՅԱԿՈԲ

Եկեղեցւոյ օծման 10րդ տարեդարձին առթիւ Կիրակի, Յունիս 24, Լիոնի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, հանդիսաւոր պատարագ, զոր կը մատուցանէ ՍԵՐՈՎԲԷ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ (Հայրապ. Պատուիրակ Եւրպայի Հայոց) Պատարագէն ետք զինեձօն եկեղեցւոյս նորոգուած սրահին մէջ, որու մուտքը ազատ է։ Իսկ ժամը 1.30ին, ճաշ Թիլեօլ ճաշարանին մէջ, 146 Ավրելի Շարլ տը Կօլ, Թասսէն Տըմի Լիւն։ Ծաշագին անձ-պիւրս 60 Քր.։ Արձանագրութեանց համար դիմել աւելցնելու ուղ մինչեւ Յունիս 21 Աղգ Տան զբառնեակը. հեռաձայն 78 — 60-47-18 եւ կամ վարչութեան անդամներուն մօտ։

×


Կիրակի Յուլիս մէկին, Սէն Մօրիսի ծանօթ դաշտին վրայ, դպրոցական դաշտահանդէս առաւօտեան ժամը 10էն մինչեւ ուշ երեկոյ։ Գեղարուեստական բաժին վարժարանի աշակերտութեան կողմէ եւ վիճակահա — նութիւն։ Արեւելեան համադամ կերպ — կուրներ։ Անճրեւի պարագային խնջոյքի ձեւով տեղի կ'ունենայ, նոյն օրը, եկեղեցւոյս նորոգուած սրահին մէջ, կ. յետոյ ժամը 3էն սկսեալ։

ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍ

ՌՈՄԱՆ ՄԷՋ Կազմակերպուած Ռոմանի Հայերու Բարեկամական Միութեան կողմէ, Կիրակի Յունիս 24 ամբողջ օրը՝ ՄՕՓԱ։

Տեսողութեան եւ Լսողութեան Ձեր բոլոր հարցերուն համար Մի՛ վարանիք ԱՆՏՐԷ ԵՒ ՏԱՆԻԷԼԸ ՀԱՍԲԱՆԵԱՆ

POUR TOUS VOS PROBLEMES DE VUE ET D'AUDITION



ANDRÉ & DANIELLE HASBANIAN

Opticiens diplômés de Paris Acousticiens diplômés de la Faculté de Médecine de Marseille

Vous font part de l'ouverture d'un magasin d'optique et laboratoire de surdité

- Վ Ա Լ Ա Ն Ս - 60, Rue Madier de Montjau 26000 VALENCE Tél. : 43-56-23

ՃՇԴՈՒՄ

Յունիս 15ի Էստեան Սանուց Միութեան արտասանական մրցումի թղթակցութեան մէջ, «Երչատակութեան արժանի»ներու կարգին թիւրիմացութեամբ չէ յիշուած՝ տասնամեայ Նազիկ Քոչարեան։

ՊԱՐԳԵՒԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Տեղի կ'ունենայ Շաբաթ Յունիս 23ին — Առաւօտեան ժամը 11ին հանգիստ-ւոր պատարագ վարժարանին Մատրան մէջ, աշակերտներու երգեցողութեամբ։ — Ժամը 13ին ընտանեկան ճաշ։ — Ժամը 15ին հանդէս պարգեւարաչ — խութիւն, երգ, արտասանութիւններ, հաշուետուութիւն։ — Ծաշագին 25 Քրանք Հեռաձայնել 027-18-28

ԴՊՐՈՑԱՄԵՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ

ՄՐՅԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ ԵՒ ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍ

Հովանաւորութեամբ ՍԵՐՈՎԲԷ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ 24 Յունիս Կիրակի օր, ժամը 15ին Հայկական եւ Եւրոպական պարեր երգ՝ Պր. ՊԵՏԻԿԵԱՆԷ, ընկերակցութեամբ իր նուագախումբին Հաղորդակցութեան միջոցներ — Էլիզաբէ ֆոն Քէնի 147 Թիւ օթոպիւսը։

ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍ

ԿՐԸՆՈՊԼԻ ՄԷՋ

Կազմակերպուած Կապ. Խաչի մասնա — ճիւղին կողմէ՝ Սէսիէի ճամբուն վրայ, Շաբթօ տը Պօռլկառի գեղատեսիլ պուրա — կին՝ պաղ ջուրին մօտ։ Գեղարուեստական խնամուած բաժին դպրոցի աշակերտութեան եւ կարող ու — ժերու կողմէ։ Բարձրախօս եւ հաճելի անակնկալներ։ Ծոխ պիւֆէ, պատրաստուած Խաչու — հիներու կողմէ։ Յունիս 24 Կիրակի ամբողջ օրը։ Անճրեւի պարագային կը յետաձուրի Յուլիս մէկի Կիրակին։

ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍ

Նախաձեռնութեամբ Կապ. Խաչի Սերանի մասնաճիւղին Կիրակի Յունիս 24, ժամը 11էն սկսեալ 10, Rue Lucien Sportice, SEVRAN (Parc des Sœurs, face à la Gare de Sevrans) Օթոպիւս 147 Ա. Էլիզաբէ ֆոն Քէնի կամ կառախումբ Կառ տիւ Նոռէն, իջնել Լիւրի-Սեւրան Պիւֆէ — Շամփուրով խորոված — Խաչի — մրցումներ — Անակնկալներ

ՀԵՐՈՍՆԵՐՈՒ ՕՐԸ

ՎԻԷՆԻ ՄԷՋ

Յուլիս 15ին

Le Voyage en Grèce

n'hésitez pas, adressez-vous à Mayda BERBERIAN

6, Rue de l'Echelle, PARIS (1er) Tél. : 260-30-20 et 260-67-34 de 9 h. à 19 h. tous les jours

Spécialiste de Voyages en Grèce, Orient, Moyen-Orient (Liban, Egypte, etc.) Les voyages à partir de 395 F.

ՁԵՐ ԴՆՄԲՈՐԴՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՀՆՄԱՐ

Դիմեցէ՛ք ՄԱՅՏԱ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

LE VOYAGE EN GRECE

Ամէն օր ժամը 9էն 19

Ճամբորդութիւններ դէպի Յունաստան, Արեւելք, Եգիպտոս, Լիբանան 395 Ֆր.էն ՍԿՍԵԱԼ

ԵՐԲ ՎԱԼԱՆՍԷՆ ԱՆՑՆԻՔ

ԿԱՍ

ՎԱԼԱՆՍ ԵՐԹԱՔ

Մէկ հասցէ՝

Hôtel California

— SNAK-BAR —

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ՝ Ա. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Ave. Maurice-Faure Sortie Autoroute Sud à droite VALENCE

CALME — CONFORT — PARKING

Tél. : 44-36-05

ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍ

Կապոյտ Խաչի Պօմոնի մասնաճիւղի դպրոցական հանդէսը 24 Յունիս Կիրակի կէսօրէ վերջ ժամը 3ին եկեղեցւոյ կից սրահին մէջ։

Աշակերտներու կողմէ հայերէն արտասանութիւն, երգ, պար, շուրջպար, տրամախօսութիւն մը (զաւեշտ) Խանդուր կիմը, նաեւ կը ներկայացուի կենդանի պատկեր՝ Հայկական հարսանիքի գեղ-կական տարազով։

Ղեկավարութեամբ ուսուցիչ եւ ուսուցչուհի Պր. Արշալիր Խաչիկեանի եւ Տի-կին Մանուէլ Շամիրեանի։

Սիրով կը հրաւիրուին ծնողքներ, բարեկամներ եւ հայ հասարակութիւնը։

ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍ

ՍԷՆ - ՀՆՄՈՐՆԻ ՄԷՋ

Հայ Հասարակութիւն Սէն Շամոնի Երիտ. Միութեան երրորդ տարեդարձին առիթով, Կազմակերպուած է տարեկան դաշտահանդէս Յունիս 24, Կիրակի առաւօտեան ժամը 11էն մինչեւ ուշ գիշեր Institution Sainte Marie, Parc des Frères Lazaristes, Route du Coin — St. Chamond (après le Stade Pauze).

Երաժշտական բաժնին իր մասնակցութիւնը կը բերէ Լիոնի Սայաթ Նովա երկ-սեռ նուագախումբը, նորագոյն զուգերգ-ներով եւ հայկական զուարթ երգերով։ Խնամքով նկատի առնուած է նաեւ Միութեան համանուն վարժարանին երկսեռ աշակերտութեան մասնակցութիւնը։

Առատ խմիչք ամէն ճաշակի, հայկա-կան համադամ կերակուրներ եւ համեղ աղանդերներ, մատչելի զիններով։

Հաճելի անակնկալներ, հարուստ նը — ւերներու վիճակահանութիւն, մանկական ալլապան զբօսանքներ եւ մանաւանդ Փիք-անֆի (ձեռնագնդակ) մրցաշարք մը, արծաթազօծ բաժակի վրայ։

ՄՈՒՏՔԸ ԱԶՍ է

Imprimé sur les Presses DU JOURNAL « HARATCH » 83, Rue d'Hauteville, Paris (10e)

ԿԸ ՓՆՏՈՒԻ

Վարդուշ Սրապիոնի Ամիրջանեան (Գրի-գորեան) որ Երեւան կը բնակի, կը փնտէ իր եղբայր Գրիգոր Սրապիոնի Գրիգորեան, ծնած 1913ին Հայաստան, Էջմիածնի Աղջաղա գիւղը։ Մինչեւ 1937 ուսուցիչ եղած է եւ կորսուած է Սոչիէն 1937ին։

Իրմէ լուր ունեցողներէն կը խնդրուի գրել՝

MOURADIAN 3, Rue Jules Guesde 92240 MALAKOFF — FRANCE

ՓԱՐԻԶ ԻՐ ՇԱՐԺՈՒՄՈՎ

Ճանչնալիք Փապուղիւն

Կ'արժէ մօտէն ծանօթանալ Փապուղի կիսապուղիին, որ չընծայելով հանդերձ հաճոյալի ճամբորդութեան մը եղանակը, կը մնայ սակայն ամէնէն վստահելին՝ Մայրաքաղաքի փոխադրական միջնոցներուն, երբ բոլորովին գերծ մակերեսի խճողումներէն, իր անշեղ ճշգրտագործութեամբ, իւրաքանչիւր աշխատանքի օր աւելի քան երկու միլիոն ճամբորդներ, վայրկեանը վայրկեանին կը հասցնէ իրենց գործատեղիները եւ ալ բնակա-վայրերը:

Փապուղի մէջ, ստորերկրեայ կամ օդային փապուղիի մը հաստատման դադար փարը յղացուած էր շատ հին ժամանակներէ ի վեր, նպատակ ունենալով թե-թեւցնել քաղաքին երթեւեկութեան դժուարութիւնները, այն ատեն անգամ խնդրոյ առարկայ:

Արդարեւ, 1855ին էր որ առաջին անգամ, երկու հոգեկաւոր ճարտարագէտներ՝ Պոստ եւ Ֆրաչա, որ շինարարը եղած է Ֆրանսայի երկաթուղային նախնական գիծերուն, կը ներկայացնէին ծրարի մը, ստորերկրեայ երկաթուղիով Փապուղի կեդրոնը կապել իր ծայրագոյն սահմաններուն, ապահովելու համար մանաւանդ պարենաւորումը կեդրոնական շուկային (շալ), որ գիտենք անշուշտ թէ այժմ տեղափոխուած է Ռէօն-ժիս: Բայց մինչեւ 1895, գործադրու-թեան յանդերձ ճիշդը մնացած էին բո-լորովին ապարդիւն, մէկ կողմէ Պետու-թեան, միւս կողմէ Փապուղի քաղաքի պա-տասխանատու իշխանութեանց միջեւ ըս-տեղծուած սկզբունքի խոր տարակար-ծութեանց պատճառով, որոնք կրնային զեռ երկար տեւել, եթէ Փապուղի հան-րային սպասարկութեանց անբաւարարու-թիւնը օր ըստ օրէ, ինչպէս եւ մօտալուտ բացումը տեղեկական ցուցահանդէսի մը որ բազմաթիւ այցելուներ պիտի փու-թացնէր, չստիպէին համաձայնութեան յանգիլ երկու կողմերն ալ: 1895 Նոյեմբեր 22ին, Հանրային Շինութեանց նախա-րարը՝ Պարթու, կ'ընդունէր Փապուղի քա-ղաքի վարչութեան առաջարկը՝ փապու-ղիին տեղական հանգամանքը, ամբող-ջապէս ի սպաս քաղաքին բնակչութեան: Երկու տարիներ վերջ, 1898 Մարտ 30ի օրէնքը կը յայտարարէր հանրօգուտ ան-հրաժեշտութիւն՝ շինութիւնը երկաթու-ղիի ելեկտրական գնացքի մը, որ պիտի բաղկանար նախապէս հինգ գիծերէ, կազմելով 65 քիլոմետրի ամբողջութիւն մը: 1900 Յուլիս 19ին էր որ սպասարկու-թեան կը յանձնուէր փապուղիին առա-ջին գիծը տասը քիլոմետր երկարու-թեամբ, որ Փորթ տը Վենսէնը կը կցէր Փորթ Մայեօյի, կամ կրնանք ըսել, Մայ-րաքաղաքին երկու մեծագոյն անտառ-ները՝ Վենսէն ու Պուլոններ:

Հետզհետէ կ'ընդարձակուէին փապու-

ղիին տարածութիւնները, որ այժմ կ'եր-կարին 173 քիլոմետրի վրայ եւ որ կը բաղկանայ 16 ներքին գիծերէ: Բայց Փապուղի որոշ յապաղումով էր հետեւած օտար բազմաթիւ մայրաքաղաքներու օ-րինակին, քանի որ Լոնտոն 1863ին իսկ հանրութեան կը տրամադրէր իր փապուղիին առաջին գիծը. Նիւ Եորք, որ 1885ին աւարտած էր շինութիւնը իր փապուղիին մէկ կարեւոր մասին. Շիքա-կօ, որ 1892ին երթեւեկութեան կը յանձ-նէր ընդարձակ գիծ մը:

Փոխադրութեան նորագոյն հնարաւո-րութիւնը, զոր կը շնորհէր այդ օրերուն, ծնունդ առնող փապուղիին, մեծ ընդու-նելութիւն կը գտնէր ժողովուրդին կողմէ, որ զայն կը գնահատէր մասնաւորաբար իր արագութեան եւ աշխուժութեան հան-գամանքով: Առաջին իսկ տարիին, վեց ամսուան ընթացքին, ճամբորդներու ընդհանուր թիւը կը հասնէր արդէն 15 միլիոնի, 13 քիլոմետր երկարութիւն ունեցող գիծերու վրայ: Յաջորդութիւնը այնքան մեծ էր, որ Փապուղի քաղաքի վար-չութիւնը կը ձեռնարկէր արդէն դուր-թիւն ունեցող գիծերը ա'լ աւելի երկարել գէպի քաղաքին ծայրագոյն դուռները:

1934ին էր որ փապուղիին դուրս կ'ելլէր Մայրաքաղաքի սահմաններէն, տարած-ուելու համար դէպի արուարձանները, ուր մինչեւ 1939 հաստատուած էին արդէն եօթը յաւելուածական գիծեր: Այդ սահ-մաններուն մէջ, ուրիշ բազմաթիւ գի-ծեր, որոնց շինութիւնը դանդաղացած եւ նոյնիսկ դադրած պատերազմի ըն-թացքին, կ'աւարտէին Ազատագրման վա-ղորդային իսկ: Իսկ շատ աւելի վեր-ջերը, 1970 Սեպտեմբեր 19ին Պալատին Շառանթոն - Էթըլ դպրոց գիծը կ'երկա-րաձգուէր մինչեւ Մեզոն-Ալֆոն, մար-զադաշտը, որոշ գիւրութիւն պարզեւ-լով նաեւ Ալֆորվիլարնակ մեր հայրե-նակիցներուն:

Բուն Փապուղի փապուղիին կը հաշուէ այժմ 163 քիլմ. իր ստորերկրեայ տա-րածութիւններով եւ տասը քիլմ. բացօթ-եայ: Ուրեմն, նոյն փապուղիին ործնունդ կ'առնէր 1900ին տասը քիլմ. գիծի մը երկարութեամբ եւ որ կը բաղկանար 18 կաղնատեղիներէ (սքաւիմ), այսօր կ'երկարի 173 քիլոմետրի վրայ՝ 342 կայաններով: Փապուղիին ամէնէն երկար գիծն է Փոն տը Սելը - Մոնի տը Մոն-թրօյ՝ 19ուկէս քիլոմետր: Իսկ ամէնէն կարճ գիծերն են՝ Կամպեքա - Փոքր տէ Լիլա՝ մէկ քիլմ. 300 մետր, Լուի-Պլան - Փրէ-Սէն-ժիւլիէ՝ երեք քիլմ. 100 մետր, եւայլն:

Աւելցնենք նաեւ որ փապուղիին ութ տեղերէ կ'անցնի Սէնի մէկ կողմէն միւ-սը, երեքը՝ օդային, մեծ-կամուրջնե-րու վրայէն, հինգը՝ գետին տակէն: Կա-րելի է ենթադրել թէ ինչ վիթխարի աշխատանքներու դիմուած է յաջողելու համար այդ պատկառելի հնարաւորու-թիւնը:

Հինէն իսկ գոյութիւն ունի Փապուղէն դուրս փապուղիի կարեւոր գիծ մը, որ

ՀՆԱԳՈՅՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԱՆՈՆՑ ՊԱՏՄԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Բ.

Ս. Գիրքի եւ, մասնաւորապէս, անոր Նոր կտակարանի միտքերը, քրիստոնէու-թեան վարդապետութիւնը եկեղեցական տեսակէտով ճիշդ ըմբռնելու եւ մատու-ցանելու մտահոգութեամբ կեանքի կոչ-ուեցաւ մեկնողական գրականութիւնը: Այդ մեկնողական, բացատրական գրա-կանութեան թարգմանութիւնը սկսաւ իրագործուիլ Աստուածաշունչի թարգ-մանութեան հետ գրեթէ միաժամանակ: Ե. դարու առաջին կէսին, ապա նաեւ յաջորդ տասնամեակներուն աւաղ եւ կրտսեր թարգմանիչները հրապարակ հա-նեցին անուանի կրօնաւորներու՝ Բարսեղ Կեսարացի, Յովնան Ոսկերեան, Եփրեմ Ասորի, Աթանաս Աղեքսանդրացի, Գրի-գոր Աստուածարան, Կիւրեղ Աղեքսան - դրացի եւ ուրիշներու մեկնողական գոր-ծերը: Այդ թարգմանութիւնները, հայ հին գրականութեան զարգացումին բե-րած իրենց նպաստէն զատ, եզակի արժէք կը ներկայացնեն համաշխարհային գրա-կանութեան եւ գիտութեան համար ոչ միայն իրրեւ հին եւ բարձրարուեստ թարգմանութիւններ, այլեւ այն պատ - ճառով, որ անոնց յունարէն եւ ասորե-

րէն բնագիրներուն մեծ մասը կորսուած է:

Այս բնոյթի գրականութեան հետ սերտ առնչութիւն ունէր ջատագովութիւնը, որուն նպատակն էր պաշտպանել քրիս-տոնէական վարդապետութիւնը հեթա-նոս կրօնքի եւ աշխարհայեցքի տէր մարդոց քննադատութիւններու դէմ, տե-սակաւորէն հիմնաւորել քրիստոնէու-թիւնը, «Ջատագով» զայն: Այս նպա-տակով թարգմանած են Արիստոյի Աթե-նացիի, Հիպոլիտի, Մեթոսիոս Ողիմ-պացիի, Եպիփան Կիւրացիի եւ ուրիշ-ներու երկերը: Յոյն ջատագովներու միտ-քերը գործածած են նաեւ առաջին հայ մտածողներ Մեսրոպ Մաշտոց եւ Եղիշկ Կողբացի, որոնք իրենց ինքնուրոյն աշ-խատութիւններուն մէջ մեծապէս օգ-տուած են անոնց գործերէն, մէջբերելով անոնց հիմնական տեսակէտները եւ ամ-բողջական հաստատմանը:

Ե. դարու առաջին կէսին կատարուած թարգմանուած գործերը կը խմբուին ըստ հետեւեալ բաժիններու. ծիսական երկեր (պատարագամատոյց, ժամագիրք, եւայլն), հայրախօսական գրականութիւն

մեկնելով Լիւքսէնպուրի կայսրանէն, իր մէկ ճիւղով կը հասնի մինչեւ Ռուսիոյն, որուն դաշխարազարդ պուրակները ժա-մադրավայրերն էին երբեմնի մեր հայ-կական դաշտահանդէսներուն, եւ որ միւս իր ուղիղ գնացքով կ'երկարի շատ աւելի հեռուն՝ մինչեւ Շէվրէօզի հովիտը, վերջ-նակէտ ունենալով Սէն-Ռէմի գիւղաքա-ղաքը:


Իսկ գալով ապահովութեան միջոցնե-րուն, նախատեսուած են անոնք ծայրա-գոյն մանրակրկիտ բժախղորութեամբ, այն աստիճան, որ հազիւ մէկ ծանր արկած կարելի է հաշուել 80 միլիոն ճամ-բորդներու մէջ: Մինչ 1900ին, փապու-ղիին փոխադրած է 13 միլիոն ճամբորդ - ներ, 1971ին անոնց թիւը հասած է 1076 միլիոնի, իսկ 1900ին, եթէ փապուղին 3 միլիոն քիլոմետր գնացք է ունեցած, 1971ին, ան կտրած է իր բոլոր գիծերու շրջագալութեամբ, 170 միլիոն քիլոմետր ճամբայ...:

1969ի վերջերը մեծ յաղթանակ մը կ'արձանագրուէր, երբ արդիականու-թեան կատարեալ առաւելութիւններով օժտուած՝ շրջանային ճեպընթաց ցանցը ծնունդ կ'առնէր, Նասիոնէն մեկնելով, երկարելու համար 24 քիլոմետր հեռու արուարձանը՝ Պուաւի Սէն Լեօն. այդ գիծը ամբողջութեամբ բացօթեայ, կ'անց-նի բազմաթիւ արուարձաններէ: Իսկ

1972ի վերջերն էր որ նոյն ձեւով գիծ մը շրջագալութեան կը յանձնուէր Փապուղի կեդրոնը՝ Օպէո, Սէն Լազարի կից, կա-պելով պատմական արուարձանին՝ Սէն Ժեռմէնի, նոյնպէս 24-25 քիլմ. հեռաւո-րութեամբ, այդ ալ մեծ մասով օդային, ինչ որ ճամբորդութիւնը կը դարձնէ ա-ւելի հաճելի: Այդ երկու գիծերն ալ կը սպասարկեն Մայրաքաղաքէն անմիջապէս արուարձանները, շատ մեծ դերութիւն ընծայելով անոնց բնակիչներուն:

Ծրագրուած է նաեւ հնարաւորութիւնը այդ երկու շրջանային ցանցերը մէկ շուն-չով իրարու կապել, այսինքն Սէն Ժեռ-մէնի արեւմտեան սահմանը ուղղակի գնացքով հաղորդակցութեան դնել հե-ռաւոր միւս արեւելեան դօտին՝ Պուա-ւի Սէն Լեօնէի, ինչ որ իր իրականացու-մով, կարելի է ըսել, լրումին պիտի հաս-ցնէ փարիզեան եւ արուարձանային փո-խազրուցութիւնը...: Առանց անտեսելու պատկառելի թիւը մակերեսի երթեւե-կութիւնը ապահովող հանրակառքերուն, բանաւոր պիտի ըլլար սակայն երբեք-ցնել որ, փապուղիին մեծագոյն մասով, առանցքը կը կազմէ Փապուղի գործնական շարժումին, որ առանց անոր, անվիճե-լիօրէն պիտի դատապարտուէր զգալի անդամալուծման:

ԳԵՂԱՄ ՏԵՐ-ԱՆԴՐԵԱՍԵԱՆ



Ա. ՄԱՍ

Կ Ր Ա Կ Ի Մ Կ Ր Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԴԱԻԱՃԱՆ ՎԱՀԷ ԻՀՍԱՆԻ ԱՀԱԲԿՈՒՄԸ

Այլ համոզուած էին թէ օր մը պիտի ազատին, «կեանքը» ֆրէնկ գինուորնե-րու ձեռքէն — Թուրքերը հինէն ի վեր բոլոր Եւրոպացիները ֆրէնկ բառով կ'ո-րակեն — եւ այն ատեն գիտեն ընելիքնին: Մկաժ էին սպառնալ եւ լուր կը հա-նէին թէ Մուսթաֆա Գեմալ պիտի ար-շաւէ Պոլսոյ վրայ ու ծովը պիտի թափէ անգլիական, ֆրանսական եւ իտալական ուժերը, ինչպէս նաեւ Ամերիկացի ծովա-

յինները, որոնք եւս կը շրջէին քաղաքին մէջ:

Մեր ղեկավար Մարմինները, ինչպէս կը տեղեկանայի չրջնակէս, լրջութեամբ եւ նոյնիսկ մտահոգութեամբ կը հետեւ-ւէին դէպքերուն եւ անգամ մը եւս ան-հրաժեշտ նկատած էին պատրաստ դրտ - նուիլ ու խորհիլ ինքնապաշտպանութեան վրայ, ամէն անակնկալի դէմ:

Պոլսահայութեան թիւը բազմապատ - կուած էր զաղթականներու եւ հազարա-ւոր որբերու շնորհիւ եւ պէտք էր պաշտ-պանութեան տակ աւելի զաղթականներն ու որբանոցները. գէնքի փոխադրութեան գործը վերսկսաւ. պատանեկան տարիքիս ասպարէզը, որ կարճ պահ մը ընդհատ-ուած էր, կրկին բացուեցաւ: Մինչ այդ մէկ քանի անգամ Պոլսոյ շրջա-կայ քաղաքներն ու գիւղերը ընկերացած էի անձնագրահ քաջ Հայուհի մը, որ Թըր-քուհիի պէս ծայտուած, Ֆերահէով եւ քողով, Թուրքերուն տունները մնացած հայ փոքրիկ որբեր հաւաքելու առաքե - լութիւնը ունէր, Պատրիարքարանի հա - ւանութեամբ: Իրեն կ'ընկերանայի Թուրք լակոտի մը պէս, «փիւսիկը» ֆէս մը կրնուէր Սրբուհի եւ քոյրն էր Գարեգին Զաւուդին — Մարգարեան, — որ Առա-նայի մէջ մէկ քանի ընկերներով գիշեր մը փախցուց Հնչակեան քսան յեղափո - խական — մտաւորականներու կախաղան

հանուելուն պատճառ եղող հրէշաւորի պ Արշաւիր Եսեանը եւ ուրիշ մատնիչ մը Զէյթունցի Կարապետը, եւ զանոնք ա-մէնէն անարգ մահուան դողը զրկեց, ար-գարութիւնը տեղը բերելով:

Պատրմայէն վերջին անգամ վերադար-ձած օրս իսկ կանչուեցայ, քանի մը գէն-քերու փոխադրութեան հսկելու համար: Յիշողութեանս մէջ անջնջելի կը մնայ օրը. 1920 Մարտ 3. այդ օրուան դէպքն է որ կազմեց Կրակի Միջադեպին. մին-չեւ այդ օր գէնք չէի գործածած, ոչ ինքնապաշտպանութեան ոչ ալ յարձակ-ման համար: Պատրականութիւնս էր հե-տեւիլ եւ հսկել ընկերոջ մը վրայ: Ծատ քաջ ու յանդուգն եւ վերին աստիճանի վստահելի տղան մըն էր. տխուր եւ լաւ օրերու հին ընկերս, Արշաւիր Փախազ-եան կամ Զենկիլեցի Արշաւիր: Զենքերը թալիմահանէին վար, Տոլապտեղէի ամայի փողոցներէն Բանկալիի ելլելու համար: Տասը քաջ հեռուէն կը հետեւէի իրեն: Երբեմն արագ եւ երբեմն ալ դանդաղ կը յառաջանայինք, փողոցները խորտու - բորդ, տեղ տեղ քարերը ելած ու ասդին անդին փոսերով եւ աղբի ու աղ-տեղութեանց կոյտերով: Խաւարին մէ-ջէն այնտեղերէն անցնիլն ալ դժուար գործ էր. նախընտրած էինք այդ փո-ղոցները, գիտնալով հանդերձ թէ ինչ վտանգաւոր են ու կասկածելի. «քիւլ -

հանպէյ»ներու ամբողջ գունդեր կ'ապ-րէին ու կը զուարճանային այդ վատա - համբաւ ձորին սրճարաններուն, եւ դի-նետուններուն մէջ, եւ քովնտի գոհհնե-րու եւ վատահամբաւ տնակներու մէջ: Ամէն օր հոն դէպք կը պատահէր եւ դի-տէինք թէ յաճախ ոստիկանութիւնն ան-գամ կը փախնի այդ վայրերը այցելել. բայց մենք դիտմամբ նախընտրած էինք այդ ճամբան. կը բաւէր որ համաձայ - նական կամ թուրք ոստիկանի չհանդի-պինք: Ստահակներու, գող ու ոճրագործ-ներու խօսք հասկցնելը աւելի դիւրին էր. նոյնիսկ խօսք չհասկցող գինուորի: Քանի մը հատի հանդիպեցանք, մարդիկը չհե-տաքրքրուեցան նոյնիսկ. մէկ երկուքը պահ մը սանկ երկար մը չափեցին ըն-կերս, բայց չդպան անոր:

Բանկալիի դառնվերին ծայրը կ'երե - ւար արդէն, երբ Արշաւիր, երեւի ամէն վտանգ անցած նկատելով, գէնքերը հա-նեց վերադուրին տակէի եւ ուսը նետեց: Այդ պահու, յանկարծ ստուրը մը ան-դիէն ձայն տուաւ ընկերոջս հրամայելով որ կանգ առնէ: Ոստիկան մը միայն կըր-նար այդ ձեւով հրամայել մենք դեռ մուծն էինք եւ տեսանք երեք ոստիկա-նեք չորրորդի մը ետին կանգնած:

(43 - Կար.)

« ՅԱՌԱՋ » ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Տիգրանիկ Թառախյան մէկ տարեկան «Յառաջ» կը նուիրէ իր հօր՝ Յակոբ Թառախյանի՝ Հայրերու Տօնին առթիւ:

ՓՈԽԱՆ ԾԱՂԵՊԱՍԱԿ

Տիկին Եւա Թէմիսեանի մահուան առթիւ, փոխան ծաղկեպսակի, Տէր եւ Տիկին Գէորգ Գարանֆիլեան 50 Փր. կը նուիրեն Կապ. իմացի կայանին:

(Ստանալ «Յառաջ»էն):

ՇՆՈՐՀԱՎԱԼԻՔ

Կապ. իմացի Մարտէյլ քաղաքի մասնաճիւղը շնորհակալութեամբ ստացած է 40 Փր. Պ. Վարդան Մուրատեանէ Նորոյեանի հոգեհանգստեան առթիւ:

×

Առնուլիլի Կարմէր իմացի մասնաճիւղը շնորհակալութեամբ ստացած է Տիկին Մարի Նոհոյեանի մահուան տխուր առթիւ փոխան ծաղկեպսակի 100 Փր. Պ. Զաւէն Բէլէշեանէ եւ 150 Պ. Օղաման Պերէն:

×

Ուսանողներու Օգն. Մարմինը շնորհակալութեամբ ստացած է Մարտէյլէն, հետեւալ նուէրները:—

Պրնցիներու Մշակ. Միութիւն 200 Փր., Միքայէլ Եսկէր 100, Լեւոն Էքէր 100, Հրաչ Մարտիրոսեան 100, Սարաֆեան 50, Միքայէլ Աւրան 50, Տէր եւ Տիկին Ե. Միքայէլեան 50 եւ Գեղամ Շիր վանեանէ (Մոնթէթալ) 25 տուր:

×

Մարտէյլի Մայր Եկեղեցւոյ Կրօն. Ընկ. վարչութիւնը շնորհակալութեամբ ստացած է Եկեղեցւոյ պայծառութեան համար հետեւեալ նուէրները:—

Պարոններ Կ. իմացի, Յ. Պէրպէրեան, Յ. Քատայիֆեան, Յ. Աւետիքեան, Ա. Մեծիկեան, Ե. Նաճարեան, Պետոյեան, Տիկիններ Լ. Կարապետեան, Լ. Գառարեան, իմացի, Զ. Մարկոսեան, Բ. Տէր-Մարգարեան, Բէլէշեան, Ա. Անդրէասեան, Վ. իմացի, Վ. Թադէոսեան, Վ. Աճէմեան, Զ. Մանուէրեան, Օր. Մ. Սիմոնեան եւ Պր. Լ. Մարիկեան 10ական Փր.: Դոնքաքէքին եւ թաղման արարողութեանց առթիւ Տէր եւ Տիկին իմացիէն, Զ. Ահարոնեան, փոքրիկ Բարդէն Զառուբեան 50ական, Տիկին Ա. Մարգարեան 90, Զ. Մանուէրեան, Բ. Տէր-Մարգարեան, Զ. Մարկոսեան, Ա. Անդրէասեան, Ե. Հաթապեան եւ իմացի 10ական: Տաճար իմացի-եանի հոգեհանգիստին առթիւ Տիկին Ս. իմացի եւ զաւակներ 100, Տէրունեանի եւ Կարապետեանի հոգեհանգիստին Տիկին Ա. Տէրունեան 50, Ա. սարկաւազ Գ. Լուսարարեանի հոգեհանգիստին Տիկին Մ. Լուսարարեան 50, Տէր եւ Տիկին Ս. Թէրզեան 20, Էլիզ Կիւլպաստեանի թաղման առթիւ Տէր եւ Տիկին Ե. Կիւլպաստեան 50, Մայր Եկեղ. Տիկինաց Միութեան, Երանուհի Գրիգորեանի հոգեհանգիստին Տէր եւ Տիկին Վ. Գրիգորեան 50, Միհրան եւ Ժիրայր Հաջադորեաններու հոգեհանգիստին այլ Տիկին Ն. Հաջադորեան 50, Արաքսի Թօփալեանի հոգեհանգիստին Ա. Ազատեան 30, Քարապաճեան, Թէքեան եւ Զէյթունցեան ընտանիք 20ական, Օր. Ա. իմացի 10:

ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍ

Նախաձեռնութեամբ Կապ. իմացի Սեւանի մասնաճիւղին Կիրակի Յունիս 24, ժամը 11էն սկսեալ
10, Rue Lucien Sportice, SEVRAN
(Parc des Sœurs, face à la Gare de Sevrans)
Օթոպիւս 147 Ա. Էլիզա տը Փանթէնէն

Կամ Կառարութեամբ Կառ. տիւ Նոհէն, իմացի Լիւրի-Սեւան
Պիւֆէ — Շամիուրով խորոված — Խաղեր — մրցումներ — Անակնկալներ

ԱՄՍՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍ

Կապոյտ իմացի Պոմոնի մասնաճիւղի զպրոցական հանդէսը 24 Յունիս Կիրակի կէսօրէ վերջ ժամը 3ին Եկեղեցւոյ կից սրահին մէջ:

Աշակերտներու կողմէ հայերէն արտասանութիւն, երգ, պար, շուրջպար, տրամախօսութիւն մը (զաւեշտ) Խաղաղութիւնը, նաեւ կը ներկայացուի կենդանի պատկեր՝ Հայկական Խաղաղութիւնը գեղջկան տարազով:

Ղեկավարութեամբ ուսուցիչ եւ ուսուցչուհի Պր. Արշալուի խորհրդեանի եւ Տիկին Մանուէլ Շամիլեանի:

Միւրով կը հրաւիրուին ծնողներ, բարեկամներ եւ հայ հասարակութիւնը:

ԴՊՐՈՑԱՄԵՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ ՄՐՅԱՆԱԿԱԲԱՇԵՈՒԹԻՒՆ ԵՒ ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍ

Հովանաւորութեամբ

ՍԵՐՈՎԻՔ ՍՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

24 Յունիս Կիրակի օր, ժամը 15ին

Հայկական եւ եւրոպական պարեր

Երգ՝ Պր. ՊԵՏԻԿԵԱՆԷ, ընկերակցութեամբ իր մուսկախումբին

Հաղորդակցութեամբ միջոցներ. — Էլիզա տը Փանթէնէն առնել 147 թիւ օթոպիւսը:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՇԽԱՆՇԱՆԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ

Յրոս. բանակի Նախ. Հայ Կամաւորներու եւ Ռազմիկներու Բարեկամական Միութեան վարչութիւնն ուրախ է յայտնելու թէ՝ ընկ. Սիրուն Զէրաճեան, վարչապետութեան եւ Նախկին Ռազմիկներու Նախարարութեան կողմէ արժանացած է «Օռտտը Նախնալ տիւ Մէնթի» ասպետի աստիճանին, իր 31 տարուան ընկերային գործունէութեան եւ զինուորական ծառայութեան համար», իրեն փոխ-ատենապետ «Ազատ Յրան» սպայինքու Ընկերակցութեան» Պուշ տիւ Ռոնի մասնաճիւղին:

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ (ԿՆԻՔ)

ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍ

ԿՐԸՆՈՊԼԻ ՄԷՋ

Կազմակերպուած Կապ. իմացի մասնաճիւղին կողմէ՝ Սէսինէի ճամբուն վրայ, Շաթօ տը Պոնըկառի գեղատեսիլ պուրակին՝ պաղ ջուրին մօտ:

Գեղարուեստական խնամուած բաժին զպրոցի աշակերտութեան եւ կարող ուժերու կողմէ: Բարձրախօս եւ հաճելի անակնկալներ:

Ճոխ պիւֆէ, պատրաստուած իմացու հինքու կողմէ:

Յունիս 24 Կիրակի ամբողջ օրը:

Անճրեւի պարագային կը յետաձգուի Յունիս մէկի Կիրակին:

ՊԱՐԳԵՒԱԲԱՇԵՈՒԹԻՒՆ

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Տեղի կ'ունենայ Շաբաթ Յունիս 23ին

— Առաւօտեան ժամը 11ին հանդիսաւոր պատարագ վարժարանին Մատրան մէջ, աշակերտներու երգեցողութեամբ:

— Ժամը 13ին ընտանեկան ճաշ:

— Ժամը 15ին հանդէս պարզեարար խորհրդի, երգ, արտասանութիւններ, հաշուետուութիւն:

— Ճաշպիւր 25 Փրանք

Հեռաձայնել 027-18-28

ՓԱՐԻՋԻ Ս. ՅՈՎՀ. ՄԿՐՏԻՉ

Այս Կիրակի, Յունիս 24, տօն է Կաթողիկէ Ս. Էջմիածնի:

Ժամը 10ին Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ Մայր Եկեղեցւոյ մէջ կը մատուցուի բաղմամբ պատարագ եւ կը տրուի աւուր պատշաճի քարոզ: Պատարագի ընթացքին կը կատարուի մասնաւոր մաղթանք Ս. Էջմիածնի:

Կը հրաւիրուի ժողովուրդը մասնակցելու պատարագին եւ աղօթելու Հայաստանեայց Առաք. Եկեղեցւոյ անսասանութեան համար:

ՇԱԽԼԻ Ս. ԳՐ. ԼՈՒՍԱՌՈՐԻՉ

Ե Կ Ե Ղ Ե Ց Ի

Այս Կիրակի պատարագ կը մատուցուի:

ՀԱՃԵԼԻ ԶԲՕՍԱՊՏՈՅՑ ՄԸ

ԹՈՒՔԻՒ ԾՈՎԱՓԸ

Կազմակերպուած Փարիզի Էստան Սաւուց Միութեան կողմէ, Յունիս 14, Շաբաթ առաւօտեան ժամը 7ին, հաւաքուիլ Կառ. տիւ Նոհ, Քաթէ Քիւրվիէօրի առջեւ:

Վերադարձ ժամը 23ի առեւտները:

Էստանական հաճելի մթնոլորտ: Իր մասնակցութիւնը կը բերէ Օր. Անահիտ Սիւսեան ձեռնադաշնակի ընկերակցու թեամբ: Պոստ օթորոտով ծովեզերեայ շրջանները:

Մարքերու մասնակցութիւն 30 Փր. օթորոտով, առանց ճաշի:

Կը խնդրուի կարելի եղածին չափ շուտ արաձայնել:

Հեռ. 842-08-57, Պր. Ասլանեանի

Imprimé sur les Presses

DU JOURNAL « HARATCH »

83, Rue d'Hauteville, Paris (10e)

ԱՄԱՌԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Pension complète avec excursions quotidiennes

Բնակութիւն Ա. կարգ — ամբողջական փանսիոն, ամէնօրեայ պոստներ

ՅՈՒԼԻՍ 14 ԷՆ 28

ԳԻՆ ՓԱՐԻՋԷՆ ՓԱՐԻՉ

2650 ՓՐԱՆՔ

Ուղղակի քաղցք Փարիզ-Երևան-Փարիզ

ՅՈՒԼԻՍ 21ԷՆ ՕԳՈՍՏՈՍ 4

ՕԳՈՍՏՈՍ 5ԷՆ 22

16էն 35 տարեկան երիտասարդներու համար յատուկ գին՝ 2100 ֆր.

Դիմել գրասենեակ՝ մանրամասնութեանց եւ պայմաններու համար:

ՓԱՐԻՋԻ ՄԷՋ

SONIA CORMYANTZ

TRIM VOYAGE

MONDOTOURS

2, Rue de Sèze — PARIS (9e)

Téléphone : 742-57-84 et 073-30-64

de 9 h. 30 à 18 h. — tous les jours

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Լիոնէն մեկնումը օդանավով

VOTRE AGENCE DE VOYAGES ARMENIENNE

agence de voyages SEVAN

50, Cours de la Liberté — LYON — Téléph. : 60-13-66

de 10 h. à 19 h. — tous les jours

ՄԱՐՍԷԼԻ ՄԷՋ

JACQUES CHELELEKIAN

VOYAGES WASTEELS

87, La Canebière, Marseille 1er Téléphone : 62-03-44 et 64-09-49

de 15 h. à 19 h. — tous les jours

Passez vos vacances

en caravanes pliantes ou rigides



la bohème rigide 310 • 360 • 395 • 425 • 525
Cinq modèles standing. 10 versions. L'équipement de chacun vous étonnera par le nombre des accessoires et les solutions rationnelles que nous avons donné au problème confort. Ce sont vraiment des caravanes pour caravanners difficiles.

LES VACANCES C'EST

la bohème

UNE MARQUE DE

RENOMMÉE EUROPEENNE

Carrefour de l'Éléphant PALAISEAU

T.928.03.88


N.20 Saint-Germain-les-ARPAJON

T.490.17.79

super thomlac

THOMASSIAN Frères

NEUF-OCCASION-ACCESSOIRES-POSE D'ATELAGES



la bohème pliante • MAXI • MINI • PRIMA
Trois caravanes pliantes, tractables par les plus "petites cylindrées". Leur coque est celle d'une caravane rigide (double paroi avec isolation totale, toit couvert en polyester). A l'étape, un vaste séjour encadré par deux grandes chambres séparées.

ՕՐՈՒԱՆ ՊՈՍՏԻՆ

ԲՈՒՀԵՒԻԿԵԱՆ
ՄԻՆԸՆԴՐՈՒԹԵԱՆ
ԴԵՄ

— 0 —

Երեւանի դարձած է հայ մշակույթի կեդրոն, փոխարինելով Պոլիսն ու Թիֆլիսը։ Տպագրական մեքենան կը շարունակէ բանիլ աշտեղ անդադար։

Դժբախտութիւն է սակայն, որ սփիւռքը — ստուար մեծամասնութեամբ — անհաղորդ կը մնայ հայրենիքի մշակույթի ճիւղերուն, մայրենի լեզուի ազատման պատճառաւ։

Յորմէհեմէ Հայաստանի նոր վարիչ — ներքին գործերիցին «Արեղեան» կամ «Բուրձնիկեան» կոչուած սխալագրութիւնը, հորեկան կապը թուլցաւ արտասահմանի Հայութեան եւ հայրենիքի միջեւ։

Արդէն ունէինք երկու լեզու, — արեւելահայերէնն ու արեւմտահայերէնը, — ունեցանք երկու ուղղագրութիւն, — դասականն ու խորհրդայինը։

Հայաստանի իշխանութիւնները կը յաժառի պահել վերջինը, որ աններելի մեղանշում մըն է մեր ոսկեդարեան մեծապահին դէմ։

Ինչպէս կարելի է գտնել բառերու արմատները բոլշեւիկեան սխալագրութեամբ, որ աւելորդ դերերու յաւելումով ծանախ անձնանշելի դարձուցած է շատ մը նոյնիսկ սովորական բառեր։

Որքան իրաւունք ունէին նախախորհրդային շրջանէն արդէն իսկ լեզուա-դէտի արդար համբաւին տիրացած հաճախորդներէն երկու տիպաները՝ Հրաչեայ Աճառեան եւ Ստեփանոս Մարտիրոսեան, որոնք իրենց Արմատական եւ Բացարձակայն բառարաններով բառարաններու հրատարակութեան համար պայման դրին Մետրոպոլիտանի դասական ուղղագրութիւնը։

Երեւանի վարիչները մէկ անգամի համար այդ «չնորհ» ըրին։

Սակայն անկէ ի վեր լոյս տեսած բոլոր բառարանները, — մէջն ըլլալով Ուղղագրական բառարանը, — ինչպէս ամէն կարգի դրբեր ու թերթեր, կը հրատարակուին բոլշեւիկեան սխալագրութեամբ, որ արդէն կէս դարու անցեալ ունի իր ետեւ։

Սփիւռքահայութեան հետ Մշակութային կապի Կոմիտէն ի զուր կը փորձէ սերտացնել մշակութային — հոգեկան — յարաբերութիւնները հայրենիքի եւ արտասահմանի Հայութեան միջեւ, երբեք անի պարբերական հրատարակութիւն — ներն ու ամէն կարգի դրբերը զրկելով դասական հասցէներու։

Շատ փոքր թիւ մը կը կազմեն անոնք, որ քաջութիւնը կ'ունենան կարգաւոր Հայաստան տպուած թերթերն ու գրքերը։ Շատ ափսոս։ Որովհետեւ արժէքավոր գրքեր լոյս կը տեսնեն Երեւանի մէջ։ Փառալի է դիտել տալ, որ անոնց երեսը նալող չկայ՝ ուղղագրութեան պատճառաւ։

Դժբախտութիւն է հաստատել նաեւ, որ հայերը առհասարակ չեն հետաքրքրուիր նոյնիսկ պատմական — բանասիրական լուրջ եւ յաճախ թանկարժէք հրատարակութիւններով։ Սակաւաթիւ օտար հասցէներ, մանաւանդ Եւրոպայի ու Ամերիկայի կարգ մը օտար համալսարաններն ու մեծ մատենադարաններն են միայն նման գրքերու յաճախորդները։

Ողբալի, բայց դառն իրականութիւն։ Հայաստանէն դուրս Մոսկուայի դաստիարակական ու քաղաքական ազդեցութեան ենթակայ երկու արբանեակ երբեք

ՕՐՈՒԱՆ ԴԵՊՔԵՐԸ

ՊՐԱՆՏ-ՓՈՆՓԻՏՈՒ

ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԿԸ ՄԵԱՆ

— 0 —

Ֆրանքեւերմանական խօսակցութիւնները անգամ մը եւս երեւան հանեցին երկու երկիրներու խոր տարակարծութիւնները հիմնական հարցերու շուրջ։ Եւրոպական պաշտպանութեան եւ ապահովութեան նկատմամբ Գերմաններու տեսաւ — կէտն այն է թէ պէտք է շատ յստակ կերպով ճշդել պաշտպանութեան չըջալիծը։ Պէ՞տք է գոհանալ միայն Հասարակաց Շուկայի անդամ Պետութիւններով, թէ ոչ կապել նաեւ Յունաստանն ու Թուրքիան, որ կը շահագրգռուին այս խնդրով։ Գերմանացիք շատ համոզուած չեն որ անհրաժեշտ եւ օգտակար ըլլայ նոր կազմակերպութիւն մը մէջտեղ դնել երբ Ատլանտեան կազմակերպութեան մէջ կայ արդէն «Եւրոխումբը», թէ Եւրոպայի Եւրոպայի է այդտեղ։ Ուրեմն կը բաւէ որ Ֆրանսա մաս կազմէ «Եւրոխումբին» որ պէտքի հարցը լուծուի։ Ընդհակառակն, Արտաքին նախարար Ժոպէր, առջի օր, Աղբ. Ժողովին առջեւ իսկ պարզած էր Ֆրանսական դիրքը։ Ֆրանսա կ'ուզէ որոշ չափով իր վերապահութիւնը պահել Ատլանտեան Ուխտի նկատմամբ։ Նոյնն է պարագան երբ Ֆրանսա կ'ուզէ երկկողմանի գործակցութիւն ապահովել Գերմանիոյ հետ եւ այս վերջինը կ'առարկէ թէ ներթափան իր միջոցները թոյլ չեն տար որ այդ մարդին մէջ զարկ տայ Ֆրանսայի հետ գործակցութեան երբ արդէն նոյն նպատակին համար կը ծախսէ Եւրոխումբին մէջ։

Ի վերջոյ յստակ եղած է թէ այս խօսակցութիւնները շինարար չեն եղած թէեւ երկու ղեկավարները չեղտած են անկեղծութեամբ թէ Եւրոպական Միութիւն մը պիտի իրագործուի 80ական թրականներուն։

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՒՈԿ

Լիժ Ժամացոյցի գործատան վիճակը նոյնը կը մնայ։ Մանօթ է որ գործատան բանուորները անուղղակի լուր առած էին

Լիբեր, — Ռումանիա եւ Պուլկարիա — եւս որդեգրեցին բոլշեւիկեան ուղղագրութիւնը երկրորդ աշխարհամարտի վաճառորդները։

Երեւանի օրինակը կապկեցին պալլանեան այդ երկու երկիրներու ափ մը ստրկամիտ համայնավարները, որոնք ազգային իշխանութեան զուլս էին եկեր անիշխանական այդ շարաշուք օրերուն եւ բոլորովին անյուսալի կերպով իրենց տիրացած գիրքերը պահելու եւ կրթիւնի գործակալներուն աչքը մտնելու համար կը գիմէին լրտեսութեան եւ ամէնէն ստորին արարքներուն։

Եւ սակայն Արեւմուտքի ազատ աստ — ղերուն տակ ապրող Հայութիւնը անտեղիտալիօրէն տէր ու պաշտպան կը կանգնի մեծապահանջին եւ անոր ոսկեղինիկ դասական ուղղագրութեան, իբրեւ աւանդապահ ազգի մեծագոյն հարստութեան, որ Ս. Մետրոպէն ու Ոսկեդարէն փոխանցուած է մեզի։

ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

«Քիւրտերը պահուստ են
վերսկսելու կռիւը»

— 0 —

Երեք տարի առաջ համաձայնութեամբ մը վերջ գտան քիւրտ-իւրաքեան կռիւները։ Պաղտատ ընդունեցաւ խաղաղութեան դաշնագիր մը կնքել, որ կը խոստանար Քիւրտերուն շնորհել ներքին ինքնավարութիւն։

Զօր Մոլլա Պարզանի, Քիւրտերու առաջնորդը եկած է այն համոզումին, թէ Պաղտատ որոշած է չյարգել իր խոստումներն ու պարտաւորութիւնները։ Այս միտքը յայտնած է ամերիկացի լրագրող ձիմ Հոկլէյտի, այս վերջնոյն հետ իր ունեցած խօսակցութեան ընթացքին։ «Այս Արարները կը սիրեն ոչ-պատերազմ եւ ոչ-խաղաղութիւն քաղաքականութեան հետեւիլ ամենուրեք։ Ասոր մէկ սպա — ցոյցը կը գտնենք հոս, ուր խաղաղութեան համաձայնագրին ներքեւ ծածկուած կը պատերազմին մեր դէմ»։ Եօթնասու — մեայ առաջնորդը չէ ծածկած իր մտա — ծումը ամերիկացի լրագրողին, յայտա — րարելով անոր, թէ քրտական ազգայնականութեան եւ Պաղտատի արար աղ — զայնականութեան միջեւ բախումը անխուսափելի կը դառնայ։ Արդարեւ, 1970ի համաձայնագիրը, որով կը խոստաց — ուէր Քիւրտերուն ինքնավարութիւն տալ, ի դերեւ ելած է եւ Քիւրտերը վերստին զօրակոչի կ'ենթարկեն իրենց ուժերը։

Ամերիկացի լրագրողը տեսած է հակօդային թնդանօթիքը քրտական վրանքներու շուրջ, իսկ մօտակայ լեռներու վրայ՝ զօրակոչի ենթարկուած արձակա — վէներ, որոնք փորձ կը կատարեն ուսու — կան հրետանիներու վրայ, զբաւուած իրաւեցիներէն 1970ին։

Զօրավարը ամերիկեան օժանդակու — թեան մը օգտակարութիւնը մատնանշած է լրագրողին։ «Ամերիկա կրնայ օժանդակել այս խեղճ եւ ճնշուած ժողովուրդին։ Այդ օժանդակութիւնը կրնայ քաղաքական, մարդասիրական կամ զինուորական ըլլալ՝ բացառաւոր կամ գաղտնի»։ Պարզանի նկատել տալէ ետք, թէ ինք

—————

Թէ ի մօտոյ անձնակազմի սեղմումներ պիտի ըլլան, բազմաթիւ պաշտօնավոր — կումներ, եւ թէ Յունիս 10էն ալլեւս ապահովուած չեն ոչ միայն աշխատավարձերու վճարումները այլեւ վճարեալ արձակուրդները։ Այսպէս է որ կացութիւնը կը վատթարանայ ու աշխատողները գործադուլի դիմելէ դատ, նաեւ կը սկսին ծախել, շատ աւելի աման գործատան պատրաստ ունեցած ժամացոյցներն ու գործիքները, նոյնիսկ ապսպրանքներ կ'առնեն։ Յիշենք որ Լիբի (Ֆրէյտ Լիբի) ժամացոյցի մեծագոյն գործատուներն է եւ ամէն ոք կ'անիծէ գործատէրը որ 1971ին բոլորովին քաշուած է, արդէն նախապէս իր բաժնեթուղթերը մաս-մաս ծախելով գուիցեղական էպօշ Հօլթիմիլին։ Ներկայիս անօրէնութիւնը որոշած է իր հաշուէ — կշիռը տալ, այսինքն սնանկութիւն յայտարարել մինչ բանթողները 65 հազար ժամացոյց պահած են իբրեւ երաշխիք։

ԱՆԳԱՐԱՅԻ ԲԱՆԱԿԻՆ ԻՆՏԵՐՎՅՈՒՄ
Անգար արեւելափակեանքը կրաւորական դի — մագրութեան ձեռնարկած են բողոքելու համար Աղբ. Ժողովի որոշումին դէմ, որու հետեւանքով օրակարգէն ընդունեցաւ ընդհանուր ներման օրինագիծի ընդուն — թիւնը։ Բանտարկեալները մերժած են ճաշել, իսկ անոնք որոնք կը դատուին, դատարան չեն գացած։

դէմ պիտի ըլլար Քէրքիւքի քարիւղի ազգայնացումին, եթէ Պաղտատ իր կարծիքը ուղած ըլլար, աւելցուցած է՝ «Մենք պատրաստ ենք կատարել այն ինչ ամերիկեան քաղաքականութեան կրնայ նպաստել այս շրջանին մէջ, եթէ Ուա — շինկթըն պաշտպանէ մեզ դալլերէն։ Եթէ ամերիկեան օժանդակութիւնը մեծ ըլլայ, կրնանք մեր հակակռիւն տակ առնել Քէր — քիւքի քարիւղահանքերը եւ զանոնք օղ — տագործելու համար յանձնել ամերիկ — եան ընկերութեան մը։ Քարիւղահանքերը Քիւրտիստանի մէջ կը գտնուին եւ անոնց ազգայնացումը Քիւրտերու դէմ ուղղուած քայլ մըն էր»։

«Մենք՝ Մերձ. Արեւելքի մէջ ազգակ — մըն ենք», չեղտած է Պարզանի։ Քիւրտերը գործնականօրէն դէմ կը կենան ուս — սական ազդեցութեան տարածումին եւ կը հարկադրեն իրաքի ուժերուն մեծ մասին կեղծոնանալ Քիւրտիստանի մէջ։ Այսպէս, ըստ քիւրտ առաջնորդին, անոնք իրենց ուժերը կրնային գործածել Պարսկաստանի, Գուլէյթի կամ Թերեւս Իսրայէլի դէմ։

Օսմանեան կայսրութեան անկումէն ետք, կը զրէ լրագրողը, Քիւրտերուն ինքնավար հայրենիք մը տալու խոստումը մոռացութեան տրուեցաւ մեծ Պետութիւններու կողմէ։ Թուրքիա ճգմեց քրտական ըմբոստութիւնները եւ կը շարունակէ մերժել քաղաքական եւ մշակու — թային ինքնավարութիւն շնորհել քիւրտ փոքրամասնութեան, որ հինգ միլիոնի կը հասնի Թուրքիոյ մէջ։ Պարսկաստան եւս սեղմումներու ենթարկած է Քիւրտերը։

Որով Զօր. Պարզանի կ'ընդունի, թէ Քիւրտերու հին երազը՝ մեծ Քիւրտիստան մը հիմնել, այլեւս մեռած է։ Իր ճգնումն է, կըսէ ան, միայն Իրաքի մէջ հիմնել Քիւրտիստան մը, քանի որ տեղ — տայ արար տկար կառավարութիւնը ի վիճակի չէ իր գրացիներուն օրինակին հետեւելու եւ ճգմելու քիւրտ ազգայնա — կանութիւնը։

Իրաքի Քիւրտիստանը դեղեցիկ երկիր մըն է, սակայն աղքատ եւ յետամնաց է։ Իրաքի բանակը հաստատուած է հովիտի քրտական քաղաքներու մէջ, ուր, Քիւրտերու վիշակութեամբ, պատրաստութիւն — ներ կը տեսնէ գործողութեանց ձեռնարկելու դալ տարի Մարտին, երբ վերջ կը գտնէ խոստացուած ինքնավարութեան պայմանաժամը։

Քիւրտերը Պաղտատի ներկայացուցած են իրենց տեսակէտները Քիւրտիստանի ինքնավարութեան շուրջ։ Համաձայն քիւրտ քաղաքական գործիչներու՝ Մահ — մուտ Օսմանի եւ Հապիպ Քարիմի, անոնք առաջարկած են, որ Քիւրտիստանի համար խորհրդարան մը ընտրուի, որ պիտի ունենայ վեքայի սահմանափակ իրաւասութիւններ կեդրոնական կառա — վարութեան կարգ մը որոշումներուն վրայ։

Զօր. Պարզանի յոյս չունի, թէ Պաղ — տատ կ'ընդունի քրտական պահանջները։ Պատրաստ է բանակցութիւնները շարունակելու, որպէսզի ժամանակ չահի իր ուժերը պատրաստելու։

Զօր. Պարզանի ընդունեցաւ, թէ իր ու — ժերը քաղաքական եւ զինուորական օ — ժանդակութիւն կը ստանան Պարսկաստանէն, բայց չուզեց մանրամասնութիւն — ներ տալ, կը զրէ ամերիկացի լրագրողը։ Փաստեր կան, կ'աւելցնէ Ամերիկացին, թէ Քիւրտերը զինուորական եւ գրումա — կան որոշ օժանդակութիւն կը ստանան Իսրայէլէ։ Երբ այս ուղղութեամբ հար — ցում ուղղած է ան, Պարզանի պատաս — խանած է՝ «բաներ կան, որ կրնան ճիշդ ըլլալ, բայց լաւ է, որ այդ մասին հրա — պարակաւ չխօսուի»։

Թ. Ա. Թ.

«Հերբլտ Թրիպլին»

ՆԱՄԱԿ՝ ՅՈՎՀ. ԺԻՐԱԶԻՆ

ՈՍԲ. — Պէյրուքի «Նայիրի» շաբաթաբերթին Մարտ 11ի քիւն, գոր նոր ստացանք, կ'արտատպենք Երրորդի ուղղութեամբ այս նամակը, գոր ստորագրած է քերթին խմբագիրը՝ Անդրանիկ Մատուկեան: Ուրախ եմք որ ի վերջոյ մէկը հա՛մարահայրքիւն ունեցաւ բանասէտը այս նշմարաւորիւննորը, որոնց համար Երրորդ պէտք է երախտապարտ ըլլայ, ինչպէս գոհ պէտք է ըլլան բոլոր անոնք որոնք անկեղծ գնահատողներն են Երրորդի բանաստեղծութեան, ինչպէս՝ մենք:

×

Քեզ ոչ քէ յոյսի ընդունային խօսքի՝
Դաշտի ծաղիկներ կ'ուզէի քեզ տալ,
Քեզ ոչ քէ դաշտի քօզնոյ ծաղիկներ՝
Նրկնի աստղեր կ'ուզէի քեզ տալ...

ՅՈՎՀ. ԺԻՐԱԶ

Սիրելի Երրորդ,

Տասը տարի առաջ, հաճելի գրոյց մը ունեցանք միասին: Աւելի ետքը, բազմաթիւանդամներ բազմաթիւ առիթներով եղանք միատեղ, բայց այս նամակը, պահելու համար իրեն տուն տուող սահմաններուն մէջ, լաւ է որ յիշեմ յատկապէս այդ միակ հանդիպումը, որ կազմեց նաեւ քեզի հետ ծանօթանալու առաջին օրը: Անկէ առաջ, հակառակ երկու-երեք անգամ Հայաստան գտնուելուս, պատահութիւն չէր եղած որ անձնապէս ծանօնանք իրար: Այդ յիշատակելի հանդիպումին մեր գրոյցը նշանակալից եղաւ մասնաւոր անով, որ ուրիշներ եւս գտնուեցան մեզի հետ: Եւ, ինչպէս գիտես, գրողներու միջեւ գլուխ գլխի գրոյցները որքան ալ շահեկան ըլլան — իսկ քեզի հետ առաւել եւս — պատմութիւն պարագային քիչ անգամ կը կրեն վաւերականութեան դրոշմը, որքան երբ տեղի ունեցած ըլլան վկաներու ներկայութեան, եւ վկաններն ալ դեռ ապրին...

Ուրեմն, այդ օր, ժամադրուած էի երկու գրող ընկերներու հետ, Երեւան, Ներսէս պանդուխտին ճաշարանը, երեքով անցնելու համար գիշերը, — բանաստեղծ Հրաչեայ Յովհաննէսեան եւ քննադատ Հրանտ Թամրազեան: Ես, քիչ մը ուշացած էի, ու երբ տեղ հասայ, ճաշարանին մէկ անկիւնը, սեղանի մը շուրջ, Հրանտին եւ Հրաչեային հետ, պատահական հանդիպումով, նստած էր նաեւ երրորդ մարդ մը: Այդ երրորդը դուն էիր: Երբ Երրորդ գիշերը: Դուն բան մը բոսած էիր, անոնք տարակարծիք էին քեզի, եւ յաճախակի աղղարարութիւնները իրենց — «նորից չաւրեմք» — մտածել կուտային թէ խռովեալ չըլանէ մը ետք հայտնութեան առաջին սեղանին էր ձեր միջեւ, հայտնութիւն՝ որ այնքան ալ ապահով կարելի չէր համարել, հետեւեցնելով բոլորքած տրամադրութիւններէդ եւ միաներուն անգիծող կեցուածքէն:

Իմ յայտնուելու ըսել տուաւ քեզի.

— Այ, Ծառուկեանին հարցնենք, թող նա ասի:

Հրանտը եւ Հրաչեան հայտարար ժպիտով համաձայն գտնուեցան, եւ դուն հարց գրիւր յայպէս.

— Ծառուկեան, ահա թէ ինչ: Ես սըրանց ասում եմ՝ Նարեկացի եւ Երրորդ: Իսկ սրանք չեն ընդունում: Դո՞ւ ինչ կ'ասես:

Կացութիւնը պարզ էր, ու թէեւ Հրաչեային առնական դիմագիծերը անշարժ կը մնային իրենց մերժողական արտայայտութեամբը, բայց Հրանտին հեղձօրէն պնդումն աչքերը ցոյց կուտային երբի ճամբան: Այնպէս որ, ըսի.

— Ես բացարձակապէս քեզի համաձայն եմ, Երրորդ, բայց այդտեղ հարց մը կը ծագի: Նարեկացիին եւ Երրորդին միջեւ ամբողջ հաղարամեակ մը կայ: Եթէ այդքան երկար ժամանակաշրջանի մը ընթացքին Երրորդի գուրս ուրիշ բանաստեղծ տուած չըլլանք, պատուարներ չէ մեզի համար: Նարեկացի եւ Երրորդ — այո: Բայց ըստ իս, չորսը քանի մը արբանեակներ պէտք են քեզի, որպէսզի հայ ժողովուրդին ստեղծագործական կարողութիւնները բոլորովին ամուլ չհամարուին...

— Տեսա՞ք խելօք մարդը, գոչեցիր յաղթական, դառնալով Հրանտին եւ Հրաչեային:

Երջանիկ էիր: Չուշացաւ նաեւ վարձատրութիւնս.

— Ծառուկեան, էստեղ՝ ես, էստեղ՝ դուն...

Վհանձնութիւն էր անշուշտ քու կողմէդ գիշիւ, որ քանի մը փոքրաւորներ հանդուրժես, գոնէ Սփիւռքի մէջ, նուիրագործելէ ետք բացարձակ վհանգութիւնը Հայաստանի վրայ, ու մենք երբեք այնպէս մը ըրինք, որ ապերախ չըլլանք եւ սեղանը ընթանայ որքան կարելի է հաշտ ու զուարթ:

Յուշեր պատմելու համար չէ որ կը յիշեմ այս գրուածը, սիրելի Երրորդ, այլ պարզապէս գտնելու համար հարգաստ այն միջոցը, ուրիշ կ'ուզեմ որ հասնի խօսքս քեզի: Եւ անմիջապէս պէտք է աւելցնեմ, թէ դուն, ինծի համար, Հայաստանի ամէնէն տաղանդաւոր, ամէնէն փայլուն, ամէնէն սիրուած բանաստեղծներէն մէկն ես: Նարեկացիին քով դնելու պէտք չունինք, եւ ոչ ալ պայման է որ անտեսենք մեծ կամ պզտիկ ուրիշ բանաստեղծներ, ընդունելու համար Երրորդի մը անվիճելի տաղանդը: Բայց դուն որ, սիրելի Երրորդ, այնքան գեղեցիկ բանաստեղծութիւններ տուած ես հայ գրականութեան, ջերմօրէն սիրուած ես ժողովուրդէն, գնահատուած մտաւորականութենէն եւ գուրգուրանքով հոգացուած պետութենէն՝ ահա տասը, տասնհինգ տարիներէ ի վեր առնուած ես յորձանապատի մը մէջ, որ ոչինչ ունի բարեկան: Երացուցիչ ասողի մը պէս որ բարձրերէն, չողորձակ, առարկան էր մեր մնայուն հիացումին ու վայելքին, որ հետզհետէ կը մերձենայ միզամածային անորոշութիւններու, անոնց հետ չփոթուելու աստիճան՝ այլեւս լրջօրէն սկսած ես մտահոգել բարեկամներդ եւ հիացողներդ, սիրելի Երրորդ:

Դուն, արեւով խոնձուած լեռի ժայռի մը կողքին ցայտող լեռնային պաղուկ աղբւրն էիր եւ կը հոսէիր վիճիւ, գուլայ, կարկաչուն: Ակը չէ ցամքած, — ծնեալ բանաստեղծը երբեք չի ցամքիր — բայց հոսանքն է որ իր թաւալքին մէջ հուն կը փոխէ, կը տարողնուի, անբացատրելի ճապարկումներով: Անթիւ անհամար բանաստեղծութիւններ կը դրկեն Սփիւռքի մամուլին ծրարներով, ճամբորդներով: Ձկայ խմբագրատուն մը որ իր գրողներուն մէջ չունենայ քեզի կարեւոր պահեստ մը ոտանաւորներու, պատգամ-նամակներու, այլաբանական մտքերու, եւ դարձեալ ոտանաւորներ, տաղաչափեալ գրոյցներ, յանդաւոր հէքեաթներ: Պատահաբար պաշար մըն ու մենք ունինք: Ի՞նչ ես ասում, սիրելի Երրորդ: Ժամանցի համար մրոտուած էջեր, պարապ վախտի խաղալի՞կ: Բայց ինչո՞ւ մեքենագրուած այդ էջերուն տակ ձեռագրովդ կը ստորագրես Յովհ. Երրորդ, փնտռուած եւ սիրելի անուն մը, որ այդպէս ալ պէտք է մնայ: Թերթերը կը հրատարակեն այդ հորձուած «Երրորդները» — մեր թերթերը կ'ունեն իսկ իր տղեն — կիսադարգէտ թերթցոյցին աչքը կը դահլան պահ մը ի տես շրացուցիչ այդ անունին, բայց հասկըցողները եւ քեզ սիրողները կը տխրին, իրապէս, կը տխրին, սիրելի Երրորդ, ճիշդ այնպէս ինչպէս որ իշխանական պատմութեամբով մեր ճանչցած մէկ անձը եթէ յանկարծ օր մը տեսնէինք ցնցոտիներու մէջ:

Պէտք է վերջ տալ այս վիճակին: Հարկ է ցնցուիլ, վերածուելու, վերածնելու: Վաւերական բանաստեղծներուն բոլոր էջերը անպայման դուրս-գործոցներ չեն, կ'ըլլան երբեմն եւ տկար գործեր, անյաջողութիւններ, գիշին միշտ նոյն բարկութիւնը լայն հնձանը չի խաբեր, ու կը հասկընանք թէ կարասը թերեւս քիչ մը կանաչ չի լայնացած է, կամ գուցէ լեցուած էր քիչ մը անփոյթ եւ անխնամ: Բայց չէ պատահած, չի կրնար պատահիլ որ

ՀՆԱԳՈՅՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԱՆՈՆՑ ՊԱՏՄԱՆՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Գ.

Անհրաժեշտ է յիշատակել յունարան գրողի գործունէութեան մէկ կարեւոր առանձնայատկութիւնը, որ կը բացատրէ անոնց դերն ու բարբար ազդեցութիւնը հայ գիտութեան եւ, յատկապէս, փիլիսոփայութեան յետադաւ զարգացումին վրայ: Արդարեւ, յունաբանները լաւ ծանօթ ըլլալով հին աշխարհի գիտութեան, ի տարբերութիւն աւագ սերունդի թարգմանողներուն եւ գործներուն, իրենց գործերու ընտրութեան մէջ կը կիրարկեն նոր սկզբունքներ: Անոնք ծանօթ էին հին աշխարհի մշակած եւ միջնադարու սկիզբները ընդունուած գիտութիւններու դասաւորութեան: Ըստ այդ դասաւորութեան, մարդկային գիտութիւնը կը բաժնուէր բանական եւ գործնական արուեստներու՝ իրենց հին առումով: Բանական արուեստը, իր կարգին, կը բաժնուէր քերականութեան, ճարտասանութեան եւ

փիլիսոփայութեան (տրամաբանութիւն) : Յետադային որոշ փոփոխութիւններով բանական արուեստին այս մասը դարձաւ միջնադարեան կրթութեան եռեանկուն հիւսիս: Փիլիսոփայութիւնը նոյնպէս կը բաժնուէր երկու մասի՝ տեսական փիլիսոփայութիւն, ուսողագիտութիւնը եւ բնագիտութիւնը (յետադային՝ աստղաբանութիւնը): Ուսողագիտութիւնն ալ կը բաժնուէր չորս բաղկացուցիչ մասերու՝ թուաբանութիւն, երաժշտութիւն, երկրաչափութիւն եւ աստղաբանութիւն, որմէ մէջտեղ եկաւ միջնադարեան կրթութեան այսպէս կոչուած քառեանկը:

Համադրելով այս հին դասաւորումը յունարան գրողի գործերուն հետ, մենք կը տեսնենք, որ յունարանները հետեւողական ձեւով կիրարկած են դայն իրենց գործունէութեան ընթացքին: Եւ հիմա՝

ուե՛ք այդետէր — ո'ւե՛ք բանաստեղծ — գիտակցարար սեղան բերէ թիւում գրեցին:

Այս նամակը, անշուշտ, գէշ առաւելաւ մը պիտի ըլլայ քեզի, սիրելի Երրորդ, ինչպէս տաժանելի ստիպողութիւն մը կազմեց, գրողին համար: Բայց եղբայրական պարտք մըն է որ պէ՛տք է կատարեմ: Մի՛ հաւատար կեղծ ու պատիւ գովեստներուն, չորթներուն, չողմանքի նամակներուն: Բանաստեղծի պայծառ ճակատիդ դէմ ես բարձրաձայն կ'ըսեմ այն ամէնը, ինչ որ ուրիշներ չարախինդ ժպիտով կը մրմնջեն ետեւէդ: Միշտ սիրած եմ քեզ: Ո՞վ կրնայ չսիրել Յովհաննէս Երրորդ բանաստեղծը: «Նայիրի» Ամառքին բոլոր թիւերը վկայ են: Առաջին իսկ օրէն տըպած եմ այնտեղ բանաստեղծութիւնները սիրով, հիացումով: Սփիւռքի մէջ Երրորդ անունը ամէնէն շատ արձագանգ գտած է այս թերթէն: Բայց աւելի քան տասնամեակէ մը ի վեր Երրորդ չկայ «Նայիրի»ին մէջ, թէեւ «Նայիրի»ի գրողները լեցուն ըլլան Երրորդի թուրքերով, որովհետեւ բանաստեղծութիւն չկայ անոնց մէջ: Կան միայն տաղաչափուած Մանաններ, յանգի բերուած Անիներ, պատուէր մը ատամնաբոյժին որ հայերէն չիտոսող Հայուն ահուտ քաշելու տեղ լեզուն կտրէ, գեղապործներուն ալ դեռ ուրիշ պատուէր, չաղակրատ տողեր, հովին դէմ երնուող փարթամ հունձքին յարգը լոկ, բայց ո՞ր է ատուցող ցորենը, Երրորդեան ոսկի արտին ոսկի հատիկները որ ատեն մը ուղղի կ'երթային հայ բանաստեղծութեան ապահով ամբարներուն, եւ որ անպիւր կը հոսին հիմա, որպէս թեփ, Սփիւռքի մեր մտերներուն:

Ի սէր Աստուծոյ, ի սէր հայ բանաստեղծութեան, ի սէր Մասիսին ու Անիին՝ ալ թող վերջ գտնէ անուն չունեցող այս վիճակը, Երրորդ: Կրնայի ըսել՝ անախորժ կատակը: Ուրիշ ի՞նչ բառ կարելի է դրանի ի վերուստ շնորհազարդ բանաստեղծի մը համար, որ փառաւորապէս արժեցուցած է իր տաղանդը, դարձած է իր սերունդին մատի վրայ համբուող իրական արժէքներէն մէկը, կը գտնուի իր փառքին ու տարիքին լիութեանը մէջ, Ֆիլիքապէս առողջ, իմացապէս արթուն՝ բայց որ կը շարունակէ աղյալական ոտանաւորներու տակ սփռել նուիրագործուած իր ստորագրութիւնը: Եթէ կատակ չէ եղածը, հապա ի՞նչ է, Երրորդ:

Գիտեմ, գիտեմ: Այս նամակս տասը անկիւններէ եւ տասը ձեւերով պիտի հասնեն քեզի, չողմ ու չողորձութեան նարանտութիւններն ալ միասին, արդէն իսկ բոլոր տրամադրութիւններդ աւելի բարձրելով: Բայց դուն մի՛ հաւատար անոնց: Հաւատա՛ միայն այստեղ կար՝ դացածիդ, եւ անոր տուն տուող եղբայրական սրտցաւ զգացումին: «Հաւատա՛ — ցէ՛ք բանաստեղծին», — ասիկա, քու լաւ օրերու լաւագոյն պատգամներէդ մէկն է: Եւ որովհետեւ երջանիկ օր մը, Հրանտին ու Հրաչեային խաչեղաբարութեամբ նման տիտղոսով մը պսակեցիր նաեւ զիս — փոյթ չէ թէ սփիւռքային դեղձեալ սակով — ուրեմն պէ՛տք է հաւատաս ինծի: Հաւատա՛ս՝ եւ մտածես: Մտածես՝

եւ հասկնաս: Հասկնաս եւ ցնցուիս: Գնցուիս՝ եւ կանգ առնես գահալէժին եզերքը: Արծուային ճախրանքներու ընկունակ, ինքդ ծնեալ արծիւ, ի՞նչ գործ ունիս հանոցային թաւերու վրայ: «Սողալու ծնուածը չի կարող թուշի», Մաքսիմ Կորբին էր որ այսպէս կ'ըսէր, եւ ճիշդ կ'ըսէր: Բայց երբեքից մէկն ալ համարձակած է ըսել, թէ թուշի համար ծնածը ներքի է որ թեւատ թուշի ոտաններու վերածէ անջրպետային իր սլացումները:

Վե՛ր, սիրելի Երրորդ, վե՛ր հանոցներէն՝ դէպի կապոյտը, երկինքը, աստղերը: Եթէ այնտեղ տեսած չըլլայինք քեզ, եթէ չգիտնայինք թէ հոգ թեւերդ լայն թեւաբախումներու համար են, կը փորձէի՞նք միթէ պահանջել քեզից այն, ինչ որ վեր կը մնայ ուժեղէր: Կ'սխառասումը միթէ հաւերուն, որ թուշ չունին: Բայց տխրութիւն է տեսնել արծիւը, որ կորեկի հատիկներ փնտռէ:

Այսպէս ու այսպէս, սիրելի Երրորդ: Գուցէ եւ պատճառներ կան: Ներքին ցաւեր ու ներքնումը խափանող խուլ մորմոքներ: Դեռ կայ Մասիսը՝ որ այլ տեղ է, եւ կայ Անին՝ որ այդտեղ չէ: Բայց չէ՞ որ կայ նաեւ Արարածը որ քեզ դրկին միշտ կը կանչէ, աղբիւրներուն երգով ու ձիւներուն ժպիտով, Աշտարակի ճամբուն վրայ բարտիներ կան որ հովին դէմ յանգ ու վանկով կը խշրտան, Գառնիի գահալէժին խորերէն բարձրացող վրձնջիւներ կան, սանձը կրծող նո՞րջ է թէ ժպտերը ծեծող սահանք, ո՞վ պիտի ըսէ, ու դեռ փոքրերը որ մայրելով Գեղարդին ի վեր կը թուշկոտին (Գարնան, կը պատմէր Լեւոն Շանթը, խոտերը այնքան բարձր կ'ըլլան Գեղարդի կողերուն եւ ծաղիկները այնքան առատ, կը ըսէին այնպէս սաստիկ՝ որ փոքրիկ հովիւները երբեմն կը թմրին — հօտաղին ջունս առնոյ — կ'ուշաթափին ծաղիկներուն վերակը, բարձր խոտերը անոնց վրայ վերակ կ'ըլլան, ու կը պատահի որ այդպէս ալ մնան ընդմիշտ, եւ ալ չարթնան, յայտնուածով փնտռուելի երած հովիւներու արցունքին տակ: Ես միշտ աշնան եղած եմ Գեղարդ եւ ի չղոյճ ծաղիկներուն, անոնց մեղքին համէն ու բոյրը տարած հետս, ու կը պահեմ ստրկներով: Բայց իրաւ պատահած է որ փոքրիկ հովիւ մը այդպէս մեռնի, ու երթայ դրախտ՝ եւ դեռ, Երրորդ, կայ Երեւանը իր եղնիկային աղջիկներով որոնք հողի կուտան անունիդ ու գրչիդ համար, մանուկները, պատուները, ծաղիկները...

Երրորդ, Երրորդ: Պէտք է վերջ գտնէ այս թմրութիւնը եւ դայ հասնի արթնութիւնը: Մթափունք: Ու եթէ պահ մը քնարը չարձագանգէ ներքին կշռոյթնե՛րուն — բոլոր ճշմարիտ բանաստեղծները կ'ապրին այդ անցաւոր տաղնապը, կ'անցնին՝ վատահ եղիր — պէտք է ատեն մը ապաւինիլ ամենատուր լուրթեան, մինչեւ որ խորերէն լսուին խորունկ ձայները:

Իրաւ բանաստեղծի մը լուրթիւնը աւելի խօսուն է երբեմն, քան հետեւակներուն մոռնիւնը...

Ա. ԾԱՌՈՒԿԵԱՆ

ներով գիտութեան ամէնէն մեծ բաժինը՝ առաջինը, որ կ'ընդգրկէր քերականութիւնը, ճարտասանութիւնը եւ փիլիսոփայութիւնը, նախ ձեռնամուխ են եղած քերականութեան ստեղծումին, գիտութիւն մը, որ նկատուած է կրթութեան նախապայմանը եւ անոր առաջին անհրաժեշտ ատիճանը:

Եւ ահա յունարան դպրոցի գործիչները 460—470ական թուականներուն առաջին առթիւ կը թարգմանեն հին յու — նական քերականութեան կարկառուն ներկայացուցիչ՝ Դիոնիսիոս Թրակացիի «Քերականական արուեստ»ը, որ իր ուժով, լեզուով եւ բառապաշարով նոր երեւոյթ մըն էր հայ գրականութեան համար: Ասիկա թարգմանական փայլուն նմոյշ մըն է. յունարէն նախադասութիւնները բառացի կը թարգմանեն հայերէն, մեր լեզուին մէջ գոյութիւն չու — նեցող քերականական տարադները կը ստեղծեն յունարէնի նմանութեամբ, օգտագործելով հայերէնի արմատները եւ անոնց կցելով նորաստեղծ նախդիրներ, մասնիկ — ածանցներ: Նախադասութեան կառոյցը կը ձեւեն յունարէնի վրայ եւ կը դարձնեն յար եւ նման՝ ի հաշիւ հայերէնի շարահիւսութեան: Եթէ անձանօթ աշակերտին համար ասիկա հայտնիան երկ մըն է, դժուար բովանդակութեամբ, յունական կրթութիւն ստացած Հայուն համար ասիկա ծանօթ գործին ճշգրիտ պատկերն է՝ հայերէն գիտական լեզուով շարադրուած, առանց աւելորդարանք — թիւններու եւ նկարագրական տարտա — մութեան:

Թրակացիի «Քերականութեան» թարգմանութիւնը կարեւոր էր նաեւ փիլիսոփայական տարազարանութիւնը ստեղծելու համար: Այս առիթով յօրինուած շատ տարադներ լայն տարածում կը գտնեն յետագային փիլիսոփայական թարգմանութիւններու մէջ: Եւ ասիկա դարձանալի չէ, նկատի ունենալով այդ երկու գիտութիւններու, յատկապէս քերականութեան եւ տրամաբանութեան մօտիկութիւնը, մասնաւոր անցեալին:

Յաջորդ գործը, համաձայն վերոյիշ — եալ դաստորոմին, պէտք է ըլլար ճարտասանական ընդթի թարգմանութիւն մը: Եւ իրօք, 470ին կը թարգմանուի «Պիտոյից դիրքը», որ կազմուած էր հիմնականին մէջ Աֆտոնիոսի ճարտասանական գրութեանէն: Նոյն ժամանակաշրջանին կը թարգմանուի նաեւ Թէոն Աղեքսանդրացիի յայտնի «Ճարտասանական վարժութիւններ»ը: Այս գոյթ թարգմանութիւնները ոչ միայն մեկնակէտ դարձան ճարտասանական արուեստի եւ գիտութեան զարգացումին Հայաստանի մէջ, այլեւ կարեւոր չափով նպաստեցին փիլիսոփայութեան եւ արուեստարանու — թեան զարգացումին:

Ասոնցմէ ետք արդէն կարելի է մտածել փիլիսոփայական գործեր թարգմանելու եւ ստեղծելու մասին, քանի որ չօշափելի բառապաշար կուտակուած էր:

Բայց սկիզբէն կ'ընտրուին թարգմանու — թեան համար համեմատաբար աւելի դիւրին եւ քրիստոնեայ ընթերցողին համար սրտամօտ հեղինակի գործեր: Փիլիսոփայական թարգմանական գրականութեան առաջին շրջանին կը պատկանին հելլէն աշխարհի ականաւոր դէմքերէն մէկուն, Ա. դարու անուանի փիլիսոփայ Փիլոն Երրայեցիի գործերուն թարգմանութիւնները, կատարուած 470—480ին: Անոր դրէին պատկանող երկերէն շատերը մնացած են միայն հայերէն թարգմանութեամբ (օրինակ «Յաղագս նախախնամութեան», «Լուսն լինելութեան», «Լուսն մուկը ելլիցն», «Առանց պատրաստութեան ի Սամփոտին», «Յաղագս Յովնանուն», «Յաղագս բան ունել եւ անասուն կենդանեացը» եւայլն):

Երրորդ քայլը կարելի կը դառնայ կատարել, այսինքն՝ բարձրանալ աշխարհիկ գիտութիւններու եռակի վերին աստիճանը, շնորհիւ Փիլոնի գործերու, ինչ — պէս նաեւ 480ական թուականներուն կատարուած Երանոսի եւ Տիմոթէոս Կոզլի դասնադասական գրութիւններու թարգմանութիւններուն, քանի որ անոնց ծածկով ստեղծուած են բազմաթիւ փիլիսոփայական տարադներ: Ասոր համար պէտք էր նախ եւ առաջ իւրացնել տրամաբանական գիտութիւնը, որուն ճանշչուած լաւագոյն գործերը, ինչպէս գիտէին Աղեքսանդրիա եւ Աթէնք ուսած յունարանները, Արիստոտէլի գրէին կը պատկանէին:

Մական Արիստոտէլի գործերը թարգմանելու առաջ, յունարան դպրոցի գործիչները նախաքայլի մը կը զիմեն: Այդ թուականներուն բաւական ծանօթ էր նոր — պղատոնական փիլիսոփայ Պորփիրի Փիլոնիկեցիի «Ներածութիւն ստորոգու — թեանց Արիստոտէլի» երկը, որ կը նըկատուէր իրրեւ ներածութիւն կամ մուտք՝ Արիստոտէլի տրամաբանութիւնը եւ առհասարակ փիլիսոփայական գիտութիւնը ուսումնասիրելու համար: Այս գործով է, որ 490ական թուականներուն յունարան դպրոցի ներկայացուցիչները կը սկսին փիլիսոփայական — տրամաբանական երկերու իրենց թարգմանութիւնը: Բազմաթիւ տարադներ, որոնք չկային հայերէնի մէջ եւ որոնց բացակայութիւնը անհնար կը դարձնէր այդ գիտութեան զարգացումը Հայաստանի մէջ, առաջին անգամ կը ստեղծուին Պորփիրի թարգմանութեան ընթացքին: Հոս եւս կը կիրարկուի քերականութեան եւ ճարտասանութեան թարգմանական սկզբունքը: Յունարէն իւրաքանչիւր տարադին դիմաց կը ստեղծուի անոր հայերէն համարժէք՝ յունարէնի բառակազմութեան օրինակով՝ նախդիր, արմատ, վերջաւորութիւն սկզբունքով: Հայերէնի մէջ գոյութիւն չունեցող նախդիրները կը կերտուին ի նորոյ, կամ կ'օգտագործուին քերականական ու ճարտասանական թարգմանութիւններու ժամանակ ստեղծուածները. բայց հետեւողական ձեւով

մեծ մասամբ կ'աշխատին յունարէն տըւեալ նախդիրին դիմաց դետեղել նոյն նորաստեղծ հայկականը:

Այս ձեւով յունարանները ի վիճակի կ'ըլլան ձեռնամուխ ըլլալու Արիստոտէլի գործերու եւ անոնց նուիրուած մեկնութիւններու թարգմանութեան գործին: Պորփիրի «Ներածութեան» ետք 490ական թուականներուն կ'իրագործուի Ա. րիստոտէլի «Ստորոգութեանց» եւ «Յաղագս մեկնութեան» թարգմանութիւն — ները, որոնց մէջ կ'օգտագործուի նա — խորդ տասնամեակներուն ստեղծուած ամբողջ քերականական, ճարտասանական եւ, յատկապէս, փիլիսոփայական տա — րազարանութիւնը: Եւ քանի որ դեռ ան լիովին չէր բաւեր Արիստոտէլի բարդ եւ հարուստ բառապաշարը թարգմանելու համար, թարգմանութեան ընթացքին կը ստեղծեն տասնեակ մը նոր մասնադիտական տարադներ: Հայերէն փիլիսոփայական բառապաշարը այնքան կը հարստանայ, որ անոր միջոցաւ արդէն կարելի կը դառնայ արտայայտել որեւէ վերացական միտք եւ գաղափար, թարգմանել զիւրամտալի հեղինակները ու ստեղծել ինքնուրոյն տրամաբանական, իմա — ցարանական երկեր:

Ս. ԱՐԵՒՇԱՏԵԱՆ

ՊՈՒՏՄ ԺՊԻՏ

ՍԿՈՎՏԱԿԱՆ

Երբեք Մընիթը մահամեծ է եւ իր երեք զաւակներէն խոստում կ'առնէ, որ հարիւրական ոսկինոց մը դնեն իր դադակին մէջ: Խոստում կ'առնէ ու հոգին կ'աւանդէ:

Մեծ տղան, վարանումէ ետք կը դնէ հարիւր ոսկինոց մը, նոյնը կ'ընէ երկրորդը՝ քիչ մը փոքրաւով ու այդ վայրէկեանին ամէնէն փոքրը դրսանէ կը հանէ չէֆ տետրը, կը գրէ 300 ոսկինոց չէֆ մը, կը դնէ դադակին մէջ ու կ'առնէ երկու հարիւրնոցները:

×

Երկու աչքեր ամուսնութեան կը պատ — րաստուին:—

— Քու կարծիքով ի՞նչ է երկար նշան — տուքին առաւելութիւնը:


— Պարզ է, սիրելիս, որքան երկար նշանուած մնաս, այնքան կարճ ժամանակ ամուսնացած կը մնաս:

ԿԱՐԴԱՑԻՔ
ՏԱՐԱԾԵՑԻՔ

ՅԱՌԱՋԸ

«ՅԱՌԱՋ»ի ԹԵՐԹՈՆԸ

(212)



ԵՐԿՐՈՐԻ ՄԱՍ

ՕՎԻՏԻ ԿԵՐԳԱՐԱՆԱՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ջ.

Օվիտ դրսանէ հանց հազար Փրանքնոց պանքտոմ մը, ու դրամապանակէն՝ երկու ոսկի ու տասը Փրանքնոց մը, յետոյ հաշուեկոշանին վրայ դնելով այդ դրամները, յարեց:

— Հաճեցէք ընկալադիր մը տալ, ու Օրիորդ Ամանտայի յայտարարութիւնը ինծի յանձնել:

— Անմիջապէս, պարոն:

Տիկին Տէլիոն ընկալադիր մը գրեց, ու յետոյ դնաց հայելաւոր սենեակին գեղ — րոցէն առաւ Ամանտայի գրաւոր յայտա — րարութիւնը, որ սապէս գրուած էր.

« Կը խոստովանիմ որ այլի Տիկին Տէ —

լիոնէն դողցած եմ իւրաքանչիւրը հինգ հարիւր Փրանք արժող երկու կտոր ժանեակ, ծախելու եւ դրամի վերածելու համար զանոնք: Այս օրուքնէ սկսեալ՝ ըստանձնած եմ մէկ տարուան ընթացքին հազար Փրանք վճարելու, իր տոկոսն — րովը, եթէ չեմ ուզեր որ գործած ոճրիս համար հետապնդուիմ: Շատ երախտ — պարտ եմ Տիկին Տէլիոնէն, զիս իսկոյն արդարութեան յանձնելուն համար, բան մը զոր իրաւունք ունէր ընելու:»

Յետոյ սոյն գրութեան տակ գրուած էին Ամանտայի ստորագրութիւնը եւ թուականը:

Օվիտ կարգաց այդ հետաքրքրաշարժ գրութիւնը, թղթապանակին մէջ գրաւ, ուր արդէն կը գտնուէին Տիւլըմէնի պարտամուրհակները: Տիկին Տէլիոնէն հրա — ժեշտ առնելէ յետոյ՝ Օթէլ մը Սիլիոնը գնաց ու երկու հոգիներոց առատ ճաշ մը սպասեց, ժամը տասնըմէկին ճաշելու համար:

Ժամը տասնըմէկ հնչած պահուն Տիւլըմէն միացաւ Օվիտի, այն փողքը սա — լոնին մէջ, ուր միտաին ճաշած էին առջի օր:

— Ի՞նչ եղաւ, հարցուց Օվիտ:

— Ուղածնիդ բերի, պատասխանեց Տիւլըմէն: Ահա տիկին Յրէմիի յայտա — րարութեան բնաղբը, զոր հօրեղբայրս ալ իրր քաղաքապետ ստորագրած է, Յրէմիի ստորագրութիւնը վաւերացնելու

համար, քաղաքապետութեան կնիքն ալ կայ անոր վրայ:

Օվիտ թուղթը առաւ իսկոյն, բացաւ ու յետոյ կարդաց դան.

«Ես, Մաթիւրին Յրէմի, ստնտու ժու — անի մէջ, Իվոնի նահանգ, Ժուանի քաղաքապետ Պ. Ռաուլ Տիւլըմէնի յայտարարելէ յետոյ թէ՝ 1861 Ապրիլ 12ին իրր դիւցիկ ինծի յանձնուած իրական սեփ մանուկ մը վրաս ձգուած էր մօրը Ժանի Յորթիի կողմէ, որ ձերբակալ — ուած ու դատապարտուած է բացայայտ ոճիրներու համար, ես քաղաքապետին կողմէ արտօնուած եմ յիշեալ աղջկը յանձնելու փարիզի Ընկեցիկ Մանուկներու ապաստարանը: Այս յանձնումը կա — տարած եմ 1862 տարուան Ապրիլ վեցին՝ ահա այն ցուցմունքները, որոնց շնորհիւ կարելի պիտի ըլլայ յառաջիկային ճանչ — նալ մանկան ինքնութիւնը, եթէ երբեք մայրը կամ շահագրգռուած ուրիշ անձ մը պահանջէ, ցուցմունքներ, որոնք ար — ձանագրուած են ապաստարանին դիւս — նին տնտեսներուն մէջ:

«Մանուկին հետ կը գտնուին 1) Լ. Ֆ. տառանիշով չափիկ մը: 2) Ներքնակ մը՝ տառանիշով: 3) Ձող մը գուլպայ՝ տա — ուանիշով: 4) Փոքր դրակ մը՝ տառանի — շով: 5) Բուրդէ ֆիշիկ մը: 6) Բամպակէ ծածկոյթ մը: 7) Բուրդէ ծածկոյթ մը: 8) Երկու շոր՝ Լ. Ֆ. տառանիշով:

«Մասնաւոր նշաններ՝ ոչինչ: Մօրը

անունը Ժանի Յորթիէ: Աղջկան անունը՝ Լիւսի: Ստնտուին անունը՝ Մաթիւրին Յրէմի»:

Մաթիւրին Յրէմիի ստորագրութիւնը, քաղաքապետին ստորագրութիւնը՝ վա — ւերացման համար ու քաղաքապետութեան կնիքը անվիճելի վաւերականութիւն մը կ'ընծայէին այդ փաստաթուղթին: Օվիտ երեւութապէս շատ հան — դարտ էր, բայց իր շողջողուն աչքերը ուրախութիւն կը յայտնէին: Ան ծախեց թուղթը ու դրսանք դրաւ: Յետոյ ըսաւ.

— Շնորհակալ եմ, երիտասարդ բա — րեկամ:

Մուրճը, ըմպելիները եւ սիկառները բերուելէ յետոյ սպասեակին կողմէ, Օ — վիտ դրսանէ հանց թղթապանակը, սե — ղանին վրայ դրաւ ու բացաւ դան:

— Երկու հազար Փրանք պարտական էք, այնպէս չէ՞, ըսաւ Տիւլըմէն: Ահա — ասիկ: Առնելիք տալիք չունինք:

Ու Օվիտ երկու պանքտոմ տուաւ ե — րիտասարդ պաշտօնեային:

— Պարոն, իմ ապաստարան եղող ա — ռատաձեռն անձին անունը կը յայտնէ՞ք, դուք Տիւլըմէն...:

ԿԶԱՎԻԷ ՏԸ ՄՈՆԹԷՓԷՆ

(Շարք.)

ՑԱԽԱԿՑՈՒԹԻՒՆ

Իսի լէ Մուլինոյի Հայաստանեայց Առաք. եկեղեցւոյ շինութեան Յանձնա-խումբը իր նախկին անդամ, ողբ. Յովհաննէս Սարաֆեանի մահուան քառա-սունքին առթիւ իր ցաւակցութիւնները կը յայտնէ ընտանեկան պարագաներուն:

ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊԱՍԿԻ

Տէր եւ Տիկին Արշամ Հարլաճեան կը նուիրեն 50 Փր. ի նպաստ Հայ Կարմիր խաչի օգնությունութեան կայանին, փոխան ծաղկեպսակի, ողբ. Զապէլ Թորոսեանի մահուան տխուր առիթով: Նոյն նպա-տակին՝ Տիկին Տիրուհի Մուսայեան (Պաննէօ) 20:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻԲ

Կապ. Խաչի Ալֆորվիլի մասնաճիւղը շնորհակալութեամբ ստացած է Համբար-ձում Կալոյեանի մահուան տխուր առ-թիւ, Անիճա Ալեքսանեանէ 200 Փր.: Մկրտիչ Ագաշեանի մահուան տխուր առ-թիւ, փոխան ծաղկեպսակի, Կարապետ Ազաչեան 100, Յակոբ Տասալեան 100, Օննիկ Ազաչեան 100, Տիկ. Բարսեղան եւ զաւակները 250, Տէր եւ Տիկին Երամեան 100, Տէր եւ Տիկին Պորթիա 50 Փր.:

ՆՈՒԷՐՆԵՐ

Իսի լէ Մուլինոյի Հայաստանեայց Առաք. եկեղեցւոյ Շինութեան Ի նպաստ

Ա. Յանկ

Գահվէճեան Վրէժ, Գարակէօյեան Մարտիրոս, Գրչիքեան Գէորգ, Միսաքեան Միսաք, Նալպանտեան Օննիկ, Կիւլեան Յարութիւն, Սարին Պարզեւ, Փա-փազեան Յովհաննէս, Օնոսեան Ժիրայր, Ֆերմանեան Ռուպեր 1000ական, Թէճիւրեան Արսէն 500, Տիկ. Մինէլի Անիէլ, Պր. Շահինեան Դանիէլ, Պ. Տալուտեան Ռուբէն 1000ական, Պ. Զաքարեան Համ-րաբնում 100 Պ.Պ. Արապեան Արսէն Փամ-պուքեան Արտաշէսի ձեռամբ էքս-լէ-Պէնի մէջ 1972ի ամբան տեղի ունեցած հանդիսութենէն 1000, Պ. Նորսիքեան Գա-րեգին 500, Ռմն (Յովսէփ վրդ. Լեւոնեանի ձեռամբ) 1500, Շահինեան Արշա-լոյս 100, Տիկ. Հայրապետեան Լուսա - րէր 300, Տիկ. Եղուպեան Զարուհի 100, Ռմն 200, Տիկ. Պետրոսեան Տիրուհի 250: Գումար 17-550

ՀԱՅ ՄԱԿՈՅԹԻ ՏՈՒՆ

Փարիզի Հայ Մշակոյթի Տան Յանձ-նախումբը կը յայտարարէ Փարիզի Հա-յութեան որ Տան ներքնայարկի Ս. Թէհ-լիբեան սրահը, սիրով կը տրամադրուի հարսանիքներու, նշանուէրներու եւ այլ հաւաքոյթներու առթիւ:

Կարելի է անձամբ դիմել կամ հեռա-խօսել տեղեկանալու համար պայման - ներուն:

ՅԱՆԶՆԱՍՈՒՄԲ

ՇՆՈՐՀԱԿԱԼԻԲ

Տէր եւ Տիկին Վրէժ Գրիգորեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Վարուժան Գրիգորեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Արամ Գրիգորեան, Օր. Շաքէ Գրիգորեան եւ բոլոր պարագաները շնորհակա-լութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, զբաւոր, ծաղկեպսակով, փո-խան ծաղկեպսակի նուէրներով ցաւակ - ցութիւն յայտնեցին իրենց հօր եւ մեծ-հօր՝

ՄԱՆՈՒԿ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ
(Տարօնի)

մահուան առթիւ:

ՍԱՄՈՒԷԼ - ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Ետեան Սանուց Միութիւնը անկողնի 100 բուրդէ ծածկոցներ նուիրած է վար-ժարանին նոր շէնքին համար:

Այս առթիւ կը խնդրուի այն կազմա-կերպութիւններէն կամ միութիւններէն, որոնք տրամադիր են նուէրներ ընելու նոր շէնքին ներքին սարքաւորման համար, որ յարարեութեան մէջ մտնեն Տիկիններ Ֆէյտիի եւ Երամեանի հետ:

Հ. Բ. Ը. Մ.

ՀՐԱԽԻՐԱԳԻՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Հ. Բ. Ը. Միութեան Կեդր. վարչական ժողովը ներկայով կը հրաւիրէ Միութեան բոլոր իրաւասու անդամները ներկայ գտնուելու 60րդ ընդհ. ժողովին, որ պի-տի գումարուի Շաքաք, Հոկտեմբեր 27, 1973, առաւօտեան ժամը 9-30ին, Առաջ-նորդարանի Կիւլլապի Կիւլլէնկեան Մշա-կութային կեդրոնի Գալուքճեան սրահին մէջ, 630 Սեքընտ Էլվինի Նիւ Եորք, Ն. Ե.: ԱՄՆ:

Ներկայ 60րդ ընդհ. ժողովին համար տրուած միակ հրաւիրագիրն է: Կը խնդ-րենք հետեւաբար Միութեան յարգոյ իրաւասու անդամներէն, որ անձնապէս ժողովին ներկայ ըլլան վերոյիշեալ թը-ւակներին եւ կամ ամէնէն ուշը մինչեւ Հոկտեմբեր 5, 1973, իրենց փոխանոր - դագրերը յանձնեն Հ. Բ. Ը. Միութեան ընդհանուր տնօրէնին, կամ զանոնք զըր-կեն հետեւեալ հասցէին.—

Armenian General Benevolent Union
Central Board of Directors
109 East 40th Street, New York, N.Y. 10016
ՕՐԱԿԱՐԳ

1. Ներկայացում եւ վաւերացում 1972 տարեշրջանի ընդհանուր տեղեկագրի:
2. Ներկայացում եւ վաւերացում 1972 տարեշրջանի ընդհ. հաշուետուութեան:
3. Մասնակի ընտրութիւն Կեդր. վարչ. ժողովի:
4. Մասնակի ընտրութիւն Հաշուեքննիչ Յանձնախումբի:
5. Առաջարկներ եւ թելադրութիւններ:
6. Գնահատանքի բանաձեւեր:

Ի գիմաց Կեդր. վարչ. ժողովի
Ատեմագետ Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ
Ատեմագայիր, Բ. Ք. ԿՐԵԿՈՐԻ

Մայիս 1, 1973, Նիւ Եորք, Ն. Ե.

Passez vos vacances en caravanes pliantes ou rigides



la bohème rigide 310 • 360 • 395 • 425 • 525
Cinq modèles standing. 10 versions. L'équipement de chacun vous étonnera par le nombre des accessoires et les solutions rationnelles que nous avons donné au problème confort. Ce sont vraiment des caravanes pour caravaniers difficiles.
LES VACANCES C'EST

la bohème
UNE MARQUE DE RENOMMÉE EUROPÉENNE

Carrefour de l'Eléphant **PALAISEAU**
T.928.03.88
N.20 Saint-Germain-les-**ARPAJON**
T.490.17.79

NEUF-OCCASION-ACCESSOIRES-POSE D'ATELAGES

ՀԱՇ

Նախաձեռնութեամբ Տարօն - Տուրու-բերանի Հայր. Միութեան, Կիրակի Յու-լիս 8, ժամը 15էն սկսեալ Փարիզի Հայ Մշակոյթի Տունը:
Մուտք՝ 20 Փր.:

ԼԵՈՆ Ա. ՅԱԿՈԲ

Կիրակի Յուլիս մէկին, Սէն Մօրիսի ծանօթ դաշտին վրայ, դպրոցական դաշ-տահանդէս առաւօտեան ժամը 10էն մինչեւ ուշ երեկոյ:

Գեղարուեստական բաժին վարժարանի աշակերտութեան կողմէ եւ վիճակահա - նութիւն: Արեւելեան համադամ կերա - կուրներ:

Անձրեւի պարագային խնջոյքի ձեւով

տեղի կ'ունենայ, նոյն օրը, եկեղեցւոյս նորոգուած սրահին մէջ, Կ. յետոյ ժա-մը 3էն սկսեալ:

Imprimé sur les Presses

DU JOURNAL « HARATCH »

83, Rue d'Hauteville, Paris (10e)

Հ. Յ. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ԲԱՆԱԿՈՒՄ

ՕԳՈՍՏՈՍ ՄԷԿԷՆ 30

CAMP DU NOR SEROUND, COLONIE SAINT ANDRE, ROUTE DE BESSAN
34 BEZIERS (HERAULT) — Téléphone: 76-01-76

Հ. Յ. Դ. Նոր Սերունդի Կեդրոնական վարչութիւնը իր տարեկան բանակումը կը կազմակերպէ այս տարի Պէզիէ

ՊԱՅՄԱՆՆԵՐ.— Մէկ ամիս՝ 600 Փր., 14 օրէն աւելի, օրական 26 Փր., 7 օրէն 14 օր՝ 29 Փր. 7էն պակաս՝ 32 Փր.:

Արձանագրութիւնները՝ Զորեքարթի եւ Ուրբաթ իրիկունները ժամը 18էն 20 եւ Շաբաթ օրերը՝ 16էն 20: Ծամբորդութիւնը՝ օթոքառով Փարիզէն:

ԱՂՔԱՏԱԽՆԱՄԻ

ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍԸ

Կիրակի, ՅՈՒԼԻՍ 1 ԺԱՄԸ 10-22

ՄՈՆՄՈՐԱՆՍԻԻ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՏԱՆ

ԴԱՐԱՍՏԱՆԻՆ ՄԷՋ, 44-50 Ալբիւ Շառլ տը Կոլ, Մանոբրանսի

Դուռները կը բացուին ժամը 10ին եւ կը տնէ մինչեւ ժամը 22

Կէսօրին կարելի է ճաշել ճաշացուցակին համաձայն: Կարելի է նախօրը սեղան-ները ապահովել հեռաձայնելով՝ Մոնմորանսի 964-20-67 եւ կամ Ալբատախնամի կեդրոնը 878-02-99

Աւանդական շամփուրով խորոված, թէ՛ կէսօրին եւ թէ՛ իրիկունը: Անշատ առատ ամէն տեսակ ուտեստեղէն եւ ըմպելիներ Բացառիկ ժամանցի օր մը, նուագ, երգ եւ անակնկալներ: — Գեղարուեստական բաժին իրենց մասնակցութիւնը կը բերեն ՆԱՅԻՐԻ եւ ՄԻՆԻ-ՍՕՍԻ պարախումբերը, Տիկին ԱԼԹՈՒՆԵԱՆ իր երգերով Օր. Անահիտ ՍՎԱՅՏԱՆ ձեռնադաշնակով

ԹՈՄՊՈՂԱ, արժէքաւոր առարկաներով

Մուտք 5 Փր., ուսանողներու եւ երախաներու 2 Փր.:

Անձրեւի պարագային, ապահովութիւններ ձեռք առնուած են:

ԾԱՆՈԹ.— Մոնմորանսի երթալու համար չողեկաւոր առնել Կառ տիւ Նոռէն եւ իջնել Անկէն (Իւրաքանչիւր քառորդ ժամուռ, անցնել կամրջակը եւ թիւ 6 օթոպիւսով իջնել Կորէի կանը (առէ):

ԿԱՐԵՒՐ.— Փափաքելի է որ ամէն ոք տեղոյն վրայ ծախսէ, կը յանձնա-րարուի ուտելիք չբերել:

ՕՐՈՒԱՆ ՊՈՍԿԸ



ԵՐԿԶՈՏ ՓՈՐՁԵՐ ԱՌԱՆՅ ՎԱՂՈՐԴԱՅՆԻ

— 0 —

Շուրջ տասը տարի առաջ պահ մը չողողուն յայտնուի օրօրուեցանք, կարծելով որ ի վերջոյ հայրենիքի վարիչները, հայրենասիրական դավելի զգացումներէ մղուած, հետզհետէ պիտի վերականգնեն հայրենի դասական ուղղադրութիւնը:

Այդ յայտերուն առիթ տուողն էր 1964ին հրատարակութիւնը Մայրենի լեզու եւ Հայ գրականութիւնը խորագիրը կրող դասագրքի չարքերուն, դասական ուղղադրութեամբ, սահմանուած արտասահմանի հայկական դպրոցներուն:

Այդ առիթը Հայաստանի Ուսումնական-Մանկավարժական Հրատարակչութիւնը 25.000 տպաքանակով « Բացատրական » մըն էր խմբագրած՝ ուղղուած « Սփիւռ-Քաղաքի ուսուցիչներին »:

« Բացատրական »ը, բոլորեւնիսն ուղղադրութեամբ, կը շնորհէր, որ « Սփիւռ-Քաղաքի » մայրենի լեզուի ուսուցիչները զգոյշ չափով աշխատանքը լաւ կազմակերպելու գործում հայ ուսուցիչներին օգնելու նպատակով կազմուել են « Մայրենի լեզու » առիթ դասագրքերը:

Այս տարիներու համար հրատարակութեան շուրջ հատուկ դասագրքեր, որոնց մէջ զետեղուած էին ինչպէս ժողովրդական, այնպէս ալ անցեալի ու ժամանակակից հայ եւ օտարազգի գրողներու ստեղծագործութիւններ՝ պատմուածքներ, հեքիաթներ, առակներ, ոտանաւորներ, առածներ, ասացուածքներ, հաներկներ, եւ այլն:

Արեւելահայ գրողներու արձակ գրուածութիւնները մեծ մասամբ արեւմտահայերէնի վերածուելէն զատ հրատարակուելէ մէջ, որ շատ քիչ տեղ յատկացուել էր արեւմտահայ տեղեկներու:

Մայրենի լեզու դասագրքերու եւ Հայ Գրականութիւնը խորագիրը կրող լեզուի խմբագրութեան, Հ. Ն. Յովսէփի, Ս. Մ. Ղազարեանի, Հ. Պ. Պալեմեանի, Թ. Գ. Ջուհարեանի, Օն. Փանիկեանի, Բ. Վ. Մազմանեանի, եւ այլն: Կը տեսնուի, որ արեւմտահայերէն եւ դասական ուղղադրութիւնը զետեղող մասնաւորականներ չեն պակսիր Հայաստանի մէջ:

Սփիւռ-Քաղաքի լեզուի հետ Մշակութային կապի կոմիտէն խնդրոյ առարկայ այս դասագրքերով ողողեց արտասահմանի հայ դպրոցները, մինչեւ Հարաւային Ամերիկայի հեռուոր գիւղերը, ուր սակաւաթիւ Հայեր հայրենի դասընթացներ հիմնել էին, ինչպէս հաստատեցինք անձամբ:

Մեր ներքին դուրս է քննել արեւմտահայերէն դասագրքերու բովանդակութիւնը, ըստ էութեան: Մենք ուղեցիւնք պարզապէս մատնանշել երեւոյթը, որ որոշ յայտեր կը ներշնչէր դասական ուղղադրութեան վերականգնումին համար:

Դժբախտաբար ի դերեւ ելան մեր յոյսերը: Չորս յոյսեր — ինչպէս պիտի ըսէ Շիրվանդադէ:

Վարդապետի չունեցան 1964ի փորձերը: Ի վերջոյ հասկցուեցաւ, որ Երեւանի վարիչներուն բուն նպատակը քարոզչական էր: Կ'ուզէին տարագրել հրատարակել եւ սերտացնել կապերը հայրենիքի եւ սփիւռքի միջեւ:

Յաջողութիւն չգտան Մայրենի լեզուներն ու Հայ Գրականութիւնը: Սփիւռքը նախընտրեց իր հեղինակներու խմբագրած դասագրքերով աւանդել մայրենի լեզուն օտար հոգերու վրայ ծնած հայ նոր ու

ՕՐՈՒԱՆ ԴԵՊԲԵՐԸ

ՄԻԹԵՐԱՆ ԻՐ ԴԻՐՔԸ
ԱՄՐԱՊԵՆԻՅ

ԸՆԿԵՐՎԱՐԱՅԱՆ ԿՈՒՍԱՅՈՒԹԻՒՆԸ
ՉՕՐԱՅԱՄ

— 0 —

1971ի Եփրէնի համագումարէն ետք, այս անգամ կրննուի մէջ, Յ. Միթերան վերջնական յաղթանակ մը տարաւ ընկերվարական շարքերէն ներս:

Հոս համարելու համար պարզ է որ Միթերան զիջումներ ըրաւ, առաւելաբար ծայրայեղ ձախ նկատուած հոսանքին, սակայն չեղեցիկ հանդերձ թէ ոչ մէկ անկարգապահութեան կը հանդուրժէ: Եւ եթէ նոյնիսկ ոմանք Պիւտոսի յաղթանակ մը կը նկատեն Միթերանի յաղթանակը, այդ չի նշանակեր թէ Միթերան Քաղաքի ինչոք: Ի վերջոյ քուէարկուեցաւ վերջնական քանակութեան զոր պատրաստած էին Միթերան, Մօրուա, Տէֆէն 2969 լիւրդօրով 3244ի վրայ: Ընդգիծողի խմբակը կը գլխաւորէ նախկին ընդհ. քարտուղարը Կի Մոյէ: Այս հոսանքը կ'ուզէր որ ամբողջութեամբ կապերը Համայնական կուսակցութեան հետ եւ ժամ առաջ նշանակուի Ջախի միակ թեկնածու մը իրենէ յաջորդ ժողով փոփոխութիւն: Քուէարկուած քանակութեան եղբայրակից նշանաբանն է « Ազատագրող Ընկերվարութեան մը համար » եռանդուն եւ դատարանատու Ընկերվարական կուսակցութիւն մը: Ընկերվարական կուսակցութիւնը պէտք է երկրին առաջին կուսակցութիւնը ըլլայ, ի մասնաւորի զարգացնելով իր արմատները բանուորական դասուն մէջ եւ գործօն կերպով ներկայ ըլլալով անոր պայքարներուն մէջ: Միթերան խիստ է կուսակցութեան ձախ թեկն (Մեդէ) զէմ թէն կ'որոշուի առնուց մտքերուն մեծ մասը: Չընդունիր որ կուսակցութիւն մը ըլլայ կուսակցութեան մէջ, ոչ ալ փորձ տարուի « Կեղծ Համայնական կուսակցութիւն մը ստեղծել իսկական փոքր քաղաքներէն »:

նորագոյն սերունդներուն:

Երեւան չուղեց շարունակել փորձը, որ ձախողած էր:

Իսկ Սփիւռ-Քաղաքի լեզուի հետ Մշակութային կապի կոմիտէն, որուն նպատակն է հայրենիքը ծանցնել ու սերունդներու արագորէ Հայութեան, կը յամառի արեւելահայերէնով եւ բոլորեւնիսն սխալադրութեամբ հրատարակել իր երկու պաշտօնաթերթերը — Հայրենիքի Զայն շաբաթաթերթին ու Սով Հայաստանի ամսագիրը:

Երեւանի ձայնասփիւն ալ, ուղղուած « Երեւոյթում ապրող Հայութեան », կը շարունակէ այս վերջինին ոչ շատ մատչելի հայերէնով իր հաղորդագրութիւնները, — « Երեւանի Երեւան »:

Եղբայրացիութիւն: 1964ի երկնոտ փորձերը մնացին առանց վաղորդայնի:

Յօդա ցնդեցան մեր փայլուն յոյսերը: Ի՞նչ կը բանին հայրենիքի բանիմաց « գրականագէտ »ները:

ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒՆԻ

ԵՐԵՎԱՆ ↔ ՓԱՐԻՅ ՀԵՐԱՏԻՊ

ԵՐԵՎԱՆ (Արմէնիքէս, Յունիս 21)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՐԵՐԸ

Յունիս 20ին Երեւանէն մեկնած է Քուէարկու զիջումներու պատուիրակու թիւնը՝ Քուէարկու զիջումներու աւագնալի նախագահ Տոքթ. Ս. Մարինելլոյի գլխաւորութեամբ: Երեւանի մէջ օտար զիջումները տեսակցած են Ակադ. Ա. Յովհաննիսեանի եւ այլ զիջումներու հետ:

Երեւան այցելած է Փրոֆ. Կունար Համպրուոյ, որ տնօրէն է Շուէտի ճարտարագիտական արքայական ակադեմիայի: Ծանօթացած է մայրաքաղաքի արագացուցիչ, ինչպէս նաեւ հաշուիչ կեդրոններու եւ տարբարունարաններու աշխատանքներուն:

Երկու օրով Հայաստան այցելած է լրագրողներու պատուիրակութիւն մը Դաշնակցային Գերմանիայէ՝ գլխաւորութեամբ:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՒՈՎ

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՆ ու ինքն. Միթերան ու ինքն կէտերէ լրագրացած համաձայնագիր մը եւս կնքեցին, որով երկուստեք յանձնառու կ'ըլլան անմիջապէս խորհրդակցելու ամէն անգամ, որ հիւլէական պատերազմի մը վտանգը երեւան կուգայ: Ասիկա, որ ճշդէ համաձայնագիրը, չի վնասեր « Խրաքանչիւրի պարտաւորութեանց իրենց զաշնակցներուն եւ այլ երկրներու հանդէպ »: Ոստը կը վերաբերի Ատլանտեան եւ Վարչապետի Ուսումնուն: Մեկնելէն առաջ Բրեժնեւ հեռախոսիլ-ճառ մը խօսեցաւ ուր շնորհակալ թէ աշխարհի ընդհանուր միջոցաւ կախում ունի մեծ չափով ինքն. Միթերան եւ Ամերիկայի յարաբերութիւններէն: ինքն. Միթերան թիւ մէկը, Երկուստեք իրիկուն Ռաժպուլէ կը հասնէր տեսնուելու համար Փոսթիտուի հետ: Հիմա որ Նիքսոն եւ Բրեժնեւ այսքան սերտ կ'ընդհանրանան մը ունեցած են, կը մնայ որ իրենց ընկերները համոզեն, որ նոր եալլած մը չէ, որ պատրաստած են:

ՆՈՐ ՁԵԼԱՆՏԱՆ Եւ Աւստրալիա նաեւ պիտի զրկեն Մուրուրօս Աթոլ չընան, ինչպէս Երեւանի ու Փարիսի հարաւոր, որ պէտքի Ցրանա չկարենայ հիւլէական փորձ կատարել: Լա Հէի միջազգային Ատլանտ, Նոր Ձեւանայի եւ Աւստրալիոյ բողոքին հիման վրայ վերջերս որոշեց զիմել Ցրանայի կառավարութեան, որ պէտքի հիւլէական ուսմը չպայթեցնէ ինչպէս Երեւանի մէջ: Թոքիօ եւս բողոքած է:

ԳԱՀԻՐԻ մերժեց Թեյ Ալիլիի առաջարկը՝ խօսակցութիւններ ունենալ երկու երկրներու Արտաքին նախարարներու միջեւ: Գահիրէ նախապայման կը դնէ իսրայելեան ուժերու հեռացումը Գահիրէ հողերէն: Լիբիոյ նախագահը Գահիրէ ժամանեց:

ՆԻԿՈՍԻՆՈՅ մէջ երկու յոյն Կիպրացիներ մեռան, երբ կառքէ մը կրակ բացուեցաւ իրենց վրայ: Իշխանութիւնները կը հաղորդեն, թէ Զօր. Դրիւմաի գաղանի կազմակերպութիւնը 12 ուսմեր նետած է ոստիկանատուներու վրայ: Ոստիկանութիւնը « արտակարգ միջոցներ » ձեռք առած է:

ՅՈՅՆ լրագրողներու միութեան գործադիր մարմինը, որ նոր ընտրուեցաւ, զիմել կատարեց նախագահ ժողով փափատուութիւն, որպէսզի վերահաստատէ մամուլի ազատութիւնը:

Թեմը Դաշնակցային Գերմանիոյ լրագրողներու միութեան փոխ նախագահին: Պատուիրակութեան անդամները այցելած են Մատենադարան, Էջմիածին, Սեւան, ինչպէս նաեւ երկրորդական մեքենաներու գործատուներ, Հոկտեմբերեանի չընանի Այդեշատ գիւղը: Յունիս 19ին պատուիրակութեան անդամները մեկնած են Մոսկուա:

×

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՅՈՒՅԱՆՆԵՐԸ

Ձեռնարկաւորի Լիդիէյ աւանին մէջ լրագրումը կատարուած է մանկական նկարչութեան միջազգային ցուցահանդէսին: Հոն ներկայացուած են Երեւանի մանկական պատկերասրահի սաներու քան լուսաւորին նկարները: 1971ին Քենիայի մէջ տեղի ունեցած մանկական նկարչութեան միջազգային ցուցահանդէսին, Ռուզան Ոսկանեան եւ Եւրի Գրիգորեան, երկուքն ալ Երեւանցի զարգացականներ, պարգևատրուած էին Քենիայի Լուսաւորութեան եւ Մշակոյթի նախարարութեան կողմէ:

×

ՅՈՒՐՏԻ ԴԻՄԱՅՈՂ ՊՏՈՒՂՆԵՐ

Արարատեան դաշտին մէջ, ուր հագաւ լուր հեղատներու վրայ փռուած են խաղողի այգիները, կան ընդամենը քանի մը հարիւր վազեր, որոնք կանգուն են տարուան բոլոր եղանակներուն: Ասոնք փարթած տեղերէն կը ծածկուին դարնան եւ ամբան, աշնան հարուստ բերքով կ'ուսանան, իսկ ձմեռն, երբ բոլոր այգիները կը նիւհեն հողի վերմակին տակ, անվրդով կը զիմադրեն ցուրտին:

Ներքին Դուրի մէջ աճող խաղողի այգի վազերը շուտով մեծ տարածութիւններ պիտի դրանեն Սարատուան դաշտին մէջ: Այս ձեւով հողագործները ծանր աշխատանքէ մը պիտի ազատին, այն է՝ աշնան այգիները ծածկել եւ դարնան զանոնք բանալ: Գիւղատնտեսութեան մէջ ասիկա ամէնէն ծանր աշխատանքն է: Հայ գիւղատնտեսները ստեղծած են վազեր, որոնք ցուրտին կը տոկան: Ինչպէս յայտնի է, Արարատեան դաշտը տաք կլիմայ ունեցող տարածութիւն մըն է, ուր սակայն, ձմեռը օդի ցուրտ հոսանքներու ենթարկուելով կը ստուի: Ասիկա մեծ վնաս կը հասցնէ պտղատու ծառերուն եւ, յատկապէս, խաղողին:

Մասնագէտները հայկական եւ Գարագոյն Արեւելքի վազերը խաչաձեւելով « Բուրմունք » անունով նոր տեսակի խաղող ձեռք ձգած են: Ասիկա մինչեւ 30 աստիճան ցուրտին կը դիմանայ: Այդ խաղողէն պատրաստուած գինին անցեալ տարի Փեշաւայի մէջ ոսկէ շքանշան չահեցաւ:

Ներկայիս Հայաստանի մէջ մեծ ու չաղութիւն կը դարձուի, որպէսզի պարտուները ցուրտին դիմանան եւ ժամանակէն առաջ հասունանան: Յաջողութեան պարագային կարելի պիտի դառնայ լեռնային չընաններու անմշակ ընդարձակ հողերը դարձալ կանաչ տուններով: Վերջին քանի մը տարիներուն խաղողի այգիները հաստատուած են Ծամազի, Իջեւանի, Եղեգնաձորի եւ այլ չընաններու աւելի քան հազար հեկտար լեռնալաններու վրայ: Համբաւ կը վայելեն տանձերի եւ խնձրերի այն տեսակները, որոնք կ'աճին եւ բերք կուտան ծովի մակերեսէն 1500-2000 մեթր բարձրութեան վրայ: Երեւանի սարահարթին, Գուգարքի եւ Սեւանի աւազանին: Մօտ ապագային պտուղի եւ խաղողի այգիները պիտի բարձրանան մինչեւ Զանգեզուրի լեռները: Նախատեսուած է յառաջիկայ 4-5 տարիներուն այգիներ հաստատել Գորիսի չընանի 2200 հեկտար տարածութեան վրայ, որոնք ոռոգումը պիտի կատարէ Որոտան գետը՝ ոռոգման յատուկ ցանցով: Ասիկա շինուելու վրայ է:

ԵԿԵՆՐԿՆԵՐ

ԵՕԹԱՆԸՄՆԸՄԵԱԿ՝
ՌՈՒՍԸՀԱՅՈՑ

ԱԶԳ. — ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱԼՈՒԱՄՆԵՐՈՒ
ԳՐԱԻՄԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԻ
(1903 ՅՈՒՆԻՍ 12ԻՆ)

— 0 —

Եօթնասուն տարի առաջ 1903 Յունիս 12ին, Ռուսաստանի Նախարարաց Խոր — հուրդի որոշումով եւ ցար Նիքոլայի հրո — վարտակով իր գաղաթնակէտին կը հաս — նէր հայահարած այն քաղաքականութիւ — նը՝ զոր մասնաւորաբար 1882 թուականէն ետք ի գործ կը գնէր ցարական իշխանու — թիւնը Արեւելահայաստանի մէջ, ուսաց — ման կարգախօսքով։

1882—1902, քսան տարիներու իրերա — յաջորդ քայլերը հայ մտաւորականու — թեան եւ վարժարաններու, բարեկործա — կան եւ հրատարակչական ընկերութեանց դէմ՝ անշուշտ ընդվզում ու զայրոյթ ստեղծած էին հանրային յայն դանդուա — ներու մէջ, սակայն գործնական որեւէ արտայայտութիւն չէին գտած մինչ այդ։ Հայ ազատագրական եւ յեղափոխական շարժումը կեդրոնացած էր Արեւմտահա — յաստանի մէջ եւ խոհականութիւնը հար — կադրած էր որ նաեւ հ. Յ. Դաշնակ — ցութիւնը իր ուժերը համախումբ պահէ թրջական ճակատի վրայ բացառապէս։

1903 Յունիս 12ին ցարական կառավա — րութեան որոշումով հրապարակուած կայսերական հրովարտակը, սակայն, որ կը հրահանգէր «կառավարչական հիմ — նարկուքիւնների տեսչութեան տակ կեդ — րոնացնել» Ռուսահայոց ազգային — Եկե — ղեցական կալուածները, դարձաւ ջուրի այն վերջին կաթիլը, որ յորդեցուց բա — ժակը եւ բովանդակ Հայութիւնը մղեց հաւաքական բախտորոշ ծառացումի, ալ — դային — կրթական մեր կեանքն ու հան — րային ինքնավարութիւնը արմատապէս անդամալուծելու կոչուած կարգադրու — թեան մը դէմ։

Հարուածին ուղղակի եւ անմիջական թրբաբը հայ վարժարաններն էին ան — շուշտ, որոնք, աղբ — եկեղեցական կալ — ուածներու եկամուտներէն զրկուելով, պիտի դատապարտուէին իրենց դուռները փակելու ճակատադրին։ Աւելի ընդհան — րական աղէտ մը պիտի ըլլար սակայն ազգային մեր ինքնորոշութեան իրաւուն — քին կապտումը այս ձեւով, — այսինքն՝ ցարական հայահարած քաղաքականու — թեան եւ ուսացման շարժումի ամբող — ջական յաջողութիւնը ի վնաս աղբային մեր ինքնութեան պահպանումի ճիգերուն եւ համապատասխան նիւթական միջոց — ներուն։

Կոյլկասի կառավարիչ Կալիցին, գըլ — խաւոր աջակից ունենալով ցարական կա — ռավարութեան վարչապետը՝ Փլեւէ, ու — նէր այն ապահովութիւնը որ Հայութիւ — նը, գլխիկոր եւ անգոր, պիտի ենթար —

ՀՆԱԳՈՅՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԵՒ ԱՆՈՆՑ ՊԱՏՄԱՆՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Գ. եւ վերջին մաս

Անտարակոյս, սկզբնական շրջանին չա — փազանց դժուար պէտք է ըլլար այդ նո — րատուող ըստապաշարով ինքնուրոյն փի — լիսփոխական երկեր գրելը։ Որոշ ժա — մանակ պէտք էր այդ մասնագիտական լեզուն եւ տարադները մարսելու համար։ Ուստի, հաւանաբար, յունական կրթու — թիւն ստացած իմաստասէրներուն հա — մար աւելի դիւրին պէտք է ըլլար իրենց գործերը նախապէս գրել վաղուց կա — յունացած եւ միջազգային նշանակութիւն ունեցող յունարէնով եւ ապա գանոնք թարգմանել հայերէն, օգտագործելով ստեղծուած նոր բառերը, շտկելով ան — յաջողները եւ կերտելով նորերը։ Այս իրողութիւնը կը հաստատուի Դաւիթ Ան — յաղթի ստեղծագործութեամբ։ Անոր գործերուն մնացած յունարէն եւ հայերէն տարբերակները, ինչպէս սպացուցած են Ն. Ադոնց եւ Յ. Մանանդեան, կը վկա — յեն, որ մասնագիտական փիլիսոփայա — կան երկերը, ինչպէս «Սահմանք իմաս — տասիրութեան»ը, Արիստոտէլի «Անալի — տիկա»ի ու «Կատեգորեանք»ու, նաեւ Պորփիրի «Ներածութեան» վերլուծում — ները, Դաւիթ Անյաղթ նախ շարադրած է յունարէն Ե. դարու վերջերը եւ Ջ. դարու սկիզբները, իսկ այնուհետեւ՝ մին — չեւ Ջ. դարու կէսերը, անոնք թարգ — մանուած են հայերէն, հաւանաբար, հե —

կուէր կայսերական այս նոր տնօրինու — թեան, նկատի ունենալով այն իրողու — թիւնը որ, մինչ այդ, լուռ ու համակերպ կեցուածքով դիմաւորած էր ամէն խրո — տութիւն։

Հակառակ այս նախատեսութեան, սա — կայն, ընդվզումի ալիքը մէկ օրէն միւ — սը ստացաւ տարբարային շարժումի մը տարողութիւնը, եւ նոյնիսկ անոնք որ համակերպումը խոհեմութիւն դաւանե — լու տրամադրութիւն ի յայտ բերած էին միշտ՝ բոլորուեցան Հ. Յ. Դաշնակցու — թեան մարմիններուն եւ ղեկավարութեան շուրջ, նախ վճռական ընդդիմութեան մղելով օրուան հայրապետ (Խրիմեան Հայրիկ)՝, ապա մասնաւոր մարմին տա — լով «Հայկական Իմեմապաշտպանութեան Կառնի»ի մը, որ դարձաւ համաժողո — վրդային ծառացումը ղեկավարող հա — մազգային հեղինակութիւն։

Պատմականօրէն հրահանգիչ եւ ազգա — յին առումով հպարտառիթ ինչ դրուագ — ներ կան աւելի քան երկու տարիներու այն հաւաքական ըմբոստացումին մէջ, զոր ցոյց տուաւ Ռուսահայութիւնը 1903—1905, ոտքի հանելով նոյնիսկ թուր — մորթները, ահաբեկելով Նակաչիքէի պէս

դիւակին հսկողութեամբ կամ մասնակ — ցութեամբ։

Դաւիթ Անյաղթի գործերուն շնորհիւ հայ փիլիսոփայութիւնը թեւակոխեց իր զարգացման մասնագիտական փուլը եւ, անջատուելով կրօնա — դաւանաբանական տեսութիւններէն, դարձաւ առանձին, ինքնուրոյն գիտութիւն՝ սեփական հար — ցերով եւ յղիւած տարազով։ Անոր գոր — ծերով Հայաստանի մէջ ստեղծուեցաւ փիլիսոփայական ուղղութիւն մը, որ այն ժամանակ ամէնէն տարածուածն էր Ա — սիկա նոր — պղատոնականութիւնն էր։

Յունաբան դպրոցի գիտական եւ լեզ — ուական հսկայ աշխատանքին շնորհիւ աղբ մը, որ ընդամէնը հարիւր տարի առաջ էր ձեռք ձգած իր դիրք եւ հիմը դրած իր սեփական դպրութեան, հնարաւորու — թիւն կը ստանայ իր լեզուով կարգալու — այն ժամանակուան ամէնէն բարդ փիլի — սոփայական գործերը։ Այդ դպրոցին մե — ծագոյն նուաճումներէն մէկն էր նաեւ Պլատոնի երկերու թարգմանութիւնը Ջ. դարու սկիզբը։ Յունաբանները, մեծ մա — սամբ իրենց ուսումը ստանալով նոր — պղատոնականութեան ամէնէն մեծ կեդ — րոնին՝ Աղեքսանդրիոյ մէջ, եւ յարելով այդ ուղղութեան, ո՛չ մէկ դժուարու — թեան առջեւ կեցան եւ հայ ընթերցողին

տիրահռչակ ու հայատեսաց փոխ — նահան — գապետը Երեւանի, ուսւ ընկերվար — յե — դափոխականներու գործակցութեամբ զգեսներով Փլեւէն, եւ հարկադրելով ի վերջոյ ցարական իշխանութիւնը, որ Կալիցինի տեղ պաշտօնի կոչէ Վորոնցով — ծաչկովը, քաղաքականութեան հիմնա — կան փոփոխութեամբ մը 1905 Օգոստոս մէկին չեղեալ յայտարարելու համար կալուածներու գրաւման յատուկ 1903 Յունիս 12ի հրովարտակը։

×

Հայոց ժամանակակից պատմութեան ամէնէն խոռվիչ ու խորիմաստ դէպքե — րէն մէկն է 1903—1905 երկամեայ միաճա — կատ ծառացումը Արեւելահայութեան՝ ցարերու ուսացման քաղաքականութեան դէմ։

Վկայութիւններէն մէկը աղբային ու պատմական այն իրողութեան, որ վտան — քի գիտակցութեան մղումով իւրացուած ամէն՝ դատ՝ յաջողութեամբ եւ յաղթա — նակով կը պսակուէ...։

Մ. Թ.

հրամցուցին իրենց հոգեւոր հօր՝ Պլա — տոնի երկերը՝ «Տիմէոս», «Եւտիփրոն», «Մինոս», «Սոկրատի պաշտպանութիւն», «Օրէնքներ»ը։

Պորփիրի Արիստոտէլի եւ Պլատոնի երկերու թարգմանութեանց շնորհիւ եւ, յատկապէս, Դաւիթ Անյաղթի աշխատու — թիւններով հայ փիլիսոփայական դրա — կանութիւնը աստիճանաբար կը մասնա — գիտանայ եւ իր էութեամբ աշխարհիկ կը դառնայ։ Այդ երկերը, հիմնականին մէջ նուիրուած ըլլալով դոյարանութեան, ի — մացարանութեան, տրամաբանութեան եւ մասամբ նաեւ հասարակագիտութեան եւ բարոյագիտութեան հարցերուն, հայ ի — րականութեան մէջ կը դառնան հաստա — տուն հիմ մը՝ փիլիսոփայական գիտու — թիւններու զարգացումին համար։ Ա — տոնք՝ իրենց հարուստ եւ ճկուն բառա — սլաշարով հայ փիլիսոփայական միտքը կը բարձրացնեն ժամանակակից զարգա — ցած երկիրներու գիտութեան մակարդա — կին։ Սակէ գատ, արդէն Ջ դարու առա — ջին կէսին, շուրջ դարու մը եռանդուն գործունէութեան շնորհիւ, դասական շրջանի հայ հեղինակներու եւ յունաբան դպրոցի գործիչներու ստեղծած թարգ — մանական եւ ինքնուրոյն ժառանգութեան շնորհիւ Հայոց լեզուն ու հայ մշակոյթը կը բարձրանան եւ կը հասնին այն ժա — մանակուան ամէնէն մշակուած դրական լեզուներու՝ յունարէնի, ասորերէնի, լա — տիներէնի, պարսկերէնի եւ անոնց մշա — կոյթներու աստիճանին։

Ջ. Է. եւ Ը. դարերու իմաստասէրնե — րը՝ Պետրոս Սինեցի, Դաւիթ Հարքացի, Խոսրովիկ Թարգմանիչ, Անանիա Շիրա — կացի եւ Ստեփանոս Սինեցի իրենց ինք — նուրոյն գործերուն եւ կամ յունարէնէ կատարած իրենց թարգմանութիւններուն մէջ աղղեցութիւնը կրած են Արիստո — տէլի, Պորփիրի եւ, յատկապէս, Դա —ւիթ Անյաղթի։

Յեւ — Դաւիթեան շրջանի հայ փիլիսո — փաներէն յատուկ յիշատակութեան ար — ժանի է Անանիա Շիրակացիի վաստակը, որ իր տիեզերագիտական եւ ուսողագի — տական աշխատութիւններով հայ փիլի — սոփայութեան մէջ հիմը դրաւ բնագի — տութեան ուղղութեան։ Իրեւ բնագէտ — փիլիսոփայ Շիրակացի կը հարստացնէ իմաստասիրական բառապաշարը յատ — կապէս բնագիտական տարադներով։

×

Ե. — Է. դարերու թարգմանութիւնները հայ միջնադարեան գրականութեան եւ գիտական միտքի ամէնէն փայլուն նուա — ճումներէն են։ Մաշտոցեան եւ յունաբան թարգմանչական դպրոցներու մեծագոյն դերը հայ մշակոյթի զարգացման գործին մէջ եղաւ այն, որ թէ՛ իրենց մեծարժէք թարգմանութիւններով, թէ՛ իրենց ինք — նուրոյն երկերով անոնք հայ դպրութիւնը բարձրացուցին օրուան զարգացած դրա — կանութիւններու մակարդակին։

Հին հայկական թարգմանութիւններու պատմա — մշակութեային արժէքը չի սահ — մանափակուիր հայ գրականութեան եւ

ԿՏԱԿՆ ԷՐ

ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ

Գրեց՝ ԱՐՇԱԻՐ ՇԻՐԱԿԱՆՆ

Ա. ՄԱՍ

Կ Բ Ա Կ Ի Մ Կ Բ Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԴԱԻԱՃԱՆ ՎԱՀԷ ԻՃՍԱՆԻ ԱՀԱԲԵԿՈՒՄԸ

Արշաւիր առանց ա կ ա ն ը կա — խելու կը հեռանայ՝ այդ շորորը, որ երեւի ոտականապետ էր, այս անգամ սպառնաց գէնք գործածել, եթէ չկենայ. Արշաւիր շուարեցաւ ու ինծի ալ ձայն տուաւ եւ ընելիքը հարցուց։ — Նետէ գէնքերդ ու փախիւր, գոչեց։

Բայց Արշաւիր փախչելու ժամանակ ալ չուէէր այլեւս. ոստիկանները մօտեցած էին եւ եթէ բռնէին զայն մեր ամբողջ գործն ու ծրագիրները ջուրը պիտի իյ — նային։

Այդ օրերուն եթէ Հայ մը գէնքերով բռնուէր, Թուրքերը ահազին վրլուկ պիտի — փրցնէին արդարացներով նաեւ իրենց կազմակերպած ջարդերը։ Աս էր համոզումս եւ անմիջապէս որոշումս տուի։ Պէտք էր աղատել ընկերս եւ ծա — դելքը անպատեհութիւններուն առաջը առնել։ Իսկ թէ ընելիքէս ինչ անպատե — հութիւններ կամ վտանգներ պիտի ծա — դէին, չիտակը ասիկա չխորհեցայ եւ ատեն ալ չուէէի։ Քաշեցի ասրճանակս եւ ոստիկաններուն ուղղութեամբ կրակ բացի, ի հարկէ վախցնելու քան թէ ըս — պաններու նպատակով։ Բայց ինդրեր մեծցաւ։ Անոնք ալ սկսան կրակել իմ ուղղութեամբ։ Ընկերս արդէն յաջողած էր փախչիլ գէնքերն ալ հետը։ Մենք կռիւր շարունակեցինք։ Թէեւ փողոցը մութ էր, եւ գիւս չէին կրնար տեսնել, բայց դիրքս խախուտ էր, գրեթէ փո — ղոցին մէջտեղունանք էի, զնգակները շուրջ կը սուլէին. պաշտպանուելու ձե —ւով ծոցեցայ, անցայ տան մը ներս քաշ — ուած դրան կամարին տակ ու յաջորդա — բար հինգ — վեց զնդակ եւս պարպեցի։ Երկուքը գետին ինկան, մէկը ոտքի ե — լաւ, բայց միւսը տեղը մնաց. ոտքի ել — լողը շարունակ կը կրակէր։ Իմ դիրքս լաւ էր եւ կրնայի երկար ատեն ինքզինքս պաշտպանել։

Յանկարծ ոստիկանները լռեցին. ես ալ դադրեցուցի կրակը եւ առիթէն օգտուե —

լով պարպուած ասրճանակս լեցուցի։ Երկու կողմէն լուռութիւնը կը շարունակ — ուէր. ալ զիրենք չէի տեսներ. կամ փա — խած էին կամ զարնուած եւ կամ յարմար պահուն կը սպասէին կրկին յարձակումի անցնելու համար։ Կամայ կամայ սկսաւ նահանջել, խուզարկելով չըջապասս. դէմս մարդ չեղաւ, արագացուցի քայլերս եւ հեռացայ ապահովութեամբ։ Չենկի — լեցի Արշաւիրը գտայ, գէնքերը ապահով տեղը հասցուցած էր։

Կը հետապնդէինք պատերազմի սեւ դէմքերը, լրտես — մասնիչները, որոնց վախճաններուն մարքագործուած էին ար — դէն. — Յարութիւն Մկրտիչեան, Հմայ — եակ Արամեանց, պուլկար Վլատիմիր։ Բայց դեռ կ'ապրէր զլխաւոր մատնիչ — ներէն մէկը, որ տակաւին իր շարաշուք ստուերը կը պտըտցնէր ճոխ կեանքի մը վախճաններուն մէջ, լիովին վարձատր — ուած թուրք իշխանութեանց կողմէ, յա — ղուզն ու մերթ մարաբուսան, ամէն տեղ կրկնելով. «Զիս սպաննողը դեռ մօրմէն չէ ծնած»։

Վահէ Իսսանն էր, ճիւղաղային հոգիով մատնիչը, որ ոչ միայն պատերազմի ըն — թացքին տնաքանդ սխրագործութիւնն — ըրով անուանի էր, այլ եւ Զինադադարի այդ օրերուն ալ կը շարունակէր իր ամօ — թալի գործը, քեմալականներուն գործա — կալը դառնալով եւ հայ յեղափոխական — ներու մտաւորականներու անուանացանկ

մը կազմած ու յանձնած էր քեմալական — ներուն, որպէսզի Պոլիս մտած ատենին ձերբակալեն զանոնք։

Ի վարժ իր ծառայութիւններուն, Վա — հէն առնուած էր թուրք զբաղնիչներուն շարքին մէջ։ Համաձայնական գրաւման ուժերն ալ զբաղնութիւն հաստատած էին։ Հայ Տառաքիլիկ կողմէ երբեմն փիէս մը կը տանէի թուրք զբաղնիչնե — րու. Վահէն ալ կը քննէր. բոլորովին կերպարանափոխուած էր հիմա, պատե — րազմի շրջանի փարատող գազանը լըն — դումերես դաճուով մը դարձած էր։ Ինչ — պէս կ'ըսէր միշտ, պատրաստ էր միշտ Տառաքիլիկին ծառայելու, եւ միշտ ալ մեր որպիսութիւնը կը հարցնէր հոգա — ծութեամբ։

Գիտէի արդէն որ Վահէն անցած է Դաշ — նակցութեան Սեւ Ցանկին վրայ. հետա — պընդողներէն մէկն ալ ես էի. բայց չի — տակի տակաւին մտքէս չէր անցներ թէ օր մը ինծի պիտի վիճակուէր տապալել այդ խնդումներս մարդը, որուն հասցէին ամէն օր նոր անէճքներ կ'իմանայինք։ Իրաւ ալ Զինադադարին լեզուները բա — ուած էին եւ ամէն օր անոր շարագործնե — թիւններուն նոր մէկ դրուագին կը տե — դեկանայինք։ Կարելի չէր որ մեր սիր — տերը չլեցուէին զայրոյթով եւ արդար վրէժի բուռն զգացումներով։

ՓԵՐԼ ՀԱՐՊԵՐԻ ԼՐՏԵՍԸ՝

ՄՈՐԻՄՈՒՐԱ


Մեր այսօրուան խաւարի ասպետը, ճափոնցի Մորիմուրա կը հանդիսանայ այն լրտեսը, որ կարելի դարձուց Փերլ Հարպըրի աննախընթաց ծրագիրը:

1941 Մարտ 26ին, ճափոնական նաւ մը խարխիւ կը նետէր Հոնոլուլուի նաւահանգիստը: Ի՞նչու ճամբորդներուն մէջ աչքի կը դարնէր երիտասարդ ճափոնցի մը, մօտ 28 տարեկան, մաքուր հագուած: Կը կրէր դիւանադիտական անցաւոր մը: Ծափոնի հիւպատոսարանին ինքնաշարժը կը սպասէր քարափին վրայ, որովհետեւ Մորիմուրա որոշ ատեն մը մաս պիտի կազմէր անոր անձնակազմին, ստուգելու համար Հալալեան կղզիներու մէջ ծնած ճափոնցի մանուկներուն ինքնութիւնը:

Այս էր Մորիմուրա Թատաչիւ պաշտօնական առաքելութիւնը, սակայն առիկա պարզ վարդապետ մըն էր՝ քողարկելու համար իր միւս աշխատանքը, այսինքն լրտեսութիւնը:

Ընդհանուր հիւպատոսը դայն ներկա յացուց միւս պաշտօնեաներուն եւ օտար դիւանագետներուն: Մորիմուրա սակայն շատ քիչ ժամանակ կ'անցընէր իր գրասենեակին մէջ եւ ոչ մէկ ակումբի անդամակցած էր: Կ'ապրէր մեկուսի: Իր աշխատանքէն դուրս, կը սիրէր չըջլի Հոնոլուլուի չըջլակայքը, 19 տարեկան ճափոնցի աղջկան մը ընկերակցութեամբ, որուն հանդէպ կը ցուցադրէր որոշ մը տեքստիլ:

Յաճախ կը մեկնէր Օահու կղզին եւ կը ճաշէր բլուրի մը վրայ՝ հաստատուած ճափոնական ճաշարանի մը մէջ, կէշաւորու հետ: Այդ ճաշարանի պարտէզէն



գիտութեան չըջանակին մէջ: Հին աշխարհի եւ քրիստոնէութեան սկզբնական շրջանի բաղձաթիւ գրական գործեր, ինչպէս, օրինակ, Փիլոն Աղեքսանդրացիի, Իրենէոսի (Երանոսի), Արիստիդէս Աթենացիի, Հերմէս Եռամեծի, Բարսեղ Կեսարացիի, Տիմիթէոս Աղեքսանդրացիի եւ այլ հին հեղինակներու երկեր փրկուեցան կորուստէ չնորհիւ հայկական թարգմանութիւններուն: Իսկ այն թարգմանութիւնները, որոնց յունարէն ընդգրկները պահպանուած են, աւելի հարադաս են հին՝ բուն գործերուն:

Հնագոյն հայկական թարգմանութիւնները դարձան միջնադարեան հայ գրականութեան ու գիտութեան կարեւոր բաղկացուցիչ մասը եւ ամբողջ միջնադարի տեւողութեան մնացին թարգմանական արուեստի եւ վարպետութեան անգերազանցելի օրինակ:

Մ. ԱՐԵՒԻՇԱՏԵԱՆ

կարելի էր իր ամբողջութեան մէջ տեսնել Փերլ Հարպըրի ծոցը, որ կը ծառայէր իրրեւ խարխիւ խաղաղական ամերիկեան նաւատորմին:

Այդ թուականներուն, ճափոնի եւ Միացեալ Նահանգներու դիւանադիտական յարաբերութիւնները թէեւ խզուած չէին, բայց հասած էին լարուած վիճակի մը: Ամերիկեան հակալրտեսական գործակալութիւնը շատ լաւ գիտէր, որ ճափոնական հիւպատոսարանները ընդհանրապէս եւ Հոնոլուլուի դեսպանատունը մասնաւորապէս լրտեսական լոյսներ էին եւ զանոնք առած էին խիստ հոկոյութեան տակ:

Մորիմուրա առատ դրամ կը ծախէր եւ միշտ կը թափառէր ճամբաներու երկայնքին: Բայց տրուած ըլլալով որ ամերիկեան դիւանագրական խարխիւներ հաստատուած էին ամալութեան մէջ եւ ընկալալարերէն հեռու, Մորիմուրայի ջանքերը կը մնային սպարդիւն:

Սակայն երիտասարդ սիրուհին ներկայութիւնը բաւական օգտակար եղաւ իրեն: Պահանջները նուազ խիստ կը գըտնուէին երիտասարդ սիրահարներու հանդէպ: Անոնք նաեւ մը կ'առնէին ու ձուլ կ'որստային Փերլ Հարպըրի ծոցին մէջ, խարխիւին մօտեցնել, առանց կասկած արթնցնելու: Մորիմուրա յաճախ օգնուած մը կը վարձէր եւ կէշաւորու եւ սիրուհին ընկերակցութեամբ պտույտներ կ'ընէր, միշտ խարխիւին շուրջը դառնալով:

Այս գործողութիւնները տեւեցին երեք ամիս, զրօսաշրջիկային երեւոյթով, յետոյ դադարեցան: Մորիմուրա Թատաչիւ արդիւարականացաւ իր սենեակին մէջ ու պատրաստեց մանրամասն տեղեկագրու թիւն մը, զոր դիւանադիտական պալատական միջոցով զրկեց Թոքիօ:

Փետրուար ամսուան, ճափոնական ըսպալակոյտը որոշած էր մասնակցի պատերազմին, Փերլ Հարպըրի նաւատորմին եւ խարխիւին վրայ յարձակում մը գործելէ հետք: Եւ ահա վեց ամիս շանցած կը հասնէր այնքան սպասուած տեղեկագիրը:

Սպալակոյտի մասնակցները ուշի ուշով ուսումնասիրեցին Մորիմուրայի զբոսական թուղթերը եւ հասան հետեւեալ եզրակացութեան՝ կատարուիիք յարձակումը կրնայ յաջողիլ, բայց մեծ վնասներու կրնայ ենթարկիլ յարձակող կողմը: Ուստի, որոշուեցաւ յաւելեալ տեղեկութիւններ պահանջել Մորիմուրայէն:

Սակայն պայմանները փոխուած էին եւ լրտեսին գործը դժուարացած: Միացեալ Նահանգները որոշած էին հաղորդակցութիւնները կտրել Հալալեան կղզիներու եւ ճափոնի միջեւ: Ո՛չ ճամբորդ, ո՛չ հեռագիր, ո՛չ իսկ նամակ:

Այլեւս պտույտները չօչափելի արգելեցներ էին կրնար տալ, պէտք էր դիմել աւելի լուրջ միջոցներու: Ծափոնցի երիտասարդուհին ներկայութիւնն ալ կրնար աչքի դարնել: Ուստի, Մորիմուրա որոշեց առանձին գործել: Ծափոնցի Ֆիլիպինցի արհեստաւորի մը հա-

գուտներով եւ թափառեցաւ ազարակէ ազարակ՝ դորձ գտնելու համար: Ծառաբեղէի հունձքին եղանակը ըլլալով, գործը դժուարացաւ: Եւ մինչ ընկերները հեւ ի հեւ լծուած էին իրենց աշխատանքին, որովհետեւ վճարուած էին իրենց կտրած եղջերներուն համեմատ, Մորիմուրա կ'երթար մինչեւ դաշտին ծայրամասը, հոնկէ կը գիտէր Փերլ Հարպըրի նաւահանգիստը եւ կը սորվէր հոն խարխիւսը գրահաւորներուն անունները:

Սեպտեմբերին Մորիմուրա յաջողեցաւ իրրեւ խոհանոցի սպասեակ մուտք գործել ամերիկեան մարտանաւի մը մէջ, որ չըջան մը ընելէ հետք հարաւային ծովերու մէջ, վերադարձաւ իր խարխիւին:

Մինչ այդ, Թոքիօյի մէջ, սպալակոյտի մասնակցները, երկար ուսումնասիրութիւններէ հետք, հասած էին հետեւեալ եզրակացութեան: Ծրագրին յաջողութիւնը կախում ունէր հետեւեալ երեք կարեւորութիւններէ.

1. խաղաղականի մէջ նաւարկել մօտ 4.500 քիլոմէթր՝ առանց նշմարուելու Ամերիկացիներէն: Ամէնէն դժուար մասը պիտի ըլլային վերջին հազար քիլոմէթրները, որոնք կը գտնուէին ամերիկեան ջրօդանւերու յարստեւ հոկոյութեան տակ:

2. Մարտանաւերը պարենաւորել իրենց ճամբորդութեան ընթացքին:

3. Մասնակցութիւնը ապահովել առնուազն վեց օդանաւակիրներու եւ 350 ռաբաժիք օդանաւերու:

Բայց ո՞ր պիտի գտնուէին ամերիկեան նաւային ուժերը յարձակումի ընթացքին: Մարիմուրայի զրկած տեղեկութիւններուն համաձայն, ամերիկեան նաւային բոլոր միաւորները կը խարխիւին Փերլ Հարպըրի ծոցին մէջ Ծառաթ իրիկունները, ազատ Կիրակի մը ապահովելու համար անձնակազմին:

Մօտեցումի լաւագոյն ճամբան նկատուեցաւ 40րդ դուրահեռականը, ուրկէ տարիներով ոչ մէկ նաւ անցած էր: Այս բանը ստուգելու համար, սպալակոյտը ուղեց փորձ մը կատարել:

«Թալիօ Մարու» ճամբորդատար նաւուն ամբողջ անձնակազմը փոխուեցաւ: Նաւապետը եւ զլխաւոր սպային պաշտօնները յանձնուեցան զաղտնի գործակալութեան լաւագոյն տարրերուն:

«Թալիօ Մարու» ճամբայ ելաւ 1941 Սեպտեմբեր 27ին եւ ուղղուեցաւ դէպի արեւելք, հետեւելով 40րդ դուրահեռականին, մինչեւ Հալալեան կղզիներուն հիւսիսը: Նոյեմբեր 4ին անիկա կը հասնէր Հոնոլուլուի առջեւ: Սակայն տրուած ըլլալով երկու երկիրներու յարաբերութիւնը, նաւուն արտօնութիւն չտրուեցաւ մուտք գործել նաւահանգիստէն ներս: Ո՛չ մէկ ճամբորդ կամ այցելու կրնար ինչեւ կամ բարձրանալ նաւ: Միայն ընդհանուր հիւպատոս Մինամի արտօնուեցաւ նաւ բարձրանալ եւ տեսակցիլ «Թալիօ Մարու»ի անձնակազմին եւ հրամանատարին հետ: Այս վերջինը անոր

յանձնեց խոշոր պահարան մը որ կը կրէր Մորիմուրայի անունը: Նաւը երկու օր մնաց Հոնոլուլուի առջեւ. յետոյ մեկնեցաւ:

Ընդհանուր հիւպատոսը պահարանը յանձնեց Մորիմուրայի: Պահարանին մէջ կար հարցարան մը, 97 հարցումներով, որոնց պատասխանը կը սպասուէր շուտով: Այդ պատասխանները պիտի կազմէին առնուելիք քայլերուն հիմը: Մորիմուրա բոլոր հարցումներուն ճշգրիտ պատասխանը տուաւ, բայց ոչ վերջինին, որ հետեւեալն էր.

— Փերլ Հարպըրի ծովային խարխիւին մուտքը ազա՞տ է թէ պաշտպանուած մետաղէ ուղեղով:

— Փերլ Հարպըրի ծովային խարխիւը պաշտպանուած չէ մետաղէ հակընդծովեայ ուղեղով: Ասիկա եղաւ Մորիմուրայի միակ սխալը:

Երբ «Թալիօ Մարու» հեռացաւ Հոնոլուլուէն, հետք կը տանէր Մորիմուրայի 97 պատասխանները:

Ամիջապէս որ նաւը ճափոն հասաւ, սպալակոյտը գումարեց դադարի ժողով մը եւ որոշուեցաւ յարձակումի օրը 1941 Դեկտեմբեր 8: Մովակալ Եամամոթօ նախ ընդգիծացաւ ընդծովեաներու մասնակցութեան, բայց երբ իրենց ցոյց տուին Մորիմուրայի պատասխանը 97րդ հարցումին, ծովակալը համոզուեցաւ եւ ըսաւ.

— Օդանաւերը պիտի ըլլան յարձակող նիւթակերպ, իսկ ընդծովեաները՝ անոր զաւոյնը:

Նոյեմբեր 18ին՝ բոլոր ընդծովեանները մեկնեցան ճափոնի զանազան խարխիւներէն, հաւաքուելու համար այն կէտին վրայ, ուրկէ պիտի սկսէր յարձակումը: Նոյն օրը ճամբայ կ'ըլլէր ճափոնական նաւատորմը, բաղկացած վեց օդանաւակիրներէ եւ 50ի չափ մարտանաւերէ: Քարիւղատար նաւեր կը մեկնէին նաեւ ճափոնի զանազան նաւահանգիստներէն, վառելանիւթով պարենաւորելու համար այդ անկուշտ ու շուայ հակները: Դեկտեմբեր 6ին նաւատորմը, կարգ մը միջադէպերէ հետք, հասած էր Փերլ Հարպըրէն 1.200 քիլոմէթր հեռու, այսինքն կը գըտնուէր վտանգաւոր դօսիի սահմաններուն վրայ: Կը բաւէր որ ամերիկեան ընդծովեայ մը կամ դիտանաւ մը զանոնք նշմարէր, որպէսզի ամբողջ ծրագիրը ձախտ գտնուէր: Այս հեռաւորութենէն կարելի չէր օդանաւակիրը արձակել: Հրամանատարը հրահանգեց որ նաւերը կանգ առնեն մինչեւ մայրամուտ եւ պատրաստուին վերջին հանդերձանին, իրենց մեքենաները մեծագոյն արագութեամբ հասցնելու համար թիրախին, օդուղեով դիւերուան մուկէն:

Փերլ Հարպըրի յարձակումը բոլորիս ծանօթ պատմական դէպք մըն է, որուն մանրամասնութիւնները կուտանք ուրիշ առիթով մը:

Մեք հետաքրքրողը Մորիմուրան էր, որուն հայրենասիրութեան եւ ձեռնբեցութեան կը պարտի ճափոն այս յաղթանակը: «Թալիօ Մարու»ի մեկնումէն ի վեր, ան փակուած կը մնար իր գրասենեակին մէջ ու հեւ ի հեւ կը սպասէր բանի մը, որուն տարողութեան ինք միայն ծանօթ էր:

Մորիմուրա երկար չուպսեց: Դեկտեմբերի օր մը, յանկարծ մետաղէ թռչուններուն արտասովոր բզբիւնը տարածուեցաւ երկինքի մէջ, եւ ամիջապէս ռումբերու ու թնդանոթներու պայթումը բացումը կատարեց այն հեթանոս եւ վայրագ հանդէսին, որ տեւեց ժամեր: Ծափոնցիները ընտրած էին իրենց օրը եւ ժամը, եւ իրենց հարուածին ուժգնուութեան տակ, որոշ ժամանակի մը համար, զգետնած էին ամերիկացի հակա:


Վնասները հետեւեալներն էին: Ծափոնցիները ընդամենը կորսնցուցած էին 48 օդանաւ եւ հինգ փոքրիկ սուզանաւ: Ամերիկացիներուն կորուստները հետեւեալներն էին.— 8 զրահուոր, 3 զրահապատ նաւ, 3 խորտնկեց, 1 օդանաւակիր, 273 օդանաւ, առանց հաշուելու միւս նաւերուն եւ չէնքերուն պատճառուած զանազան վնասները, եւ առանց հաշուելու հազարաւոր մեռեալներ եւ վիրաւորներ:

Յաջորդ օրը, երբ ամերիկացի ուսուիրականը պաշտպանին ճափոնական հիւպատոսարանը եւ կալանքի տակ առին բոլոր դիւանագետներն ու պաշտօնեաները, Մորիմուրա խորհրդաւոր ժպիտով մը բարեկեց ռատիկան սպային ու գոհունակ տրամադրութեամբ հետեւեցաւ անոր:

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԽՈՒՏԵԱՆ

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ

(213)



ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՕՎԻՏԻ ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ջ.

— Ես Պարոն Արնոլտ Ռայս կը կոչուիմ, պատասխանեց Օվիտ ժպտուն:

— Երբեք պիտի չմոռնամ այդ անունը: Քանի մը երկաւորեցանք սահեցան: Պաշտօնեան ձեռքին մէջ բռնած էր պանք-տոմսերը ու զանոնք կը դիտէր. նեղուած դէմք մը ունէր:

— Եփոթած երեւոյթ մը ունիք, ըսաւ Օվիտ: Բա՞ն մը կ'ուզէք ինձմէ:

— Այո: Ձեզմէ պիտի խնդրէի ինձի տալ Պ. Փրէթմանի վերադարձուցած պարտաւորականները:

— Այրեցի զանոնք, պատասխանեց Օ-

վիտ: Կ'ըմբռնէք թէ այս տեսակ թուղթեր չեն պահուիր:

Ժամը տասը հնչեց պատի ժամացոյցը: Օվիտ ոտքի ելաւ ու ըսաւ.

— Ձեր գրասենեակը երթալու ատենը եկած է: Ես Փարիզ պիտի դառնամ: Իրարմէ պիտի բաժնուինք: Գէշ կացութեան մը փրկեցի ձեզ: Զգուշացէք դարձաւ նոյն վիճակին մէջ ինչպէս: Պարոն Տիւլլիմէն, վերջնականապէս չենք բաժնուիր իրարմէ: Օրին մէկը, թերեւս նորէն իրար գտնենք...:

— Եստ գոհ պիտի ըլլամ, պարոն: — Ես ալ. ուստի «ցտեսութիւն» կ'ըսեմ:

Իրիկուն Ժամը հինգին, Փարիզ հասաւ Օվիտ: Ատենը ուշ էր, Քուրպըլուայի գործարանը երթալու եւ Փօլ Հարմանը տեսնելու համար: Մուրիլլօ փողոցի բնակարանն ալ երթալ չուզեց: Ուստի յաջորդ օրուան յետաձգեց իր այցելութիւնը ու Քլիւի փողոցը դնաց: Հոն փոխեց իր զգեստը եւ Պարոն Առնոլտ Ռայսի կերպարանքը առաւ:

— Զգուշութիւններ ձեռք առնել ու ամէն բան նախատեսել, ահա օգտակար ու խելացի գործ մը, ըսաւ Օվիտ մտովի: Մինչեւ հիմա Ամանտայէն վախճալիք բան չէ չուցիմ, քանի որ բան մը չի գիտեր, ու Լիւսիի արկածը գողերու կը վերաբարձր, բայց խոհեմութիւնը կը պահանջէ որ օրին մէկը ինձի սպառնալու հակա-

մէտ եղողներուն հասկցնեմ թէ անձնապէս զրահուած եմ ու սոսկալի զէնքեր ունիմ իրենց դէմ: Ով որ առաջուրէն կը զողայ՝ անգոր է: Այս իրիկուն, Ամանտայի հետ պիտի ճաշեմ:

Տիկին Օկլեաթիին աշխատանոցի գործաւորուհիներու արձակման ժամէն առաջ, դնաց Սէնթ-Օնորէ փողոց: Ամանտա ուրախութեան ճիւղ մը արձակեց, երբ տեսաւ որ զինքը կը դիմաւորէր կեղծ Առնոլտ տը Ռայս, ան կը կարծէր որ իր պղատոնական սիրահարը խզուած էր իրեն հետ, նամակ զրկած չըլլալուն համար:

— Դո՛ւք էք, բարեկամս: Վերջապէս երեւան ելաք, դուքնք մանկամարդ աղջիկը, անոր ձեռքը բռնելով ու ինքզինքը զապելով, որպէսզի սիրահարին վիզը չցատէ:

— Նոնոչս, յոյս չունէի՞ք որ իմ երես պիտի տեսնէիք այլեւս:

— Կը խոստովանիմ որ ձեր յանկարծական մեկնումը քիչ մը կասկածելի կը թուէր ինձի, իսկ ձեր լուծութիւնը՝ ալ աւելի կասկածելի:

— Մեր բաժանումի օրերուն՝ շատ ճամբորդեցի:

— Ծամբորդութիւնը արգելք չըլլար նամակ գրելու:

ԿԶԱՎԻՆ ՏԸ ՄՈՆԹԷՓԷՆ

(Շար.)

ՅԱԽԱԿՑՈՒԹԻՒՆ

Մարտէյի Հ. Յ. Դաշնակցութեան Շրջ. Կոմիտէն իր բոլոր ընկերներու անունով, իր խոր ցաւակցութիւնները կը յայտնէ Շարոյեան ընտանիքի բոլոր անդամներ — բուն՝ ընկ. Զաքար Շարոյեանի մահուան առթիւ:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՀԱՄԱԽԱՐԲԵՐԴՅՈՒՅՈՒՄԱՆ Միութեան Սէնթ Անթոնի մասնաճիւղի անդամական ժողովը այս Շարաթ (Յունիս 30) ժամը 20:30ին, Պր. Ներսէսեանի սրճարանը, Պառ. տը լա Կառ: Անդամներու ներկայութիւնը խիստ կարեւոր է:

Հ. Յ. Դ.

ՓԱՐԻՋ. — Հ. Յ. Դ. Բաֆֆի խումբի ժողովը Ուրբաթ (Յունիս 29) ժամը 20:30ին, Փարիզի Մշակոյթի Տունը: Խիստ կարեւոր օրակարգ:

×

ՄԱՐՍԷՅԻ. — Հ. Յ. Դ. Շրջ. Կոմիտէն ընկերական ընդհ. ժողովի կը հրաւիրէ իրենց սովորական հաւաքատեղին՝ — Շ. Միսաքեան խումբ՝ Երեքշաբթի Յունիս 3, ժամը 21ին: — Զաւարեան եմբակամիտէն՝ Շարաթ Յունիս 7, ժամը 20:30ին:

ՃԱՇ ՎԱՐԴԱՎԱՌԻ ԱՌԹԻԻ

Կազմակերպուած Տարոն-Տուրուբերանի Հայր. Միութեան կողմէ, Յունիս 8, Կիրակի կէսօրին Հայ Մշակոյթի Տունը 17, Ռիւ Պլէօ, Մեթրօ Բառէ կը նախագահէ ԼԵՒՈՆ ՏՕՆԻԿԵԱՆ
Խօսք կ'աւանդէ. — ԽԱՉԻԿ ՄԿՐՏԻ ՉԵԱՆ Եւ ԱՐԱՄ ՍԱՐԳԻՍԵԱՆ
Գեղարուեստական բաժին
Կը հրաւիրուին Տարոնցի հայրենակիցներ Եւ բոլոր հայրենակիցները անխտիր:

ԿԱՊՈՅՏ ԽԱՉ

ՕԴԱՓՈՈՒԹԵԱՆ ԿԱՅԱՆ ՓԱՐԻՋ

Փոքրիկներու Յունիսի խումբը կը մեկնի Յունիս 2ին, Սքուար Մոնթոլոնէն, ժամը 7:30ին: Ծնողքներէն կը խնդրուի առաջնորդել իրենց զաւակները, որոշեալ ժամուն:

ԼԻՈՆԻ ԽՈՒՄԲ

Յունիսի խումբը կը մեկնի Յունիս 2ին, կէսօրէ ետք ժամը մէկին: Ծնողքներէն կը խնդրուի իրենց զաւակները առաջնորդել Հայրց եկեղեցի, 295 Ռիւ Պուալ, որոշեալ ժամուն:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԿԱՐՕ ՄԵՀԵԱՆԻ

«ԽՆԱՍՏՈՒԹԵԱՆԻ ՈՂԻՈՒՄ»

Ամբողջական հատորը (Հէֆթաքներ Եւ աւանդութիւններ) 330 էջ, ընտիր քույր, մաքուր տպագրութիւն Գին՝ քարակազմ 15 ֆր. լաքակազմ 20 ֆր.

×

Հայաստանի

ԱՆԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Իրրիւ գաղափար Եւ իրրիւ առաջադրութիւն) Գին 5 ֆր.

Կարելի է ստանալ Փարիզի Մշակ. Տան գրասենեակէն 17. Ռիւ Պլէօ

Imprimé sur les Presses

DU JOURNAL « HARATCH »

83, Rue d'Hauteville, Paris (10e)

ԽԵՏԵՐԵԱՆ

Էջմիածնի Եւ Վարդանի մետալին ստեղծագործը

Եւ ընդհանրապէս. գոհարեղէնի արեւ գնումի մը համար ձեր տրամադրութեան տակ է

EDOUARD KHEDERIAN

66, Rue Lafayette, PARIS (9^e)

Tél. : PRO. 11-63

40 ՏԱՐԻՆԵՐՈՒ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆ

ԽԵՏԵՐԵԱՆ



Հ. Մ. Ը. Մ. - ԱՐԾԻԻ
ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍ
ՄԱՐՍԷՅԻ ՄԷՋ, ՎԱԼԱՊՐԻ ԱՆՏԱՌԸ
Կիրակի, Յունիս մէկ, առաւօտեան ժամը 10ին պուլի մըցում — մանկական խաղեր ժամը 14:30ին:
Գեղարուեստական բաժին ու հայկ. ժողովրդական երգ ու պար
Շամփուրով խորոված — ըմպելի
Քառերու մեկնում ժամը 8:30ին Պոմոնէն, Պառ-Թապա, 8:45ին Պառ տիւ Կիոպ ժամը 9ին Պառ-Փապալ:

ՀԱՃԵԼԻ ԶԲՕՍԱՊՏՈՅՏ ՄԸ ԹՈՒԲԷԻ ԾՈՎԱՓԸ

ԼԻՈՆ Ա. ՅԱԿՈԲ

Կազմակերպուած Փարիզի Խառն Սա- նուց Միութեան կողմէ, Յունիս 14, Շա- րաթ առաւօտեան ժամը 7ին, հաւաքուել Կառ տիւ Նոռ, Քաֆէ Բիւրվիէօրի առջեւ: Վերադարձ ժամը 23ի առեւտները:
Խառնակական հաճելի մթնոլորտ: Իր մասնակցութիւնը կը բերէ Օր. Անահիտ Սվաճեան ձեռնադաշնակի ընկերակցու- թեամբ: Պոստ օթոքառով ծովեզերեայ չրջանները:
Ծախքերու մասնակցութիւն 30 ֆր. օթոքառով, առանց ճաշի:
Կը խնդրուի կարելի եղածին չափ չուտ արածնադրուել:
Հեռ. 842-08-57, Պր. Ասլանեանի

Կիրակի Յունիս մէկին, Սէն Մօրիսի ծանօթ դաշտին վրայ, դպրոցական դաշ- տահանդէս առաւօտեան ժամը 10էն մինչեւ ուշ երեկոյ:

Գեղարուեստական բաժին վարժարանի աշակերտութեան կողմէ Եւ վիճակահա- նութիւն: Արեւելեան համադամ կերա- կուրներ:
Անձրեւի պարադային խնջոյքի ձեւով տեղի կ'ունենայ, նոյն օրը, եկեղեցւոյս նորոգուած սրահին մէջ, կ. յետոյ ժա- մը 3էն սկսեալ:

Հ. Յ. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ԲԱՆԱԿՈՒՄ

ՕԴՈՍՏՈՍ ՄԷԿԵՆ 30
CAMP DU NOR SEROUND, COLONIE SAINT ANDRE, ROUTE DE BESSAN
34 BEZIERS (HERAULT) — Téléphone : 76-01-76

Հ. Յ. Դ. Նոր Սերունդի Կեդրոնական Վարչութիւնը իր տարեկան բանակումը կը կազմակերպէ այս տարի Պէզիէ
ՊԱՅՄԱՆՆԵՐ. — Մէկ ամիս՝ 600 ֆր., 14 օրէն աւելի, օրական 26 ֆր., 7 օրէն 14 օր՝ 29 ֆր. 7էն պակաս՝ 32 ֆր.

Արձանագրութիւնները՝ Զորքշաբթի Եւ Ուրբաթ իրիկունները ժամը 18էն 20 Եւ Շաբաթ օրերը՝ 16էն 20: Ծամբորդութիւնը՝ օթոքառով Փարիզէն:

ՀԵՐՈՍՆԵՐՈՒ ՕՐԸ

ՄԱՐՍԷՅԻ ՄԷՋ

Յունիս 29ին, Վալապրի անտառը

×

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Յունիս 22ին

×

ՎԱԼԱՆՍԻ ՄԷՋ

Յունիս 22ին, Մոնթէլէժի անտառը (Անձրեւի պարադային, Յունիս 29ին)

×

ՎԻԷՆԻ ՄԷՋ

Յունիս 15ին

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԲԱՑՈՒԱՄ ԵՆ

Ծնողքներ, որոնք կ'ուզեն իրենց զաւակներուն տարիքին համապա- տասխանող ֆրանսական դարձացման հետ, տալ նաեւ հայեցի դաստիարա- կութիւն, կրնան անվարան, զանազան յանձնել Հայ վարժարանի խնամք- ներուն:

Դիմել ամէն օր դպրոցի Տեսչուհիին հասցէն. —
1, Bld. du Nord — Le Raincy
Tél. : 927-01-72

ԱՂՔԱՏԱԽՆԱՄԻ ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍԸ

ԿԻՐԱԿԻ, ՅՈՒԼԻՍ 1 ժԱՄԸ 10-22

ՄՈՆՄՈՐԱՆՍԻԻ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՏԱՆ

ԴԱՐԱՍՏԱՆԻՆ ՄԷՋ, 44-50 Ավրիւ Շառլ տը Կօլ, Մոնմորանսի Դուռները կը բացուին ժամը 10ին Եւ կը տեւ մինչեւ ժամը 22
Կէսօրին կարելի է ճաշել ճաշացուցակին համաձայն: Կարելի է նախօրօք սեղան- ները ապահովել հեռաձայնելով՝ Մոնմորանսի 964-20-67 Եւ կամ Աղքատախնամի կեդրոնը 878-02-99

Աւանդական շամփուրով խորոված, թէ՛ կէսօրին Եւ թէ՛ իրիկունը: Անջատ առատ ամէն տեսակ ուտեստեղէն Եւ ըմպելիներ Բացառիկ ժամանցի օր մը, նուագ, երգ Եւ անկնկալներ: — Գեղարուեստական բաժին իրենց մասնակցութիւնը կը բերեն ՆԱՅԻՐԻ Եւ ՄԻՆԻ-ՍՕՍԻ պարախումբերը, Տիկին ԱԼԹԻՆԵԱՆ իր երգերով Օր. Անահիտ ՍՎԱՃԵԱՆ ձեռնադաշնակով

ԹՈՄՊՈՂԱ, արժէքաւոր առարկաներով
Մուտք 5 ֆր., ուսանողներու Եւ երախտներու 2 ֆր.
Անձրեւի պարադային, ապահովութիւններ ձեռք առնուած են:

ԾԱՆՕԹ. — Մոնմորանսի երթալու համար չողեկառք առնել Կառ տիւ Նոռէն Եւ իջնել Անկէն (Իւրաքանչիւր քառորդ ժամուն, անցնել կամրջակը Եւ թիւ 6 օթոպիւսով իջնել Կրոլէի կանգը (առէ):

ԿԱՐԵԻՐ. — Փափաքելի է որ ամէն ոք տեղւոյն վրայ ծախսէ, կը յանձնա- րարուի ուտելիք չբերել:



ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ ԵՒ ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

— 0 —

Առանձին է, կը կարծենք, Հայ Մամուլի եւ Հանրութեան յարաբերութեանց հետ աղերս ունեցող կարգ մը մասնաճիւղներ հրապարակաւ արժարժեւորու, որպէսզի մեր ժողովուրդը թիրիմացութիւններու մէջ չկարկառի՝ հայկական օրաթերթերու գոյալիւնակը բազմաաւելցան եղբայրացիներով օտարալեզու առօրեայ մամուլին հետ...

Ա.— Հայկական Արտասահմանի մէջ ներկայիս հրատարակուող օրաթերթերու թիւը 14 է, — չորսը՝ Լիբանանի մէջ՝ («Ազգայն», «Այգ», «Արարատ», «Զարբոն»)։ մէկը Յունաստանի մէջ («Ազատ Օր»)։ մէկը Ֆրանսայի մէջ (Փարիզ), «Յաւազ»։ մէկը՝ Հարաւ. Ամերիկայի մէջ, Պուէրտո Ռիչոյ (Արժանութիւն), «Արմինիա»։ մէկը՝ Պարսկաստանի մէջ («Արիւ»)։ երկուրդ՝ Եգիպտոսի մէջ («Արեւ» եւ «Յուսպեթ»)։ երկուրդ՝ Միացեալ Նահանգներու մէջ, Պոսթըն («Հայրենիք» եւ «Պայքար») եւ երկուրդ ալ Թուրքիոյ մէջ, Պոլիս («Ժամանակ» եւ «Մարմա - լա»)։

Այս տասնըչորս օրաթերթերէն չորսը Միայն անհատական սեփականութիւն կամ նախաձեռնութիւն են. մնացեալ տասը՝ կը հրատարակուին Հ. Յ. Դաշնակցութեան (6), Ռամկավար - Ազատական (3) եւ Հնչակեան (1) կուսակցութիւններու կազմակերպական նախաձեռնութեամբ։

Անհատական ըլլան անոնք թէ կազմակերպական, սխալ չըլլար հաւանորէն հաստատել թէ բոլորն ալ համալսելի ծառայութեան դերին մը մէջ են, անկասկարաւ «ծառայելու» իրենց ըմբռնումին տարողութենէն եւ այդ ըմբռնումը գործի վերածելու եղանակէն։

Սխալ չըլլար նոյնպէս արձանագրել, թէ անոնք, բոլորն ալ, առեւտրական բնոյթ չունին. եւ եթէ նոյնիսկ մէկն ու միւսը ուզեն դառնալ շահաբեր հաստատութիւն՝ իրենց կը պակսի գործնական հնարաւորութիւնը հաստիքաբար հիմնադրուիլու դառնալու։ Կրնան իրարմէ նուազ կամ աւելի սպառում ունենալ, իրարմէնուազ կամ աւելի եկամուտ ապահովել, սակայն իրենց «աւելի»ներով ու յաւելեալ մուտքերով ալ չեն կրնար... վաճառատուներու նմանիլ։

Եթեանստեղծութիւնը «Հայրենիքը» ամէնէն տարածուն ու փնտռուած օրաթերէն մէկն է Հայ Մամուլի, — ինչպէս «Ազգայն», «Արիւ» «Յաւազ»ը։ Սա — կայն անոնք, բոլորն ալ, յարաբերական իրենց ապահովութեան առընթեր, ունին պահանջներ, ծրագիրներ եւ պարտականութիւններ, զորս լրիւ իրագործելու համար կը կարօտին նոր աղբիւրներու...

Ոչ ոք պիտի մղուի ենթադրելու թէ ամէնէն բարեկեցիկ հայ օրաթերթէն մինչեւ ամէնէն տաղանաւոր մեր հրատարակութիւնները կրնան անխռով ապրիլ կամ սրտի հանգստութեամբ ձեռնարկել ծաւալի, բովանդակութեան ու տպագրութեան յատուկ բարեկարգութեանց։

Կ'ուզենք շեշտել պարզապէս, թէ մեր օրաթերթերու նիւթական կացութիւնը նոյնն է ամէն երկրի տակ, սփռութեան բոլոր ափերուն վրայ եւ հիմնական թիրիմացութիւն է ենթադրել թէ անոնք, իրենց տնտեսական հիմնաւորումով, կըրնան բազմաաւելցան որեւէ եղբայրացի օտարալեզու հրատարակութեանց հետ։

Մտաւորապէս ճիշդ կ'ըլլայ ըսել, որ «կը տապկուին իրենց իւրով», կը տուր ու կը տեսնեն՝ սակայն իրենց առօր-

ՕՐԱԹԵՐԹ ՀԻՄՆԱԴԻՐ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱԿԻԱՆ

ԲՐԵԺՆԵՒ ՓՈՄՓԻՏՈՒԻ ՀԵՏ

— 0 —

Բրեժնեւ Երկուշաբթի իրիկուն Օրիւ ժամանեց, ուր դիմաւորուեցաւ Նախա - րարապետին կողմէ։ Ռամկուլէի դըլ - եակը առաջնորդուելէ ետք յաջորդ առաւ - ւտ իր առաջին խօսակցութիւնը կ'ունենար Ֆրանսայի Նախագահին հետ։

Բրեժնեւ, անշուշտ, պիտի խօսի Նիւ - արնի հետ իր ունեցած հանդիպումներուն մասին եւ պիտի պարզէ կարեւորութիւնը ձեռք ձգուած արդիւնքին։ Խորհրդային - ամերիկեան միացեալ զեկոյցը, որ հրա -

եայէն անբաժանելի է պիւտեմակաւ հա - ւատարկչութեան մտնուածք։

Բ.— Հայ օրաթերթերու այս կացութեան մէջ, հանրային թէ անհատական աջակցութիւններու հարցը կը ներկայա - նայ երկու տարբեր բնոյթներով, — բա - րոյակաւ եւ գործնական։

Բարոյական իմացումներու ճամբով՝ լաւապէս կերպը պիտի ըլլայ ա՛յն, որ անհատական թէ կազմակերպական թեր - թեր փորձեն ամէն ճիւղ ըստ առաջնոյն տպաւորելու իրենց սեփական միջոցնե - րուն. տաղանաւոր, տառապելու, իրա - գործումը անկարելի արդիւնքներէ եւ բարեկարգութիւններէ հրաժարելու, եւ դժգոհալով՝ եղածով։ — Առաւելագոյն կարելիով։

Այս ձեռքով անոնք հետեւողական մնա - ցած պիտի ըլլան Հայ Մամուլի աւան - դական սկզբունքներուն, բարոյական եւ դաշնակցական իմացումներուն, եւ բնա - կանաբար շատ աւելի անկախ պիտի զղան զիրենք՝ հանրային ծառայութեան, իրմ - բազմապիսի եւ հրապարակաւորային իրենց առօրեայ աշխատանքներուն մէջ։

Անհատը պիտի ապաւինի իր անձնակա - կարգաբերութեանց, անձնական պատաս - խանատուութիւններով. իսկ կազմակեր - պութիւնները պիտի ապաւինին կազմա - կերպական կարգաբերութեանց, համապա - տասխան մարմիններու եւ ժողովներու պատասխանատուութեամբ։

Թէ մինչեւ ե՛րբ եւ ի՛նչ չափով ապա - հովութիւնը պիտի ունենանք սակայն ան - հատական ու կազմակերպական մեր օ - րաթերթերու կեանքը երաշխաւորելու՝ ոչ ոք վճռական կրնայ ըլլալ իր նախա - տեսութեանց մէջ, երբ նկատի ունենանք ժամէ ժամ բազմապատկուող պահանջ - ները եւ օրէ օր նուազող կարելիութիւն - ները։

Մենք որքա՛ն ալ ամուր փարած ըլլանք մեր սեփական նախախրութիւններուն եւ սկզբունքը դաւանինք բարոյական ըմբո - նումներու անփոփոխ ու անալոյս պահ - պանումը՝ Հայ Մամուլի այսօրուան եւ վաղուան առաքելութիւնը ի վերջոյ պի - տի մղէ մեզ հաշտութեան գործնաւարտ դատումին եւ առօրեայ կեանքի որոշ հար - կադրամաքներուն հետ...

Մամուլը դաշտ իջող ամէն թերթ, ան - հատ կամ կազմակերպութիւն՝ մեր կեան - քին իսկ հարկաւորանքով, կը դադրի սեփականատիրութեան մտածումով դո - ծելէ եւ կը դառնայ բարոյական հաստա - տութիւն, բարոյական անձ։

«ՀԱՅՐԵՆԻՔ»

պարակուեցաւ առջի օր, ցոյց կուտայ, թէ Ուաշինկթըն եւ Մոսկուա կը փափա - քին վերջ տալ Արեւելք — Արեւմուտք «սղաղ պատերազմ»ի հետեւելուն։ Երկու կողմերն ալ սերտ գործակցութեան մը ճամբով կ'ուզեն, որ եւրոպական ապա - հովութեան խորհրդովը, Հելսինքիի մէջ Յուլիո Յին, յստակ արդիւնքներ ար - ձանագրէ։ Ապա Արեւելք — Արեւմուտք մեծ խորհրդաժողովով մը համագործակ - ցութիւն մը հաստատեն երկուստեք։

Քաղաքական դէտերու տեսակէտով Բրեժնեւ պիտի առաջարկէ Ժ. Փոմպի - տուի, որ այդ մեծ խորհրդաժողովը տե - ղի ունենայ Փարիզի մէջ Դեկտեմբերին։ Ասոր կրնան մասնակցել բոլոր այն եր - կիրներու նախագահներն ու կառավարու - թեան պետերը, որոնք արդէն Հելսինքիի խորհրդաժողովին մասնակցած են։

Բրեժնեւ եւ Նիքսըն համաձայնած են նոյնպէս, որ զինուորական ուժերու նուա - ղեցման շուրջ խօսակցութիւնները շա - րունակուին փութով, որպէսզի այս հարցն ալ կարգադրուի Արեւելք — Արեւմուտք մեծ խորհրդաժողովի ընթացքին։

× Գահիրէի «Ալ Ահրամ» թերթը խմբ - րագրականով մը քննադատեց Նիքսըն - Բրեժնեւ խօսակցութիւնները, որովհետեւ երկուքն ալ, ըստ թերթին, «տարօրինակ կերպով ժխտական դիրք» բռնած են Մեր - ձաւոր Արեւելքի տագնապին հանդէպ եւ անտրամադիր են լուծելու այդ տագ - նապը։

×

Մարի — Անթուանէթի զարդախուցին (պուտուառ) մէջ է որ Փոմպիտու եւ Բրեժնեւ աշխարհի հոգեբէն պիտի խօ - սին։ Իրենց երրորդ հանդիպումն է եւ չի թուիր թէ խօսակցութիւնները շատ զիւրիւ ըլլան։ Ֆրանսա խոհեմ ու վերա - պահ է բազմաթիւ հարցերու նկատմամբ։

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԹՈՒՐԿԻՈՅ Ժողովրդական Հանրապե - տական կուսակցութեան երեսփոխաննե - րէն՝ Իֆերտա Կիւլէյ, դաւառը արտա - սանած ճառի մը ընթացքին անկարկեց «չարհարանքի անկողնի» մը, որով ասեղ - ները կը ներմուծուին կապածելիներու մարմիններուն մէջ։ Երեսփոխանին ամ - րաստանութիւնները արձագանք դրած են Պոլսոյ եւ Անգարայի մամուլին մէջ, հա - կառակ անոր որ երկու քաղաքներն ալ դեռ պաշարման վիճակի օրէնքի ենթակայ են։

ՄԻՍՅԵԱԼ ՆԱԶՆԳՆԵՐՈՒ քննութեան ծերակուտական յանձնախումբին առջեւ, ձոն Տին իր տեղեկագիրը կարգաց, որու մէջ կ'ըսէր ի մէջ այլոց. — «Խորապէս համոզուած եմ որ նախագահ Նիքսըն, ե - թէ ճիշդ է, որ մատ ունի Ուաշինկթընի խնդրին մէջ, ոչ մէկ ատեն նկատի առած է կամ հասկցած իր մասնակցութեան հե - տեւանքները։ Բայց վստահ եմ որ երբ դէպքերը հրապարակուին, պիտի ներուի նախագահին»։ Տին չի ծածկեր իր սխա - ները բայց եթէ հաստատուի Նիքսընի հետ ունեցած իր մէկ զրոյցը, որու ըն - թացքին Տին ըսած կ'ըլլայ Նիքսընի թէ այս հարցով դատարան քաշուած բարձր պաշտօնեաները դրամ կ'ուզեն, «որքա՛ն» հարց կուտայ նախագահը, «մէկ միլիոն տոլարի կը հասնի» ու Նիքսըն կը պա - տասխանէ «Շատ լաւ, ոչ մէկ խնդիր այդ մասին»։

ՉԱՌԻՉԵՍՏՔՈՒ Հինգ օրուան պաշտօ - նական այցելութեամբ Պոն ժամանեց։ Պուրքէշ չահաբերուած է գերմանեւ - ուումէն միացեալ ընկերութիւններ ստեղ - ծելու, որոնց մէջ գերման ընկերութիւն -

ները կրնան իրենց նիւթական մասնակ - ցութիւնը բերել մինչեւ 49 տոկոս համե - մատութեամբ։

ԻՐԱՔԻ նախագահ՝ Ջօր. Պաքը չորս օրուան այցելութիւն կը կատարէ Պու - կարիս։

ՍՍՏԱԹ եւ Խատաֆի կը շարունակեն իրենց խօսակցութիւնները Գահիրէի մէջ։ Դժուարութիւններ ստեղծուած են երկու երկիրներու միութեան հաստատման ճամ - բուն վրայ եւ երկուստեք կը փորձեն հարթել հարցերը։ Սկզբունքով երկու եր - կիրներու միութիւնը պիտի իրագործուի Սեպտեմբեր մէկին։

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ վարչապետը Լոնտոնի մէջ տեսակցեցաւ Հիթի հետ։ Փաքիստան - ցիներ ցոյց կատարեցին այս առթիւ պա - հանջելով Տիկին Կանտիէ՝ Փաքիստանցի 90.000 զեկրներու ազատ արձակումը։

ԻԻՄԱՆԻԹԷ զոհ է ընկերվարական հա - մադումարէն եւ թերթին խմբագրապետը կը շեշտէ թէ քուէարկուած բանաձեւը դո - հունակութեամբ կ'արձանագրուի Հա - մայնավար կուսակցութեան կողմէ։ Նոյն ձեռով արտայայտուեցաւ Ժորժ Մառէ եւրպա 1 ձայնափախի կայանէն։ Գա - լով Միթերանի հեռաձայնի Բ. կայանէն պատասխանեց լրագրողներու հարցում - ներուն եւ փորձեց արամաքնական բա - ցատուութիւն մը տալ իր քաղաքական վե - րիվայրումներուն 1946էն ի վեր։ Ընկեր - վարական պարագլուխը կը թուի թէ այլ - եւս ճամբան վերջնապէս դառած է եւ ան - կեղծ է երբ կ'ըսէ. «Կեանքս իմաստ ունի համեմատաբար ընկերվարական վերա - ծնունդին»։

ՆԻՍԻ մէջ է այս անգամ որ վարժարան մը հրոյ ճարակ դարձաւ կէս ժամուան մէջ։ Վախ կայ որ արկածի արդիւնք չըլ - լայ։ Վարժարանը բացուած էր 1969ին։ Միայն պատերը դիմացած են բայց բա - րեքստաբար ոչ ոք կար չէնքին մէջ եւ զոհ չկայ։

Ա. ԿՈՍԻԳԻՆ, կնոջ մահէն 6 տարի ետք, ամուսնացած է վերջերս ռուս մեծ գերասան՝ Չերկասովի այրիին հետ։ Չերկասով շարժանկարի շատ մեծ դերա - սան մը եղած է եւ մասնաւորաբար ու - չաղբուրթեւն դրաւ իվան Ահեղի գերին մէջ։ Շէյքսպիրի հերոսը իր զոհերուն մղձաւանջին սարսափով կ'ապրի ու վախի աղաղակներ կ'արձակէ ի տես մահուան։ Սթալին դրաքննութեան ենթարկած էր ֆիւլին այդ մասը 1948ին եւ 1953ին է միայն որ Սթալին — Ահեղի մահէն ետք, կարելի եղած է ներկայացնել։

ՄԱՏՐԻՏԻ մէջ պայթումներու շարք մը տեղի ունեցած է առջի իրիկուն։ Կ'ըսուի թէ բազմաթիւ զոհեր կան։

ԻՍԼԱՏՍԱԹԻ կառավարութիւնը պաշ - տօնապէս յայտարարեց է Ատլանտեան Ուխտի խորհուրդին թէ մինչեւ վեց ամիս Միացեալ Նահանգներու եւ Իսրայէլի պաշտպանութեան դաշինքը պէտք է վե - րաքննուի։ Իսրայէլա Ստրանտեան կազ - մակերպութեան միակ երկիրն է որ զին - ուորական ուժ չունի։

ԱՄԵՐԻԿԱՅԻ քաղաքագէտ մը ար - տաքուած է Չեխոսլովակիայէն, այն մեղադրանքով թէ իր գործունէութիւնը խտուր կը համեմատի Հանրապետութեան շահերուն հետ։

ԱԻՍՏՐԻՈՅ եւ Լեհաստանի վարչա - պետները հանդիպում մը ունեցան Վար - չաւայի մէջ։ Տնտեսական համագործակ - ցութիւնը զլիւսաւոր նիւթը կազմեց իրենց խօսակցութեան, ինչպէս նաեւ Հելսինքիի եւրոպական ապահովութեան խորհրդա - ժողովը։

ԵՐԲ ՀԱՅ ՎԵՋԻՐՆԵՐ ԿԸ ԿԱՌԱՎԱՐԷԻՆ ԵԳԻՊՏՈՍԸ

Ա.

ԽՄԲ. — Այս գրութիւնը ամփոփ քաղաքականութիւնն է յօդուածի մը, որ լոյս տեսած է Պէյրութի «Լ'Օրիան-Լը ժուռ»-ի շաբաթօրեայ յաւելումին մէջ եւ կը կրէ ստորագրութիւնը Ժիւլ Լըրուայի, փրանսացի եկեղեցական մը, որուն մասնագիտութիւնն է ուսումնասիրել եւ երեւան հանել Արեւելիի ընդարձակ տարածուած քեան վրայ կառուցուած, բայց այժմ փլուտակ վանքերը: Իր գործունէութեան աստիճանները կը տարածուին լիպիական անապատէն մինչեւ Տարսիսի ստորոտը:

Ժիւլ Լըրուա աներակ վանքերու պարզ հետախոյզը չէ, այլ նաեւ հմուտ պատմաբան մը, եւ այդ աներուած պատերուն գմբէթներուն եւ արձանագրութիւններուն մէջէն կը փնտռէ մարդը, որուն հաւատքը մեծ ու կեանք մտաւ անցեալի այս կոթողներուն:

Վերին եկեղեցոսի Սոհակ գիւղաքաղաքէն ութ քիլոմէթր հեռու, բերրի դաշտերու մէջ, կը բարձրանայ Տէյր էլ Ապիատ կամ ձերմակ վանքը: Այս անունը իրեն տրուած է, իր քարերուն ճերմակութեան պատճառով եւ նաեւ զայն զանազաներու համար քիչ մը անդին գտնուող Տէյր էլ Ահմարէն, որ շինուած է կարմիր աղիւններով: ձերմակ վանք անունը կը թուի տրուած ըլլալ Ժէ. դարու եւրոպացի այցելուներուն կողմէ, որովհետեւ տեղացի Ղպտիները մինչեւ օրս զայն կ'անուանէին Տէյր Անպա Շենուտա:

Անպա Շենուտա զպտի կրօնաւոր մըն էր, որ ծնած է 332ին եւ մեռած՝ 450ին, այսինքն՝ 118 տարի ապրեցաւ: Վաղ պատանութեան, իր հօրեղոր թելադրուած թեամբ՝ Շենուտա միացաւ մենախնացներու խումբի մը, որ կը հնազանդէր շատ խիստ օրէնքներու: Շուտով դարձաւ անոնց մեծաւորը եւ մեծ հեղինակուած թեամբ եւ բռնակալութեամբ ղեկավարեց իր համայնքը: Աւելի զինուորականի կը նմանէր, քան վանականի: Յաճախ խումբ մը կրօնաւորներով կը յարձակէր տաճարներու վրայ, կամ կը քանդէր կուռքերը: Երբեմն կը քաշուէր անապատ ու կը ձգնէր քարայրի մը մէջ, կամ կը ներկայանար դատարան՝ պաշտպանելու համար իւրեզնի ու աղքատը հարուստին եւ զօրաւորին զէմ:

Անպա Շենուտա ունէր շատ մը ուրիշ ձիրքեր, հմուտ աստուածաբան էր եւ բեղուն գրիչ: Իր գործերէն մնացած են նամակներ, քարոզներ եւ մեկնաբանութիւններ:

Բայց մեզի համար Շենուտայի բուն արժէքը կը մնայ իր շինարարական ոգին: Քրիստոնէութիւնը իրեն կը պարտի Աշ-

մոնէյնի մայր եկեղեցին եւ վերը յիշուած Տէյր էլ Ապիատը, որ կը հանդիսանայ եկեղեցոսի ըրիտօնական ամէնէն ընդարձակ կառույցը: Մինչեւ այսօր, Յուլիս ամսուն, Ղպտիներու մեծ քաղմու՝ թիւններ ուխտի կուգան այս հինաւորաց եւ աներակ սրբատեղին:

Տէեւ Տէյր կը նշանակէ վանք, սակայն պէտք է ըսել, որ այս անունը կը պատկանի եկեղեցիին, տրուած ըլլալով, որ ան միայն կանգուն է:

Անոր զօրաւոր հիմքերը կը բարձրանան հողին մակերեսէն երկու մէթր վեր, հըսկայ քառանկիւն մը, որուն երկայնուած թիւնը ուղղուած է արեւմուտքէն արեւելք՝ մօտ 75 մէթրի վրայ, իսկ լայնքը՝ հիւսիսէն հարաւ՝ մօտ 37 մէթրի վրայ: Ամէնէն շատ աչքի կը զարնեն պատերու հաստութիւնը, եւ մանաւանդ, բարձրութիւնը, որ կը հասնի 12 մէթրի, ցալուտն եղբերով մը, որ չէնքին կուտայ եղիպտական տաճարի մը ընդհանուր երեւոյթը: Ասիկէ ծնած է անանդութիւն մը, ըստ որուն, եկեղեցին կառուցուած է երկայնական տաճարի մը հիմքերուն եւ պատերուն վրայ: Սակայն այս չէ իրականութիւնը: Եկեղեցին իւրայայտուկ չէր մըն է, բայց անոր քարերը բերուած են քանդուած տաճարէ մը անպայման:

Այս հսկայ շէնքը օժտուած էր բազմաթիւ պատուհաններով, որոնք պատուեցան յետագային: Հարաւային եւ արեւմտեան կողմերը կառուցուած են երկու անդամատակներ, իսկ հարաւ արեւելեան կողմը ութանկիւնեայ ու գմբէթաւոր փոքրիկ շինութիւն մը, որ կը գործածուէր իր մկրտութեան բաժին: Այս հսկայ շինութիւնը ցոյց կուտայ ոչ միայն ճարտարապետին հանճարը, այլեւ Շենուտայի անսահման երեւակայութիւնը:

Թէեւ ամբողջ շէնքը կը դռնուի փրատակ միջանկի մը մէջ, սակայն կանգուն մնացած մասերէն կարելի է հետեւցնել ընդհանուր կերպարանքը եւ յղացումի յանդիմութիւնը:

Խորանէն քանի մը մէթր առաջ, կը բարձրանայ աղիւնէ պատ մը, որ հնախօսական ոչ մէկ արժէք ունի, եւ որուն նպատակն է անպայման դասը բաժնել ոչ-մկրտուածներու յատկացումը մասէն:

Դասը կազմուած է երեք կողակներէ: Աւագ խորանը կը դռնուի արեւելեան կողակին մէջ: Այս մասը զարդարուած է քանդակներով եւ նկարներով:

Հարաւային խորանը գեղին Փոնի մը վրայ կը ներկայացնէ զարդարուած հըսկայ խաչ մը, որուն նեցուկ կը կենան հրեշտակներ, իսկ խաչին երկու կողմերը կանգնած են Ս. Կոյսը եւ Յովհաննէս Մկրտիչը:

Ամէնէն շատ աչքի կը զարնէ կեդրոնական գմբէթին վրայ գտնուող որմնանկարը, որ կը հանդիսանայ ըրիտօնային եկեղեցոսին ամէնէն խոշոր ստեղծագործութիւնը: Այդ որմնանկարը կը դռնուի դեպի Տէյր էլ Ապիատ վեր, եւ ունի 5,40 մէթր լայնք եւ 3,60 մէթր խորութիւն:

ՊԱՏԿԵՐԱԽՈՐ ԽՕՍԳԵՐ

— 0 —

Պատկերաւոր խօսքերը գործածական դարձած են շատ հին օրերէ սկսեալ եւ մեզի հասած են Հոմերոսեան Յունաստանէ: Պատկերաւոր խօսքեր կան «Իլիադան»-ի եւ «Ոդիսական»-ի մէջ: Շատ անգամ այդ գործերուն մէջ արձանագրուած է, թէ ինչպէս հերոսներէն մէկն ու մէկը «բարձրացուց իր ձայնը եւ պատկերաւոր խօսք մը արտասանեց»:

Պատկերաւոր խօսքերը ժամանակի ընթացքին, անցնելով սերունդէ սերունդ, երկրէ երկիր, կ'ամբողջացնեն եւ կը հարստացնեն իրենց շտեմարանը:

Պատկերաւոր խօսքը մեր լեզուն կը հարստացնէ եւ աւելի արտայայտիչ կը դարձնէ: Հոն ուր անհրաժեշտ է գործին հոգիները երկար բացատրել, օգնութեան կը հասնի պատկերաւոր բացատրութիւնը: Այս ձեւով, մեր ուզած դարձաբարը կամ միտքը կ'արտայայտուի սեղմ միջոցներով, պատկերաւոր եւ տեղին: Ասոնք մեծ հարստութիւն են, բայց պէտք է դիտել օգտուել այս բանահնարական գանձարանին: Պատկերաւոր խօսքերը շատ նման են ասացուածքներուն: Անոնք խորատներ են, դաստիարակչական իմաստ եւ արժէք ունին: Այդ «խօսքերը» դարաւոր փորձառութիւն մը կը խոստացնեն:

Սակայն մարդիկ հետաքրքիր են գիտնալով, թէ ո՞րով է կուգան ասոնք, ինչո՞ւ այդ ձեւով կ'արտայայտուինք, թէ ի՞նչ իմաստ ունին ասոնք:

Յիշատակենք կարգ մը պատկերաւոր խօսքեր, որոնք կապ ունին մեր պատմութեան հետ:

Թէ քն որկորը Շարայի որկորն է, բայց մեր ամբարները Շիրակի ամբարները չեն: Այս արտայայտութիւնը կը գործածուի շատակեր մարդու համար, աւելի շատ կատակի իմաստով: Այս պատկերաւոր արտայայտութեան մասին գոյութիւն ունեցող անանդութիւնը մեզի հասած է պատմահայր Մ. Խորենացիի միջոցով:

Կեդրոնը կայ Քրիստոս մը, որուն բարձրութիւնը վեց մէթր է: Քրիստոսի շուրջ նկարուած են չորս անտարանիչները: Ձախալան ոճով զարդարանքներուն մէջէն կ'անցնի 60 սանթ. լայնքով երկը մը որուն վրայ շրջանակներու մէջ կը յայտնուին նուիրագործուած անձեր, որոնցմէ չորսը հրեշտակապետներ են, իսկ միւս երկուքը Ս. Կոյսը եւ Յովհաննէս Մկրտիչը:

Այս բոլորը հարկաւ ունին գեղարուեստական որոշ արժէք, բայց նոյն նկարները կարելի է գտնել ուրիշ եկեղեցիներու եւ վանքերու մէջ: Այս որմնանկարներուն հետաքրքրական մասը՝ յետագային անցնուած արձանագրութիւններն են:

ԺԻՒԼ ԼԸՐՈՒԱ

(Թարգ. Ն. Զ.)

(Մնացեալը յաջորդով)

կապ ունի Շարայի, որ Հայկազուն նահապետներէն Արամայիս նահապետի զաւակն էր: Ըստ անանդութեան, Շարա շտեմարան էր: Հայրը զինքը կ'ուղարկէր դաւառ մը, որ ընդարձակ եւ բերրի էր, որպէսզի ան կուշ ու կուս կերակրէ իր բազմամարդ զերդաստանը: Այդ դաւառը Շարայի անունով Շիրակ կոչուեցաւ: Շարայի որկրամոլութիւնը հին Հայերու համար առակ դարձած էր: Անոնք կ'ըսէին. «Եթէ քո որկորը Շարայի որկորն է, բայց մեր ամբարները Շիրակի ամբարները չեն»: Այս անանդութիւնը այլ բարանօրէն ճշմարտութիւն մը կը խոստացնէ: Արդարեւ Շիրակ հացառատ շրջան մը եղած է, շտեմարան մը պատմական Հայաստանի մէջ:

Աւաճագեղան Ազգ. — Դասական հեղինակները զայն գործածած են իրեն հոմանիշ հայ ազգի: Ասքանագէտները ազգ: Ըստ Հին Կտակարանի (Ծննդ. Ժ. 3) Ասքանագ Դամբրի դաւակն էր, Թորգոմի (Հայկի հօր) եղբայրը: Հին մեկնաբանները Հին Կտակարանի մէջ Ասքանագ անունով կը հասկնային Հայաստանն ու Հայերը:

Թորգոմեան Ազգ. — Դասական գրականութեան մէջ՝ ազգ Թորգոմայ, այսինքն Թորգոմէ սերած ազգ: Ըստ Հին Կտակարանի (Ծննդ. Ժ. 3) Թորգոմ Դամբրի դաւակն էր, Ասքանագի եղբայրը եւ ըստ Խորենացիի՝ Հայկի հայրը: Հին դասական հեղինակները երբեմն կը գործածէին զայն իրեն հոմանիշ հայ ազգի: Հայ եւ Հայաստան իմաստով կը գործածէին նաեւ Թորգոմի տուն, Թորգոմի որդիք բաժնիքները:

Դուռն մեկնեցար եւ ամբողջ երկիրը բեզի հետ տարիր, եւ ալ աներակներուն վրայ վրայ ի՞նչպէս քաղաւորեմ: Ասոնք Արտաւազ թագաւորի խօսքերն են: Երբ անոր հայրը Արտաշէս կը մեռնի, հեթանոսական սովորութեամբ մարդիկ կը զոհուին: Ամբողջ երկիրը կը սղայ թագաւորին մահը: Արտաւազը նեղանալով իր հօր գերեզմանին վրայ կ'ըսէ՝ «Երբ դուռն մեկնեցար եւ ամբողջ երկիրը բեզի հետ տարիր, եւ այս աներակներուն վրայ ի՞նչպէս թագաւորեմ»:

Փոխաբերական իմաստով ասիկա կը գործածուի փոքրօքի մարդոց կողմէ:

Աւաղ, փառացա անցաւորի: Աւաղ, այս անցաւոր փառքին: Ո՞տը, որ ըստ Գր. Մագիստրոսի արտասանած է Արտաշէս Ա. Նոյն միտքը կ'արտայայտէ նաեւ «ունալութիւն, ունայնութիւն» խօսքը:

Մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է: Այս արտայայտութիւնը կը պատկանի մեր մատենագիր Եղիշի: Կը նշանակէ՝ անգիտակից մահը մահ է, գիտակից մահը՝ անմահութիւն: Եղիշէ այս խօսքերը գրած է վարդապետ հերոսամարտին կապակցութեամբ: Կը նշանակէ, թէ ան որ չի գիտեր թէ ինչու համար կը մեռնի, ան պարզապէս կը մեռնի, իսկ ան որ կը գիտակցի թէ ինչու համար կը մեռնի՝ կ'անմահանայ:

Սահմանց քայանց՝ գեղն իւրեանց: Քա-

ԿՏԱԿՆ ԷՐ

ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ

Գրեց՝ ԱՐՇԱԽԻՐ ՇԻՐԱԿԵԱՆ

Ա. ՄԱՍ

Կ Ր Ա Կ Ի Մ Կ Ր Տ Ո Ի Թ Ի Ի Ն

ԴԱԽԱՃԱՆ ՎԱՀԷ ԻՃՍԱՆԻ ԱՆԱԲԵԿՈՒՄԸ

Շատ ճարպիկ էր եւ հնարամիտ: միշտ շրջապատուած կ'ըլլար ոստիկաններով եւ առանձին ալ կը տեսնուէր, հետապնդողները խաղի կը բերէր:

Այդ օրերուն, Վահէին ցուցմունքով, 5 ոստիկաններ տպանեցին մեր լաւ ընկերներէն Տաճատը, պուլկար բանակի տպաներէն, որ նոր եկած էր Պոլիս: Հէք Տաճատ, ծերունի հօրը եւ մօրը ընկերակցութեամբ կը պատրաստուէր այցել-

լութեան մը երթալ, երբ գնդակներու տարափի մը տակ անշնչացաւ, խոր սուգի եւ շուարումի մատնելով բոլորս: Քանի մը օր վերջ Անգլիացիներու կողմէ բռնուեցաւ ոստիկանին մէկը եւ երեսն եկաւ որ Վահէին մէկ թիկնապահն է, անհերքելի կերպով ապացուցուեցաւ որ մատնիչին մատը կայ այդ ոճիին մէջ:

Ինձմէ առաջ Վահէի հետապնդումը կը կատարէին երկու երիտասարդներ, որոնք Կովկասի ձակաւոր վրայ կուգած էին եւ զէնքի վարժուած: Խորամանկ լրտես-ղրբաքննիչը «Գող սիրտը դող», հասկցած էր որ զինքը հանգիստ պիտի չձգեն, խիստ զգուշութեամբ կը շարժէր, տեսական կասկածանքի մէջ: Կուսած էր հետապնդումը եւ ճաշարանի մէջ ըլլալ կամ սրբաճարանը, խուզարկուած շան պէս շուրջը կը զիտէր: Յաճախ զազանի ոստիկան մը առանց յայտնի ընելու կ'ընկերանար իրեն: Այդպէս կը պատմէին մեր երկու ընկերները, որոնց «խնամք»ին յանձնուած էր Վահէն: Բայց այդ հետապնդումը երկար տեսած էր, առանց արդիւնքի. կուսուորներէն մէկն ալ ձերբակալուած էր անոր ցուցմունքին վրայ: Խորամանկը սրճարանի մը մէջ սուրճ խմած միջոցին սիկանդիթին ծայրովը ձեռքի թերթը ծախած եւ անկէ շուրջիները գնած էր: Մեր կամաւոր ընկերը, այս միջոցին զինքը կը գիտէ եղեր. կամացուկ մը կ'ելլէ ոստիկան մը կը բերէ եւ զայն բռնել կուտայ:

Թէեւ մեր ընկերը շուտով ազատեցաւ, բայց հետապնդումի գործը իրմէ առնուեցաւ ու ինքի յանձնուեցաւ:

Ամէն առտու կանուխ կը հետեւէ չարագործ-լրտեսին, տունէն մինչեւ պաշտօնատունը կամ ոստիկանութեան կեդրոնը, որ Պապը Ալիի մեծ չէնքին կոնակը ճամբորդէինք եւ նոյն ձեւով կը վերադառնայինք մեր տուններ, որոնք ինչպէս յայտնի է, պատկից էին: Պէտք էր ուսումնասիրել ամէն փոքր կամ իր յաճախած վայրերը եւ յարմարագոյնը մատնանել կամ յանձնարարել մեր ընկերներուն, որոնք անհրաժեշտ պիտի կատարէին Վերի Մարմնի որոշումով: Այնպէս որ ամբողջ օրը դադար չունէի եւ կը ջանայի բնաւ հետք չկորսնցնել Վանոնաւոր ճաշ մը իսկ ընելէ զրկուած, սիմիթ մը կը կրծէի կամ աճապարանքով «բաւաղ» մը կը լսփէի կամ, «օսպէպ» մը կը պարպէի փողոցին բերանը, աչքս «խաֆի»-ի ճամբան:

Օր մըն ալ Վահէն գնաց Կամուրջ եւ մտաւ Կղզիներու շոգենաւը, ճիշդ այդ միջոցին, երբ արդէն զինքը կը հետապնդէին, տունէն դուրս ելլէին ի վեր: Ես ալ տոմսակ մը առի ու նաւ մտայ: Չէի գիտեր թէ որ կղզին պիտի ելլէ. ամէն պարագայի, որոշած էի հետք չը կորսնցնել, իր բոլոր տեղափոխութիւնները հսկողութեան տակ առած ըլլալով:

Մօտ մէկուկէս ժամ վերջ, շոգենաւը հանդիպելէ յետոյ Գրենալը, Պուրկապ եւ Հէյպլեի, կանգ առաւ Մեծ կղզի: Ճամբորդները դուրս ելան ու ցրուեցան: Հետեւէն կը հետապնդէի Վահէ Իսահանը, որ ծանր ծանր կը յառաջանար. մօտեցաւ նաւամատոյցի դիմացի սրճարանին, ուրկէ մարդ մը դուրս ելաւ ու զայն զինաւորեց փութկոտութեամբ եւ մտերմութեամբ: Չարմանքս եւ ուրախութիւնս մեծ եղաւ: Այդ մարդը ուրիշ մէկը չէր, եթէ ոչ տերաֆոնիկ Հիտոյէթը, կաթնլի նախկին կրօնաւոր մը, որ իւրաքանչեւ էր եւ պատերազմի ընթացքին իր սղարայնական հոգիին ամբողջ մաղձն ու վայրագութիւնը դուրս տուած էր, իր ուրաքած ազգին ընտիր զաւակներուն, մտաւորականներուն ձերբակալութեանց անձամբ հսկելով, եւ ոստիկանատունէ ոստիկանատուն անոնց ընկերանալով: Քանի ջանք ուսանողներ իրենց դասաւորացի, անձամբ ձերբակալած ու տարագրել տրուած էր:

(45 – Շար.)

ԿԱՐՄԱՏԵՔ

ՏԱՐԱՇՈՅԵՔ

ՅԱՌԱՋԸ

2 Ա Յ Ն Ե Ր
Գ Ա Ի Ա Ռ Է Ն

ՎԻԷՆ՝ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՑԻՆԵՐՈՒ
ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐ

— 0 —

Գաղթականութեան առաջին տարինե —
րուն, երեսունական թուականներուն,
դեռ Հայրենիքի եւ ծննդավայրի բարբե—
րով լեցուած, Հայութիւնը Ֆրանսայի
մէջ կը համախմբուէր տեղ — տեղ, բնագ—
ղորէն, հայրենակցական տեղական կա —
պով:

Այս համախմբումները բնականօրէն

ընդունաձմանը իրենց զէնքն է: Այս ար—
տայայտութիւնը կը պատկանի Մովսէս
Պօրենայի:

Տիկնայք փափկասունք Հայոց աշխար—
հին: «Հայոց աշխարհի փափկասուն տի—
կիները» — մատենագիր Եղիշէի խօսքն
է, որով ան նկարագրած է նահատակ —
ուած եւ բանտարկուած հայ զինուորա—
կաններու կիներուն կրած նեղութիւն —
ները, հերոսական կեցուածքը, շարժաշ—
կեանքը:

Արշակաւան — Քաղաք պատմական
Հայաստանի մէջ, Մասիսի լանջերուն,
Արարատեան նահանգի Կողովիս դաւառը:
Աւանը հիմնուած է Արշակ Բ. Արշակունի
թագաւորին (350—368) կողմէ:

Արշակ իր դահակալութեան երրորդ
տարին ուղեք բազմամարդ քաղաք մը
հիմնել պարսկական սահմանին մօտ:
Նորաստեղծ բնակավայրին բնակչութեան
թիւը բազմացնելու նպատակով Արշակ Բ.
հրովարտակով մը կը ճշդէ, թէ հոն ե—
կողները տուն կը ստանան, հարկ եւ
տուրք չեն վճարեր ու կ'ապրին ազատ:
Նոր եկողը կ'աղատի դատէ ու դատաս —
տանէ, ինչպէս նաեւ իր ունեցած պարս—
քներն: Արշակաւան կը լեցուի մեծ քաղ—
մութեամբ, ինչ որ զժգոհ կը ձգէ նա—
խարարներն ու Ներսէս Մեծ կաթողիկոսը:
Այդ թուականին Յոյները պարտուելով
Պարսիկներէն, կը հեռանան Հայաստա—
նէ, իսկ ապստամբ նախարարները դա—
ւաճանելով թագաւորին, կ'անցնին Պար—
սիկներու կողմը: Պարսից Շապուհ թա—
գաւորն ալ խորամանկ ձեռով Պարսկաս—
տան հրաւիրելով Հայոց Արշակ թա—
գաւորը, զայն կ'աքսորէ Պոսոսիանի
Անյուշ բերդը: Արշակաւանը աւերուե—
ցաւ եւ կործանեցաւ 368ին:

Ժամանակի ընթացքին Արշակաւան ա—
նունը պատկերաւոր խօսք դարձաւ: Այժմ
երբ Արշակաւան կ'ըսուի, նկատի կ'առ —
նուի տեղ մը, ուր կարգ ու կանոն չկայ,
կ'ոտնահարուի արդարութիւնը:

Կ. ԱԻԵՏԻՍԵԱՆ

ծնունդ կուտային Հայրենակցական Մի —
ութիւններու, որոնք մինչեւ երկրորդ
աշխարհամարտի վաղորդայնին ունեցան
բեղուն գործունէութիւն:

Սակայն ժամանակի ընթացքին եւ տե—
ղական երկրի անդալի բայց յարատեւ
գրողը եւ սերունդներու յաջորդակա —
նութիւնը հետզհետէ բնական ձեռով մա—
շեցուցին զանոնք եւ այսօր յիսնամեակ
մը յետոյ շատ շատ քիչեր կը շարունա—
կեն իրենց ընթացքը:

Այդ քիչերու շարքին կը պատկանի
Վասպուրականի Հայրենակցական Միութեան
թիւնը, որ ոչ միայն կը շարունակէ իր
առաքելութիւնը հաւատարիմ իր կոչու —
մին, այլեւ այսօր իր շարունակութիւնը
ապահոված է իր երիտասարդական մի—
ութիւններով:

Արդարեւ այս իրողութիւնը անգամ մը
եւս հաստատուեցաւ Վիէնի մէջ, Յունիս
11—12ի օրերը, երբ Մարտէյի Վասպու —
րականի Հայրենակցական Միութեան
կեդրոնական վարչութեան նախաձեռնու—
թեամբ, հարիւրաւոր Վանքիներ, ըն —
տանիքներով եւ դաւակներով, մեծերով
եւ փոքրերով, Մարտէյէն, Քանէն, Սալէն
աղ ժիրոյէն, Վալանէն, Լիւնէն, Տէ—
սիէն եւ Վիէնէն, արշաւեցին Պաշիկ
Տէրտէրեանի ընդարձակ կալուածի դա—
լարագեղ անկիւնները ապրելով աւանդա—
կան եւ հայրերադձ ժամեր, հողիով եւ
սրտով վերադառնալով յառաջապահ եւ
ոստիաւորուէ Վան աշխարհը:

Այս ընդհանուր խանդավառութեան
մէջ, Վասպուրականի Երիտասարդաց
Միութիւնը կը տօնէր նաեւ պատ —
շաճութեամբ, Միութեան կեդրոնական
վարչութեան արժանաւոր նախագահ՝
Վարդան Պանտիկեանի ծննդեան 80ամ —
եակը: Վ. Պանտիկեան ախանաօս եւ
դերասանար Վասպուրականի հերոսա —
մարտի եւ ապա Մայիսեան հերոսական
կռիւներու, տարիներու վաստակ ունի
հայ կեանքէն ներս:

Այս պատեհ առիթով խօսք առած
են՝ Պ. Տէրտէրեան (Վիէնէն), Տիկին
Արքայաւան (Տէսիւնէն) եւ Վ. Պան —
տիկեան (Մարտէյէն):

Թամատայի ծանր պարտականութիւնը
խանդավառ շունչով տարած է Ա. Պոյ—
եան (Մարտէյէն): Իրենց գեղարուես —
տական շնորհները բերած են, ի մէջ այ—
լոց, Տիկին Իսկուհի Հրաչեան (արտա —
ստնութիւն), Տիկին Ս. Պաշտոտրեան
(արտաստնութիւն), Սիմոն Աւտոյեան
(երգ), Տիկին Դ. Կիւրկիդեան (երգ),
Վարդգէս Աւիկեան (երգ), Տէր եւ Տիկին
Ֆերտի Հրաչեան (գուգերգ) եւ Հրաչեան
եղբայրներ (հայկական պարեր):

Ահաւասիկ գնահատելի ձեռնարկ, աղ—
գօգուտ աշխատանք, տոկունութեան եւ
յարատեւութեան գեղեցիկ օրինակ, որ
պէտք է վարակէ բոլոր հայրենակցական
միութիւնները, յանուն աղքատահաս —
ման:

ԿԱՐՕ ՅՈՎԱՅՖԵԱՆ

- ՀԱՅԱՍՏԱՆ -

ՀՆԱԴԱՐԵԱՆ ՊԱՆԱՏ ՄԸ
ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԻ Է

Օշական գիւղի մօտ գտնուող բարձուն—
քին արեւելեան ստորոտին հնադէտները
յայտնաբերած են պալատի կառոյց մը,
որ Ք. Ա. 5—4րդ դարերուն կը պատկանի:
Պեղումները դեռ չեն աւարտած: Գլու —
նուած են 18 սենեակներ՝ զանազան մե —
ծութեամբ: Իրերեւ հազուադիւրս յայտնա—
բերում պէտք է յիշատակել այն բազմա—
թիւ դամբարանները, որոնք կը գտնուին
սենեակներուն մէջ: Շէնքի հիմին տակ
գտնուած է աւելի հին շրջանի՝ ուրար—
տական ժամանակներու դամբարան մը եւ
ձէթի ճրագ մը:

Նորայայտ պալատը կապ ունի Երուան—
դունիներու ժամանակաշրջանին հետ,
որու մշակոյթին եւ պատմութեան քիչ
ծանօթ են պատմագէտները: Ճիշդ այս
պատճառով ալ ասիկա մեծ արժէք կը
ներկայացնէ:

Գտնուած են նաեւ անօթներ, կաւէ
շիշեր, թասեր, որոնք զարդարուած են
բոյսերու եւ կենդանիներու նկարներով:

×

«ՊԱՏՄԱ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՍ»Ի
1973Ի Ա. ԹԻԻԸ

«Պատմա — բանասիրական Հանդէս»-ի
այս տարուան Ա. թիւը ճոխ է: Կը ներ—
կայացնէր բովանդակութիւնը: Կ. Ճին—
դոգեան՝ «Հայ—բուլղարական դրական
յարաբերութիւնների պատմութիւնից»,
Ս. Արեւշատեան՝ «Հնագոյն հայկական
թարգմանութիւնները եւ նրանց պատմա—
մշակութային նշանակութիւնը», Կ.
Քուրդուե՝ «Ակադ. Յովսէփ Օրբելին եւ
ըրգալիտութիւնը», Ա. Կակովիչին՝ «Հայ
գեղարուեստական արծաթագործութեան
յուշարձանների վրայ բիւզանդական աղ—
ղեցութեան հարցի շուրջը» եւ այլ ու—
սումնասիրութիւններ:

«Հաղորդումներ» գլուխին տակ լոյս
տեսած են նիւթեր հայերէնի ժԸ. դարու
ուղղադրութեան, Կիլիկիոյ Այսա նաւա—
հանգիստ—քաղաքի, Լազարեան ձեմարանի
հնագոյն ձեռագիրներ, Արգիշտիիւնիլի
քաղաքի ուրարտական մետաղագործա —
կան արհեստանոցի մասին եւայլն:

«Բանալէճեր եւ քննարկում» գլուխին
տակ հրատարակուած են Փրոֆ. Կ. Դա—
Փաղարեանի «Մի ուշացած եւ միտում—
նաւոր գրախօսութեան առիթով» յօդ —
ուածը, որ պատասխան է Թ. Թորա —
մանեանի գործերու հրատարակութեան
շուրջ եղած քննադատութեան մատին, Շ.
Սմբատեանի «Երկու ճշգրտում Մովսէս
Կաղանկատուացու Աղուանից աշխարհի
պատմութեան բնագաւառում», Ս. Յով—
հաննիսեանի «Ընտանիքի ձեւերը, կազմը

ՊՐՈՓ.
ՆԻՆԱ ԳԱՐՍՈՅԵԱՆ

— 0 —

Պրոֆ. Նինա Գարսոյեան, Նիւ Եորքի
Քոլումպիա համալսարանի հայերէնի ամ—
պիոնի դասախօսը, նշանակուած է սոյն
համալսարանի Մերձարեւելեան Լեզու —
հի, երեք տարուան համար, մինչեւ 1976
Մարտ: Առաջին կիին է, որ կը նշանակ—
ուի այս բարձր պաշտօնին:

Օր. Նինա Գարսոյեան իր երկրորդա—
կան ուսումը Ֆրանսայի մէջ աւարտելէ
ետք նկարչուհի մօրը հետ հաստատուած
է Միացեալ Նահանգները, ուր 1958ին
ստացած է փիլիսոփայութեան դոկտորի
տիտղոս: Օրիորդը կը դասախօսէ նաեւ
պատմութիւն՝ Քոլումպիա համալսարանին
մէջ: Հայերէնի համար իր օգնականն է
Գրիգոր Մաքսուտեան, որ վերջերս ըս—
տացաւ փիլիսոփայութեան դոկտորի
տիտղոս:

Պրոֆ. Գարսոյեան գլխաւոր աշխա —
տակիցն է Գայլուստ Կիւպէնկեան Հիմ—
նարկութեան հայագիտական հրատարա —
կութեանց: 1965ին Լիպպոնի մէջ լոյս
տեսաւ Յակոբ Մանանդեանի «Հայաստա—
նի առեւտուրն ու քաղաքները...», Երե—
ւան 1946 զերբը անդէրէն՝ իր թարգմա—
նութեամբ: Քանի մը տարի առաջ դար—
ձեալ Գ. Կիւպէնկեան Մատենաշարին
մէջ հրատարակուեցաւ Նիկողայոս Ա. —
դոնցի Հայաստան Յուստիանոսի օրով
ուսմբէն հոյակապ թէղը՝ անդէրէնի
թարգմանուած իր կողմէ:

Յիշենք նաեւ իր հեղինակած պատմա—
կան ուսումնասիրութիւնը Պաղիկեաննե—
րու աղանդին մասին, անդէրէն, ստուար
հատոր մը:

Օր. Գարսոյեան քանի մը տարի առաջ
այցելեց Հայաստան, ուր ծանօթացաւ
Մատենադարանի եւ Հանրային Գրադա —
րանի հարստութեանց:

Այս տարուան Մայիսին Պուլկարիոյ
մէջ մասնակցեցաւ պատմագէտներու հա—
մալումարին: Պոլիս եւ Վենետիկ այցե —
լելէ վերջ պիտի դալ Փարիզ, ուր Յուլիս
16ին կը բացուի Արեւելագէտներու Հա —
մալումարը:

Հ.

Եւ Փոնկեցիաները վաղ Փէոդալական Հա—
յաստանում», եւայլն:

Ա. Ղեւոնդեան կը ներկայացնէ Ազա —
թանդեղոսի՝ վերջերս յայտնաբերուած
արարներէն ամբողջական բնագիրը:

ԶՀՐԱՏԱՐԱՅԻՈՒՄԻ ԶԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ԶԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ

(214)



ՅԻԿՈՐԴ ՄԱՍ

ՕՎԻՏԻ ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ջ.

— Սիրտս յանցաւոր չէ: Գործերով
շատ զբաղած էի, ու կը յուսայի որ մէկ
օրէն միւսը պիտի դառնամ:

— Վերջապէս եկաք: Ամէն բան կը
մոռնամ ու կը ներեմ ձեզի: Միայն պի—
տի ճաշենք, այնպէս չէ՞:

— Կը յուսամ:

Ժ.

Պուա Քոլումպի ոստիկանութեան քո —
միսէրը Լիւսիի անկենդան փոռած մարմ—
նին քովէն վերցուցած էր կէսը այն դա—

նակին, որով հարուածած էր մանկա —
մարդ աղջիկը: Այդ ուշիմ քոմիսէրը
կարծես մեծ կարեւորութիւն չէր ընծա—
յած զանակի կտորին, բայց ներքնապէս
կը գնահատէր անոր արժէքը: Երկու նը—
շաններ կային. գողցուած ժամացոյցին
թիւը եւ զանակին կտորը: Քոմիսէրը կը
յուսար որ այդ նշաններէն մէկուն չնոր—
հիւ պիտի կրնար երեւան հանել ոճրա—
գործը:

Բայց որպէսզի կարենար իր նպատակին
հասնիլ, քոմիսէրը գտնելու էր զանակին
կտոր, որուն վրայ գտնուած ցուցմուն —
քին չնորհիւ պիտի կրնար աւագակին
հետքը գտնել: Ոճրին վայրը եւ շրջակա—
ները մանրակրկիտ կերպով քննուած էին,
բայց ապարդիւն եղած էր:

Օրին մէկը, ոստիկան ղեկուոր Լարչօ
եւ իր տասնապետը ոճրին վայրը կը
պտտէին, երբ ուղեպահ մը անոնց յանձ—
նեց զանակի մը կտոր, զոր քարերը կտո—
րած պահուն գտած էր: Ճանապետը ու—
րախութեան ձիւ մը արձակեց ու Լար —
չօյն հետ միասին հասաւ Պուա Քոլումպի
ճամբան, ուրկէ եկած էին: Երկու ոստի—
կան զինուորները արագ քայլերով փու—
թացին քոմիսէրին զբառենեակը:

— Ինչո՞ւ հոս եկած էք, պարոններ,
հարցուց քոմիսէրը:

— Նոր եւ շատ կարեւոր բան մը կայ,
պարոն քոմիսէր: Տեսէք:

Ու տասնապետը ցոյց տուաւ կտոր մը,

որուն վրայ կար կտրած շեղբի մը կտո—
րը: Քոմիսէրը քննելէ յետոյ զայն, Լիւ—
սիի մարմինն քովէն գտնուած շեղբի կը—
տորը ձեռք առաւ: Կտորած երկու կտոր—
ները իրարու քով բերաւ ու ստուգեց որ
մաթեմատիկական ճշգրտութեամբ զերար
կը լրացնէին:

— Այո, ամբողջական զանակը աս է,
ըսաւ քոմիսէրը:

— Հիմա կարելի է հասկնալ թէ ո՞ւրկէ
գտնուած է այս զանակը, յարեց տասնա—
պետը: Թեքեաւ կարելի ըլլայ հասկնալ
թէ որուն ծախուած է ան: Շինողին ա—
նունը կտորին մօտ փորագրուած է տա—
կաւին ընթեռնի է զայն ծածկող ժանդի
խաւին տակ:

Քոմիսէրը բարձրաձայն կարգաց.

— Խոնար, զանակավաճառ, Գէ
Պուրպոն, թիւ 9:

Ու քոմիսէրը արստաց:

— Քէ Պուրպոն, թիւ 9, կրկնեց ան.
Օրիորդ Լիւսիի հասցէն է: Մարդասպա—
նին զանակը զոհին տունէն իսկ գտնուած
է: Ահա ինչ որ տարօրինակ է:

— Պարոն քոմիսէր, դիտել տուաւ տաս—
նապետը, ձեռ կողմէ վերցուած շեղբին
կտորը կ'ապացուցանէ որ զանակը նոր
էր: Հետեւաբար քիչ տառնէ ի վեր չի—
նողը ձեռքէ հանած էր զայն:

— Ասիկա տրամաբանական կը թուի
ինծի, ըսաւ քոմիսէրը: Երթամ ապահո—
վութեան պետը տեսնեմ: Տեսնենք պիտի

կրնա՞նք մեկնակէտ մը գտնել, հետա —
պնդումը սկսելու համար:

Ապահովութեան պետը իսկոյն ընդու —
նեցաւ Պուա Քոլումպի քոմիսէրը: Այս
վերջինը համառօտակի բացատրեց իր
այցելութեան նպատակը ու պետին ներ—
կայացուց զէնքին երկու կտորները, ո—
րոնք միացուելով ամբողջութիւն մը կը
կազմէին:

— Թեքեաւ մեկնակէտ մը կայ, ըսաւ
ապահովութեան պետը: Ամէն բանէ ա—
ռաջ, խնդրեք հարցաքննիչ դատարանին
յանձնելու է:

Հարցաքննիչ դատաւորը զէպքին իրա—
գեկ ըլլալէ յետոյ՝ յայտարարեց թէ այդ
խնդրով զբաղելու էր: Անոր ալ տարօրի—
նակ թուեցաւ սա պարագան թէ զանակը
զոհին տունէն գտնուած ըլլար: Ասիկա
ցոյց կուտար ոճրագործին կանխամտա —
ծութիւնը: Բարցաքննիչ դատաւորը եւ
ապահովութեան պետը Քէ Պուրպոն, զա—
նակավաճառին խանութը գացին: Պա —
նութեանը բացակայ էր: Կինը ընդունե—
ցաւ այցելուները: Հարցաքննիչ դատա—
ւորը յայտնեց իր հանգամանքը:

— Տիկին, մի վախճաք: Քանի մը տե—
ղեկութիւններ միայն պիտի առնեմ ձեզմէ:

ԿԶԱՎԻԷ ՏԸ ՄՈՆԹԷՓԷՆ

(Շար.)

ՓՈՒԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ

Տէր եւ Տիկին Գասպար Մանիսեան, Տէր եւ Տիկին Անարէ Հերնէճ, Տէր եւ Տիկին Յովհ. Գարաօղլանեան, Տէր եւ Տիկին Էտուար Մանիսեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Անարէ Մանիսեան եւ զաւակը, Տէր եւ Տիկին Ժանիք Մանիսեան եւ աղջիկը, Տէր եւ Տիկին Ժեռար Հերնէճ, Օր. Անն Հերնէճ, Պ. Լօրան Հերնէճ, Տէր եւ Տիկին Հայկաղուն Պօյա՝ ճեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Առաքել Սերոբեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Ժան Նիքարսեան եւ զաւակները, այլի Տիկին Իմաստուն Ջեքէմեան եւ զաւակները, այլի Տիկին Ռեբեկա Մանիսեան, Տէր եւ Տիկին Յոթողեան եւ զաւակները ինչպէս նաեւ ընտանեկան բոլոր պարագաները խոր ցաւով կը ծանուցանեն իրենց հօր, մեծ-հօր, եղբօր, տաղ-բոջ, ազգականին եւ խնամիրին՝

ՕՀԱՆ ՄԱՆԻՍԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Շարաթ Յունիս 23, 77 տարեկանին:

Յուդարկաւորութիւնը կը կատարուի Զորեքարթի, Յունիս 27, ժամը 14ին Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ մէջ, ուրիշ մարմինը կը փոխադրուի Իսիլի գերեզմանատունը (չուրջ 15-30ին) Ռիւ տը Լ'Էկալիթէ:

Մահազդ չստացողներէն կը խնդրուի ներկայ իրբեւ այդ նկատել:

«Վասնզի Աստուած այնպէս սիրեց աշխարհը մինչեւ որ իր միածին որդին տուաւ, որպէսզի ով որ անոր հաւատայ չկորսուի հապա յաւիտեանակամ կեանք ունենայ»:

Պ. Միհրան Փափազեան, այլի Տիկին Գեորգեան, այլի Տիկին Փափազեան, Տէր եւ Տիկին Պատմեան եւ զաւակը, ինչպէս նաեւ խաչերեան, Հէքիմեան, Օհանեան ընտանիքները խոր ցաւով կը ծանուցանեն իրենց կնոջ, ներոջ, զարմուհիին եւ ազգականին՝

ՔՆԱՐ ՓԱՓԱԶԵԱՆԻ
(ծննալ Բոգարեան)

արկածալի մահը, որ պատահեցաւ Յունիս 23ին, Շարաթ դիշեր կէս դիշերը քսան անց, ինքնաշարժի արկածի հետեւանքով, 54 տարեկանին:

Դագաղը տունէն կ'անցնի (32 Ռիւ Լուի Մենար, Սեւրան) եւ կը փոխադրուի Արնուլլիի Վարագայ Ս. Սաչ եկեղեցին ուր յուղարկաւորութիւնը կը կատարուի այս Ուրբաթ Յունիս 29, ժամը 15-30ին:

Մահազդ չստացողներէն կը խնդրուի ներկայ իրբեւ այդ նկատել:

ՏԱԿԱԿՑՈՒԹԻՒՆ

Ֆրանսահայ Կապոյտ Սաչի Լիոնի մասնաճիւղը իր ցաւակցութիւնը կը յայտնէ ընկերուհի Տիկին Պերճուհի եւ Պր. Ղազար Ահարոնեանի եւ Տէր եւ Տիկին Ներուանդ եւ Հրաչ Վարդանեան եղբայրներու, Պէյրութաբնակ իրենց քրոջ՝ Տիկին Աղաւնի Նալպանտեանի մահուան առթիւ:

Շաւիլի Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ վարչութիւնը շնորհակալութեամբ ստա՝ ցած է 2200 Քր. փոխան ծաղկեպսակի, եկեղեցւոյ բարերար Հրանդ Պալեանի մահուան առթիւ՝ ըստ հանգուցեալի փափաքին: Նուիրատուներն են Պ.Պ. Կար՝ պիւ Պալեան, Հայկ Նազաշճը, Միշէլ Նազաշճը, Արթիւր Պօղոսեան, Կիրակոս Եալընըղեան, Սարգիս Եալընըղեան, Կարապետ Գիլիմիլեան, Օհաննէս Թորոսեան եւ Քեչիշեան:

Ողբ. Նոյեմգար Պօղոսեանի մահուան քառասունքին առթիւ Պ.Պ. Արթիւր Պօղոսեան եւ Օհաննէս Թորոսեան 170 Քր. կը նուիրեն Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ: (Ստանալ «Յառաջ»էն):

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՀԱՄԱԽԱՐԲԵՐԴՅԻԱԿԱՆ Միութեան Սէնթ Անթուանի մասնաճիւղի անդամական ժողովը այս Շարաթ (Յունիս 30) ժամը 20-30ին, Պր. Ներսէսեանի սրճարանը, Պառ տը լա Կառ: Անդամներու ներկայութիւնը խիստ կարեւոր է:

ՄԱՐՍԷՅԼ

ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍ 30, ՄԱՍՆԱԻՈՐ ՀՈԳԵ՝ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՈՆ ԵՒ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ ԶԵՏՆԳՈՒՄ 1915Ի ԵՂԵՆԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻՆ

Մարտէյի Պոլսահայերու Մշակութա՝ յին Միութիւնը՝ Յունիս 30ի Շարաթ երեկոյ ժամը 18ին կազմակերպած է յարգանքի բացառիկ տուրք մը, Փրատոյի Ս. Թարգմանչաց եկեղեցւոյ մէջ իր բոլոր անդամք մեկնող տարբարխտ Պոլսեցիներու հոգւոյ ի յիշատակ, որոնք իրենց ազգային անսակարկ նուիրումով արժանի նկատուած են Աստուածառաք օրհնութեան, Միութեանս պատուոյ նախագահ եւ Թարգմանչաց մարք եկեղեցւոյ հիմնադիր բարերար ՎԱՀԱՆ ԽՕՐԱՍԱՆ՝ ձեւն, եկեղեցւոյ ճարտարապետ ԱՐԱՄ ԹԱՀԹԱՃԵԱՆ, ազգային դործիչ զբաղատ ուսուցիչ ՄԻՆԱՍ ԶԵՐԱԶ եւ ՄԿՐՏԻԶ ՓՈՐԹՈՒԳԱՆԵԱՆ:

Մասնաւոր արարողութիւն Կիրակնա՝ մուտքի, ձեռամբ ՅԱԿՈԲ ԵԱՍ. ՎԱՐ՝ ԴԱՆԵԱՆԻ, որ պիտի խօսի հին եւ նորոգ ննջեցեալներու ազգային օգտաշատ դործունէութեան մասին:

Արարողութենէն ետք՝ ճաշ ժընթիւնի դերաստիլ պարտէզին մէջ Թաուա-Լիւֆ: Կը հրաւիրուին հանգուցեալ ազգականները, բարեկամները, բարեպաշտ ազգայիններ, քոյր միութիւններ:

ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԻՍ

Շաւիլի հայ դպրոցի տարեկերթի հանդէսը այս Շարաթ օր (Յունիս 30) կէսօրէ յետոյ ժամը 3-30ին դպրոցի սրահը: Կը խնդրուի Շաւիլի հայրենակիցներէն մասնաւոր աշակերտներու ծնողքներէն, ներկայ դառնիլ այս հանդէսին քաջալերելու համար մեր փոքրիկները, ուսուցչուհիներն ու դպրոցի հոգաբարձութիւնը:

Հ. Բ. Ը. Մ.

ՓԱՐԻԶԻ ԵՐԻՏԱՍՍՐԴԱՅ ԱԿՈՒՄԲԸ

Տարեկան մեծ արձակուրդներու առիթով
Կազմակերպած է
հետեւեալ ցամաքային խմբերը

×

1 — AUVERGNE : du 14 au 29 Juillet 1973

A la recherche des Vestiges Arméniens
PRIX DU SEJOUR 350 FR\$

2 — GRECE : du 4 au 25 Août 1973

Avec notamment visite d'ATHENES, circuit à travers le PELOPONNESE, croisière de 5 jours à bord du M/V « KENTAVROS », séjour d'une semaine au village Club KALOGRIA.
PRIX DU SEJOUR ET VOYAGE AVEC TOUTES LES EXCURSIONS 2150 F.

3 — ARMENIE : du 1er au 19 Septembre 1973

Séjour en pension complète à l'Hôtel ANI Avec retour via LENINGRAD
PRIX : SEJOUR ET VOYAGE AVEC TOUTES LES EXCURSIONS 2150 F.
Մանրամասնութիւններու համար դիմել գրասենեակ:

Այս ճամբորդութիւններուն կրնան մասնակցիլ 18էն 35 տարեկան բոլոր հայ երիտասարդները

ԱՂՔԱՏԱԽՆԱՄԻ
ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԻՍԸ

ԿԻՐԱԿԻ, ՅՈՒՆԻՍ 1 ԺԱՄԸ 10-22

ՄՈՆԻՏՈՐԱՆԻ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՏԱՆ

ԴԱՐԱՍՏԱՆԻՆ ՄԷՋ, 44-50 Ավրելի Շաու տը Կոլ, Մոմարանսի
Դառնեք կը բացուին ժամը 10ին եւ կը տեւէ մինչեւ ժամը 22
Կէսօրին կարելի է ճաշել ճաշացուցակին համաձայն: Կարելի է նախօրօք սեղանները ապահովել հեռաձայնելով՝ Մոմարանսի 964-20-67 եւ կամ Աղքատախնամի կեդրոնը 878-02-99

Աւանդական շամփուրով խորոված, թէ՛ կէսօրին եւ թէ՛ իրիկունը: Անջատ առատ ամէն տեսակ ուտեստեղէն եւ ըմպելիներ Բացառիկ ժամանցի օր մը, նուագ, երգ եւ անակնկալներ: — Գեղարուեստականութիւն իրենց մասնակցութիւնը կը բերեն ՆԱՅԻՐԻ եւ ՄԻՆԻ-ՍՕՍԻ պարախումբերը, Տիկին ԱԼԹՈՒՆԵԱՆ իր երգերով Օր. Անահիտ ՍՎԱՃԵԱՆ ձեռնադաշնակով

ԹՈՄՊՈԼԱ, արժէքաւոր առարկաներով
Մուտք 5 Քր., ուսանողներու եւ երախաներու 2 Քր.
Անճրեւի պարագային, ապահովութիւններ ձեռք առնուած են:

ԾԱՆՕԹ.— Մոմարանսի երթալու համար չողեկառք առնել Կառ տիւ Նոռէն եւ իջնել Անկէն (Իւրաքանչիւր քառօր ժամուն, անցնիլ կամըջակը եւ թիւ 6 օթակալով իջնել Կրուէի կանըր (առէ):

ԿԱՐԵՒՈՐ.— Փափաքելի է որ ամէն ոք տեղւոյն վրայ ծախսէ, կը յանձնարարուի ուտելիք չբերել:

Հ. Յ. Պ.

ՓԱՐԻԶ.— Հ. Յ. Դ. Բաֆֆի խումբի ժողովը Ուրբաթ (Յունիս 29) ժամը 20-30ին, Փարիզի Մշակոյթի Տունը: Խիստ կարեւոր օրակարգ:

×

ՄԱՐՍԷՅԼ.— Հ. Յ. Դ. Շրջ. Կոմիտէն ընկերական ընդհ. ժողովի կը հրաւիրէ իրենց սովորական հաւաքատեղին՝

— Շ. Միսաքեան խումբ՝ Երեքշաբթի Յունիս 3, ժամը 21ին:

— Զաւարեան եմբախումբէն՝ Շարաթ Յունիս 7, ժամը 20-30ին:

×

ՎԱԼԱՆՍ.— Հ. Յ. Դ. Քրիստափոր Կոմիտէի ընդհ. ժողովը Յունիս 30ին, Շարաթ երեկոյ ժամը 20-30ին Ահարոնեան ակումբը: Ընկերներու ներկայութիւնը անհրաժեշտ է:

ԿԱՊՈՅՏ ԽՕԶ

ՕԴԱՓՈՈՒԹԵԱՆ ԿԱՅԱՆ
ՓԱՐԻԶ

Փոքրիկներու Յունիսի խումբը կը մեկնի Յունիս 2ին, Սքուար Մոնթոլոնէն, ժամը 7-30ին: Ծնողքներէն կը խնդրուի առաջնորդել իրենց զաւակները, որոշեալ ժամուն:

ԼԻՈՆԻ ԽՈՒՄԲ

Յունիսի խումբը կը մեկնի Յունիս 2ին, կէսօրէ ետք ժամը մէկին: Ծնողքներէն կը խնդրուի իրենց զաւակները առաջնորդել Հայոց եկեղեցի, 295 Ռիւ Պուալօ, որոշեալ ժամուն:

Հ. Մ. Ը. Մ. - ԱՐՆԻՒ

ԴԱՇՏԱՀԱՆԴԻՍ

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ, ՎԱԼԱՊՐԻ ԱՆՏԱՌԸ

Կիրակի, Յունիս մէկ, առաւօտեան ժամը 10ին պուլի մրցում — մանկական խաղեր ժամը 14-30ին:

Գեղարուեստական բաժին ու հայկ. ժողովրդական երգ ու պար
Շամփուրով խորոված — ըմպելի

Գառերու մեկնում ժամը 8-30ին Պոմոնէն, Պառ-Թապա, 8-45ին Պառ տիւ Կոպ ժամը 9ին Պառ-Փապալ:

Հ. Յ. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ԲԱՆԱԿՈՒՄ

ՕԳՈՍՏՈՍ ՄԷԿԵՆ 30

CAMP DU NOR SEROUND, COLONIE SAINT ANDRE, ROUTE DE BESSAN
34 BEZIERS (HERAULT) — Téléphone: 76-01-76

Հ. Յ. Դ. Նոր Սերունդի Կեդրոնական Վարչութիւնը իր տարեկան բանակումը կը կազմակերպէ այս տարի Պէզիէ

ՊԱՅՄԱՆՆԵՐ.— Մէկ ամիս՝ 600 Քր., 14 օրէն աւելի, օրական 26 Քր., 7 օրէն 14 օր՝ 29 Քր. 7էն պակաս՝ 32 Քր.

Արձանագրութիւնները՝ Զորեքշաբթի եւ Ուրբաթ իրիկունները ժամը 18էն 20 եւ Շարաթ օրերը՝ 16էն 20: Ծամբորդութիւնը՝ օթոքառով Փարիզէն:

ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ
ԿԱԶԳՈՒՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐ

Սմառուան արձակուրդին հետ մեր բարեկրկան ու երիտասարդական կապ — մակերպությունները դործի լծուեցան՝ կազմակերպման կայանները դրկելու համար մեր փոքրիկներն ու նոր սերնդականները։ Ֆրանսահայ Կապոյտ ինչպէս, որուն հիմնադրութեան 45ամեակն է այս տարին, մեր գաղութի կազմակերպութեանց մէջ առաջինն եղաւ, որ մտածեց դպրոցական արձակուրդի երկու ամիսները — Յուլիոս-Օգոստոս — օգտագործել՝ կազմակերպման կայանի մը մէջ համախմբելու համար մասաղ տարիքի հայ աշակերտներն ու աշակերտուհիները։ Նպատակն էր ազգայնագիտական։

Կազմակերպման կայանը այն միջավայրն է, ուր համախմբուած կ'ապրին փոքրիկ հայրերիներն ու Հայուհիները, հայա — լուսն միջոցաւ մէջ, ինչպէս ինչպէս եւ որակեալ հակիրճներու գործընթացը խնամքին տակ։

Ֆրանսայի զանազան շրջաններէն, — երբեմն նոյնիսկ ուրիշ երկիրներէ — համախմբուած հայ փոքրիկներու համախմբումը նոյն յարկին տակ ոգեւորելու երեւոյթ մըն է ինչնին։ Կազմակերպման կայանը սովորական դպրոցներէն բոլորովին տարբեր միջավայր մըն է։ Տեղական դպրոցներուն մէջ հայ աշակերտը կամ աշակերտուհին աննշան փոքրամասնութիւն մըն է, քաղաքացիի լրիւ իրաւունքներով։ Կայանին մէջ անիկա կը դառնայ լրակատար Հայ։

Չրկուած մայրերն լեզուն սորվելու հնարաւորութենէն, մեր փոքրիկները Կայանին մէջ կ'ընտելանան մեր մեծաքանակէն, կը սկսին թոթովել հայերէն, կը սորվին հայերէն երգեր ու հայկական պարեր, կը թրծուին հայկականութեամբ, ծանօթութիւններ ու բարեկամութիւններ կը հաստատեն։ Ու Կայանէն կը բաժնուին մեծ դոճանակութեամբ եւ անմոռանալի յիշատակներով, յաջորդ տարին այնտեղ վերադառնալու անհուն կարօտով։

Աւելի քան չորս տասնեակ տարիներէ ի վեր Ֆրանսահայ Կապոյտ ինչպէս կազմակերպման կայանի բարեկարգումը վայելած են հազարաւոր հայ երկսեռ փոքրիկներ։ Ամէն կողմէ ղեկավարներ կը տեղան Շրջանային վարչութեան, որ ղեկավարաւոր չի կրնար դոճացում տալ բոլորին, տեղի ներկայութեան պատճառաւ։

Պէտքովէն կայանը տեղ ունի չուրջ հարիւր հոգիի համար։ Տեսչութիւնը «նեղ ընկելով» կը յաջողի պատասխարել աւելին։ Սակայն կիսադարձման է այդ միայն։

Իսկական դարձմանը Կայանի հողին վրայ նոր շէնքի մը կառուցումն է։ Այդ ծրագրին է, որու հետամուտ էր Շրջանային վարչութիւնը քանի մը տարիէ ի վեր։

Ուրախ ենք յայտնելու, որ շնորհիւ սրտեղ հայերու ինքնաբերական լուծման — բուն եւ Կապոյտ ինչպէս մասնաճիւղերու զոհողութեանց, արդէն իսկ դրուած է հիմը նոր շէնքին, որ պատրաստ պիտի ըլլայ մինչեւ յառաջիկայ աշուն, ինչպէս կը հաւատեն ճարտարապետ Պ. Շրուանդ Մանուկեան։

Շրջանային վարչութիւնը վստահ է, որ նոր հանդիմանութեամբ եւ բարեսէր հայրենակիցներու առատաձեռն նուիրատուութեամբ պիտի յաջողի հայթայթել կառուցման եւ կահաւորման լրացուցիչ ծախքերը։

Ի փրկութիւն նորագոյն սերունդի մեր երկսեռ փոքրիկներուն։

ՀՐԱՆՏ-ՍՍՄՈՒՆԷԼ

ՍՐՈՒԱՆ ԴԵՊՔԵՐԸ
ՓՈՄՓԻՏՈՒ ՎԵՐԱՊԱՀ Է

ԲՐԵՃՆԵՒ ԿՈՒՉԷ
ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ ՏԱԼ ՖՐԱՆՍԱՅԻ

Առաջին հանդիպումին իսկ, Բրեժնեւ եւ Փոմպիտու որոշեցին աւելի երկար խօսիլ քան ինչ որ նախատեսուած էր։ Ռամպուլէի դղեակին Մարի-Անթուանէթի յարկաբաժնին մէջ է որ ընկ. Լէոնիտ Բրեժնեւ աւելի քան եօթը ժամ խօսած է Ֆրանսայի Նախագահին հետ, զուլիսի դէպքի, այսինքն միայն իրենց երկու թարգմաններու ներկայութեան։ Բրեժ — նեւի նպատակը յստակ է, կ'ուզէ ան — պայման համոզել Ֆրանսայի Նախագահը, որ աշխարհը չեն բաժնած Նիքսոնի հետ, եւ բան չէ փոխուած Նիքսոնի հետ ունեցած հանդիպումին առաջ գոյութիւն ունեցող համաձայնագրերուն կամ բարեկամութիւններուն մէջ։ Առաջին խօսակցութեանց հիմը կազմած են չորս հարցեր՝ Վիէթնամ եւ այդ շրջանի կացութեան յեղաշրջումը։ Երկու ղեկավարները կը խորհին թէ խաղաղ լուծումը մերձաւոր է եւ գոհ են։ Մերձաւոր Արեւելքի համար, երկուքն ալ կը տեսնեն որ տալանաւոր լուծում մը ցոյց չի տար ներկայիս։ Այս էր արդէն եզրակացութիւնը Նիքսոնի եւ Բրեժնեւի իրենց հանդիպումին ետք։ Ուստի նուազեցում՝ իւրաքանչիւրը պարզած է իր դերը։ Գալով Եւրոպայի ապահովութեան ժողովին, որ պիտի բացուի Յուլիոս Յին, Բրեժնեւ եւ Փոմպիտու ամէն ինչ պիտի ընեն որ այդ ժողովը արդիւնաւոր ըլլայ։ Բայց խօսք չկայ վեհաժողովի մը մասին։

Ընդհանուր տպաւորութիւնն այն է թէ այս հանդիպումը մեծ արդիւնք չէ տուած բայց ըստ դէպքերու, Ֆրանսայի Նախագահը անակնկալի եկած է, որովհետեւ Բրեժնեւ հարցերը չէ դրած նախատեսուած ձեւով։ Ասիկա ի վերջոյ թոյլ տուած է որ աւելի դիւրանայ տեսակցութիւնը եւ նոյնիսկ արդիւնքը, եօթը ժամուան առաջին տեսակցութենէն ետք, արդիւնաւոր նկատուի։ Իվ Մօրօ, Իււանի-Քէի մէջ «պատմական պահ մը» կը նկատեն այս հանդիպումը, եւ որոշ լաւատեսութիւն ցոյց կուտան։

Վերջին տեսակցութենէ մը ետք, Չորեքշաբթի առտու, Բրեժնեւ Մոսկուա կը վերադառնար։

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՊԱՐԱՅԻՆԱՆ մամուլը կը հաղորդէ, թէ բախում մը տեղի ունեցած է առջի օր, իրաքեան զինուորական ուժերու եւ Գիւրտերու միջեւ։ Չորս Գիւրտ մեռած է, իսկ 15 հոգի ալ վիրաւորուած։ Այս միջադէպին հետեւանքով Չոր. Պարզանի հրահանգած է «բոլոր քիւրտ ռազմիկներուն» պատրաստ գտնուիլ ամէն պատահականութեան առջեւ»։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ օգնաւորը մը փոքր օդանաւով մը Տրապիզոնի մօտերը վայրէջք կատարած է եւ թուրք իշխանութիւններէն քաղաքական անպատասխան իրաւունք խնդրած է։ Օդանաւորը կը կոչուի Անտոնի Վասիլեւ, իսկ օդանաւը կը գործածուէր Ռոստով-Պաթում ներքին գործածուէր։

Խորհրդային իշխանութիւնները վրայ։ Խորհրդային իշխանութիւնները անմիջապէս պահանջած են Անդալսի, որ օդանաւն ու օդաչուն իրենց

ԵՐԵՒԱՆ <=> ՓԱՐԻՅ
ՀԵՌԱՏԻՊ

ԵՐԵՒԱՆ (Արմէնիքէս, Յունիս 22)

«ՊՃԵՂ ՄԸ ԱՆՈՅՇ ՍԻՐՏ»

«Հայաստան» հրատարակչութիւնը ուսուրէն լոյս ընծայած է հաւաքածոյ մը՝ նուիրուած ժամանակակից արեւմտահայ գրագէտներու ստեղծագործութեանց։ Գիրքին խորագիրը առնուած է Շահան Շահնուրի մէկ պատմութեան անունէն՝ «ՊՃԵՂ մը անոյշ սիրտ»։ Հատորը կը բովանդակէ սփիւքի 14 հայ հեղինակներու արձակ գործեր։ Առնց չարքին են արեւմտահայ գրականութեան ճանչցուած վարպետներ Շահան Շահնուր, Վահէ Հայկ, Վաղդէն Ծուլանեան եւ ուրիշներ։ Համառօտ ծանօթագրութիւններ կան հեղինակներու մասին։

1916ին Մաքսիմ Գորկիի նախաձեռնութեամբ ուսուրէն լոյս տեսած էր «Հայ գրականութեան հաւաքածոյ», ուր տեղ գտած էին նաեւ արեւմտահայ շարք մը հեղինակներու գործերը։

1968ին հրատարակուած էր «Թանկապիտաններ, սիրուած էջեր» հաւաքածոն, որու մէջ ղեկավարած էին Սիւրբանի, Վարդապետի, Ռուբէն Սեւակի, Գր. Չօբանյանի, Երուստի, Ռուբէն Չարաբեանի երկերը։ Այս տարի «Հայաստան» հրատարակչութիւնը լոյս պիտի ընծայէ հայերէն Գրիգոր Չօբանյանի «Գրականութեան մասին» ուսումնասիրութիւնը։ Հոն ամփոփուած են գրագէտին յօդուածները եւ միտքերը գրականութեան մասին։

ՄԱՇՏՈՅԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԿԱՊԵՐԸ

Երեւանի Մատենադարանը վերջերս Մ. Նահանգներէն նուէր ստացած է միջնադարեան գրչագիր մը։ Անցեալ տարի ալ Մ. Նահանգներ կատարած իր ծամբար — դուրեան ընթացքին Բաբգէն Չուրապըեան, որ Մատենադարանի փոխ-տնօրէնն է, իրեն հետ բերած էր այլ արժէքաւոր ձեռագիրներ։ Բ. Չուրապըեան կարգ մը տեղեկութիւններ տուած է «Արմէնիքէս» թղթակիցին՝ Մ. Նահանգներու հայագիտական Կեդրոնին հետ Մատենադարանի հաստատած կապերուն մասին։

— Այդ կապերը, ըսած է ան, տեղի կ'ունենան զրբերու փոխանակութեամբ, արժէքաւոր ձեռագիրները ժապաւէններու վրայ արձանագրելով եւ դանդաղ փոխանակելով, ինչպէս նաեւ մասնագէտներու փոխադարձ այցելութեամբ։

Մ. Նահանգներու մէջ Հայագիտական օճախներ ստեղծուած են վերջին տարիներուն։ Հարվարտի, Գործնական, Լոս Անճէլէսի, Ֆրէզնոյի համալսարաններուն

վերադարձուին։

ՇՈՒ ԷՆ ԼԱՅ, չին վարչապետը, Հոկտեմբերին Միացեալ Նահանգներ պիտի այցելէ, իսկ նախագահ Նիքսոնը երկրորդ այցելութիւն մը պիտի կատարէ Չինաստան, յառաջիկայ դարնան։ Այս տեղեկութիւնները հաղորդեց Ճափոնի Գիւտտո գործակալութեան Մոսկուայի թղթակիցը, որ իր կարգին լուրը քաղած է խորհրդային աղբիւրներէ։ Փեքինի հաւաստի աղբիւրներու համաձայն, ոչ մէկ լուր կայ նման ծամբարութեանց մասին, նոյնիսկ հերքողներ կան։

մէջ բացուած են հայագիտական ամ — պիտիներ, ուր կ'ուսումնասիրուին մեր ժողովուրդին պատմութիւնը, մատենա — գրութիւնը, հին ու նոր հայ գրականութիւնը։ Այդ ամպիոններու հայագէտ փրֆեսօրները, ինչպէս Ռոպրթ Թոմ — սըն, Նինա Գարսոյեան, Ռոպրթ Հիւ — սէյն, Աւետիս Սունճեան Հայաստան այցելած են։

Գանդապէն ծանօթ բանասէր Յարութիւն Քիւրտեան նոյնպէս սերտ կապերու մէջ է Մատենադարանին հետ։ Ան քանիցս եղած է Հայաստան, ղեկուցումներ տուած է Մատենադարանի եւ համալսարանի մէջ։ Անոր հարուստ ձեռագրական հաւաքածոն կը ներկայացուի Մատենադարանի «Բանբեր»ին մէջ։

Մատենադարանը զրբերու փոխանա — կումներ կը կատարէ նաեւ Քոնկրէսի, Նիւ Եորքի եւ Շիքսփոյի համալսարաններու գրադարաններու հետ։ Ամերիկա — հայ հայրենասէր անձեր նաեւ զրբեր կը հաւաքեն եւ երեւան կը դրկեն։ Յիշեցը քանի մը անուններ անոնցմէ՝ Յարութիւն Հապարեան (Նիւ Եորք), որ Մատենա — դարանին նուիրած է 304 հին ձեռագիր՝ հայերէն, պարսկերէն, թրքերէն, Արշակ Տիգրանեան (Լոս Անճէլէս), Օսկար Իս — պիւրեան (Շիքսփո), Միհրդատ Թրեքե — եան, Ժիւլիէն Յովսէփեան, Միքայէլ Փափագեան, Տիրան Արք. Ներսոյեան եւ ուրիշներ։

ՇԷՅԳՍՓԻՐԱԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՁԱՆԸ

Շէյքսփիրագիտութեան հայկական կեդրոնի գիտական նստաշրջանը հանրա — դոմարի բերած է Հայաստանի մէջ կատարուող աշխատանքները՝ անդիպիցի մեծ թատերագիրին գրական ժառանգութիւնը ուսումնասիրելու ուղղութեամբ։ Վերջին երկու տարիներուն կարեւոր աշխատանք կատարուած է Յովհ. Մա — սեհեանի թարգմանական արուեստը ուսումնասիրելու համար։ Թարգմանուած եւ լոյս տեսած են Շէյքսփիրի քրոնիկ — ները։ Արդիւնաւէտ կապեր ստեղծուած են Շէյքսփիրական օտար կեդրոններու հետ, Խորհ. Միութեան մէջ թէ այլուր։

ԱՐՁԱԿՈՒՐԴ

Հայաստանի պիոներական ճամբար — ներու մէջ այս ամառ իրենց արձակուրդը պիտի անցընեն 59.000 դպրոցականներ։ Ծամբարներ կան Կիրովական, Գիւլիսն, Ալալիւրդի, Սեւանի ափին եւ այլուր։ Երեք նոր ճամբարներ բացուած են այս տարի՝ Լեւոնական, Կիրովական եւ Հան — քաւան։

«ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒՍՏԵՍԱԿՆԵՐ»

Հայաստանի Գիտութիւններու Ակադե — միայի պատմութեան հիմնարկութիւնը լոյս ընծայած է «Հայկական տառատե — սակներ» ալկովը։ Հեղինակը՝ Հայկ Գոր — ծակալեան հիմնուելով տպագրութեան արդի պահանջներուն վրայ եւ ուսումնա — սիրելով օտար տպագրութեանց տառա — տեսակները, անոնց կառուցուածքի հա — մաչափութեամբ ստեղծած է հայկական նոյնատիպ տառատեսակներ։

Այդ տառատեսակները իբրեւ գլխա — դիրներ արդէն գործածուած էին «Հայ — կական ՍՍՀ Ատլաս»ին, «Ալսարհացոյց — ց»ին մէջ։ Այդ տառատեսակները կը գործածուին նաեւ «Հայկական Սովետա — կան Հանրագիտարան»ին եւ «Հայ ժողով — վրդի պատմութեան» հատորներու քար — տէսներուն մէջ։

Inauguration d'une rue du «24 AVRIL 1915» à Vienne



ԽՄԲ. — Դժբախտաբար զգալի յայսօր — դուռնով մեր ձեռքը հասաւ Վիէնի երեսփոխան — քաղաքապետ Լուի Մերմազի արտասանած խոսքը, քաղաքին «ԱՊՐԻԼ 24 1915, Ցեղասպանութիւն գործուած Թուրքերու կողմէ Հայերու դէմ» փողոցին քայքայեալ տաքիւ: Հակառակ այդ յայտարարութեան կը հրատարակեմք այս փառք, իբրեւ միւթ փրանսահայ ժամանակակից պատմութեան:

×

(Allocution prononcée par M. Louis Mer-maz, député-maire de Vienne, le diman-che 29 Avril 1973 à l'occasion de l'inau-guration de la Rue «du 24 Avril 1915, Génocide perpétré par les Turcs contre les Arméniens»)

Lorsque la communauté arménienne de Vienne nous a demandé de dédier une rue de notre cité au terrible souvenir du 24 Avril 1915, le Conseil Municipal a immédiatement et à l'unanimité donné son accord.

Nous entendions ainsi rendre un so-lennel hommage à vos martyrs et vous dire en quelle sympathie et en quelle af-fection nous tenions les familles armé-niennes de Vienne.

×

L'histoire du dix-neuvième siècle a été marquée par l'affirmation du droit des

peuples à disposer d'eux-mêmes et par la revendication des libertés publiques et privées. Mais ce siècle est aussi celui de la montée des impérialismes. Parmi ces impérialismes, l'un des plus terri-fiants restera celui de l'Empire Ottoman. «L'homme malade» qui ne cesse de re-culer sur la péninsule balkanique voulut compenser sur le plan intérieur ce qu'il perdait aux frontières de l'Empire. Il s'ensuivit une politique totalitaire aux plans linguistique, racial, religieux, juri-dique et une politique de compression des minorités.

Le règne du sultan Abdul Hamid est marqué par une série de massacres qui frappent les chrétiens et tout particuliè-rement les Arméniens. La conscience uni-verselle s'émeut, mais l'horreur sera dé-passée avec les massacres qui débutent le 24 Avril 1915 et qui, au terme de souffrances immenses, de déportations massives et de cruautés inouïes, font un million ceinq cent mille victimes.

La Turquie s'est alors rangée aux cô-tés des Empires centraux à l'occasion de la première guerre mondiale. Une nou-velle fois, les échecs subis à l'extérieur par le gouvernement turc sont à mettre en parallèle avec la férocité de sa poli-tique intérieure.

Après la fin de la guerre, les survivants de la communauté arménienne se dis-

ԵՐԲ ՀԱՅ ՎԵՁԻՐՆԵՐ ԿԸ ԿՍՌԱՎԱՐԷԻՆ ԵԳԻՊՏՈՍԸ

— 0 —
(Բ. Խ. Վերջին մաս)

Այդ որմնանկարներուն ընկերացող ար-ձանագրութիւնները հայերէն լեզուով են եւ ասիկա զարմանք կը պատճառէ, արը-ուած ըլլալով, որ եկեղեցին շինուած է Ղարախանի կողմէ՝ իրենց համայնքին համար, որուն անդամներուն համար հա-յերէնը ծանօթ լեզու մը չէր: Քրիստոսի անունը դրուած է զարգացրերով, իսկ աւետարանիչները իրենց տողերը կը գրեն սովորական տառերով: Աւետարա-նիչներու կրօնադրները առնուած են շրջանակներու մէջ, որոնց քովերը կա-րելի է կարգալ երկու կարճ արձանագրու-թիւններ, որոնք կ'ողեկոչեն «Դժբախտ Խաչատուր» եւ «Կրասեցի Սարգիսը», երկու հայ հաւատացեալները, որոնք մասնակցած ըլլալու են նկարի գործա-դրութեան: Բայց ամէնէն յատկանշականը քան տողնոց ուրիշ արձանագրութիւն մըն է, որ կը գտնուի Փրկիչի ոտքերուն քով, ալ կողմը:

«Թէոդորոս մկարիչ եւ գրիչ... Թո՛ղ Աստուած ողորմի՛ր իրեմ, ձեզի եւ մեզի, եւ այցելէ մեզի, Հայերուս, որ կը զըտ-նուինք Եգիպտոսիներու ծառայութեան մէջ: Գրիգորիսի գարմիկ, ի Պատրիար —

persent à travers le monde. La France, fidèle aux leçons de la Grande Révolu-tion, accueille les Arméniens qui accèdent bientôt à la citoyenneté française. Ceux-ci, sans renoncer en rien à leurs souve-nirs, à leurs traditions, à leur culture, apportent une contribution très impor-tante à la vie de la nation française.

Déjà, en pleine guerre de 1914-1918, des volontaires arméniens avaient com-battu dans les rangs de l'armée française, reconnaissant dans son combat le combat de la liberté. Ils devaient prendre, dans les années suivantes, la plus grande part aux épreuves et aux joies de notre pays.

Chers Amis Arméniens, nous sommes aujourd'hui réunis autour de vous pour affirmer votre droit à obtenir réparation d'un crime contre l'humanité qui fut le premier génocide du vingtième siècle.

Les droits de l'homme et du citoyen sont universels et imprescriptibles. Le combat que vous menez en France et à travers le monde pour les libertés, pour le droit des peuples à disposer d'eux-mêmes, est le combat de l'humanité toute entière.

ֆուրիւն Տէր Գրիգորի, գարմիկ Գրիգո-րիսի, որ կռիլ Տէր Վահրամ»:

Այս արձանագրութիւնը, որ մեզի կու-տայ նկարի հեղինակին անունը՝ կ'ամ-բողջանայ ուրիշ արձանագրութեամբ մը, այս անգամ զգալիներէն լեզուով եւ որուն խմատը հետեւեալն է:

«Թէոդորոս, Թերպիպի մկարիչ: Թող Աստուած օրհնէ եւ պաշտպանէ կեանքը մեր աստուածասէր հօր արքիմարկաւագ Շեմուտայի, կրօնաւորը այս վանքին եւ գաւալը հանգուցեալ Պափնուտի: Որով-հետեւ ան մեծ հոգ տարաւ այս մկարի մեր Աբբայ Փօլ հօր, արքիմանտրիքի օ-րով... Մարտիրոսներու 840 քուսկա — մին»:

Մարտիրոսներու 840 թուականը կը հա-մապատասխանէ Քրիստոսէ ետք 1024 կամ 1025 թուականներուն:

Այս բոլորէն կարելի է հետեւցնել եր-կու կարեւոր բան. նկարի հեղինակին ա-նունը եւ թուականը: Այս հսկայ նկարը ոչ միայն գործն է հայ նկարիչի մը, այլ եւ, հաւանաբար, անոր իրագործումին պէտք եղած դումարը հայթայթուած է Հայերու կողմէ:

Շատ մեծ դումարներ պէտք եղած են դուռն հանելու համար այս գործը, որ տարիներու աշխատանքի պտուղն է: Ա-սիկա կը նշանակէ, որ եգիպտոս հաս-տատուած հայ արհեստաւորները եւ ա-ռեւտրականները, որոնց մասին կը խօս-ուի է. եւ Ը. զարբերէն սկսեալ, կը զըտ-նուին բարգաւաճ վիճակի մը մէջ կա-րեալ իրենց նիւթական մասնակցութիւ-նը բերելու այսպիսի մեծածախս իրա-դրծումներու: Անոնք հասան աւելի փայլուն վիճակի մը, երբ 1074 թուակա-նին Փաթիմական հարստութիւնը կոր-ծանելու վրայ ըլլալով, ներքին պայքար-ներու պատճառաւ, սուլթանը իր երկրին ճակատագիրը յանձնեց հայազգի Պատր Ճամալիի, որ փաստը տուած էր իր կա-րողութեանց, երբ կը գտնուէր Դամաս-կոսի կառավարութեան գլուխը: Պատ — մարան Ժ. Վիէթ հետեւեալ վկայութիւ-նը կուտայ. «Պատր Ճամալի մահմետա-կան Եգիպտոսի ամէնէն ազգառու անձ-նաւորութիւններէն մէկը եղաւ: Մուս — թանիւր սուլթանը չկարեալով կայուն եւ գործօն նախարարութիւն մը հաստա-տել, վերջ ի վերջոյ ղեկեց Պատր Ճամա-լիի, որ եղաւ խիստ, բայց խելացի բըռ-նատէր մը եւ վերականգնեց Փաթիմական հարստութիւնը: Իրմով կը սկսի շարքը հայ վեդիկներու, որոնք անդրադարձին եւ բարգաւաճութիւն հաստատեցին երկ-րին մէջ: Աւելի քան յիսուն տարի, Ե-գիպտոս ամբողջութեամբ մնաց անոնց տիրապետութեան տակ՝ մինչեւ 1135 թուականը, երբ Ալ Հաֆիզ սուլթանը շնորհազրկեց Վահրամ իշխանը: Վահրամ զարձաւ կրօնաւոր ու քաջուհեցաւ Տէյր էլ Ապիստ վանքը՝ 1137 թուականին: Ասիկա ցոյց կուտայ այն մեծ հռչակը, որ Տէյր էլ Ապիստ կը վայելէր Հայերու մօտ:

Հայ իշխանները եւ հայ համայնքը այդ

ԿՏԱԿՆ ԻՐ

ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ

Գրեց՝ ԱՐՇԱԽԻՐ ՇԻՐԱԿԵԱՆ

Ա. ՄԱՍ

Կ Ի Ս Կ Ի Մ Կ Ի Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԴԱԻԱՃԱՆ ՎԱՀԷ ԻՀՍԱՆԻ ԱՀԱԲԵԿՈՒՄԸ

Երկուքն ալ կրկին սրճարան մտան եւ բաւական մը մնալէ վերջ դուրս ելան եւ բռնեցին Սփրանտիտի ճամբան: Անակնկալ կերպով դատած էի մեծ «Պաֆիէ» մըն ալ եւ ուրախութենէս անմիջապէս վերա-դարձայ նաւամատոյց, վայրկեան առաջ հասնելու «Ճակատամարտ» լուրը հաղորդելու համար էյնաթեանին եւ Հրաչին, քանի որ Հիտայէթն ալ ահաբեկման ցան-

կին առաջին անուններուն շարքին վրան էր:

Կղզիներու շողեկաւը, վերադարձի ճամբուն վրայ սովորականին պէս, հան-դիպեցաւ Հէյալէի եւ Պուրկազ, ուր նոր ճամբորդներ առնելէ վերջ, երբ կը բաց-ուէին, իրարանցում մը ծայր տուաւ յան-կարծ եւ ժողովուրդը ձախակողմը սկսաւ խուժել: Հետաքրքրութենէս մղուած ես ալ այդ կողմ փութացի:

Ահաւոր տեսարան մը պարզուեցաւ: Հարիւրաւոր շուններու ղեկները կը ծփա-յին ջուրին երեսը եւ տակաւին ողջ մը-նացած ուրիշ շուններ, տկար կը կաղկան-ձէին: Այդ անսովոր տեսարանը հին պատմութիւն մը ունէր:

Թափառական եւ անտէր շուներ հաւա-քելու եւ չհոգնացնելու օրէնքի մը հա-մաձայն, կամ այդ օրէնքը գործադրելու նպատակով, թուրք թաղապետական պաշ-տօնեաներ, ոստիկաններ եւ նոյնիսկ թուրք քաղաքացիներ, պարբերաբար այդ շուները կը հաւաքէին, եւ փոխա-նակ զանոնք մէկ անգամէն փնտցնելու, կը փոխադրէին Իշխանաց Կղզիներու Գըռ-նակը գտնուող Ինսըզ Ատան, ուր խեղճ անասունները կը լքուէին իրենց բախտին, այսինքն ստոյգ եւ տանջալից մահուան:

Իրաւ ալ այդ հաղաբաւոր շուները, այդ ամալի ու չոփ չոր կղզեակին վրայ անօթի ծարաւ մնալով, զազանացած իրար կը փարատէին, զիշեր ցերեկ վազվառելով,

ուռնալով եւ կաղկանձելով: Խեղճ անա-սունիներուն ողբն ու կաղկանձը գիշերնե-րը մանաւանդ կը հասնէր մինչեւ Գըռնա-լը: Ոմանք ալ անօթութեան ու ծարաւին չզիմանալով, եւ փախչելով իրենց կատ-ղած ընկերներուն հալածանքէն, ծով կը նետուէին լողալով մարդաբնակ տեղ մը հասնելու ընտելով, բայց ուշաթափ՝ ալիքներէն կը քուլէին: Թուրք բարբա-րատութեան մէկ ուրիշ օրինակի մը վկա-նէրն էինք ամէնքս ալ:

Այդ ահաւոր տեսարանին առջեւ, միա-քըս զնաց մեր փողոցին անտէր շուներուն որոնց ես զարոյցականի սակառէս ուտելիք ու հաց կը բաժնէի ամէն երեկոյ, դպրո-ցէ վերադարձիս: Այդ իմ շուներս ամէն երեկոյ ճամբաս կը սպասէին եւ ձեռ-քըս լքելով կ'ընկերանային մինչեւ մեր դուռը: Ուրեմն խորհեցայ, իմ խեղճ շու-ներս ալ անոնց մէջն են եւ սիրտըս լեց-ուեցաւ տխրութեամբ ու վիշտով:

Յաղութը օրը Գալուստին հետ Մեծ Կըղ-զի կողմը, Հիտայէթը գտնելու յոյսով՝ բայց յուսախար վերադարձանք եւ ան-գամ մըն ալ որեւէ լուր չկրցանք առնել անոր մասին: Վահէին հետ հանդիպում-ներուս ընթացքին, փորձած էի բերնէն խօսք առնել, բայց խորամանկ «խափ-էն» կը խուսափէր: Ինքզինք քաջասիրտ ցոյց կուտար, բայց զիտէի որ կը վախնար մեր Կաղմակերպչութենէն: Անգամ մը յայտնեցի թէ ինք ամէն վտանգէ գերծ պի-

տի մնայ եթէ Հիտայէթին տեղը ցոյց տայ: — Կ'ուզե՞ս ազգին օգուտ մը ունե-նալ, հարցուցի: — Խոստացաւ, բայց ե-րեսան եկաւ որ մեզ կը խաբէր...

Այս զրադումներովս քանի մը օր ես անցուցի եւ վերջապէս ընկերներուն միտ լըս յայտնեցի: Ըսի թէ տունէն մինչեւ պաշտօնատունը, երթեւեկի տուն, Վահէն հարուածելը եթէ ոչ անկարելի, դէթ խիստ դժուար պիտի ըլլար: Յարմարա-գոյն վայրերն էին Աղա Ճամիին քովէն կամ Սազըզ Աղաճի փողոցէն մինչեւ Թաղ-սիմ, Թաղա Պաշի պողոտան կամ մինչեւ մեր տուններուն մերձակայքը: Իրաւ ալ հետապնդումներուս ընթացքին, ղեկած էի որ Վահէն, Ոստիկանական Կեդրոնէն հանրակառքով տուն դարձած միջոցին — բուն, իրիկունները երբեմն կ'իջնէր Աղա Ճատիի առջեւ ու Սազըզ Աղաճէն իջնելով կը հանդիպէր Թաղա Պաշի պահակաու-ցը: Ուրեմն, այդ շրջանակին մէջ կարելի էր յաղորդութեամբ ահաբեկել անիծեալ «խափիէ»ն: Վերջնական այս համոզումս հաղորդեցի ընկերներուն եւ սպասեցի ա-նոնց որոշումին կամ գործին:

(46 — Շար.)

ՉՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՁԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ

« ՅԱՌԱԶ »-ի
ԲԱՐԳԱՒԱՃԱՄԱՆ ՀԱՄԱՐ

Պոստիկն Պ. Պալեան 30 ֆր.
Պոստիկներէն Տիկին Ամիրալեան 30 ֆր.
X
Պ. Հրաչեայ Տէր-Անդրէասեան 50 ֆր.
կը նուիրէ:
X
Պ. Յարութիւն Քեհեայեան (Պանեկօ) 30 ֆր.:

ՓԱՐԻԶԻ
ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏԱՆ

Պատուոյ անդամակցութիւն 1973ի
Պրիւսէէն՝ Ա. Փ. 100 ֆր.
Պ. Գր. Փաթուկեան 100 ֆր.

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՀԱՄԱՆԱՐԲԵՐԴՅԻԱԿԱՆ Միութեան
Սէնթ Անթուանի մասնաճիւղի անդամա-
կան ժողովը այս Շաբաթ (Յունիս 30)
ժամը 20-30ին, Պր. Ներսէսեանի սրճա-
րանը, Պառ տը լա Կառ: Անդամներու
ներկայութիւնը խիստ կարեւոր է:

ԿԱՐՄԻՐ ԽԱԶ

ՕԴԱՓՈՈՒԹԵԱՆ ԿԱՅԱՆ

Արձանագրութիւնները կը շարունակ -
ուին Օգոստոս ամսուան համար:
Ա. խումբի մասնակիներու բժշկական
քննութիւնները տեղի պիտի ունենան 29
Յունիս, ժամը 10-13, Հայ Կարմիր խաչի
դարձանատան մէջ, 15 Ռիւ Ժան Կուստին,
Փարիզ (Տրդ):
Ա. խումբը կը մեկնի Երկուշաբթի 2
Յուլիս, ժամը 14ին, Հայ Կարմիր խաչի
կեդրոնատեղիէն, 15 Ռիւ Ժան Կուստին:

ՃՇԴՈՒՄ

«Յառաջ»ի Յունիս 27ի թիւին մէջ լոյս
տեսած մահազդին ողբացեալին անունն է՝
ՕՀԱՆ ՊՕՅԱՃԵԱՆ
(Բնիկ Ամասիացի)
(Թիւրիմացութեամբ ՕՀան Մանիսեան
դրուած էր):

Հ. Յ. Պ.

ՓԱՐԻԶ. — Հ. Յ. Դ. Բաֆֆի խումբի
ժողովը Ուրբաթ (Յունիս 29) ժամը
20-30ին, Փարիզի Մշակոյթի Տունը:
Խիստ կարեւոր օրակարգ:

X
ՄԱՐՍԷՅԼ. — Հ. Յ. Դ. Շրջ. Կոմիտէն
ընկերական ընդհ. ժողովի կը հրաւիրէ
իրենց սովորական հաւաքատեղին՝
— Շ. Միսաքեան խումբ՝ Երեքշաբթի
Յունիս 3, ժամը 21ին:
— Զաւարեան եմքակոմիտէն՝ Շաբաթ
Յունիս 7, ժամը 20-30ին:

X
ՎԱՆԱՆՍ. — Հ. Յ. Դ. Քրիստափոր
կոմիտէի ընդհ. ժողովը Յունիս 30ին,
Շաբաթ երեկոյ ժամը 20-30ին Ահարոն-
եան ակումբը: Ընկերներու ներկայութիւ-
նը անհրաժեշտ է:

ՃԱՇ ՎԱՐԴԱՎԱՌԻ ԱՌԹԻԻ

Կազմակերպուած Տարօն-Տուրուբերանի Հայր. Միութեան կողմէ, Յունիս 8,
Կիրակի կէսօրին Հայ Մշակոյթի Տունը 17, Ռիւ Պէօ, Մեթրօ Բատէ
կը նախագահէ Լեոն ՏՈՆԻԿԵԱՆ
Խօսք կ'աւանդէ. — ԽԱԶԻԿ ՄԿՐՏԻԶԵԱՆ եւ ԱՐԱՄ ՍԱՐԳԻՍԵԱՆ
Գեղարուեստական բաժին
Կը հրաւիրուին Տարօնցի Հայրենակիցներ եւ բոլոր Հայրենակիցները անխափ:
Մուտք՝ նաշագին 20 ֆր.

ԿԱՊՈՅՏ ԽԱԶ

ՕԴԱՓՈՈՒԹԵԱՆ ԿԱՅԱՆ
ՓԱՐԻԶ

Փոքրիկներու Յունիսի խումբը կը մեկ-
նի Յունիս 2ին, Սքուար Մոնթոլոնէն,
ժամը 7-30ին: Ծնողքներէն կը խնդրուի
առաջնորդել իրենց զաւակները, որոշեալ
ժամուն:

ԼԻՈՆԻ ԽՈՒՄԻ

Յունիսի խումբը կը մեկնի Յունիս 2ին,
կէսօրէ ետք ժամը մէկին: Ծնողքներէն
կը խնդրուի իրենց զաւակները առաջնոր-
դել Հայոց եկեղեցի, 295 Ռիւ Պուալօ,
որոշեալ ժամուն:

ԱՂՔԱՏԱԽՆԱՄԻ
ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍԸ

ԿԻՐԱԿԻ, ՅՈՒԼԻՍ 1 ԺԱՄԸ 10-22

ՄՈՆՄՈՐԱՆՍԻԻ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՏԱՆ

ԴԱՐԱՍՏԱՆԻՆ ՄԵՋ, 44-50 Ավրանի Շառլ տը Կոլ, Մոնմարանի
Դուռները կը բացուին ժամը 10ին եւ կը տնէ մինչեւ ժամը 22
Կէսօրին կարելի է ճաշել ճաշացուցակին համաձայն: Կարելի է նախօրօք սեղան-
ները ապահովել հեռաձայնելով՝ Մոնմարանի 964-20-67 եւ կամ Աղքատախնամի
կեդրոնը 878-02-99
Աւանդական շամփուրով խորոված, թէ՛ կէսօրին եւ թէ՛ իրիկունը: Անջատ առատ
ամէն տեսակ ուտեստեղէն եւ ըմպելիներ Բացառիկ ժամանցի օր մը, նուագ, երգ
եւ անակնկալներ: — Գեղարուեստական բաժին իրենց մասնակցութիւնը կը բերեն
ՆԱՅԻՐԻ եւ ՄԻՆԻ-ՍՕՍԻ պարախումբերը, Տիկին ԱԼԹՈՒՆԵԱՆ իր երգերով
Օր. Անահիտ ՍՎԱՃԵԱՆ ձեռնադաշնակով
ԹՈՄՊՈՂԱ, արժէքաւոր առարկաներով
Մուտք 5 ֆր., ուսանողներու եւ երախաներու 2 ֆր.
Անճրեւի պարագային, ապահովութիւններ ձեռք առնուած են:
ԾԱՆՈԹ. — Մոնմարանի երթալու համար չողեկառք առնել Կառ տիւ Նոռէն
եւ իջնել Անկէն (Իւրաքանչիւր քառորդ ժամուն, անցնել կամըշակը եւ թիւ 6
օթովուտով իջնել Կրոլէի կանքը (առէ):
ԿԱՐԵԻՐ. — Փափաքելի է որ ամէն ոք տեղւոյն վրայ ծախսէ, կը յանձնա-
րարուի ուտելիք չբերել:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻԲ

Կապոյտ խաչի Աղթորիկի մասնաճիւ-
ղը շնորհակալութեամբ ստացած է Համ-
բարձում Կակոյեանի մահուան տխուր
առթիւ 100 ֆր. Տիկին Լուսինէ Տէր-
Վարդանեանէ:

ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍ

ՎԻԷՆԻ ՄԵՋ

Յետաճուած է Յուլիս 22ին

ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍ

ԼԻՈՆԻ ՄԵՋ

Կիրակի Յուլիս մէկին, Սէն Մօրիսի
ծանօթ դաշտին վրայ, դպրոցական դաշ-
տահանդէս առաւօտեան ժամը 10ին մին-
չեւ ուշ երեկոյ:

Գեղարուեստական բաժին վարժարանի
աշակերտութեան կողմէ եւ վիճակահա -
նութիւն: Արեւելեան համադամ կերա -
կուրներ:

Անճրեւի պարագային խնջոյքի ձեռով
տեղի կ'ունենայ, նոյն օրը, եկեղեցւոյս
նորոգումը սրահին մէջ, Կ. յետոյ ժա-
մը 3ին սկսեալ:

ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԻՍ

Շաբաթի Հայ դպրոցի տարեկներջի հան-
դէսը այս Շաբաթ օր (Յունիս 30) կէսօրէ
յետոյ ժամը 3-30ին դպրոցի սրահը:
Կը խնդրուի Շաբաթի Հայրենակիցներէն
մասնաւոր աշակերտներու ծնողքներէն,
ներկայ դռնուիլ այս հանդէսին քաջա -
լերելու համար մեր փոքրիկները, ու-
սույցունահաններն ու դպրոցի հոգաբարձու-
թիւնը:

Imprimé sur les Presses

DU JOURNAL « HARATCH »

83, Rue d'Hauteville, Paris (10e)

ԾՈՎԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԵՒ ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍ

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ՊԱԶԻ ՕԴԱՓՈՈՒԹԵԱՆ ԿԱՅԱՆԻՆ ՄԵՋ

SAINTE-HONORINE-DES-PERTES

Բարձր հովանաւորութեամբ՝ ՍԵՐՈՎԷԻ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

Շաբաթ, 14 Յուլիս, ժամը 10էն սկսեալ

Գեղարուեստական բաժին՝ երգ, պար, արտասանութիւն

Երեկոյեան՝ խորոյկահանդէս եւ

Projection d'un magnifique film en couleur

« FLASH SUR L'ARMENIE »

Théâtre de marionettes

« ԲԱԶ ՆԱԶԱՐ »

Այցելութիւններ՝ Համաշխարհային Բ. Պատերազմի ցամաքահանման տեսարժան
վայրերը եւ ամերիկեան բանակին մէջ դահուած Հայ զինուորներու շիրմերուն
Կէսօրին շամփուրով խորոված կախին ճաշարանին մէջ
ճաշին մասնակցիլ փառիքողներէն կը խնդրուի արձանագրուիլ մինչեւ Յունիս 11
հեռ. 824-77-40 ժամը 15ին վերջ՝ 990-6-28

Երթուղի (իրիկներ)

Autoroute de l'Ouest, Evreux, Lisieux, Caen, Bayeux, Port-en-Bessin

Sainte-Honorine-des-Pertes

Passez vos vacances

en caravanes pliantes ou rigides



La bohème rigide 310 • 360 • 395 • 425 • 525
Cinq modèles standing. 10 versions. L'équipement de chacun
vous étonnera par le nombre des accessoires et les solutions
rationnelles que nous avons donné au problème confort. Ce
sont vraiment des caravanes pour caravaniers difficiles.
LES VACANCES C'EST


la bohème

UNE MARQUE DE
RENOMMEE EUROPEENNE

super thomlac
THOMASSIAN Frères

Carrefour de l'Éléphant PALAISEAU
T.928.03.88
N.20 Saint-Germain-les-ARPAJON
T.490.17.79

NEUF-OCCASION-ACCESSOIRES-POSE D'ATTELAGES



La bohème pliante • MAXI • MINI • PRIMA
Trois caravanes pliantes, tractables par les plus "petites
cylindres". Leur coque est celle d'une caravane rigide
(double paroi avec isolation totale, toit couvrable en polyester).
A l'étape, un vaste séjour encadré par deux grandes chambres
séparées.

ՕՐՈՒԱՆ ՊՈՍՏԻՆ

ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՅՈՒՄ
ՓՐԱՆՍԱՅԻ
ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Ընկերվարական կուսակցությունը, առանձինը Ֆրանսայի քաղաքական կուսակցությունաց, վերակենդանացալ այն օրէն ի վեր, երբ կի Մալէի գլխաւորած էս. Էֆ. Ի. Օ. ն հրապարակէն քաշուեցաւ 1969 Յունիսին՝ տեղը տալով պարզապէս Ընկերվարական կուսակցութիւնը կոչուած նոր կազմակերպութեան մը:

Այդ թուականին իրարու հետ ձուլուեցան էս. Էֆ. Ի. Օ. ն, Ալէն Սալարիի, Փափընէի եւ Ֆրանսուա Միքելանի ձախակողմեան կազմակերպութիւնները, որոնց առաջին համապատասխան տեղի ունեցաւ 1971 Յունիսին Էփրէն-Սէնի մէջ, ուր վերակենդանացած Ընկերվարական կուսակցութեան ղեկն անցաւ Ֆրանսուա Միքելանի ձեռքը: Պարտուեցաւ Ալէն Սալարի, որ կը ձգտէր դառնալ առաջին քարտուղար եւ որ ներկայիս կը գործակցի Միքելանի հետ:

Յունիս 22էն 24 Կրքնոպլի մէջ տեղի ունեցաւ Ընկերվարական կուսակցութեան համագումարը, ուր իրարու բախեցան տարբեր դադափարախօսութեանց հետա՝ մուտ հոսանքներ եւ ուր սակայն ջախջախիչ յաղթանակ մը ապահովեց Ֆրանսուա Միքելան:

Վերջին տասը տարիներուն, մասնաւորաբար 1969ի վերակազմութեանէն ի վեր մեծ ջանքեր թափուեցան միասնականութիւնը ապահովելու համար Ընկերվարական կուսակցութեան ծոցին մէջ: Կարելի չեղաւ բոլորովին անհետացնել տարա՝ կարծութիւնները, որոնց արձագանգները լուեցան Կրքնոպլի համագումարին մէջ:

Ֆրանսուա Միքելան Կրքնոպլի մէջ կը ներկայանար փառքի դափնիներով զարդարուած: Հակառակորդ կուսակցութեանց իսկ խոստովանութեամբ, վերակազմուած Ընկերվարական կուսակցութիւնը վերջին տարիներու իր բացառիկ յաջողութիւնները կը պարտի Ֆրանսուա Միքելանի նախաձեռնութեան ոգիին, ռազմավարութեան եւ հեղինակութեան: Ընկերվարական կուսակցութեան վարելչը նախաձեռնութիւնն ստանձնեց ի մի համալուծելու ձախակողմեան կազմակերպութիւնները: Յաջողութիւն մը կը նշկատուի Համայնավար կուսակցութեան հետ իր կնքած համաձայնութիւնը կառավարական հասարակաց քաղաքական, ընկերային ու ընտրական ծրագրի մը շուրջ: Յունիս 27ին առաջին տարեդարձն էր այդ պատմական համաձայնագրին:

Շտորհիւ այդ համաձայնութեան, անցեալ Մարտի խորհրդարանական ընտրութեանց մէջ կարեւոր յաղթանակ մը արձանագրեց Ընկերվարական կուսակցութիւնը, որ չահեցաւ 88 աթոռ. երկու աթոռ ալ չահեցան համակիրները: Ձախ արմատականներու երեսփոխաններն ալ հաշուելով, ընկերվարական համախումբը բաժնէր ներկայ Ազգ. Ժողովին մէջ ունի 102 աթոռ:

Ընկերվարական կուսակցութեան չարքային անդամներու թիւը բարձրացած է 105.000ի, ինչ որ մրցանիչ մը կը նկատուի, բաղդատմամբ նախորդ տարիներու: Միայն անդամները չեն, որ կը կազմեն կուսակցութեան ուժը: Վերջին ընտրութեանց մէջ ընկերվարական թեկնածուները ստացած են չորսկուկէս միլիոն ձուլ, ինչ որ կը նշանակէ թէ կուսակցու-

ՍՈՐՈՒԱՆ ԴԵՊՔԵՐՈՒ

ՓՈՄՓԻՏՈՒ
ԵՈՐՀ. ՄԻՈՒԹԻՒՆ
ՊԻՏԻ ԵՐԹԱՅ

ԱՄԷՆ ՌԲ ԳՈՀ Է

Հասարակաց զեկոյցը միաժամանակ հրապարակուեցաւ Փարիզ եւ Մոսկուա եւ հոն կը յայտնուի որ խօսակցութիւնները փոխադարձ լայն հասկացողութիւն ցոյց տուած են եւ տեղի ունեցած են բարեկամական մթնոլորտի մը մէջ, որ յատուկ է Ֆրանքելխորհրդային յարաբերութեանց: Կողմերը խոր գոհունակութեամբ հաստատած են երկու երկիրներու արդիւնաւոր գործակցութեան զարգացումը եւ վերահաստատած են իրենց վրձ-

թեան ժողովրդավարական դադափարաբանութիւնը կը խօսի լայն զանգուածներու հոգիին:

Ընկերվարական կուսակցութիւնը ընտրողներու աչքան մեծ թիւ ապահովելով իր թեկնածուներուն համար, դարձած է Ֆրանսայի երրորդ մեծ կուսակցութիւնը, իւ. Տէ. Էն. Էն եւ Համայնակարներէն վերջ: Միքելան կը յուսայ, որ մօտ ատենէն անկիւ պիտի դրաւէ երկրորդ կարգը: Իր այս հաւաստումը շատ հաճելի չի թուիր Համայնավար կուսակցութեան, որուն առաջին քարտուղարը՝ Ժորժ Մառչէ՝ գոհ է սակայն Կրքնոպլի համագումարէն, ինչպէս եւ կուշարթի դիշեր հրապարակաւ կը յայտարարէր ձայնաւորութիւն:

Յունիս 26, երեքշաբթի օր, հաւաքոյթի մը մէջ Ալեքսանդր Սանկինթթի ձառք մը խօսելով, յայտարարեց, որ իւ. Տէ. Էն. Էն թիւ մէկ թշնամին ոչ թէ համայնակարներն են՝ այլ Ընկերվարական կուսակցութիւնը, որ իր շարքերը կը ստուարացնէ ի վնաս այդ կազմակերպութեան: Ֆրանսուա Միքելանը նմանցոյց Պօղոս առաքեալին, որ Դամասկոսի ճամբուն վրայի տեսիլքով հաւատարմութիւն եղաւ եւ աւելի քան Գրիստոս տարածիչն եղաւ քրիստոնէութեան: Ըսել կ'ուզէր, որ Ֆր. Միքելան ալ վերջերս միայն ընկերվարական դաւանանքին յարելով անոր եռանդուն քարոզիչն ու տարածիչը դարձած է:

Ֆրանսուա Միքելան համագումարին մէջ ամբողջ երեք օր բոլուն պայքար տարաւ, երեքմի սպառնական չեղումով, տարակարծութիւնները հարթելու եւ միասնակերպութիւն ստեղծելու համար: Շեշտեց, որ «կուսակցութեան մէջ կուսակցութիւն» ստեղծելու խաղերուն չի հանդուրժեր երբեք:

Բացի նախկին ընդհ. քարտուղար Կի Մոլէի սակաւաթիւ կողմնակիցներէն, որոնց առաջարկած փոփոխութիւնները ձայներու 8 առ հարիւրը միայն ստացան, միւս բոլոր հոսանքները ձուլարկեցին միացեալ բանաձեւ մը, որ ընդունուեցաւ 3239ի վրայ 2969 ձուլով (91 առ հարիւր): Ձախնախիչ յաղթանակ:

Ֆրանսուա Միքելան վերահաստատութեան ընդհ. քարտուղարի իր պաշտօնին մէջ: Նորընտիր գործադիր մարմնին մէջ 81 թեկնածուներէն 54ը կը պատկանին իր կողմնակիցներուն: Որով ալ ժամ ապարէզը բաց է իր առջեւ՝ Ընկերվարական կուսակցութեան վերակենդանացումը իր լըրումին հասցնելու համար:

ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

ռական որոշումը աւելի խորացնելու այդ գործակցութիւնը շնորհիւ, գլխաւորաբար Ֆրանսայի եւ խորհ. Միութեան միջեւ գործակցութեան սկզբունքներուն գործադրութեան: Շեշտած են մասնաւոր կարեւորութիւնը Ֆրանքելխորհրդային խորհրդակցութեանց լարձրագոյն առաջնահանգ վրայ փոխադարձ հասկացողութեան խորացման համար եւ այս ուղղութեամբ Բրեժնեւ Փոնիխուրի փոխանցած է խորհ. Միութիւն այցելելու հրաւեր մը, 1974ի սկիզբը:

Այս ամբողջ ցոյց կուտան որ հակառակ սկզբնական վերադարձութեանց, Բրեժնեւ - Փոնիխուր հանդիպումը եղած է յաջողութիւն մը:

× Բրեժնեւ երկար տեսակցութիւն մը ունեցած է Ժորժ Մառչէի հետ, մեկնութիւն առաջ:

× Մոսկուա վերադարձին, խորհրդային պարագլուխը խանդավառ ընդունեւ խօսեցան արժանացած է իրեն բաները՝ խաղաղութեան:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՁինԱՍՏԱՆ ջրածին ուժը մը պայթեցոյց: Ձորեքշաբթի օր: Առաջին հիւլէական ուժըր Ձինաստան պայթեցողցած էր 1964ին: Յայտարար 15 հիւլէական եւ ջրածին ուժերու փորձ կատարած է: Վերջին պայթումի փորձը կատարուեցաւ Լօփ Նորի մէջ, Սինքիանի շրջանը, որ Ձինաստանի հիւլէական փորձերու գլխաւոր վայրն է: Վերջին ուժերին տարողութիւնը, ըստ մասնագէտներու, երկուքէն երեք մեկաթոն է:

ՈՒՐՈՒԿՈՒԹԻՆ նախագահը՝ Պուան Պորտապէրի պետական խաղաղ հարուածով մը ձեռք առաւ երկրին իշխանութիւնը: Նախագահը լուծեց խորհրդարանը եւ կազմեց «պետական խորհուրդ մը»: Հրովարտակներով երկրը պիտի կառավարէ: Պորտապէրի գորալիզ կը կենայ բանալի: Ձինուորականները դիտել կուտան, թէ խորհրդարանը լուծեցին, որովհետեւ ան թոյլ չէր տար բանակին վերջ տալ «ձախակողմնականութեան» եւ չէր յաջողած ազդու կառավարութիւն մը ըստեղծել: Սահմանադրական բարեփոխութիւնը պիտի կատարուին, որոնք հանրաքուէի պիտի դրուին առ ի վաւերաւորում:

ՊէՅՐՈՒԹԻ զինուորական Ատեանը չորս պաղեստինցի արձակազէններ բանտարկութեան դատապարտեց, որովհետեւ զէնք կը փոխադրէին, երբ իրանական բանակը բախումներ կ'ունենար Պաղեստինցիները հետ անցեալ ամիս:

ԳԻՒՐԸ ազգայնականներ եւ համայնավարներ բախումներ ունեցած են իրարէն հիւսիսը: Բախումները, որոնք տեւած են մէկ շաբաթ, վերջ գտած են երբ անոնց առաջնորդները ետօրեայ բանակցութիւններէ ետք զինադուլի մը շուրջ համաձայնած են: Ամէնէն բոլուն կողմները քրեւտ ազգայնականներու եւ համայնավարներու միջեւ տեղի ունեցած են Ձախոյի մէջ, Թուրքիոյ սահմանը եւ Տարպախիսանի մէջ՝ Պարսկաստանի սահմանամերձ շրջանը: Այս լուրերը կը հաղորդէ Պէյրութի «Ալ Անուս» թերթը:

ԵԼՄՏԱՆԻ ՆԱԽԱՐԱՐԸ Ժիւրբար տիշաթէն եւ համայնավար պարագլուխը Ժորժ Մառչէ առջի իրիկուն, հեռաւարտից, փորձեցին պարզել իրենց տեսակէտները աւելի արդար ընկերութեան մը համար: Հարկ է խոստովանել թէ խուլերու ցոյց մըն էր եւ հետաքրքրութիւն չստեղծեց, պարզ է որ կարելի չէ ժխտել թէ Ժիւրբար տիշաթէն մեծ երթողութիւն մէջ է եւ նիւթը Ժորժ Մառչէի նիւթը չէր (տեւաբար ստիպուած էր իրեն համար պատրաստուած նոթերուն նայել): Ի վերջոյ ոչ մէկ նորութիւն բերուեցաւ:

ԵՐԵՒԱՆ <=> ՓԱՐԻՉ
ՀԵՌԱՏԻՊ

ԵՐԵՒԱՆ (Արմէնփրէս, Յունիս 25)

«ԱՐԱՐԱՏ» ՄԻՇՏ ԱՌԱՋԻՆ ԴԻՐՔԻ ՎՐԱՅ

Չորս խումբեր 14ական կէտով ցարդ առաջին դիրքի վրայ կը գտնուէին: Այդ խումբերն էին «Արարատ», «Ջարեա», ԲԿՍԱ եւ «Բախտեոր»: Այս վերջին երեք խումբերը մէկական պարտութիւն կրեցին խաղաշրջանի 13րդ մրցումներուն, մինչդեռ «Արարատ» 2-0ով յաղթեց Դոնի Ռոստով խումբին: Այս վերջնոյն եւ «Արարատ» ի միջեւ մրցումը տեղի ունեցաւ Դոնի Ռոստովի մէջ:

Մրցումը բոլուն եղաւ առաջին իսկ վայրկեանէն: Դաշտի տէրերը յաջողաբար հորս պարտութիւններ կրած ըլլալով կը ձգտէին յաղթանակով մը բարեկաւել իրենց դիրքը, իսկ երեւանցիները՝ յաղթանակով մը ամրապնդել իրենց դիրքը: Երկուստեք յարձակողական խաղ մը կը բարկեցին, իսկ նման պարագաներու մէջ «Արարատ» զբեթէ անգերազանցելի է: Մրցումի առաջին կողմ արձանագրեց Լեւոն Իշտոյեան, խաղի եօթներորդ վայրկեանին: Երկրորդ կիսախաղին դաշտին տէրը դարձան երեւանցիք: 19րդ վայրկեանին Յովհաննէս Ջանազանեան Երեւանցիներու երկրորդ կողմ արձանագրեց: Այժմ «Արարատ» ընդհանուր աղիւսակին գլուխը կը գտնուի առանձին:

×

ՀԵՏԵԼԱՎԱՋԻ

Էսթոնիոյ մայրաքաղաքի հեծելազորի դաշտին մէջ միջազգային մրցում մը տեղի ունեցաւ, որու մասնակցեցան խորհ. Միութեան, Արեւելեան Գերմանիոյ եւ Ֆինլանտայի մարզիկները: Երեւանցի Սողոմոն Քեփէկեան հեծանիւի արագավազքի մէջ երկրորդ տեղը գրաւեց:

×

ԵՐԵՒԱՆՑԻ ԵՐԳՉՈՒՀԻՆ
ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ

Մոսկուայի մէջ տեղի ունեցաւ «Երեւտասարդ ձայներ» համամիութենական մրցումը, որու կը մասնակցէին երկուստեք մրցումին առաջնութիւնը ձեռք ձգեց երգչուհի Էլլինա Մակարեան, երեւանցի:

×

ՇԻՆԱՆԻԹԵՐՈՒ ՃԱՐՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ

Հրաբխային տուֆի ուսումնասիրուած պաշարները 270 միլիոն խորանարդ մեթրի կը հասնին, ինչ որ կը նշանակէ, թէ քանի մը դարու համար Հայաստան տուֆ քարի բաւարար պաշար ունի: Շինանիւթերու ճարտարարուեստը ունի երկու տասնեակ ձեռնարկութիւն, որոնք 25 տեսակ տաշուած քար եւ լցիչ կ'արտադրեն: Այս տարի ասոնց արտադրութեան ծաւալը պիտի հասնի հինգ միլիոն խորանարդ մեթրի: Ասկէ վատ պիտի պատրաստուին 900.000 քառակուսի մեթր սալ, մեծ քանակութեամբ կրաղիւս եւայլն: 1975ին, 1970ի հետ բաղդատմամբ շինանիւթերու ճարտարարուեստի արտադրութեան ծաւալը 43,4 տոկոս պէտք է աւելնայ, ըստ իններորդ հնգամեայ ծրագրին:

ԹԵՐԹԵԼՈՎ ՀԱՆԴԷՍՆԵՐԸ

ԼՈՒՍԱԻՐՈՒԹԵԱՆ ՇԱՐԺՈՒՄԻՆ ՆԱԽԱՔԱՅԼԵՐԸ

ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(ԺԸ. ԳԱՐՈՒ ՎԵՐՋԸ – ԺԹ. ԳԱՐՈՒ ՍԿԻՋՐԸ)

Ա.

ԽՄԻՐ. — «Լրաբեր հասարակական գիտութիւններ» հանդէսին մէջ Վ. Դիլոյ-եան վերալիշեալ խորագրով ընդարձակ յօդուած մը ունի, ուր ընդհանրապէս կը ծանրանայ Լազարեան ձեմարանի հիմնադիր գերդաստանին կրթական – լուսաւորական դերին վրայ: Ստորեւ, արեւմտահայերէն, գլխաւոր քաժինները:

Հայ ազգային – ազատագրական շարժումներու պատմութիւնը ուսումնասիրելու ժամանակ կարելի չէ անտեսել լուսաւորութեան շարժումը, քանի որ անիկա բազմապէս մասը կը կազմէ այդ շարժումին, եւ անոր իրականացումին նպաստող կարեւոր ազդակ մը եղած է:

Լուսաւորութեան գործին նախաձեռնարկ եղողները իրենց հայեացքը նախ կը յառեն դէպի հայկական հին մշակոյթը՝ հոնկէ քաղելով իրենց մտաւոր եւ հոգեւոր սնունդը: Աստիճանաբար ասպարէզ կուգայ բաւականին զարգացած սերունդ մը, որ հին մշակոյթի օգնու – թեամբ կ'աշխատի ինքնագիտակից դարձնել դարաւոր խաւարի մէջ խարխափող ժողովուրդը:

Ռուսիոյ մէջ հայ մշակոյթը ԺԸ. դարու երկրորդ կէսին թէեւ չտուաւ քաղաքական գրականութեան այդպիսի գլուխ գործոցներ (խօսքը կը վերաբերի «Յորդորակ»ին, «Որդայթ փառաց»ին, «Նշաւակ»ին, որոնք լոյս տեսան Հնդկաստան), բայց հոն ալ Հայերու մօտ ծնունդ առնող ազատագրական գաղափարները կը սկսին չափով մը կապուիլ ժողովուրդին ընդհանուր մշակութային մակարդակին հետ: Առենք օրինակ մը: Եթէ Շ. Շաւառիբեան Հայաստանի ազատագրումը յաջողցնելու մտադրութեամբ մեծ յոյսեր կը սնուցանէր Դարբասի հայ միւլիքներուն նկատմամբ, Յովհաննէս Լազարեան կը դանձր, որ անոնք չեն կրնար զեկաւարել ազատագրական շարժումը, քանի որ «այդ հայ տիրակալները տգիտութիւնը նրանց ինչպէս ամբողջ ազգի, այնպէս էլ անձամբ իրենց համար դարձնում է անօգուտ»: Լուսաւորութեան հարցին կապակցութեամբ Դարբասի միւլիքներուն կ'անդրադառնան նաեւ Մինաս եւ Յովսէփ Լազարեան եղբայրները, երբ 1776 Նոյեմբեր 6ին իրենց հօր անունով նամակ մը կ'ուղարկեն Շաւառիբեանի. «Երանի թէ յաջողացի երբէք մեր ազգին այնպիսի բարեբախտութիւն եւ վիճակ, յորում զերծեալ ազատեցին ի վեհերոտեալ թմրութենէ ծուրութիւն իւրեանց, եւ յոտն կայցեն ի սիրտ երկրի իւրեանց եւ ի ազատութիւն»: Այդ նպատակին հասնելու համար Լազարեան եղբայրները կը դառնէին, որ «նախ պարտ է ազգին մերոյ, մանաւանդ ի Սղնախ եւ ի Դարբասը եղբայրս, ունիլ լուսաւորութիւն մտաց, եւ

թողեալ զանոտի ունայնահաւատութիւն իւրեանց եւ գոռոզութիւն, կըթիլ եւ վատաւիլ ի մրցմունս գիտութեան, պատմութեան եւ աշխարհածանօթու – թեան եւ լինիլ հասու մտքը այնմ նիւթոյ եւ բանից, զորոց ձառէ բարեխնայաւոր ուղիւն քոյ Յակոբ ընդ դաստիարակին իւրոյ հանճարամիտ Մովսէսի»:

Լազարեաններու կարծիքով հայ հոգեւորականութիւնը եւս պատասխանատու գործեր ունի կատարելիք: Ան պէտք է քարոզէր ազգային ազատութիւն եւ հասկնէր ժողովուրդին, թէ աղօթքները եւ պահքները չեն, որ այդ երազը կ'իրականացնեն, այլ սէրը, միաբանութիւնը եւ լուսաւորութիւնը: Անոնք կը նկատէին, թէ հոգեւորականութեան դերը առաւել եւս մեծ է Հայաստանի մէջ, որովհետեւ պատմական հանգամանքներու բերումով, հայ ժողովուրդական դանդուածները «հայեցողք» մնացած էին «ի շրթունս նոցա», հպատակ հոգեւորականութեան: Դարբասի միւլիքները կրնային ապստամբիլ եւ ազատութիւն ձեռք ձգել միայն այն պարագային, երբ ժողովուրդը արթնար վեհերոտութեան թմրութենէն, երբ անոր միտքը լուսաւորուէր եւ երբ զգար միաբանութեան ուժը եւ անհրաժեշտութիւնը: Այլապէս ամէն ինչ ի դերեւ կ'ելլէր:

Լուսաւորութեան միջոցով է, որ հայ ժողովուրդը ազատելով դարաւոր թմրութենէն եւ տգիտութենէն, պիտի յաջողէր հաղորդակից դառնալ եւրոպա – կան քաղաքակրթութեան: Ասոր համար ալ Լազարեանները մեծ կարեւորութիւն կուտան օտար լեզուներու ուսուցումին: Յովհաննէս Լազարեան տարիներ շարու – նակ այն միտքը կը փայփայէ, որ «յօգուտ իր ազգի ուսումնարան հիմնի եւ պահէ»: Երկար ժամանակ անոր միջոցներով կը պահուին Նոր Նախընկալի եւ Թիֆլիսի դպրոցները, պայմանաւ որ հոն ուսումնասիրուէին բնական գիտութիւն – ներ եւ օտար լեզուներ: Բայց անոր հիմնական նպատակը կ'ըլլայ «կառուցանել ի տէրութեան Ռուսաց, ընդհանրական ուսումնարան մի՛ վասն հայկասեռ ներքաժիտ բանասէր մանկանց»:

Լուսաւորութեան հարցով կը մտահոգուին բոլոր պոնոնք, որոնք պատրաստ էին հայերեւելին ծառայելու: «Հայերեւելին եւ եկեղեցիին» շահերէն դրդուած էր, անշուշտ, Եփրեմ Աբբ., յետադային կաթո-

ԿԸ ՓՆՏՈՒՈՒԻ ԴԱՐԵՀԻ ԳԼՈՒԽԸ...

— 0 —

Չգալացունց յայտնութիւն մը կատարած են Փրանսացի հետխոյզները, Պարսկաստանի հարաւ-արեւելք՝ Սուզի (Շուշ) շրջանին մէջ գտած են արձանը Դարեհ Ա.ի, Պարսից թագաւորին, բայց... ասոանց գլուխը: Դարեհ մեռած է 2500 տարի առաջ, Եգիպտոսի վրայ կատարուած արշաւանքի մը ընթացքին:

«Փարիս-Մաշ» շարաթաթերթի վերջին թիւերէն մէկուն մէջ, անոր աշխատակիցներէն մէկը, վերոյիշեալ վերնագրով

գրկոս, երբ կը յայտարարէր, թէ ինք իր մնացեալ կեանքին նպատակը դարձուցած է «իւրաքանչիւրում քաղաքի համարս – բանս հաստատել իմս արդեամբ եւ քրտամբ, որով ազգ մեր ոչ մնացին ի կուրութեան, այլ օր ըստ օրէ ի լուսաւորութիւնս յառաջացեն...»:

Օրուան հայ յառաջողէմ գործիչները կ'ըմբռնեն, որ կըթական գործը պէտք է գուրս ելլէ վանական նեղ շրջանակէն, պէտք է ընդհանուրին սեփականութիւնը դառնայ, պէտք է գիտութեան բարիք – ները վայելեն բոլորը անխոր:

Նշանակալից է եւ ժամանակին համար ողջունելի այն յայնախոհութիւնը, զոր երեւան կը բերեն հայ յառաջողէմ գործիչները, մերժելով կրօնական խորհրդանշանութիւնը եւ դաւանական իրեքտերթութիւնը: Լուսաւորչական ըլլալով հանդերձ, անոնք կ'ըմբռնեն եւ կը գնահատեն մշակոյթի զարգացման գործին մէջ Մխիթարեաններու կատարած ազդանուէր գործունէութեան արժէքը: Այսպէս, Յովհաննէս Լազարեան խորհուրդ կուտայ իր գաւիթը՝ խաչատուրի, որ Եւրոպա պտըտելու ժամանակ այցելէ նաեւ Վենետիկ, «ուր տեսանել կարէք եւ Մխիթար աբբայի միաբանութիւն եւ Հայոց մեծ աղաղակին»: Ռումանահայ գործիչներէն Պօղոս Սեբաստեան կը գրէ, որ Մխիթար – եանները «ի պայծառութիւն ազգիս» «ուխտեալ իսկ են» եւ «զանձինս իւրեանց զոհեալ. եւ առ այս՝ վկայ հաւատարիմ արդիւնք նոցա արձանացեալ կան յանդիման ամենեցուն»: Մխիթարեան միաբանութիւնը, կ'աւելցնէ ան, «ուսին դիտազողական վարս եւ զկրթականութիւն ի ներքին եւ յարտաքին տեղեկութիւնս, թողից ասել զնախանձ հայրենեաց», որոնք «չեն անձանօթք ի ճշմարտասիրաց»:

Այսպէսով, օրուան հրատապ խնդիրը, որ նաեւ ժամանակի հրամայականն պահանջն էր, հայ ազգի միասնականութեան եւ լուսաւորութեան ապահովումն էր: Ասոր նախապայմանը նոր ժամանակի ոգիին համապատասխանող դպրոցներու ստեղծումն էր: Ասով կը մտահոգուին Յովհաննէս Լազարեան եւ առհասարակ բոլոր յառաջողէմ գործիչները:

յօդուած մը ունի, որ կը սկսի հետեւեալ կերպով. «... Մարդ մը, որ յաճախ կը ծամբորդէր Նախիւթոնի նման եւ միեւնոյն նպատակով: Անոր Ուսմանը կը կոչուի Մարաթոն՝ Գ. Ա. 490ին: Հելլէն՝ յոյն քաղաքացիները սակայն, հաւաստարար անոր, կործանեցին հսկան: Կ'ըսեն, թէ լացած է այդ օրը, որովհետեւ ուրիշ ընելիք չունէր...»

«Որդին՝ ետքը, հրամայեց խորագրի երեք հարիւր հարուած տալ ծովուն, որովհետեւ Յունաստան զամբ ելած օրը, անիկա ալեկոծ եղած էր: Դարեհն ու անոր յաջորդները աւելի իրենց չափազանցութիւններով կը յիշուին պատմութեան մէջ, քան թէ իրենց մեծագործութիւն – ներով: Եւ անոնց կը մնայ համապատասխան հետեւութիւններու յանդիլ:

«Եւ սակայն ան անարժէք մէկը չէր համարէր ինքզինք: «Դարեհն եմ եւս, Մեծն թագաւոր, թագաւորաց՝ թագաւոր, ժողովուրդներու թագաւոր, մեծ երկրի թագաւոր, որդի Աբեմենեան Աթահակի: Ահուրամազդան (Արամազդ) կը պաշտ – պանէ դիս, նաեւ ամէն ինչ որ ես բրած եմ...»:

Եւ, այնուամենայնիւ, մեռաւ ան 2500 տարի առաջ, դէպի Եգիպտոս արշաւանքի մը ընթացքին»:

×

Այս յառաջարանէն ետք յօդուածագիրը պատմականը կ'ընէ, վեր հանելով Ֆրանսայի դերը եւ տալով այս շրջանի հետախուզութեան մանրամասնութիւնները:

Բարձրագոյն վկայականներ ստացած երկու սեռէ հնագէտներ, 1896ին սկսեալ ձեռնարկը Պարսկաստան կուգան Սուզի (Շուշ) բլուրները խուզարկելու համար, պարսիկ աշխատաւորներու օժանդակու – թեամբ:

Տարիներէ ի վեր կը մաքրեն հսկայ պալատ մը Ապաստանի շրջանին մէջ. պալատը տարբեր մեթոք բարձրութիւն ունի եւ շինուած է արուեստական բլուրի մը վրայ: Արդեօք Դարեհն պալատն էր: Վստահ չէին: Ուրիշ փաստեր հարկ էր երեւան հանել ասոր համար: Ճշգրիտ արձանագրութիւններ, արձանի բեկորներ մինչեւ այն ատեն երեւան չէին հանուած յիշեալ շրջանին մէջ:

1970ին Փրանսացի հետխոյզ Ժան Փելլոյի զեկաւարութեամբ հետաքննարկական դիւտ մը կատարուեցաւ: Գործադոյն մարմարէ երկու արձանագրութիւններ երեւան հանուեցան, լաւ պահպանուած վիճակի մէջ, Ասորեստանցիներու եւ Պարսկէններու անկիւնաւոր դիրով քանդակուած: Դարեհն պալատի հիմնադրումի արձա – նագրութեան պատճէնն էր, որու վրայ յիշատակուած էր պալատի շինութեան համար օգտագործուած նիւթերու մէկ ցանկը — Լիբանանէն բերուած մայրի, եղեւին, ինչպէս նաեւ այլ վայրերէ բերուած քարեր, ոսկի եւայլն:

Վերոյիշեալ աշխատանքներու աւրն – թեր, հետխոյզները երեւան հանեցին ուրիշ պալատ մը, որուն ընդունելութեան

ԿՏԱԿՆ ԷՐ

ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ

Գրեց՝ ԱՐՇԱԻՐ ՇԻՐԱԿԵԱՆ

Ա. ՄԱՍ

Կ Ի Ր Ա Կ Ի Մ Կ Ի Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԳԱԻԱՃԱՆ ՎԱՀԷ ԻՀՍԱՆԻ ԱՀԱԲԵԿՈՒՄԸ

Բայց օրերը կ'անցնէին եւ անոնք կը ձգձգէին ու կը ձգձգէին: Սաստիկ սրտ – նեղած, որոշեցի այդ «Գործ»ը վրաս առնել: Բանկալթիի Կրակի Մկրտութիւնս ինքնավստահութիւնս աւելցուցած էր. եւ մեր ընկերներէն Տաճարի սպանութիւնը, ատելութիւնս խորացուցած էր հանդէպ այդ անպատիժ մնացած չարագործին եւ առհասարակ բոլոր դաւաճաններուն:

Անպատիժ չձգելու համաժողովուրդական ցանկութիւնը, որ ամէն տուն ու հեղ կը կը յայտնուէր եւ այդ ձգձգումները անհամբերութեամբ լեցուցած էին զիս:

Հոգեկան այդ վիճակի մէջ էի երբ Պատասխանատու Մարմինն դիմեցի, անձամբ ահաբեկելու հայանուն մատնիչ – լրտեսը: Այդքան շարիքներէ վերջ, այդ հրէշին ողջ մնալը նախատիք մըն էր մեր կադ – մակերպութեան եւ քիչ մը արժանա – պատուութիւն ունեցող ռեժէ հայ երիտա – սարդի համար:

Վահէ Իհսան կը սոսկար Դաշնակցու – թենէն. բայց միշտ ալ կը ճգնէր անվախ երեւոյթ մը ցոյց տալ: Եւ վարպետօրէն կ'ուզէր այն տպաւորութիւնը տալ իր շըր – ջապատին թէ ինք բանէ մը վախցող չէ:

Որոշեցի մօտենալ իրեն եւ բարեկա – մանալ: Շատ զօրաւ չեղաւ. որովհետեւ Վահէն ինքն ալ կը փնտրէր մեղքէ մէկը, որուն կարենար արտայայտուիլ եւ անուղ – դակի կերպով իր խօսքերը տեղ հասցնել: Կարճ ատենէն «մտերիմներ» դարձած էինք. միասին կ'երթայինք սրճարան կամ ալ վայրեր: Վստահ էի որ ինքն ալ կը կեղծէր ու չէր հաւատար անկեղծու – թեանս, բայց կամայ կամայ սկսաւ աւելի փնտռել զիս, երբեմն իմ «տէքստ»ը բանալու համար: Երբեմն երբ զլուրը քիչ մը աւելի տաքցած ըլլար օդէն, կը բացադանէր:

— Մօ, այդ քու Դաշնակցականներդ ինչ

կ'ուզեն ինձմէ... առտունէ մինչեւ իրի – կուն տանս առկէ մարդ կը պտըտի... քէ իրենց թող խելօք կենան... միայն Դաշնակցութիւնը մարդ չունի... Մենք ալ ունինք:

— Ձեզի համար «զող սիրտը դող» կ'ը – սեն, Պարոն Վահէ: Ես միշտ մէջընդին եմ. ձեր մասին բնաւ խօսող չկայ...

Վահէն պահ մը կը հանդարտէր, բայց իր մտահոգութիւնները չէին փարատեր: Աւելի տխուր ու մռայլ դէմք մը կը ստա – նար. իսկ եւ կը շարունակէի.

— Ձեզի դէմ ինչ կրնան ունենալ. բնաւ իրենց չեմ ըսած թէ պատերազմի ատեն թուրք ոստիկաններով քանի անգամ մեր տունը խուզարկելու եկած էք: Եւ ինչո՞ւ ըսեմ. դիտեմ թէ ուղեւով չէիք ընել, այլ ստիպման տակ...

— Աֆերիմ Արշալուի... իշտէ քեզի պէս մտածող քիչ կայ... քէ իրենց որ հետս չէինան... ետքը դէշ կ'ըլլայ:

Այսպէս խօսելով դաւալը կը պարպէր եւ ինծի ալ կը հրամցնէր, ջանալով աւելի խմցնել ինծի, բերնէս խօսք մը առնելու համար: Բնաւ չէի մերժեր. եւ զարմանալին հոն է որ երբեք չէի գիտու – նար: Մտկալուած էի այդ զրուիքի արա – բանին հետ օղի կամ գարեջուր խմիլ, կարեւորը ան էր որ մեր բարեկամու – թիւնը երթալով կ'ամբառնար:

Երկու անձեր նշանակուած էին Վահէի հաշիւը մաքրելու համար. դիտէի ու կը

ջղայնանայի որ մատնիչը կը պատրաստ – տուէր Պրանի հեռանալ, միանգամ ընդ – միշտ կը հետքը կորսնցնելու համար. ինչպէս ըրած է զօրնադէմ Հիտայէթը, որ արդէն Անատոլու անցած էր, փրկուե – լով Հայուն արդարադատ զնդակէն:

Ներկայացած էի Պատասխանատու Մարմինն եւ խնդրած էի մատնիչը պատ – ժելու գործը ինծի յանձնել: Շատ վերա – պահութեամբ նկատի առած էին առա – ջարկը: Տարեքս փոքր էր եւ անիւրձ կը գտնէին զիս ու կը կասկածէին յաջողու – թեան մասին: Բայց երեւի ուղեցին փոր – ձել եւ շարաթ մը միայն պայմանաժամ տուին. անկէ վերջ Մարմինը որոշած էր ծայրայեղ միջոցներու դիմել, նկատի ու – նենալով Իհսանի մօտալուտ մեկնումը:

1920 Մարտ 27ի առաւօտն էր:

Արշալոյսին դուրս ելայ Բերա Բալաթի դիմացի չէնքէն, ուր անցուցած էի դի – շերը: Վճռած էի այդ օրն իսկ «գործ»ը վերջացնել ամէն դէպքով:

(47 – Շար.)

ԶՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ԶԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ԶԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ

մէկ սրահը հարիւր սիւն ունէր։ Դարեհ՛ի թոռանը՝ Արտաքսէսի պալատն էր ա – սիկա։

Հնախոյզները եւ պարսիկ աշխատաւոր–ները իրենց ուրախութենէն կը խայտա–լին։ Ակնյայտ էր ալլեւա, որ անյիշատակ անցեալը կը կենդանանար մէկ անգամէն։

1972 Դեկտեմբեր 24ին, Ծնունդի նա – խօրեակին, ի նորոյ նշանակուած զե–կաւար Օր․ Մոնիք Բէշրվրա, իր խում–բով գնաց խուզարկելու քառակուսի վայր մը։ Ժամուան մը աշխատանքէ ետք երբ արեւը ծագեցաւ, պարսիկ աշխա – տաւորները վայրկեան մը կանդ առին՝ աղօթքով ողջունելու համար լուսաբայր։ Հանապազօրեայ սովորական այս փառա – բանութեան առհասարակ անտարբեր ա–րեղակը, այդ օր կարծես զգայուն էր։

Կէսօրէն ետք պարսիկ գործաւոր մը զորչագոյն քարի բեկոր մը յայտնա – բերեց, նշանակացի հրաւիրելով Փրան – սուհի հնագէտը, որպէսզի անհրաժեշտը նոթագրէ իր յուշատետրին վրայ։ Ապա, երբ արչաւախումբին գլխաւոր ղեկավա–րը՝ Ժան Փերօ տեսաւ այդ բեկորը, հաս–տատեց, թէ ատիկա հսկայ արձանի մը ձեռքին մէկ կտորն է։

Հետեւեալ օրը, Դեկտեմբեր 25ին, աշ–խատաւորները դտան եզրպտական ար–ձանադրութիւն մը՝ պատկերազիրներով։ Հոն գրուած էր․ «Ահաւասիկ քարէ ար–ձանը Դարեհ՛ի․ Թաղաւորը հրամայեց եզրպտոսի մէջ շինել, որպէսզի անոնք որ զայն պիտի տեսնեն՝ զիտան թէ Պարսիկ մը զրաւեց Եզրպտոսը»։

Փարիզէն յատուկ պաշտօնով եկած եզրպտադէտները երբ վերծանեցին ար – ձանադրութիւնները, հաստատեցին, թէ Արեմենեան թաղաւորի մը առաջին գըտ–նուած արձանն է այս։ Ունի 2,5 միթր բարձրութիւն եւ կը կշռէ 21 թոն․ ար – քան հաղած է պարսկական երկար վե–րաբկու մը՝ օղակուած լայն գօտիով։

Դեղնադոյն խաւէն մաքրուած հսկայ արձանը պիտի փոխադրուի Շուշի թան–գարանը։

Իսկ պարսիկ աշխատաւորներուն հա – մար անմեկնելի կը մնայ այն փաստը, որ Դարեհ՛՝ Թաղաւորաց թաղաւորը, թա–ղաւոր մըն է առանց դուխի ...։ Արգարեւ չեն գտած տակաւին Դարեհ՛ի արձանին վերնամասը, ի՞նչպէս համա–կերպիլ ասոր, մանաւանդ որ տեղոյն վրայ դնուած ուրիշ քարէ բեկորի մը վրայ արձանադրուած է հետեւեալը՝ «Ա–նիկա սքանչելի ձշգրիտ պատկերն է ամենակատարեալ աստուծոյ՝ տէր–տիրա–կան երկու երկիրներու...»։

Քաղեց՝ Գ․ ՓիլիպպոսեԱն

ԿԱՐԴԱՅԷՔ

ՏԱՐԱԾԵՑԷՔ

ՅԱՌԱՋԸ

«ՅԱՌԱՋ»ի ԹԵՐԹՕՆԸ

(216)

ՀԱՅԱԳՈՐԾ

ԿԻՆԸ

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՕՎԻՏԻ ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ժ․

Լիւսի Ժպտելով պատասխանեց․
— Ի՞նչպէս կրնամ թշնամի ունենալ։ Կատարեալ կղզիացումի մը մէջ կ'ապրիմ, որբ եմ ու ընկեցիկ Մանուկներու ա–պաստարանին մէջ մեծցած։ Միայն նշա–նածս կը ճանչնամ, որ քանի մը օրէ ի վեր Փարիզէն կը բացակայի։
— Մէկունը ըսած էիք Պուա Գոլոմպ երթալնիդ։
— Ոչ մէկուն։ Ոչ ոք կընար գիտնալ թէ ո՛ր Ժամուն, ի՛նչ պայմաններու մէջ եւ ի՛նչ ուղղութեամբ կրնայի վերադառ–

ՄԱՐՁԱԿԱՆ

ԱՄԵՐԻԿԱՆԵՐԻ ՄԵՐԻՏԻՄԻԱՆԻ

Ֆրանսայի չրջակը առանց ՄԵՐՔՍԻ

1973ի Ֆրանսայի Շրջանի մրցուողները կրնան լայն չունչ մը քաշել․ անպարտելի ախոյեանը՝ էտի Մերքս, այդ «սար – սափ»ը, չի մասնակցիլր այս տարի հե–ծերանիւի աշխարհի մեծագոյն մրցման, զոր պիտի շահէր այնքան փառաւորաւ – պէս յաջորդաբար չորս անգամներ։ Ու այժմ, եթէ պեժ հեծերանորդին բացա–կայութեամբ պիտի չունենանք առիթը անգամ մը եւս զմայլելու եւ ողբերուե–լու ի տես իր զգայացունց երոյթներուն, ըլլալ լեռներու բարձունքներուն կամ կամ ընդդէմ Ժամացոյցի եւ կամ ուղիղ ճամբաներու բախումներու ընթացքին, եւ սակայն պայքարը պիտի ըլլայ աւելի յախուռն եւ աշխպէս հետաքրքրաշարժ «մնացորդաց»ին մէջ, ուր մէկէ աւելի է թիւը այն մրցակիցներուն, որոնք յա–ւակնութիւնը կը սնուցանեն խելու հա–մար յաղթականի երանելի ղեղին շա–պիկը։ Ու ինչպէս միշտ, այս տարի եւս եւ աւելի, հաւանականներու առաջին դծին վրայ կը նախատեսուի համալրելի եւ մշտական Փուլիտորը, որ հակառակ իր 39 տարիներուն — յառաջացեալ տա–րիք մարզական կեանքի մէջ — ծափա–հարելի կորովն ու քաջութիւնը կ'ունեն – նայ կրկին մասնակցելու այդ ահել ու սպառնչ վաղքին զոր դժբախտաբար չու–նեցաւ բախտաւորութիւնը գէթ մէկ ան–գամ իսկ շահելու, հակառակ իր ուժգնու–թեան, իր տասնեամէկ անգամներ մաս – նակցութիւններուն, ընդհանրապէս մնա–լով յաւիտենական երկրորդը, մանաւանդ իր խիզախ ոսոխին՝ ընդդէմ Ժամացոյցի անհաւասարելի՝ վարպետ Անքթիլին ե–տեւ, որ ինք, զայն պիտի շահէր հինգ անգամներ, մրցանիշ մը որ ցարդ չէ բե–կանուած։

Յաղթութեան դափնին կրնայ իւրացնել նաեւ նոր օրերու յայտնութիւն մը՝ Պեռ–նար Թեւընէ, սքանչելի մազցող մը, որ անցեալ Կիրակի ջախջախիչ առաջնու–թեամբ կը շահէր Ֆրանսայի ախոյեա–նութիւնը, եւ որ իր երիտասարդ տա – րիքի առաւելութեամբ մեծ խոչընդոտ մը կը կանգնի իր աղգակցին՝ Փուլիտորի առջեւ։

Ուրիշ Ֆրանսացիներու կողքին, որպէս յուսատու յաղթականներ կը ներկայա – նան երկու Սպանացիները, մանաւանդ Օքանեա, որ չկարողացաւ յաղթահարել Մերքսը, եւ առաջնակարգ մազցող մը՝ Ֆիւլենթէ, յաղթական Ջուիցերիոյ չըր – ջանին եւ ուր, լեռնային հանդրուանե–րուն ան կը տանէր քանի մը վայրկեան–ներու տարբերութեամբ փայլուն յաղ – թանակներ, յիշեցնելով Ֆրանսայի Շըր–ջանի երկու հսկաները՝ Գոլիփի եւ Պար–թալի։

Իտալացիք, Հոլանտացիք եւ ինչու չէ,

2 ԱՅՆԵՐ ԴԱԻԱՌԷՆ

ՅԻՇԱՍԱԿԻ ՕՐ

Ֆրանսական դիմադրութեան ծագու – մով հայ նախկին կամաւոր Ռազմիկներու Բարեկամական Միութիւնը, Կիրակի Յու–նիս 24ին, հոգեհանգստեան պաշտօն կա–տարել տուաւ Սէն Ժերոմի հայ եկե – ղեցիին մէջ, ի յիշատակ Ֆրանսայի ա–զատագրութեան համար զոհուած հերոս–ներու, որոնց մէջ կը գտնուէին նաեւ Հայեր, Ֆրանսացիներու կողքին։

Հոգեհանգստեան պաշտօնէն ետք ներ–կաները հիւրասիրուեցան դպրոցին սրա–հը, ուր ընդունելութիւն մը կազմա – կերպուած էր Միութեան փոխ–նախագահ Ս․ Ճերածեանի Արժանեաց Աղբ․ չքա – նշան ստանալուն առթիւ։

Պաշտօնական ընդունելութեան բացու–

Մերքսի իսկ հայրենակիցները իրենք եւս զինուած են ներկայանալու համար որ–պէս ոչ անհաւանական յաղթականներ։

Գալով բուն Շրջանին, ան կը կազմէ 4100 քրլմեթրէ աւելի երկարութիւն մը, եւ որ մեկնելով Հոլանտայի Լա Հէյ քա–ղաքէն Յունիս 30ին, քսան հանգրուան – ներ կտրելէ վերջ կը հասնի Փարիզ Յու–լիս 22ին։

Այս տարի ա'լ աւելի դժուարին են լեռնային հանգրուանները, իրենց առա–ջին, երկրորդ եւ երրորդ դասակարգի բա–ժանումներով, ու նաեւ, ինչպէս միշտ, ընդդէմ Ժամացոյցի հանդրուաններ, ո–րոնք պատահած են մէկէ աւելի անգամ–ներ որ իրենք իսկ վճռեն ի վէճջոյ յաղ–թանակի որոշումը։

Ինչպէս միշտ, Ֆրանսայի հեծերանիւի Շրջանը, մարզական ամէնէն Ժողովրդա–կան մրցումն է եղած, որ անգուպ հե–տաքրքրութեան մէջ կը պահէ լման երեք շարաթներ ոչ միայն ուղղակի մարզա–կան աշխարհը, այլեւ ընդհանրապէս բո–լորը։ Ջուզպիլպերով արձակուրդային Ժամանակներուն, իր անցած բոլոր չըր–ջաններուն մէջ, ինչպէս ծովեզերեայ քաղաքներուն նոյնքէս լեռներու կատար–ներուն եւ աշուր, հարիւր հազարաւոր–ներով բազմութիւններ հիացումով եւ խանդավառութեամբ պիտի դիտեն ան–գամ եւս, մինչեւ Փարիզ իրենց մուտքը՝ մեծ մրցումին այդ մաքառողները։

Մեզի կը մնայ ուրեմն, սպասել ու տեսնել թէ ո՞վ պիտի ըլլայ այն ախոյ–եանը, որ Կիրակի Յուլիս 22ին, մտնելով Վենսէին անտառին հեծերանիւի քաղա – քապետական դաշտը, պիտի կրէ իր վրայ թանկազին կուռախնձորը՝ այդ ղեղին չապիկը։

ԳԵՂԱՄ ՏԵՐ–ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

մը կատարեց Միութեան նախագահը՝ Կարապետ Տէրտէրեան՝ ողբկոչելով յի–շատակը բոլոր անոնց, որոնք Ֆրանսայի ազատագրութեան համար զոհուեցան զա–նազան ձակաւորներու վրայ, նախագահը մատնանշեց նաեւ այն դարաւոր կապը, որ հաստատուած է Հայերու եւ Ֆրան – սացիներու միջեւ։

Երկրաներէն խօսք տրուեցաւ հրամա–նատար Ա․ Գեչիչեանի, որ շնորհատրեց իր զինակից ընկերը՝ Սիրուն Ճերածեան, Արժանեաց Աղբ․ չքանչանը ստանալուն առթիւ։

Ընդունելութեան ներկայ էին բարձրաս–տիճան անձնաւորութիւններ եւ նախկին զինուորականներ իրենց զրօշներով։

Կ․ Տ․

ԴԱՂՈՒԹԷ

ԴԱՂՈՒԹ

ՊՈԼՍՈՑ մէջ ուղեգային արեւմահոսու–թեան մը հետեւանքով մեռած է բժիշկ Տիգրան Մամիկոնեան, որ իր ասպարէ–զին առընթեր, երեսուն տարիէ ի վեր իրբեւ խմբավոր մեծ ծառայութիւն մա–տուցած է պոլսահայ դեղարուեստական եւ երաժշտական կեանքին։ 1943էն սկսեալ սարքած է համերգներ, նուա–զահանգէսներ եւ վարած է երգչախում–բեր։ Անոր նախաձեռնութիւններէն եղած են Այոթնեանի պատարագի, Պէթհովէնի Իններորդ Մէնֆոնիի, «Անոյշ»ի, Էտկառ Մանասի պատարագին ունկնդրութիւննե–րը բեմերէն եւ եկեղեցիներու դասերէն։

ԱՆԳՒԻՍԿԱՆ ղեղադործական Ֆիզըն ընկերութիւնը արտօնութիւն ստացած է Մ․ Նահանգներու մէջ եւս ծախելու Ին–թալ ղեղը, որ շնչարդելութիւնը բուժե–լու կը ծառայէ։ Դեղը գտնուած է ընկե–րութեան հայ ղեղադործին՝ Ռոճըր Ալ–թունեանի կողմէ։

ԱՆԹԻԼԻՍՍԻ Կաթողիկոսարանի դահ – լիճին մէջ, Յունիս 16ին, ողջերթի ըն–դունելութիւն սարքուած է ի պատիւ Բիւզանդ Եղիայեանի, որ 42 տարիներ շարունակ իրբեւ ուսուցչապետ Դպրե – վանքի՝ ծառայած է հայ դպրութեան եւ Հայաստանեայց Եկեղեցիին։ Կորին Վրդ․ Պապեան յանուն Կրիկիոյ միաբանու – թեան եւ Դպրեվանքի հին ու նոր Ժառան–գաւորներուն կարդացած է հրաժեշտի եւ երախտագիտութեան ուղերձը, շեշտելով, թէ Բիւզանդ Եղիայեան Դպրեվանքի պարզ ուսուցիչ մը չէ եղած, այլ բոլոր կա–թողիկոսներու իսկական գործակիցը 1932էն ցայսօր։ Ո՞րքէն Ա․ բազմավաս – տակ կ'ըթական մշակը պարգեւատրած է Կրիկեան Մեծ Ոսաչի Իշխանի չքանչա – նով։

գնած է զիս հարուածող դանակը։ Ամանտա մեծ հետաքրքրութեամբ մտիկ կ'ընէր։
— Արդարեւ, շատ տարօրինակ է ատի–կա, դոչեց տիկին Օկիւսթին։ Ես ալ դա–տական մարդոց կարծիքը ունիմ։ Այդ գործին մէջ ատելութիւն կայ։
— Ո՞վ պիտի առէ զիս։ Ոչ մէկուն նե–ղութիւն չեմ պատճառեր։ Ի՞նչ բանի վրէժը պիտի լուծեն։ Որո՞ւն գէշութիւն ըրած եմ։

Օրիորդ Ամանտա իսկոյն յիշեց թէ օ–րին մէկը յանձնակատար մը աշխատանոց եկած ու Լիւսիի մասին տեղեկութիւններ հարցուցած էր։ Սակայն բան մը չըսաւ այդ մասին ու բարձրաձայն յարեց․
— Մերժուած սիրահար մըն է թերեւս։ Լիւսի Ժպտաղին պատասխանեց․
— Ոչ մէկը մերժած եմ սա գերազանց պատճառով, որ նշանածէս դատ ոչ ոք սիրոյ վրայ չէ խօսած ինծի հետ։
— Անբացատրելի բան է, մըմնջեց տի–կին Օկիւսթին։ Իայց Ժամանակը ի՛նչ կծիկներ կը քակէ, որքան ալ թնճուկ ըլ–լայ ասոր պէս։

ԿԶԱՎԻԷ ՏԸ ՄՈՆԹԷՓԷՆ

(Շար․)

« ՅԱՌԱՋ » ԿԸ ՆՈՒՐԵՆ

Տոբթ. Կարապետ փանոսեան զաւակ — ներն ու թոռները եւ ընտանեկան համայն պարագաները խոր ցաւով կը ծանուցանեն իրենց կնոջ, մօր, մեծ-մօր՝

ՏԻԿԻՆ ԿԱՐԱՊԵՏ ՓԱՆՈՍԵԱՆԻ (ծննդային Երանուհի Զաքարեան)

Կսկծալի մահը: Յուզարկաւորութիւնը կը կատարուի Ուրբաթ Յունիս 29, ժամը 16ին Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին ուրիշ մարմինը կը փոխադրուի Տէօյ-լա-Պառլի գերեզմանատունը, ամփոփուելու համար ընտանեկան դամբարանը:

Մահագոյ չստացողներէն կը խնդրուի ներկայիս իբրեւ այդ նկատել:

ՇՆՈՐՀԱՎԱՍԻՔ

Տէր եւ Տիկին Սահակ խաչատուրեան, Տէր եւ Տիկին Ա. Զիւլիկերեան, Տէր եւ Տիկին Ժորժ Շվարց եւ համայն ընտանեկան պարագաները շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց որոնք անձամբ, դրամով, ծաղիկեղանակով, փոխան ծաղ — կեղանակի նուէրներով մասնակից եղան իրենց սուգին

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ԵՒ Ա. ԹԵՄԻՆԵԱՆԻ մահուան առթիւ:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՀԱՄԱԽԱՐԲԵՐԻՅԻԱՅԱՆ Միութեան Սէնթ Անթոնի մասնաճիւղի անդամական ժողովը այս Շաբաթ (Յունիս 30) ժամը 20.30ին, Պր. Ներսէսեանի սրճարանը, Պառ տը լա Կառ: Անդամներու ներկայութիւնը խիստ կարեւոր է:

ԿԱՐՄԻՐ ԽԱՋ

ՕԴԱՓՈՒՆՈՒԹԵԱՆ ԿԱՅԱՆ Արձանագրութիւնները կը շարունակ — ուին Օգոստոս ամսուան համար: Ա. խումբը կը մեկնի Երկուշաբթի 2 Յունիս, ժամը 14ին, Հայ Կարմիր խաչի կեդրոնատեղիէն, 15 Ռիւ Ժան Կուսին:

ՆԱԿՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Կապոյտ խաչի Լիոնի մասնաճիւղի տարեկան պարահանդէսը Նոյեմբեր 17ին:

Հ. Մ. Ը. Մ. - ԱՐԾԻԻ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

ՄԱՐՍԷՅԻ ՄԷՋ, ՎԱԼԱՊՐԻ ԱՆՏԱՌԸ

Կիրակի, Յունիս մէկ, առաւօտեան ժամը 10ին պուլի մըցում — մանկական խաղեր ժամը 14.30ին:

Գեղարուեստական բաժին ու հայկ. ժողովրդական երգ ու պար

Շաբաթը խորոված — ըմպելի

Քառերու մեկնում ժամը 8.30ին Պոմփին, Պառ-Թապա, 8.45ին Պառ տիւ Կլապ ժամը 9ին Պառ-Փապալ:

ԱՐՁԱԿՈՒՐԴ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՐՈՐԴՈՒԹԻՒՆ

ՕԴԱՍՏՈՍ 2 - 17
Գին 2650 ֆրանկ

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՐՈՐԴՈՒԹԻՒՆ

ՍԵՂՏԵՄԲԵՐ 3 - 18
Գին 2600 ֆրանկ

Երթի ընթացքին մէկ գիշեր՝ Մոսկուա, վերադարձ նոյն օրը՝ Երեւան — Մոսկուա — Փարիզ

Երկու հոգինոց առաջին կարգի սենեակ, լողարանով, «Արմենիա»-ի կամ «Անի»-ի մէջ, երեք ճաշերով: Բազմաթիւ շրջապատյաներ:

Արձանագրութեանց համար դիմել

TRANSTOURS, 22 rue du 4 Septembre — Paris (2e) — Tél. : 742-77-40

ուր կարելի է անձամբ ներկայանալ Կ. Ունեանի, ամէն Երկուշաբթի, Զորեղարթի եւ Շաբաթ կէսօրէ ետք ժամը 15էն 18:

MARSEILLE — Z. Aliksonian, 11 Rue du Bassin, St. Julien, Tél. : 51-74-90 — 66-38-92

ՎԱԼԱՆՍԻ ՄԷՋ՝ Ն. Գապարեանի — Լիոն՝ Պալեանի — Տէսթի՝ Կ.Գաբարեանի — ԱԼՖՈՐՎԻԼ՝ Յ. Պոյաքեանի

ԱՂՔԱՏԱԽՆԱՄԻ ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

ԿԻՐԱԿԻ, ՅՈՒԼԻՍ 1 ԺԱՄԸ 10-22
ՄՈՆՄՈՐԱՆՍԻԻ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՏԱՆ

ԴԱՐԱՍՏԱՆԻՆ ՄԷՋ, 44-50 Ավրելի Շառլ տը Կոլ, Մոնմորանսի Դառնեքը կը բացուի ժամը 10ին եւ կը տեւէ մինչեւ ժամը 22

Կէսօրին կարելի է ճաշել ճաշացուցակին համաձայն: Կարելի է նախօրօք սեղանները ապահովել հեռաձայնելով՝ Մոնմորանսի 964-20-67 եւ կամ Աղքատախնամի կեդրոնը 878-02-99

Աւանդական շաբաթը խորոված, թէ՛ կէսօրին եւ թէ՛ իրիկունը: Անջատ առատ ամէն տեսակ ուտեստեղէն եւ ըմպելիներ Բացառիկ ժամանցի օր մը, նուագ, երգ եւ անակնկալներ: — Գեղարուեստական բաժին իրենց մասնակցութիւնը կը բերեն ՆԱՅԻՐԻ եւ ՄԻՆԻ-ՍՕՍԻ պարախումբերը, Տիկին ԱԼՓՈՒՆԵԱՆ իր երգերով Օր. Անահիտ ՍվԱՃԵԱՆ ձեռնադաշնակով

ԹՈՄՊՈՂԱ, արժէքաւոր առարկաներով Մուտք 5 ֆր., ուսանողներու եւ երախտներու 2 ֆր.

Անձրեւի պարագային, ապահովութիւններ ձեռք առնուած են:

ԾԱՆՕԹ.— Մոնմորանսի երթալու համար շոգեկառք առնել Կառ տիւ Նոնէն եւ իջնել Անկէն (Իւրաքանչիւր քառորդ ժամուն, անցնիլ կամրջակը եւ թիւ 6 օթովիւսով իջնել Կոլէի կանքը (առէ):

ԿԱՐԵԻՈՐ.— Փափաքելի է որ ամէն ոք տեղւոյն վրայ ծախսէ, կը յանձնարարուի ուտելիք չբերել:

Le Voyage en Grèce

n'hésitez pas, adressez-vous à
Mayda BERBERIAN

6, Rue de l'Echelle, PARIS (1er)
Tél. : 260-30-20 et 260-67-34
de 9 h. à 19 h. tous les jours

Spécialiste de Voyages en Grèce, Orient, Moyen-Orient (Liban, Egypte, etc.)
Les voyages à partir de 395 F.

ՁԵՐ ԺՄՐԱՐՈՐԴՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Դիմեցէ՛ք ՄԱՅՏԱ ՊԵՐՊԵՐԻԱՆԻ
LE VOYAGE EN GRECE
Ամէն օր ժամը 9էն 19

Համարողութիւններ դէպի Յունաստան, Արեւելք, Եգիպտոս, Լիբանան
395 ֆր.էն ՍՎՍԵԱԼ

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ ԼԻՈՆԻ ՄԷՋ

Կիրակի Յունիս մէկին, Սէն Մօրիսի ծանօթ դաշտին վրայ, դպրոցական դաշտահանդէս առաւօտեան ժամը 10էն մինչեւ ուշ երեկոյ:

Գեղարուեստական բաժին վարժարանի աշակերտութեան կողմէ եւ վիճակահա — նութիւն: Արեւելեան համադամ կերպ — կուրներ:

Անձրեւի պարագային խնջոյքի ձեւով տեղի կ'ունենայ, նոյն օրը, եկեղեցւոյս նորոգումը սրահին մէջ, Կ. յետոյ ժամը 3էն սկսեալ:

ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ

Շաբաթի հայ դպրոցի տարեկներէն հանդէսը այս Շաբաթ օր (Յունիս 30) կէսօրէ յետոյ ժամը 3.30ին դպրոցի սրահը:

Կը խնդրուի Շաբաթի հայրենակիցներէն մանաւանդ աշակերտներու ծնողքներէն, ներկայ գտնուիլ այս հանդէսին քաջալերելու համար մեր փոքրիկները, ուսուցչուհիներն ու դպրոցի հոգաբարձու թիւնը:

ՏԵՍԻՆ ԱՊՐԻԼԵԱՆ ՅՈՒՇԱՐՁՍՆ

65րդ ցանկ

Պր. Համբարձում Փիլիկեան, Տէր եւ Տիկին խաչեր Զուլֆեան, Տէր եւ Տիկին Աճմեան, Տէր եւ Տիկին Նազար Քէչիկեան, Տիկին Կիւլէն Բաղդասեան (Շառ), Պր. Ժաք Սարգիսեան, Պր. Յովսէփ Թաշահեան (Վիէն), Բարեհէր Օրիորդ մը «Կը — ուրնուլը», Տիկ. Ժամկոչեան, Տիկ. Յարութիւնեան, Տէր եւ Տիկ. Հաճիաֆեան (Լանսէյ), Պր. Ժոզաք Առաքելեան, Տիկին Վարդանեան (Փարիզ), Տէր եւ Տիկին Համբարձում Հալէպեան (Տէսին), այլ Տիկ. Մառի Զէմպէրճեան (Ամերիկա), Տէր եւ Տիկ. Գրիգոր Ալեքսանեան (Շառ), Տէր եւ Տիկին Յակոբ Արապեան, Տէր եւ Տիկին Յակոբ Երէքեան (Տէսին), Պր. Ղ. Գաբրիէլեան (Վանսէյ), Տէր եւ Տիկին Պետրոս Առանեան (Տէսին), Պր. Ա. Սէ — ֆէրեան (Փարիզ), հայրենասէր Օրիորդ մը (Կըրնուլը), Տէր եւ Տիկին Մովսէսեան (Տէսին), Պր. Ալէն Տէյրմէնճեան, Տիկին Մարգրիտ Զիլիկերեան (Տրակի — եան) 10ական ֆր.:

Նախկին դումար 156.019,38
65րդ ցանկի դումար 250
Ընդհ. դումար 156.269,38

ԿԱՊՈՅՏ ԽԱՋ

ՕԴԱՓՈՒՆՈՒԹԵԱՆ ԿԱՅԱՆ ՓԱՐԻՋ

Փոքրիկներու Յունիսի խումբը կը մեկնի Յունիս 2ին, Սքուար Մոնթրուէն, ժամը 7.30ին: Ծնողքներէն կը խնդրուի առաջնորդել իրենց զաւակները, որոշեալ ժամուն:

ԼԻՈՆԻ ԽՈՒՄԲ

Յունիսի խումբը կը մեկնի Յունիս 2ին, կէսօրէ ետք ժամը մէկին: Ծնողքներէն կը խնդրուի իրենց զաւակները առաջնորդել Հայոց եկեղեցի, 295 Ռիւ Պուալ, որոշեալ ժամուն:

Տեսողութեան եւ Լսողութեան Ձեր բոլոր հարցերուն համար Մի՛ Վարանիք ԱՆՏՐԷ ԵՒ ՏԱՆԻԷԼԸ ՀԱՍՊԱՆԵԱՆ

POUR TOUS VOS PROBLEMES DE VUE ET D'AUDITION

ANDRÉ & DANIELLE HASBANIAN

Opticiens diplômés de Paris
Acousticiens diplômés de la Faculté de Médecine de Marseille

Vous font part de l'ouverture d'un magasin d'optique et laboratoire de surdité

- Վ Ա Լ Ա Ն Ս - 60, Rue Madier de Montjau
Tél. : 43-56-23 **26000 VALENCE**



ՕՐՈՒՆ ԽՈՍԻՐԸ

**ԱՂՔԱՏԱԽՆԱՄԻ
ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍԸ**

— 0 —

Այս Կիրակի, Յուլիս մէկին, Մոնթո — րանսիի Հանդատեան Տան բարձրագոյն դատարանէն զարադարեալ մէջ տեղի կ'ունենայ Աղքատախնամի տարեկան դաշտահանութիւնը :

Փարիզեան բազմաթիւ հանդիսութեանց շարքին աւանդական դարձած է նաեւ Աղքատախնամի այս դաշտահանութիւնը, որ տեղի կ'ունենայ ամէն տարի ամառնա — մուտի առաջին օրերուն :

«Աղքատախնամ» բառը ամիւրօք փոխադրուած է Արեւմտահայութեան մտաւորական ու մշակութային կեդրոն Պոլսին, ուր ամէն եկեղեցի իր հոգաբարձութեան կողքին ունէր Աղքատախնամ մարմին մը, որուն նպատակն էր օգնել կարօտ, աղքատ հայրենակիցներու : Ամէն Կիրակի եւ տօնական օրերուն «Աղքատախնամ» պնակ»ը կը սպասէր բարեպաշտ հաւատացեալներու լուծանք — լուծ :

Այդ լուծանքն էին, որ կը կազմէին Աղքատախնամի եկամուտի գլխաւոր աղբիւրը : Ժողովուրդը «անտես» չէր առնէր այդ պնակը, որուն հասցիքով պիտի ամբողջէին շատ մը թշուառութիւններ : Աղքատներ կային մայրաքաղաքի բոլոր թաղերուն մէջ :

Մեծ մասամբ Պոլսէն Փարիզ եկած բարեկեցիկ առեւտրական Հայեր էին, որ 1890ին հիմը դրին Աղքատախնամին, օգնելու համար ուսումնասիրաւ կարօտ հայ երիտասարդներու, որոնք Լոյս — Գաղաքը կուգային՝ բարձրագոյն ուսում ստանալու : Կային Հայեր ալ, որ Թուրքիայէն կը հեռանային Աւետեաց Երկրին մէջ բախտ որոնելու համար ու կանգ կ'առնէին Փարիզ՝ իրեն առաջին հան — գրուան : Աղքատախնամը ճամբուն ծախք կը հայթայթէր անոնց դէպի Ամերիկա :

Հաւատարմ իր առաքելութեան, Փարիզի Աղքատախնամը 83 տարիէ ի վեր կը շարունակէ օգնել կարօտեալներու, իր միջոցներու սահմաններուն մէջ :

Կէս դար առաջ, երբ գաղթականներու հոսանքը կը խուժէր Փարիզ, Աղքատախնամի դանձաւար հանդուցեալ Արամ ձէվահիրճեանի բաշխած 10 կամ 20 ֆրանքնոց թղթադրամները նախաինա — կան դեր կը կատարէին, քանի մը օրուան ապրուստ ապահովելով նիւթական ամէն միջոցէ զուրկ հայրենակիցներու :

Վերջին աշխարհամարտի վաղորդայ — նին, Աղքատախնամը իր գործունէութեան նեղ սահմաններէն դուրս ելլելով, ծրարեց ստեղծել Հանգստեան Տուն մը, իւր — բեւ պատասխարան մեր այն տարեց հայ — րենակիցներուն, որոնք զրկուած էին ապրուստի միջոցներէ եւ ընտանեկան խնամքէ :

Առաջին առթիւ փարիզեան արուարձան Անտրիլի մէջ, նպաստաւոր պայմաններով, դնեց 7000 քառ. մետր տարածութեամբ հող մը, որուն վրայ կառուցարդ — դիական շէնք մը՝ յիսուն հոգիի համար : Յաջորդ քայլերն եղան Մոնթրանսիի եւ Սէն Ռաֆայէլի Հանգստեան Տունները, իւրաքանչիւրը հարիւր անկողիններով եւ հանգստաւէտ պայմաններով, բարերա — րութեամբ ժընեւի Գաղթականաց կեդ — րոնական մարմինին :

Անտրիլի առաջին փորձը ցոյց տուած ըլլալով Աղքատախնամի վարչութեան ձեռնհասութիւնը Հանգստեան Տուն վա — րելու մասին, փարիզեան բոլոր բարե — սիրական կազմակերպութիւնները — Ծը —

ԹՈՒՐԳԻԱ ՄԻՇՏ

Քէն Կ'ԸՆԷ...

ԴԵՍՊԱՆԸ ՓԱՐԻԶ ԶԵ ՎԵՐԱԴԱՐՁԱԾ

«Մինչ Բրեժնեւ Փարիզ կը ժամանէ, Թուրքիա դեսպան չունի Ֆրանսայի մէջ» : Այս խորագրին տակ, «Միլլիէթ» անկախ մեծ օրաթերթը կը հրատարակէ Փարիզէն զրկուած թղթակցութիւն մը, ուր կը յիշեցուի թէ Թուրք դեսպանը՝ Հասան Ըշըք անցեալ Փետրուար 12ին ետ կան — չուեցաւ Անգարա՝ բողոքելու համար Մարսէյի հայկական յուշարձանին դէմ :

Ըսելէ ետք, թէ մինչ այդ Ֆրանսական կառավարութիւնը պաշտօնապէս ցաւ յայտնեց, յետագային միջոցներ ձեռք առաւ, որպէսզի ցերասպանութեան տարե — դարձը ողբիւղելու համար Ֆրանսահայե — րու կազմակերպելիք ցոյցերը ծաւալ չստանան ու, վերջապէս, չյետաձգուէ — ցաւ Ֆրանսական նոր դեսպանին Անգարա ժամանումը « Միլլիէթ »-ի թղթակցը՝ Մէթին Թոքէր կը շարունակէ :

«Հակառակ այս բոլորին, Թուրքիոյ դեսպանը չվերադարձաւ իր պաշտօնին : Այն իրողութիւնը, որ Թուրքիա Փարիզի մէջ ներկայացուած է գործակալով մը, մինչ Ֆրանսա դարձած է քաղաքական կեդրոն մը յատկապէս Բրեժնեւի այցն — լուքեամբ, տարօրինակ եւ անհասկնալի կը նկատուի :

«Ամէն պարագայի մէջ, այս վարմունք — քը Թուրքիոյ շատ աւելի կարեւոր վնաս — ներ կը պատճառէ, քան այն վնասները, որոնք կրնան առաջ գալ հայկական յուշարձանի մը», կ'ընդհանրացնէ «Միլլիէթ»-ի թղթակցը :

բանահայ Կապույտ խաչ, Հայ Կարմիր խաչ, Հ. Բ. Ը. Մ. Տիկնանց Միութիւն, Ս. խաչ եկեղեցւոյ Աղքատախնամ, Ռուսահայերու Բարեօրինական Ընկերութիւն, եւայլն, — որոնց հաւաքական անունով էին կեանքի կոչուած Մոնթրանսիի եւ Սէն Ռաֆայէլի Հանգստեան Տունները, որոնցին Աղքատախնամին յանձնել այս վերջիններուն յանձնաձումը :

Աղքատախնամը յանձն կ'առնէր ամէն տարի հաշիւ ներկայացնել վերոյիշեալ բարեօրինական միութեանց :

Չորրորդ ձեռնարկն եղաւ Անտրիլի հո — դին վրայ կառուցումը նոր շէնքի մը, մասնաւոր խնամքի կարօտ (Էմիլիւրապլը) երկսեռ ծերերու համար : Գաղուստ Կիւլ — պէնկեան Հիմնարկութիւնը որոշ փակ — ցութիւն ցոյց տուաւ այս շէնքին, ինչ — պէս նաեւ Հանգստեան միւս տուններու յաւելեալ կառուցումներու եւ բարեկարգ — դութեան ծախքերուն :

Վերջին ձեռնարկն եղաւ կառուցումը Հայ Մտաւորականներու Հանգստեան Տան, Անտրիլի իր Տան կից դնուած 2400 քառ. մետր տարածութեամբ հողին վրայ : Արդիական բոլոր յարմարութիւններով, 25 անհատական սենեակներով, գրադար — անոց, հիւրարարանով, ճաշարանով, բու — ժարանով եւ այլ յարակից մասերով օժտուած այս նոր շէնքին բացումը տե — դի ունեցաւ 1971 Նոյեմբեր 28ին :

Աղքատախնամ բառը շատ սահմանա — փակ էր եւ այլեւս չէր արտայայտեր գործունէութեան այն լայն ասպարէզը, զոր ընդգրկած էր վերջին պատերազմի վախճանին, — աւելի քան քառորդ դար առաջ : Անկախ անուն փոխեց եւ դարձաւ Ընկերային Օգնութեան Հայկական Ընկե — րակցութիւն, ճանչցուած իբրեւ Հանրօ — գոտ՝ նախարարական հրաժարագրով : Միակը իբրեւ այդպիսին՝ փարիզահայ բոլոր կազմակերպութեանց մէջ :

ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

**ՆՈՒԱԶԱԳՈՅՆ ԱՄՍԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՎԱՐՁՔԸ՝ 1000 Ֆ.**

— 0 —

ՀԱՄԱՅՆԱՎԱՐ ԼԻԿԱՆ
ԵՒ ՆՈՐ ԿԱՐԳԸ՝ ԼՈՒԾՈՒՄ

Նախարարաց խորհուրդը որ Զորեք — չարթիի տեղ Հինգշաբթի դումարուած էր, Բրեժնեւի պատճառաւ, կարգ մը ու — ռոշումներ տուաւ : Ինչպէս կը նախատես — ուէր, Ներքին նախարարը լուծել տուաւ ծայրայեղ ալ եւ ծայրայեղ ձախ երկու — կազմակերպութիւն՝ Նոր Կարգ եւ Հա — մայնավար Լիկա, որոնց ցոյցերը նախա — պէս արգելուած էին :

Նոր Կարգը, վերակազմութիւնն էր «Արեւմուտք»-ի, որ լուծուեցաւ 1968ին : 35ն 4000 շարքային ունի եւ կը նմանի Իտալիոյ նոր-ֆաշական շարժումին : Եր — կուքն ալ պաշտամունք ունէին սպանա — կան Ֆալանժի հիմնադրի՝ Փրեմօ տէ Ռիվերայի յիշատակին հանդէպ : Նոր Կարգի ղեկավարներէն մէկն է Միմիւրի խմբագրապետը Ֆ. Պրինեօ :

Գաղով Համայնավար Լիկային, որու գլխաւոր դէմքն է, Հանրապետութեան Նախագահութեան նախկին թեկնածու Ա — լէն Կրիլին, 1968 Մայիսեան դէպքերէն ծնած շարժում մըն է : Ֆրանսական ճիւղն է Դ. Միջազգայնականին զոր հիմնած է Տրոցկի 1938ին եւ որու հիմնական կո — չումն է իր ընդդիմութիւնը Սթալինական — նութեան : Ծուրջ 6000 անդամ ունի : Կը հրատարակէ շաբաթաթերթ մը՝ «Կար — միր» :

Պարզ է որ այս շարժումները դադանի պիտի դործեն ատեն մը եւ հաւանաբար կրկին հրապարակ ելլեն ուրիշ անունի մը տակ :

Կառավարութիւնը որոշեց նաեւ որ Յուլիս մէկէն սկսեալ նուազագոյն ամ — սական աշխատավարձը պիտի ըլլայ 1000 ֆրանք, շաբաթական 43ուկէս ժամ աշ — խատանքի համար, ինչ որ ժամական 5 ֆր. 20 կը նշանակէ : Յուլիս մէկէն կը բարձրանայ նաեւ ծերութեան թոշակը :

ԱՐԱԳՈՒԹԻՒՆ ԺԱՄԸ 100
Ուրբաթ օր սկսան Փարիզէն մեկնում — ները, անոնց համար, որոնք Յուլիսին կ'առնեն իրենց արձակուրդը : Այս առթիւ Նախարարապետը յիշեցուց որ շատ խիստ միջոցներ ձեռք առնուած են : Բացի կա — ուղիներէն, ժամական արագութիւնը չի կրնար 100 քիլոմետրեր անցնիլ : Կարելի է միայն քիչ մը անցնիլ եւ պահ մը մի — այն, այն պարագային երբ առջևի կառքը դանդաղ կը յառաջանայ : Կարելի է զայն անցնիլ, բայց միայն մէկը եւ ոչ չարգ մը, 105, 110ով ու կրկին իջնել 100ի, կառքին առջև անցնելէ ետք : Այս անգամ հսկող — ները, ոստիկան, շատ աւելի մեծ թիւով պիտի ըլլան ու պատիժներն ալ՝ ծանր :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ
Փեֆին պաշտօնապէս հաղորդեց թէ Յունիս 27ին ջրածին ումը մը պայթե — ցուցած է Չինաստանի արեւմտեան շրջա — նին մէջ : «Նոր Չինաստան» գործակալու — թիւնը ձշղեց նաեւ, որ «Չին կառավար — րութիւնը կը յայտարարէ անգամ մը եւս, թէ ոչ մէկ ատեն եւ ոչ մէկ պարագայի

**ԵՐԵՒԱՆ ↔ ՓԱՐԻԶ
ՀԵՌԱՏԻՊ**

ԵՐԵՒԱՆ (Արմէնիքէս, Յունիս 26)

ԸՆԴԵՐՔԻ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Գիտահետազոտական հինգ հիմնարկու — թիւներ ներկայիս կ'ուսումնասիրեն ըն — դերքին կառույցը, ինչպէս նաեւ օգտա — կար հանածոներու հանքերը, որպէսզի նորեր գտնեն : Մասնագէտներուն գլխա — ւոր հարցն է պղինձի նոր հանքերու հե — տախուղութիւնը : Այդ հանքերը կեդրո — նացած են երկրաբանական հետեւեալ շրջանները՝ Ղափան եւ Գեղի գետի շրջ — ջակայքը, Թումանեանի հին հանքերու դաշտը :

Շիրակի հարթավայրին, Արարատեան դաշտին, Սեւանի աւազանին մէջ նկատ — ուած են ստորերկրեայ ջուրի պաշարներ : Հանքային նոր աղբիւրներ գտնուած են Արտաշատի, Հրազդանի, Արարատի շրջ — ջանները :

ԴԱՍԱԽՈՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ
ՍՈՒՐԻՈՅ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵԶ

Սուրբա եւ Լիբանան այցելելէ ետք Երեւան վերադարձած է «Մարտիրոս Սարեան» թանգարանի տնօրէնը՝ Շահէն Պաշտարեան : Ան այդ երկու երկրները այցելած է Հայկազ «Մարտիրոս Սար — եան» ակադեմիայի (*) հրաւերով : Զա — նազան քաղաքներու մէջ դասախօսու — թիւններ տուած է այս նկարչութեան եւ, մասնաւորապէս, Մ Սարեանի մասին :

ԿԱՐԹԱԳԵՆԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆԸ
Թունուղ մեկնած է Հայաստանի երգի — պարի խումբը՝ մասնակցելու համար Կարթագենի ժողովրդական ստեղծագոր — ծութեանց միջազգային փառատօնին : Եր — դի-պարի խումբի ղեկավարն է երգահան Էդկար Յովհաննիսեան :

ԵՐԿՀԱԶԱՐԱՄԵԱՅ
ԳԱՂԱԳԻՆ ՆՈՐ ՏԵՍԻՐԸ

Հինաւուրց էջմիածինը տարուէ տարի գեղեցկանալու վրայ է : Ծարտարապետ — ներ եւ շինարարներ կ'իրականացնեն քա — ղաքին կառուցապատումը : Քաղաքի կեդ — րոնը կը շինեն վարչական, առեւտրական շէնքեր, մշակոյթի տուններ եւ հոյակապ հրապարակ մը : Հրապարակին մօտ պիտի շինուի ինը յարկանի պանդոկ մը, որուն վերջին յարկը ամառնային ճաշարան պի — տի դառնայ : Հրապարակը պիտի ունենայ լճակներ եւ կանաչ տարածութիւններ :

Բարեկարգումի մեծ աշխատանքներ կատարուելու վրայ են Մայր տաճարի եւ պատմական միւս յուշարձաններու շրջ — ջակայքը :

(*) ԽՄԲ. — «Մ. Սարեան Ակադեմիա»-ն նկարչական արուեստաճանց մըն է, կիւ — մուած 18 տարի առաջ, Հայկազ :

մէջ առաջինը պիտի ըլլայ գործածելու հիւլէական վէճերը» : Չինաստան իր հիւ — լէական զէնքերը պաշտպանողական նը — պատակով կը պատրաստէ : Գործակալու — թիւնը կը հաղորդէ նաեւ, թէ Չինաստան պիտի շարունակէ աշխատիլ, խաղաղու — թիւն ցանկացող եւ արդարութիւնը պաշա — պանող ուրիշ ժողովուրդներու եւ երկիր — ներու հետ, որ ամբողջովին արգելուին եւ քանդուին հիւլէական զէնքերը :

«Մ. Սարեան Ակադեմիա»-ն նկարչական արուեստաճանց մըն է, կիւ — մուած 18 տարի առաջ, Հայկազ :

մէջ առաջինը պիտի ըլլայ գործածելու հիւլէական վէճերը» : Չինաստան իր հիւ — լէական զէնքերը պաշտպանողական նը — պատակով կը պատրաստէ : Գործակալու — թիւնը կը հաղորդէ նաեւ, թէ Չինաստան պիտի շարունակէ աշխատիլ, խաղաղու — թիւն ցանկացող եւ արդարութիւնը պաշա — պանող ուրիշ ժողովուրդներու եւ երկիր — ներու հետ, որ ամբողջովին արգելուին եւ քանդուին հիւլէական զէնքերը :

ԹԵՐԹԵԼՈՎ ՀԱՆԴԷՍՆԵՐԸ

ԼՈՒՍԱԽՈՐՈՒԹԵԱՆ ՇԱՐԺՈՒՄԻՆ ՆԱԽԱԳԱՅԼԵՐԸ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՁ

(ԺԸ․ ԴԱՐՈՒ ՎԵՐՋԸ – ԺԹ․ ԴԱՐՈՒ ՍԿԻՋԲԸ)

(Բ․ Եւ վերջին մաս)

Լազարեան ձեմարանը, որ հիմնադրուեցաւ 1815ին, Մոսկուա, բախտորոշ դեր կատարեց հայ իրականութեան մէջ: Զեմարանը իր գոյութեան առաջին իսկ օրերէն հետապնդեց հայկական միջավայրի մէջ լուսաւորութիւնը տարածելու եւ հայ մշակոյթը զարգացնելու նպատակ – ները: Հակառակ արտաքին խռընդոտներուն, դաւերուն, որոնք կը ձգտէին ձեմարանը օգտագործել քաղաքական նըպատակներու, Լազարեաններու երա – խայրիք այդ կրթական հաստատութիւնը մեծ ծառայութիւններ մատուց հայ ժողովուրդին եւ անոր մշակոյթի վերել – քին: Աւելին՝ անիկա դարձաւ արեւելեան ժողովուրդներու հնադարեան մշակոյթի, պատմութեան եւ լեզուներու ուսումնասիրութեան գլխաւոր կեդրոններէն մէկը Ռուսիոյ մէջ:

Ըմբռնելով իրենց ստեղծած ուսումնաւան հաստատութեան կարեւորութիւնը հայ ժողովուրդին յատկապէս Ռուսիոյ սահմաններուն մէջ ապրող հատուածին համար, Լազարեանները կ'ուզէին, որ «յի ուսումնարանն մեր եղիցի գլուխ Հայոց դպրոցացն ողջոյն ըստ օրինակի համալսարանին Ռուսաց ունեկիսիդիտ կոչեցելոյ, եւ այնք իբրու անդամը կախեցին զայնմանէ, նման ծառոյ ոստովք անելոյ որ ի ժամու տուեալ զպտուղ քաղցրացուցանէ զսիրոթակ զգոծիչ ծաւալ փափագանաց մարդկան»: Լազարեաններու մտադրութիւնն էր իրենց ձեմարանի գլխաւորութեամբ Աստախանի, Թիֆլիսի, Պրիմի, Գրիգորիօպոլի, Նոր Նախիջևանի՝ դպրոցները համախմբել (ուսական համալսարանական դրու – թեան հետեւողութեամբ) մէկ ընդհանուր կազմակերպութեան մէջ, Հայութեան լուսաւորութեան գործը աւելի լաւ հիմքու վրայ դնելու նպատակով:

Լազարեան ձեմարանի եւ արդէն գոյութիւն ունեցող այլ կրթարաններու կողքին, անշուշտ, անհրաժեշտ էր բանալ նոր դպրոցներ ալ, յատկապէս Էջմիա – ծինի մէջ: Ասոնք իրենց մակարդակով պէտք է տարբեր ըլլային հին դպրոցնե – րէն: Այս նպատակով է, որ Յովակիմ Լազարեան 1811 Յուլիս 6ին դիմեց Եփ – րեմ կաթողիկոսի՝ փոքր դպրոց մը բանալու Էջմիածինի մէջ և հոն հաւաքուած մա – ունիկներուն «հմտեցուցանել իր քերական – նութեան եւ ճարտասանութեան լեզուի մերում, լաւապէս կրթել ի ստուածա – բանութեան, պատմութեան, աշխարհա –

գրութեան եւ ի տաղաչափութեան»: Յովակիմ Լազարեան յոյս կը յայտնէր, որ եթէ «այսպիսի մի կարգաւորեալ փոք – րիկ ուսումնարան այդը սկզբնաւորեալ հաստատեցի, հաւաստի եմ որ բազում բարիս է վայելելոց սուրբ աթոռդ զի ի ապագայ դարս եւ ի ժամանակս ի նո – ցունց լաւ եւ պիտանի անդամս, նուիրա – կունս, առաջնորդս, ուսուցիչս, այլ եւ հայրապետութեան արժանաւոր անձն էք ունելոց եւ ճաշակ կամ պտուղ այնպիսի կացուցմանց ի քիմս միաբանից մի ան – դամ անկեալ, այնքան ինքեանք սիրահար եւ կապակցեալ են լինելոց ընդ համա – րարանին, որ չաւիղ նորին յաւէտ մնա – լով ամ ըստ ամի ծաղկելոց է ուսումնա – րանն այն եւ ժամանակաւ լինելոց նման կացուցման բարեյշխատակ Միթիարայ արքայի ակադեմուն, այսինքն համալսա – րանին...»:

1813ին Էջմիածինի մէջ Յ․ Լազարեա – նի առաջնորդած փոքրիկ դպրոցին նման ժառանգաւորաց դպրեւանք մը բացուե – ցաւ, որ նոյնիսկ հեռաւոր հնդկահայ գաղութին համար «ուրախութիւն եւ բերկրութիւն սրտի» հանդիսացաւ, քա – նի որ այս ձեւի «աղօգուտ» գործերուն նկատմամբ ան «բոտ կարեաց մերոյ եւ ըստ խոստման ժամանակին սիրով մաս – նակից եմք լինելոց»:

Մայր աթոռի վարժարանը անդերեքնի եւ լատինեքնի ուսուցիչ չուէր, որով 1816ին Եփրեմ կաթողիկոս նուիրակ Վըր – թանէս Արք.ի հետ երկու պատանիներ՝ Դաւիթ եւ Սահակ, ուղարկեց Հնդկաս – տան, որպէսզի անգլիական դպրոցի մէջ «ուսանեն զպէսպէս լեզուն եւ արուեստ»:

Այս փաստը վկայութիւն ամ է, թէ Եփրեմ կաթողիկոս իսկապէս մտադիր էր Էջմիածինի մէջ պատկառելի դպրոց մը ստեղծել, բայց քաղաքական իրադարձու – թիւնները ի դերեւ հանեցին անոր ջան – քերը:

ԺԹ․ դարու սկիզբները՝ ուսական կայսրութեան մէջ հաստատուած հայկա – կան դպրոցներէն եւ Լազարեան ձեմա – բանէն ետք իր կարեւորութեամբ առա – ջին կարգի վրայ կուգար անկասկած, Թիֆլիսի Ներսիսեան դպրոցը: Ան եւս կոչուած էր «ի մի փարսի հայրենասի – րութեան» հաւաքել հայ պատանիները: Ներսիսեան դպրոցը ստեղծուեցաւ Լա – անեան ձեմարանի հետեւողութեամբ եւ անոր աղղեցութեամբ, մանաւանդ եթէ նկատի առնենք այն իրողութիւնը, որ

ԱԿՆԱՐԿՆԵՐ

ՏԻՐԱՆ ԶՐԱՔԵԱՆ ԻՆՏՐԱ (1875–1921)

Յիսունեակու տարի առաջ, 1921 Յունիս 6ին, «Կիլիկիոյ մէջ Թուրքիոյ դէմ գոր – ծած ըլլալու» ամբաստանութեամբ ... դատուելէ եւ աքսորի դատապարտուելէ մօտաւորապէս երկու ամիս ետք — նա – հանգէ նահանգ ու քաղաքէ քաղաք՝ չըզ – թայակապ, հետիոտն ու տանջալից ու – դեւորութենէ մը վերջ — ֆիզիքապէս հիւծած ու հոգեպէս փրած, Տիրքանա – կերտի մէջ՝ Մըրզըրը գիւղին եւ Սիւլուա – նի միջեւ, կեանքի իր գիրքը կը փակէր 1899–1913 տասնըհինգամեակի մեր դրա – կանութեան տիրական դէմքերէն Տիրան Զրաքեան (*), — Ինտրա:

Որքան իր կեանքին՝ նոյնքան եւ գոր – ծին ճանաչումով առաջնորդուող ունէ անձ, Զրաքեանի մէջ կը գտնէ արտա – սովոր խառնուածքը մարդու մը, որ կեանքն ու Բնութիւնը խուզարկելու կիր – քէն է մտրակուած, անոնց բոլոր խոր – հուրները վերլուծելու հեւըով մը: Ար – ուեստագէտի զգայարանըով օժտուած բացառիկ անհատականութիւն մը, որ բա – նաստեղծի հոգիին կը միացնէ իմաստա – սէրի միտքը, նկարչական տաղանդին կը միացնէ երաժշտական խորունկ զգացո – ղութիւնը՝ իր քերթուածին թէ արձա – կին մէջ:

Վիպերդուն է հոգեկան խռովքներու եւ իմացական սուղումներու: Հաւատացած է թէ աստուածութիւն մը կայ մարդ – էակին մէջ եւ թէ ամէն ոք ձգտումը պէտք է ունենայ անոր հասնելու: — Անասնական, աղբիւսային, անիմաստ եւ :

Ներսիսեան դպրոցի հիմնադիր Ներսէս Աւարակեցի, 1807ին, երբ Նոր Նախի – ջեան կը գտնուէր, Յովակիմ Լազար – եանի յանձնարարութեամբ կազմած էր Լազարեան ձեմարանի կանոնադրու – թիւնը:

Աղգային լուսաւորութեան, դպրոցնե – րու հիմնադրութեան եւ մատաղ սերունդ – րի դաստիարակութեան առընչութեամբ յիշատակուած վերոյիշեալ բոլոր փա – տերը, խոհերը, խորհրդածութիւնները կը վկայեն, թէ ասոնք մեծ տեղ կը դրա –ւէին հայ ժողովուրդի ապագայի հար – ցին մէջ:

Հայոց լեզուն համարելով Հայութեան գոյատեւման հիմնական աղբակներէն մէ – կը, չըջանի հայ գործիչները կը պախա – րակէին բոլոր անոնք, որոնք կը դժգո – հէին Հայ ծնած ըլլալուն համար կամ կ'ուրանային իրենց մայրենի լեզուն:

Վ․ ԴԻԼՈՅԵԱՆ

անբովանդակ է կեանքը՝ երբ մարդիկ չեն կրնար վեր բարձրանալ առօրեայէն, նիւթէն ու նիւթեղէն իրականութենէն ու հասնիլ ներանձնական, հոգեկան իրակա – նութեան, — «ներաշխարհ»ին, ինչպէս ինք կը սահմանէ:

Ծնած է 1875ին, Սկիւտարի մէջ (Պո – լիս) եւ թաղային նախակրթարանը ա –ւարտելէ ետք՝ յաճախած է Պէրպէրեան, ուր իր վրայ խորապէս ներդրած է Ռեթէոս Պէրպէրեան:

Պատանեկան տարիքէն իսկ ցայտուն ընդունակութիւն ի յայտ բերած է նկար – չական, դրական եւ երաժշտական ճիւ – դերու մէջ, — արուեստի երեք թեւեր՝ որոնոր հաւասար ուժգնութեամբ կ'երե –ւին պատկառելի իր վաստակին մէջ:

1891ին ուսուցիչ է արդէն Պէրպէրեանի մէջ, 1898ին՝ Տրապիզոնի մէջ: 1900ին կը վերադառնայ Պոլիս եւ 1904–1905 տա – րիներուն յաջորդաբար կ'այցելէ Փարիզ, Ալեքսանդրիա եւ Գահիրէ: 1906ին կը հրատարակէ «Ներաշխարհ»ը, զոր գրի առած է 1898–1900 թուականներուն, իսկ 1908ին լոյս կ'ընծայէ քերթուածներու իր հատորիկը՝ «Նոմաստան»: 1915ի ե – դեռնին կը ձերբակալուի թէեւ, սակայն կը փրկուի: 1916էն ետք կը մղուի հե – զհետէ ինքնամեկուսացումի: Կը խորշի բազմութիւններէ եւ կ'ապաւինի մենու – թեան: Կրօնապաշտ իր ապրումները կը յանգին կրօնադարութեան, մասնաւորա – բար 1919–1920 թուականներուն, երբ չա – բաթապահութեան յարած է արդէն: Գրիտոնէական իմացումով կեանքի իր երազը զինք վերջնապէս կ'անջատէ նիւ – թական իրականութենէն ու կը դարձնէ անձնատուր՝ մտասեւեռումներու եւ ան – աշխարհիկ զաղափարապաշտութեան մը, որոնք ի վերջոյ պիտի մղէին քեմալական իշխանութիւնները ձերբակալելու զինք իբրեւ «կոսակաճելի ու վտանգաւոր տար – ր»ի մը եւ աքսորելու՝ անձանիթ ուղղու – թեամբ, — մինչեւ Գոնիա, ապա նաեւ կեանքի իր գոյգոթան...:

Հանճարեղ դէմք մը, անկասկած, հան – ճարներէ շատերո՛ւն վերապահուած ճա – կատաղով: Իմացապաշտ մեծագոյն դէմքերէն մէկն է հայ քերթողութեան ու արձակին:

Մ․ Թ․

(*) Զրաքեանի վերջին չորս ամիսներու կեանքին, ինչպէս մասն եղբայրկան իր վախճանին մասին ակամատեսի վկայու – քիւններ ունի ախորի բնկերներէն Օհան Պետիկեան՝ Թեոդիկի 1922ի տարեգրքին մէջ:

1921 Փետրուարին ձերբակալուելէ ետք երկու բնկերներու հետ (որոնք մահուան դատապարտուած են), Ապրիլ 14ին մոմ – բայ կը հանուի շղթայակապ ու մինչեւ Յունիս 6 կ'անցնի Նիյոնէն, Կեսարիա – յէն, Մալաթիայէն, Խարքերդէն, իրեն միացած 38 ալ բախտակիցներու հետ: Վերջին հանգրուանը կ'ըլլայ Տիգրան – կետը:

Մ․ Թ․

ԿՏԱԿՆ ԷՐ

ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ

Գրեց՝ ԱՐՇԱԽԻՐ ՇԻՐԱԿԵԱՆ

Ա․ ՄԱՍ

Կ Ր Ա Կ Ի Մ Կ Ր Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԴԱԻԱՃԱՆ ՎԱՀԷ ԻՃՍԱՆԻ ԱՀԱԲԵԿՈՒՄԸ

Պտոյտի քայլուածքով առաջացայ դէ – պի մատնիչին փողոցը. դեռ ամայութիւն էր. շատ կանուխ էր. Իհասնի բնակարա – նին պատուհանները դոց էին եւ վարա – գոյրները քաշուած՝ հազիւ ժամը 7: Ժա – մանակ անցընելու համար ուղղուեցայ Թարլա Պաշրի պողոտան, ձեռքս բռնած թուղթէ տոպրակ մը, չունչով ուռեցու – ցած: Կասկած չհրաւիրելու համար դնում

կատարող մէկու մը երեւոյթը կ'ուզէի տալ ես ինծի:

Ընկերս Արշակ, որ շատ մատահել եւ փորձառու մէկն էր, իբրեւ ահաբեկիչը Հմայեակ Արամեանցի, եկած էր յանձ – նարարութեամբ, դիտելու համար դէպ – քին ելքը եւ նեղը մնալուս պարագային, օգնելու ինծի:

Մինչեւ ժամը 8 ձեմեցի պողոտային վրայ մէկ վեր մէկ վար: Անցուղարձը չառցաւ. չըբուն վաճառորդները մէջտեղ ելած էին արդէն եւ պոռչուողներով օդը կը թնդացնէին: Տիրապետող կանչը սա – կայն հին հագուստ դնողներուն կանչն էր «էսքիլէր ալայըմ»: Ուումը խումը ե – րախաներ, ձեռք ձեռքի բռնած, մանկա – պարտէզ կ'երթային: Դիմացի փերեզակ յոյն կիներ, արագօրէն փեղկերը կը բա – նար, երախաներու չաքար, կուտ կամ պիտակ ծախելու համար. իսկ քովս, յոյն մսավաճառի խանութին մէջ, մեծղի Ալպանացի երիտասարդ մը, հսկայ դա – նակով մը միս կը ջարդէր: Անցորդներ, աճապարանքով կ'երթեւեկէին:

Թարապաշրի պողոտայէն վեր սկսայ յառաջանալ հանդարտ քայլերով: Տեսայ որ մատնիչը դէմէն կուգայ, ձեռքերը զրպանը, ուր միշտ ատրճանակ մը պատ – բաստ կը պահէր, ինչ որ զանազան ա – ութներով ստուգած էի: Ոստիկանական ատրճանակ մըն էր:

Տեսնելով Իհասնին արագ յառաջանալը

դէպի իմ կողմս, եւ դիտելով փողոցին բազմութիւնը, սարսուռ մը ունեցայ, բայց իսկոյն ինքզինքս զսպեցի: Իհասն մօտեցած էր ինծի, քայլերը դանդաղե – ցնելով: Դէմքէն կարելի էր գուշակել որ կասկածներ կ'անցնէին մաքէն: 10–15 քայլ հեռուէն թիկնապահ թուրք ոստիկանը ետեւէն կուգար: Պաղարիւնս պահելով եւ ընական երեւոյթ մը տալու համար ինք – ղինքիս, փորձեցի ժպտիլ, ինչպէս վայել է երբ ծանօթ բարեկամի մը կը հանդի – պինք: Ձեռքս հանեցի զրպանին ատրճա – նակին վրայէն եւ բարեւ տալու ձեւ մը ըրի: Իհասն ստիպուեցաւ ժեսթս կրկնել եւ իր կարգին ձեռքը զրպանէն հանեց:

Ճիշդ այդ միջոցին կը սպասէի արդէն: Վայրկեանապէս հանեցի ատրճանակս եւ կրակեցի: Գնդակը վրիպեցաւ ճակատէն եւ հանդիպեցաւ կողորդին: Մատնիչը մէկ կողմէ կը փորձէր ատրճանակը հանել զրպանէն եւ միւս կողմէ չուրջի անցորդ – ներէն օգնութիւն կը խնդրէր: Թիկնա – պահ ոստիկանը զէնքի ձայնը առնելուն պէս անհետացած էր:

Երկրորդ դնդակ մը եւս ստացաւ Իհ – սան իր թեւէն՝ տեսնելով որ պիտի չկա – րենայ ատրճանակը գործածել, սկսաւ փախչիլ: Ետեւէն երկու դնդակ եւս պար – պեցի, նոյն ատեն հալածելով զինք: Իրարանցումը սկսած էր փողոցին մէջ: Տուներու պատուհաններէն թաղարներ եւ զանազան առարկաներ կը նետէին վրաս,

արգելելու համար հետապնդումս, բայց անցորդներէն ոչ ոք կը համարձակէր միջամտել:

Գիշ մը վազելէ ետք Իհասն ինկաւ դե – տին եւ գլուխը քարի մը զարնուեցաւ: Վերջին երկու դնդակներս ալ հանդիպած էին իրեն, բայց մահացու ըլլալու չէին, քանի որ մատնիչը փորձեց ոտքի ելլել ինկած տեղէն, թէեւ չյաջողեցաւ: Դեռ կարկուտով պէս ամէն տեսակ առարկա – ներ կը տեղային վրաս, մեծապէս ար – գիւրդով առաջացումս: Իհասն իրարան – ցումէն օգտուելով, յաջողած էր զրպա – նէն հանել ատրճանակը եւ նշան առնել ինծի: Ժամանակ չտուի իրեն. վրան նետուեցայ ու ատրճանակիս բոլոր փամ – փուշտները պարպեցի դանկին մէջ:

Երկու քայլ հեռանալէ վերջ վերադար – ձայ, ապահով ըլլալու համար որ հրէջը դադրած էր ապրելէ: Գանկը ջախջախ – ուած էր եւ ուղեղէն մաս մը դուրս ցալ – տած: Այն ուղեղը, որ տարիներ շարու – նակ անմեղ Հայերու չարչարանքին եւ մահուան պատճառ եղած էր:

(48 – շար.)

«Հազար ու մեկ գիշերներու»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՐԳՄԱՆԻԶՈՐ

0

«Հազար ու մեկ գիշերներ» արեւելեան հեքիասներու հաւաքածոն երկու անգամ թարգմանուած է ֆրանսերէն: Առաջին թարգմանիչը եղած է ֆրանսացի արեւելագետ Անթուան Գալան (1648-1715), իսկ երկրորդը՝ հայազգի Ժօզէֆ Մատրիւս (Մարտիրոսեան):

Ժօզէֆ - Շատլ - Վիքթոր Մատրիւս (1868-1949) ծնած է Գազիւրէ: Ծնողքը՝ վաճառական, հինէն հոն հաստատուած հարուստ ընտանիք մըն էր: Նախնական կրթութիւնը ստացած է իր ծննդավայրի Յիսուսեաններու ձեռնարանը, իսկ բարձրագոյնը՝ Լիբանանի Ս. Յովսէփ ֆրանսական համալսարանը: 1894ին Փարիզի մէջ բժշկութեան տղթորի կոչում ստացած է, որմէ ետք աշխատած է Ներքին նախարարութեան մօտ: Յետագային իւրեն նաւային բժիշկ ճամբորդած է Հնդկաստան, Չինաստան, Ճափոն և Հնդկաստան: 1899ին վերջնականապէս հաստատուած է Փարիզ: Մեռած է հոս՝ խոր ծեւրութեան մէջ:

Մատրիւս եղած է Փարիզի գրական սալոններու սիրահար եւ մշտական այ - ցելու: Հոն ան ծանօթացած եւ մտերմացած է ֆրանսացի բազմաթիւ անուանի գրողներու եւ մտաւորականներու, ի մէջ այլոց, Անթու Ֆրանսի, Սթեֆան Մարլամէի, Փօլ Վալէրիի եւ Փօլ Բլո - տէլի հետ: Ան իր արտասովոր հիւրասիրութեամբ, ինչպէս նաեւ արեւելագէտի բազմակողմանի հմտութեամբ հիացմունքի առարկայ դարձած է իր գրողներու բարեկամներու չըմանակին մէջ եւ անոնց փափաքին ընդառնալով է, որ ձեռնարկած է թարգմանական մեծ դործին, որով հռչակ կը վայելէ ան: 1898էն մինչեւ 1904 ան լոյս ընծայեց «Հազար ու մեկ գիշերներ»-ը 16 հատորնոց անգլոգական թարգմանութիւնը, որու իւրաքանչիւր հատորը, իրեն երախտագրական արտայայտութիւն, ձօնած է գրադէտ բարեկամներէն մէկուն: Անոր թարգմանութիւնը աննախընթաց յաջողութիւն արձանագրած է եւ բազմաթիւ անգամներ վերահրատարակուած է:

Դարձեալ իր ընկերներու խորհուրդին անստով, ան 1918ին թարգմանեց «Մապայի թագուհին», աստուածաշնչական առասպել մը, իսկ 1925ին՝ թարգմանեց «Գուրան»-ը: Յետագային նաեւ ուրիշ գործեր: Անոր կինը եղած է ֆրանսացի ծանօթ բանաստեղծուհի Լիւսի Տըլաուի - Մատրիւս (1880-1945):

Վերջեւ «Արարիկա» ամսագիրը (Հո - լանտա) գրախօսական մը լոյս ընծայած է եղիպտացի երիտասարդ գրականագիր - տուհի Հիւսթ Սպուլ-Հիւսթիսի առթիւ - ռայի աւարտածութիւն մասին, որու նիւթն է եղած՝ «Տղթէօր Մատրիւս Հազարու -

ԼԵՒ ԹՈՒՍԹԱՅԷ

ՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

0

Հայ իրականութեան մէջ Լեւ Թոլսթոյի գրական վաստակին շուրջ հետաքրքրութիւնը կը սկսի 80ական թուականնե - րուն սկիզբները, անոր մանկական պատմութեանը թարգմանութեամբ, որոնք կը գտնուէին Օ. Նազարեանի եւ Ղ. Աղայեանի կազմած դասագիրքերուն մէջ՝ 1883 եւ 1891ին:

Այնուհետեւ կը թարգմանուին «Կրեյ - ցերեան սոնաթը» (Թարգմանողն է՝ Ս. Ստեփանէ, 1893), «Կովկասի գերին» (1894), «Մանկութիւն եւ պատանեկու - րեան» (1899) (Թարգմանողն է Պերճ Պոռեան): Այս չըմանին կը սկսի նաեւ Լ. Թոլսթոյի ստեղծագործութիւններու թարգմանութիւնը արեւմտահայերէն:

Ռուս գրողներէն վէպերու հայերէն թարգմանութիւնները կը սկսին դարուն սկիզբը: 1902ին կը թարգմանուի «Յա - րութիւն» (Թարգմանողն է՝ Տիգրան Յովհաննիսեան) վէպը: Գիշ ետք լոյս կը տեսնէ այդ վէպին արեւմտահայերէն թարգմանութիւնը՝ երեք մասով (երրորդ մասը Երուսաղ Օտեանի թարգմանու - րեամբ): Երուսաղ Օտեան կը թարգմանէ նաեւ «Անա Գարեշինա» վէպը: Շուտով կը թարգմանուի նաեւ «Պատերազմ եւ խաղաղութիւն» վէպը (Թարգմանողն է՝ Լ. Սմատունի):

Թոլսթոյի տառապիւի գործերէն կը թարգմանուին «Կենդանի դիակը» (Նար - Դոս), «Լուսաւորութեան պտուղները» (Ա. Գլանունի): Միայն 1910-1911ին կը թարգմանուին 70 գործեր գրողէնէն:

Թարգմանութիւնները մեծ ծաւալ կը ստանան վերջին տասնամեակներուն Հա - յաստանի մէջ: Ստեփան Զօրեան մեծ վաստակ ունի Թոլսթոյի երկերու թարգ - մանութեան գործին մէջ:

ՍՏԱՅԱՆՔ

ՉՈՐՍ ՏԱՐԻ ԳԻՒՐԻՍՏԱՆԻ ԼԵՒՆԵ - ՐՈՒՆ ՄԷՋ, գրեց՝ Արամ Հայկազ: Հրա - տարակութիւն Գիշոր Մեթոնիցի գրա - կան մրցանակի, Պէյրութ, 1973:

մէկ գիշերներու թարգմանիչ»: Գրակա - նագիրտուէին, որ յաջողութեամբ պաշտ - պանած է իր աւարտածաւոր Սորադինի մէջ, կը գտնէ, որ թէեւ Մատրիւսի թարգմա - նութիւնը ոչ տառացի է, ոչ ալ լրիւ, սակայն կատարուած է մեծ վարպետու - թեամբ, թափով եւ բանաստեղծական շունչով:

— Օրինակելի ընթացք մը, որուն հա - մար կը շնորհաւորեմ ձեզ: Գործերը ի՞նչ - պէս կ'ընթանան տիկին Օկիւթիւնի տան մէջ:

— Չափազանց դժուար կայ: Մեր գործա - տիրուհին բախտաւոր է շիտակը: Կը յուսայ որ մէկ տարին խոշոր հարս - տութեամբ մը պիտի քաջուի իր գործէն ... Աղէկ միտքս ինչպէս, գիտէ՞ք որ Լիւսի...:

— Ո՞վ է այդ Լիւսին:

— Այն գործաւորուհին, որուն Գէ Պուրպոն թիւ 9 գտնուող սենեակը դայի ձեզի հետ, մինչ դուք կառքին մէջ ինծի կը սպասէիք: Լիւսի, որ անհետացած էր, քիչ մնացեր էր սպաննուելուն...:

Օվիտ դարմանը եւ յուզում ձեւացուց:

— Ա՛հ, տէր Աստուած, խեղճ աղջիկը պիտի սպաննուէր:

— Կուրծքին տրուած սաստիկ հար - ուածով մը, յարեց Ամանտա: Իր սեղմի - րանին կիտսկրերուն շնորհիւ ազատած է ան:

— Սա ստոյգ է որ խեղճ օրիորդը ա - ղէկ ազատեր է, ըսաւ Օվիտ: Մարդա - սպանը ձերբակալուած է:

— Ո՛չ:

— Շնորհակալութիւններս ուստիկանա - պետին, ըսաւ Օվիտ հեզօքէն: Իր պաշ - տօնեաները աղէկ կ'աշխատին շիտակը:

— Եթէ ձերբակալուած չէ, անշուշտ

ԹՄԲԻԻ ԾԱՂԻԿՆԵՐ

0

Այս ո՞ր բուրումն է որ հեռուներէն կուգայ մեզի, եւ քանի մօտեանք, այն - քան կը զգանք այդ մեղմանոյշ փայփա - յանքին անակնկալ դորովանքը:

Ի՞նչքան մեծ ես դուն, ով ընտելին, որ չուայլորէն կը բաշխես այն պարզ ու ցանկալի երջանկութիւնը, զոր չենք գրա - ներ գրեթէ միշտ երկրի վրայ, կը մա - քառինք ու կը վերաւորուինք այդ ան - հնարին բաղձանքին համար, եւ դուն զայն կուտաս մեզի խաղաղութեան համբոյրով մը:

Ձայն կուտաս ծառերէն, ծիւերէն, խո - տին մէջ պահուած փթիթէն, ճիւղերէն առկախ ողկոյցներէն:

Ահաւասիկ ծաղկած թմբիներն ալ, ո - րոնք այնքան հեշտին կը բուրեն մեր ան - ցած ճամբաներուն վրայ, կ'իջնեն մին - չեւ իրիկնային հովիտները, կարծես ի - րենց ճիւղերը տարածելով մեր ամէնօր - եայ գրկանքներուն եւ թշուառութեան վրայ:

Անցէք թմբիներու այդ ուղիէն, արդիւ - ուած երազ մը ձեր աչքերուն մէջ, քա - լեցէք այդ սիրովարար եւ ամբիշ բու - րումին հետ, որ թերեւս աւելի լաւ կը հասկնայ ձեր հոգեկան լուռ տաղանալը:

Մկրտիչ Պէշիկեանցի եղած է մտե - րիմ բարեկամը այս ծաղիկներուն եւ ծա - ուերուն, որոնց դուռները փնտած է իր կեանքին տառապահար օրերուն, երբ դանդաղաբայլ կը մեկնէր թմբիներէ իր տունէն ու կ'ելլէր թմբիներու ձորակը ի դո՛ւր պատասխան մը հայցելով:

— Ո՞ր է քեզ ծաղիկները դուք փայլիւնը, ո՞ր է ձեր այտեր անոյշ հոտով...:

ԾԻԾԵՌՆԱԿ

«Մարմարա»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԻՒՆ

Իտալիոյ մէջ մանրագրամի տաղանալ կայ, ինչպէս ըսած էինք արդէն նախա - պէս: Հնարամիտ եւ դործունեայ կին մը Լուչիանա Փէնտութի գիտցաւ շահագոր - ծել այս պարագան: Հաշուած ըլլալով որ սովորական օրաթերթ մը 90 լիւրէթ կ'ար - ժէ լրագրավաճառները ընդհանրապէս չեն կրնար վերագրաճնել 100 լիւրէթնոց թղթագրամի մը մնացորդը, Փէնտութի խորհեցաւ հրատարակել չորս էջնոց ման - րանկար օրաթերթ մը որուն անունը դրաւ « Լրագրավաճառներու մանրագրամ »:

Այս թերթը բաղկացած է զծաւոր նկար - ներէ, աստղերու մեկնաբանութիւններէ, երգիծական նոթերէ, փոքր ծանուցում - ներէ, եւայլն... Եւ կ'արժէ... տասը լիւրէթ: Այսպէսով կը փոխարինէ վերա - դարձուելիք տասը լիւրէթը: Այս նորօրի - նակ թերթին տպագրանակը մինչեւ օրս հասած է 150.000ի:

ՀԵՏԱԳՐՔՐԱԿԱՆ

ՁԱՆԱԽԵՐ

Մասաչուսեցի Վէյքըլֆիլտ քաղաքի դրամատան նախկին տնօրէնը, Տանիէլ Մուր, վերջերս յանձնուեցաւ Նիւ Եորքի դատարանին: Ամբաստանուած է ութ դրամատուներու կողմից իր ժողովուրդի եւ մօտա - ւորապէս տասը միլիոն տոլարի գողութեամբ:

Ըստ ամերիկեան օրէնքներուն Մուրի պատիժը պիտի ըլլայ 240 տարի բանտար - կութիւն:

×

ԵՐԲ ՈՒՋԵՆ ԵՐԿՈՒ ԹՈՁՈՒՆ ՄԷԿԱՆՑ ՁԱՐՆԵԼ

Ռուսիոյ ընկերներէն Օսքար Տիարին ուստիկանական վէպեր կը գրէր: Ինչպէս աւելի ուշ երեւան պիտի հանէին, անոր նկարագրած դէպքերն ու իրադարձու - թիւնները իր երեւակայութեան քմածին արտագրութիւնները չէին: Այլ իր իսկ փորձառութեան: Իր վերջին վէպը կը պատմէր դրամատան մը կողմից, որուն ինքն ալ մասնակցած եւ ստացած էր 120.000 ֆրանքի պատկառելի բաժին մը:

Երբ Փարիզի իր հրատարակիչը ստա - ցաւ Տիարինի ձեռագիրը, այս վերջինը արդէն իսկ իր խոստովանութիւնները կ'ընէր ուստիկանատան մէջ:

×

ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ԷՏՈՒՐՏՍԻ ՓՈՔՐ ԳԱՂՏՆԻՔԸ

1966ին, Պաւարիոյ, Նաքօի գինուո - րական վարժարանին մէջ, ձ. Ռ. Էտ - ուրբոս, բրիտանական բանակին գաղտ - նի սպասարկութեանց հրամանատարը, իր աշխատակիցները հաղորդակից կ'ընէր իր ասպարէզին գաղտնիքներուն: Երբ երկուր վերադարձաւ, մոռցաւ մաքրել հաշիւը, զոր կը պարտէր Հանպէլ ընկերութեան, 2.2875 մարք, իր ինչքերուն արտասահման փոխադրութեան համար: Այս վերջինը դիմեց բրիտանական հրամանատարու - թեան, ունենալու համար Էտուրբոսի հասցէն, եւ սակայն բախեցաւ կտրուկ մերժումի մը, նկատելով որ հրամանարը «Լ'աշխատէր գաղտնի սպասարկութեան» մէջ: Հակառակ դատարանին վճիռին, որ կը նախատեսէ պարտքին վճարումը, ցարդ ոչ պարտապահանք ընկերութիւնը, ոչ դատարանը եւ ոչ իսկ Պոնիի պաշտօ - նակաւ մարմինները չեն կրցած գտնել Էտուրբոսի հասցէն:

ՁՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ ԶԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ԶԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ

«ՅԱՍԱՋ»Ի ԹԵՐԹՈՆԸ

(217)



ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՕՎԻՏԻ ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԺԱ.

Ինչպէս ըսինք ասկէ առաջ, Օվիտ Սո - լիւօ եւ Օր. Ամանտա դէպի Պրէպանի ճաշարանը կ'ուղղուէին, մասնասենեակ մը քաջուելու համար հոն: Քաջած առեւ - նին կը խօսակցէին:

— Իմ քաջակալութեան ի՞նչ ըրիք, աղուոր նոնշիկս, հարցուց Օվիտ:

— Ձեր յեղակարծ մեկնումին համար զայրացայ, ու տաղտուկ զգայի, ձեզ չտեսնելու համար: Աշխատանոցէն ելլե - լէս յետոյ՝ առանց արտօթակի կը ճաշէի ու պառկելու կ'երթայի:

ձեր թեւը կը դողայ... Հիւսիսէք էք:

— Ոչ... ոչ... բան մը չուրիմ... շատ լաւ եմ, ըսաւ Օվիտ, գերմարդկային ճիշդ մը ընելով, իր հանդարտութիւնը վեր - ստանալու համար: Շատ բարխուն պատ - մութիւն մըն է աս: Ուրեմն կը խորհն որ այդ լաւ հագուած եւ բարեկեցիկ երեւոյթով մա՞րդը սպաննած է գործա - տրուհին... բայց ի՞նչ նպատակով:

— Ձեն գիտեր, բայց պիտի հասկնան: Երեւակայեցէք որ այդ հրէշը Լիւսիի ընտանիք տան գետնայարկը հաստատ - ուած խանութէն գնած է դանակը: Թեր - եւս այդ գեղեցիկ գնումը ըրած է այն պահուն, երբ ես վեցերորդ յարկը ելած էի ու դուք քարափին վրայ կը սպասէիք: Կառքին մէջէն կրնայիք տեսած ըլլալ զայն:

— Թերեւս տեսած եմ, որովհետեւ ճիշդ դանակավաճառին խանութին վրայ կը նայէի, բայց որեւէ չարժաւոր չու - նէի զայն գիտելու: Ձեմ յիշեր այդ մար - դուն դէմքը:

ԿԶԱՎԻԷ ՏԸ ՄՈՆԹԷՓԷՆ

(Շար.)

ՄԱՐՍԷՅԼ

ՇԱՐԱԹ ՅՈՒՆԻՍ 30, ՄԱՍՆԱԿՈՐ ՀՈԳԵ-
ՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՈՆ ԵՒ ԾԱՂԿԵՊԱՆԿԻ
ԶԵՏԵՂՈՒՄ 1915Ի
ԵՂԵՌՆԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻՆ

Մարտի 11-ի Պոլսահայերու Մշակութա-
յին Միութիւնը՝ Յունիս 30-ի Շարաթ Ե-
րեկոյ ժամը 18ին կազմակերպած է յար-
գանքի բացառիկ տուրք մը, Փրատոյի
Ս. Թարգմանչաց եկեղեցւոյ մէջ իր բո-
լոր անդամ մեկնող տարաբախտ Պոլսե-
ցիներու հոգւոյ ի յիշատակ, որոնք իրենց
ազգային անսակարկ նուիրումով արժա-
նի նկատուած են Աստուածառաք օրհնու-
թեան, Միութեանս պատուոյ նախագահ
եւ Թարգմանչաց մայր եկեղեցւոյ հիմ-
նադիր բարերար ՎԱՀԱՆ ԽՈՐԱՍԱՆ -
ձԵԱՆ, եկեղեցւոյ ճարտարապետ ԱՐԱՄ
ԹԱՀԹԱՃԵԱՆ, ազգային գործիչ զբաղէտ
ուսուցիչ ՄԻՆԱՍ ԶԵՐԱԶ եւ ՄԿՐՏԻԶ
ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ :

Մասնաւոր արարողութիւն կ'իրականա-
մուտքի, ձեռամբ ՅԱԿՈԲ Եպս. ՎԱՐ -
ԴԱՆԵԱՆԻ, որ պիտի խօսի հին եւ նորոգ
ննջեցեալներու ազգային օգտաշատ գոր-
ծունէութեան մասին :

Արարողութենէն ետք՝ ճաշ ժրմէքիւնդ
գեղատեսիլ պարտէզին մէջ Թոռու-Լիւի :

Կը հրաւիրուին հանգուցեալ ազգա-
կանները, բարեկամները, բարեպաշտ ազ-
գայիները, քոյր միութիւնները :

GROSSISTE LYON

Clientèle importante emplacement
de premier ordre dans le « Sentier »
Lyonnais cherche fabricants de robes
et jupes pour collection.

HIVER 73-74

H. DER-HAGOPIAN

4, Route de Vienne
69007 Lyon

Téléphone : 72-97-90
aux heures de repas

ԿԸ ՓՆՏՈՒԻԻ

Պաշտատէն երկար տարիներէ ի վեր
Փարիզ հաստատուած Քերովրէ Գուլում-
ձեանէ (ունի երկու դասակ՝ Արա եւ Լուս-
վիկ) կը խնդրուի իր հասցէն հաղորդել
հեռաձայնելով Տիկին Տաւրաշեանի՝
222-18-49

Տէր եւ Տիկին Կի Մուսէֆեան
ուրախութեամբ կը ծանուցանեն

Վահե - Մարի Ի

ծնունդը, Փարիզ, Յունիս 24, 1973

ՇՆՈՐՀԱՎԱԼԻՔ

Վասպ. Հայր. Միութիւնը շնորհակա-
լութեամբ ստացած է, այլի Տիկին Ար-
մենուհի Պանտիկեանէ 50 Փր. ի յիշատակ
իր եղբոր՝ Պողոս Հիւսեանի :

Անդրանիկ Խոյեան 20 Փր. ողբ. Զա-
փար Շառնյեանի մահուան առթիւ :

×

Մարտի 11-ի Վասպ. Հայր. Միութեան
երեսփարտաց յանձնախումբը շնորհա-
կալութեամբ ստացած է Պր. Վարդան
Պանտիկեանէ 100 Փր. իր 80ամեակի
առթիւ : Նոյն առթիւ 50 Փր. Տիկին Ռոզ
Գառնիկ :

ՀԵՐՈՍՆԵՐՈՒ ՕՐԸ

ՏԵՍԻՆ - ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍ

Հերոսներու Օրը կը տօնուի Խանաթրի
արշաւանքի տարեգարծին առթիւ, նա -
խաձեռնութեամբ Հ. Յ. Դ. Տէսինի Կո-
միտէի եւ մասնակցութեամբ Հ. Յ. Դ.
Նոր Մերուրի խումբին :

Տեղի կ'ունենայ Յունիս 8, Կիրակի
ամբողջ օրը, Սանթըր Այրէի կից՝ ծա-
նօթ պուրակին մէջ :

Բանախօսութիւն եւ գեղարուեստական
բաժին : Պարեր՝ Հ. Յ. Դ. Նոր Մե-
րուրի պարախումբին կողմէ :

Ճոխ պիւֆէ, — առատ կերուիտով —
անակնկալներ :

Կը հրաւիրուի Տէսինի եւ չրջաններու
հայ հասարակութիւնը :

ԱՌ ՈՐ ԱՆԿ Է

Յունիս 4ին ժառ Քէշիշեանի մրցումին
առթիւ, հաւաքական մեկնումի համար
օթոքառ մը կը մեկնի Ալֆոնսիլէն :
Մեկնում՝ Յունիս 3ին, դէպի Վենետիկ
Մանրամասնութեանց համար հեռաձայ-
նել ժամը 17էն 19
899-09-48 կամ Ֆիլիփի սրճարանը :

Imprimé sur les Presses
DU JOURNAL « HARATCH »
83, Rue d'Hauteville, Paris (10e)

ԱՂՔԱՏԱԽՆԱՄԻ

ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍԸ

ԿԻՐԱԿԻ, ՅՈՒԼԻՍ 1 ԺԱՄԸ 10-22

ՄՈՆՄՈՐԱՆՍԻԻ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՏԱՆ

ԴԱՐԱՍՏԱՆԻՆ ՄԷՋ, 44-50 Ալքմի Շառլ տը Կօլ, Մանմորանի
Դուռները կը բացուին ժամը 10ին եւ կը տնէ մինչեւ ժամը 22

Կէսօրին կարելի է ճաշել ճաշացուցակին համաձայն : Կարելի է նախօրօք սեղան-
ները ապահովել հեռաձայնելով՝ Մոմորանի 964-20-67 եւ կամ Աղքատախնամի
կեդրոնը 878-02-99

Աւանդական շամփուրով խորոված, թէ՛ կէսօրին եւ թէ՛ իրիկունը : Անշատ առատ
ամէն տեսակ ուտեստեղէն եւ ըմպելիներ Բացառիկ ժամանցի օր մը, նուագ, երգ
եւ անակնկալներ : — Գեղարուեստական բաժին իրենց մասնակցութիւնը կը բերեն
ՆԱՅԻՐԻ եւ ՄԻՆԻ-ՍՕՍԻ պարախումբերը, Տիկին ԱԼԹՈՒՆԵԱՆ իր երգերով
Օր. Անահիտ ՍՎԱՃԵԱՆ ձեռնադաշնակով

ԹՈՄՊՈՂԱ, արժէքաւոր առարկաներով
Մուտք 5 Փր., ուսանողներու եւ երախտներու 2 Փր.

Անճրեւի պարադային, ապահովութիւններ ձեռք առնուած են :
ԾԱՆՈԹ. — Մոմորանի երթալու համար չողեկառք առնել Կառ տիւ Նոռէն
եւ իջնել Անկէն (Իւրաքանչիւր քառօր ժամուն, անցնել կամըրձակը եւ թիւ 6
օթոպիւսով իջնել Կրոլէի կանքը (առէ) :

ԿԱՐԵՒՈՐ. — Փափաքելի է որ ամէն ոք տեղւոյն վրայ ծախսէ, կը յանձնա-
բարուի ուտելիք չբերել :

Հ. Յ. Դ.

ՍԱՐՍԷԼ - ԱՌՆՈՒՎԻԼ. — Հ. Յ. Դ.
Շրջանային Կոմիտէն ընկերական ընդհ.՝
Ժողովի կը հրաւիրէ «Վարդան» ենթա-
կոմիտէի ընկերները Զորքաւրթի, Յու-
լիս 4, ժամը 20-30ին, սովորական հա-
ւաքատեղին : ՕՐԱԿԱՐԳ. — Զեկուցում :

×

ՄԱՐՍԷՅԼ. — Հ. Յ. Դ. Շրջ. Կոմիտէն
ընկերական ընդհ.՝ Ժողովի կը հրաւիրէ
իրենց սովորական հաւաքատեղին՝
— Շ. Միսաքեան խումբ՝ Երեքաւրթի
Յունիս 3, ժամը 21ին :

— Զաւարեան Ենթախումբին՝ Շարաթ
Յունիս 7, ժամը 20-30ին :

×

ՎԱԼԱՆՍ. — Հ. Յ. Դ. Քրիստափոր
Կոմիտէի ընդհ.՝ Ժողովը Յունիս 30ին,
Շարաթ երեկոյ ժամը 20-30ին Ահարոն-
եան աւումը : Ընկերներու ներկայութիւ-
նը անհրաժեշտ է :

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՀԱՄԱՆԱՐԲԵՐԴՅԻԱԿԱՆ Միութեան
Ծրանայի չրջանի Վալանի վարչութիւ-
նը կը հրաւիրէ իր բոլոր անդամները
ընդհ.՝ Ժողովի Ուրբաթ Յունիս 6, երե-
կոյան ժամը 21ին, Վալանի Հ. Բ. Ը.
Միութեան «Հիւսիսեան» սրահին մէջ :
Միութեան կը խնդրուի ներկայ ըլլալ :

Հ. Մ. Ը. Մ. - ԱՐԾԻԻ

ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍ

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ, ՎԱԼԱՊՐԻ ԱՆՏԱՌԸ

Կիրակի, Յունիս մէկ, առաւօտեան ժամը 10ին պուլի մրցում — մանկա-
կան խաղեր ժամը 14-30ին :

Գեղարուեստական բաժին ու հայկ. ժողովրդական երգ ու պար

Շամփուրով խորոված — ըմպելի

Քառերու մեկնում ժամը 8-30ին Պոմոնէն, Պառ-Թապա, 8-45ին Պառ տիւ Կոպ
ժամը 9ին Պառ-Փապալ :

ԾՈՎԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԵՒ ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍ

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ՌԱԶԻ ՕԴԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԿԱՅԱՆԻՆ ՄԷՋ

SAINTE-HONORINE-DES-PERTES

Բարձր հովանաւորութեամբ՝ ՍԵՐՈՎԻԷ ԱՐԳ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ
Շաբաթ, 14 Յուլիս, ժամը 10ին սկսեալ

Գեղարուեստական բաժին՝ երգ, պար, արտասանութիւն
Երեկոյեան՝ Խարոյկահանդէս եւ

Projection d'un magnifique film en couleur

« FLASH SUR L'ARMENIE »

Théâtre de marionettes

« ՔԱՅ ՆԱԶԱՐ »

Այցելութիւններ՝ Համաշխարհային Բ. Պատերազմի ցամաքահանման տեսարժան
վայրերը եւ ամերիկեան բանակին մէջ զոհուած հայ զինուորներու շիրմերուն
Կէսօրին շամփուրով խորոված կայանին ճաշարանին մէջ
Ճաշին մասնակցելի փառքողներէն կը խնդրուի արձանագրուել մինչեւ Յունիս 11
հետ. 824-77-40 ժամը 15ին վերջ՝ 990-6-28

Երթուղի (իրիւնէր)

Autoroute de l'Ouest, Evreux, Lisieux, Caen, Bayeux, Port-en-Bessin
Sainte-Honorine-des-Pertes

ԱՄԱՌԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Pension complète avec excursions quotidiennes

Բնակութիւն Ա. կարգ — ամբողջական փախիւն, ամէնօրեայ պտոյտներ

ՅՈՒԼԻՍ 14 ԷՆ 28

ԳԻՆ ՓԱՐԻՋԷՆ ՓԱՐԻՋ

2650 ՓՐԱՆՔ

Ուղղակի քաղիք Փարիզ-Երեւան-Փարիզ

ՅՈՒԼԻՍ 21ԷՆ ՕԳՈՍՏՈՍ 4

ՕԳՈՍՏՈՍ 5ԷՆ 22

16էն 35 տարեկան երիտասարդներու համար յատուկ գին՝
2100 Ֆր.

Դիմել գրասենեակ՝ մանրամասնութեանց եւ պայմաններու համար :

ՓԱՐԻՋԻ ՄԷՋ

SONIA CUMRYANTZ

TRIM VOYAGE

MONDOTOURS

2, Rue de Sèze — PARIS (9e)

Téléphone : 742-57-84 et 073-30-64

de 9 h. 30 à 18 h. — tous les jours

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Լիոնէն մեկնումը օդանւով

VOTRE AGENCE DE VOYAGES ARMENIENNE

agence de voyages SEVAN

50, Cours de la Liberté — LYON — Téléph. : 60-13-66

de 10 h. à 19 h. — tous les jours

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ

JACQUES CHELELEKIAN
VOYAGES WASTEELS

87, La Canebière, Marseille 1er Téléphone : 62-03-44 et 64-09-49
de 15 h. à 19 h. — tous les jours